
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ



ՀԱՏՈՐ ԼԶ.

HAIGAZIAN UNIVERSITY PRESS

ՊԷՅՐՈՒԹ, 2016

THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

HAIGAZIAN
ARMENOLOGICAL REVIEW
VOLUME 36

HAIGAZIAN UNIVERSITY PRESS

BEIRUT, 2016

ISBN: 978-9953-585-21-5

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

1956 2006 50 anos

Հայկազեան Հայագիտական Հանդէսը կը տպագրուի
Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան,
նիւթական միջոցներով

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆՑՆՈՂ ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԸ ԵՒ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայկական տիեզերքի վերջին քսանհինգ տարիները կը յատկանշուին անկիւնադարձային իրադարձութիւններով, որոնք տակաւին ընթացքի մէջ են:

21 Սեպտեմբեր 1991ին հռչակուած Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնով, թէ՛ Հայաստանը եւ թէ՛ հայութիւնը գտնուեցան նոր ու աննախընթաց իրավիճակի մը մէջ եւ պետականակերտումի գործընթացին առջեւ:

10 Դեկտեմբեր 1991ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումով նոր փուլ թեւակոխեց Հայ Դատին ապագայի տեսլականը, մինչ ներհայկական, միջազգային եւ շրջանային քաղաքական զարգացումները գոյութենական նոր մարտահրաւէրներ յառաջացուցին Արցախի հայութեան դիմաց:

Անցնող քսանհինգ տարիներուն Հայաստանէն արտագաղթը, միջինարեւելեան հայօճախներու նօսրացումը եւ նոր համայնքներու ստեղծումը հայութիւնը դրին (կը շարունակեն դնել) աշխարհագրական, ժողովրդագրական, ինքնութենական, լեզուամշակութային եւ այլ էական փոփոխութիւններու դէմ յանդիման:

Միւս կողմէն, հայկական իրականութենէն անկախ, բայց ոչ՝ անջատ, արհեստագիտական այլեւայլ նուաճումները հաղորդակցական աննախընթաց հնարաւորութիւն ընձեռեցին հայութեան բոլոր միաւորներուն (անհատ, հաւաքականութիւն, կազմակերպութիւն, եկեղեցի թէ պետութիւն), որոնք որեւէ ժամանակէ աւելի, ագուցուեցան համաշխարհային գործընթացներուն, իրենք զիրենք գտան հայկական *virtual* համայնապատկերին մէջ եւ աննախադէպ համեմատութեամբ սկսան դիմագրաւել պատեանի մէջ եւ միաժամանակ պատեանէ դուրս ապրելու հարկադրանքը:

Նկատի առնելով որ հայագիտութիւնը կ'առնչուի հայկական համապատկերին, ապա տեղին է պայմանական հաշուեյարդարով մը հարցադրել թէ հայագիտութիւնը վերջին քառորդ դարու վերոյիշեալ փոփոխութիւններուն ի տես, ի՛նչ մարտահրաւէրներ

դիմագրաւեց եւ կը դիմագրաւէ, ի՛նչ յառաջադրանքներու դէմ-յանդիման գտնուեցաւ ու կը գտնուի եւ ի՛նչ նուաճումներ արձանագրեց ու կ'արձանագրէ:

Մարտահրաւէրներ Եւ Առաջադրանքներ

Հայաստանի Հանրապետութեան՝ համաշխարհային քաղաքական ասպարէզ մուտքով, հայագիտութեան համար ուսումնասիրութեան նոր բնագաւառ մը յառաջացաւ՝ պետականագիտութիւնը: Արդարեւ ՀՀ միջպետական յարաբերութիւններու, արտասահմանի հայ հաւաքականութիւններու հետ կապերու եւ ներքին քաղաքական (թէ այլեւայլ) կեանքի ու պետականակերտման առնչուած ուսումնասիրութիւնները, հետազօտութիւնները ուշագրաւ ընթացքի մէջ ըլլալով հանդերձ, տակաւին կարիքը ունին թեմատիկ ու խորքային կայացման:

Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքի պայքարին մէջ ընդելուզուեցան հայկական տիեզերքին բոլոր ծալքերը: Հայագիտութեան համար այս բնագաւառը յառաջացուց ուսումնասիրութեան նոր ոլորտներ, ինչպէս՝ համաշխարհային նման իրավիճակներու բաղդատական ուսումնասիրութիւն, քաղաքական նմանատիպ դատերու համեմատական հետազօտութիւն եւն.:

Համաշխարհային սփիւռքագիտութեան արձանագրած նուաճումներու լոյսին տակ՝ հրամայական կը դառնայ աւելի խորութեամբ, պատասխանատուութեամբ եւ նոր դիտակէտերէ ուսումնասիրել հայկական յարափոփոխ արտասահմանը: Այլ սփիւռքներու հետ բաղդատական, միջուսմունքային հետազօտութիւնները եւ տակաւ ձեւափոխուող հայկական սփիւռքը տեսաբանական յարատեւ նորութեան եւ թարմութեան մէջ մնալու առիթներ կը հրամցնեն հայագիտութեան:

Վերոյիշեալ մարտահրաւէրներուն որդեգրումը կրնայ ուղի հարթել հայութիւնը յուզող հին ու նոր խնդիրներու գիտական յաղթահարման համար:

Արդի արհեստագիտութեան հնարաւորութիւնները մերօրեայ հայագիտութեան ընձեռեցին պերճանքը՝ գործելու քաղաքական գաղափարախօսութեանց տապալումով գոյացած ան-սահման եւ ան-անցարգել դաշտի մը մէջ: Յառաջացան արխիւներու օգտագործման համեմատաբար բացառիկ դիւրութիւններ եւ մասնա-

գէտներու միջեւ համագործակցութեան, համադրումի նախանձելի հնարաւորութիւններ: Միջ-ուսմունքային դաշտի ծաւալումով ու օտար հայագէտներու եւ օտարալեզու հայագիտութեան մրցունակ նուաճումներով, յառաջացան գործակցութեան եւ ուսումնասիրութեանց նոր հարթակներ: Հայագէտներուն կը մնայ առաւելագոյնս օգտուիլ այս կարելիութիւններէն:

Հայագիտութեան կարգ մը ոլորտներու գիտականութիւնը կը մնայ խոցելի: Շատ ուսումնասիրութիւններ ճանաչողական, տեղեկատուական դրոյթէն անդին չեն անցնիր, ուսումնասիրուող խնդիրները չեն դիտուիր համապարփակօրէն, նիւթին հանդէպ քննական վերլուծութիւնը չի գերակշռեր, որուն հետեւանքով, գնահատումներու եւ արժեւորումներու անհաւասարակշռութիւն մը կը յառաջանայ:

Նկատելի է նաեւ, որ հայկական տիեզերքի ենթախումբերու առաջնորդութիւնը ստանձնած կամ անոր յաւակնող պատկան մարմինները, անբաւարար չափով կ'օգտուին հայագիտութեան գիտական ձեռքբերումներէն եւ զանոնք անբաւարար չափով կ'օգտագործեն իրենց հանրային քաղաքականութեան ծրագիրներու մշակման համար: Հայագիտութեան ռազմավարական նշանակութեան գիտակցութեան պակասը նաեւ պատճառ կը դառնայ որ պատկան մարմիններ չունենան քատրերու պատրաստման համակարգուած գործելաձեւ եւ հայագիտութեան սատարման մշակուած քաղաքականութիւն: Միւս կողմէ, հակառակ դրական տեղաշարժերու, հայագէտներու միջեւ մասնագիտական յարաբերութիւնը չունի անհրաժեշտ արդիւնաւէտութիւնը:

Նուաճումներ

Յամեցող մարտահրաւէրներուն զուգընթաց, հայագիտութիւնը արձանագրեց նաեւ շարք մը նուաճումներ, որոնք տարբեր մարզերու մէջ յաջող մեկնարկի մը ազդանշանը կը հանդիսանան:

Նախորդ քառորդ դարու քաղաքական, ընկերային եւ այլ զարգացումները օգնեցին որ ցեղասպանագիտութիւնը վերածուի հայագիտութեան մէկ կարեւոր բնագաւառին. յիրաւի, անիկա ունի առաւելագոյն պատեհութիւնը ջրդեղուելու եւ հարստանալու հայ եւ ոչ-հայ մասնագէտներու ներդրումով:

Հայագիտութեան կողմէ ցարդ տարրականօրէն քննարկուած եւ նախնականօրէն մշակուած բնագաւառներուն մէջ արձանագրուեցաւ ուշագրաւ յառաջընթաց. ամրագրուեցաւ, օրինակ, սփիւռքագիտութիւնը, որ փոխարինեց գաղութագիտութիւնը:

Արդիական դիրքերէ, այժմէական ելակէտերէ եւ յետարդիապաշտ մօտեցումով քննարկուեցան հայագիտական կարգ մը նախկին խնդիրներ, յանգելով նոր եզրակացութեան:

Աւելի քան յստակ է որ ժամանակակից հայագիտութեան առաքելութիւնը կ'առնչուի ապրող (քան թէ մեռած), աշխուժ, բազմաձեւ, տարաբնոյթ հայկական տիեզերքին հետ: Հետեւաբար հրամայական է առաւել ճիգեր ներդրել անոր յարատեւումը եւ զարգացումը խթանելու համար, որպէսզի անոր ընթացքը ըլլայ հայկական տիեզերքին համաքայլ, ծաւալի բոլոր ուղղութիւններով եւ ձեռք ձգէ ռազմավարական նշանակութիւն ու լիարժէքօրէն արտայայտէ հայկական տիեզերքի ուժականութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ)-Արշալոյս Թոփալեան-Արմէն Իւրնէշլեան-Անդրանիկ Տագէսեան (պատ. քարտուղար)

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան-Ժիրայր Դանիէլեան-Երուանդ Երկանեան-Հրանուշ Խառատեան-Մուրատ Հասրաթեան-Հրաչ Չիլինկիրեան-Մկրտիչ Պուլտուքեան-Սեդա Տատոյեան-Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝
Արծուի Բախչինեան

THE LAST 25 YEARS OF ARMENIAN STUDIES: CHALLENGES AND ACHIEVEMENTS

The last 25 years of the Armenian space are characterized by core transformations, which are still in process.

With the proclamation of Armenian Independence on 21 September 1991, both the Republic of Armenia and the Armenians worldwide found themselves in an unprecedented situation and are caught in the effort of state building.

With the proclamation of the Mountainous Republic of Karabagh on 10 December 1991, future prospects of the Armenian Cause were elevated to a new level. Intra-Armenian, regional and international political developments posed existential challenges to the Artsakh Armenians.

The population outflow from Armenia, the dwindling numbers in the Armenian communities of the Middle East and the budding of new communities in the Diaspora confronted the Armenians with geographic, demographic, identity, linguistic, cultural and other core changes.

On the other hand, irrespective of (but not disconnected from) the Armenian realities, various technological innovations, groundbreaking communications developments, provided unprecedented potential to all constituents of the Armenian nation (individuals, groups, organizations, church and state). More than ever before they were intertwined with international developments and processes and found themselves in a virtual Armenian universe. They were given no choice but to accept the ambivalence of simultaneously living in and outside the shell.

As Armenian Studies is related first and foremost to the Armenian space, one may tentatively gauge its challenges in the last quarter of a century vis-à-vis these changes, what were (and are) its undertakings/commitments and what were (and are) its achievements.

Undertakings and Commitments

The stepping of the Republic of Armenia into the international political arena inaugurated a new field of study, namely Armenia Studies. Indeed, Armenia's interstate relations, its relations with the Armenian communities abroad as well as its domestic sociopolitical (and other) developments marked the start of new research tracks concerning state building. These tracks need to be broadened, diversified and deepened.

All the constituents of the Armenian space were connected to the Artsakh Armenians' self-determination struggle. The Artsakh cause generated a new field of political studies which entails comparative studies of such cases and political causes in the international arena.

The impressive achievements in Diaspora Studies are conducive to a deeper, multidisciplinary study of the ever-changing Armenian abroad. Comparative studies with other diasporas and interdisciplinary studies of the Armenian Diaspora provide excellent opportunities for new theories and a refreshing of Armenian Studies.

Addressing the above-mentioned challenges may create a scientific opening to overcome Armenian new-old issues.

Contemporary technological developments and the fall of political ideology offered Armenian Studies the luxury of functioning in a space with no boundaries and checkpoints. Certain archival institutions are granting easier access. Likewise, there are better opportunities than ever for cooperation and coordination between experts. On the other

hand, the broadening of interdisciplinary studies and both the involvement of foreign scholars and the competitive quality of Armenian Studies written in other languages further improved the chances of cooperation. It is the task of Armenian Studies scholars to make the best of these opportunities.

Some aspects of Armenian Studies are scientifically vulnerable. Certain studies do not go beyond the descriptive and informative; Issues are not studied in a holistic manner; critical analysis is not always or properly used. These shortcomings lead to an imbalance in assessing and evaluating the researched issues.

On the other hand, authorities who hold (or aspire to) leadership of the Armenian space, do not make efficient use of the scientific achievements of Armenian Studies. These are not transformed into public policy initiatives. The absence of such action, which reflects a lack of full understanding of the strategic importance of Armenian Studies, has led the authorities to develop neither a systematic policy of promoting new elements nor a policy of sustaining Armenian Studies. On the other hand, notwithstanding steps taken in the right direction, the cooperation between scholars of Armenian Studies has not attained the level of efficiency necessary.

Achievements

Parallel to challenges, Armenian Studies registered a number of achievements, which give a strong signal for a successful new start.

Certain sociopolitical developments of the past quarter of a century enabled Genocide Studies to hold a competitive space in Armenian Studies. In fact, Genocide Studies has significant potential to become healthier and richer with the involvement of Armenian and non-Armenian scholars.

Certain fields of Armenian Studies, which were little studied, made headway. Diaspora Studies, for instance, modernized colonial studies.

A number of Armenian issues were re-examined from contemporary and post-modern standpoints and new conclusions were drawn.

***

Undoubtedly, the mission of contemporary Armenian Studies is connected to a living (rather than dead), active, multi-layered, multi-shaped Armenian space. Accordingly, it is of utmost importance to invest extra efforts to maintain its sustainability and development, so that it keeps pace with the Armenian space and grows in all directions, attains its strategic role and fully expresses the dynamics of the Armenian space.

EDITOR IN-CHIEF
The Very Rev. Father Antranik Granian

EDTORIAL BOARD
Antranik Dakessian (executive secretary) - Arda Ekmekji (ex-officio) - Arshalouyse Topalian - Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian - Megerditch H. Bouldoukian - Seta B. Dadoyan - Murad Hasratian - Hranush Kharatian - Susan Pattie - Jirayr Tanielian - Hratch Tchilingirian - Yervand Yerkanian

Representative in Armenia
Artsvi Bakhchinyan

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐՈՒ *ՃԱՂԿԱԾ ՓՇԱԼԱՐԵՐԸ* ԵՒ ՍՏԱԼԻՆԵԱՆ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

1930ականներին ԽՍՀՄում տիրող վարչակարգը, ի դէմս արժանապատիւ, մարդկայնութեան գաղափարներին հաւատարիմ գրականութեան ու արուեստի, ունեցաւ ընդդիմադիր հզօր ուժ, որը թէ՛ այն օրերին, թէ՛ մանաւանդ յետագայում գեղարուեստի դատաստանի առջեւ կանգնեցրեց ամբողջատիրութեան ողջ արատները: Կեանքի կոչուեց գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնների մի նոր որակ, որի թեման անծայրածիր երկրի տարածքում մոլեգնող անօրինութեան, բռնութեան, կեղծիքի ու մատնութեան՝ օրըստօրէ ահագնացող համաճարակն էր:

«*Արուեստը պէտք է հասկանալի դարձնի նաեւ դժբախտութիւնը, աղէտը, չարիքն ու յանցագործութիւնը՝ ամէն տեսակ վայելքին ու երանութեանը համահաւասար, պէտք է ներքուստ ծանօթացնի մեզ ամենայն սարսափելիին ու նողկալիին*»[1՝] գրել է Հեգէլը:

Ռուս ականաւոր մտածող, գրող Ալեքսանդր Սոլժենիցինն էլ իր գնահատականն է ձեւակերպել այդ երեւոյթի առնչութեամբ. «*Կեղծիքի դէմ կռւում արդէն արուեստը մի՛շտ յաղթել է, մի՛շտ յաղթում է - բոլորի համար ակնյայտ եւ անժխտելի: Շատ բաների դէմ աշխարհում կարող է դիմակայել կեղծիքը, բայց միայն ոչ՝ արուեստի*»[2]: Այս յայտարարութիւնն արել է նա իր նոբէլեան դասախօսութիւնում:

Ստալինեան իրականութիւնը պատկերող գրական երկերը, ունենալով թեմատիկ ընդհանրութիւն, ենթակայ են որոշակի դասակարգման, որ կարող է ելակէտ ունենալ տարբեր սկզբունքներ: Ժանրային պատկանելութեան առումով այդ երկերը բաժանւում են հիմնական երկու խմբի՝ վաւերագրութիւններ, որոնցում ներկայացուած են պատմական ճշգրիտ փաստերը, ժամանակագրութիւնը, անձինք ու նրանց արարքները, եւ գեղարուեստական ստեղծագործութիւններ՝ պատմական փաստերի, իրական դէպքերի եւ անձանց

գեղարուեստականացուած արտացոլմամբ՝ յաճախ նաեւ սիւժէտային պատումի այլաբանական լուծումներով: Այս ստեղծագործութիւնները նաեւ զանազանւում են գրական ժանրի տարբեր ճիւղերին իրենց պատկանելութեամբ: Դրանցում կարելի է հանդիպել թէ՛ արձակ, թէ՛ չափածոյ գործերի: Եւ չնայած այս ու բազմաթիւ այլ տարբերութիւնների, որ կարելի է մատնանշել ստալինեան բռնութեան պատկերները նկարագրող գրական երկերում, մի բան դրանցում որոշակիօրէն յստակ է ու անփոփոխ. դրանք բոլորը համատարած վախի, հետապնդումների, զանգուածային ձերբակալութիւնների, անմեղ մարդկանցով բանտերն ու աքսորավայրերը լցնելու, անգամ նոյնանման գազանային մեթոդներով խոշտանգելու եւ սուտ ցուցմունքներ կորզելու մասին պատմութիւններ են՝ արուած խորհրդային անծայրածիր, բազմազգ պետութեան տարբեր հատուածներում ապրող ու տառապող մարդկանց կողմից: Այն մարդկանց, որոնց միաւորել ու նոյնացրել էր համընդհանուր չարիքը: Այդ երեւոյթի մասին իր դիտարկումն է արել Դաւիթ Գասպարեանը *Գուրգէն Մահարի* աշխատութիւնում. «*Մահարին յիշողութեամբ վերականգնեց ժամանակի պատկերը եւ անձնական կեանքի փորձը ծուլեց Երեւանից Սիբիր ձգուող ճանապարհի բանտերում հանդիպած տառապող բազմազգ ժողովրդի ճակատագրին: Իրօք որ այդ համատարած բռնութիւնների ենթարկուածներին կարելի է տալ 'խորհրդային ժողովուրդ' պաշտօնական բնորոշումը: Այլ կիրառումներով խորհրդային ժողովուրդ հասկացութիւնը չունեցաւ եւ յետադարձ հայեացքով չունի այնքան միասնական եւ ճշգրիտ նշանակութիւն, որքան ստալինեան բռնութիւններին ենթարկուածների դէպքում*»[3]:

Ընդ որում՝ ամենայն մարդկայինի, բնականի դէմ բռնաճնշումների ահռելի դրսեւորումները ստիպել են գրիչ վերցնել ու իրենց տեսած-ապրածը վաւերագրել ոչ միայն գրականութեանը ծառայելու կոչուած մարդկանց՝ գրողներին, այլեւ բանտ-աքսոր-մահապատիժ երեւոյթներին առնչուած ու սարսափի մղձաւանջում գրելու ինքնաբուխ մղումը զսպել չկարողացող շատ ոչ-գրողների:

«Գրականութեամբ զբաղուելը անվտանգ չէր: Մեր գրքերում ճշմարտութիւնն սկսեց սպրդել մաքսանենգօրէն, Պարոնեանի դիպուկ բանաձեւումով՝ ծակումուտ պահուըտելով: Առաջ եկաւ գրականագէտների (եւ ինչո՞ւ միայն գրականագէտների) յատուկ մի տեսակ, որն զբաղւում էր ոչ թէ գրքի քննադատութեամբ, այլ հենց, յատկապէս, այդ 'ծակումուտ ճշմարտութիւնները' երեւան հանելով: *Երկիր Նայիրի*ի եւ *Կեօրէս*ի ժամանակներն անդառնալիօրէն անցել էին»[4]:

Հայ գրողները բաժանուեցին երկու խմբի. մի մասը լիովին իւրացրեց ժամանակաշրջանի պահանջները եւ իր գրիչն ու հոգին նուիրաբերեց

փառամոլ տիրակալի անձին ու գործին, պանծացրեց ժամանակի տէրերի աշխարհը: Միւս մասը հաւատարիմ մնաց մտաւորականի, արուեստագէտի իր կոչմանը, չուրացաւ իր սկզբունքներն ու խիղճը: Հենց վերջիններս էլ դարձան 1937ի արիւնոտ սպանդի թիրախ ու նահատակ: Ահա այդ անունները. Եղիշէ Չարենց, Ակսէլ Բակունց, Վահան Թոթովենց, Զապէլ Եսայեան, Լեռ Կամսար, Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն, Վահրամ Ալազան ու էլի շատերը: Այս գրողներից իւրաքանչիւրի վրայ կարելի է տարածել բանասիրութեան թեկնածու, չարենցագէտ Անահիտ Ադամեանի գնահատականը՝ տրուած Չարենցին. «*…ապրում էր՝ ինչպէս գրում էր, ու գրում էր՝ ինչպէս ապրում էր: Իսկ դա դեռ ոչ մէկին չի ներուել*»[5]: Այս գրողները դատապարտուեցին անազատութեան, աքսորուեցին ու գնդակահարուեցին՝ իբրեւ ժողովրդի ու խորհրդային իշխանութեան թշնամիներ, դաշնակցական տեռորիստներ[6], տրոցկիստական[7] միացեալ կենտրոնի անդամներ, ազգի դաւաճաններ ու կուսակցութեան քայքայիչներ…: Մեղադրական ձեւակերպումների պակաս այն օրերին չէր զգացւում. տարատեսակ, զաւեշտի հասնող մեղադրականներով հեղեղուած էր սովորական մարդու առօրեան:

Իսկական տաղանդի բացակայութիւնը խթանեց անտաղանդութեան ու գեղարուեստական խոտանի ծաղկումը գրական աշխարհում: Դատապարտուած ու հալածուած ճշմարիտ արուեստին ի հակակշիռ՝ վերելք ապրեց անճաշակ ու սնանկ գրականութիւնը: «*Բայց գրականութեան եւ արուեստի մէջ պարտութիւն կայ, որ յաղթանակ է, յաղթանակ կայ, որ պարտութիւն է: Որովհետեւ վերջնական արդիւնքում յաղթանակը ոչ թէ վարչական ուժի կողմն է, այլ՝ տաղանդի ուժի*»[8]՝ նկատում է Դաւիթ Գասպարեանը:

Այս ընթացքում ծնւում էին նաեւ պատմական թեմատիկայով գրուած երկեր, որոնց առերեւոյթ չէզոք, քաղաքական որեւէ ուղղուածութիւնից զերծ բնոյթն իր խորքում նպատակ ունէր վերագնահատել ու վերապրեցնել մեր ազգային, պատմական արժէքներն ու ոգին: Այս առումով արժանայիշատակ են յատկապէս Դերենիկ Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց*, *Երկիր Հայրենի*, Բակունցի *Խաչատուր Աբովեան*, Թոթովենցի *Կեանքը Հին Հռոմէական Ճանապարհի Վրայ* երկերը:

Մինչ հայ գրողներից շատերը հանդէս էին գալիս ստորաքարշ ուղերձներով՝ առ ժողովուրդների փառաբանեալ հայրը, Չարենցը գրում էր պոէմներ ու բանաստեղծական շարքեր, որոնցում նզովում ու խարազանում էր Ստալինին: *Գիրք Ճանապարհի*ի առաջին հրատարակութիւններում տեղ չգտած, բայց այդ երկի անքակտելի մաս կազմող «Աքիլլէ՞ս, Թէ՞ Պիէրօ» պոէմը սկիզբ դրեց Առաջնորդի

(Ստալինի) եւ Չարենցի հակամարտութեանը, որն ունեցաւ եղերական հանգուցալուծում վերջինիս համար:

Ահա Չարենցի մի բանաստեղծութիւն՝ այն օրերի մղձաւանջի եւ դրա հեղինակ Իոսիֆ Ստալինի անձի անաչառ գնահատութեամբ.

Բարձրավիզ կօշիկներ հագին՝
Մի ոտքը Կրեմլի վրայ ծանր,
Միւսը Ուրալի վրայ,
Գլուխը ամպերին յառած,-
Որպէս ամեհի մի արծան,
Կոլոսի[9] նման քարախորհուրդ
Ծառացել է կերպարանքը նրա.-
Չարհուրելի երեւոյթ չեղեալ
Աշխարհում օրից առաջին:
Աշխարհի վեցերորդ մասում,-
Չինական պարսպից մինչեւ
Սեւծովեան ափերը ջերմ-
Սառուցեալ Ովկիանոսից մինչեւ Մասիս-
Այս անծիր եզերքի վրայ
Փռուել է սփուերը նրա
Եւ երկիրը կրում է հազիւ...
Հսկայ առաջնո՞րդ Մարքսին հաւասար,
Մտածո՞ղ, փրկի՞չ աշխարհահմայ...
Ո՛չ, աշխարհացունց կատակլիզմների[10]
Հանճարեղագոյն խոհարար է սա...
Ո՛չ, անծայրածիր մի ամբողջ երկիր
Մի արջի նման պարացնող է սա...
Ինքնակալութեան ժառանգորդն է սա...
Ո՛չ, ռուս ցարերի[11]՝ Իւան Ահեղի,
Ե՛ւ Պետրոս Մեծի, ե՛ւ պորփիւրակիր[12]
Նիկոլաների վերջին ինքնակալ
Ժառանգորդն է սա...[13]:

Ստալինեան բռնութիւների թեման իր արտացոլումն է գտել նաեւ օտարազգի հեղինակների չափածոյ երկերում: Անդրէյ Տուարդովսկու «Յիշողութեան Իրաւունքով» պոէմում կարդում ենք.

Ի ծնէ խարան էր սահմանուած
Մանկիկին՝ թշնամուց ծնուած,
Եւ թւում էր, թէ երկրին անվերջ
Պակասում էին որդիք խարանուած[14]:

Երեսնականների իրականութիւնը պատկերող երկերը լաւագոյնս ցուցանում են խորհրդային մարդու պարզամտութիւնն ու անտեղեակութիւնը կատարուած հալածանքների ահագնութիւնից: Գեղարուեստն ի ցոյց է դնում ուղեղի մթագնման մի համաժողովրդական ախտ, որի մանրէները սփռուած են ամէնուր՝ Ստալինի բարձրաստիճան գործակալների եւ մանր-մունր դիրքեր զբաղեցնող նրանց կոյր կամակատարների միջոցով: Իւրաքանչիւր քայլ դէպի ողջախոհութիւն դիտւում է իբրեւ աններելի յանցագործութիւն եւ ստանում բիրտ հակահարուած: Իսկ հակահարուածի տեսակները տարբեր են՝ ընկերական դատերից, բակային 'վարչութեան' խարազանող ժողովներից մինչեւ ԳՊՈւի[15] աշխատակիցների գիշերային "այցելութիւններ եւ ճամփորդութիւններ" անյայտ ուղղութիւններով՝ "սեւ ագռաւի"[16] թեւերին:

«*Մի քանի փասնամեակների քաղաքական ձերբակալութիւնները մեզ մօտ տարբերւում էին հենց նրանով, որ բռնւում էին միանգամայն անմեղ, ուստի որեւիցէ դիմադրութեան չնախապատրաստուած մարդիկ: Դատապարտուածութեան ընդհանուր զգացողութիւն էր սրեղծուել, պատկերացում (ի դէպ, անձնագրային մեր կարգի պայմաններում բաւականաչափ սրոյգ), որ ԳՊՈւ[17]-ՆԿՎԴից[18] փախչելն անհնարին է: Եւ նոյնիսկ ձերբակալման համաճարակների թէժ շրջանում, երբ մարդիկ աշխատանքի գնալիս ամէն օր հրաժեշտ էին տալիս ընտանիքին, քանզի վստահ չէին, թէ երեկոյեան տուն են դառնալու, նոյնիսկ այն ժամանակ համարեա չէին դիմում փախուստի (հազուադէպ ինքնասպան էին լինում): Ինչ եւ պահանջւում էր: Խոնարհ գառը գայլի ատամի բանն է*»[19]:

Մարդիկ, կորցրած ամենայն մարդկայինը, ամենայն ազգայինն ու անհատականը, այս հասարակարգում վերածւում են արարածների բոլորովին նոր տիպի. այս պատուհասի մասին են գուժում գրողները: Նրանք սոսկումով նկատում են, որ մարդկային առողջ բանականութեան եւ զգացմունքների մթագնումը գերազանցում է բոլոր հնարաւոր սահմանները:

Մկրտիչ Արմէնի *Պատուիրեցին Յանծնել Ձեզ* ժողովածուի «Ազատուկ» պատմուածքը, թերեւս, ստալինեան բռնատիրութեան պայմաններում գոյատեւող հասարակութեան երկփեղկուածութեան ամենացնցող վկայութիւններից մէկն է: «*Արհամարհո՞ւմ էին ազատ մարդիկ կալանաւորներին, թէ ոչ, միեւնոյն էր, կալանաւորներն իրենք արհամարհում էին նրանց եւ անուանում 'վոլնեաշկաներ', այսինքն՝ 'ազատուկներ'*»[20]: Եւ խզումը ազատութեան մէջ գտնուողների ու կալանաւորների միջեւ բնորոշ էր բոլորին՝ անգամ ամենամերձաւոր ազատին ու անազատին: Այս իրողութեան ապացոյցն է Արմէնի գրական հերոսների՝ կալանաւոր Եֆիմ Լոշչանինի եւ նրան տեսակցութեան եկած

կնոջ՝ Ելենա Լոշչանինայի հանդիպման պատմութիւնը: Տեւական ժամանակ ամուսնուն չտեսած կինը ցնցւում է հանդիպման առաջին իսկ վայրկեաններից՝ զգալով իրենց միջեւ ընկած խոր անջրպետը: «*Եֆիմը, նրա Եֆիմը, որ այնտեղ, աշխարհում, հպարտ արժանապատուութեամբ էր պահում իրեն բոլոր մարդկանց հետ, այժմ կանգնել էր՝ ինչպէս զինուորը հրամանատարի առջեւ... Ո՛չ, ո՛չ, զինուորն ու հրամանատարն այդպէս չեն լինում, նա կանգնել էր ինչպէս ոչ-մարդը մարդու առջեւ...*»[21]: Արմէնը համոզիչ պատմութեամբ ցոյց է տալիս, որ կալանաւոր Եֆիմը եւ "ազատուկ" Ելենան հասարակարգի երկու հակադիր բեւեռներն են, որոնց միջեւ չի մնացել ընդհանուր ոչինչ: Կեանքի դաժան պայմանները Եֆիմի մէջ կործանել էին մարդուն, եւ նա չէր կարող, թէկուզ կարճ ժամանակով, վերադարձ կատարել 'ոչ-մարդ'ուց դէպի մարդը: Նրա համար 'ազատուկ'ն 'ազատուկ' էր, ով էլ որ լինէր: Եւ բախումն այս դէպքում անխուսափելի է, այն չի շրջանցում անգամ երբեմնի միմեանց սիրող ամուսիններին: Կնոջ գգուանքներն ու սիրալիրութիւնը անյարիր են կոպտացած, վայրենացած Եֆիմի ըմբռնումներին, եւ նա գերադասում է տեսակցութեան առաջին իսկ օրը վերադառնալ կալանավայր՝ իրեն հասկացող ու սրտակից կալանաւորների միջավայր: Ճիշտ նոյն փոխյարաբերութիւններն են պատկերւում Եուզ Ալեշկովսկու[22] «Անձնական Տեսակցութիւն» չափածոյ նորավէպում, որտեղ տեսակցութեան եկած կնոջ գգուանքներին ու զգացմունքային զեղումներին անհաղորդ ամուսինը միայն մի բան է տենչում, որ յաջորդ անգամ տեսակցութեան գալիս՝ կինը չմոռանայ գործի դնել իրեն մանրամասնօրէն բացատրուած աճպարարութիւնները՝ անցակէտով պահակներից թաքուն օղի անցկացնելու եւ ամուսնուն հասցնելու համար: Ահա թէ որն է կալանաւորի 'նուիրական' երազանքների սահմանը:

Եթէ յիշեալ եւ մեր յետագայ շարադրանքում յիշելի հեղինակները խնդրոյ առարկայ նիւթին անդրադարձել են մասնաւոր դէպքի, մասնաւոր անձի ճակատագրի նկարագրութեան շրջանակներում, ապա Մահարին իր *Ծաղկած Փշալարեր* վիպակում տուել է 30ականների համապատկերի ամփոփ ու սպառիչ գեղարուեստավաւերագրութիւնը: Ահա այդ ժամանակի դէմքը. «*Խարո՛յկ: Խարո՛յկ, խարո՛յկ: Փակեցէք ձեր աչքերն ու ականջները, մարդիկ, միջնադարը վերադարձել է... Հնձուած էր եւ շարունակում էին հնձել կուսակցական եւ կառավարական կարեւոր ղեկավարներին, բոլոր հիմնարկների պետերին ու պատասխանատուներին, հանրապետական գլխաւոր դատախազին ու դատախազներին, Կենտկոմի նոր քարտուղարին ու նրա աշխատակիցներին, շրջկոմ ու գործկոմ, համալսարանի դասախօս ու*

վանեցի, ուսուցիչներ, գիւղացիներ, ուսանողներ, բարձր դասարանի աշակերտներ»[23]:

Ծաղկած Փշալարերը գրուել է 1965ին, առաջին անգամ լոյս է տեսել 1971-72ին, *Նայիրի* շաբաթաթերթում (Բէյրութ): Առանձին գրքով լոյս է ընծայուել 1986ին, դարձեալ Բէյրութում: Եւ միայն 1988ին «Սովետական Գրող» Հրատարակչութիւնն առաջին անգամ հրատարակել է վիպակը մայր հայրենիքում ու ներկայացրել այն հայաստանցի ընթերցողի դատին:

Հայաստանեան հրատարակութեան առաջաբանում Դաւիթ Գասպարեանը գրում է. «*'Ծաղկած Փշալարեր'ը ըստ մտայղացման պիտի անմիջականօրէն շարունակէր նրա կենսապատումը՝ սկսած 1936ից, եւ հասցնէր մինչեւ 1947 թուականը՝ ընդգրկելով գրողի առաջին աքսորի տարիները: Այդ վիպակը գալիս էր շարունակելու եւ ոչ թէ աւարտելու նրա կեանքի հնգապատումը, եթէ 'Մանկութիւն', 'Պատանեկութիւն', 'Երիտասարդութեան Սեմին', եռագրութեանն աւելացնենք անաւարտ 'Երիտասարդութիւն'ը եւ այս վիպակը*»[24]:

Գասպարեանը, իբրեւ ժամանակի վաւերագրութիւն եւ իբրեւ գեղարուեստական իրողութիւն, այսպէս է գնահատել Մահարու ինքնակենսագրական վիպաշարը. «*Իր կեանքի այս հնգապատումի գրուած էջերով Մահարին վերակենդանացնում է հանրային, ազգային, քաղաքական, մշակութային իրադարձութիւնների բարդ պայմաններում մարդկային սերունդներին վիճակուած մի ամբողջ ժամանակաշրջանի որքան անձնական, նոյնքան էլ անանձնական կեանքի հաւաստի պատմութիւնը: Անմոռուչ ինքնակեղեքման գնով վերականգնած ճշմարտութեան մի այդպիսի անխարդախ վաւերագիր է 'Ծաղկած Փշալարեր' վիպակը*»[25]:

Իհարկէ, Մահարին ստալինեան բռնութիւններին, 30ականների թեմային անդրադարձել է ոչ միայն *Ծաղկած Փշալարեր* վիպակում, այլեւ մի շարք փոքրածաւալ գործերում: Նորայր Ադալեանն այսպէս է բնորոշում Մահարու սիբիրեան թեմաներով գրուած ստեղծագործութիւնները. «*Սիբիրն աչքիս առաջ կանգնեց որպէս դժոխք՝ մարդկային խեղուած ճակատագրեր, ազնիւ հոգիների ցրտահար սփուռները, անսահման միայնութիւն, մօտեցող մահուան լուռ ոտնաձայներն անչափելի գոյութեան մէջ: Սիբիրն ինձ համար դարձաւ Մահարին*»[26]:

Այդ Սիբիրը ենթադրում էր համամարդկային ու համախորհրդային այլասերուած բարքերի յաղթարշաւ լայնատարած ողջ երկրի տիրոյթներում. երկիր, որի քաղաքացիների կենսակերպը թէ՛ կալանավայրերում, թէ՛ թուացեալ ազատութեան մէջ ուղղորդւում էր գայլային կարգախօսների թելադրանքով: Այդ կարգախօսները հակիրճ

ու պատկերաւոր բանաձեւել է Մկրտիչ Արմէնը *Պատուիրեցին Յանձնել Ձեզ* ժողովածուի «Վեց Հիւանդութեան Տէր Մարդը» պատմուածքում: Թուարկենք դրանք:

«Փրկուիր ով կարող է եւ ինչպէս կարող է»:

«Այսօր դու մեռիր, իսկ վաղը՝ ես»:

«Կեանքը գոյութեան կռիւ է»:

«Դու ոչինչ չես տեսել ու ոչինչ չես լսել»:

«Մատնիչներին դատում է ժուլիոն[27]»[28]:

Այս բանաձեւերի մերկապարանոց կիրառութեանն ենք իրազեկւում՝ էջ առ էջ հետեւելով Մահարու վիպակի սիւժէտային ընթացքին:

Դէպքերն սկսում են ծաւալուել այն պահից, երբ ստալինեան ճամբարի չորս աքսորեալ բրուտագործներին (հեղինակ, Աշոտ դայի, ադրբեջանցի կառապան Մամօ, Վիլնիւսի Պետական Համալսարանի նախկին ուսանող Իոնաս) հանգամանքների ու ճակատագրի բերումով, աւելի ճիշտ՝ «Մեծ հայրիկ»ի (այսպէս էր կոչում Ստալինին խորհրդային հասարակութիւնը) «բարի» կամքով միանում է Բեռլինի Նկարչական Ակադեմիայում ուսանած գերմանուհի Լիւդմիլա Կարլովնա Շարթը: Անմեղ մեղաւորների խմբի այս նոր համալրումը առիթ է տալիս ճամբարի կեանքում մեղսական համարուող միջադէպերի. աբասթումանցի[29] կառապանն ու ուսեալ գերմանուհին տրւում են ճամբարային սիրոյ վայելքին, որը ճամբարի կեանքում պարտիզանական խիզախութիւն էր համարւում: Այդ խիզախութիւնն իր հետ բերում է ծանր հետեւանքներ, եւ Մամօն ու Լիւդմիլան բացառութիւն չն այս հարցում: Երբ կնոջ յղիութեան փաստով բացայայտւում է այդ սիրոյ պատմութիւնը, Լիւդմիլային ուղարկում են մէկ այլ ճամբար, ուր սովորաբար ուղարկում էին «*ճամբարային օրէնսդրութեան դէմ մեղանչածներին, բոլոր Մարիամ Մագդաղենացիներին*»[30]: Եւ քանի որ այդ սիրոյ պտուղ-մանկիկը մահանում է ծնուելուց կարճ ժամանակ անց, ապա ըստ ճամբարային տրամաբանութեան սահմանուած օրէնքների՝ Լիւդմիլային վերադարձնում են իր նախկին կալանավայրը: Փոքրիկի ապրելու պարագայում սարսափն այլ նկարագիր էր ունենում. մօրն ուղարկում էին բոլորովին այլ պատժատեղի, որպէսզի չկարողանար երբեւէ հանդիպել ո՛չ իր երեխային, ո՛չ նրա հօրը:

Սիւժէտային այս գլխաւոր գծին զուգահեռ, աւելի ստոյգ՝ ընդմիջելով այն, ձեւաւորւում է մէկ ուրիշը՝ հեղինակի յիշողութիւնների շարահար շղթան, որը Մահարուն սիբիրեան ճամբարից բերում-հասցնում է երեւանեան տօթակէզ փողոցները: Նրա մէջ վերակենդանանում են ձերբակալութեան օրուայ մղձաւանջային տեսարանները, Երեւանի բանտի մենախցում, ընդհանուր բանտախցում՝ «դիւժինգրադում»[31], Վոլոգդայի[32] բանտում անցկացրած ծանր օրերը:

Ստալինեան բռնութիւնների թեմայով գրող հեղինակներից իւրաքանչիւրն անշուշտ, ունէր իր ուրոյն ոճն ու նկարագիրը, խնդրի առաջադրման ու հանգուցալուծման իր բանաձեւը, սակայն այս տարիներին եւ այս տարիների մասին ստեղծուած բազմաժանր գործերում նկատելի է մի ընդհանուր օրինաչափութիւն. գրողներն իրենց երկերում դիմում էին աստուածաշնչեան թեմաներին, կերպարներին ու ճշմարտութիւններին. թերեւս միակ հնարաւոր փրկութեան դուռն էր սա կայէննէր եւ յուդաներ ծնող-սնուցող-բազմացնող հասարակարգի պայմաններում: Հաւատի եւ սիրոյ առաջնայնութեան գաղափարն էր շարժիչ ուժը հեղինակների գերակշիռ մեծամասնութեան երկերում: Ասուածի բնորոշ դրսեւորումներն են Մամօ-Շարթ սիւժէտային գիծը Մահարու *Ծաղկած Փշալարեր* վիպակում, Վարպետ-Մարգարիտա սիւժէտային գիծը Միխայիլ Բուլգակովի *Վարպետը Եւ Մարգարիտան* վէպում, Ժիւագօ-Լարա սիւժէտային գիծը Բորիս Պաստեռնակի *Դոկտոր Ժիւագօ* վէպում: Շարքը, իհարկէ, կարելի է շարունակել:

Տարբեր ստեղծագործութիւններում առկայ է խնդրի առաջադրման, սրման ու հանգուցալուծման միեւնոյն մեքենականութիւնը: Դէպքերի կենտրոնում տղամարդն է՝ տառապած, հալածուած, խոշտանգուած, կողքին կինն է՝ նուիրուած, բարի, անձնազոհ, որ դարմանում է ոչ միայն իր տառապեալ սիրելիի մարմինը, այլեւ մաքրագործում էութիւնը, հոգին: Անգամ անասունից մարդ է արարում, ինչպէս որ պատահեց Մահարու վիպակի հերոսների դէպքում:

Մահարու արձակը բանաստեղծական է՝ անկախ իր բովանդակած թեմայից: Իսկ այդ թեմաներն առանձնապէս հիմքեր չէին տալիս բանաստեղծելու: Բռնադատուած ազատութիւն, ոտնահարուած արժանապատուութիւն, 'հիւանդ արդարութիւն', գազանային ծեծից, կտտանքներից խոշտանգուած կալանաւորներ, աքսորեալ խոհարար Մեսրոպ Ուզունեանի սահմանափակ, անպաճոյճ, բայց կեանքի, ժամանակի հրամայականով ամրագրուած կենսափիլիսոփայութիւն. «- *Իրեք պան կայ, մնացածը՝ հէչ, իրեք պան,- ուտուշ, խմուշ, սիրուշ. մափուսի մէջ սիրուշ չկայ, կը մնայ ուտուշ-խմուշ…*»[33]:

Բայց եւ այս ամէնի կողքին՝ բարձր արժէքների չընկրկող մաքառում. մարդուն վեհացնող, սրբագործող սէր, պայծառ երեւակայութեամբ վերականգնուած լաւ օրերի յուշ, անշունչ կաւից կանացի քնքուշ, վտիտ մատներով հունցուած Պուշկինի, Չայկովսկսկու, Հայնէի գլխաքանդակներ: Եւ այս ամէնի կենտրոնում կանգնած է ինքը՝ գրողը՝ որպէս դէպքերի անմիջական մասնակից ու շարադրող:

Մահարին իր վիպակի իւրաքանչիւր դրուագում հետամուտ է 'հիւանդ արդարութեան' փաստի ու դրա 'բժշկման' հրամայականի բարձրաձայնմանը: Առողջ բանականութեամբ ոչ մի կերպ չընկալուող

իրապատում դիպուածները, որոնց հանդիպում ենք թէ՛ *Ծաղկած Փշալարեր*ում, թէ՛ Մահարու սիբիրեան թեմաներով գրուած այլ գործերում, թէ՛ բազմաթիւ հայ եւ օտարազգի հեղինակների գեղարուեստական եւ փաստագրական երկերում, անմեղօրէն դատապարտուած ու սպանուած անհաշիւ մարդկանց շառաչուն ապտակն ու անէծքն է՝ հասցէագրուած այդ գեհենը ծնած խորհրդային դահճապետին՝ Ստալինին:

Յանցագործների եւ ոչ-յանցագործների միջեւ ձգուող սահմանը ներկայացուող իրականութեան մէջ շատ տարտամ էր ու խաբուսիկ: Իւրաքանչիւրը կարող էր փոխել իր ճամբարն ու յայտնուել անցարգելի հակառակ կողմում: Եւ սա մարդկանց մղում էր զաւեշտալի զգուշաւորութեան: Զաւեշտալին յաճախ վերածւում էր գազանութեան. զգուշաւորութիւնը մարդկանց մղում էր գազանային քայլերի, վերածում մարդակերպ հրէշի, անգամ՝ մարդակեր գազանի (օրինակ՝ վիպակի այն հատուածը, որում նկարագրուած է թիֆլիսահայ Զինգաեւի փախուստը երեք աքսորեալի հետ):

Ծայրայեղ կասկածամտութիւն, մարդկային բնական բանականութեան ու զգացմունքների բացակայութիւն, տրամաբանութիւնից ու ողջախոհութիւնից զերծ հայեացք՝ շրջապատող իրականութեանն ու մարդկանց. սրանք են այն յատկանշական որակները, որոնք բնութագրում են մեր ուսումնասիրութեան դաշտում գտնուող երկերի հերոսներին:

Պարզ բանաձեւ է. եթէ տուեալ հասարակութեան մէջ կան մարդակերպ գազաններ, ուրեմն պիտի լինեն նաեւ նրանց զոհերը: Վերջիններս խորհրդային լայնարձակ երկրի անմեղ աշխատաւորներն ու մտաւորականներն են, որոնք 'ժողովրդի թշնամու', 'հակասովետական սրիկայի', 'դաշնակցական տեռորիստի'[34], 'տրոցկիստի'[35] եւ այսօրինակ այլեւայլ պիտակաւորմամբ յայտնուել են գիշատիչների խրախճանքի սեղանին, իմա՝ ստալինեան բանտերում, աքսորներում, կառափնարաններում:

Եւ ինչպէ՞ս էին դատւում այս մարդիկ: Ահա մահարիական վկայութիւնը. «*Նրանց չեն դատում, այսինքն՝ դատում են՝ բացակայութեամբ: Դրա համար գոյութիւն ունի տրոյկա, այսինքն՝ եռեակ: Նստում են երեքով, վերցնում հսկայական ցուցակներ, աշխատում սեւ ու կարմիր մատիտներով: Այստեղ էլ երջանկութիւնը համեմատական է: Սեւ խաչաւոր անուն-ազգանուն կրողներն աւելի բախտաւոր են, քան կարմիր խաչաւորները: Ամէն դէպքում խաչը մնում է խաչ*»[36]:

Այսպիսի դատից յետոյ կալանաւորը դադարում է մարդ լինելուց եւ վերածւում համարի. «*Մենք հիմա մենք չենք, մենք համարակալուած,*

բայց այսպէս թէ այնպէս կենդանի միաւորներ ենք: Ես '222'ն եմ, օրինակի համար: Ինչպէս էլ գտան իսկական թիւս՝ 222, ոչ աւել, ոչ պակաս…

Որովհետեւ եթէ մէկով աւելի լինէր, կարող է սպացուել Երեւանի կոմիտէի քարտուղար, իսկ եթէ պակաս՝ ճարտարապետ… 222, ահա՛ ես, ոչ աւել եւ ոչ պակաս:

Ու եթէ ես փախչեմ, այդպէս էլ կ'ասեն՝ 222ը փախաւ, ու եթէ իմ եւ բանտային բժշկի յարաբերութիւնները լաւանան, նա մի գեղեցիկ օր կ'ապացուցի, որ համր չէ: Կը խփի ուսիս եւ կ'ասի՝ 222, քէֆդ ո՞նց է:

Ու եթէ մայրս ինձ նամակ գրի, պիտի գրի. 'Որդեակ իմ, 222, սպացայ վերջին նամակդ եւ կարդալով շատ…'

Ու եթէ ես միօրինակ ու տաղտկալի կեանքս քիչ թէ շատ բազմազան դարձնելու բարի նպատակով վերցնեմ ու մեռնեմ, չորրորդ յարկի պատասխանատու հերթապահն այդպէս էլ պիտի զեկուցի բանտապահին. '222-ը մեռաւ…':

Խե՜ղճ 222»[37]:

Այս երեւոյթի մէկ այլ գեղարուեստականացում ենք տեսնում Բուլգակովի *Վարպետը Եւ Մարգարիտան* վէպում: «*Փաստաթուղթ չկայ, մարդն էլ չկայ*»[38],- ինչում է ստալինեան գեհենի այլաբանական հերոսի շուրթերից: Ասել է, թէ մարդը թիւ է, փաստաթուղթ, հաշուառուած ինչ-որ անշունչ միաւոր, որի գոյութեան եւ չգոյութեան միջեւ ճգուող սահմանն այդ մէկ հատիկ թղթից, հաշուառման մատեանում գրառուած մէկ տողից այն կողմ չի ճգւում:

Այս գաղափարի հեղինակը ոչ այլ ոք էր, քան ինքը՝ Ստալինը: Վկայութիւնը կը գտնենք Անատոլի Ռիբակովի *Արբատի Զաւակները* փաստագրական վէպում: «*Չկայ մարդը եւ չկայ պրոբլէմը*»[39]. այս խօսքերն արտաբերւում են Ռիբակովի վէպում գրական կերպարի վերածուած Ստալինի շուրթերով:

Մահարին գրում է, որ բանտերում ու աքսորավայրերում, այնուամենայնիւ, կային նաեւ իսկական յանցագործներ՝ քրէականները, որոնց գոյութիւնը ոչ թէ սփոփում էր անմեղ-մեղաւորներին՝ քաղաքականներին, այլ շատ աւելի ծանրացնում նրանց վիճակը: Քրէականներին տրուած էին քաղաքականներին ճնշելու, ստորացնելու լիազօրութիւններ, եւ նրանք չէին թերանում դրանք գործի դնելու հարցում, քանզի դա էր իրենց երդուեալ քրէական եւ ոչ բնաւ քաղաքական լինելն ապացուցելու լաւագոյն միջոցը: Այո՛, ստալինեան դժոխքում քրէական յանցագործութեան համար դատուելը մեծ բախտաւորութիւն էր, բայց եւ կար մշտական վտանգը, թէ կարող ես դասուել քաղաքականների թուին, եթէ, օրինակ, ձի ես գողացել, որի

տէրը կուսակցական է, կամ կօշիկդ կապելու թել ես պոկել ցախաւելից, որը բանտին պատկանող հանրային գոյք է:

Եւ որպէսզի որեւէ մէկն իրեն իրաւունք չվերապահի հանգիստ գլուխը դնել բարձին եւ իրեն զգալ անխոցելի ու անպատժելի, ստալինեան մեքենան ժամանակ առ ժամանակ մաքրագրում էր նաեւ իրեն հաւատարիմ դահիճների շարքերը: Այս գործելաոճի ցայտուն պատկերն է տալիս Մահարին Երեւանի բանտի նախկին պետի ձերբակալութեան եւ կտտանքների նկարագրութեան միջոցով:

Կտտանքներին, ստորացումներին գումարւում էր ամենասարսափելի փորձութիւնը՝ քաղցը: Մահարու մօտ այս երեւոյթի նկարագրութիւնը ոչ թէ սոսկ իրական փաստի արձանագրում է, այլ վկայութիւնն այն բանի, որ մարդիկ խեղւում էին ոչ միայն ֆիզիկապէս ու բարոյապէս, այլեւ հաշմւում էր նրանց ենթագիտակցութիւնը: Մարդն իր երազներում անգամ դադարում էր իր նման լինելուց, քանզի իրականութիւնը միայն իր տիրոյթներում չէր մամլում մարդուն, այն նաեւ սողոսկում էր ենթագիտակցական շերտերի մէջ. «*Հաց. ահա ինչով էր զբաղուած նրա (կալանաւորի - Կ.Ռ.) ուղեղը: Ամէնից առաջ հաց, մեծ քանակութեամբ հաց, որ ուտի այնքան, որքան ցանկանում է: Կշտութեան զգացողութիւնից նա զրկուել էր այն օրից, երբ զրկուեց ազատութիւնից: Գիշերները երազում, առաջին շրջանում, նա դեռ տեսնում էր հարազատներին, իր սիրած եւ նախընտրած ուտելիքները, մօտիկ մարդկանց, իրենց տունը. ժամանակի ընթացքում, կեցութեան հետ, փոխուեցին նաեւ երազները: Հիմա նա երազում միայն հաց է տեսնում եւ ոչ այն տեսակ-տեսակ հացերը, որոնցով նա սնւում էր տանը, ոչ, յատկապէս ճամբարային, բանտային գորշ եւ խառնածին հացը, հինգ հարիւր գրամ այն հացը, որն ուտում էր նա մէկ զարկով, մի ակնթարթում, իսկ ուտելուց յետոյ չէր կարող որոշել. երա՞զ էր դա, թէ իրականութիւն: Հաց ուտելու այս մեծ, սխրալի արարողութիւնը շարունակւում էր երազում, նա տեսնում էր բեռնատար մեքենաներ՝ բարձուած ճամբարային, յատկապէս ճամբարային հացի 'բուխանկաներով', որոնցից մի քանիսին տէր էր կանգնում նա եւ ուտում էր, ուտում երջանիկ մոլուցքով, ուտում էր կատաղի ու անյագուրդ*»[40]:

Մարդու ենթագիտակցութեան խեղման ցնցող օրինակների ենք հանդիպում նաեւ Մկրտիչ Արմէնի պատմուածաշարում: Օրինակ՝ «Զառանցանք» պատմուածքի հերոս Նիկոլայ Միխայլովն այնպէս էր սարսափած իր գլխում պտտուող առողջ մտքերը կառավարել չկարողանալու հետեւանքներից, որ այդ սարսափը, ի վերջոյ, նրան յանգեցնում է խելագարութեան: «Խորամանկ Մարդը» պատմուածքի հերոս Խարիտոն Սիմակովը այնպէս է մտնում հիւանդ ձեւանալու դերի մէջ, որ ի վերջոյ, մահանում է հենց այն հիւանդութիւնից, որը

ձեւացնելուն էին ուղղուած նրա գիտակցական եւ ենթագիտակցական բոլոր մղումները:

Տարբեր հեղինակների երկերում բառացիօրէն կրկնուող սարսափ-պատմութիւնների շարքում նկարագրւում է մէկ այլ փորձութիւն՝ ծարաւը, որին պէտք էր դիմանալ դէպի Սիբիր ուղեւորուող գնացքների վագոններում: Խորհրդային երկրի 'ամենաթանկ կապիտալով'[41] բեռնուած չարագուշակ վագոններից լսւում էին ծարաւից նուաղող կալանաւորների ձայները, ջուր աղերսող ճիչերը, ու այդ ճիչերը ճեղքելով՝ հզօր ակորդի պէս պայթում է Մահարու կծու հեգնանքը. «*Ջո՜ւր տուր, լայնատարած ու հարազա՜տ երկիր, քո խոնարհ ու ծարաւից մեռնող թշուառական զաւակներին, ովկիանոսներ են լուանում քո անծայրածիր ափերը, ծովերով ես հարուստ ու լճերով, գետերով ու սառնաջուր աղբիւրներով, մի զլանայ նրանց քո ջուրը, չէ՞ որ դեռ բոլորիս հայրն է ասել՝ 'Մարդն ամենաթանկ կապիտալն է…*»[42]:

Սուրէն Ղազարեանի «Դա Չպէտք Է Կրկնուի» յուշագրութեան էջերում նոյն երեւոյթի հետեւեալ նկարագրութեանն ենք հանդիպում. «*Էտապը[43] շատ տանջալից էր:*

Դիտմամբ ստեղծել էին անտանելի պայմաններ: Մեր ունեցած փողերը վերցրել էին, եւ մենք հնարաւորութիւն չունէինք որեւէ կերպ ճանապարհին ուտելիք գնելու, մեզ տալիս էին միայն հաց եւ շատ աղի հոտած հարինգ[44] եւ ինչ-որ կիսահում, կիսաապխտած ծանրահոտ ձուկ: Խմել էինք ուզում, բայց ջուրը սահմանափակում էին, եւ ամէն անգամ կռուով էինք ստանում: Էտապի դժոխային պայմանները աւելի էին ծանրանում, երբ մեզ չէր թոյլատրւում օգտուել զուգարանից ըստ մեր կամքի: Պահակապետը մեզ զգուշացրեց, որ մեզ զուգարան գնալ թոյլ կը տան օրական երկու անգամ միայն, առաւօտեան եւ երեկոյեան, եւ ոչ ոքի ոչ մի դէպքում բացառութիւն չի արուի: Մենք շուտով համոզուեցինք, որ պահակները շատ խստօրէն կատարելու են այդ հրահանգը: Ոչ ոքի թոյլ չտրուեց որոշուած ժամերից դուրս օգտուել զուգարանից: Գործի դրուեցին գաւաթները, թասերը, նոյնիսկ կօշիկները… Կուպէում[45] առանց այդ էլ տասներեք հոգու համար օդ չկար: Սոսկալի հոտը տանջում էր մեզ, մինչեւ խեղդուելու աստիճան: Ամէն ինչ արուած էր, որպէսզի ոտնահարուի մեր մարդկային արժանապատուութիւնը: Եւ երբ բողոքում էինք, ստանում էինք նոյն պատասխանը. 'Մի մոռացէք, որ բանտարկեալներ էք'»[46]:

Ցոյց տալու համար ստեղծուած կացութեան մէջ պայքարի, հակադրուելու անիմաստութիւնը, Մահարին նկարագրում է ճամբարից փախչող արկածախնդիրների անխուսափելի ձախողումը, քանզի համատարած բանտ ու աքսորի վերածուած լայնարձակ երկրում, եթէ

փախչողներն անգամ ուղիղ գծով էին գնում, միեւնոյն է, դարձեալ յայտնւում էին «ծաղկած փշալարերի» առջեւ:

Բայց Մահարին իր առջեւ խնդիր էր դրել ոչ միայն ցոյց տալ իրականութեան հրէշաւոր դէմքը, այլեւ պատճառաբանել մարդկանց մէջ կենսունակութեան նշոյլները չկորցնելու, կեանքից կառչելու ուժ գտնելու գաղտնիքը: Որպէս խորագէտ ու խորազնին հոգեբան՝ նա իր եւ իր նմանների համար բանաձեւել էր ապրելու գաղտնիքը. «*Ես նստում էի գետափին փասից-փասնիհնգ րոպէ եւ օրհնում էի աշխարհի սփեղծումն ու ծնունդը: Մոռացած բոլոր դառնութիւններն ու իմ թշուառ վիճակը՝ ես վերանում էի հոգով, սաւառնում գործարար բակից հեռու, եւ զինուած պահակների մտքով անգամ չէր կարող անցնել, որ ես իմ ողջ էութեամբ գտնւում եմ դուրս, անսահման դուրս նրանց հսկիչ կէտերից*»[47]:

Սա ուղղակիօրէն յիշեցնում է Մկրտիչ Արմէնի «Մոսկուան Ներսում» պատմուածքը, հաւաստագրում այն իրողութիւնը, թէ մտածող, ստեղծագործող հոգեկիցների ներշնչանքն ու դրա դրսեւորումն ունեն նոյնանման բանաձեւ: Պատմուածքի գլխաւոր հերոսը՝ Լէոնիդ Կոզլովը, Մահարի-գրական կերպարի նման մարդու ներքին ազատութեան, հոգու անկախութեան գաղափարի կրողն է: Ահա թէ ինչպէս է նա մեկնաբանում իր ազատ լինելու զգացողութիւնը. «*-Դու կարծում ես, թէ ազատութիւնը միայն ճամբարի շո՞ւրջն է,- 'դու'ով հարցրեց Լէոնիդն իր հասակակից պահակին:- Ճամբարի շրջանակը կենտրոնում բաց է, եւ այստեղ էլ ազատութիւն է: Ես փախած եմ: Ես Մոսկուայումն եմ*»[48]:

Այսուհանդերձ, համատարած թոհուբոհը, գլխիվայր շրջուած բարքերը փոշիացնում են մարդու լուսաւոր մղումները: Մարդու՝ ստեղծագործելու անսպառ շնորհները ելք են որոնում կործանարար իրականութիւնից, սակայն հոգեվարքի ցնցումներ յիշեցնող նրա ճիգերն ի վերջոյ մարում են. մարդը խաղաղւում է մահապարտի համակերպութեամբ: Եւ բնական է, որ այսպիսի պայմաններում ոչ միշտ է երեւակայութեան թռիչքը, պատրանքին տրուելու՝ յուզառատ մարդու մղումը հանգուցալուծւում բարի հեքիաթի հանգոյն: Մ. Արմէնի «Հին Տարուայ Գիշերը» պատմուածքի օրինակն այս դէպքում կը համոզի մեզ:

Մ. Արմէնը, նկարագրելով իր արուեստագէտ հերոսի՝ Ագատովի հարուստ ներաշխարհը, այն հակադրութեան մէջ է դնում այլանդակ ու եղծուած բարքերի իրականութեան հետ՝ քայլ առ քայլ նախապատրաստելով նրա անխուսափելի կործանումը: Ագատովը դառնում է սեփական պատրանքի զոհը: Երեւակայութեան թեւերով խուլ տայգայից Մոսկուա հասած եւ ծանօթ փողոցից իր բնակարանի լուսաւորուած պատուհաններին նայող Ագատովի մշուշուած հայեացքի առջեւ մի պարող զոյգ է ուրուագծւում. «*Մէկն իր կինն էր, իսկ միւսն իր քննիչը...*

...Ինչպէս էլ որ լինէր, այդ քննիչներից ոմանց յաջողւում էր հաւատացնել ձերբակալուածների կանանցից ոմանց, որ նրանք մինչեւ հիմա օձի հետ են ապրել մի յարկի տակ եւ չեն իմացել այդ: Այսինքն՝ ոմանք իմացել են եւ դրա համար էլ այժմ ամուսինների նման կրում են ճամբարների դառնութիւնները: Բայց անձամբ դուք, իհարկէ, չէք իմացել...

Եւ տուեալ կինը, երախտապարտ մնալով իր հոգու փրկարարին, երբեմն տրւում էր նրան՝ թէ՛ հոգով, թէ՛ մարնով...»[49]:

Իսկ թէ ինչ էին իրենցից ներկայացնում այդ «հոգու փրկարար» քննիչները՝ սահմռկեցուցիչ մանրամասնութիւններով նկարագրուած է մեր ուսումնասիրած բոլոր երկերում: Այդ երբեմնի մարդիկ վերածուել էին անհոգի գազանների, որոնք հրճւում էին իրենց զոհը դարձած ծանօթ ու անծանօթ կալանաւորներին դժոխային կտտանքների ենթարկելիս: Սուրէն Ղազարեանի «Դա Չպէտք Է Կրկնուի» յուշագրութիւնից տեղեկանում ենք. «*Յետաքննութիւնն ընդունել էր տարօրինակ պրովոկացիոն[50] ձեւ: Նախապէս կազմում էին հարցաքննուողի ցուցմունքները, ներկայացնում բանտարկեալին եւ խոշտանգում այնքան, մինչեւ որ ստորագրէր: Այդ ցուցմունքներում մարդիկ իրենց մեղաւոր էին ճանաչում հակապետական, հակայեղափոխական, վնասարարական, լրտեսական, դիւերսիոն[51], տրոցկիստական[52] եւ այլ գործողութիւնների մէջ: Քննիչները, ստանալով մեղադրեալի ստորագրութիւնը, փոխում էին իրենց վերաբերմունքը նրա հանդէպ, դառնում էին քաղաքավարի եւ նրանցից շատերին 'վարձատրում' յատուկ ճաշերով*»[53]:

Եւ որպէսզի քննիչների՝ ստորագրութիւն կորզելու տիտանական ջանքը պսակուէր յաջողութեամբ, խորհրդային մեքենան ստեղծել էր նաեւ յատուկ որակներով օժտուած աջակիցների մի ամբողջ ինստիտուտ: Դարձեալ դիմենք Ղազարեանի վկայութեանը. «*Սեւ գործի հեղինակները իրենց հրէշաւոր նպատակների համար հաւաքագրում էին մարդկային տականքներին, զինում կտտանքի գործիքներով, հրահրում նրանց մէջ վայրենի բնազդներ: Աւելին՝ հաւաքագրում էին նաեւ խելագարներին...*»[54]:

Եթէ երեւակայութեան թռիչքով այս մղձաւանջից դուրս պրծնելու կարողութիւնը տրուած էր որոշակի հոգեւոր ու մտաւոր յատկանիշներով օժտուած դատապարտեալներին միայն, ապա կեանքին կապող մէկ այլ նախապայման գործում էր մտածողութեան, երեւակայութեան ցանկացած նշաձող ունեցող կալանաւորի համար, գործում էր շատ դէպքերում ոչ թէ բանականութեան ու հոգու, այլ բնազդային մղումի բերումով: Ազատութեան մէջ այն սէր են կոչում, կալանավայրում ու աքսորում՝ նոյնպէս: Թէեւ վերջին դէպքում սէր կոչուածը ձեւախեղուած

երեւոյթ ու նկարագիր ունի: Եւ այնուամենայնիւ, սէրը՝ իբրեւ ամենակարող բալասան, ապրելու ազդակ էր դառնում իւրաքանչիւր դատապարտեալի համար: «*Կանանց էտապի*[55] *ժամանման լուրը ատոմային ռումբի նման պայթեց ճամբարում, մի պայթիւն, որից մարդիկ ոչ թէ մահացան, այլ վերածնուեցին: Հիւծուածների ու անդամալոյծների բրիգադներն անգամ փեղահան եղան: Նրանցից շատերը դէն շպրտեցին անթացուպերն ու ձեռնափայտերը, իրենց օրաբաժին հացը տուին սափրիչներին, հերթից դուրս սափրուեցին, ազատուեցին սեւ, անգամ ալեխառն, ծերացող, խճճուած միրուքներից եւ դարձան մի-մի փեսացու, ճիշտ է, նիհար, գունատ, բայց փեսացու*»[56],- կարդում ենք Մահարու վիպակում:

Մահարու վկայութեամբ սկզբում ճամբարային «սեռական-պարտիզանական կեանք»[57] յորջորջուող երեւոյթն ունենում է հատուկենտ դրսեւորումներ, բայց յետոյ կրում համատարած բնոյթ:

Եւ «*Երբ աբասթումանցի*[58] *կառապան Մամօն բրուտանոցի խոնաւ չորանոցում ալլահի կամքով սէր էր անում նկարիչ-քանդակագործուհի Լիւդմիլա Շարթի հետ, ճամբարային կենակցութիւնը դադարել էր զարմանք պատճառելուց: Ոչ, ճամբարային ընտանիք կազմելու գործում Մամօն առաջիններից չէր*»[59]:

Մահարու վիպակի գրական կերպարներից իւրաքանչիւրն ընթերցողին որոշակի ասելիք, որոշակի գաղափար հասցնող խօսափող է, կերպար-ընդհանրացում: Այդ կերպարները, իհարկէ, գրողին աքսորավայրերում ու բանտերում հանդիպած իրական մարդիկ էին կամ պատմական հանրայայտ դէմքեր, բայց Մահարու գրիչը դրանցից կերտել է գրական լիարիւն, տիպական կերպարներ, *Ծաղկած Փշալարեր*ում դրանք դադարել են սոսկ կենդանի, ծանօթ մարդիկ լինելուց:

Իոսիֆ Ստալինը, օրինակ, կոթողական իր կերպարով հակադրութեան մէջ է ամենայն աստուածայինի ու մարդկայինի հետ. նա նիւթականացնում է չարի արարչագործութիւնը, նրա անյագուրդ մոլեռանդութիւնը՝ դժոխային իր ծրագրերն իրագործելու հարցում:

Ստալին երեւոյթը զբաղցրել է շատերին՝ անկախ մասնագիտութիւնից, տարիքից եւ ազգային պատկանելութիւնից: Մեր ուսումնասիրած գեղարուեստական եւ հրապարակախօսական երկերում տրւում են Ստալին երեւոյթի ամենատարբեր մեկնաբանութիւններ, բացայայտւում նրա անձի եւ գործի հետ կապուած բազմաբնոյթ հարցեր: Փիլիսոփայութեան դոկտոր Ալեքսանդր Յիպկօն գրել է. «*Յաւօք, Ստալինի գաղտնիքը մեռաւ նրա հետ: Մենք պարզապէս էլ չենք իմանայ, թէ ի՛նչ էր մտածում նա իրականում ինքն իր, կուսակցութեան, աշխարհի, այն սոցիալիզմի մասին, որ կառուցում էր:*

Ըստ երեւոյթին դա էլ է կորուստ, քանի որ շատ օգտակար կը լինէր իմանալ՝ ինչ էր մտածում նա այն պահերին, երբ մարդկանց, դասակարգերի եւ նոյնիսկ ժողովուրդների մահուան դատավճիռներ էր արձակում:

Բախտի բերմամբ նրա ձեռքն ընկած յեղափոխութեան ամենազօրութիւնը վերջնականապէս այլասերեց նրան: Բայց այն ամէնում, ինչ նա անում էր, բողոք կար մարդկայինի դէմ:

Ի՞նչն էր նրան չարացրել:

Գո՞ւցէ դա միջակութեան ընդվզումն էր, վրիժառութիւն՝ իր բոլոր պակասութիւնների համար...»[60]:

Մահարին իր վիպակում վերացարկուել է ինքն իրենից, իր անձը վերածել գրական կերպարի: Այդ կերպարը կենսասիրութեան մարմնացում է: Չնայած կեանքի եղերական ընթացքին՝ նա չի դադարում սիրել կեանքը, անգամ կալանավայրերը, որոնց հետ կապւում է Բայրոնի Շիլիոնի կալանաւորի նման: Նա իր մէջ ուժ է գտնում երազելու, տեսնելու-գնահատելու գեղեցիկը, մնալու կիրթ, վեհանձն, մերձաւորին սիրող ու սատարող անձնաւորութիւն: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ նա սոսկ պատմող է, դէպքերի շարադրող, բայց՝ ոչ: Մահարին ինքն էլ իր գրչի տակ դարձել է համամարդկային արժէքներ մարմնաւորող գրական հերոս, որը, այդուհանդերձ, չի թողնում ինքնագովութեամբ տարուած մարդու տպաւորութիւն:

Մենք Մահարի դատապարտեալի նման մարդկանց հանդիպում ենք ոչ միայն *Ծաղկած Փշալարեր*ում կամ Մահարու սիբիրեան շարքի այլ գրուածքներում, այլեւ ուրիշ հայ եւ ոչ-հայ հեղինակների երկերում: Օրինակ՝ Մ. Արմէնի «Աւազակի Երգը» պատմուածքի հերոս պրոֆեսոր Շեւչենկօն՝ Մոսկուայի երաժշտանոցի նախկին դասախօսը, ստալինեան ճամբարներում ու բանտերում տառապող մտաւորական խաւի տիպական ներկայացուցիչն է: Կեանքից ստացած ծանր հարուածները նրա մէջ չեն սպանել մարդուն, արուեստագէտին: Նա էութեամբ նոյն երաժիշտն է, ինչ-որ ազատութեան մէջ, պատրաստ անմնացորդ զոհաբերուելու բարձր արուեստին: Նոյն խմորից են հունցուած նաեւ մ. Արմէնի «Թռչունը» պատմուածքի հերոսները՝ թռչնաբան Ռուդնիցկին եւ պատմաբան, Մոսկուայի Համալսարանի նախկին պրոֆեսոր Կուդրեւացեւը: Այս մարդիկ եւս չեն դաւաճանել ազատութեան մէջ դաւանած իրենց գաղափարներին: Մ. Արմէնը բացայայտել է աքսորեալ մտաւորականի մէջ պարփակուած երկակի մարդուն. դա մի կողմից ճակատագրի հարուածներից ընկճուած, դժուարին կենցաղից ու ծանր ֆիզիկական աշխատանքից հիւծուած աքսորեալն է, միւս կողմից հոգու վեհութիւնը, մարդկային կիրթ ու ազնիւ նկարագիրը պահպանած մտաւորականը: *Պատուիրեցին Յանձնել Ձեզ* ժողովածուի՝ վերը

յիշատակուած «Հին Տարուայ Գիշերը» պատմուածքի հերոս, քաղբանտարկեալ Իւան Ագատովը նոյնպէս մարդկանց այս շերտից է՝ բանաստեղծական հոգու տէր անձնաւորութիւն, որը կարողանում է ամենագորշ ու մռայլ իրականութեան մէջ անգամ նկատել, զգալ գեղեցիկը. «Ոչ ոք չէր հիանում անտառով: Հիանում էր միայն Իւան Ագատովը: Նա նկարիչ էր»[61]:

Սրանք այն մարդիկ էին, որ մինչեւ կալանաւորուելը՝ ազատութեան մէջ, հասարակութեան սերուցքն էին եղել, կեանքի բնական ու բանական օրէնքների դաւանողներն ու պաշտպանները: Եւ հենց այդ որակների պատճառով էլ դարձել էին թիրախ ժամանակի դահիճների համար: Ահա մի քաղուածք Վահրամ Ալազանի *Տառապանքի Ուղիներով* գրքից, որը նախանշում է Չարենցի անխուսափելի կործանումը:

«*...Մուղդուսին[62] մի անգամ կանչում է Չարենցին եւ ասում. 'Դուք պէտք է մերկացնէք բանտարկուած գրողներին':*

Չարենցը պատասխանում է. 'Չեմ ժխտում, որ ես նրանց իդէոլոգիական վոժդն[63] եմ, թէ՛ նրանք եւ թէ՛ ես սխալներ ունեցել ենք, բայց քանի դեռ մի հայ գրող նստած է Չեկայի[64] պադուալում[65], դուք ինձանից նրանց մասին ոչ մի վատ խօսք չէք լսի: Ուզում էք՝ նրանց բոլորին ազատէք, կուլտուրայի տան դահլիճում ընկերական դատ կազմակերպէք, ես էլ կը լինեմ հասարակական մեղադրող, առաջին հերթին ինձ կը մեղադրեմ, որից յետոյ՝ նրանց: Ինչ է, դուք ուզում էք, որ ես դանո՞ս[66] տամ իմ բանտարկուած ընկերների վրայ»:

Մուղդուսին վրդովուած ասում է. 'Ընկեր Չարենց, եթէ Դուք շարունակէք այդպէս խօսել, ապա Ձեզ դուրս կը թողնենք Կենտգործկոմի անդամների շարքից':

Չարենցը պատասխանում է. 'Ձեր Կենտգործկոմով զարմացրիք, ոչ թէ Չարենցի համար է պատիւ՝ լինել Կենտգործկոմի անդամ, այլ Կենտգործկոմին է պատիւ, որ Չարենցը իր անդամն է': Եւ գրպանից Կենտգործկոմի տոմսը հանելով՝ տալիս է Մուղդուսուն: Մուղդուսին նրան սպառնալով ասում է. 'Ընկեր Չարենց, եթէ Դուք Ձեզ այդպէս պահէք, մենք ստիպուած կը լինենք Ձեզ բանտարկել':

Չարենցը պատասխանում է. 'Պոդումաեշ[67], վախեցրիք, էլի, հայ գրողի համար կա՞յ աւելի պատուաւոր գործ, քան իր ժողովրդի համար բանտում մեռնելը: Միք մոռանայ, որ Նալբանդեանը աքսորումն է մահացել':

(Խեղճ Չարենց, երեւի գուշակում էր իր բանտային մահը)»[68]:

Վերադառնանք, սակայն, *Ծաղկած Փշալարեր*ին:

Գեղարուեստական հնարքները, որոնցով Մահարին նկարագրում է կալանաւորների առօրեան, բազմաթիւ են: Դրանց մէջ առանձնանում է ճամբարային լաւատեսների՝ 'դեղձանիկների' եւ յոռետեսների՝

'ագռաւների' հակամարտութեան գիծը: Որքան բարութիւն, մարդասիրութիւն, մահարիական լուսաւոր երգիծանք կայ այս պատմութիւնների մէջ: Սրանք սոսկ կենցաղային դրուագների, բախտակից մարդկանց բանավէճ-երկխօսութիւնների նկարագրութիւններ չեն, այլ չարի եւ բարու, ընկրկումի եւ յուսադրումի, մարդու եւ ոչ-մարդու հակադրութեան ցայտուն պատկերներ:

Շատ բնութագրական մի հատուած է գեղեցիկ սուտ յօրինելու եւ դրանով բախտակիցներին մխիթարելու Մահարու քայլը:

Իւրայինների հոգեվիճակով մտահոգ Մահարի 'դեղձանիկը' յօրինում եւ ստեղծագործում էր նաեւ մահուան ճամբարներում, յօրինում եւ ստեղծագործում՝ առանց թուղթ ու թանաքի, առանց նիւթի գեղարուեստական կողմին ու տրամաբանութեանը հետամուտ: Եւ ի՞նչ էք կարծում, ի՞նչ էր յօրինում: Երազնե՛ր: Գեղեցիկ ու լուսաւոր, սին ու պատիր երազներ:

«*Հակազդելու համար իմ հարեւանների գէշ երազների վրայ՝ ես շաբաթուայ մէջ մի քանի անգամ ստիպուած եմ լինում ձի կամ աւանակ նստել:*

- Աւանակն ի՞նչ գոյն ունէր,- հարցնում է ղարաբաղցին:

Ես մտածում եմ, որ սեւ էշը դժուար թէ բարի նշան համարուի եւ ինձ նեղում եմ սպիտակ աւանակի կռնակին:

- Սպիտակ,- պատասխանում եմ ես:

- Սպիտակը պատանք է,- շշնջում է ղարաբաղցին եւ յօրանջում:

Երկու օր յետոյ ես փոխադրւում եմ սեւ էշի վրայ:

- Սեւը սուգի նշան է,- այս անգամ վայում է ճարտարապետը:

- Բայց երազում էշ կամ ձի նստելը լաւ նշան է,- բողոքում եմ ես:

- Կ'ապրենք, կը տեսնենք,- զիջում է ղարաբաղցին:

- Ինչ երազ ուզում ես տես, մեզ վրայ սեւ խաչ են քաշել,- մտքերի փոխանակութիւնն ամփոփում է ճարտարապետը»[69]:

Կալանաւորներին այս սկզբունքով դասակարգելու փորձ արել են նաեւ այլ հեղինակներ: Ղազարեանը, օրինակ, իր հերոսներին բաժանում է երկու խմբի՝ լաւատեսների եւ իրատեսների: Վերջիններս, թէեւ հեղինակի կողմից չեն յորջորջւում յոռետեսներ, այդուհանդերձ լաւատես չեն, քանի որ իրենց ապրած կեանքը հիմք չէր տալիս լաւատեսութեան: Կալանաւորների մէջ քիչ չէին այնպիսիք, որ բանտերում տարիներով տառապելուց յետոյ էլ չէին ուզում հաւատալ իրենց հետ կատարուածի անխուսափելիութեանը եւ, համարելով այդ ամէնը սոսկ թիւրիմացութիւն, պատահական սխալ, շարունակում էին նամակներ ու դիմումներ գրել պատկան մարմիններին՝ իրենց գործը վերանայելու խնդրանքով: Աւելի սառը դատողներն ու իրերին, երեւոյթներին սթափ հայեացքով նայողները, մինչդեռ, համոզուած էին, որ ամէն ինչ

սահմանուած է եղել վերեւից, որ իրենք ոչ թէ պատահական զոհեր են, այլ իրենց մաքրութեամբ ու ազնուութեամբ ստալինեան մարդատեաց ծրագրերին ու նպատակներին խոչընդոտող տարրեր, դրա համար էլ դեռ երկար պէտք է սպասեն, մինչեւ որ բացայայտուի ճշմարտութիւնը, բայց որ այն անպայման կը բացայայտուի, նրանք չէին կասկածում:

Այս վստահութեամբ էր ապրում նաեւ Մահարու վիպակի գլխաւոր հերոսներից մէկը՝ Աշոտ դային:

Վիպակում կարեւոր տեղ է յատկացուած այս կերպարին:

Աշոտ դային ժողովրդի ծոցից ելած, անխարդախ, բարի մի ծերունի է, որի կերպարում խտացւում է մեր հայրերի ու նախապապերի կենսահաստատ իմաստնութիւնը: Բրուտանոցի աւագն է նա, որ փորձառու աչքով բրուտանոցի աշխատանքներին հետեւելուց զատ նաեւ հայրական հոգածութեամբ մխիթարում-սատարում է իր թշուառ բախտակիցներին: Ազնիւ ու շիտակ այս ծերունին, եթէ հարկ է, կարող է նաեւ ստել՝ յանուն մերձաւորների բարօրութեան:

Ահա նրա խորհրդածումների ընթացքը. «*Ինչո՞ւ այսպէս եղաւ, այս ի՞նչ զարմանալի պատմութիւն է… Արդար կարգերի երկրում այսքան կալանաւո՞ր… սա մի մեծ բամբասանք է, մի մեծ զրպարտութիւն: Անմեղ, անշառ ու պէտքական, շատ պէտքական մարդկանցով են լցրել բանտերն ու լագէրները*[70]*: Ո՞ւմ է հարկաւոր, ինչո՞ւ է այս մեծ անարդարութիւնը: Երեւի կայ մէկը, որին ձեռնտու չեն ազնիւ, շիտակ, համարձակ մարդիկ եւ նրա հրամանով այդպիսիներին ոչնչացնում են…*»[71]:

Եւ պատահակա՞ն է, որ Մահարին այսպիսի խորհրդաստ դատողութիւնների կենտրոնում կանգնեցրել է ոչ թէ որեւէ փիլիսոփայի, որեւէ պրոֆեսորի, որեւէ անուանի արուեստագէտի, ինչպիսիք շա՛տ-շատ էին ստալինեան պատժարաններում, այլ յատկապէս շարքային հայ մարդուն, սովորական շինականին: Հասկանալի է, որ այս կերպարը, իրական նախատիպից ծնուած լինելով հանդերձ, խորհրդանիշ էր, կրում էր գաղափարական ենթիմաստ: Ահա Աշոտ դայու մէկ այլ դիտարկում, որ ասուածն է հաստատում. «- *…Հիւանդ արդարութեան կենացը խմենք, ծանր է նրա դրութիւնը, բայց նա չի մեռնի: Երբ հիւանդ է արդարութիւնը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկերեսանի, չար, եսամոլ, սփորաքարշ: Նրանք քծնում են, լիզում իրենց ոտնակոխող սապոգները, ասում են խօսքեր, որոնք իրենցը չեն, կատարում են գործեր, որոնց հետ համաձայն չեն, բայց կատարում են, որովհետեւ արդարութիւնը հիւանդ է, չի կարող նրանց կարգի բերել:*

- …Հին է ու միշտ նոր չարի ու բարու կռիւը, եւ միշտ բարին է յաղթանակել: Խմենք այն մեծ օրուայ կենացը, երբ վերջին բանտարկեալը կը թողնի վերջին բանտը: Թող բանտերի տեղ դպրոցներ

շինեն ու ճամբարների գրաւած լայնածաւալ հողերը ցորենի արտեր դառնան»[72]:

Այս հաւատը հաստատում է նաեւ Ղազարեանի տողը. «*Ճշմարտութիւնը չի կարող մամլիչի տակ երկար մնալ*»[73]:

Վիպական շարադրանքում Աշոտ դայու հետ ունեցած շփումների նկարագրութիւններում ամբողջանում, լիաժէք է դառնում նաեւ Մահարու կերպարը:

Ահա մի երկխօսութիւն՝ տանջալի օրն աւարտած ու բարաքի չոր տախտակների վրայ քնել պատրաստուող Մահարու եւ Աշոտ դայու միջեւ:

«- *Ինչո՞ւ կալանաւորներին չի թոյլատրւում ժամացոյց պահել:*

- *Որպէսզի չկարողանան ժամադրութիւն նշանակել,- պատասխանում եմ ես:*

- *Երեւի՛, երեւի՛,- պատասխանում է նա: Յետոյ անդրադառնում է:- Ժամադրութիւն՝ ո՞ւմ հետ…*

- *Ամէն կալանաւոր ունի իր սիրուհին,- ասում եմ ես,- եւ զարմանալի կերպով բոլոր կալանաւորների սիրուհիները մի անուն ունեն:*

- *Զարմանալի բան,- նկատում է Աշոտ դային եւ ուզում է երեւի զարմանալ, բայց ես զգում եմ, որ նրա մտքերը հեռու են,- եւ ինչպէ՞ս են կոչւում նրանք,- այնուամենայնիւ հարցնում է նա:*

- *Ազատութի՛ւն,- ասում եմ ես մեծ հանդիսաւորութեամբ*:

- *Տեղը բերիր,- երեւի ժպտում է նա խաւարում,- բայց գիշերուայ համար շատ է դժուարամարս*»[74]:

Նաեւ բրուտանոցի միւս բանուորներն են Մահարու խուզարկու հայեացքի ներքոյ. Մամօն, Լիւդմիլա Շարթը, Իոնասը: Սրանց հետ յարաբերութիւններում ձեւաւորւում-ամբողջանում է վերահսկիչ Բիչկոյի կերպարը:

Մահարին փոքրածաւալ գրական երկում կարողացել է աւարտուն նկարագիր հաղորդել իր գլխաւոր հերոսներին: Յաճախ դա նրան յաջողուել է անել մէկ-երկու նախադասութեան միջոցով, մէկ երկու ուրուագծի միջոցով:

Օրինակ՝ Լիւդմիլա Շարթի ողբերգութեան ցնցող պատկերն ամփոփւում է այս տողերում. «*Ես չեմ կարող ձեզ պատմել այն, ինչ ինձ հետ արին… դա տղամարդուն պատմելու բան չէ, եւ, ընդհանրապէս, հարազատ քրոջս անգամ չեմ պատմի*»[75]:

Շարթը եզակի չէ իր ճակատագրով: Նրա բախտակից երկուորեակն է Ղազարեանի յուշապատումի հերոսուհի Էլլին՝ Վլադիմիրի[76] բանտի կալանաւորը: Եթէ Շարթը խուսափում է մանրամասն պատմել իր հետ կատարուածի մասին, ապա Էլլիի շուրթերով մեզ մասամբ հասու է դառնում կին կալանաւորներին վիճակուած ստորացումների

հրէշաւորութիւնը. «*Հսկիչների մէջ կան այնպիսիները, որոնք աչք չեն հեռացնում կանանցից հանուելու եւ լողանալու ժամանակ: Դա նրանց հաճոյք է պատճառում: Անամօթ անասուններ: Բայց կան նաեւ այնպիսիք, որոնք ամաչում են, շփոթւում, երեսները դարձնում, աշխատում են չնայել, մինչեւ անգամ հեռանում են: Առհասարակ մեզ՝ կանանց, աւելի շատ են ծաղր ու ծանակի ենթարկում, քան տղամարդկանց*»[77]:

Շարթի եւ Բիչկոյի փոխշփումների միջոցով Մահարին ի ցոյց է դնում այն ճշմարտութիւնը, որ բոլշեւիկեան, յեղափոխական գաղափարախօսութեան ալիքը քննադատաբար, մարքսիզմի լոյսի ներքոյ վերագնահատում է համաշխարհային արժէքները՝ դրանք վերածելով անհեթեթութեան:

Բայց որպէսզի ցոյց տայ, թէ ինչպէս կարող է մարդը մարդ մնալ, չկորցնել արժանապատուութիւնն ու հպարտութիւնը ամենաստորացուցիչ հանգամանքներում անգամ, Մահարին պատկերում է հացի յաւելեալ օրապահիկի դիմաց Ստալինի գլխաքանդակն անել առաջարկող Բիչկոյին Լիւդմիլայի տուած մերժում-պատասխանը. «*Ժողովրդի թշնամիների ոտների տակ հունցուած կաւից, լրտեսի մատներով-. դա բարդ գործ է, կապուած բարդութիւնների հետ*»[78]: Ահա՛ այսպէս: Եւ արժէ՞ այլեւս զարմանալ, որ այսպիսի կնոջ հետ սեռական-պարտիզանութեամբ զբաղուող գծուծ, մորթապաշտ, սեփական ստամոքսի պահանջներին յագուրդ տալուց բացի որեւէ այլ արժէք չճանաչող կառապան Մամօն, նա, որ «*գոնգից առաջ էր լսում*»[79] ճաշի կանչող ձայնը, կերպարանափոխւում, վերամարմնաւորւում է բոլորի աչքի առաջ, դառնում բոլորովին ուրիշ մարդ՝ այս կնոջ յայտնութիւնից յետոյ: Եւ կրկին Մահարու հակիրճ ու սպառիչ դիտարկմանը դիմենք. «*Ես գիտէի (օ՛…) ես գիտէի, որ սէրը փոքրատառ մարդուն դարձնում է մեծատառ, բայց այսքա՞ն մեծատառ: Ճիշտ, ճիշտ, ես այդ չէի սպասում: Ես այդ չէի սպասում*»[80]:

Ահա եւ մէկ այլ ուսեալ 'ոճրագործ'՝ Վիլնիւսի Պետական Համալսարանի Իրաւաբանական Ֆակուլտէտի նախկին ուսանող Իոնասը, որին ստալինեան գեհենը իրաւաբանից վերածել է յոռետեսութեամբ համակուած բանաստեղծի. «*Կէս գիշեր է, բայց աքաղաղներն անգամ գիտեն, որ լուսաբացը հեռու չէ: Իսկ ես մարդ տեղովս յուսահատուել եմ…*»[81]:

Կան եւ կարեւոր գործառոյթ իրականացնող երկրորդական կերպարներ, որոնք իրենց համառօտ ներկայութեամբ ու վիպական գործողութիւններին հպանցիկ մասնակցութեամբ ասես լրացնում են գլխաւոր կերպարների նկարագիրն ու վիպակի սիւժէտային, գաղափարական կողմը: Վիպակին առանձնայատուկ շունչ ու

կենսունակութիւն են հաղորդում Բիչկոյի, խոհարար Մեսրոպի, թիֆլիսահայ Զինգաեւի, կրըխ-դարիմանցի[82] դատապարտեալ գեղջուկի ու նրա «համեմատական երջանկութեան տեսութեան» հետ կապուած պատմութիւնները, ճամբարային սիրավէպերի՝ իրենց տեսակում բացառիկ դրուագները: Յիշատակութեան են արժանի Սոլոմոն Գաւրիլովիչի, հայ ճարտարապետերի, Բելուգովի, գնչու Կոլիայի կերպարներն ու դրանց առնչուող հատուածները:

Մահարու գրականութիւնը ԺԹ. դարավերջին եւ Ի.ի սկզբին հայ մարդուն բաժին հասած բոլոր ողբերգական-բեկումնային անցքերի գեղարուեստական հաւաստագիրն է: Նա չի շրջանցել որեւէ պատուհաս, որը վիճակուած է եղել ապրել իր հայրենիքին ու ազգին: Բայց իբրեւ գրականութեան նիւթ ունենալով ամենադաժան ու յուսահատական թեմաները՝ չի դարձել լալկան, չի տրուել ողբասացութեան, այլ ստեղծել է պայծառ, լուսաւոր գրականութիւն, որի իւրաքանչիւր տողում ու տողատակում նրա անմար ժպիտն է, կենսունակ երգիղանքը, ծիծաղը՝ արցունքի միջից: Նա իր քնարական, հիւթեղ լեզուով, ոճական ինքնօրինակ հնարներով գրականութիւն է կերտել ամենակենցաղային, ամենաոչ-գրական իրողութիւններից անգամ: Նրա հայեացքից չի վրիպել ոչ մի մանրուք, եւ մանրուքներից իւրաքանչիւրը նրա համար դարձել է գեղարուեստ ստեղծելու հումք, ատաղձ: Ամենագռեհիկն անգամ նա ներկայացրել է սուր, խայթող, բայց ոչ երբեք թունոտ երգիծանքով, *գրոտեսկի* հասնող նկարագրութիւններում անգամ մնացել է կիրթ ու նրբանկատ:

Յիշենք, օրինակ, բանտասենեակում փակուած քսանեակի քարտուղարի ընտրութեան, համեմատական երջանկութեան տեսութեան, հիւանդ արդարութեան, հումանիզմի վերաբերեալ դիտարկումները: Ահա Երեւանի բանտից Վոլոգդայի[83] բանտ տեղափոխուող կալանաւոր Մահարու ներքին մենախօսութիւնը. «*Մեզ չեն գնդակահարում, մեզ փանում են հիւսիս, աքսոր: Կեցցէ մարդասիրութիւնը, կամ այն միւս բառով ասած՝ հո՛ւմ... հո՛ւմ... հումանիզմը: Շնորհակալութիւն, շնորհակալութիւն հոգատարութեան համար: Հո՛ւմ-հո՛ւմ-հումանիզմի՛ համար*»[84]:

Մահարու համար չկայ որեւէ մանրուք, որ արժանի չլինի ուշադրութեան: Ինչպէս է նա նկարագրում արտաքնոցը, Տայգայում տիրող լռութիւնն ու այն ճեղքող թռչնի կռինչը, բանտահոտը:

Իսկ ինչպիսի պատկերաւորման է նա հասնում մէկ հատիկ բառի միջոցով, եւ այդ բառն իրենն է բացառապէս, այն այդպիսի գործառոյթով չի հանդիպել մէկ այլ գրողի մօտ. օրինակ՝ Մամոյի 'լացող բեղերը', Իոնասի 'դժուար ռուսերէնը', 'բարակ ժպիտը', 'ժպտուն ձայնը', Լիւդմիլայի 'կալանաւորական նիհարութիւնը', 'սրտառուչ, հոգեցունց,

ընդամէնը՝ կովի բառաչը', քնած կալանաւորների 'բազմերանգ', 'թերահաւատ', 'տարակուսող' ժպիտները, Վոլոգդայի[85] բանտի 'հիւրընկալ ճիրանները', բանտային վերակացուի 'գրեթէ մարդկային ձայնը' եւն.:

Մէկ հատիկ համեմատութեամբ մի ողջ երեւոյթ է բացայայտում Մահարին. «*նրա (կալանաւորի - Կ.Ռ.) համար կինն այն էր, ինչ աշխատող չարքաշ եզի համար Չայկովսկու Երրորդ սիմֆոնիան*»[86]:

Եւ կրկին դիմենք Մ. Արմէնի պատմուածաշարին, որպէսզի մէկ այլ հաւաստիացում եւս ունենանք Մահարու դատողութեան համար: «Բարոն» պատմուածքն այլաբանութիւն է: Բարոնը՝ ճամբարի պետի ձին, մարմնաւորում է ժամանակի տէրերի աշխարհը, նրանց կենցաղն ու հոգեբանութիւնը, ճամբարում աշխատող ձիերը՝ դժբախտ աքսորեալներինը: Կեանքի վայելքները վաղուց մոռացած ճամբարի սովալլուկ ձիերի եւ իր պարարտ մարմնում խլրտացող սրուած բնազդերին բաւարարում փնտռող Բարոնի հակադրութեամբ Մ. Արմէնն ստեղծել է ժամանակի մարդկային հասարակութեան երկփեղկուածութեան խօսուն պատկերը եւ իւրովի կրկնել Մահարու վերը մէջբերուած խօսքը:

Միշտ չէ, որ Մահարին հետամուտ է ժպիտի ու լաւատեսութեան գերակայութեանը: Երբ հասնում է սահմռկեցուցիչ փաստն արձանագրելու պահը, Մահարու կատակող գրիչը շամփրում է անօրինակ դաժանութեամբ: Թերեւս, բազմաթիւ այդպիսի հատուածներից մէջբերենք ամենասոսկալին. «*-Թող գայ այն օրը, երբ քաղաքների հրապարակներից եւ մեծ ու փոքր կայարաններից կը վերանան ժողովուրդների երկրային, սանձարձակ Հօր մեծ ու փոքր արձանները: Սակայն հուր-յաւիտեան թող կանգնած մնայ այն արձանը, որի ստեղծումը ես տեսայ եւ որը հիմա էլ կանգնած է սառչէ ոտներով իմ սրտի վրայ, իմ սրտի վրայ: Այդ պատահեց բեւեռում, յաւիտենական սառոյցների դաժան գօտում: Մահուան ճամբարից դուրս, ճամբարից տեսանելի սառչէ մի բարձրութեան վրայ կանգնեցրին երիտասարդ կալանաւորին, դոյլերով ջուր կրել փուին եւ ողողեցին նրան: Ջուրն արագ սառեց, եւ բարձրութեան վրայ կանգնած մնաց մարդկային ձեւերով սառչէ մի յուշարձան: Մահացած եւ մահացող միլիոնաւոր կալանաւորների յիշատակը յաւերժացնող միակ յուշարձանն է դա: Թող յաւերժ կանգուն մնայ այդ սարսափելի յուշարձանը: Մահացածների սառած ճիչն էր դա, որ սերունդները լսեն նրանց ձայնը, յիշեն, չմոռանան, յիշեն ու թոյլ չտան, որ կրկնուի ահաւոր պատմութիւնը*»[87]: Այո՛, այս պատկերի դէմ անգամ Մահարու երգիծանքն է վայր դնում զէնքերը: Սա արդէն իրականութեան իրական դէմքն է, որի զազրելիութիւնն անխնայ ի ցոյց է դնում ոչ թէ երգիծաբան, ոչ թէ

ռոմանտիկ, ոչ թէ հոգեբան-փիլիսոփայ, այլ արդէն դաժան լինելու աստիճան իրատես Մահարին:

Ճշմարտութեան անաչառ մեկնիչը լինելու համար բաւարար չէ միայն տաղանդը: Դրա համար պէտք է ունենալ նաեւ Մահարու քաղաքացիական, մարդկային խիզախութիւնը, մի բան, որ շատ ուրիշ գրողների մօտ բաւարար չեղաւ, ու նրանք մեզ ժառանգեցին կիսաճշմարտութիւնը բարբառող, վախի ու կեղծիքի նստուածքը յաղթահարած ստեղծագործութիւններ: Օրինակ՝ կարելի՞ է հաւատալ Մ. Արմէնի անկեղծութեանը, երբ *Ժիրայր Գլենց* վէպի առաջաբանում գրում է. «*Իմ վէպում հերոսը վերադարձել է կալանքից: Բայց, հիմնական գաղափարի տեսակէտից, դա ոչ-էական մանրամասնութիւն է: Հիմնական գաղափարը մեր հասարակութեան կենսունակութիւնն է եւ շեշտը դրուած է դրա վրայ: Եւ ահա, հենց դա է, որ ես անուանեցի եւ իւրաքանչիւր ոք կ'անուանի մեր յեղափոխութեան կարեւորագոյն նուաճումներից մէկը*»[88]: Սա հաւաստի ապացոյցն է այն բանի, որ 1960ականներին ու դրանից դեռ շատ աւելի ուշ էլ չէր յաղթահարուել հետապնդուելու, դատապարտուելու, սպանուելու վախը խորհրդային մարդու մէջ: Առհասարակ, Մ. Արմէնի *Ժիրայր Գլենց* վէպը հեղեղուած է սոցիալիզմի եւ կոմունիզմի 'բարձր' գաղափարները քարոզող մտքերով, որոնք կարծես պատահականօրէն յայտնւում են այս կամ այն հերոսի խօսքում՝ ստեղծելով մտքի աղճատուածութիւն, շարադրանքը զրկելով սահուն, բնական ընթացքից: Այդպիսի հատուածներն ակնյայտօրէն չեն բխում բածրացուած խնդրի բուն էութիւնից, դրանք ասես անյաջող կարկատաններ լինեն, որոնք ոչ թէ նպաստում են շարադրանքի ամբողջացմանը, այլ ընդհակառակը՝ անհարկի ու աւելորդ են ինչում: Նման երեւոյթի առաւել շատ ենք հանդիպում ստալինեան աքսորավայրերում իր կեանքի մի հատուածն ապրած մէկ այլ գրողի՝ Վալտէր Արամեանի ստեղծագործութիւններում, որոնք տեղ են գտել *Տայգայի Օրէնքը* (Երեւան, Հայպետհրատ, 1955), *Մարդու Սէրը* (Երեւան, Հայպետհրատ, 1962), *Արահետներ* (Երեւան, Հայպետհրատ, 1977), *Վերադարձ* (Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1983) գրքերում:

Այդ տարիներին խորհրդային բռնապետութեան սահմաններում մոլեգնում էին վախը, կեղծիքը, արիւնահեղութիւնն ու հալածանքը, եւ մակերեսային ու թոյլ գրական արձագանգներն աւելի շատ խաթարում, քան արտացոլում էին այն օրերի իրականութիւնը:

Եւ գրողներն իրենք էլ լաւագոյնս գիտակցում էին այս ճշմարտութիւնը. այդ էր պատճառը, որ եթէ իրականութեան մասին ուղղակի ինչ-որ բան ասելու հնարաւորութիւն կամ համարձակութիւն չէին ունենում, իրենց խօսքը փոխանցելու զարտուղի, այլընտրանքային միջոցների էին դիմում: Այսպէս, Վալտէր Արամեանը գտաւ իր խօսքի

ճանապարհը՝ բուն ասելիքը տեղ հասցնելով առերեւոյթ անկարեւոր թուացող, իբրեւ աղանդաւոր ներկայացուած ցնորամիտ մի կերպարի շուրթերով: Ահա թէ ինչ էր բարբառում «Ճակատամարտ Բույունդայի[89] Ափերին» պատմուածքի այդ հերոսը՝ աղանդաւոր Դուդկինը. «*Մի երկիր է եղել,- պատմում էր նա,- հեռաւոր մի երկիր, որտեղ մարդիկ մեզ նման են եղել, երկոտանի, միգլխանի, թոքեր եւ աղիներ են ունեցել, ամէն ինչ՝ բացի հոգուց: Այդ երկրի մարդկանց հոգին են հանել աստուածները, եւ, որովհետեւ, բնութիւնը դատարկութիւն չի սիրում, հոգու տեղը կասկած են դրել եւ անհաւատութիւն: Նրանք ոչնչի այլեւս չէին հաւատում: Սիրոյ մէջ պարտաւոր էին ափելութիւն տեսնել, հարազատութեան մէջ՝ դաւաճանութիւն, մտերմութեան մէջ՝ դաւադրութիւն: Թէ ինչպէս էին ապրում այս երկրի մարդիկ այսքանից յետոյ՝ չգիտեմ: Բայց ապրում էին: Եթէ մարդն այդպէս կարող էր ապրել մարդկանց շրջանում, փայգայում, գազանների հետ աւելի հեշտ կ'ապրի, որովհետեւ գազանը մարդուց տարբերւում է նրանով, որ բնազդով է անում ամէն ինչ, իսկ մարդը՝ խելքով, երբեմն մարդուն սփիռում են անել այն, ինչ ինքը չի ուզում անել: Մարդուն խանգարում է խելքը, եղբայրներ: Երջանիկ է նա, ում աստուած խելքի փոխարէն հաւատ եւ սէր է տուել մերձաւորի եւ օտարի նկատմամբ: Գազանին ազատ բնութեան մէջ սփիռել չես կարող: Նա ազատ է, իսկ ազատութիւնը բնական է, այն ինչ որ բնական է, ազատ է*»[90]:

Այս պայմաններում էր Դերենիկ Դեմիրճեանը գրառում իր դատողութիւնները Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Ախալքալաքի ճակատագրի վերաբերեալ: Եւ նա նոյնպէս զերծ չմնաց խորհրդային կարգերը փառաբանելու ժամանակի հրամայականից, որքան էլ որ նոյն այդ ժամանակի համար գրեց անթոյլատրելիօրէն համարձակ մտքեր: Եւ որովհետեւ իսկական մտաւորականը չի կարող երկար թաքցնել իրեն յայտնի ճշմարտութիւնը (թէկուզ եւ՝ վտանգաւոր ճշմարտութիւնը), ուստի Մ. Արմէնն էլ *Ժիրայր Գլենց* վէպում իր ապրած ժամանակի մասին տեղ գտած թերասութիւնները ժխտում է *Պատուիրեցին Յանձնել Ձեզ* ժողովածուով:

Իսկապէս, հալածանքն ու բռնութիւնը խորհրդային մարդու նկատմամբ շարունակւում էին նաեւ 37ից ու Բ. Աշխարհամարտից յետոյ, սակայն փոխուել էր այդ մարդու հոգեբանութիւնը: Խորհրդային հասարակութիւնն այլեւս կեանքին վարդագոյն ակնոցով նայող, դիւրահաւատ ու անգիտակից ամբոխ չէր, այլ 37 թիւ ու պատերազմ տեսած, արիւնահեղութիւն ու սով տեսած, յետպատերազմական շրջանում կրկնակի աքսոր տեսած մի մռայլ ու տառապեալ զանգուած, որ այլեւս չի հաւատում իր երջանկութեան ու անձեռնմխելիութեան առասպել:

30ականների մղձաւանջի արտացոլումներին հանդիպում ենք նաեւ աւելի ուշ շրջանի գրական երկերում, այնպիսի հեղինակների ստեղծագործութիւններում, ինչպիսիք էին Յովհաննէս Շիրազը, Հրաչեայ Քոչարը, Լեռ Կամսարը, Անահիտ Սահինեանը, Զօրայր Խալափեանը, Վարդգէս Պետրոսեանը, Պարոյր Սեւակը, Հրանտ Մաթեւոսեանը, այլք:

Եւ ոչ-պակաս կարեւոր ենք համարում վկայակոչել այն հանգամանքը, որ հայ գրողների մէջ քիչ չեն եղել այնպիսիք, որոնք ստալինեան բռնաճնշումների ու երեսնականների խորհրդային մարդու, ի մասնաւորի՝ հայի ողբերգութեանն անդրադառնալու բնական մղումը ստիպուած են եղել խեղդել իրենց մէջ ու լուռ տառապել՝ ատամները սեղմած: Այդպիսիք կա՛մ չգրեցին ոչինչ, կա՛մ գրեցին ու թաքցրին անմատչելի գզրոցներում: Վերջիններից ոմանց ժպտաց բախտը տասնամեակներ անց, քանզի գրի ու գրականութեան պրպտող մշակները յայտնաբերեցին թաքնուած յիշատակարաններն ու հանրութեան դատին յանձնեցին դրանք: Այդպիսի մի ցայտուն օրինակ է վերեւում յիշատակուած՝ Դեմիրճեանի «Դատողութիւններ Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Հարցի Շուրջ» խոհագրութիւնը, որում տեղ գտած դառը խորհրդածումները եւս արձագանգ են երեսնականների ստալինեան դժոխքի: «*Անդրկովկասի, աւելի ճիշտ՝ Կովկասի սովետական սոցիալիստական գործին մեծ հարուած է տրուած Բերիայի*[91] *եւ Բագիրովի*[92] *դաւաճանական գործունէութեամբ*»[93],- կարդում ենք յիշեալ ձեռագրում: Ստալինի դիւային ծրագրերի գերագոյն իրագործողի՝ Բերիայի անունը յիշատակելուց զատ՝ Դեմիրճեանն իր դատողութիւնների ամփոփիչ մասում առաւել լայն հայեացք է նետում ստալինեան իշխանութեան տարիները նո՛ր-նոր թօթափած, բայց իր նկարագրով դեռեւս խեղուած խորհրդահայ իրականութեան վրայ՝ նկատելով. «*Առհասարակ* ***չգրուած մի օրէնք*** *է դարձել,* ***չպայմանաւորուած համաձայնութիւն*** *միշտ հայերի պատրիոտիզմը*[94] *դարձնել մեղադրանք՝ նացիոնալիզմ*[95]*:*

Հայ կուլտուրայի որեւէ երեւոյթը նշելը, վեր հանելը, հայ ժողովրդի որեւէ պատմական կամ ներկայի առաւելութիւնը, հայերէն խօսելու ցանկութիւնը եւ այլն որակուել է որպէս նացիոնալիզմ:

Ոչ մի լենինեան դրոյթ, որ հայ ժողովրդի ***համար եւս*** *գոյութիւն ունի կարծես. հայերի դէպքում նացիոնալիզմ է: Ղարաբաղի պահանջը, Նախիջեւանի պահանջը, Ախալքալաքի համար որեւէ դրութեան պահանջը միշտ համարուել է* ***նացիոնալիզմ***»[96]:

Այս բռնադատուած սերնդի համահաւաք նկարագիրն է բովանդակում Մարօ Մարգարեանի «Իմ Սերունդն Ամբողջ Եղեամի Մէջ Է» բանաստեղծութիւնը, որով եւ ցանկանում ենք ամփոփել մեր ուսումնասիրութիւնը.

Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է.
Նշանակում է ցրտեր են եղել.
Ծածկուել են ձիւնով ժամանակից շուտ,
Բայց կրակն իրենց դեռ չեն անթեղել.
Նրանք պարզապէս կարճ ժամանակում
Անցել են երկար, երկար ճանապարհ՝
Սերմնացաններ, որ հողի փոխարէն,
Հերկել են սառոյց, ակօսել են քար.
Եւ հոգիներում գանձեր ու գանձեր,
Որ դեռ չեն պեղել.
Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է,
Նշանակում է ցրտեր են եղել[97]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Georg Hegel, *Estetika* (գեղագիտութիւն), *Հտր. 1*, Մոսկուա, Iskusstvo, 1968, էջ 52: (Այս եւ ռուսալեզու աղբիւրներից յետագայ մէջբերումները ներկայացուում են մեր թարգմանութեամբ - Կ.Ռ.):

[2] Ալեքսանդր Սոլժենիցին, «Նոբէլեան Դասախօսութիւն», *Noviy Mir* ամսագիր, 1989, թիւ 7, էջ 141:

[3] Դաւիթ Գասպարեան, *Գուրգէն Մահարի*, Երեւան, Զանգակ» Հրատ., 2013, էջ 323:

[4] Խաչիկ Հրաչեան, «Երեսնականին», *Նորք Ամսագիր*, 1990, թիւ 7, էջ 155:

[5] *Իրատես de facto* թերթ, թիւ 17 (598), 13-16 Մարտի, 2015, էջ 16:

[6] Ահաբեկիչ:

[7] Լեւ Տրոցկին Խորհրդային Միութեան կուսակցական եւ պետական գործիչ էր, Իոսիֆ Ստալինի գաղափարական հակառակորդը: Նրա գաղափարներին յարողներին սպառնում էր դաժան ճակատագիր ստալինեան բռնութիւնների շրջանում:

[8] Դաւիթ Գասպարեան, *Ողբերգական Չարնցը*, Երեւան, Նայիրի Հրատ., 1990, էջ 93:

[9] Kolossը ռուսերէն եզրոյթ է, որ նշանակում է հսկայական կոթող, արձան:

[10] Կատակլիզմը կտրուկ կործանարար շրջադարձն է բնութեան մէջ կամ մարդկութեան կեանքում:

[11] Չարենցի յիշատակած չորս գահակալները Ռուսաստանում իշխել են տարբեր ժամանակաշրջաններում. Իւան Ահեղ՝ 1547-1584, Պետրոս Մեծ՝ 1682-1725, Նիկոլայ Ա.՝ 1825-1855, Նիկոլայ Բ.՝ 1894-1917:

[12] Արքայական ծիրանի կրող, ծիրանակիր:

[13] ԳԱԹ (Գրականութեան Եւ Արուեստի Թանգարան), Չարենցի Ֆոնդ, թիւ 118:

[14] Անդրէյ Տուարդովսկի, *Po Pravu Pamyati* (Յիշողութեան իրաւունքով), *Noviy Mir*, 1987, թիւ 3, էջ 196:

[15] Ռուսատառ յապաւում, որ նշանակում է քաղաքական գլխաւոր վարչութիւն:

[16] Ժողովուրդն այսպէս էր կոչում այն մեքենաները, որոնցով մարդկանց ձերբակալելու էին գալիս խորհրդային պետանվտանգութեան աշխատակիցները:
[17] Տե՛ս՝ ծան. 15:
[18] Ռուսատառ յապաւում, որ նշանակում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ:
[19] Ալեքսանդր Սոլժենիցին, «Գուլագ Արխիպելագը», *Գարուն* ամսագիր, 1990, թիւ 1, էջ 69:
[20] Մկրտիչ Արմէն, *Պատուիրեցին Յանձնել Ձեզ*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 68: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
[21] Նոյն, էջ 74:
[22] Եուզ Ալեշկովսկի (ծն. 1929) ստալինեան բռնութիւնների ենթարկուած ռուս գրող, երգահան:
[23] Գուրգէն Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 105-106: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
[24] Նոյն, էջ 4:
[25] Նոյն, էջ 4:
[26] Նորայր Ադալեան, *Ազատութեան Սփրկութիւնը*, Երեւան, Վան Արեան Հրատ., 2014, էջ 81:
[27] *Ժարգոնային* ձեւ է՝ կազմուած ռուսերէն julik բառից, որ նշանակում է մանր գող, խաբեբայ, զեղծարար:
[28] Մկրտիչ Արմէն, *Պատուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 130:
[29] Աբասթումանը Վրաստանի վարչական տարածքում գտնուող աւանատիպ քաղաք է:
[30] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 61:
[31] Ռուսերէն dujina (տասներկու միաւոր ներառող խումբ) եւ gorod (քաղաք) բառերից կազմուած եզրոյթ է:
[32] Վոլոգդան ռուսական քաղաք է:
[33] Ադալեան, էջ 67: Մեսրոպ Ուզունեանի բարբառով 'ուտուշ', 'խմուշ', 'սիրուշ', 'մափուս' բառերը համապատասխանաբար նշանակում են ուտել, խմել, սիրել, բանտ:
[34] Տե՛ս՝ ծան. 6:
[35] Տե՛ս՝ ծան. 7:
[36] Ադալեան, էջ 114:
[37] Նոյն, էջ 137-138:
[38] Միխայիլ Բուլգակով, *Վարպետը եւ Մարգարիտան*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1985, էջ 324:
[39] Անատոլի Ռիբակով, *Արբատի Զաւակները*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 594:
[40] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 31:
[41] Իոսիֆ Ստալինի յայտնի խօսքն է. «Մարդն ամենաթանկ կապիտալն է»:

[42] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 160:
[43] Էտապը պահակախմբի հսկողութեամբ կալանաւորների տեղափոխումն էր մի կալանավայրից միւսը, տուեալ դէպքում՝ երկաթուղային վագոններով:
[44] Ծովատառէխի տեսակ:
[45] Վագոնախցիկում:
[46] Սուրէն Ղազարեան, *Դա Չպէտք Է Կրկնուի*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 108: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
[47] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 20:
[48] Մկրտիչ Արմէն, *Պատուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 27:
[49] Նոյն, էջ 19:
[50] Սադրիչ:
[51] Խափանարար, քայքայիչ:
[52] Տե՛ս՝ ծան. 7:
[53] Ղազարեան, *Դա Չպէտք Է*, էջ 12:
[54] Նոյն, էջ 62:
[55] Տե՛ս՝ ծան. 43:
[56] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 27:
[57] Նոյն, էջ 35:
[58] Տե՛ս՝ ծան. 29:
[59] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 35-36: Անպայմանօրէն արձանագրենք, որ նոյն այդ սիրոյ փրկագործ ուժն էր, որ ապրեցրեց Մահարուն իր երկրորդ աքսորի տարիներին: Անտոնինա Մահարին դարձաւ նրա հաւատարիմ, սիրելի կողակիցը՝ սիբիրեան աքսորավայրից սկսած մինչեւ երկրային կեանքի վերջին ակնթարթները:
[60] Ալեքսանդր Ցիպկոյ (ծն. 1941, ռուս փիլիսոփայ, քաղաքագէտ), «Ստալինիզմի Ակունքները», *Նորք Ամսագիր*, 1989, թիւ 10, էջ 69:
[61] Մկրտիչ Արմէն, *Պատուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 7-8:
[62] Խաչատուր Մուղդուսին 1921-1937ին եղել է Խորհրդային Հայաստանի պետանվտանգութեան կառոյցների պատասխանատու աշխատող, զբաղեցրել ՀԽՍՀ Ներքին Գործերի ժողկոմի պաշտօնը, իսկ 1937ին ձերբակալուել է, ենթարկուել դաժան հաշուեյարդարի նախկին գործընկերների կողմից ու գնդակահարուել:
[63] Գաղափարական առաջնորդ:
[64] Այսպէս էր կոչւում խորհրդային իշխանութեան առաջին տարիներին ձեւաւորուած Արտակարգ Յանձնաժողովը, որն զբաղւում էր անվտանգութեան հարցերով:
[65] Նկուղում:
[66] Մատնութիւն անելը, իշխանութիւններին իրազեկելը:
[67] Համարժէք է հայերէն «մտածի՛ր հապա» հեգնական արտայայտութեանը:
[68] Վահրամ Ալազան, *Տառապանքի Ուղիներով*, Երեւան, Խորհրդային Գրող Հրատ., 1990, էջ 50:

[69] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 142:
[70] Ճամբարները:
[71] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 92:
[72] Նոյն, էջ 93:
[73] Ղազարեան, *Դա Չպէտք Է*, էջ 153:
[74] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 134-135:
[75] Նոյն, Էջ 16:
[76] Վլադիմիրը ռուսական քաղաք է:
[77] Ղազարեան, *Դա Չպէտք Է*, էջ 270:
[78] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 49:
[79] Նոյն, էջ 91:
[80] Նոյն, էջ 179:
[81] Նոյն, էջ 93:
[82] Կրըխ-դարիման նշանակում է քառասուն ջրաղաց՝ ըստ այդ գեղջուկի տուած բացատրութեան:
[83] Տե՛ս՝ ծան. 32:
[84] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 128:
[85] Տե՛ս՝ ծան. 32:
[86] Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 31:
[87] Նոյն, էջ 96:
[88] Մկրտիչ Արմէն, *Ժիրայր Գլենց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1967, էջ 5-6:
[89] Գետ Ռուսաստանի հիւսիս-արեւելեան հատուածում:
[90] Վալտէր Արամեան, *Վերադարձ*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1983, էջ 430-431:
[91] Լաւրենտի Բերիա (1899-1953), ազգութեամբ վրացի, 1938ից եղել է ԽՍՀՄ Ներքին Գործերի ժողկոմ, 1946ից՝ ԽՄԿԿ Գերագոյն Խորհրդի անդամ: Ստալինի մարդատեաց, մասնաւորապէս հայատեաց ծրագրերի թիւ մէկ իրագործողը: 1953ին հակապետական գործողութիւններ իրականացնելու մեղադրանքով ձերբակալուել է ու գնդակահարուել:
[92] Ջաֆար Բագիրով (Բաղիրով, 1895-1956), ադրբեջանցի պետական, կուսակցական գործիչ, որ հակահայկական դիրքորոշում է ունեցել:
[93] ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճեանի Ֆոնդ, Լրացուցիչ մատեան, թիւ 145:
[94] Հայրենասիրութիւն:
[95] Ազգայնամոլութիւն:
[96] ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճեանի Ֆոնդ, Լրացուցիչ մատեան, թիւ 145: (Ընդգծումները հեղինակինն են):
[97] *Սովետահայ Պոեզիա, Քրեստոմատիա*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 675-676:

PICTURES OF STALINIST REPRESSIONS IN GURGEN MAHARI'S
BLOSSOMED BARBED WIRES AND OTHER DOCUMENTARY WRITINGS
(Summary)

KARINE RAFAELYAN
karine.rafaelyan@mail.ru

The 1930s regime in the former USSR spread an atmosphere of violence and terror in the country, killing both ordinary citizens and many talented scientists and artists.

The Armenians in the USSR acutely felt the Stalinist oppression as thousands of Armenians were killed or exiled.

The article focuses on a number of literary books which documented the brutality of these purges and transformed the stories into novels and short stories. The author highlights certain aspects of the psychology of those imprisoned and compares their agony and sufferings in the literary works of both Armenian and non-Armenian Soviet authors who were personally victims of this Stalinist hatred.

The author specifically highlights Gurgen Mahari's self account on what he had gone through and was able to transform into a literary jewel titled "Blossomed Barbed Wires".

After depicting the tragic lives of these prisoners, the author underlines how Mahari overcomes the hardships and terror of prison life through humor and sarcasm.

ՀԱՅ-ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ՀՈՆԱՑ ԴԱՐՁԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ
a.shaginyan@spbu.ru

ՄՈՒՏՔ

Վաղ միջնադարում հայ-աղուանական քաղաքական ու կրօնական համատեղ առաքելութեամբ խազարներին հպատակ հիւսիսկովկասեան հոները կրօնափոխւում են:

Ուսումնասիրութիւնը կը ճշդի պաշտօնական այդ դարձի ժամանակագրութիւնը:

Մօտ 631ին Բիւզանդական Հայքի տարածքներից ձեւաւորուեց հայոց ինքնավար իշխանութիւնը, որի սահմանները միքանի տարի անց ընդլայնուեցին Մեծ Հայքի մարզպանական, այսինքն՝ պարսկական հատուածի հաշուին: 652ի Օգոստոսին հայոց գահերէց իշխան Թէոդորոս Ռշտունին (639/40-659) համաձայնագիր կնքեց Մերձաւոր Արեւելքի նոր ախոյեանի՝ Արաբական Խալիֆայութեան, որը արդէն քաղաքական քարտէզի երեսից ջնջել էր Սասանեան Իրանը եւ բռնազաւթել Բիւզանդիայի բոլոր արեւելեան գաւառները: Արդիւնքում հայոց իշխանութիւնը - Դուին մայրաքաղաքով - ստացաւ անվտանգութեան երաշխիքներ եւ պետական ինքնիշխանութեան ճանաչում: Փոխարէնը՝ Թէոդորոսը ընդունեց արաբ փոխարքայ Մու‘աւիայի (640-661) գերիշխանութիւնը, պարտաւորուելով երեք տարուց յետոյ սկսել ամէնամեայ հարկ մուծել նրան, նրանից էլ ստանալ իր իշխանութեան տարբերանշանները: Այդ իսկ պատճառով, 653ին Թէոդորոսը շտապեց Դամասկոս եւ իր նոր գերիշխանից ստացաւ աւելին՝ յարակից հարաւկովկասեան երկրների՝ Աղուանքի եւ Վիրքի, հանդէպ կառավարման իրաւունքներ[1]:

Արաբական Խալիֆայութեան գերիշխանութեան ձեւական ճանաչումը շարունակուեց մինչեւ 680ի մաիը Մու‘աւիայի՝ ով 661ին բռնատիրել էր խալիֆայի գահին: Նրան յաջորդող Եազիդ

Ա.ի (680-683) օրօք *«...եղեւ շփոյթումն Տաճկաց սաստիկ պատերազմաւ: Եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ»*[2]: Այս տողերը պատկանում են *685 Թուականի Ժամանակագրութիւն*ի հեղինակի գրչին, ենթադրաբար՝ հայ վարդապետ Փիլոն Տիրակացուն: Մէկ դար անց մէկ այլ հայ վարդապետ՝ Ղեւոնդը, դրանց կ'աւելացնի՝ *«Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ»*[3]:

Մինչեւ օրս այդ *«ապստամբութեան»* սկիզբը էր ընդունւում Մու'աւիայի մահուան տարին[4]: Սակայն հարկաւոր է թուագրել այն 681ի Օգոստոսից մինչեւ 682ի Օգոստոսը ընկած ժամանակահատուածով՝ Լ. տարիների ծառայութեան սկիզբն ընդունելով հայ-արաբական դաշնագրի կնքումը, 652ի Օգոստոսը: *Ժամանակագրութիւն*ից մէջբերուած հատուածը համապատասխանում է ե՛ւ յաջորդ ժամանակագրութեանը, ե՛ւ արաբագիր պատմիչ Ալ-Բալաձուրիի (մահ. 892) մօտ պահպանուած աւանդութեանը: Այնտեղ ուղիղ նշւում է, թէ ինչպէս Արմինիյան, Իբն Ազ-Զուբայրի (682-692) օրօք բռնկուած քաղաքացիական կռիւներից օգտուելով, անմիջապէս անջատուեց Խալիֆայութիւնից՝ խախտելով կնքուած համաձայնագիրը[5]: Աւելին, մէկ այլ արաբ մատենագրի՝ Ալ-Եա'կուբիի (մահ. 897) մօտ, պահպանուել է Խալիֆայութեան –կարծում ենք հենց այս ժամանակահատուածին վերաբերող -հարկային մատեանը[6]: Այնտեղ թուագրուած են Սասանեանների նախկին բոլոր մարզպանութիւնները, բացի այն երեքից, որոնք միասին արաբները կոչում էին Արմինիյայի Ուիլայաթ (նահանգ), եւ որոնք Մու'աւիա Ա.ի օրօք արքունի հարկերը կանոնաւոր փոխանցում էին Դամասկոս, իսկ Եազիդ Ա.ի օրօք այդ անելուց հրաժարուեցին:

Օգտուելով իրավիճակից, երբ արաբական իշխանութիւնները անզօր էին ապահովել Կովկասից հարաւ գտնուող քրիստոնեայ պետական կազմաւորումների արտաքին անվտանգութիւնը՝ Դարբանդի դռներով եւ Կովկասեան Լեռնաշղթան յաղթահարելով Աղուանք ներխուժեցին թիւրքախօս հոներն ու խազարները:

Առաջին անգամ 630ից յետոյ, երբ Արեւմտա-Թիւրքական Խաքանութեան արեւելաեւրոպական ու հիւսիսկովկասեան տիրոյթներում ձեւաւորուել էր Խազարական անկախ Խաքանութիւնը, այս քոչուոր ցեղերը Հարաւային Կովկաս էին ներխուժել դեռ 661ին:

*Աշխարհացոյց*ի, հիմնականում Անանիա Շիրացուն (մօտ 612-685) վերագրուող ընդարձակ խմբագրութեան, *«Ասիական Սկիւթիա»* յօդուածում հոների մասին հետեւեալն է գրուած. *«Իսկ ի հիւսիսոյ նորա՝* (այսինքն՝ Դարբանդի - Ա.Շ.) *թագաւորութիւն* (աւելի ճիշտ՝ Մեծ Իշխանութիւն - Ա.Շ.) *Հոնաց հուպ ի* (Կասբից - Ա.Շ.) *ծով. եւ ի մտից նորա առ Կաւկասով Վարաջան[7] քաղաք նոցին Հոնաց...»*: Յաջորդ հատուածում սոյն յօդուածի տեղեկութիւնները ուղղակիօրէն վկայում են, որ հոնաց թագաւորը (մեծ իշխանը) ճանաչում էր խազարական խաքանի գերիշխանութիւնը[8]:

Աղուանից իշխան Ջեւանշէրի (636/7-681) գահակալման 28րդ տարում, երբ *«լինէր ձմեռնային եղանակի հասարակաւորութիւն»*, այսինքն՝ 664ի Դեկտեմբերի 21ին կամ 22ին, Աղուանից Աշխարհ ներխուժեցին հոները, եւ այս անգամ՝ առանց խազարների: Ճշգրիտ այս օրը մենք յայտնաբերում ենք անանուն հեղինակի մօտ, ում երկը *684 Թուականի Պատմութիւն* պայմանական խորագրով տեղ է գտել *Պատմութիւն Աղուանից Աշխարհի* եռահատոր գրքում, որն իր հերթին պատկանում է Ժ. դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու գրչին[9]:

Հոների արշաւանքը պարտադրեց Ջեւանշէրին՝ բանակցութիւնների նստել նրանց հետ: Սակայն, ինչպէս հաւաստիացնում է անանուն հեղինակը, տուեալ նախաձեռնութեամբ հանդէս եկաւ հոնաց արքան (մեծ իշխան Աղփ Իղիթուէրը[10]): Վերջինս բանակցութիւնների յաջող աւարտից յետոյ վերադարձրեց Ջեւանշէրին 120 հազ. գլուխ ոչխար, 7 հազ. ձի ու ցուլ: Այնուհետեւ խաղաղութեան դաշինք կնքուեց, որն ամրագրուեց հոնաց թագաւորի դստեր ու աղուանից իշխանի անդրանիկ որդու ամուսնութեամբ[11]:

Մատենագիրը ոչինչ չի յայտնում այն պարտաւորութիւնների մասին, որոնք ստանձնեց Ջեւանշէրը: Եւ հենց դա մեզ յանգեցնում է այն եզրակացութեան, որ տուեալ պարտաւորութիւնները ինչ-որ կերպով չէին բխում աղուանից իշխանութեան գերագոյն շահերից: Չէ՞ որ այս իշխանի անանուն պատմիչը, ով նրա քաղաքական գործունէութեանը (եւ ոչ միայն քաղաքական), նուիրել է իր երկի մի շարք գլուխներ, չի թաքցնում իր մեծ համակրանքը նրա հանդէպ: Մենք կարծում ենք թէ Ջեւանշէրը պարտաւորուեց ճանաչել Աղփ Իղիթուէրի գերիշխանի գերագոյն իրաւունքները:

Հաստատուած խնամիական կապերն էլ, մեր խորին համոզմամբ, հենց դրա վառ վկայութիւնն են:

Խաղաղութիւնը հոները խախտեցին միայն Պարտաւում Ջեւանշէրի դաւադրաբար սպանութիւնից յետոյ: *684 Թուականի Պատմութիւն*ի հեղինակը, ով այս սպանութեանը նուիրել է իր երկի մի ամբողջ գլուխ՝ *«Մահ Աւրհասական Ջեւանշէրի Մեծի Իշխանին»* խորագրով[12], ով գրի է առել վիպերգական մի երգ, յօրինուած ոմն հռետորի կողմից՝ *«Ողբ Ի Մահն Ջեւանշէրի Մեծի Իշխանին»* վերնագրով[13], դարձեալ լռում է՝ չնշելով այս անգամ աղուանից իշխանի սպանութեան օրը: Փոխարէնը նա գրում է, որ սպանութիւնը տեղի ունեցաւ *«...իբրեւ անցանէին աւուրք խորշակայեղց տաւթանացն, ի ժամանել բարձրութեան տաւնին մեծի Նաւակատեաց խաչին,...»*[14]: Նա նշում է նաեւ, որ դա *«ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն գոռոզին Մահմատայ»*[15], այսինքն՝ հիջրայի (681/2):

Քանի որ հիջրայի 682ը սկսուել է 681ի Սեպտեմբերի 20ին, ապա խօսքը 681ի Սեպտեմբերի մասին է, երբ աղուանից եկեղեցին հայոց եկեղեցու հետ մէկտեղ ամսի 15ին, 16ին, 20ին եւ 21ին մեծ ճոխութեամբ նշում էր Խաչվերացի տօնը[16]:

Պարտաւում Ջեւանշէրի սպանութիւնից անմիջապէս յետոյ նրա եղբօր որդի Վարազ Տրդատը ընտրուեց նոր իշխան: Լուրն առնելով հոնաց մեծ իշխանը, *684 Թուականի Պատմութիւն*ի հեղինակի վկայութեամբ, ներխուժեց Աղուանք մեծաթիւ զօրքով[17]: Ենթիմաստից էլ ուղղակիօրէն հետեւում է, որ Աղփ Իղիթուէրը իր խնամու սպանութեան դիմաց վրէժխնդիր էր ուզում լինել: Եւ ահա աղուանից նորընտիր կաթողիկոս Եղիազարը (681-687) ստիպուած էր ներկայանալ հոնաց իշխանի ճամբար ու արդարանալ նրա առջեւ առ այն, որ Վարազ Տրդատը իր հօրեղբօր սպանութեան հետ որեւէ առնչութիւն չունի, որ նա իշխանական գահին բռնութեամբ չի տիրել, այլ երկրի նախարարական ժողովի կողմից է օրինաւոր կերպով ընտրուել: Միայն դրանից յետոյ է որ Աղփ Իղիթուէրը թողնում է Աղուանից աշխարհը եւ վերադառնում Վարաջան/Վառաչան[18]:

Նմանատիպ ներխուժումներից ապագայում խուսափելու համար՝ Վարազ Տրդատը պատմական որոշում է ընդունում՝ դեսպանութիւն ուղարկել Աղփ Իղիթուէրի մօտ՝ Մեծ Կուէնից

եպիսկոպոս Իսրայէղի գլխաւորութեամբ[19]: Եւ պատահական չէ, որ այդպիսի կարեւոր առաքելութիւնից առաջ մենք գտնում ենք Իսրայէղին Վաղարշապատում՝ հայոց վեհափառ Սահակ Գ. Ձորափորեցու (677-704) եւ գահերէց իշխան Գրիգոր Մամիկոնեանի (662-685) պաշտօնական ընդունելութեան ժամանակ: *684 Թուականի Պատմութիւն*ում դէպի Հոնք դեսպանութեան նկարագրման նախորդող գլուխը ամբողջովին այդ ունկնդրութեան է նուիրուած[20]:

Հանդիպումները Վաղարշապատում պատահական չէին: Չնայած, դրանց օրակարգի ու բովանդակութեան վերաբերեալ ոչինչ չես գտնի անանուն մատենագրի մօտ, Իսրայէղը հայոց իշխանութեան մեծամեծների հետ անկասկած պէտք է որ քննարկէր իրեն վերապահուած քաղաքական ու կրօնական գործունէութիւնը հեթանոս Հոնքում: Բանն այն է, որ աղուանից հայրապետական աթոռը գտնւում էր կաթողիկոսանիստ Դուինի հովանու ներքոյ[21]:

*684 Թուականի Պատմութիւն*ի այլ հատուածում գտնում ենք ամբողջ մի գլուխ, որտեղ նկարագրուած է Իսրայէղ եպիսկոպոսի դժուարին ճմեռային ուղին դէպի Հոնաց Աշխարհ *«ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն»* (հիջրայի), այսինքն՝ 681-682ի ձմռանը[22]: Դեսպանութիւնը ճանապարհ է ընկնում *«յամսեանն մեհեկանի, որ աւր ԺԸ էր ամսոյն»*, այսինքն՝ Դեկտեմբերի 23ին[23], եւ հասնում Վարաջան/Վառաչան *«ի մուրս Քառասներորդացն»*, այսինքն՝ Կիրակի օր, 682ի Փետրուարի 9ին[24]: Իսրայէղը արժանանում է հոնաց մեծ իշխանի ճոխ ընդունելութեանը[25]:

Անանուն մատենագիրը յաջորդ երկու գլուխներում մանրամասն, վաղ միջնադարում բնորոշ աւանդական ոճով, յաճախ առաջին դէմքից եւ յոգնակի թուով (ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ նա իր անմիջական մասնակցութիւնն է բերել տուեալ առաքելութիւնում), շարադրում է թէ ինչպէս հոները Իսրայէղի քարոզչութեան արդիւնքում աւերեցին իրենց հեթանոսական մեհեանները եւ ընդունեցին սուրբ մկրտութեան խորհուրդը: Աղփ Իղիթուէրը որոշեց նոյնիսկ քրիստոնէութիւնը Հոնաց Մեծ Իշխանութիւնում հռչակել որպէս միակ պետական կրօն, իսկ Իսրայէղին նա թոյլ տուեց արքունիքի դարպասների առջեւ սուրբ խաչ կանգնեցնել: Աղփ Իղիթուէրը օծուեց Իսրայէղի ձեռամբ Սուրբ Զատկի նաւակատեաց (ճրագալոյցի) օրը[26], որը 682ին նշւում էր Մարտի

29ին: Այսպիսով՝ մեր տրամադրութեան տակ ունենք Հոնաց Մեծ Իշխանութիւնում «հայոց քրիստոնէութեան» (որը «ուղափառութեան» տիրող մոդէլն էր ոչ միայն Հայքում, այլեւ յարակից Աղուանքում[27]), հեթանոսութեան դէմ յաղթանակի ճշգրիտ օրը: Այդ յաղթանակը հնարաւոր եղաւ հայ-աղուանական քաղաքական ու եկեղեցական առաքելութեան շնորհիւ:

Եւս մէկ յատուկ գլուխ մեր յուշարձանում նուիրուած է այն պատմական իրողութեանը, թէ ինչպէս հոնաց մեծ իշխանը որոշեց Իսրայէղին թողնել իր երկրում որպէս հոգեւոր առաջնորդ՝ հիմնելով Վարաջան/Վառաչանում հայրապետական աթոռ[28]: Ստացւում է, որ Աղփ Իղիթուէրը նպատակադրուել էր ձեւաւորել հոնաց «ազգային» եկեղեցի, սեփական հայրապետական աթոռով: Հաւանական է՝ նա մտադիր էր ի դէմս քրիստոնէութեան գաղափարական զէնք ձեռք բերել հեթանոսական Խազարիայի դէմ պայքարում, յանուն պետական անկախութեան[29]:

Իր նպատակը գործադրելու համար՝ Աղփ Իղիթուէրը Իսրայէղի հենց խորհրդով գրաւոր դիմում է աղուանից կաթողիկոս Եղիազարին եւ երկրի իշխան Վարազ Տրդատին խնդրանքով՝ նշանակել Իսրայէղին Հոնաց Մեծ իշխանութիւնում որպէս հովուապետ: Քիչ անց նմանատիպ ուղերձով նա դիմում է հայոց կաթողիկոս Սահակ Ձորափորեցուն եւ երկրի իշխան Գրիգոր Մամիկոնեանին, ինչը ոչ մի զարմանք չի առաջացնում:

Գրաւոր ուղերձները ամբողջովին մէջբերուած են *684 Թուականի Պատմութիւն*ում: Ահա, օրինակ, Աղփ Իղիթուէրի հայոց երկրի հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդներին հասցէագրուած թուղթը մեր կրճատումներով. *«Իսկ զեկեալ փրկութիւն աշխարհի վերինն Աստուած, յերկիր եկեալ Քրիստոս՝ ի լուր ականջաց լուաք իբրեւ ընդաղաւտ: Եւ յարշաւանաց մերոց յայդ աշխարհ եւ որ մաւտ առ մեաւք փունդ Աղուանից զմի հաւատ ունողք դուք եւ այժմ ամենայն փիեզերք, նախանձ բարի եւ մեր փնկեցաւ ի սրտի: … Եւ այժմ զեղեալ առ մեզ սքանչելիս յեկելոցդ՝ լուեալ ձեր՝ եւ զհայցումն մեր կատարել ախորժեսջիք՝ զնոյնդ* (Իսրայէղդ - Ա.Շ.) *առաքեալ մեզ փեսուչ: Եւ ի սրբոյ հայրապեփէդ Աղուանից Եղիազարու խնդրեալ է մեր, եւ զձեզ գործակից եւ հաւատակից նմա գիտելով աղերսեմք յերկաքանչիւրոցդ կատարել զմեր հոգեւոր խնդիր: Զի սակս նորա լինելոյ առ մեզ*

արշաւանք զաւրացս խուժադուժ ազգաց յաշխարհ ձեր արգելեալ փակեալ լինիցի՝ մեր մի հաւատ ունելով եւ ձեզ»[30]*:*

Պատասխան թղթում հայոց վեհափառն ու գահերէց իշխանը նշեցին, թէ իբր Իսրայէղը չէր կարող ընդմիշտ հեռանալ իր թեմից, որը Մեծ Կուէնք աղուանից գաւառում էր. *«Այլ զոր խնդրեցէք ի մենջ զեպիսկոպոսդ Իսրայէղ*,- գրում են նրանք Աղփ Իղիթուէրին,- *մեծ է այդ խորհուրդ ձեր, զի չէ մարթ հաւտի առանց հովուի լինել»*: Ապա նրանք դիւանագիտօրէն ելնում են դրու-թիւնից. *«Եւ արդ՝ ծանր եւ դժուարին է մեզ չկատարել զհայցումնդ ձեր, սակայն պատճառք կան. զի ոչ է նա վիճակեալ մերում աթոռոյս, այլ՝ տանն Աղուանից: Մեր կամ է եւ մեծ յաւժարութիւն՝ լինել նմա առ ձեզ հանապազ, այլ այդ հրաման եւ իշխանութիւն աթոռակցին մերոյ է՝ Եղիազարու՝ հայրապետին Աղուանից. նորա է գործդ այդ»*[31]:

Վերջինս, Վարազ Տրդատի հետ, ըստ երեւոյթին, հայկական կողմի ցուցմունքով, յայտնեց հոնաց սուրհանդակներին, որոնք շտապ հասան Աղուանից մայրաքաղաք Պարտաւ, առ այն որ Իսրայէղը կարող է նշանակուել Հոնաց Աշխարհում, ինչպէս իրենք են կարծում, միմիայն համատեղութեան կարգով. *«Ոչ է պարտ դմա*,- ասում են աղուանից կաթողիկոսն ու իշխանը,- *զհաւատացեալ դմա յԱստուածոյ զհաւտն իւր թողուլ միանգամայն եւ լինել ընդ ձեզ. այլ երթալ եւ գալ դմա ըստ կարի իւրում հրամայեմք...»*[32]:

Աղփ Իղիթուէրի նամագրութիւնը հայոց հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդների հետ վկայում է, որ այդ մակարդակի հարցերը, ինչպիսին էր նոր ինքնուրոյն եկեղեցական կազմակերպութեան ձեւաւորումը, աղուանից կաթողիկոսի ու իշխանի իրաւասութեան տակ չէին գտնւում: Հաւանական է, հենց այդ պատճառով է որ Խորհրդային Ադրբեջանում յայտնի ակադեմիկոս Զհա Բունիաթովը խուսափում էր խոստովանել, որ բացի Պարտաւ ուղարկուած թղթից Աղփ Իղիթուէրը խնդրանքով դիմել է նաեւ Հայոց երկրի առաջնորդներին[33], եւ դա այն դէպքում, երբ վերջինների հետ հոնաց մեծ իշխանի նամակագրական թղթերի պատճէները *684 Թուականի Պատմութիւն*ում երկու գլուխ են զբաղեցնում:

Հայոց կողմի պատասխան թղթի ենթիմաստից հետեւում է, որ կաթողիկոսանիստ Դուինը ակնյայտօրէն փորձում էր խափանել հոնաց ձեւաւորուող եկեղեցու հնարաւոր լիակատար անկախացումը: Հակառակ դէպքում՝ նա չէր խոչընդոտի, որ Իսրայէղը

Վարաջան/Վառաչանում նշանակուէր հովուապետ՝ մշտական հիմունքներով. նրա փոխարէն աղուանից Մեծ Կուէնք գաւառում մէկ այլ եպիսկոպոս նշանակելը այդքան էլ բարդ խնդիր չէր:

Հոնաց սուրհանդակներին պաշտօնական Պարտաւի պատասխանը չգոհացրեց, սակայն նրանք ստիպուած էին ընդունել առաջ քաշուած պայմանը: *«Ի գալն* (Իսրայէղի - Ա.Շ.) *եւ յերթալն առ մեզ մի յապաղեսցի եւ զեդեալ հիմն հաւատոյ անդրէն մի՛ քակտեսցի եւ թողէ զմեզ որբս,...»*, յայտնեցին նրանք Վարաջան/Վառաչան վերադառնալուց առաջ[34]: Այս յայտարարութիւնները, ինչպէս շարունակում է մեր անանուն մատենագիրը, անտարբեր չթողեցին Իսրայէղին. նա շտապեց Հոնաց Աշխարհ[35]:

Հայքի ու Աղուանքի առաքելական գործունէութիւնը, որի միանշանակ նպատակն էր՝ քաղաքական ու հոգեւոր դաշինք հաստատել հիւսիսային վտանգաւոր այս հարեւանի հետ, չփոխեց աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձկասպեան Կովկասի տարածաշրջանում, քանզի հոները գտնւում էին խազարներից վասալական կախման մէջ: Վերջիններս էլ դարձեալ անցան Մեծ Կովկասի լեռնաշղթան հիւսիսից հարաւ:

Խազարների ու հոների 680ականներին կատարած ներխուժումների վերաբերեալ հետազօտողների շրջանում տարակարծութիւններ կան. հիմնականում հետեւելով ակադեմիկոս Սուրէն Երեմեանին, նրանք պնդում են, թէ տեղի է ունեցել միայն մէկ արշաւանք՝ 684ին, այդ իսկ պատճառով էլ Իսրայէղի գլխաւորութեամբ դեսպանութիւն ուղարկուեց Աղփ Իղիթուէրի մօտ[36]: Տարակարծութիւնների հիմնական պատճառը մատենագիրների ոչ-պարզորոշ տեղեկութիւններն են: Ահա՝ մեր հիմնական սկզբնաղբիւրի՝ *684 Թուականի Պատմութիւն*ի անանուն հեղինակը հոների դարձի ու այն նամակագրութեան մանրամասն եւ հետեւողական շարադրումից յետոյ կտրուկ վերջացնում է իր տարեգրութիւնը: Ղեւոնդ Վարդապետը վերոյիշեալ *«դադարեցին ի հարկապտութենէ Հայք, Վիրք Աղուանք, ծառայեալ նոցա* (Տաճկաց - Ա.Շ.) *ամս Լ: Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ,*- գրառումից յետոյ աւելացնում է՝- *Եւ ի չորրորդ ամին փրիեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք, եւ սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր եւ զբազումս ի նախարարացն եւ զիշխանն Վրաց, եւ Աղուանից»*[37]: Ուշ խմբագրումներն էլ խա-

զարների այս ներխուժումը թուագրում են տարբեր կերպ: Օրինակ՝ Յովհաննէս Գ. Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929) թուագրում է այն Սահագ Գ. Ձորափորեցու գահակալման Է. տարում (683/4)[38], իսկ Ասողիկը՝ հայոց 134 թուով (685/6)[39]:

Մինչ օրս հետազօտողները պատշաճ ուշադրութիւն չեն դարձրել Փիլոն Տիրակացու հաւանական վկայութեանը: Նրան վերագրուող *Ժամանակագրութիւն*ը աւարտւում է հետեւեալ տողերով. *«ԻՒՍՏԻԱՆՈՍ որդի երրորդ Կոստանդնի, ամբ Բ: Ի սորա առաջին ամին փրիեցին հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից: Եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր Ժ էր ամսոյն, ի ՃԼԴ թուականին Հայոց»*[40]: Այսպիսով, մեր տրամադրութեան տակ ունենք խազարների դէմ ճակատագրական ճակատամարտի եւ իշխանների մահուան ճշգրիտ օրը ՝ 685ի Օգոստոսի 16ը:

Տարեթիւը լիովին համապատասխանում է ե՛ւ բիւզանդական կայսր Յուստինիանոս Բ.ի (685-695 եւ 705-711) գահակալման առաջին տարուան, ե՛ւ Ղեւոնդ Վարդապետի *Ժամանակագրութեան*ը (652ի Օգոստոսին կնքուած հայ-արաբական դաշինքի /30+4=/34րդ տարում), ե՛ւ Ասողիկի (հայոց 134):

Աւելին, իրաքցի պատմիչ Խալիֆա իբն Խայեաթի (776/4-854) մօտ պահպանուել է մի համառօտ, սակայն արժէքաւոր գրանշում թէ, որ հիջրայի 66ին, որի սկիզբը համապատասխանում էր 685ի Օգոստոսի 8ին, խազարների կողմից ալ-Մաուսիլում (Մոսուլում) սպանուեց արաբ կառավարիչը[41]: Ակնյայտ է, որ խազարների արշաւանքը այս անգամ հասել էր մինչեւ Վերին Միջագետք:

Եւ, այսպէս, Է. դարի երկու սկզբնաղբիւրների եւ դրանց Ը.-Ժ. դարերի խմբագրումների հաղորդագրութիւններից մեզ հասած նիւթերի ամփոփումը ցոյց տուեց, որ 680ականների սկզբներին տեղի է ունեցել հիւսիս-կովկասեան թիւրքախօս քոչուորների երկու արշաւանք: Եթէ 681ի Սեպտեմբերին նրանք ներխուժեցին Աղուանք, ապա երկրորդ անգամ՝ 685ի Օգոստոսին, կատարեցին մեծ արշաւանք ոչ միայն դէպի Աղուանք, այլեւ՝

Հայք ու Վիրք, սպանելով տեղի կառավարիչներին: Իրադարձութիւնների ընթացքը աւելի պարզ լուսաբանելու համար՝ այս երկու արշաւանքներից առաջինը առաջարկում ենք կոչել «փոքր»: Ակնյայտ է, որ մեծ արշաւանքի ժամանակ աւելի

շատ տուժեցին Հայքն ու Վիրքը: Ասողիկը, ով ներխուժման ճշգրիտ տարեթիւն էր պահպանել սերունդների համար, հաղորդում է, որ սպանուեցին միայն նշուած երկու իշխանութիւնների կառավարիչները: Իսկ ինչ վերաբերում է աղուանից եպիսկոպոս Իսրայէղի գլխաւորած դեսպանութեանը դէպի հոնաց մեծ իշխանութիւն, ապա այն կարող էր տեղի ունենալ միայն 681ի այդպէս կոչուած «փոքր արշաւանք»ից յետոյ: 685ի խոշոր արշաւանքից յետոյ, որին ենթարկուեցին Կովկասից հարաւ գտնուող քրիստոնեայ բոլոր երեք իշխանութիւնները, դեսպանութիւն կ'ուղարկուէր ո՛չ միայն Աղուանից կաթողիկոսի ու այդ երկրի իշխանի կողմից, եւ ո՛չ միայն դէպի հոնաց մեծ իշխանի արքունիք: Այնպէս որ Երեմեանի եւ այն հետազօտողների[42], եզրակացութիւնները, որտեղ տեղ է գտել 680ականների սկզբներին (հոների ու) խազարների կողմից կատարուած միայն մէկ արշաւանքի գաղափարը, անհիմն են մեզ թւում: Բացի այդ, երկրորդ արշաւանքը հարկաւոր է թուագրել ոչ թէ 684ով, ինչպէս որ մինչ օրս առաջարկւում էր անել, այլ՝ 685ի Օգոստոս ամսով:

Երկրորդ ներխուժման պատճառ կարող էր հանդիսանալ խազարական աւագանու թշնամական վերաբերմունքը՝ հեթանոս խաքանութիւնից վասալական կախման մէջ գտնուող Հոնաց Մեծ Իշխանութիւնում քրիստոնէութեան տարածման ու հաստատման հայ-աղուանից առաքելութեան գործընթացին: Բանն այն է, որ միաստուածեան կրօնի ընդունումը, ինչպէս արդէն նշեցինք, թոյլ կը տար ինքնավար հոնաց իշխանութեանը ձեռք բերել լիակատար պետական անկախութիւն: Եւ, հաւանական է, Աղփ Իղիթուէրը հասցրեց մինչեւ 685ի օգոստոսեան արշաւանքի սկիզբը հիմնադրել Վարաջան/Վառաչանում հայրապետական աթոռ Իսրայէղի գլխաւորութեամբ, եւ քրիստոնէութեան գաղափարախօսական դրօշի ներքոյ սկսել իր թեժ պայքարը յանուն ինքնիշխանութեան: Միայն մեր այսպիսի ենթադրութիւնները կարող են բացատրել աղբիւրներում բացակայող այն փաստը, որ այս 685ի խոշոր արշաւանքը նոյնպէս գլխաւորում էր Աղփ Իղիթուէրը, եւ, որ ընդհանրապէս այն կատարեցին հոները. ամէնուրեք խօսքը գնում է միայն ու միայն խազարների մասին: Հետեւաբար, սա խազարաց խաքանի պատժիչ արշաւանք էր ընդդէմ իր հոնաց վասալի եւ վերջինիս քաղաքական ու հոգեւոր դաշնակիցների՝ ի դէմս Աղուանքի ու Հայքի իշխանների:

Հնազանդեցուած հոները պէտք է որ վերադառնային հեթանոսութեան եւ աջակցէին զօրքով խազարաց գերիշխանին՝ արշաւելու Աղուանք, Հայք եւ Վիրք:

Այսպիսով, հայ-աղուանական քաղաքական ու կրօնական առաքելութեան յաղթանակը, որի հետեւանքն էր Հոնաց Մեծ Իշխանութիւնում «հայոց քրիստոնէութիւն»ը որպէս պետական կրօն հռչակելը, տեւեց շատ կարճ: 682ի Մարտի 29ից մինչեւ 685ի Օգոստոսի սկիզբը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Մանրամասն տե՛ս՝ Arsen Shahinyan, *Armeniya I Strani Yujnogo Kavkaza V Usloviyakh Vizantiysko-Iranskoy I Arabskoy Vlasti,* seria "Vizantiyskaya biblioteka. Issledovaniya" (Հայաստանը եւ Հարաւային Կովկասի երկրները բիւզանդա-իրանական ու արաբական իշխանութեան պայմաններում, «Բիւզանդական Գրադարան Մատենաշար: Ուսումնասիրութիւններ»), Սանկտ Պետերբուրգ, «Ալետէյա», 2011, էջ 112-117:

[2] «Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն», *Մատենագիրք Հայոց, Հտր. Ե. (Է. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2005, էջ 969:

[3] «Պատմաբանութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց», *Մատենագիրք Հայոց, Հտր. Ջ. (Ը. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2007, էջ 743-744:

[4] Տե՛ս, օրինակ՝ Suren Eremyan, «Moisey Kalankatujskiy O Posolstve Albanskogo Knyazya Varaz-Trdata K Xazarskomu Xakanu Alp-Ilitveru» (Մովսէս Կաղանկատուացին խազարաց խաքանի մօտ աղուանից իշխան Վարազ Տրդատի դեսպանութեան մասին), *Zapiski Instituta Vostokovedeniya Akademii Nauk,* 1939, Հտր. 7, էջ 135-136. նաեւ՝ Kamila Trever, *Ocherki Po Istorii I Kulture Kavkazskoy Albanii. IV v. do n.e. - VII v. n.e.* (Դրուագներ Կովկասեան Աղուանքի պատմութեան ու մշակոյթի. Դ. դար Ք.ա.-Է. դար Ք.ե.), Մոսկուա-Լենինգրադ, ՍՍՌՄ ԳԱ, 1959, էջ 249. նաեւ՝ Aram Ter-Ghevondyan, *Armeniya I Arabskiy Xalifat* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆայութիւնը), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1977, էջ 50. նաեւ՝ *Nina Garsoïan*, "The Arab Invasions and the Rise of the Bagratuni (640-884)," *The Armenian People from Ancient to Modern Times,* ed. by R. Hovannisian, 1-2, New York, St. Martin's Press, Հտր. 1, 1997, էջ 123:

[5] كتاب فتوح البلدان تاليف الإمام أحمد بن يحيى بن جابر البلاذريّ — Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori, ed. M. de Goeje, Lugduni Batavorum, Brill, 1866, էջ 205: Քաղաքացիական այս պատերազմի մասին տե՛ս՝ Գէորգ Աստարճեան, *Ընդարձակ, Ընդհանուր Արաբական Պատմութիւն (2500 Ն.Ք.-1918)*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1961, էջ 177-178:

[6] *Ibn Wadhih qui dicitur al-Ja'qubi,* Historiae, ed. M. Houtsma, 1-2, Lugduni Batavorum, Brill, 1883, Հտր. 2, էջ 277–278: تاريخ أحمد بن أبى يعقوب بن جعفر بن وهب إبن واضح الكاتب العبّاسيّ المعروف باليعقوبيّ —

[7] Համառօտ խմբագրութիւնում՝ Վառաչան («Աշխարհացոյց», *Մատենագիրք Հայոց, Հտր. Բ. (Ե. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2003, էջ 2170):

[8] Նոյն տեղում, էջ 2150:

[9] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», *Մատենագիրք Հայոց, Հտր. Ե. (Է. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2005, էջ 825-827:

[10] Հոնաց այս մեծ իշխանի անունը յիշատակւում է սկզբնաղբիւրում երկու անգամ, երկուսն էլ յաջորդ գլուխներում:

[11] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 827:

[12] Նոյն, էջ 855-859:

[13] Նոյն, էջ 859-861:

[14] Նոյն, էջ 856:

[15] Նոյն, էջ 868: Անտեսելով հիջրայով թուագրուող Ջեւանշէրի մահը՝ ոմանք այս սպանութիւնը թուագրել են 669 (տե՛ս, օրինակ՝ Eremyan, յաւելուած, էջ 155. նաեւ՝ Trever, էջ 249. նաեւ՝ Mikhail Artamonov, *Istoriya Xazar* (Խազարների պատմութիւն), Լենինգրադ, Պետական Էրմիտաժ, 1962, էջ 186), միւսները՝ 670ով (տե՛ս, օրինակ՝ Anatoliy Novoseltsev, *Xazarskoe Gosudarstvo I Ego Rol V Istorii Vostočnoy Evropiy I Kavkaza* (Խազարական պետութիւնը եւ նրա դերը Արեւելեան Եւրոպայի ու Կովկասի պատմութիւնում), Մոսկուա, «Նաուկա», 1990, էջ 175):

[16] Հայ Առաքելական Եկեղեցին տարուայ տաղաւար տօներից այս հինգերորդն ու վերջինը նշում է Կիրակի օրը, Սեպտեմբերի 11-17ն ընկած ժամանակահատուածում, ինչպէս նաեւ յաջորդ շաբաթուայ Երկուշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերին: Մեր հաշուարկով, 681ին Կիրակի օր էր նշուած ժամանակահատուածում Սեպտեմբերի 15ը, իսկ յաջորդ շաբաթուայ Երկուշաբթի օրն էր ամսի 16ը, Ուրբաթ ու Շաբաթ օրերն էին ամսի 20ն ու 21ը, համապատասխանաբար:

[17] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 861-863:

[18] Նոյն, էջ 863-864:

[19] Նոյն, էջ 868-871:

[20] Նոյն, էջ 866-868:

[21] Դրա մասին մանրամասն տե՛ս՝ Shahinyan, էջ 184-199:

[22] Տե՛ս՝ «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 868-871: Երեմեանը, հիմնականում հիմք ընդունելով աւելի ուշ հայ մատենագիրների տեղեկութիւնները, իր յօդուածում այս դեսպանութիւնը թուագրում է 684-685 ձմռանը (Eremyan, էջ 134-137):

[23] Հիջրայի 62ը (=681ի Սեպտեմբերի 20 – 682ի Սեպտեմբերի 9ը) մօտաւորապէս համապատասխանում է հայոց 130ին (=681ի Յունիսի 8 – 682ի Յունիսի 7ը), իսկ նրա Մեհեկան ամսուայ 18ը՝ 681ի Դեկտեմբերի 23ին: Տարեթիւը հայոց տոմարով պահպանուել է ԺԱ. դարի սահմանագլխի պատմիչ Ասողիկի մօտ

(Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, «Պատմութիւն Տիեզերական», *Մատենագիրք Հայոց, Հրր. ԺԵ. (Ժ. Դար, Պատմագրութիւն Երկու Հատորով, Գիրք Բ)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2012, էջ 702): Երեմեանը այս 130ը, միւս խմբագրումների մօտ տեղ գտած ժամանակագրութիւնների հետ համատեղելու համար, ուղղակի առաջարկել է փոխարինել այն հայոց 133ով (684/5):

[24] Մեր հաշուարկով՝ 682ին Քառասնորդական կամ Մեծի Պահոց շրջանը սկսուեց Փետրուարի 10ին, իսկ Սուրբ Զատկի տօնը նշուեց՝ Մարտի 30ին:

[25] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 870: Երեմեանի որոշմամբ՝ Իսրայէղի երթուղին ձգուեց Քարթլիի (Վիրքի) տարածքով (Eremyan, էջ 137-150):

[26] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 871-888:

[27] «Ուղափառութեան» հայոց մոդէլը հիմնականում կայանում է առաջին երեք տիեզերական ժողովների ընդունման եւ չորրորդ, Քաղկեդոնում 451ին հրաւիրուած, տիեզերական ժողովի մերժման դիրքորոշումից:

[28] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 888-891:

[29] Նման գաղափար առաջին անգամ արտայայտել է դեռ ռուս յայտնի գիտնական Անատոլիյ Նովոսելցեւը (տե՛ս՝ Novoseltsev, էջ 147):

[30] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 892:

[31] Նոյն, էջ 893-894:

[32] Նոյն, էջ 894: Հաւանական է, այդպիսի ընթացակարգ կիրառուել է աւելի վաղ: Դասխուրանցու եռահատոր *Պատմութիւն Աղուանից Աշխարհիի* երրորդ հատորի վերջին ԻԴ. գլխում՝ *«Անուանք Հայրապետացն Աղուանից, Ամք Եւ Գործք Նոցին»* խորագրով, կարելի գտնել մի գրանշում առ այն, որ Աղուանից 11րդ եպիսկոպոսն էր (Զ. դարի սկիզբ) *«սուրբն Յովհան, որ եւ Հռնացն եղեւ եպիսկոպոս փէր հայրապետական շնորհիւ, զորպէսն չգիտէմք»* (տե՛ս՝ «Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի», *Մատենագիրք Հայոց, Հրր. ԺԵ. (Ժ. Դար, Պատմագրութիւն Երկու Հատորով, Գիրք Բ)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2012, էջ 421):

[33] Zia Buniyatov, *Azerbajžan v VII–IX vv. (Ադրբեջանը Է.-Ը. դդ.)*, Բաքու, Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ, 1965, էջ 103-104:

[34] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 894:

[35] Նոյն, էջ 894-895:

[36] Eremyan, էջ 129–155. նաեւ՝ Trever, էջ 249-250. նաեւ՝ Ստեփան Մելիք-Բախշեան, *Հայաստանը VII–IX Դարերում*, Երեւան, «Միտք», 1968, էջ 91-92. նաեւ՝ Ter-Ghevondyan, էջ 50-51. նաեւ՝ Garsoïan, *The Arab Invasions and the Rise of the Bagratuni (640-884)*, էջ 123: Մեր օրերի խոշոր ռուս արաբագէտ Օլէգ Բոլշակովը գրում է միայն 681ի ներխուժման մասին (տե՛ս՝ Oleg Bolshakov, *Istoriya Xalifata*, *Հրր.* Գ. Մոսկուա, Ռուսաստանի ԳԱ «Վոստոչնայա Լիտերատուրա», 1998, էջ 214): Խորհրդային պատմագրութիւնում երկու արշաւանքների վերաբերեալ գրանշումներ նոյնպէս եղել են (տե՛ս, օրինակ՝

Artamonov, էջ 186, 190. նաեւ՝ Buniyatov, էջ 102, 104. նաեւ՝ Novoseltsev, էջ 175–176):

[37] *Ղեւոնդ*, էջ 744:

[38] Յովհաննէս Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», *Մատենագիրք Հայոց, Հտր. ԺԱ. (Ժ. Դար, Պատմագրութիւն)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2010, էջ 414-415:

[39] *Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ*, էջ 702:

[40] *Փիլոն Տիրակացի*, էջ 969:

[41] تاريخ خليفة بن خيّاط \ حققه وقدّم له اكرم ضياء العمرى — The History of Khalifah ibn Khayyat, ed. by Akram Diya' al-Umari, Nagav, [S.l.], 1386–1387 A.H. / 1967 A.D., p. 260:

[42] Տե՛ս՝ ծանօթ. 37:

THE ARMENIAN-ALBANIAN POLITICAL AND RELIGIOUS MISSION TO THE NORTH-EASTERN CAUCASUS AND THE DATE OF THE HUNS' CONVERSION
(Summary)

ARSEN K. SHAHINYAN
a.shaginyan@spbu.ru

Through extensive and diverse sources, the author establishes the exact date of the 'victory' (29 March 682) of "Armenian Christianity" (the dominant model of "orthodoxy" not only in Armenia, but also in neighboring Caucasian Albania) over paganism in the Grand Principality of the Huns.

The author also establishes the time (early August 685) the Northern Caucasus Huns returned to paganism following the punitive expedition of the suzerain Khazars against the Albanian and Armenian principalities.

N.E. The article was made possible through Saint Petersburg State University research grant 5.38.283.2014.

THE ARMENIAN CHURCH AND THE PAPACY DURING THE LAST CENTURY OF CILICIAN ARMENIA (1275-1375)

CLAUDE MUTAFIAN
claude.mutafian@wanadoo.fr

ABSTRACT

Adjacent to Frankish Syria, a new Kingdom of Armenia was created in Cilicia in 1198, and for more than half a century the Armenians treated the papacy as an equal. This situation changed gradually with the weakening of the Mongol alliance and the growing threat of the Egyptian Mamluks, after their first invasion of Cilicia in 1266. Little by little, the Armenian authorities turned to Europe as their last hope, while the papacy imposed the submission of the Armenian Church as a preliminary to any kind of help. Most of the rulers in Cilicia were ready to follow such a political line and accept the Catholic missions sent by Avignon, but a large part of the clergy, mostly in Greater Armenia, remained strongly opposed to any kind of concession. This antagonism contributed to the weakening of the state: no help ever came from the West and in 1375 the Mamluks seized the capital, putting an end to this last Kingdom of Armenia.

THE KINGDOM OF ARMENIA IN THE THIRTEENTH CENTURY

Independent from Rome and Byzantium since the Council of Chalcedon (451), the Armenian Church came into closer relations with Rome after 1198, when the last Kingdom of Armenia was created by King Leo I in Cilicia, far away from the historical homeland and close to the Latin States of Syria (see Figure 1). In the middle of the thirteenth century, thanks to the clever Mongol policy of Het'um I, this Kingdom became the most powerful State in the Christian Near East, so that the Armenians were able to resist Rome and its efforts aiming at the total submission of the Armenian Church. Thus, in 1263, during the meeting of Acre between the legates of Pope Urban IV and catholicos Constantine I, as the former was again insisting on this point, his interlocutor Mxit'ar Skewṙac'i

answered crudely: “From whence does the Roman Church have such a power, to consider herself as a judge of the other Apostolic Sees without being herself subordinated to their judgement?”[1]




Figure 1 - The Levant at the death of King Leo I (1219)

During that period, the Egyptian Mamluks had become more and more aggressive. The first invasion of Cilicia took place in 1266, but in 1274 King Leo II and catholicos James I still felt strong enough to ignore the invitation to the Council of Lyon. The situation changed gradually after the second invasion, in 1275, which proved that the Mongol alliance was definitely becoming increasingly insecure. Little by little, Armenian policy was to shift towards Europe, where embassies began to go one after the other, asking for military cooperation. Furthermore, the influence of the Latin Church was growing, partly thanks to the efforts of the Franciscan missions. Even the secretary of Leo II, Vahram Rabun, was suspected to have hidden Chalcedonian sympathies.[2]

A FRANCISCAN KING OF ARMENIA, HET‘UM II (1289-1307)

The death of Leo II in 1289 destroyed the last barriers against Latin penetration of the Armenian Church. His son and successor Het‘um II was an open supporter of the “Union,” a sweetened word meaning the submission of the Armenian Church to Rome. He

immediately dismissed catholicos Constantine II, who did not agree to that policy. At the same time, the Franciscan Pope, Nicholas IV, sent various letters to the authorities of the Kingdom, preaching the Union and congratulating the king for his opinions about Rome.[3] A "divine surprise" was awaiting him: soon after, probably through the influence of Vahram Rabun, his tutor, and tutor of the famous Friar Minor John of Montecorvino, whom he had met, Het'um II became himself a Franciscan, under the name of "Brother John."[4]

In less than three decades, since the Acre meeting, the balance of power had completely shifted and from henceforth the papacy was never to miss an opportunity to impose the submission of the Armenian Church as a precondition to any hope of help.

In Summer 1292, the Mamluks stormed the patriarchal seat of Hṙomklay, and the catholicosate had to move to the capital, Sis, thus losing any kind of independence with respect to the king.[5] The next titular, Gregory VII Anawarzec'i, was also a unionist, like Het'um II.[6] During the last decade of the century, Nicholas IV tried to mobilize some help for his fellow Franciscan king, who in turn sent embassies to the courts of England, France and Aragon. All these efforts remained fruitless.

THE INTERNAL "SCHISM" AMONG THE ARMENIANS

The dismissal of Constantine II in 1289 was violently condemned by a contemporary, the archbishop of Siwnik', Step'annos Ōrbēlean.[7] According to him, the king imprisoned the catholicos in the castle of Lambron because he feared that he would go to Greater Armenia and be consecrated there, thus provoking a scission in the Armenian Church. In practice, this scission already existed: the gap was deepening between the rulers in Cilicia, who were more and more inclined to accept certain dogmatic modifications in the hope of hypothetical help, and a large part of the clergy, mostly in Greater Armenia, who were strongly opposed to any kind of concession. This antagonism appeared explicitly in 1292 when, as occurred once every century, Resurrection was celebrated on different days in the Latin and in the Armenian Churches: April 6th for the former, April 13th for the latter. King

Het‘um wanted to impose the Latin date, but he had to face the strong opposition of the majority of the clergy, who called it a “false Easter” and remained faithful to the Armenian date.[8]

This movement was very active under the leadership of famous intellectuals like George of Skewṙay in Cilicia, Step‘annos Ōrbēlean, Movsēs Erznkac‘i and Esayi Nč‘ec‘i in Greater Armenia. Thus appeared some anti-Latin strongholds: monasteries such as Skewṙay in Cilicia, Awag Vank‘ in Upper Armenia, Hałbat and Sanahin in Loṙi, Tat‘ew and Glajor in Siwnik‘, the last being ruled by Esayi (see Figure 2). The attempts of Gregory VII to convince these opponents, through legates and letters directed particularly to Step‘annos Ōrbēlean and Esayi, remained totally fruitless.[9]



Figure 2 - Latin penetration in Nakhichevan

THE PASSAGES

The fall of Acre in 1291, marking the end of Frankish Syria, provoked a great emotional response in Europe, where plans for a new Crusade, called “passages,” began to flourish.[10] Many of these passages included, as strongholds, the two last Christian states in the Levant, Catholic Lusignan Cyprus and “heretical” Cilician Armenia (see Figure 3). For the Armenians, such projects were likely to open the way for military help against the Mamluks, and so

they paid particular attention to them. They even played a key role in the development of some, such as in the famous *Liber Recuperationis Terre Sancte*, written by the Franciscan Fidenzio of Padua and completed at the time of the fall of Acre.[11]




Figure 3 - The Near East at the beginning of the fourteenth century

An important wave of "passages" appeared at the beginning of the next century, inaugurated in 1305 by one of the most elaborated, the *Liber de fine* by the Franciscan Ramon Lull, who had spent some time in Cilicia in 1301.[12] In 1306 Clement V was elected pope, and he immediately informed the authorities in Armenia of his interest in these projects.[13] He extended the system of promising religious indulgences to anyone who would offer help to the Kingdom, and threatened to excommunicate anyone giving help to the "Saracens." It was on his commission that the famous prince Het'um of Koŗikos, alias Hayton, first cousin of the late King Leo II, dictated in French his famous *La Flor des Estoires de la Terre d'Orient*, including a history of the Mongols and a "passage;"[14] he offered his work to the pope in 1307. In 1313, the same Clement V had practically convinced the kings of France and England to take the Cross, but he died the next year. For the Capetian kings, the passages were often a pure pretext for receiving

money, a fact of which the rulers of Armenia were ignorant, and so they continued to send embassies.

Particularly important was the *Liber secretorum fidelium Crucis*, a work of one of the best advocates of Armenia, the Venetian noble Marino Sanudo, completed in 1321. He insisted on the necessity of offering help to the hard-pressed Kingdom, trying in 1326 to organize an expedition, and writing again to the king of France in 1332; in spite of all his efforts, he did not have any success.[15] In fact, none of these passages ever came to fruition.

THE COUNCILS OF SIS AND ADANA (1307, 1316)

The unionist catholicos Gregory VII certainly influenced the Franciscan King Het'um II, to whom he proposed the organization of a Council in Sis. It took place in March 1307 and adopted all the propositions of Gregory VII, who had just died. The concessions made to the Latin Church were enormous, such as the recognition of Chalcedon and the date of December 25th for the Nativity; in short, a total submission to Rome. This was made possible because of the choice of the participants: very few from Greater Armenia, and not a single representative of the opposition.[16]

Shortly after the Council, Het'um was assassinated by a Mongol emir, together with his nephew Leo III, to whom he had formerly transferred the crown.[17] It was at the end of this first decade of the fourteenth century that the Holy See moved from Rome to Avignon. The seven French popes who succeeded one another until 1378 were to prove themselves to be particularly tough towards the Armenian Church.

As expected, the anti-unionists protested violently against the decisions of Sis, through speeches and letters, and they refuted the validity of the Council. The new catholicos, Constantine III, and King Ōšin, brother of Het'um, were both supporters of the Union; they first used repression against the opponents, then tried to cool them down, with no success. In such conditions, the Union was impossible to realize, and so it was decided to summon another council. But "Adana 1316" turned out to be nothing else than a repetition of "Sis 1307:" same unionist decisions, same choice of

the participants, same protests and same impossibility of putting the decisions into practice.[18]

POPE JOHN XXII (1316-1334) AND THE UNITED BRETHREN

After a Catholic profession of faith sent by King Ōšin, the new pope, John XXII, received frequent Armenian embassies,[19] but his answers never ensured anything other than some material help. In fact, his preoccupations were elsewhere: Latin proselytism in the Armenian world became more systematic during his pontificate. He used the Mendicant Orders as an efficient tool: these brilliant scholars, who often spoke various Eastern languages, impressed the Armenian prelates and monks with their deep theological education and their sophisticated arguments.

John XXII began with the Franciscans, who had been working in the Armenian world since the middle of the thirteenth century and had already been quite successful, for instance in converting Het'um II and founding various convents, particularly in Cilicia, in Sebastia, and in Upper Armenia.[20] The pope sent some Friars Minor as missionaries in order to convince local Armenian archbishops to accept submission to the papacy. The goal was achieved in Crimea and especially in the north-west of Iran, where the monastery of St. Thaddeus became the basis for the propagation of Catholicism (see Figure 2). Of course, Esayi Nč'ec'i and the anti-unionists accused the converted prelates of betraying the Armenian Church.[21]

Even more efficient were the Dominicans, for whom, in 1318, the pope created in the capital of Mongol Iran an archbishopric, having authority over six bishoprics in the country. One of these was in Maragha where, in 1328, bishop Bartholomew of Bologna, a Friar Preacher, welcomed a former student of Esayi from the neighbouring K'ṙnay, in Nakhichevan (see Figure 2). This John K'ṙnec'i was soon to become the most efficient of the Armenian unionists. The next year he invited Bartholomew to K'ṙnay, where they quickly built a monastery, and in 1330, together with a dozen Armenian prelates, they founded the Order of the United Brethren, a kind of Armenian branch of the Dominicans, intended to serve as

a powerful tool for the propagation of Catholicism inside the Armenian Church.[22]

A couple of years later a passage called *Directorium ad Passagium faciendum*, the work of an anonymous Dominican was circulated. Full of hatred against the Greeks, the text is also a ferocious and racist indictment, qualifying the Armenians as "the worst among the heretics," liars full of duplicity, unable to correct their "errors" just as "the Ethiopian cannot change his skin." The success of this pamphlet reflects the frame of mind of the West towards the Kingdom of Armenia.[23]

POPE BENEDICT XII (1334-1342) AND THE HUNDRED AND SEVENTEEN ERRORS

The Franciscans appeared very moderate compared to the Preachers. Indeed, it was an Armenian Friar Minor, Daniel of Tabriz, who brought to Avignon, in 1341, various letters of King Leo IV and catholicos James II, together with a profession of faith from the latter.[24] The pope gave a very stern answer, denouncing as usual the "execrable errors" of the Armenians. As a matter of fact, his pontificate signifies the climax of tensions with the Armenian Church. While the kings of France and England were preparing a joint expedition, the pope cancelled the project in a letter sent to Philip VI of France in 1336.

During the papacy of Benedict XII a complete catalogue of all the "errors" of the Armenians appeared. The text is preserved in two manuscript copies, one in Paris and one in the Vatican.[25] The first, apparently still unpublished, includes 116 chapters, while the second, more extensive, text is the famous list of a hundred and seventeen errors, commonly attributed to Nersēs Palienc', one of the most fanatical of the United Brethren.[26] Although he may have participated in the reduction at the beginning, the final version is certainly not from his pen; it contains too many serious mistakes that a fine scholar like Nersēs would never have made. For example, one reads in the thirty-seventh error that the catholicosate of Ałt'amar dates to the Emperor Heraclius,[27] while this dissident seat was founded a few centuries later, in 1113. Furthermore, the same

thirty-seventh and also the eighty-eighth error mention a "catholicos Columbarum"[28] (in English "catholicos of the Doves" and in Armenian "Aławniac' catholicos"), which is in fact purely a mistake in pronunciation: it actually concerns the "catholicos of Ałuank'," in Armenian called the "Ałuanic' catholicos"!

Apparently, the only argument in favour of Nersēs as the author is the fact that the violent answer of Daniel of Tabriz is directed to him.[29] The Franciscan assumed the Armenian Church's defence, calling the Dominican a "rabid dog": an explicit example of the difference in tolerance between the two Orders. Daniel wrote one-by-one the answers to all the "errors," and gave a copy to the pope before returning back to the East.

The new catholicos, Mxit'ar, called a Council in Sis, which was charged with preparing an official answer to the "Hundred and seventeen errors."[30] The date is debated: most probably 1345. Around thirty prelates attended, the great majority from Cilicia. The lengthy conclusions were inspired by Daniel's text, the answers being more systematic. Globally, they were very moderate: they did not put in question the papacy's supremacy and remained essentially consistent with the decisions of 1307 and 1316. Under such conditions, the papal accusations seem all the more absurd.

POPE CLEMENT VI (1342-1352) AND THE *SUMMA DE QUESTIONIBUS ARMENORUM*

May 1342 saw the accession of Clement VI in Avignon and, a few months later, in October, a Latin lord, Guy of Lusignan, was crowned king of Armenia.[31] Under such conditions, Latin-Armenian relations could only improve, but in November 1344 the murder of the king by Armenian barons put an end to this process. His successor, Constantine I, sent the conclusions of the Council to the pope, through four ambassadors, among whom was Daniel.[32] They apparently did not convince Clement VI, who, like his predecessors, seemed to have many doubts regarding the sincerity of the conversion of the Armenians. This suspicion was obviously entertained by some United Brethren like Nersēs Palienc'. The pope wrote in 1350 that, "the king, the catholicos and the people are still

very far from the catholic truth."[33] In such a situation, no concrete help to Armenia was to be expected, apart, eventually, from some material help.

During the pontificate of Clement VI a new text appeared, which included many anti-Armenian accusations: the *Summa de Questionibus Armenorum*, written by Richard FitzRalph.[34] This Anglo-Irish theologian had spent a long time in Avignon, where he had long discussions on the Armenian Church, particularly with some United Brethren such as, unsurprisingly, Nersēs Palienc', whose name figures among the dedicatees. In the text, one does not find any trace of the "Hundred and seventeen errors" – another argument against the attribution to Nersēs. The Armenians are attacked on the usual points of their discrepancy with the Latin Church.

Although the *Summa* could probably not have been diffused without the authorization of Clement VI, the pope does not seem to have had any direct participation in it. In fact, his pontificate was a relatively quiet pause between two more offensive ones.

THE LAST TENSIONS (1352-1375)

The next pope, Innocent VI, took a radically anti-Armenian measure in 1356, when he proclaimed the Order of the United Brethren official.[35] At that time, with the Hundred Years' War preoccupying France and England and the constantly negative attitude of the papacy, the Armenians had lost any illusions regarding Europe and its eventual help: consequently, they had no more reason to make fruitless concessions, and they practically stopped sending embassies to Avignon. Given such conditions, one can probably trust the eighteenth-century catholicos Simēon Erewanc'i, who wrote that catholicos Mesrop I called a new council in Sis in 1361, condemning the pro-Latin policy of the Armenian authorities since the end of the thirteenth century.[36]

The last years of the Kingdom, until the fall of Sis at the hands of the Egyptian Mamluks (April 1375), are rather confused. The king was again a Latin, Leo V Lusignan, nephew of Guy; as for the catholicos, Constantine V, he was accused by the Franciscan

confessor of Leo, John Dardel, of having favoured the Mamluks out of hatred of the Latin Church, while the Armenian anti-unionist, John Orotnec'i, attacked him for his pro-Latin policy![37]

CONCLUSIONS

Evidently, any attempt at dialogue between the Armenian Church and the papacy during the last century of the Kingdom could not have ended in anything other than failure, because the goals of both parties were opposite. For the papacy, the weakening of the Kingdom was a golden opportunity to achieve the century-old dream of Rome: the total submission of the Armenian Church. On the other side, deprived of any potential ally in the East, except Lusignan Cyprus, the Armenians were ready to make significant concessions to the Latin Church in order to receive some military and diplomatic help from Europe. In fact, they did make huge concessions, but all this was from the very beginning a fool's deal: Europe had never intended to provide any help to distant and "heretic" Armenia. Various Armenian artists crudely expressed in their works their disgust at the Latin Church. One such painter was Awag who, in 1337, portrayed a Catholic priest, qualified as "Arios" and "Nestorios," being thrown into Hell (see Figure 4).[38] The only result of this Armenian policy was the disastrous gap it created both in the Armenian Church and within Armenian society. At one end stood an Esayi Nč'ec'i, who did not want to accept a single concession to the Latin Church, and at the other a Nersēs Palienc', obsessed by total submission to the Roman Church. This situation of quasi civil war could only accelerate the fall of the Kingdom. The news was received in Europe with total indifference.



Figure 4 - Erevan, Matenadaran, ms. 212, fol. 79v

ENDNOTES

[1] *Recueil des Historiens des Croisades*, *Documents Arméniens*, É. Dulaurier and Ch. Kohler (eds.), 2 vols., Paris, Imprimerie Nationale, 1869-1906, vol. 1, p. 697; *K'ristonya Hayastan, Hanragitaran* (Christian Armenia, Encyclopaedia), Yerevan, Hakob Meghapart Press, 2002, p. 739; Claude Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, 2 vols., Paris, Les Belles Lettres, 2012, vol. 1, p. 564.

[2] Vincent Mistrih, "Trois Biographies de Georges de Skevra," *Studia Orientalia Christiania*, *Collectanea*, 14 (1970-71), pp. 253-372 (329); *Christian Armenia*, p. 951.

[3] *Acta Romanorum Pontificum ab Innocentio V ad Benedictum XI (1276-1304)*, Ferdinand Delorme and Aloysius Tăutu (eds.), Vatican City, Typis Poliglottis Vaticanis, 1954, pp. 148-58; Mutafian, Vol. I, pp. 565-6.

[4] Girolamo Golubovich, *Biblioteca Bio-bibliografica della Terra Santa e dell'Oriente Francescano*, 5 vols., Quaracchi, Collegio di S. Bonaventura, 1906-1927, vol. 1, p. 337; Mutafian, vol. 1, pp. 188-9.

[5] Artašes Mat'evosyan, ed., *Hayeren Dzeṙagreri Hišatakaranner, JG. Dar* (Colophons of Armenian manuscripts, thirteenth century), Yerevan, Academia Press, 1984, pp. 683, 688, 691, 700, 702, 711, 730-1; Małak'ia Ōrmanean, *Azgapatum* (National History), vol. 2, Constantinople, Tēr-Nersēsean Press, 1914, p. 1732; Mutafian, vol. 1, p. 175.

[6] Ōrmanean, pp. 1737-1804; *Christian Armenia*, 233; Mutafian, vol. 1, pp. 491, 567-9.

[7] *Histoire de la Siounie par Stéphannos Orbélian*, trad. Marie-Félicité Brosset, St. Petersburg, Académie impériale, 1864, pp. 243-7; *Christian Armenia*, pp. 209, 931, 317, 122, 527, 885, 994, 214.

[8] Abēl Ōłlugean, *Movsēs Vrd. Erznkac'i, Matenagrakan Hetazōtut'iwnner* (Doctor Movses Erznkatsi, literary researches), Eˇǰmiacin, Mayr At'oṙ, 2001, pp. 172-4, 241-51.

[9] *Christian Armenia*, p. 760; Mutafian, vol. 1, pp. 567-8.

[10] Aziz Atiya, *The Crusade in the Later Middle Ages*, London, Methuen, 1938.

[11] Golubovich, vol. 2, pp. 9-60; Atiya, *The Crusade*, pp. 36-43.

[12] Golubovich, vol. 1, pp. 361-92; Atiya, pp. 74-94.

[13] *Acta Clementis V (1303-1314)*, ed. Ferdinand Delorme and Aloysius Tăutu, Vatican City, Typis poliglottis Vaticanis, 1955, p. 15.

[14] *Documents Arméniens*, vol. 2, pp. 147-219, 283-339.

[15] Marino Sanudo Torsello, *The Book of the Secrets of the Faithful of the Cross*, trans. Peter Lock, Farnham, Ashgate, 2011; Atiya, pp. 114-27.

[16] Clemens Galanus, *Conciliationis Ecclesiae Armenae cum Romana*, Rome, Typis Sacrae Congregationis de Propaganda Fide, 1690, vol. 1, pp. 451-71; Ōrmanean, pp. 1784-1804; *Christian Armenia*, p. 920; Mutafian, vol. 1, pp. 570-2.

[17] Avedis Sanjian, *Colophons of Armenian Manuscripts*, *1301-1480. A Source for Middle Eastern History*, Cambridge, Mass., Harvard University Press, 1969, p. 54.

[18] Galanus, pp. 471-507; Ōrmanean, pp. 1816-25; *Christian Armenia*, p. 503, 15; Mutafian, vol. 1, p. 572.

[19] Ōrmanean, pp. 1826-7; Mutafian, vol. 1, pp. 207-8.

[20] Mutafian, vol. 1, pp. 562-3.

[21] Golubovich, vol. 2, pp. 72-3, vol. 3, pp. 370-3; *Acta Johannis XXII (1317-1334)*, ed. Aloysius Tăutu, Rome, Typis Polyglottis Vaticanis, 1952, pp. 93-4; Ōłlugean, p. 50; Mutafian, vol. 1, pp. 574-6.

[22] Galanus, pp. 508-31; Ōrmanean, pp. 1844-52; *Christian Armenia*, pp. 169, 1058, 1038; Mutafian, vol. 1, pp. 577-9.

[23] *Documents Arméniens*, vol. 2, pp. 267-517; Golubovich, vol. 3, pp. 403-7; Atiya, pp. 96-110; Mutafian, vol. 1, pp. 580-1.

[24] Golubovich, vol. 4, pp. 336-62.

[25] Paris, Bibliothèque nationale de France, lat. 3365, fols. 97-108; Vatican City, Archivio Segreto Vaticano, Reg. Vat. 62, fols. 100-20.

[26] *Acta Benedicti XII (1334-1342)*, ed. Aloysius Tăutu, Vatican City, Typis Poliglottis Vaticanis, 1958, pp. 119-55; Ōrmanean, p. 1864; *Christian Armenia*, p. 793; Mutafian, vol. 1, pp. 581-3.

[27] *Acta Benedicti XII*, ed. Tăutu, 132.

[28] Ibid., 132, 148.

[29] *Documents Arméniens*, voil. 2, pp. 559-650.
[30] BnF, lat. 3365, fols. 17-97; Ōrmanean, 1868-1904; *Acta Benedicti XII*, ed. Tăutu, pp. 160-229; *Christian Armenia*, pp. 730, 921.
[31] Mutafian, vol. 2, repr. 114.
[32] Golubovich, vol. 4, pp. 343-4.
[33] *Acta Clementis VI (1342-1352)*, ed. Aloysius Tăutu, Vatican City, Typis Poliglottis Vaticanis, 1960, p. 276.
[34] Richard Fitzralph, *Summa Domini Armacani in questionibus Armenorum*, Paris, 1511; Mutafian, *L'Arménie du Levant*, vol. 1, p. 586.
[35] *Acta Innocentii IV (1343-1354)*, ed. Aloysius Tăutu, Vatican City, Typis Poliglottis Vaticanis, 1962, pp. 128-30.
[36] Kat'oghikos Simeon of Erevan, *Jambr*, trans. George Bournoutian, Costa Mesa, CA, Mazda, 2009, p. 81; *Christian Armenia*, p. 921.
[37] *Documents Arméniens*, vol. 2, pp. 58, 79-80, 87; Mutafian, vol. 1, p. 587.
[38] Mutafian, vol. 2, repr.148.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՊԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՐՈՒՆ (1275-1375)
(Ամփոփում)

ՔԼՈՏ ՄՈՒԹԱՖԵԱՆ
claude.mutafian@wanadoo.fr

Ուսումնասիրութիւնը կը քննարկէ կիլիկեան հայկական պետութեան 1275-1375 շրջանին դիմագրաւած քաղաքական եւ զինուորական մարտահրաւէրները եւ անոնց յաղթահարման փորձերը:

Արդարեւ, Մոնկոլական Կայսրութեան տկարացումը, Եգիպտոսի մեմլուքներու Կիլիկիա արշաւանքը (1266) եւ աճող սպառնալիքը պատճառներ էին որ հայկական պետութիւնը ելքեր որոնէր յառաջացող վտանգալից կացութենէն:

Տագնապալի այս կացութիւնը պատճառ դարձաւ որ Պապականութեան եւ Հայ Եկեղեցւոյ միջեւ 1198ին ջերմացած յարաբերութիւնները սերտացման հանգրուան թեւակոխեն: Այս ընթացքին մղեցին նաեւ մոնկոլներուն տակարացումը եւ ֆրանչիսկեան առաքելութեան աշխուժացումը Կիլիկիոյ մէջ: 1289ին, Լեւոն Բ.ի մահը նոր դուռեր բացաւ դէպի Կիլիկիա՝ լատին թափանցումին առջեւ: Լեւոն Բ.ի որդին՝ Հեթում Բ.ը բացայայտ պաշտպան էր երկու եկեղեցիներու միութեան:

Ուսումնասիրութիւնը կը վերլուծէ Կիլիկեան Հայաստանի վերջին հարիւրամեակի քաղաքական, զինուորական եւ կրօնական (ներառեալ Արեւելեան Հայաստանի կրօնաւորներուն) հակադիր գործօնները՝ ի տես հայկական պետութեան ոչնչացման ահագնացող սպառնալիքին ու կը մանրամասնէ այս ենթահողին վրայ պապականութեան եւ հայ եկեղեցւոյ փոխյարաբերութիւնները:

ՍՈՒՐԲ ԾԱՂԻԿ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՒԵՏ ԱՒԵՏԻՍԵԱՆ
avetavetisyan@yahoo.com

Մատենադարանի թիւ 11203 ձեռագիրը, որը յայտնի է *Սուրբ Ծաղիկ Աւետարան*, անունով[1], գրուել ու նկարազարդուել է 1619ին Սպահանում: Ձեռագրի գրիչը Հայրապետ Երէցն է, մանրանկարիչը՝ Մեսրոպ Դպիր Խիզանցին, ժամանակի նշանաւոր արուեստագէտներից մէկը[2], ով նաեւ մասնակցել է գրչութեանը՝ արտագրելով Յովհաննու Աւետարանը: Լինելով մանրանկարիչ, գրիչ, կազմող, նորոգող՝ նա տիրապետել է գրչութեան արուեստի գրեթէ բոլոր յարակից մասնագիտութիւններին:

Մեսրոպ Դպիր Խիզանցին մօտ կէս դար ապրել է ստեղծագործական բեղուն կեանքով՝ թողնելով հարուստ ժառանգութիւն: Պահպանուել են նրա անուանը անմիջականօրէն առնչուող 45 տարաբնոյթ ձեռագիր մատեաններ[3]: Տաղանդաշատ այս մանրանկարիչը ծնուել է Խիզանում[4]: Նրա անունն առաջին անգամ յիշատակւում է 1603-1604ին գրուած մի Աւետարանում[5]: Մանրանկարչի ծննդեան տարեթիւը ստոյգ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա մահացել է 1652ին կամ դրանից շատ չանցած[6]:

Մեսրոպ Խիզանցին գրեթէ ողջ ստեղծագործական կեանքն ապրել է Պարսկաստանում[7], որտեղ յայտնուել է «տարագնաց եւ կաւորութեամբ»: Ձեռագրեր է ստեղծել Սպահանում՝ Նոր Ջուղայում եւ Սպահանին մերձակայ հայկական բնակավայրերում:

Նրա ձեռագրերի յիշատակարաններում պահպանուել են նրա մերձաւորների անունները, հօր՝ Տէր Մարտիրոսի, մօր՝ Խոնդքարի, եղբայրների՝ Տէր Թադէոսի ու Պարսամի, քոյրերի՝ Աննայի ու Դեղձունի, որդիների՝ Մարտիրոսի, Գրիգորի, Թադէոսի, դուստրերի՝ Նուրխանի ու Վառվառի: Նրա որդին՝ Մարտիրոսը, նոյնպէս հմտացել է գրչութեան արուեստի մէջ, շարունակել հօր գործը:

Մեսրոպ Դպիրը - ինչպէս ինքն է իրեն անուանում շատ յիշատակարաններում - աշակերտել է նշանաւոր վարպետների:

Նրա ուսուցիչներն են եղել ժամանակի հռչակաւոր մանրանկարիչներ Մարտիրոս Խիզանցին[8], Սարգիս Մազմանը (Մոկացի)[9], Մարտիրոս Խիզանցու որդի՝ Գրիգորիսը: Որպէս աշակերտ աշխատել է նաեւ Մարտիրոս Խիզանցու քեռորդի՝ Խաչատուր Խիզանցու հետ: Սիրելի ուսուցիչների մահուանից յետոյ[10], նա արդէն հասուն վարպետ էր, ունէր աշակերտներ եւ ստեղծագործում էր նրանց հետ:

Նրա *Սուրբ Ծաղիկ Աւետարանի* մանրանկարները առանձնանում են պարականոն ու խորհրդաբանական մանրամասներով, որոնք իւրօրինակ կերպով լրացնում են մանրանկարչական ողջ շարքի պատկերագրական ասելիքը: Աւետարանը ունի 18 տէրունական մանրանկար[11], որոնց կ'անդրադառնանք ստորեւ:

Աւետում

Մանրանկարի առանցքը Երուսաղէմի Տաճարը խորհրդանշող ճար-տարապետական կառոյցն է, որն ունի եռաստիճան պատուանդան, իսկ վերնամասում՝ վարագոյրը խորհրդանշող կտորն է[12]: Վարագոյրը վեր է հաւաքուած, ինչը նշանակն է Աստծոյ եւ մարդկանց միջեւ այն անջր-պետի վերացման, որը սկզբնաւորուեց Յիսուսի աշխարհ գալով: Հրեշ-տակն ու Մարիամը կրում են աւանդական հանդերձներ՝ քիտօն ու թիկ-նոց: Հրեշտակի քիտօնը կանաչ է, Մարիամինը՝ կապոյտ, իսկ թիկնոց-ները՝ կարմիր են: Մարիամի թիկնոցի կարմիրը խորհրդանշում է Որդու Արիւնը, Գաբրիէլ հրեշտակինը՝ երկնային զուարթունի հրեղէն էութիւնը:

Մանրանկարի վերնամասում իմանալի երկնքի եռաշերտ հատուածն է, որի բացուածքից, դէպի Մարիամի աջ ականջն է սլանում աղաւնակերպ Սուրբ Հոգին: Համարւում է, որ Սուրբ Հոգին Մարիամի մէջ է բնակուել մտնելով ականջից: Այդ պատկերացման գրական հիմքը «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոնն է, ըստ որի. «…**Բանն Աստուած եմուտ ընդ ունկն լսելեացն** [Մարիամի] **ի ներքս**…»[13]:

Մարիամի ու հրեշտակի լուսապսակները դեղին են՝ երիզուած բաց-կարմիր գոյնով: Դեղինը փոխարինում է ոսկուն, որը Աստծոյ եւ աստուածայինի գունային խորհրդանիշն է:

Աւետում մանրանկարի պատկերագրական հիմքը նոյն պարականոնն է: Դրա վկայութիւնը Սուրբ Կոյսի աջ ձեռքի իլիկն է եւ Երուսաղէմի Տաճարի նշանակի եռաստիճան պատուանդանը[14]: Ըստ այդ պարականոնի եռամեայ Մարիամին ծնողները նուիրաբերում են Երուսաղէմի Տաճարին. «**Եւ տարեալ նստուցին զնայ ի յերրորդ աստիճան խորանին, եւ տայր նմա Տէր Աստուած շնորհք եւ իմաստութիւն**»: Նա այլ կոյսերի հետ ապրում է տաճարում տասներկու տարի եւ երբ լրանում է նրա տասնհինգ տարիքը, տաճարի նոր վարագոյրի համար նրան վիճակ է ընկնում **մանել կարմիր թելը**:

Ծնունդ

Աստուածամայրը նստած է արքայական գահին[15], որով ակնարկւում է Մարիամի Դաւիթ Արքայի սերնդից լինելը: Մարիամի դիմաց՝ մսուրի մէջ, պառկած է Յիսուսը՝ բարուրուած ծիրանագոյն կտորով. դէպի մսուրն են հակուել եզն ու աւանակը: Խորհրդաբանօրէն եզն ու աւանակը ներկայացնում են հեթանոս ազգերին եւ հրեաներին: Հետաքրքրական է, որ աւանակը պատկերուած է սանձով: Աստուածամօր ոտքերի մօտ ծնրադրել են երեք մոգերն ու մատուցում են իրենց ընծաները՝ ոսկի, կնդրուկ, զմուռս: Ոսկին ներկայացուած է արքայական թագի տեսքով, որը հազուադէպ է հանդիպում *Ծնունդ* տեսարանում: Թագն աւելի ակնառու է ցոյց տալիս Յիսուսի թագաւոր լինելը[16]: Աստուածամօր գլխավերեւում խորանատիպ կառոյց է[17], պսակուած խաչակիր գմբէթով, որի խորքը յօրինուածքի վերին հատուածն է: Վերջինը պատկերում է կապոյտ, աստղազարդ երկինքը, որի եռաշերտ հատուածից դէպի Յիսուսն է իջնում Բեթղեհէմեան ուղեցոյց աստղը: Վերնամասի աջակողմեան մասի հատուածից, որն ունի դեղնակարմիր երիզ, դուրս է ելնում ծնունդը ազդարարող հրեշտակը: Առաջին հատուածը խորհրդանշում է տեսանելի երկինքը, երկրորդը՝ իմանալին: Մանրանկարի ստորին մասում Յովսէփն ու հովիւն են: Յովսէփն առանձնացուած է յօրինուածքի ձախակողմեան անկիւնում: Յովսէփի մեկուսացումը ընդհանուր խմբից խորհրդանշում է Մարիամի Սուրբ Հոգուց յղացած լինելու մասին նրա կասկածները, որոնք փարատւում են միայն երկնային միջամտութեամբ եւ այն

հիացումը, որ նա վկան է Աստծոյ Որդու ծննդեան հրաշքին: Սրնգահար հովիւը՝ նոխազի եւ գառան ուղեկցութեամբ շարժւում է դէպի Յովսէփը: Թագանման ոսկէ ընծան պատկերուած է հենց հովուի գլխավերեւում: Նշանակում է, որ աշխարհ եկած թագաւորը նաեւ հովուապետ է եւ պիտի հովուի Իր ժողովրդին:

Տեառնընդառաջ

Մանուկ Յիսուսի հանդիպումը Սիմէոն Ծերունու հետ տեղի է ունենում Երուսաղէմի Տաճարում, որը ներկայացուած է երկխորան, եռագմբէթ կառոյցի տեսքով, կենտրոնում՝ Սրբութիւն Սրբոցի նշանակը[18]: Սիմէոն Ծերունու թիկունքում կանգնած է Երուսաղէմի Տաճարի քահանաներից մէկը: Սովորաբար, *Տեառնընդառաջ* տեսարանում, ըստ աւետարանական բնագրի[19], Սիմէոնի կողքին պատկերում են Աննա Մարգարէուհուն, սակայն այս մանրանկարում կիրառուել է հազուադէպ մի պատկերագրական օրինակ, որի հիմքում կրկին «Գիրք Տղայութեան Քրիստոսի» պարականոնն է: Տեառնընդառաջի պատմութեան այս տարբերակում, Երուսաղէմում քառասուն օրեկան Յիսուսին դիմաւորում են տաճարի քահանաները, որոնցից մէկը Սիմէոն Ծերունին է. «… **եւ եկեալ մտեալ ի քաղաքն յերուսաղէմ, եւ տարեալ զմանուկն Յիսուս առաջի քահանայիցն**…»[20]:

Սիմէոն Ծերունին[21] պատկերուած է աւանդական տիպաբանութեամբ՝ երկար մազերով ու մօրուքով: Սակայն. ցանկանալով կարեւորել այս կերպարը՝ Մեսրոպ Խիզանցին յատուկ շեշտադրել է նրա դէմքն ու դիմագիծը: Այդ ընգծուած խոշոր դէմքին, մանրանկարիչը պատկերել է է՛լ աւելի ընգծուած աչքեր, որոնց միջոցով արտայայտուած է Սիմէոնի երկարատեւ սպասումը[22] եւ այդ սպասման հանգուցալուծումը՝ Մանուկ Յիսուսը: Սիմէոնը կապող օղակ է Հնի եւ Նորի միջեւ: Նրա ծերութիւնը խորհրդանշում է Հին Ուխտը՝ անկատար Օրէնքը, որը ի զօրու չէ փրկելու: Սիմէոնը, Օրէնքի պատուիրանների տակ կքած, գալիս է Տիրոջն ընդառաջ, եւ որպէս հաւատով սրբագործուած սպասումի պարգեւ, իր գրկում ունի Փրկչին՝ Նրան, Ով տալու է Նոր Օրէնք:

Մկրտութիւն

Եռախորան այս յօրինուածքի կենտրոնում Յիսուս Քրիստոսն է: Նրա մերկութիւնը թաքցնում է կոնքակապը: Յորդանանի ջրերը խորհրդանշող կապտա-սպիտակաւուն ալիքները ծածկում են Յիսուսի ոտքերը: Աջից Յովհաննէս Մկրտիչն է, ձախից՝ մկրտութիւնը սպասարկող միակ հրեշտակը[23]: Մանրանկարում Մեսրոպ Խիզանցին խուսափել է Յորդանանի ափերը ցոյց տուող յարդարանքից, եւ Յովհաննէսի ու հրեշտակի յենարանը ոչ թէ հողն է, այլ՝ ջուրը: Առաջինը մինչեւ ծնկները պատկերուած է Յորդանանի մէջ, երկրորդը, կանգնած է ալիքի վրայ: Այդպէս, մանրանկարիչը ընդգծել է հրեշտակի հոգեւոր արարած լինելը:

Յովհաննէս Մկրտչի պատկերագրական տիպաբանութիւնը հետեւում է աւանդական կանոնին, սակայն հետաքրքիր լուծում ունի նրա հանդերձը, աւելի ճիշտ՝ վերջինի դեղին գոյնը: Նման գոյն ունեցող անապատականի հագուստ գրեթէ չի հանդիպում հայկական մանրանկարներում: Յովհաննէս Մկրտչին շատ յաճախ պատկերում են սեւի կամ շագանակագոյնի տարբեր երանգներ ունեցող հանդերձով: Այս մանրանկարում, դեղինը օգտագործելով Մեսրոպ Խիզանցին նկատի է ունեցել Յովհաննէս Մկրտչի բնակավայրը՝ անապատը:

Պատկերատակի գրութեան մէջ մանրանկարիչն ասում է, որ Յորդանանում մկրտուելիս Յիսուս Քրիստոսը ջախջախում է վիշապի[24] գլուխը: Սակայն մանրանկարում նա չի պատկերում վիշապին, ինչպէս ընդունուած է պատկերագրօրէն, ըստ այդմ, վիշապը պատկերւում է Յիսուսի ոտքերի տակ՝ կապ գցած պոչով: Ջախջախուած վիշապն անտեսանելի է, սակայն տեսանելի է նրա կործանման հետեւանքը՝ Յորդանանի ջրերում լողացող երեք ձկները, որոնք խորհրդանշում են մարդկանց փրկագնուած հոգիները:

Պայծառակերպութիւն

Պայծառակերպութիւն տեսարանի ամենայաճախ կիրառուող պատկերագրական օրինակում Յիսուսը պատկերւում է ճաճանչազարդ Մանդորլայի մէջ, որը Աստծոյ փառքի նշանակն է[25]: Նրա հագուստները սպիտակ են, որով արտայայտւում է այլակերպութեան պահը, աջ ձեռքը օրհնութեան նշանն է ցոյց

տալիս, իսկ ձախը պահում է Աւետարան կամ գալարափաթեթ: Այս մանրանկարում պատկերագրական այդ յատկորոշիչները բացակայում են:

Քրիստոսը պատկերուած է խորանի մէջ, որի խորքը կապոյտ աստղազարդ երկինքն է: Այստեղ աստղերը ունեն խորհրդաբանական նշանակութիւն: Դրանք երկնային զուարթունների՝ հրեշտակների, նշանակներն են: Նրա հագին մուգ կարմիր քիտօն է եւ ծիրանագոյն, գօտկատեղի մօտ կապ գցած թիկնոց: Առաւել հետաքրքրականը Նրա ձեռքերի շարժումներն են՝ աջը ուղղուած է վար, ձախը՝ վեր: Յիսուսի ձեռքերի ուղղուածութիւնը ինքնանպատակ չէ. այն վերաբերում է Մովսէսի եւ Եղիայի կերպարներին: Յիսուսը ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւրը որտեղից է եկել Թաբոր Լեռ՝ ենթարկուելով աստուածային կամքին: Ըստ Հին Կտակարանի՝ Մովսէսը մեռնում է եւ թաղւում[26] երկրում, իսկ Եղիան՝ ողջ-ողջ յափշտակւում է երկինք[27] եւ բնակւում այնտեղ: Նոր Կտակարանում աստուածաշնչական այս երկու կերպարները, իւրաքանչիւրը իր աշխարհից յայտնւում են Յիսուսի պայծառակերպութեան ժամանակ[28], որպէսզի խօսեն Նրա վախճանի մասին: Լեռան վրայ, պայծառակերպուած Յիսուսը աշակերտներին յայտնում է իր աստուածային էութիւնը, ի ցոյց է դնում, որ ինքն է Տէրը երկնքի ու երկրի, որ իշխանութիւն ունի կեանքի ու մահուան վրայ:

Մանրանկարի ստորին հատուածում Յիսուսի աշակերտներն են՝ որոնց խումբը խորհրդանշում է մարդու եւ մարդկութեան երեք հասակը. Պետրոսն ալեհեր է, Յակոբոսը միջին տարիքի, իսկ Յովհաննէսը՝ պատանի: Պետրոսն ու Յովհաննէսը ծնրադիր են պատկերուած, Յակոբոսը՝ անկման պահին:

Ղազարոսի Յարութիւնը

Այս մանրանկարի յօրինուածքային առանձնայատկութիւնը բազմակերպարութիւնն է: Կերպարները քսաներկուսն են, եւ Մեսրոպ Խիզանցուց ջանքեր են պահանջուել՝ բոլորին տեղաւորելու նկարադաշտի սահմանափակ տարածքում:

Մանրանկարի կենտրոնում Յիսուս Քրիստոսն է: Նրա թիկունքում, ըստ հերթականութեան՝ Յովհաննէսը, Պետրոսն ու

Յակոբոսը: Նրանցից վեր պատկերուած են միւս ինը աշակերտների դէմքերը այն տպաւորութեամբ, որ տասներկուսը միասին ներկայացնում են Յիսուսի շքախումբը:

Յիսուսի ոտքերի մօտ Մարիամն ու Մարթան են՝ Ղազարոսի քոյրերը, իսկ դէմ յանդիման մանրանկարիչը պատկերել է յարութեան հրաշքին վկայ ժողովրդին: Գմբէթակիր, փոքր պատուհանի մէջ, պատկերուած է չորս դէմք, որոնք խորհրդանշում են ներկաների բազմութիւնը (պատուհանի ստորին երիզի տակ նրանցից մէկի ձեռքն է), իսկ պատուհանը՝ Բեթանիան, այն վայրը որտեղ տեղի է ունեցել Ղազարոսի յարութիւնը:

Չափերով մեծ եւ առանցքային կերպարները Յիսուսն ու աշակերտներն են, միւսները շատ աւելի փոքր են պատկերուած: Գործող անձանց դասաւորութեան այս սկզբունքն էլ օգնել է մանրանկարչին համաչափութեան հասնելու բազմակերպար յօրինուածքում: Միաժամանակ, հակադիր չափերի սկզբունքը լուծում է նաեւ մէկ այլ խնդիր՝ զուտ հոգեւոր, որը վերաբերում է հաւատին եւ անհաւատութեանը: Այդ խնդիրն արծարծում է Ղազարոսի յարութեան աւետարանական պատմութեան մէջ[29], որը Մեսրոպ խիզանցին փորձել է տեսանելի դարձնել իր մանրանկարում:

Այսպէս, Յիսուսի սիրելիները՝ Մարթան եւ Մարիամը եւ բոլոր ովքեր սգում են Ղազարոսի մահը, չեն հաւատում, որ նա յարութիւն կ'առնի: Դա այնքան է փոթորկում Յիսուսի հոգին, որ Նա արտասուում է…[30]:

Մանրանկարում Յիսուսը եւ երեք աշակերտները պատկերուած են փոքր ինչ թեք, վերընթաց դիրքով: Աջ ձեռքերը ուղղել են դէպի Ղազա-րոսը: Յիսուսը օրհնում է նրան, իսկ աշակերտները զօրակցում են: Յի-սուսի գլխավերեւում բացուած վարագոյրն է, իսկ լուսապսակից ցած են իջնում աստուածային զօրութիւնը եւ ներգործութիւնը խորհրդանշող դե-ղին շիթերը: Ղազարոսը պէտք է յարութիւն առնի՝ հաւատաւորների թե-րահաւատութիւնը փարատելու, իսկ անհաւատներին՝ հաւատի բերելու համար: Մարթան ու Մարիամը բռնել են Յիսուսի ոտնաթաթերը: Յիսու-սի ոտքերի տակ բնութիւնը խորհրդանշող յարդարանք է, որի մէջ տա-տասկ է պատկերուած: Մեսրոպ Խիզանցին յուշում է, որ սկսւում է Նրա չարչարանաց ուղին:

Մուտք Երուսաղէմ

Աշակերտների ներկայացման նոյն սկզբունքն է կիրառուած նաեւ *Մուտք Երուսաղէմ* մանրանկարում: Աւանակին նստած Յիսուսին[31] հետեւում են Յովհաննէսը, Պետրոսն ու Յակոբոսը, որոնց ձեռքերի շարժումները նոյնն են: Տարբեր է միայն Յիսուսինը, որն այստեղ օրհնութեան նշանով չէ: Նոյնն է նաեւ այն վերընթացը, որ նախորդ մանրանկարում գտնւում են Յիսուսն ու աշակերտները:

Յօրինուածքը բաժանուած է երկու փոխթափանցող մասերի: Աւանակի գլուխը գտնւում է Յիսուսին դիմաւորողների տարածքում, իսկ հագուստը, որի վրայով անցնում է աւանակը՝ Երուսաղէմ մտնողների: Յիսուսն ու աշակերտները, ինչպէս նաեւ Երուսաղէմն ու Մարդու Որդուն դիմաւորող ժողովրդին խորհրդանշող, արմաւենու ճիւղեր բռնած երկու քահանաները, պատկերուած են ալիքաձեւ բաժանարարներից անդին: Միջանկեալ տարածքում Մեսրոպ Խիզանցին նկարել է հագուստ փռող պատանուն եւ ծառ, որի սաղարթին դիմաւորողներից մէկի կերպարն է:

Ծառի պատկերումը գալիս է աւետարանական բնագրից[32], որտեղ, դիմաւորողները ծառերից ճիւղեր են պոկում եւ գցում Յիսուսի ոտքերի տակ, բայց ծառ բարձրացած մարդու մասին խօսք չկայ: Այս դրուագի բացատրութիւնը հետեւեալն է.-

Մեսրոպ Խիզանցու մանրանկարում ծառը պտղատու է՝ ճիւղերից թզեր են կախ ընկած. ուրեմն դա թզենի է: Ըստ Ղուկասի Աւետարանի, Յիսուսը Երուսաղէմ է գնում Երիքովի ճանապարհով: Երիքովում էր ապրում Զաքէոս մաքսապետը, որ շատ կարճահասակ էր, եւ Յիսուսին տեսնելու ու մեղքերից թողութիւն ստանալու բուռն ցանկութիւնից մղուած բարձրացել էր ժանտաթզենու վրայ՝ արժանանալով Յիսուսի ուշադրութեանը, եւ փրկուել[33]:

Այս դրուագը ներմուծուել է «Մուտք Երուսաղէմ» տեսարան՝ ցոյց տա-լու համար ոչ միայն այն ճանապարհը, որ անցնում է Յիսուսը, այլ նաեւ թէ ինչի համար է Նա գալիս Երուսաղէմ. «…**Փնտռելու եւ փրկելու կորա-ծին**»[34]: Եւ կրկին Նրա ոտքերի տակ տատասկներ են, քանի որ փրկու-թիւնը, որ տալու է Յիսուսը, լինելու է սեփական արեան գնով: Տա-տասկները

նախանշում են դէպի Գողգոթա տանող ճանապարհը: Իրա-դարձութիւնների նախընթացին ծանօթացնելով՝ Մեսրոպ Խիզանցին միաժամանակ՝ տանում է դիտողի հոգեւոր հայեցողութիւնը դէպի այն դէպքերը, որոնք տեղի են ունենալու Յիսուսի Երուսաղէմ գալուց յետոյ:

Ոտնլուայ

Այս մանրանկարում հետաքրքրականը Պետրոսի եռաոտ գահաւորակի տեսքն է: Նստոցը գտնւում է երկու խորանների հորիզոնական միացման երիզի վրայ, իսկ ոտքերը երիզի տակ են: Տեսողաբար՝ Պետրոսի գահաւորակը ճախրում է օդում:

Յիսուսի մատնութիւնն ու ձերբակալութիւնը, Պետրոսի ուրացումը

Մանրանկարը բաղկացած է երկու առանձին տեսարաններից: Վերինը՝ Յուդայի մատնութեան եւ Յիսուսի ձերբակալութեան դրուագն է, ստորինը՝ Պետրոսի ուրացման: Աւետարանական այս դրամատիկ իրա-դարձութիւնները իւրօրինակ գեղարուեստական ու խորհրդաբանական լուծում են ստացել Մեսրոպ Խիզանցու մանրանկարում[35]:

Առաջին մանրանկարի յօրինուածքի տեսողական ու գաղափարական կենտրոնը Յիսուսն ու Յուդա Իսկարիովտացին են: Յիսուսը պատկերուած է սլացիկ հասակով, երկնագոյն քիտօնով եւ կարմրադեղնաւուն թիկնոցով: Նրանից աջ եւ ահեակ՝ կալանող զինուորների խմբերն են, իւրաքանչիւր կողմից՝ երեքը: Ձերբակալութիւնը տեղի է ունենում Գեթսեմանի այգում, որի պատկերագրական արտայայտիչը յօրինուածքի ստորին մասում կանաչ կէտիկներով պատուած հատուածն է՝ խոտը: Զինուորներից երկուսը բռնել են Յիսուսի թիկնոցից ու ձգում են իւրաքանչիւրն իր ուղղութեամբ: Նրանց այս շարժումով Մեսրոպ Խիզանցին արտայայտել է բուն կալանումը: Սակայն յօրինուածքի այս հատուածում հետաքրքրականը զինուորների բռնած ու վեր պարզած զէնքերն են: Զարմանալի է, որ Մեսրոպ Խիզանցու պատկերած զէնքերը որեւէ առնչութիւն չունեն աւետարաններում նկարագրուածների հետ[36]: Նրա մանրանկարած զինուորներից չորսը նիզակակիր են, իսկ միւս երկուսի ձեռքին երկար ձողեր են,

որ վերնամասում պսակւում են լայնաբերան, փոքր թասեր յիշեցնող առարկաներով: Այսպիսիք հանդիպում են միայն *Խաչելութիւն* տեսարանում. նիզակը, որով խոցում են Յիսուսի կողը, եւ ձողին հագցրած թասը՝ որով Յիսուսին են մատուցում քացախը: Այդպիսիք պատկերուած են նոյն այս Աւետարանի *Խաչելութիւն* մանրանկարում: Մինչդեռ աւետարանների բնագրերում Յիսուսի խաչելութեան ժամանակ Նրան քացախ են մատուցում եղէգին հագցրած սպունգով[37]: Ուրեմն ի՞նչ նկատի ունի Մեսրոպ Խիզանցին՝ սպունգը փոխարինելով թասով:

Գեթսեմանի պարտէզում կատարուող իրադարձութիւնները շատ խորհրդաւոր են: Հաղորդութեան խորհուրդը հաստատելուց յետոյ, Յիսուսը իր աշակերտների հետ բարձրանում է Ձիթենեաց Լեռ: Յուդան նրանց հետ չէ. նա գիտի Ուսուցչի ուր գնալը եւ պիտի մատնի: Գեթսեմանիում Յիսուսը մարգարէանում է. նրա ձերբակալուելուց յետոյ աշակերտները գայթակղուելու են, իսկ Պետրոսն՝ Իրեն ուրանալու է երեք անգամ: Սակայն այս պատմութեան կիզակէտը Յիսուսի հոգեվիճակն է: Նա Գեթսեմանիում մարդկայնօրէն ապրում է սպասուող չարչարանաց եւ մահուան սարսափը, որը արտայայտում է աղօթքում. «Հա՛յր, եթէ կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրու՛, բայց ո՛չ թէ իմ կամքը, այլ քո՛նը թող լինի»[38]: Նա խմում է այդ բաժակը խաչի վրայ: Մեսրոպ Խիզանցին այս մանրանկարում կրկին ժամանակը տանում է առաջ՝ նախապէս ծանուցելով Քրիստոսի մահը: Ձողերին հագցրած թասերը *Մատնութիւն* տեսարանում, եւ սպունգին փոխարինող թասը *Խաչելութիւն*ում նոյնանում են, դառնում են այն դառը բաժակը, որ Յիսուսը կամովին խմում է յանուն Իր առաքելութեան իրագործման:

Մատնութիւն մանրանկարում զարմանալին Յուդայի կերպարն է: Մատնիչի նմանօրինակ ներկայացում հազուադէպ է: Նորութիւն չէ, որ Մեսրոպ Խիզանցին նրան պատկերել է Յիսուսի գօտկատեղին հաւասար: Միջնադարեան արուեստում Յուդային փոքրահասակ պատկերելով՝ ցոյց են տալիս նրա փոքրոգութիւնն ու դաւաճանութեան ողջ զազրելիութիւնը: Նրան պատկերում են կիսադէմ, տգեղ, երբեմն աղաւաղուած դիմագծերով: Այդպիսի պատկերագրական տարբերակներում Յիսուսի այտը

համբուրելիս՝ նա լիովին, անզիջող ու ստորաբար գիտակցում է, թէ ինչ է անում:

Մեսրոպ Խիզանցու պատկերագրած Յուդան դուրս է ներկայացման ընդունուած կանոններից: Նա ձախ ձեռքով բռնել է Յիսուսի ձախ ձեռքը, աջ ձեռքով Յիսուսի աջը եւ հպելով դէմքին՝ համբուրում է: Յուդայի հայեացքը պատկերից դուրս է: Նա կարծես երկիւղում է Յիսուսի դէմքին նայել: Յուդան նման է մի մոլորուած մանկան, ով չգիտի թէ ինչ է անում: Մանրանկարիչը ներկայացնում է ոչ թէ դաւաճան Յուդային, այլ՝ զղչացող:

Յիսուսի կերպարը համահունչ է մատնիչի ակնկալիքին: «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում[39]»,- ասելու է Նա խաչի վրայ:

Պետրոսի ուրացումը մանրանկարն ունի պարզ յօրինուածք: Կենտրոնում, բաժանարար ալիքաձեւ երիզների մէջ պատկերուած են երկու ծնրադիր կին: Նրանց դիմաց, մանրանկարի ձախ անկիւնում Պետրոսն է, որի ուղղութեամբ կանայք պարզել են ձեռքերը: Այդ շարժումը պատկերաբանական արտայայտիչն է նրանց եւ Պետրոսի զրոյցի ու Յիսուսի աշակերտին ուղղուած մեղադրանքի: Կանայք պնդում են, որ Պետրոսը Յիսուսի կողմնակիցներից է, իսկ նա երեք անգամ ուրանում է Ուսուցչին[40]: Պետրոսը հայեացքն ու ձեռքը ուղղել է վեր՝ դէպի Յիսուսը: Այդպէս՝ մանրանկարիչը յօրինուածքային ու ներքին բովանդակային կապ է ստեղծել երկու տարբեր, սակայն իմաստով իրար լրացնող պատկերների միջեւ:

Լուսանցքում պատկերուած աքաղաղը նոյնպէս կապող օղակ է մանրանկարների միջեւ: Աքաղաղը նաեւ իմաստային լիցք է կրում. խորհրդանշում է Պետրոսի ուրացումներն ըստ Աւետարանների, եւ Յիսուսի ապագայ յարութիւնը:

Խաչելութիւն

Խաչելութիւն մանրանկարը հետեւում է պատկերագրական համառօտ տարբերակին[41]: Այս տեսարանում Մեսրոպ Խիզանցին կրկին դիմել է յօրինուածքի կազմակերպման երկխորան տարբերակին: Խաչուած Յիսուսը կենտրոնում է: Նրանից աջ ու ձախ, խորանների մէջ պատկերուած են Մարիամ Աստուածածինն

ու Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէսը: Խորաններից դուրս, մերձ Յիսուսին, տէգահարող եւ քացախով սպունգը Նրա բերանին մօտեցնող զինուորներն են: Մանրանկարի գերիշխողը խաչափայտն է, որի հորիզոնական խաչաթեւը յենւում է խորանները աւարտող կամարների վերնամասին, կազմաւորելով մանրանկարի ներքին յօրինուածքի գլխաւոր հատուածը: Աւելի վեր՝ մարդադէմ ներկայացուած՝ արեւն ու լուսինն են[42]՝ *Խաչելութիւն* մանրանկարի անբաժան ուղեկիցներն են: Մանրանկարի շրջանակի վերին երիզի վրայ Մեսրոպ Խիզանցին պատկերել է հաւալուս թռչնին եւ նրա երեք ձագերին:

Սովորաբար, *Խաչելութիւն* տեսարանում մանրանկարիչները տարբեր ձեւերով են պատկերագրում Գողգոթան: Հիմնականում այդ բարձունքը ներկայացւում է խաչափայտի հիմքի տակ գտնուող եռաստիճան պատուանդանի տեսքով: Այս մանրանկարում Գողգոթան ներկայացուած է շատ հետաքրքիր լուծումով: Այն մի ուղղանկիւն երիզ է, որին յենւում են Յիսուսի գամուած ոտնաթաթերը: Գողգոթայի բարձրութիւնը ցոյց է տրուած զինուորների միջոցով, որոնք պատկերուած են գետնից կտրուած, աներեւոյթ բարձունքի վրայ:

Յիսուսի ոտնաթաթերի հարեւանութեամբ Ադամի գանգն է եւ ոսկորները[43]: Գողգոթան խորհրդանշող ուղղանկիւնու վրայ տատասկներն են, որպէս Յիսուսի չարչարանքների ու խաչելութեան կատարման խորհրդանիշ: Հաւալուս թռչունը, որի պատկերումը *Խաչելութեան* մէջ տարածուած է յատկապէս Վասպուրականի մանրանկարներում, խորհրդանշում է Յիսուս Քրիստոսին[44]:

Սակայն *Խաչելութիւն* մանրանկարի ամէնից ուշագրաւ պատկերագրական մանրամասնը Յիսուսի աչքերն են: Նրա աջ աչքը բաց է, ձախը՝ փակ: Նման բան գրեթէ չի հանդիպում համանման այլ պատկերներում: Մանրանկարիչը ասում է, որ Յիսուսը մեռած է մարմնով, սակայն կենդանի է հոգով: Նա մարմնով խաչի վրայ է, իսկ հոգով գտնւում է դժոխքում եւ աւերում է այն[45]:

Դժոխքի աւերումը

Մանրանկարի յօրինուածքի կազմակերպման սկզբունքը տարբեր է միւս բոլոր պատկերներից՝ ազատ է ու անկաշկանդ: Բացակայում են յօրինուածքը կազմաւորող հորիզոնական եւ ուղղահայեաց բաժանարար երիզները, կերպարները դասաւորուած են չափազանց համամասնօրէն: Այս մի մանրանկարում, Մեսրոպ Խիզանցին փոխել է նաեւ պատկերի շրջանակի ձեւը. բոլոր նախորդ մանրանկարներում այն երկերիզ է, այստեղ, յօրինուածքի կէսից ցած, շրջանակը մէկական երիզ ունի:

Տեսարանի կենտրոնում Յիսուսի սլացիկ կերպարն է՝ խաչը ուսին: Նա կանգնած է դժոխքի կոտրուած, խաչաձեւ ընկած դռների վրայ, որոնք նշանակն են աւերման ու մահուան կուլ գնացած հոգիների ազատման:

Դժոխքի տարածքի խորքը սեւ գոյն ունի: Մանրանկարի վերին, աւելի փոքր հատուածը Երկինքն է, որը գունաւորուած է դեղինով, եւ Յիսուսի թիկնամասից այդ դեղինը ներթափանցում է դժոխքի ոլորտ՝ հասնելով մինչեւ Փրկչի քիտօնի փէշի երիզը: Դեղինը՝ աստուածային լոյսի գունային նշանակը, ճեղքում է դժոխային խաւարը՝ տեսանելի դարձնելով բարու եւ չարի հակադրութիւնը, նաեւ արտայայտելով յաղթանակը վերջինի նկատմամբ: Այդ յաղթանակին մասնակից են նաեւ երկնային զօրութիւնները՝ հրեշտակները, որոնցից մէկը պատկերուած է մանրանկարի վերին աջ անկիւնում կապոյտ հատուածի մէջ, միւսները ներկայացուած են խորհրդաբանօրէն՝ աստղերի կերպարանքով:

Յիսուսից աջ ու ձախ տեղադրուած են դժոխքի բնակիչների երկու տարբեր խմբերը: Առաջինը Ադամն ու Եւան են, որոնց եւ Քրիստոսը հանում է դժոխքից: Նրանք պատկերուած են լուսապսակներով, գունեղ հագուստներով եւ թւում է թէ Յիսուսի բերած լոյսը փոխանցուել է նրանց: Նոյնիսկ օձը, որ պատկերուած է նախաստեղծների հարեւանութեամբ՝ դեղին է: Յիսուսը բռնել է Ադամի ձեռքը եւ բարձրացնում է նրան: Եւան բռնել է Ադամի գօտկատեղից եւ նրանով մասնակից է փրկութեանը: Ադամն ու Եւան դուրս են բերւում նախկին անկեալ վիճակից: Յիսուսը վերձիգ շարժումով միաբանւում է նրանց հետ

գաղափարական եւ յօրինուածքային մէկ միասնական խմբի մէջ, եւ հակառակը, թիկունքը դարձրել է միւս՝ ձախակողմեան խմբին, որը գտնւում է մթան մէջ, զրկուած Նրա ողորմածութիւնից: Տեսողաբար, լոյսի մէջ գտնուողները գալիս են առաջին պլան, խաւարում մնացածները՝ կարծես հեռանում են դժոխքի խորքը: Մեղաւորներն, որոնք թուով երեքն են, պատկերուած են բոլորովին մերկ, գալարուող օձի պոչի ներքոյ: Նրանք կապանքների մէջ են: Որդերը, որ սողում են նրանց մարմնով մէկ՝ նշանակն են անասելի տանջանքների:

Յարութիւն

Այս պատկերագրական տարբերակը ծագում է Մատթէոսի ու Մարկոսի աւետարաններից: Ըստ Մատթէոս Աւետարանչի, հրեշտակը՝ երկնքից իջնելով, Յիսուսի գերեզմանը փակող վէմը գլորում է մի կողմ եւ նստում վրան[46]: Մարկոսը, գրում է, որ գերեզման են գալիս Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը եւ Սողոմէն[47]: Այդպէս է պատկերուած եւ Մեսրոպ Խիզանցու մանրանկարում: Հրեշտակը նստած է վէմին, եւ երեք կանայք կանգնած են նրա դիմաց՝ լսելով երկնային պատգամաբերի խօսքերը:

Մարիամ Մագդաղենացին կանգնած է հրեշտակի անմիջական հարեւանութեամբ, Յակոբոսի մայրը Մագդաղենացու կողքին է, իսկ Սողոմէն՝ նրանց թիկունքում: Առաջին երկուսի ձեռքերում մանրանկարիչը պատկերել է մեռածի մարմինն օծելու համար անհրաժեշտ պարագաները: Հրեշտակի գլխավերեւում մեզ արդէն ծանօթ բացուած վարագոյրն է, նրա ոտքերի տակ՝ բարձ է պատկերուած, որ նշանակն է արքայական գահի: Զուարթունի սպիտակ թիկնոցը նոյնպէս անմիջականօրէն առնչւում է Աւետարանի բնագրին[48]:

Հրեշտակից ձախ մանրանկարիչը պատկերել է Յիսուսի գերեզմանը՝ գմբէթաւոր տաճարիկի տեսքով: Այդ կառոյցի ներսում թափուր կտաւ-ներն են, որոնցով պատանել էին մեռած Յիսուսին: Մեսրոպ Խիզանցին դրանք գծագրել է առկայծող սպիտակ գծով: Տաճարիկի գմբէթի ներսից կախ է ընկած մի կանթեղ[49]: Մանրանկարի վերնամասի խորքը կապոյտ աստղազարդ երկինքն է, որը ցոյց է տալիս Յիսուսի յարութեան

ժամանակը՝ գիշերը: Երեք զինուորները՝ գերեզմանի պահապանները, ներկայացուած են քնած, անկանոն տափարակուած գետնին, զէնքերը ցիր ու ցան, որպէս հետեւանք հրեշտակի զարհուրելի տեսիլքի[50]:

Համաբարձում

Համբարձում մանրանկարը տոգորուած է յաղթական տրամադրութեամբ: Այս մանրանկարի ընդհանուր յօրինուածքը գրեթէ կէսից բաժանուած է հորիզոնական երիզով: Պատկերի ստորին հատուածի կենտրոնում Սուրբ Աստուածամայրն է, ում շուրջ խմբուել են Յիսուսի աշակերտները, իւրաքանչիւր կողմում վեցը[51]: Վերին հատուածում, Աստուածամօր գլխավերեւում, գմբէթով պսակուած ձուաձեւ Մանդորլայի մէջ կանգնած է՝ Յիսուս Քրիստոսը[52]:

Յօրինուածքային այս ուղղահայեացը հաւաքում եւ միաւորում է բոլոր գործող կերպարներին: Մանդորլայի շուրջբոլորը խմբուել են ութ հրեշտակներ: Մեսրոպ Խիզանցին պատկերել է միայն նրանց մէկական թեւը, կիսադէմերը եւ վարի հրեշտակների մէկական ձեռքերը: Հրեշտակները խորհրդանշում են Յիսուսի մուտքը երկնային ոլորտներ: Քրիստոսը համբառնում է հրեշտակաց դասերի միջով[53] եւ այդ հոգեւոր ճանապարհը Նա անցնում է նստելու համար Հօր աջ կողմում[54]: Այդպիսով, հրեշտակները ո՛չ թէ տանում են Նրան, ինչպէս թւում է տեսողաբար, այլ ուղեկցում ու դիմաւորում են՝ իւրաքանչիւրն իր դասում:

Մանդորլայի ցածի երիզից դէպի աշակերտներն են իջնում ծիածա-նակերպ զանազանագոյն ճաճանչներ: Նրանց եւ Աստուածամօր կեր-պարները այնպէս են տեղաբաշխուած[55], որ գլուխների յաջորդական դա-սաւորուածութեան միջոցով ստացուել է շարժունակ, պսակաձեւ խմբա-նկար: Միասնական այս խմբում Յիսուսի աշակերտները բռնել են մէկ-մէկու եւ երկիւղածօրէն յառում են Եկեղեցու խորհրդանիշ՝ Աստուածա-մօրը: Սուրբ Հոգու գալստով սրբագործուած աշակերտներն այլեւս կոչ-ուելու են առաքեալներ, եւ քրիստոնէութիւն քարոզելով պիտի արժանա-նան յաղթութեան պսակին, այսինքն պէտք է յաղթեն հոգեւոր պատերազմում:

Հոգեգալուստ

Եկեղեցու եւ առաքելականութեան թեման շարունակւում է *Հոգեգալուստ* մանրանկարում, որ կրկին հորիզոնական երիզով բաժանուած է երկու մասի: Խորհրդաւոր այս իրադարձութիւնը տեղի է ունենում Երուսաղէմի Վերնատանը, որը Մեսրոպ Խիզանցին ներկայացրել է քառակամար շինութեան տեսքով: Մանրանկարի այս հատուածի խորքի գունաւորումը՝ երկնագոյնը եւ սպիտակի հետ նրբօրէն համադրուած մանուշակագոյնը, տեսողապէս զուգադրւում են կամարների տակից կախ ճրագակալներին, որոնցից կենտրոնական-ները թոյլ առկայծող լոյսի պատրանք են ստեղծում: Նմանապէս, Սուրբ Հոգին խորհրդանշող հրեղէն լեզուները, որ իջնում են առաքեալների վրայ, տպաւորում են իրապէս խորհրդապաշտական մի տարածք:

Առաքեալները ծնրադրել են Սուրբ Սեղանի առջեւ, որի վրայ դրուած է հաղորդութեան սկիհը: Սեղանից աջ ու ձախ, խնդրարկուի դիրքով, երկու առաքեալներ են, թերեւս՝ Պետրոսն ու Յակոբոսը: Մանրանկարի այս հատուածում առաքեալների թիւը տասն է, միւս երկուսը գտնւում են ցածի մանրանկարում, որը պատկերում է քրիստոնէութեան առաջին նորադարձների պատմութիւնը:

Այստեղ երկու առաքեալ[56], պահում են մի կլորակ, որի մէջ հեթա-նոսներին խորհրդանշող մարդադէմ եւ շնադէմ յայտնի կերպարն է: Ա-ռաքեալների ոտքերի մօտ կրկին յայտնւում են տատասկները, որպէս նշանակ առաքելական գործունէութեան հալածանքներով ու վտանգնե-րով լի՝ չարչարանաց ճանապարհի, որն աւարտուելու է նահատակութեամբ:

Երկրորդ գալուստ

*Սուրբ Ծաղիկ Աւետարան*ի մանրանկարների վախճանաբանական թեման սկսւում է *Երկրորդ գալուստ* պատկերով[57]: Նկարադաշտի ողջ տարածքը զբաղեցնում է Տէրունական Խաչը, որի հորիզոնական խաչափայտի երկու ծայրերն ու ուղղահայեացի գագաթը կպած են մանրանկարի շրջանակին, եւ զարդանախշերով նոյնանալով՝ ձուլուել են շրջանակի հետ: Այս հսկայ խաչի բունը դրուած է հնգաստիճան պատուանդանին՝ Գողգոթային: Խաչի կենտրոնում, կլորակի մէջ,

Նոր Կտակարանը գրկած նստած է Յիսուս-Էմմանուէլը[58]: Նրա թիկունքում երկու գմբէթներ են, որոնք խորհրդանշում են Երկնային Երուսաղէմը: Խաչաթեւերին պառկած հրեշտակները հնչեցնում են իրենց փողերը՝ ազդարարելով դատաստանի սկիզբը:

Հրեշտակների թեւերի դասաւորուածութիւնն այնպիսին է, որ Տէրունական Նշանը ստացել է ճաճանչախաչի տեսք: Այդպէս, մանրանկարիչը խաչին հաղորդել է պատկերագրուող թեմային յարիր՝ ահեղ ու ազդու տեսք: Տպաւորիչ է նաեւ մանրանկարի խորքը, որ ամբողջութեամբ դեղին է (խորհրդանշում է ոսկին, աստուածայինը) եւ ծածկուած է աստղերով (խորհրդանշում են հրեշտակներին): Այստեղ այլեւս չկան նախորդ պատկերների խորքերի գունային բաժանումները[59], ինչը նշանակում է, որ արդէն ամէն ինչ անմիջականօրէն գտնւում է աստուածայինի ոլորտում:

Մանրանկարի թեման, դրա խորքը եւ Երկնային Երուսաղէմի պատկերումը առնչւում են Աւետարանների[60] ու Յովհաննու Յայտնու-թեան հետ[61], եւ պատկերագրում են դրանց համապատասխան մասերը:

Մեսրոպ Խիզանցին խաչի պատուանդանի հակադիր անկիւններում պատկերել է *Սուրբ Ծաղիկ Աւետարան*ի պատուիրատու Ստեփանոս Քահանային եւ նրա կողակցին՝ Նարինին, որոնք ծնրադիր, ձեռքերը պարզած խնդրում են մեղքերի թողութիւն[62]:

Վերջին դատաստան

Այս մանրանկարի պատկերագրութիւնը եւս, դատելով որոշ մանրամասներից՝ ծագում է Յովհաննու Յայտնութիւնից, եւ համադրուած է բարեխօսութեան ու դատաստանի թեմաներին:

Մանրանկարի վերին հատուածի կենտրոնում, գմբէթաւոր խորանի մէջ Հայր Աստուած բազմել է չորեքկերպեանների վրայ: Ստորին մասում, որտեղ դատաստանի պատկերն է, դեւերը փորձում են խանգարել հրեշտակին՝ կշռել մարդկանց հոգիների «մեղքն ու վարձքը»: Աստծոյ եւ չորեքկերպեանների դրուագը վերցուած է Յովհաննու Յայտնութիւնից[63]: Հայր Աստուածը ներկայացուած է ծերունու տեսքով՝ կապտա-սպիտակաւուն

մազերով ու մօրուքով եւ Յիսուսի խաչազարդ լուսապսակով: Մեսրոպ Խիզանցին նկատի ունի Հայր Աստծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի, զոհաբերութիւնը խաչի վրայ:

Հայր Աստծուց աջ ու ահեակ կանգնած են Սուրբ Աստուածամայրը եւ Սուրբ Յովհաննէս Մկրտիչը, որոնք ներկայացնում են «Բարեխօսութիւն» տեսարանը: Պատկերագրական այս առանձին թեմաներից էլ ձեւաւորուել է «Վերջին դատաստանի» խնդրոյ առարկայ տարբերակը:

Հետաքրքիր է ներկայացուած բուն դատաստանը: Այստեղ մանրանկարի վերնամասը տարանջատող եզրաշերտից կախ է ընկած կշէռքը, որի նժարներին դրուած են անմեղ եւ մեղսալից մարդկանց հոգիները: Արդարադատութեանը խոչընդոտում են երեք դեւերը, որոնց իր երկար նիզակով սաստում է պատկերի աջ անկիւնի հրեշտակը: Դեւերից մէկը թեթեւ (անմեղների) նժարը փորձում է ցած իջեցնել՝ իբր մեղքերից ծանրացած է, իսկ միւսը՝ ծանր (մեղաւորների) նժարը բարձրացնել, իբր՝ թեթեւ է:

Դեւերի կերպարները զաւեշտալի են՝ կիսադէմ, մեծ քթերով, չռուած աչքերով, պոչաւոր ու սմբակաւոր, տարօրինակ գլխարկներով, խաւար մարմիններով: Մեսրոպ Խիզանցին նրանց պատկերել է գեղարուեստական չափազանցութեան սկզբունքին յատուկ արտայայտչամիջոցներով: Եւ կրկին մանրանկարիչն օգտագործել է տատասկների մոտիւը, այս անգամ՝ որպէս դժոխային տանջանքների խորհրդանիշ:

Յիսուս Քրիստոս[64] *եւ Մարիամ Աստուածածին*[65]

Մանրանկարների տէրունական շարքը եզրափակում է *Յիսուս Քրիստոս եւ Մարիամ Աստուածածին* եռանկարը: Այդ պատկերները գտնուում են ձեռագրի հանդիպակաց էջերին՝ որպէս մէկ թեմայի փոխլրացում:

Թւում է, թէ Մեսրոպ Խիզանցին այս մանրանկարներում է խտացրել ստեղծագործական ողջ վարպետութիւնը: Կուռ յօրինուածքը, դիմապատկերի արտայայտչականութիւնը, գոյների ընտրութիւնը, համադրումն ու ներդաշնակ կիրառումը, զարդի ու զարդապատկերի գեղարուեստականութիւնն ու ճաշակաւորութիւնը՝ բոլորը միասին այս մանրանկարներին

հաղորդել են երկու առանձին, սակայն թեմայով շաղկապուած սրբապատկերի բնոյթ[66]:

Նմանատիպ պատկերները հայկական մանրանկարչութիւն են մուտք գործել ԺԶ.-ԺԷ. դարերում[67]: Սրանք քրիստոնէական արուեստում յայտնի «Բարեխօսութիւն» (Դէիսիս)[68] պատկերագրական թեմայի յետագայ, աւելի ուշ շրջանի տարբերակներն են[69]: Այդ մանրանկարներում դասական խնդրարկութիւնից բացի, երբ Աստուածամայրը բարեխօսում է՝ Որդուն պարզած ձեռքերով, հանդիպում են տարբերակներ, որոնցում Աստուածամայրը բացել է ստինքը եւ այդպէս է դիմում Յիսուս Քրիստոսին[70]: Նմանատիպ մանրանկարների թեման ծագում է պարականոն գրուածքից[71]: Հենց այս պատկերագրական տարբերակն է օգտագործել Մեսրոպ Խիզանցին:

Յիսուսին ու Սուրբ Կոյսին մանր անկարիչը պատկերել է մեծադիր խորանների մէջ, որոնց գագաթների գմբէթները դուրս են մանրանկարի շրջանակից: Խորանների գլխազարդերը, կողային սիւն-երիզները եւ մանրանկարների շրջանակները մշակուած են գեղեցկօրէն գունեղ՝ բուսական ու երկրաչափական զարդերով: Զարդարուն են նաեւ Յիսուսի ու Մարիամի լուսապսակները: Կարմիրի, դեղինի, կանաչի, կապոյտի գունապնակը եւ ընդհանուր զարդային համակարգը մանրանկարներին տալիս են ծաղկափթիթ գորգի տեսք, հաղորդում արտակարգ գեղարուեստական հնչեղութիւն:

Տպաւորիչ են նաեւ Յիսուսի ու Մարիամի կերպարները: Յիսուսը ներկայացուած է ծալապատիկ նստած[72], ձեռքերը կրծքին ծալած, եւ դատելով դէմքի արտայայտութիւնից ու թեմայի թելադրանքից՝ համակ ուշադիր ունկնդրում է սիրասուն Մօր խօսքը: Մարիամը պատկերուած է ծնկներից վեր, երկու ձեռքով ստինքը բռնած: Նրանք երկուսն էլ պատկերուած են դիմահայեաց: Մարիամը չի նայում Որդուն. մեծ բարեխօսի հայեացքը ուղղուած է նրանց, որոնց համար է դիմում Յիսուսին՝ հայցելով մեղքերի թողութիւն:

Բարեխօսութիւն խնդրողների շարքում են նաեւ ինքը՝ Մեսրոպ Խիզանցին եւ Տէր Ստեփանոսն ու նրա որդին: Դրա վկայութիւնն են մանրանկարչի գրութիւնները, որ նա թողել է պատկերների

տակ: Շատ հաւանական է, որ այս երկու մանրանկարների առանձնայատուկ զարդապատկերայնութիւնն է առիթ տուել Աւետարանն անուանադրելու «Սուրբ Ծաղիկ»:

Այսպիսով, կարող ենք հաստատել, որ Մեսրոպ Խիզանցու այս Աւետարանի տէրունական պատկերաշարը՝ կատարման բարձր վարպետութեամբ, ընդգծուած ոճականութեամբ, պատկերագրական ու խորհրդաբանական մանրամասների բազմազանութեամբ ժէ. դարի հայկական մանրանկարչութեան լաւագոյն նմուշներից է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ձեռագիրն այդ անունով է կոչւում արդէն 1740ի յիշատակարանում. «*Ես Շահբուլաղայ փէր Սրէփանոսի որդի մեղաւոր փէր Օւանէսս յեկայ Սուրբ Ախպէկան ուխտ արի, յեկայ* ***Սուրբ Ծաղիկ Աւետարան*** *համբուրեցիմ: Թուին ՌՃՁԹ (1740) յուլիսի ԺԷ*» (261բ): Այս եւ յաջորդ յիշատակարաններում ընդգծումները մերն են - Ա.Ա.:

[2] Մեսրոպ Խիզանցու մասին տե՛ս՝ Յ. Քիւրտեան, «Խիզանի Դպրոցին Գրիչներն Ու Մանրանկարիչները Եւ Իրենց Յիշատակարանները», Փարիզ, 1951, էջ 125-134. նաեւ՝ Ն. Ծովական, «Հայ Նկարողներ», *Սիոն*, 1988, թիւ 7-8-9, էջ 129-130. նաեւ՝ Աստղիկ Գէորգեան, *Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն IX-XIX դդ.*, Հրատ. ՀԲԸՄ Սաթենիկ Ճ. Չագըր Հիմնադրամ, Գահիրէ, [ա.տ.], 1998, էջ 402-406. նաեւ՝ M. Arakelyan, *Mesrop of Xizan. An Armenian Master of the Seventeenth Century*, London, Sam Fogg Ltd, 2012 եւն.:

[3] Աւետարաններ, Սաղմոսարան, Յայսմաւուրք, Ճաշոց, Ճառընտիր, Ժողովածու եւն.: Այդ ձեռագրերը գտնւում են Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Իտալիայի, Աւստրիայի, Գերմանիայի, Անգլիայի, Իռլանդիայի, Իրանի, Սիրիայի, Իսրայէլի եւ ԱՄՆ տարբեր հաւաքածուներում (Arakelyan, էջ 174):

[4] Բոլոր յիշատակարաններում նա յայտնում է խիզանցի լինելը:

[5] Աւետարանը գտնւում է մասնաւոր հաւաքածոյում (Վրէժ Ներսիսեան, «Հայերէն Նոր Ձեռագրեր Անգլիայում», *Բանբեր Մատենադարանի*, Երեւան 1980, թիւ 13, էջ 338-339: Ներսիսեանը տեղեկացնում է, որ այդ ձեռագիրը վաճառուել է Լոնդոնի Սոտբի աճուրդում 1975ին: Ցաւօք, որեւէ այլ բան այդ Աւետարանի մասին չգիտենք:

[6] 1652ին ընդօրինակուած Ճառընտիրի յիշատակարանում Մեսրոպ Դպրի աշակերտ Գասպար Քահանայի աշակերտ Յովսէփը գրում է. «... ***յիշեցէք... զմեսրոպ դպիր Խիզանցին, որ փոքր ի շատէ եւ նա աշխատեցաւ ի վերայ ս(ուր)բ գրոցս***»: Այս փոքրիկ յիշատակութիւնից պարզ է դառնում, որ Մեսրոպը արդէն առաջացած տարիքում էր (*Յուցակ Հայերէն Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի, Հտր. Ա*, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան,

Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1970, էջ 295: Ն. Ծովականը Մեսրոպի ծննդեան տարեթիւը թէաբար համարում է 1590ը (Ծովական, էջ 129):

[7] Առաքելեանը առանձնացնում է Մեսրոպ Խիզանցու ստեղծագործութեան երեք փուլ.- 1603-1609՝ աշակերտ, 1609-1623՝ վարպետ եւ 1623-1652՝ ուսուցիչ (Arakelyan, էջ 17-18):

[8] Մարտիրոս Քահանային ժամանակակիցները անուանում էին՝ «քաղցրաձայն երաժիշտ, անհաս փիլիսոփայ, վարպետաց վարպետ», ինչը վկայում է նրա բազմակողմանի հմտութիւնները հոգեւոր արուեստներում:

[9] Մազման՝ նշանակում է մազ մանող արհեստաւոր (Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան, *Միջին Հայերէնի Բառարան*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2009, էջ 482): Ինքը՝ Սարգիս Մոկացին գրում է. «***Սարգիս Մոկացի սոսկ անուամբ քահանայ, որ մականուն Մազման եօրջորջէն, որ եւ ըստոյգ գործի է անուն, զի մազման վասն յեպս կոյս ընթանալոյն ասի եւ է ճշմարիտ***» (ՄՄ. ձեռ. հմր. 278 (281բ): Ի դէպ՝ Սարգիս Մազմանը նոյնպէս Մարտիրոս Խիզանցու աշակերտն է:

[10] 1602ին մահանում է Սարգիս Մազմանը: 1607ին միաժամանակ մահանում են Մեսրոպ Խիզանցին, որդին՝ Գրիգորիսը եւ Խաչատուր Խիզանցին:

[11] Բոլոր մանրանկարները ուղեկցւում են բացատրագրերով:

[12] Տաճարի վարագոյրը վեր է բարձրացուած եւ երեւում է Սրբութիւն Սրբոցը:

[13] *Թանգարան Հայկական Հին Եւ Նոր Դպրութեանց, Հտր. Բ, Անկանոն Գիրք Նոր Կտակարանաց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 19:

[14] *Թանգարան*..., էջ 6 եւ 14:

[15] Ի դէպ, *Ծնունդ* մանրանկարներում նստած Աստուածամօր պատկերագրութիւնը գալիս է վաղ քրիստոնէական արուեստից:

[16] Դրա վկայութիւնն է նաեւ նրա ծիրանի պատանք-բարուրը:

[17] Խորանատիպի մէջ մանրանկարիչը պատկերել է Աստուածամօր լուսապսակից առկայծող ճաճանչը:

[18] Այստեղ ինչպէս *Աւետում* մանրանկարում Սրբութիւն Սրբոցի վարագոյրը վեր է բարձրացրած:

[19] Ղուկ. Բ 21-40, *Աստուածաշունչ Մատեան Հին Եւ Նոր Կտակարանների*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

[20] *Թանգարան*..., էջ 54:

[21] Սիմէոնը այն աստուածավախ եւ Իսրայէլի փրկութիւնը ակնկալող մարդն էր, որին «*Սուրբ Հոգուց հրամայուած էր... մահ չտեսնել, մինչեւ որ տեսնէր Տիրոջ Օծեալին*» (Ղուկ. Բ 26):

[22] Ըստ եկեղեցու աւանդութեան Սիմէոնը Փրկչի գալստեանն է սպասել 344 տարի:

[23] Սովորաբար *Մկրտութիւն* տեսարանում պատկերում են երկու հրեշտակ:

[24] Սատանայի:

[25] Հանդիպում է նաեւ *Պայծառակերպութիւն* եւ *Համբարձում* մանրանկարներում:

[26] Բ Օրինաց ԼԴ 5-6:

[27] Դ Թագ. Բ 11:

[28] Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Թ 1-12, Ղուկ. Թ 28-36:

[29] Յովհ. ԺԱ 1-46:

[30] Յովհ. ԺԱ 35:

[31] Մեսրոպ Խիզանցին *Մուտք Երուսաղէմ* տեսարանում օգտագործել է այն պատկերագրական տարբերակը, որտեղ բացակայում է աւանակին ուղեկցող քուռակը:

[32] Մատթ. ԻԱ 8, Մարկ. ԺԱՅ 8,:

[33] Ղուկ. ԺԹ 1-10:

[34] Ղուկ. ԺԹ 10:

[35] Սա ձեռագրի միակ մանրանկարն է, որտեղ մէկտեղուած են աւետարանական երկու տարբեր, սակայն իրար լրացնող պատմութիւններ:

[36] Ըստ աւետարանների, հրէական ամբոխը գալիս է Յիսուսին ձերբակալելու զինուած սրերով ու մահակներով (Մատթ. ԻՋ 47, Մարկ. ԺԴ 43, Ղուկ. ԻԲ 53), իսկ Յովհաննու Աւետարանում ամբոխը զինուած է. «*ջահերով, լապտերներով ու* ***զէնքերով***» (Յովհ. ԺԸ 3): Յովհաննէս Աւետարանչի մօտ զէնքերի տեսակները նկարագրուած չեն, իսկ ձերբակալողները հռոմէացի զինուորներն են:

[37] Մատթ. ԻՋ 48, Մարկ. ԺԷ 36, Յովհ. ԺԹ 29: Շատ յաճախ *Խաչելութիւն* տեսարանում պատկերւում է երկար ձողին հագցրած սպունգ:

[38] Ղուկ. ԻԲ 42: Ղուկաս Աւետարանիչը այսպէս է նկարագրում Յիսուսի վիճակը Գեթսեմանիում. «*Նա փագնապի մէջ էր եւ ամբողջ հոգով էր աղօթում: Եւ նրանից քրտինքը հոսում էր արեան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին թափուելով*» (ԻԲ 43-44):

[39] Ղուկ. ԻԳ 34:

[40] Մատթ. ԻՋ 57-58, 69-75, Մարկ. ԺԴ 53-54, 66-72, Ղուկ. ԻԲ 54-62, Յովհ. ԺԸ 12-18, 25-27:

[41] Խաչելութեան համառօտ պատկերագրական տարբերակում պատկերւում են միայն Յիսուսը, Մարիամն ու Յովհաննէսը եւ մէկ կամ երկու զինուոր:

[42] Արեւի եւ լուսնի պատկերագրութեան մասին տե՛ս՝ Ն. Ղարիբեան, «Արեւի Եւ Լուսնի Պատկերագրութիւնը Խաչելութեան Տեսարանում», *Հայեացք Երեւանից*, 1995, Փետրուար, էջ 106-115:

[43] Աւանդաբար համարւում է, որ Յիսուս Քրիստոսը խաչուել է հենց Ադամի գերեզմանի վրայ:

[44] Միջնադարում համարւում էր, որ հաւալուսն իր քաղցած ձագերին կերակրում էր սեփական մարմնի կտորներով ու արեամբ: Այդպէս էլ Յիսուս Քրիստոսը Իր որդեգիրներին՝ Եկեղեցուն, կերակրում է հաղորդելով Իր Մարմնին ու Արեանը:

[45] «*Նա թէպէտեւ մարմնով մեռաւ, բայց կենդանի է հոգով, որով եւ գնաց քարոզեց բանտում եղած ... հոգիներին...*» (Ա Պետրոս Գ 18-19): Պետրոս Առաքեալը խօսում է դժոխքի աւերման մասին:

[46] Մատթ. ԻԸ 2:

[47] Մարկ. ԺԶ 1:

[48] «*Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպէս ձիւնը*» (Մատթ. ԻԸ 3):

[49] Յիսուսի գերեզմանը տաճարիկի տեսքով ներկայացնելիս, միջնադարեան արուեստագէտները նկատի ունեն այն կառոյցը, որ Դ. դարի սկզբում կանգնեցրել էր Կոստանդիանոս կայսրը՝ Յիսուսի թաղման վայրում: Տաճարիկի կանթեղը ակնարկում է, որ դա Յարութեան տաճարն է:

[50] Պահապանների զէնքերը հաւանաբար կրկնում են Մեսրոպ Խիզանցու ժամանակ կիրառուող զէնքերի արտաքին տեսքը:

[51] Տրամաբանօրէն աշակերտները *Համբարձում* տեսարանում պիտի լինեն տասնմէկը, քանի որ ինքնասպան եղած Յուդայի փոխարէն Մատաթիայի ընտրութիւնը տեղի է ունեցել Յիսուսի համբարձումից յետոյ (Գործք. Ա 26): Մեսրոպ Խիզանցին, պատկերելով տասներկու աշակերտ, առաջնորդուել է վաղագոյն պատկերագրութեան եւ յօրինուածքում նրանց կերպարներն ու գլուխները համաչափ դասաւորելու պահանջով:

[52] Աւելի յաճախ, *Համաբարձում* տեսարանում Յիսուսը պատկերւում է նստած:

[53] Հրեշտակաց դասերը ինն են, սակայն Մեսրոպ Խիզանցին նրանցից ութին է պատկերել՝ հաւանաբար յանուն յօրինուածքի համաչափութեան:

[54] Եբր. Ա 3:

[55] Բարձր եւ ցածր:

[56] Ըստ Նոր Կտակարանի, Հոգեգալստեան օրը, Պետրոս Առաքեալի ոգեշունչ քարոզից յետոյ, շուրջ 3000 հոգի մկրտւում են եւ դառնում քրիստոնեայ (Գործք. Բ 14-41):

[57] *Երկրորդ գալուստ* մանրանկարին յաջորդող *Վերջին դատաստան* պատկերը նոյնպէս բնոյթով վախճանաբանական է:

[58] Ըստ պատկերաբանութեան՝ պատանի, անմօրուք Քրիստոսը:

[59] Այդպէս է նաեւ յաջորդ *Վերջին դատաստան* մանրանկարում:

[60] Մատթ. ԻԴ 29-31, Մարկ. ԺԳ 24-27, Ղուկ. ԻԱՅ 25-28:

[61] Յայտն. ԻԱՅ 1-4:

[62] Պատուիրատուներին շատ յաճախ էին պատկերում *Երկրորդ գալուստ* մանրանկարում:

[63] Յայտն. Դ 3, 7: Չորեքկերպեանները յիշատակւում են *Աստուածաշունչի* տարբեր գրքերում:

[64] Պատկերի միջի վարդակներում գրուած է՝ «*Յ(իսու)ս*», «*Ք(րիստո)ս*»:

[65] Պատկերի միջի վարդակներում գրուած է՝ «*Մար*», «<I>իամ</I>« («Մարիամ»):

[66] Համանման պատկերների սրբապատկերային բնոյթի մասին տե՛ս՝ Հրաւարդ Յակոբեան, *Հայոց Տէրունական Սրբապատկերները*, Երեւան, Զանգակ-97, 2003, էջ 105:

[67] ՄՄ. ձեռ. հմր. 5579 (1577 թ.) 23բ-24այ, ՄՄ. ձեռ. հմր. 6093 (1604 թ.) 27բ-28այ, եւն.:

[68] «Դէիսիսի» հնագոյն օրինակներից է Սինայի Ս. Կատարինէ եկեղեցու որմնանկարը (565-566 թթ.):

[69] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ասատուր Մնացականեան, «Բարեխօսութեան Քրիստոնէական Թեման Հայ Մանրանկարչութեան Մէջ», *Հայկական Արուեստ 1*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 82-85:

[70] Բարեխօսութեան այս տարբերակը ծագում է «Ստնտու Աստուածածին» պատկերագրութիւնից: Հայկական մանրանկարչութեան մէջ այն առաջին անգամ պատկերել է Թորոս Տարօնացին, *Գլաձորի Աւետարան* ՄՄ. ձեռ. հմր. 6289 (1323 թ.):

[71] «Եւ (Աստուածամայրը - Ա.Ա.) սկսաւ աղօթել առ Միածին Որդին եւ Աստուածն մեր, եւ յաղօթելն իւրում ասէ այսպէս. Ո՛յ Տէր իմ, եւ արարիչ նախայաւիտենական, ո՛յ Տէր, Միածին Որդի իմ եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, ո՛յ Տէր, որ հոգոց եւ մարմնոց ունիս իշխանութիւն, որ հաճեցար յաղախին ծառայս Քո, եւ ծնար՝ Աստուած եւ մարդ կատարեալ, եւ **ստեամբ կերակրեցար**...» (*Թանգարան*, էջ 419:

[72] Այս դիրքը շատ տարածուած էր Վասպուրականի կերպարուեստում:

FEATURES OF THE "SAINT FLOWER GOSPEL" ICONOGRAPHICAL SERIES

(Summary)

AVET AVETISYAN
avetavetisyan@yahoo.com

Mesrop Khizantsi is one of the most prominent representatives of Armenian miniature painting of the 17th century. He lived almost his entire creative life (about fifty years) in Isfahan (New Julfa) and the surrounding Armenian towns. Some forty-five religious and ritual manuscripts, richly illuminated by Mesrop Khizantsi, have been preserved. One of them, called the "Saint Flower Gospel", dated 1619, is kept in the Mashtots Matenadaran (Mat. Ms. 11203).

The iconography of some miniatures in this Gospel has been influenced by the apocryphal Book of the Christ Childhood.

The figures of the Dominical Feasts, especially the personality of Christ in the scenes of Transfiguration and Crucifixion, have interesting interpretations from the iconographical-symbolic viewpoint. In the first one Christ is depicted in an untraditional iconographic style, especially the movements of his hands. In the miniature Christ has one open eye, while the other is closed. Also of great interest is Judas character in the scene of Betrayal, in which he is like a lost child.

The author notes that other iconographic details of the miniatures are also unusual. In particular, the motif of the blackthorn (crown of thorns), abundant in several miniatures, refers to the sufferings of Christ and His Apostles.

The author concludes that Mesrop Khizantsi's iconography in the "Saint Flower Gospel" is an exceptional sample of the 17th century Armenian miniature.

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (ԺԷ.-ԺԹ. ԴԴ.)

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ
norayr.poghosyan@ysu.am

ՄՈՒՏՔ

Գիտական ու նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ յաճախակի կարելի է հանդիպել «հայկաբան» եւ «հայկաբանութիւն» եզրերին: Ընդ որում դրանով առաւելապէս բնութագրւում են ԺԹ. դարի հայերէնագիտութիւնը եւ հայագէտ դասաւանդողները: Ժամանակի հայ բանասէրներն ու հայկաբաններն այս եզրերը գործածել են առանց դրանք սահմանելու եւ բնութագրելու: Յետահայեաց կերպով մենք փորձել ենք վերհանել հայկաբանութեան բնութագիրը, ներկայացնելով, թէ ինչ էին պատկերացնում հնում հայ գրագէտները «հայկաբան» եւ «հայկաբանութիւն» ասելով:

Ա.

Հայկաբանութիւն եզրը չկայ գրաբարի *Նոր Հայկազեան* եւ *Առձեռն* բառարաններում: Դա նշանակում է, որ մեր հին ու միջնադարեան մատենագրութեան մէջ այն պարզապէս չի գործածուել եւ գուցէ բառը ստեղծուած չի եղել: Այն հանդիպում ենք ուշ շրջանի բառարաններում, ինչպէս օրինակ՝ Ստեփանոս Մալխասեանցի *Հայերէն Բացատրական Բառարան*ն ունի հետեւեալ բառայօդուածը. «*Հայկաբանութիւն. ընտիր հայերէն (գրաբար) լեզու*»[1]: Յայտնի է, որ Մալխասեանցն իր քաղած բառերի աղբիւրները չի նշում, ուստի չենք կարող ասել, թէ որտեղից է վերցրել այդ բառը: Իսկ որպէս բառագործածութեան նմուշ բերում է հետեւեալը. «*Եզնիկի «Եղծ Աղանդոց» գիրքը ճանաչուած է հայկաբանութեան փիպար*» եւն.[2]: *Հայկական Սովետականն Հանրագիտարան*ում հետեւեալն է եզրի բնութագիրը. «*Հայկաբանութիւն - Ճիշտ, ընտիր գրաբար՝ զերծ օտարաբանութիւններից (յունաբանութիւն, լատինաբա-նութիւն), բարբառայնութիւնից, ինչպէս նաեւ գրաբարեան առանձին ճիշտ*

արտայայտութիւն, բառօգտագործում եւ այլն: Ըստ այսմ հայկաբանութեան օրինակներ են Աստուածաշնչի Սահակ-Մեսրոպեան թարգմանութեան, Ագաթանգեղոսի, Եզնիկի եւ այլ երկերի լեզուն»[3]:

Մեր արձանագրած ամենահին հեղինակը, որ գործածել է այն, Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցին է[4]: Նա իր *Ձգտութիւն Հայկաբանութեան...* աշխատութեան մէջ թէեւ եզրը չի սահմանում, բայց նպատակների մասին խօսելիս հայերէնի երեք շերտեր է առանձնացնում եւ նշում. «*Հայկական բարբառ զերիս պարունակէ զտեսակս, որոց առաջինն է զուտ կանոնաւոր, զոր եւ ի կիր արկին եւ արկանեն արք հմուտք շաւղաց քերականութեան եւ համբաւունակք ի մէջ հայկազունեաց, կոչի յատկապէս հայկական: Երկրորդն, որ է շփոթուն եւ անկանոն, որով եւ վարին արք անտեղեակք գրոց, կոչի աշխարհական: Իսկ երրորդն, որ է խառնեցեալ ի յերկոցունցն, այսինքն՝ ի հայկականէ եւ յաշխարհականէ, վասն որոյ եւ մասամբ ինչ կանոնաւոր, եւ մասամբ իւիք անկանոն, զոր եւ ի կիր արկանեն ատենախօսք եւ փաստաբանք, կոչի քաղաքական*»[5]:

Հոլովն իր տեսական աշխատութիւններում ծրագրային կերպով ներկայացնում է հայերէնի (իր ժամանակի համար՝ բնականաբար գրաբարի) զտման՝ օտարաբան, լատինաբան ազդեցութիւնից զերծ լեզուական որակ ստանալու հարցադրումը, ըստ որի՝ հայերէնի քերականութիւնը պէտք է բխեցնել նրա ներքին առանձնայատկութիւններից, եւ ոչ թէ լատինական կառոյցների վրայ «ձեւել» մեր լեզուն, հենց դա է յուշում Հոլովի գրքի վերնագիրը՝ *Ձգտութիւն Հայկաբանութեան*: Ընդհանուր առմամբ նոյն մտայնութիւնն ունեն ԺԷ. դարի այլ քերականներ եւս՝ Ոսկան Երևանցին, Սիմէոն Ջուղայեցին, Յովհաննէս Մրքուզը: Այսինքն՝ **ի սկզբանէ հայկաբանութիւնն ի յայտ է եկել գրաբարը լատինաբանութիւնից զերծ պահելու, քերականական խորթ ձեւերը մէկդի դնելու եւ քերականական իրողութիւնները սահմանելիս հայերէն բուն լեզուական փաստերի վրայ յենուելու նպատակադրումով**: Սա հայկաբանութեան առաջին դրսեւորումն է, որ հանդիպում ենք գիտական երկերում ԺԷ. դարից ի վեր:

Մխիթար Սեբաստացին *Քերականութիւն Գրաբառի Լեզուի Հայկազեան Սեռի*[6] աշխատութեան մէջ ձգտում է հայերէնը մաքրել լատինաբանութիւններից, ռամկօրէն ձեւերից եւ վերականգնել հին լեզուն, որ գործածում էին Եզնիկը, Եղիշէն, Խորենացին եւ միւս դասական հեղինակները: Դրան էին միտուած *Աստուածաշունչ*ի նոր հրատարակութիւնը[7], *Հայկազեան Լեզուի Բառգիրքը*[8]: Գրաբարը զտելու գործում որոշակի դեր է կատարել Հայր Վրթանէս Ասկերեանը, որի *Փիլիսոփայութիւն*ի թարգմանութեան տիտղոսաթերթին ուղղակի գրուած է՝ «**թարգմանեալ զգուշութեամբ ըստ հայկազեան լեզուիս ոճոյ**»[9]: Ապա յաջորդեցին Հայր Գաբրիէլ Աւետիքեանի *Քերականութիւն Հայկական*ը (1815), Հայր Մանուէլ Ջախջախեանի *Բառգիրք Ի Բարբառ Հայ Եւ Իտալական* (1837), հայ բառարանագրութեան պարծանքը՝ *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի*ն (1836-37), Հայր Արսէն Բագրատունու *Տարերք Հայերէն Քերականութեան* (1846), *Հայերէն Քերականութիւն Ի Պէտս Զարգացելոց* (1852) աշխատասիրութիւնները: Հայկաբանութեան՝ դասական գրաբարին նուիրուած աշխատութիւնների շարքը շատ երկար կարելի է շարունակել, որոնց շնորհիւ հայագիտութեանը մատուցուեց կանոնների, քերականական կանոնաւոր ու անկանոն ձեւերի, բառագործածութեան, դարձուածային միաւորների հսկայական մի շտեմարան՝ քաղուած յատկապէս դասական հայերէնի ընդերքից: Դրանց ամբողջութիւնը ներկայանում է որպէս «հայկաբան» լեզու ԺԸ.-ԺԹ. դդ. գիտնականների համար:

Բ.

ԺԹ. դարի կէսերին հայերէնը մաքրելու, դասական՝ հայկաբան հայերէնն ուսումնասիրելու հարցում մէկ քայլ առաջ գնացին Վիեննայի Մխիթարեան հայրերը: 1832ին Կիւրեղ Երուսաղէմացու *Կոչումն Ընծայութեան* երկի տպագրութեամբ սկիզբ է դրւում հին գրականութեան նորովի տպագրութեանը: Գարագաշեան, Գաթըրճեան, Յովնանեան ուսանողների խումբը մատնացոյց է անում, թէ որոշակիօրէն տարբեր որակ ունեն հին երկերի եւ Մխիթարեան Հայրերի նոր ստեղծագործութիւնների գրաբարը: Այդ տարբերութիւնները սկսում են քննել.

շրջանառութեան մէջ է դրւում «ոսկեդարեան հայերէն» հասկացութիւնը, ուրուագծում են նրա սահմանները, քերականական կանոնները, բառամթերքը: Խանդավառ այս շարժումը նկարագրում է Հայր Ներսէս Ակինեանը. «*Մխիթարեան վարժարանը վերածուած էր հայկական ճեմարանի, ուր երիտասարդ ճեմականները (ուշադրութիւն դարձրէք այս բառին, ոչ թէ ճեմարանական, այլ ճեմական - Ն.Պ.) կը ճեմէին անդադար բանավիճելով դասական մատենագրութեան բառերու, մասնիկերու շուրջը, կը ծափահարէին ընտիրը, կ'անգոսնէին խոտանը, կը հիանային դասականին առաւելութիւններուն վրայ, կը զտէին ընտրելագոյնը ընտիրէն*»[10]: Որպէս այդ շարժման դրսեւորում՝ պատրաստւում է մի ճառ դասական հայերէնով, ուր սովորական դարձած «գերապատիւ, գերապանծ» նոր ստեղծած բառերի փոխարէն գործածւում էին «մեծարգոյ եւ մեծապատիւ տէր…»: Այսինքն՝ սկսում են դասական կամ հայկաբան հայերէնի որոշակի առանձնայատկութիւններին կերպարանք տալ:

Միքանի կէտեր ներկայացնենք մխիթարեանների սկզբունքներից. այն, ինչ խորթ է դասական հայերէնին եւ մուտք է գործել յետդասական դարերում, պէտք է մերժել: Այդպիսի մերժելի բառեր են՝ *կենցաղ*, *հրաշք*, *գոյակ*, *քանակ*. բայեր՝ *պատասխանեմ*, *փառաբանեմ*, *հետեւիմ*. ածանցներ՝ *-բար*, *-պէս*, *-ական*. բայական մասնիկներ՝ *արտաբերիմ*, *գերազանցեմ*, *հակաճառեմ* եւն.: Այսինքն՝ փորձ էր արւում Ե. դարի մինչեւ 60ականները ստեղծուած երկերից պեղել եւ մատուցել լեզուական օրինաչափութիւններ՝ դրանք հռչակելով իբրեւ հայկաբան կամ դասական հայերէն: Դրանց կիրառմամբ թարգմանւում է Բոսուէի *Վասն Տիեզերական Պատմութեան* աշխատութիւնը[11]: Աւելի առաջ գնալով՝ կազմւում է Բանասիրաց Ժողով (Գարագաշեան, Գաթըրճեան, Յովնանեան, Տէրտէրեան), որը պէտք է հսկէր միաբանութեան համար միակ պաշտօնական լեզու յայտարարուած դասական հայերէնի անաղարտ գործածութեանը:

Իրենց ձեռնարկումներում Վիեննայի Մխիթարեան այս հայրերը յաճախ ծայրայեղ մօտեցումներ էին դրսեւորում՝ դասական հայերէնի կանոնները յայտարարելով միակ ճիշտը եւ կիրառելին հայերէնի կենսագործունէութեան բոլոր ոլորտներում:

Բայց չնայած դրան՝ նրանց կատարած զտումները մեծ նշանակութիւն ունեցան հայկաբանութեան կանոնների մշակման գործում. դրանք արդիական են եւ քննւում են նաեւ մեր օրերում:

Այսպիսով կարող ենք մատնանշել հայկաբանութեան երկրորդ նպատակակէտը.- **Ե. դարի առաջին շրջանի՝ Մաշտոցի եւ նրա աշակերտների երկերի լեզուական առանձնայատկութիւնների հիման վրայ վեր հանել դասական (ոսկեդարեան, մաշտոցեան) լեզուն եւ դարձնել միակ ճիշտն ու յանձնարարելին՝ կիրառելին գիտական աշխատութիւններում եւ դպրոցներում:**

Գ.

Հայկաբանութեան նման ընկալումը յանգեցրեց Ե. դարի գրաբարի կանոնաւորութեան, բարձրութեան, վսեմութեան յատկանիշների վերհանմանը. նման բնութագրումներ յաճախակի ենք հանդիպում գիտական գրականութեան մէջ: «*Կանոնք օրինաւոր դպրութեան անվրէպ նշմարին ի գիրս նոցա, **բանք եւ բարբառք՝ հոյակապք, ընտիր, անեղծք եւ բուն հայկականք**, ամենայն փոփոխմունք անուանց եւ խոնարհմունք բայից միակերպ… նկարագիրք հզօր, քաղցունք, յորդք եւ պերճք*»՝ շեշտում է յայտնի հայկաբաններից Հայր Մատաթիա Գարագաշեանը[12]: Դասական գրաբարի շրջանում, ճիշտ է, գոյատեւում էին հայերէնի տարածքային տարբերակներ[13], սակայն դրանք վերաճեցին (կամ նախորդող դարերում բանաւոր մշակմամբ արդէն վերաճել էին) յարաբերաբար մշակուած ու միասեռ լեզուի:

Ե. դարի հեղինակներից բխեցրած առանձնայատկութիւնները մի առիթով սահմանում է Հայր Արսէն Այտընեանը, երբ գրում է. «*Հիմակուան հայկաբանութեան փոյթն եղած է ցուցնել…*», որ թարգմանիչների մեծ մասը ձգտել է մեծ ջանքով ու խնամքով «*բառերի ընտրութեամբ, արուեստական նրբութեամբ, նոյնանշաններու պէսպիսութեան, կարգի եւ ձեւոց զանազանութեան մտադրութեամբ*» լեզուի յատկութիւններ սահմանել եւ պահպանել: Այսինքն՝ բաւական չէ կանոնաւոր, կանոնակարգուած հայերէն գործածել. հայկաբան լեզուն ենթադրում է նաեւ կանոնաւոր լեզուի գեղարուեստականութիւն,

իմաստի եւ ձեւերի ճաշակով կիրառում: Այն, ինչը որ իրապէս գտնում ենք Ե. դարի երկերի մեծ մասում: Դրա շնորհիւ է, որ «*ոչ թէ յոյն Ոսկեբերան մըն էր, կամ Սեբերիանոս, կամ Բարսեղ, որ կը խօսէին հայ ականջներուն, այլ հայերէնաշուրթն հեղինակներ էին, որ կը բարբառէին հայ գրով*»,- շարունակում է բնութագրել Այտընեանը[14]:

Գեղարուեստականացման ձգտումը հաւասարապէս առնչւում էր բոլոր սեռերի երկերին՝ գեղարուեստական, պատմական, մեկնողական, հայրաբանական, ծիսական, վկայաբանական եւն.: Այդպիսով կարելի է տալ հայկաբանութեան երրորդ բնութագիրը.- **բաւական չէ, որ հայերէնն ունենայ կանոնաւոր, դասական շրջանին յարիր ձեւ ու բառային կազմ, այն նաեւ պէտք է ունենայ վսեմ ու բարձր ոճի գեղարուեստական դրսեւորում**: Այս համոզմունքն է դրսեւորւում օրինակ՝ Հայր Գաբրիէլ Այվազեանի *Խանգարմունք Հայկաբանութեան Ի Հնումն Եւ Ի Նորումս* (Թէոդոսիա, 1869), Հայր Յակոբոս Տաշեանի *Ուսումն Դասական Հայերէն Լեզուի* (Վիեննա, 1920) եւ այլ աշխատութիւններում:

Հայկաբանութեանը հենց այդպիսի իմաստ է հաղորդում Ակինեանը՝ գրելով. «*Կարեւոր է հին լեզուին ուսումը հին մատենագրութենէն՝ նոր լեզուի զարգացման համար, որովհետեւ հոն է շրեմարանուած հայ բարբառին հարստութիւնը, հոն կը յայտնուի հայ ճաշակը իւր նրբութեամբ, հարազատութեամբ, բնիկ ժողովրդական նկարագրով*»[15]: Այդպիսով հայկաբանութեան եւս մէկ առաքելութիւն.- **այն պէտք է ծառայի հայ լեզուի շտեմարանից բարձր ու վեհ ձեւերի վերհանմանն ու տարածմանը, համընդհանուր լեզուական կիրառմամբ լեզուն առաւել գեղեցիկ դարձնելու համար:**

Դ.

ԺԹ. դարի երկրորդ քառորդից ի յայտ է գալիս հայկաբանութեան դրսեւորումը Հայաստանի բոլոր հատուածներում գտնուող հայ կրթական հաստատութիւններում:

ԺԷ. դարից հայ կրթական ոլորտում մի նոր վերազարթօնքի ալիք էր սկսուել: Դեռեւս 1610ին դպրոց է բացւում Տաթեւի Հարանց Անապատում, ապա՝ Յովհաննավանքում, Էջմիածնում,

Երեւանում (այստեղ դպրոցի համար նորոգւում է Ս. Անանիայի մատուռը), Շոռոթում, Ագուլիսում, Աստապատում...: Յովհաննավանքի դպրոցը կամ վարդապետանոցը, որ հիմնադրել էր Մովսէս կաթողիկոսը, 15 տարի գոյատեւելուց յետոյ 1640ին Փիլիպպոս կաթողիկոսի կողմից տեղափոխւում է էջմիածին: Յայտնի էր Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ դպրոցը, որ գոյատեւել է մինչեւ ԺԸ. դարի վերջը: Ի դէպ, այստեղ դասաւանդած Կոստանդ Ջուղայեցու գրչին է պատկանում *Յաղագս Վաճառականութեան* դասագիրքը, որ ցայժմ մնում է անտիպ[16]: ԺԸ. դարում նոր դպրոցներ են բացւում Կալկաթայում (Յարութիւն Գալուցեանի «Հայ Եւ Անգլիական Ուսմանց Մասնաւոր Դպրոց»ը), Մադրասում, Ամիդում, Հալէպում, Սեբաստիայում, Կարինում: Ուսումնական այս վերազարթօնքն անխուսափելիօրէն պէտք է ներառէր նաեւ կրթութեան լեզուի ընտրութեան հարցը: Հայ լեզուի վաղ աշխարհաբարեան փուլն ընդգրկող այս շրջանում ի՞նչ լուծում ստացաւ հին ու նոր լեզուների միջից ընտրութիւն կատարելու հարցը: Մենք հարցի պատասխանը դիտարկում ենք հայկաբանութեան դիրքերից:

Նախ պէտք է ասել, որ բոլոր դպրոցներում մեծ տեղ էր գրաւում հայերէնի ուսուցումը, այդ թւում՝ Ցարական Ռուսաստանում: Օրինակ՝ Ներսիսեան Դպրոցի առաջին շրջանի (1820-30ականներ) առարկայացանկում ընդգրկուած էր «հայոց լեզու» կամ «հայոց քերականութիւն», «հայերէն» առարկան: Տարբեր տարեթուերին տարբեր մեթոդական, գործնական հայեցակարգեր են ներդրուել, այդ թւում՝ ընթերցանութիւն, հայոց քերականութիւն եւ շարահիւսութիւն, ճարտասանութիւն, վայելչագրութիւն եւն.: Թեմական դպրոցների բոլոր դասարաններում անցնում էին «հայոց լեզու» շաբաթական 5-6 ժամ դասաքանակով[17]: Շատ յաճախ ամէն մի դպրոց ունենում էր իր սեփական ծրագիրը՝ կախուած դասաւանդողից, դասագրքից կամ հաստատութեան ուղղուածութիւնից: Հայերէնի ծրագրերը միասնականացնելու փորձեր ձեռնարկուել են աւելի ուշ՝ Ի. դարի սկզբներին: Այդ ուղղութեամբ քայլերը կատարուել են Էջմիածնում, միասնական ծրագիրը հաստատուել է 1912ին, բայց հիմնականում մնացել է չգործադրուած:

Հետաքրքիր է, որ ցարական շրջանի հայկական դպրոցներում հայերէնն ու կրօնագիտութիւնը կամ հայ եկեղեցու պատմութիւնը դիտւում էին իբրեւ մէկ ամբողջութիւն եւ դասաւանդողները հիմնականում նոյն անձինք էին լինում[18]:

Լազարեան Ճեմարանի նախապատրաստական դասարաններում աշակերտները սովորում էին գրաբարի քերականութիւն, թարգմանութիւններ էին անում գրաբարից աշխարհաբար եւ ռուսերէն: Ընդ որում թարգմանութիւնների ժամանակ պահանջւում էր «*զգոյշ լինել, որպէսզի օտար լեզուական ոճերը չթափանցեն հայոց լեզուի մէջ*»[19], այսինքն՝ գործածուէր դասական կամ «հայկաբան» լեզու: Ճեմարանում հայերէնը նախապէս անցնում էին Հայր Միքայէլ Չամչեանի *Քերականութիւն Հայկազեան Լեզուի* դասագրքով, ապա 1827ից՝ Միքայէլ Սալլանթեանի ստեղծած *Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայոց* դասագրքով[20]: Աւելի ուշ՝ 1846ին, ձեռնարկ է ստեղծում Ճեմարանի հայոց լեզուի և գրականութեան պրոֆեսոր Մկրտիչ Էմինը՝ *Քերականութիւն Հայկազեան Լեզուի,* որով երկար տարիներ սովորում են Ճեմարանի սաները: 1882ին կազմւում եւ տպագրւում է Ճեմարանի հայոց լեզուի ծրագիրը, նորից էլի հայերէնը կրօնի հետ միակցուած՝ *Ծրագիր Հայոց Լեզուի Եւ Կրօնի Դասատութեան Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց* (Մոսկուա, 1882):

Պէտք է շեշտել ուրեմն, որ հայերէնը մշտապէս մեծ կարեւորութիւն է ունեցել հայ դպրոցներում, այն երբեւէ ստորադասուած չի եղել անգամ գերիշխող ռուսերէնին: 1873ին Ներսիսեան Դպրոցի տեսուչ Սեդրակ Մանդինեանը առաջարկում է չսկսել օտար լեզուի ուսուցումը, քանի դեռ մայրենին հաստատապէս չի իւրացուել: Այսինքն՝ օտարախօսութեան երեւոյթը եւ դրա դէմ քայլերը նկատելի են արդէն ԺԹ. դարից: Նոյն Ներսիսեան Դպրոցը 1892ի ծրագրերի շուրջ սուր բանավէճերից յետոյ այսպիսի բանաձեւ է ընդունում. «*Դպրոցը պէտք է մատակարարի միջնակարգ կրթութիւն, բայց գերակշռող նշանակութիւն պէտք է ունենան հայերէն լեզուն եւ կրօնը*»[21]:

Դասաւանդման տեսակէտից հայկաբանութիւնը աղերսւում է գրաբա՞ր, թէ՞ աշխարհաբար ուսուցմամբ առաջնորդուելու հարցին: Դրա մասին տարբեր կարծիքներ կան: Ըստ Լէոյի,

չնայած աշխարհաբարի համար պայքարն աւարտուել էր եւ 1860ականներին, լոյս էին տեսել աշխարհաբարի քերականութիւններ, սակայն կրթութիւնը գրաբարով էր տարւում ընդհուպ մինչեւ Ի. դարի սկիզբը[22]:

Դպրոցներում հայկաբանութեան դրսեւորումներից է հայերէնի մանկավարժ-գիտնականներին տրուող «հայկաբան» մակդիրը: Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում հայկաբանութեան ուսուցիչ է կարգուել Մեսրոպ Թաղիադեանը: Նա Հնդկաստանի Սանդխտեան Դպրոցում դասաւանդել է նաեւ բառագիտութիւն ըստ իր հեղինակած *Մեսրովբեան Այբբենարան*ի, նաեւ Չամչեանի քերականութեան առաջին մասը, այսինքն՝ ուսումը եղել է գրաբարով: Առաջին հայկաբան ուսուցիչներից յիշատակւում է նաեւ Պօղոս վարդապետ Ղարաբաղցին, որ եղել է Ստեփանոս Նազարեանցի, Թաղիադեանի ուսուցիչը, եւ որին Նազարեանը այսպէս է բնութագրում. «*Պօղոս վարդապետը կարող էր միմիայն մեքենայաբար ուսուցանել, առանց կենդանացնելու իւր դասատուութիւնը հին մեռեալ հայկաբանութեան մասին*»[23]: Դատելով գրական երկերում եւ յուշերում պահպանուած նման դրուագներից՝ դպրոցներում հայկաբան էին կոչում յատկապէս հայերէնի գերազանց իմացութեամբ, գրաբարի քննութեամբ եւ դասաւանդմամբ զբաղուող մասնագէտներին:

Արեւելահայ իրականութեան մէջ յայտնի հայկաբաններից էր Ռոստոմ Երզնկեանը, որ 1843-46՝ եղել է Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի հայկաբանութեան եւ պատմութեան ուսուցիչ, իսկ յետոյ անցել է ռազմական ծառայութեան: ԺԹ. դարի աւարտին յայտնի հայկաբան էր Կարապետ Կոստանեանցը: Նրա դասագրքերով - ինչպէս՝ *Նախաշաւիղը*[24], *Ծաղկաքաղ Արձակ Եւ Չափածոյ Բանից*[25] - երկար տարիներ հայերէն է դասաւանդուել Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում: Այս դասագրքերը գրաբարի ուսուցման գործնական եւ քերականական հմտութիւնների միակցում էին: Դրանց նպատակն էր՝ դասական շրջանի մատենագրական նիւթի հիման վրայ սովորեցնել գրաբարը, հոլովման եւ խոնարհման յարացոյցերը, թարգմանել բնագրերը եւն.: Պէտք է ասել, որ նշուած բոլոր դէպքերում «հայկաբան» տիտղոսը տրւում էր աւանդոյթի ուժով, մինչ ուսումնական հաստատութիւնների

հաստիքացուցակներում «հայկաբան» դասատու որեւէ տեղ չենք հանդիպել:

Նման բնութագիրը հիմք է տալիս ասելու, որ **ուսումնական հաստատութիւններում հայկաբանութեան դրսեւորում է համարուել հայեցի կրթութեան իրագործումը, որով կարեւորւում էր դասական հայերէնը՝ գաւառական կամ բարբառային կամ խօսակցական չմշակուած լեզուի փոխարէն:**

Հայկաբանութեան սահմանումը ներառում է նաեւ ԺԹ. դարի գրապայքարի արձագանգները, այն առումով, որ աշխարհաբարի կողմնակիցների մի մասը նոր լեզուն դիտում էր որպէս գրաբարին հասնելու միջանկեալ միջոց (նման հայեցակարգը խորթ չէր նաեւ Խաչատուր Աբովեանին), եւ ոչ թէ ինքնին պաշտպանում էին աշխարհաբարի շահերն ընդդէմ գրաբարի, քանզի չէր կարող (եւ թերեւս այժմ էլ չի կարող) որեւէ հայ գրագէտ գրաբարը ստորադասել կամ հակադրել աշխարհաբարին:

Հայկաբանութիւն եզրը աշխարհաբարի պաշտպանների եւ յատկապէս նրանց առաջամարտիկ Նազարեանցի մօտ գործածւում է նոր իմաստաւորմամբ: Այստեղ ի յայտ է գալիս մի նոր ըմբռնում**. հայկաբանութիւնը դառնում է բնութագիր կանոնակարգուած, ճշգրիտ աշխարհաբարի համար, որը զերծ է բարբառային տարաձեւութիւններից եւ առհասարակ բարբառայնութիւնից:** Իբրեւ նման լեզուական նմուշ Նազարեանցը գրում է (կամ թարգմանում) հսկայ մի աշխատութիւն՝ *Հանդէս Հայախօսութեան,* ուր հեղինակը հանդէս է գալիս կենդանի լեզուի՝ աշխարհաբարի հիմնաւորումներով: Գիրքը աշխարհաբարի նոր որակ է, մասամբ յայտնի է *Հիւսիսափայլի* լեզուից, ուր անխտիր բոլոր քերականական եւ շարահիւսական ձեւերը բերուած են միօրինակութեան, այդ թւում՝ *նորա, տեսանումէ* (օժանդակ բայը գրւում էր դերբային միացած), *ծայրերովը* (որոշեալ յօդ հոլովաձեւերի վրայ) եւն.[26]:

Ե.

Բազմաթիւ գրական յուշեր են պահպանուել հայկաբանութեան մասին: Յակոբ Պարոնեանը *Հոսհոսի Ձեռափետրը* երկում գրում է. «*Սփոյգ վիճակագրութեան մը*

նայելով՝ Պօլսոյ հայերն այսօր ունին երեք հազար չորս հարիւր գինետուն, երեք գրավաճառի խանութ, հազար երկու հարիւր պարի դասատու, հինգ հայկաբանութեան դասատու, երկու հազար զբօսարան, երեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր»[27]:

Շիրվանզադէի՝ Րաֆֆիին նուիրուած յուշերում մէկ-երկու պատառիկ է պահպանուել, որ հրաշալի բնութագրում է Րաֆֆիի ստեղծագործութեան, աշխարհաբարի մշակման բուռն ժամանակաշրջանում հին ու նոր լեզուի, դրա մաքրութեան հարցերը. «*Ես ցոյց կը տամ իմ լեզուն ծախ ու խուռ քննադատող պարոններին*,- ըստ Շիրվանզադէի ասում էր վիպասանն իր մասին,- *որ Րաֆֆին էլ գիտէ գրաբար, գուցէ ամէնից լաւ: Այդ մարդիկ չեն ուզում հասկանալ, որ ես իրենցից աւելի եմ հոգում լեզուի մաքրութեան մասին: Ինձ **հայկաբան** չեն համարում եւ կարծում են, որ հայկաբան լինելու համար անպատճառ պէտք է փքուն ոճով գրել: Չեն հասկանում, որ ժամանակակից մատենագիրը, մանաւանդ վիպասանը չէ կարող Մովսէս Խորենացիի բարբառը գործածել, թէեւ աշխարհաբարի վերածած*»: Ապա Շիրվանզադէն իր կողմից յաւելում է. «*Մեր գրականութեան մէջ իրենց հատուկտոր գրուածքներով սխոլաստիկները Րաֆֆիի հեգնութեան եւ ծաղրի մշտական առարկան էին: Նա վրդովւում էր, երբ մէկն ասում էր, թէ այդ մարդիկ հայոց լեզուի պաշտպաններն են: Նա յարձակւում էր նոյնպէս եւ այն մարդկանց վրայ, որոնք, յանուն հայկաբանութեան, հալածում են ամէն մի նորամուծութիւն հայոց կենդանի աշխարհաբարի մէջ*»[28]:

Ահա եւ հայկաբանութեան մէկ այլ բնութագրում.- **գեղարուեստական գրականութեան մէջ այն կիրառուել է՝ նշելու համար ճոռոմ, փքուն, վերամբարձ ստեղծագործողին եւ նմանատիպ ոճն ու գրուածքը:**

Ամփոփելով հայկաբանութեան բնութագրման մեր փորձը՝ պէտք է ասել թէ **ԺԷ. դարից ի վեր, որպէս գիտական եզր, գիտական եւ կրթական ոլորտներ մտած հայկաբանութիւնը, իր մէջ ամփոփում է միքանի շերտեր. այն լեզուի եւ դրա ուսուցման մասին պատկերացումների ամբողջութիւնն է, որ**

ներառում է դասական հայերէնի առանձնայատկութիւնները գիտականօրէն վերհանելու եւ մշակելու, դրանց հիման վրայ նոր բնագրեր ստեղծելու, հայերէնը եւ յատկապէս գրաբարը կանոնակարգելու, հայերէնի ներքին յատկանիշների հիման վրայ քերականութիւն մշակելու, հայկաբան (օտար ու խօսակցական շերտերից զերծ) հայերէն դասաւանդելու հարցադրումների ամբողջութիւնը:

Հայկաբանութիւնը, փաստօրէն, **լեզուագիտական եւ ուսումնական հոսանք է՝** լեզուի (յատկապէս՝ գրաբարի) գործածման ու զարգացման պատկերացումների ամբողջութիւն, որը մեծ չափով մատնանշեց, պայմանաւորեց հայերէնի մաքրման, մշակման, կանոնակարգման, զարգացման հունը: Հայկաբանութիւնն իբրեւ ուղեկից հոսանք մեծ դեր է խաղացել թէ՛ գրաբարի, թէ՛ աշխարհաբարի կատարելագործման հարցում: Իհարկէ՝ մեր մատնանշած հարցադրումները տարրալուծուած են եղել ԺԷ.-ԺԹ. դարերում հայերէնագիտութեան եւ հայ դպրոցի բոլոր ոլորտներում, եւ դրանք բոլորը մէկ՝ «հայկաբանութիւն» եզրի տակ միաւորելը կարող է վիճարկելի լինել: Սակայն իբրեւ ուսումնական եւ լեզուագիտական հոսանք եւ իբրեւ մեր ժողովրդի հոգեւոր ու մշակութային անտրոհելի բաղկացուցիչ՝ այդ հարցադրումները ուղեկցել են ԺԷ.-ԺԹ. դարերի ընթացքում, ուստի կարող ենք վերը նշուած բնութագրումների հիման վրայ միաւորել «հայկաբանութիւն» եզրի տակ:

Զ.

Եթէ փորձենք «հայկաբան» եզրը մեր մատնանշած բովանդակութեամբ տեղափոխել արդի ժամանակները, ապա պէտք է ասել, որ հայկաբանութիւնը, նշուած ընկալմամբ, կենսունակ է մեր օրերում, եւ վաղ է այն ամբողջովին պատմական եզր կամ պատմաբառ համարել: Դեռեւս շատ անելիքներ կան հայերէնագիտութեան ասպարէզում. հայկաբանութեան, լուծուած չեն դասական հայերէնի սահմանների եւ աղբիւրների ճշգրտման շատ գիտական խնդիրներ, որոնք պէտք է շարունակուեն մեծանուն հայերէնագէտների թողած ժառանգութեան կէտից:

Ուսումնասիրութեան են սպասում հայագիտական-հայկաբանական շատ հարցադրումներ, որոնցից բերում ենք միքանի կէտ.-

ա) տարբեր հեղինակների ու թարգմանիչների՝ իրենց գաւառներից ու հնարաւոր խօսուածքներից բերած ներդրումը դասական հայերէնի կազմաւորման եւ կանոնակարգման մէջ,

բ) հայերէնի՝ տարբեր ժամանակներում գոյութիւն ունեցած բարբառների ու համաժողովրդական լեզուի փոխյարաբերութեան հարցը,

գ) Ս. Գրքի տարբեր գլուխների եւ այլ աշխատութիւնների թարգմանիչների պարզումը՝ յենուելով Ե. դարի յայտնի հեղինակների երկերի լեզուական առանձնայատկութիւնների վրայ (անուանապէս յայտնի են Ե. դարի տասնեակ հեղինակներ՝ սկսած Մաշտոցից ու Պարթեւից, իրենց առաջին աշակերտներից[29]),

դ) հայերէնի լիակատար՝ բոլոր փուլերի եւ դրսեւորումների ընդգրկումով նոր բառարանի կազմումը, որը կ'ունենայ աւելի քան 250 հազար բառայօդուած:

Հայերէնագիտութեան արդի խնդիրների շարքը կարելի է շարունակել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Ստեփան Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հտր. Երրորդ, Հ.-Ո.*, Հրատ. Հայկական Մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2010, էջ 38:

[2] Ներկայացնենք «հայկաբանութիւն» եզրը բացատրող բառարանային մի քանի այլ տուեալներ. ա) Պետրոս Վրդ. Ճիզմէճեան, *Հայերէն Աշխարհաբար Լեզուի Լիակատար Բառարան* (Հալէպ, Տպ. Անի Ա. Էքմէքճեան, *Հտր. Բ.*, 1957)՝ «*Հայկաբանութիւն - 1. Հայագիտութիւն, 2. Հայ լեզուին յատուկ նախադասութիւններ, ոճեր, դարձուածքներ*»: «*Հայկաբան - շատ լաւ հայերէն գիտցող*»: բ) *Ժամանակակից Հայոց Լեզուի Բացատրական Բառարան, խմբ.՝ Գէորգ Ջահուկեան, Հտր. 3* (ԳԱ Լեզուի Ինստիտուտ, Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպ., 1974)՝ «*Հայկաբանութիւն - 1. Հայկաբան լինելը, գրաբար լեզուն լաւ իմանալը, 2. (հնց.) Ընդհր գրաբար լեզու*»: գ) Էդուարդ Աղայեան, *Արդի Հայերէնի Բացատրական Բառարան, Հտր. 1* (Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպարան, 1976)՝ «*Հայկաբանութիւն - 1. Ընդհր հայերէն (գրաբար) լեզու, 2. Հայերէնագիտութիւն, 3. Հայագիտութիւն*»:

[3] *Հայկական Սովետական Հանրագիտարան*, Հտր. 6, Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպ., 1980, էջ 167:

[4] ԺԷ. դարի անուանի հայ քերական, թարգմանիչ, հոգեւորական գործիչ Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցին (1635-1691) քերականական ու թարգմանական մի շարք գրքերի հեղինակ է, որոնք տպագրուել են Կ.Պոլսում եւ Վենետիկում: Նրա *Պարզաբանութիւն Հոգենուագ Սաղմոսացն* (1687) գիրքը աշխարհաբարի նոր որակ է:

[5] Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցի, *Ձփութիւն Հայկաբանութեան Կամ Քերականութիւն Հայկական*, Հռոմ, Տպ. Ուրբանեան, 1674, էջ 3:

[6] Մխիթար Սեբաստացի, *Քերականութիւն Գրաբառի Լեզուի Հայկազեան Սեռի*, Վենետիկ,Տպ. Բատիստա Ալբրիցի Ջերոլիմոյի, 1730:

7 *Աստուածաշունչ Գիրք Հնոց եւ Նորոց Կտակարանաց*, Հրատ. Մխիթար Սեբաստացու, Վենետիկ, Տպ. Անտոնի Բորտոլիի, 1733:

[8] Մխիթան Սեբաստացի, *Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. Ա-Բ*, Վենետիկ, Տպարան Անտոնի Բորտոլիի, 1749-1769:

[9] Անտոն Կովդին, *Փիլիսոփայութիւն*, թարգմ. Վրթանէս Ասկէրեանի, *Հտր. Ա*, Վենետիկ, Տպ. Ստեֆանօ Օրլանդոյի, 1750:

[10] Հ. Ներսէս Ակինեան, *Դասական Հայերէնն եւ Վիեննական Մխիթարեան Դպրոցը*, Վիեննա, Տպ. Մխիթարեան, 1932, էջ 143:

[11] *Բոսուեայ Եպիսկոպոսի Խօսք Վասն Տիեզերական Պատմութեան*, թարգմ.՝ Յովհաննէս Մուրատեանց, Վիեննա, Տպ. Ի Վանս Պ.Ս. Աստուածածնի, 1841:

[12] Հ. Մատաթիա Գարագաշեան, *Նկարագիր Ուսմանց*, Վիեննա, Տպ. Պաշտպան Ս.Աստուածածնի Վանքի, 1845, էջ 28:

[13] Ե. դարի եւ յետագայի գրաբարում խօսակցական տարբերակների գոյութեան մասին պահպանուել են մատենագրական բազմաթիւ փաստեր (Նորայր Պօղոսեան, «Սուրբ Գրքի Բարբառային Եւ Աշխարհաբարեան Պատառիկներ», *Էջմիածին*, 2011, թիւ Ա.):

[14] Արսէն Այտընեան, *Քննական Քերականութիւն Աշխարհաբար Կամ Արդի Հայերէն Լեզուի*, Վիեննա, Տպ. Մխիթարեան, 1867, էջ 52:

[15] Ակինեան, *Դասական Հայերէնը,* էջ 53:

[16] Մաշտոցեան Մատենադարանի թ. 5994 եւ այլ ձեռագրերը:

[17] Լէօ, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցի (1838-60 թթ.)*, Թիֆլիս, Տպ. Ն. Աղանեանի, 1914, էջ 443:

[18] Տե՛ս օրինակ՝ Մուշեղ Սանթրոսեան, *Արեւելահայ Դպրոցը XIX Դարի Առաջին Կէսին*, Երեւան, Տպ. Հայպետուսմանկհրատ, 1964, էջ 85:

[19] Արտաւազդ Իգնատեան, *Լազարեան Ճեմարան*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1969, էջ 40:

[20] Միքայէլ Սալլանթեանց, *Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայոց,* Տպ. Օգոստոս Սեմենի, Մոսկուա, 1827: Յետագայում Սալլանթեանցը այս դասագրքի հիման վրայ ստեղծեց համառօտ տարբերակը՝ *Համառօտութիւն Փոքր Քերականութեան Գրաբառ Լեզուի Հայոց*, որ տպագրուեց Շուշիում 1833ին:

[21] Մուշեղ Սանթրոսեան, *Ներսիսեան Դպրոցի Պատմութիւն*, Երեւան, Տպ. Լոյս, 1981, էջ 49:

[22] Լէօ, էջ 204:

[23] «Մահացուցակ», *Հիւսիսափայլ*, 1858, N 2, էջ 144:

[24] Կարապետ Կոստանեանց, *Նախաշաւիղ*, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1905:

[25] Կարապետ Կոստանեանց, *Ծաղկաքաղ Արձակ եւ Չափածոյ Բանից*, Մոսկուա, Տպ. Ք. Բարխուդարեանի, 1915:

[26] Տե՛ս՝ Ստեփաննոս Նազարեանց, *Հանդէս Հայախօսութեան*, Մոսկուա, Տպ. «Լազարեանց քաջափայլ պարոններ», 1857:

[27] Յակոբ Պարոնեան, «Հոսհոսի Ձեռատետրը», *Երկեր*, թ. 1 տպարան, Երեւան, 1954, էջ 335:

[28] *Րաֆֆին Ժամանակակիցների Յուշերում*, բնագրերը պատրաստեց եւ ծանօթ. Խաչիկ Սամուէլեան, խմբ.՝ Պիոն Յակոբեան, Երեւան, ԳԱ Հրատ., 1986:

[29] Հայագիտութեան մէջ Մեսրոպ-Սահակի աշակերտների ու հետեւորդների գործունէութիւնը ոչ-ամբողջութեամբ է բացայայտուած: Արդէն Ե. դարի աղբիւրներում պահպանուել են մօտ 30 անուն.- *Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Յովսէփ Հողոցմեցի, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Արձան Արծրունի, Ղեւոնդ Վանանդեցի, Տիրայր Խորձենացի, Մուշէ Տարօնեցի, Տէր Կայենացի, Մուշէ Արծրունի, Անանիա Սիւնեցի, Դանան Եկեղեցացի, Ենովք Սպերցի, Մուշեղ Բալասական, Յովնաթան Սիւնի, Բենիամին Աղուանցի, Սամուէլ Տաշրացի, Գնիթ Դերջանցի, Տիրուկ Զարիշատցի, Աղան Արծրունի, Երեմիա Վաղարշապատցի, Թաթիկ Բասենցի, Սահակ Ռշտունի, Մուշէ Աղբակեցի, Գիւտ, Եղիշէ, Մովսէս Խորենացի, Դաւիթ Ներգինացի Անյաղթ*:

THE PERCEPTION OF "HAYKABANUTYUN" IN THE ARMENIAN SCIENTIFIC AND EDUCATIONAL SPHERES (17-19TH CENTURIES)

(Summary)

NORAYR POGHOSYAN
nornor@mail.ru

The term "Haykabanutyun" often come across in scientific literature and fiction. The concept of "Haykabanutyun", however, hasn't been defined so far and we cannot explain what did Haykabanutyun/Haykaban specifically mean.

The author tackles this concern in this article, based on diverse dictionaries and other sources. He argues that though the term maintained a broad sense, it was used with various connotations in different periods and by different scholars.

Eventually, he combines the diverse sets of meanings and presents the reader with some of its characteristic objectives. -

a. to prevent the Armenian language from the impact of Latin and maintain its purity.

b. to use only the 5th century classic Grabar (Old Armenian) words, and grammatical expression.

c. to make the Armenian language more perfect and artistic based on te 5th century linguistic achievements.

d. to spread Armenian education in educational institutions.

e. to avoid the influence of other languages and dialects on the Armenian language.

Those who had adopted such a policy were called 'Haykaban"s.

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՔԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ (ԺԸ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ-ԺԹ. ԴԱՐԱՍԿԻՁԲ)

ԱՐՄԱՆ Մ. ՄԱԼՈՅԵԱՆ
armanmaloyan@mail.ru

Պատմական Հայաստանի հնագոյն բնակավայրերից ու քաղաքներից էր Վասպուրական աշխարհի Նախճաւան Գաւառի կենտրոն Նախճաւան կամ Նախիջեւան քաղաքը: Միջնադարում այն բաւականին բազմամարդ ու վաճառաշահ քաղաք էր:

Նախիջեւանը Հայաստանի միւս քաղաքների նման բազմիցս ենթարկուել է կողոպուտի ու աւերածութիւնների՝ պարսիկների, արաբների, սելջուկ-թուրքերի արշաւանքների ու նուաճումների ժամանակաշրջանում: 1220ականներին Նախիջեւանն աւերուեց Խորեզմի շահ Ջալալ Ադ Դինի, մինչեւ ԺԵ. դարի սկիզբը՝ մոնղոլների, ԺԵ.-ԺՋ. դարերում, կարակոյունլու եւ ակկոյունլու քոչուոր ցեղերի հրոսակների կողմից: Այդ աւերածութիւնների ու թալանի հետեւանքով քաղաքը կորցրեց իր երբեմնի նշանակութիւնը եւ վերածուեց մի սովորական բնակավայրի: Իրավիճակը չփոխուեց նաեւ յետագայում, երբ այն անցաւ Սեֆեան Պարսկաստանի տիրապետութեան տակ: 1604-1605ին Շահ Աբաս Ա.ի կազմակերպած բռնագաղթին ենթարկուեցին նաեւ Նախիջեւանի հայերը, որոնց հիմնական մասը բնակեցուեց Պարսկաստանի Ֆահրաբադ քաղաքում: ԺԷ. դարում Նախիջեւանը դարձաւ Պարսկաստանի կազմում ստեղծուած նոյնանուն խանութեան կենտրոնը եւ այդպիսին մնաց մինչեւ Թուրքմէնչայի պայմանագրի ստորագրումը (1828 Փետրուարի 10), երբ միացուեց Ռուսաստանին:

Միջազգային նշանակութիւն ունեցող տարանցիկ առեւտրի քարաւանային գլխաւոր ճանապարհներից մէկն անցնում էր Նախիջեւանի վրայով, եւ նրա մերձակայ հայկական բնակավայրերը ներգրաւուած էին այդ շահաբեր առեւտրի մէջ: Այդ բնակավայրերի վաճառականները, որոնք առեւտրական կապեր ունէին տարբեր երկրների հետ, գիտէին օտար լեզուներ, ու տեղեակ էին տարբեր ժողովրդների նիստուկացին,

վարքուբարքին, նշանակալից դեր էին խաղում միջազգային ապրանքափոխանակութեան մէջ: Բնական է, որ այսպիսի միջավայրում պարարտ հող էր նախապատրաստուել Եւրոպայից Արեւելք ուղարկուած քարոզիչների գործունէութեան համար, մանաւանդ որ միսիոնէրները չէին զլանում խոստումներ շռայլել այլահաւատ տիրապետողների լծի տակ հեծող հայ ժողովրդին՝ եւրոպական երկրների ռազմական օժանդակութեամբ ազատագրուելու հնարաւորութիւնների մասին[1]:

Կաթոլիկ միսիոնէրների ներթափանցումն Արեւելեան Հայաստան սկսուել էր դեռեւս ԺԴ. դարում եւ կապուած էր Դոմինիկեան Միաբանութեան կրօնաւորների անուան հետ: Հռոմի Յովհաննէս ԻԲ. պապի յատուկ կոնդակով 1318ին Ֆրանչիսկեան եւ Դոմինիկեան միաբանութիւնների միջեւ քարոզչական գործունէութեան շրջանների վերաբաժանում կատարուեց: Դոմինիկեաններն այդ կոնդակի թելադրանքով ստեղծեցին մի նոր արքեպիսկոպոսական թեմ, որի կենտրոնը Սուլթանիա քաղաքն էր[2]: Արեւելեան Հայաստանի տարածքում հաստատուած Դոմինիկեան Միաբանութեան կենտրոնը Քռնայի Սուրբ Աստուածածին վանքն էր: Միաբաններն իրենք իրենց անուանում էին Միաբանող (Ունիթոր) Եղբարք[3]:

Միսիոնէրների աշխուժ գործունէութեան հետեւանքով ԺԷ. դարի սկզբին Նախիջեւանում բազմապատկուեց հայ կաթոլիկ համայնքը, որն ունէր տասը գործող եկեղեցի[4]: Համայնքը իր մեծագոյն ծաւալման շրջանում հինգ գաւառ կամ թեմ ունէր եւ յիսուներկու վանք[5]: Ըստ Նախիջեւանի Գաւառի հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601ի զեկուցագրի՝ գաւառում կար մօտ 1780 տուն կամ 19,400 հոգի հայ կաթոլիկ բնակչութիւն[6], որ տեղաբաշխուած էր հետեւեալ բնակավայրերում. Նախիջեւան քաղաք (80 տուն), Ապարաներ (500 տուն), Ապրակունիս (100 տուն), Քռնա (70 տուն), Սալթաղ (120 տուն), Խոշկաշէն (130 տուն), Մեծշէն (50 տուն), Գանձակ (70 տուն), Շահապունիք կամ Շահապունիս (150 տուն), Ճահուկ կամ Ջահուկ (50 տուն), Ղարաղուշ (50 տուն), Մակուի շրջանի Կէձուկ եւ Արդախ (Արտազ) գիւղերում՝ համապատասխանաբար՝ 60 եւ 30 տուն:

Յետագայում, սակայն, գաւառի հայ կաթոլիկ բնակչութիւնը նուազեց. դա հետեւանք էր թուրք-պարսկական պատերազմների եւ Շահ Աբաս Ա.ի կազմակերպած բռնագաղթի: Թէեւ յետոյ Հռոմի պապի եւ եւրոպական տէրութիւնների միջամտութեան շնորհիւ Շահը թոյլատրեց հայ կաթոլիկներին վերադառնալ իրենց նախկին բնակութեան վայրերը: Սակայն իրենց թալանուած ու աւերուած օջախներ վերադարձաւ հայ կաթոլիկների փոքրաթիւ մասը:

1616ին Հռոմից ուղարկուած Ա. Մարիա Չիտտադինոյի կազմած զեկուցագրի համաձայն՝ Նախիջեւանի բոլոր գիւղերում հաշււում էր մօտ 305 կաթոլիկ ընտանիք[7]:

Ըստ 1654ին հայր Դոմինիկոս Նազարեանի կազմած վիճակագրութիւն-զեկոյցի՝ կաթոլիկ հայերը տեղաբաշխուած էին այսպէս. Ապարաներ (150 տուն), Ապրակունիս (30 տուն), Քռնա (2 տուն), Սալթաղ (3 տուն), Խոշկաշէն (60 տուն), Գանձակ (1 տուն), Շահապունիս (35 տուն), Ճահուկ (100 տուն), Ղարաղուշ (4 տուն), Կէծուկ (9 տուն)[8]:


Կաթոլիկ, ինչպէս նաեւ առաքելական հայերի թուաքանակի անկմանը նպաստում էր «Իմամ Ջաֆարի» անունով յայտնի օրէնքը, որի համաձայն՝ մահմեդականութիւն ընդունած նախկին քրիստոնեան իրաւունք էր ստանում ամբողջութեամբ ժառանգելու իր քրիստոնեայ ազգակիցների ամբողջ ունեցուածքը՝ անկախ ազգակցութեան աստիճանից[9]: Նշենք, որ կաթոլիկ հայերի շրջանում աւելի յաճախակի էին մահմեդականութիւն ընդունելու դէպքերը[10]: Թէեւ վկայութիւններ կան, որ մահմեդականացած հայերին երբեմն թոյլատրուել է վերադարձ դէպի քրիստոնէութիւն[11], սակայն դրանք եզակի դէպքեր էին:

Որպէս դաւանափոխութեան դրսեւորում՝ ատենի կաթոլիկացումը պետութիւն չունեցող հայութեան համար ուղղակի կորստաբեր էր եւ իր անջատողական նկրտումներով հայ ժողովրդի մի որոշակի հատուած խորթացնում, կտրում-անջրպետում էր իր եկեղեցուց ու աւանդոյթներից, մայրենի լեզուից: Դրանով իրական սպառնալիք էր ստեղծւում այդ հատուածի ազգային-կրօնական դիմագիծը խեղելու եւ արագօրէն ուծացման ենթարկելու համար:

Սակայն կաթոլիկ միսիոնէրների եւ նրանց հայ հետեւորդների գործունէութիւնը ունեցաւ նաեւ դրական հետեւանքներ, մասնաւորապէս՝ մշակութային համագործակցութեան ձեւաւորման ու գիտամշակութային կապերի զարգացման գործում: Արեւելք ուղարկուած կաթոլիկ քարոզիչներն ու նրանց հայ հետեւորդները, իրենց դիրքերը տեսականօրէն ու գաղափարապէս ամրապնդելու մտասեւեռումով, ծաւալեցին մշակութային, գիտական ու գրական աշխուժ գործունէութիւն, ստեղծեցին թարգմանական ու ինքնուրոյն արժէքաւոր ծիսական-հոգեւոր գրականութիւն, իմաստասիրական, բնագիտական ու պատմագրական երկեր[12]: Հայերին քաղաքակիրթ Եւրոպայի գիտական ու մշակութային նուաճումներին հաղորդակից դարձնելուն, լատիներէնով կրթական-լուսաւորական գործը տարածելուն նպաստեց նաեւ 1632ին Նախիջեւանում (Ապարաներում) հիմնադրուած կաթոլիկական դպրոցը:

ԺԷ. դարի վերջերից, չնայած Հռոմի ու եւրոպական կաթոլիկ տէրութիւնների օգնութեանը, ակներեւ էին Նախիջեւանի Գաւառի հայ կաթոլիկ համայնքների թուլացումն ու անկումը: Պարսկական իշխանութիւնների պարտադրած բազմապիսի ծանր հարկերն ու տնտեսական բնոյթի հարկադրանքները, ինչպէս նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հակազդեցութիւնը յանգեցրին հայ միարարների կրօնափոխութեանը կամ արտագաղթին: Կաթողիկոս Ղազար Ջահկեցին գրում է. «*Նմանապէս ի յերկիրն Նախջուանայ ախթարմայից (դաւանափոխների - Ա.Մ.) գիւղօրայքն բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ, Քռնայ... եւ Կէծուկ, սոքա ամէնեքեան, իսկ Ապրակունիս, եւ Շահբունիս, եւ Խոշկաշէն եւ Ապարաներ, որ է եպիսկոպոսարան իւրեանց, սոցա մեծ մասն...* »[13]: ԺԷ. դարի վերջից սկսուել էին Նախիջեւանի հայ կաթոլիկների զանգուածային արտագաղթեր դէպի Փոքր Ասիա՝ Բուրսա, Իզմիր, Կ.Պոլիս եւ այլ քաղաքներ, իսկ այնտեղից էլ՝ Եւրոպա: Այս պնդման ապացոյցներից են Կ.Պոլսից, Թիրայից, Իզմիրից Հռոմ ուղարկուած խնդրագրերը ստորագրողների անունները[14], ինչպէս նաեւ նախիջեւանցի հայ կաթոլիկների տապանաքարերի մեծ քանակութիւնը Իզմիրում եւ շրջակայքում[15]: Եթէ դեռ ԺԷ. դարի կէսերին աղբիւրները Նախիջեւանի Գաւառում յիշատակում են

5000–7000 հայ կաթոլիկներ, ապա արդէն ԺԸ. դարի սկզբին նրանց թիւը չէր անցնում միքանի տասնեակից[16]:



Հարկադրանքները, հետապնդումներն ու արտագաղթերը, ի վերջոյ, յանգեցրին գաւառի հայ կաթոլիկ բնակչութեան թուաքանակի նուազմանը, իսկ ԺԸ. դարի կէսերից նաեւ համայնքի կենսագործունէութեան դադարեցմանը: Վերջին հարուածը հասաւ թուրք-պարսկական բախումների հետեւանքով: Յատկապէս աղէտալի էր 1752ին Ազատ խանի կողմից Նախիջեւանի հայկական գիւղերի աւերման եւ բնակչութեան գերեվարման դրուագը:

Աւելի ուշ շրջանի հեղինակներն ու եւրոպացի ճանապարհորդները հետաքրքիր եւ արժէքաւոր տուեալներ են հաղորդում Նախիջեւանի մասին: ԺԸ. դարի վերջին քառորդի ֆրանսիացի հեղինակ Լ.-Ֆ. Ֆերիէր–Սովբէֆը[17] գրում է. «*Նախիջեւանը, որ տարեգիրները նշում են որպէս այն վայրը, ուր Նոյը հաստատուեց ջրհեղեղից յետոյ, բաւական մեծ քաղաք է,*

համարեա աւերուած Նադիր շահից յետոյ, մեփաքսի եւ բրդի մեծ առեւտուր է այնտեղ կատարւում, քարաւանները յաճախ անցնում են այնտեղով. բնակիչները բոլորը քրիստոնեայ են, Հռոմի միսիան այնտեղ ունի կիսաւեր դոմինիկեան մենաստան. կաթոլիկների թիւը գերազանցում է հայերին, եւ ժամասացութիւնը կատարւում է ոչ թէ լատիներէնով, այլ ժողովրդական լեզուով [հայերէն]»[18]: Ըստ Ղուկաս Ինճիճեանի՝ Նախջեւանը կամ Նախջուանը պարսպապատ քաղաք էր եւ «*Յառաջին ժամանակս էր սա մի ի մեծամեծ եւ ի բազմամարդ քաղաքաց. այլ այժմ անշքացեալ կայ առաջին բարեզարդութենէ իւրմէ ի պատճառս պէսպէս առմանց եւ աւերմանց ի յաղուանից (աֆղաններից - Ա.Մ.) ի ժամանակս եւ զկնի մահուան Դահմաս գուլի խանին*[19] *պարսից. յորում ժամանակի անհնարին զրկանս եւ աղէտս կրեցին բնակիչքն որպէս լուաք յականատես ծերունեաց՝ որք գտան անդէն:*

Յառաջագոյն պատմեն լինել անդէն տունս իբր 30000. բայց այժմ չիք ի նմա 7000, որք ըստ մեծի մասին պարսիկք են, եւ մնացեալքն յազգէս հայոց. լի են ի նմա աւերակք պէսպէս շինուածոց եւ մզկթաց... »[20]: Իսկ Ալիշանը *Սիսականում* գրում է. «*Յայս սակս յոյժ սփորանկեալ է քաղաքն ի նախկին բարգաւաճանացն եւ ի բազմութենէ բնակչաց, որ արդ չեն աւելի քան զ7000, երկու մասն այլազգի՝ Թաթար եւ Պարսիկ, եւ մի՝ Հայ*»[21]*:* 1807-1809՝ Արեւելքում ճանապարհորդած Տրապիզոնի ֆրանսիական հիւպատոս Ա. Դիւպրէն, նշելով քաղաքի կիսաւեր վիճակի մասին, գրում է, որ բնակիչների թւում հաշււում են յիսուն ընտանիք հայ հերձուածող[22]: 1814ին Նախիջեւանում գտնուող ուղեգիր Ջէյմս Մորիերը գրում է, որ քաղաքն ունի մօտաւորապէս 2000 բնակիչ, սակայն քաղաքը երկար ժամանակից իվեր քայքայուած է եւ շարունակում է քայքայուել[23]: 1812ին Նախիջեւանով անցած ուղեգիր Ֆրէյգանը գրում է. «*Նախիջեւանը մի մեծ վայր է, որ յաճախ ենթակայ է եղել աւերումների: Պարսիկ պատմաբանները հաստատում են, թէ նախապէս այնտեղ կար տասը հազար տուն... Նախիջեւանը շատ քիչ բան ունի իր նախկին փառքից*»[24]: Նոյն թուականին քաղաքում եղած անգլիացի ուղեգիր Ուիլիըմ Աուզլէյը եւս վկայում է, որ նախկինում ընդարձակ այս քաղաքը «*բաղկացած է*

աւերակներից, որոնց մէջ կան հիանալի տների մնացորդներ»[25]: Միքանի տարի անց (1817) քաղաք այցելած ուղեգիր Մորից Կոցեբիուն նշում է, որ քաղաքն ու շրջակայքն այնքան ամայի են, որ հնարաւոր չէ նկարագրել, ապա յաւելում. «*Իր նախկին բարգաւաճ օրերում, ասում են, թէ երեսուն հազար տուն ունէր, բայց այժմ հազիւ թէ այս թուի մէկ-երրորդը մնում է*»[26]: Նոյն թուականին քաղաք այցելած ուղեգիր Ջ. Ջոնսոնը գրում է. «*Նախիջեւանում տեսնում են շատ ընդարձակ մի քաղաքի մնացորդները, նկատելի՝ ամրութիւնների, քարւանսարաների եւ մինարէթների աւերակներից: ...Թւում է, թէ ներկայ քաղաքը կանգնած է հնի վրայ, որ պարզ երեւում է շէնքերի մէջ նկատելի փոսերից, կամարներից եւ պատերի բեկորներից*»[27]: Իսկ 1817–1820ին ճանապարհորդած Ռոբըրտ Քէր Փորտըրը քաղաքի մասին գրում է. «*Նախապէս դա բաւական մեծ քաղաք էր, բայց պատերազմի աւերները փոքրացրել են ամէն տեսակէտից... Նրա ներկայ նուազած շրջագծի շուրջը գտնւում են մեծ տարածութեամբ աշտարակների, մզկիթների, տների եւ այլ աւերակները, որոնք երբեմն նրա պարիսպներից ներս էին [գտնւում]: Նոյնիսկ երբ քաղաքին մօտեցանք, անցնում էինք բոլորովին կործանուած անբնակ տեղերից, մինչեւ ներկայ մուտքին հասնելը: ...դա (Նախիջեւանը - Ա.Մ.) շատ յաճախ զոհուել է պայքարող բանակների*»[28]:

Այսրկովկասի միքանի խոշոր քաղաքներում հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ ուշագրաւ տուեալներ է հաղորդում Պիոտր Բուտկովը: Նա, խօսելով 1780ականներին Գրիգորի Պոտիոմկինի՝ Ասիայում քրիստոնէական պետութիւն ստեղծելու նախագծի մասին, գրում է, որ այդ ժամանակաշրջանին վերաբերող տեղեկութիւնների համաձայն՝ Նախիջեւանում կար 500 տուն հայ բնակչութիւն[29]: Այսրկովկասի խոշոր քաղաքներից Շամախին եւ Բաքուն, որոնք աւելի բարենպաստ պայմաններում էին եւ աւելի քիչ էին ենթարկւում յարձակումների, ըստ Ու. Լեւիատովի, ունէին՝ Շամախին՝ 10,000 (ԺԸ. դարի վերջին) եւ Բաքուն՝ մօտ 5000 (1810ին) բնակչութիւն: Հետեւաբար, Նախիջեւանի ամբողջ բնակչութեան թիւը մօտ 5000 էր: Մէկ այլ վիճակագրական տեղեկութեան համաձայն՝

ԺԹ. դարասկզբին Նախիջեւանում կար ընդամէնը 700 տուն բնակչութիւն[30]:

Համադրելով բերուած հաղորդումները՝ գտնում ենք, որ բոլոր հեղինակները համակարծիք են, թէ Նախիջեւանը նախկինում աւելի մեծ, բարգաւաճ ու բազմամարդ քաղաք էր, քան յետագայում՝ ԺԸ. դարավերջին եւ ԺԹ. դարասկզբին: Իսկ ինչ վերաբերում է Նախիջեւան քաղաքի բնակչութեան թուաքանակի մասին նշուած հակասական ու իրարամերժ տուեալներին, ապա գտնում ենք, որ Ինճիճեանի հաղորդած 7000ը պէտք է հասկանալ ոչ թէ տուն, այլ՝ շունչ: Հայ բնակչութեան թուաքանակի մասին տուեալներում իրականութեանն աւելի մօտ է թուում Ալիշանի հաղորդածը. այսինքն՝ թէեւ քաղաքի ամբողջ բնակչութեան մէկ-երրորդն են կազմել հայերը, սակայն, առանձին վերցրած, հայերի թիւը գերազանցել է ե՛ւ թաթարների, ե՛ւ պարսիկների թուին: Միաժամանակ հաւանական ենք համարում, որ Դիւպրէի հաղորդած «յիսուն տուն» բնակչութիւնը ոչ թէ առաքելական հայերի թուաքանակն է, այլ կաթոլիկ հայերի: Նախիջեւանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ տուեալներում չափազանցութիւն է Կոցեբիւի հաղորդածը (մօտ 10000 տուն) եւ ակնյայտօրէն քիչ՝ Մորիէրի հաղորդածը (2000 բնակիչ): Աւելի արժանահաւատ է թուում Բուտկովի տեղեկութիւնը, որի համաձայն՝ 1780ականներին Նախիջեւանի հայ բնակչութեան թիւը մօտ 3000 էր, եւ քանի որ այդ ժամանակաշրջանին վերաբերող տուեալներով Նախիջեւան քաղաքում կաթոլիկ հայերի թիւը միքանի տասնեակից չէր անցնում, հետեւաբար այդ 3000 հայերի ճնշող մեծամասնութիւնը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ էին: Այսպիսով՝ Ֆերիէր-Սովբէֆի այն տեղեկութիւնը, թէ Նախիջեւանում «*...բնակիչները բոլորը քրիստոնեայ են... կաթոլիկների թիւը գերազանցում է հայերին*», իրականութեանը չէր համապատասխանում:

Նախիջեւանի հայերը դարեր առաջ աշխուժ առեւտրական կապեր ունէին Ռուսաստանի եւ Եւրոպայի քաղաքների վաճառականների հետ եւ Եւրոպայի ու Ասիայի միջեւ տարանցիկ առեւտրում կարեւոր մասնակցութիւն ունէին: Պարսկական տիրապետութեան տարիներին Նախիջեւանը տարանցիկ

առեւտրում ունեցած իր կարեւոր դերը որոշ չափով պահպանում էր, թէեւ տարանցիկ քարաւանային առեւտուրը Արեւմուտքի հետ կորցրել էր իր նախկին նշանակութիւնը: Արեւելեան Հայաստանը Ռուսաստանի կազմի մէջ մտնելուց առաջ (1827ին) Նախիջեւան քաղաքի բնակչութեան թիւը 4360 էր, իսկ 1831ին քաղաքի բնակչութեան թիւը հասաւ 5470ի[31]: Ռուս-պարսկական (1826-1828) պատերազմից յետոյ կազմակերպուած պարսկահայերի վերաբնակեցման արդիւնքում Նախիջեւան քաղաքում բնակութիւն հաստատեց 265 հայ ընտանիք (1110 բնակիչ)[32]: Պարսկահայերի վերաբնակեցման շնորհիւ քաղաքը սկսեց տնտեսապէս բարգաւաճել, աշխուժացաւ արհեստագործութիւնն ու առեւտուրը: Քաղաքի բնակչութեան մեծ մասը ներգրաւուած էր արհեստագործութեան եւ գիւղատնտեսութեան մէջ: Արտահանում էին բազմատեսակ արհեստագործական ապրանքներ եւ գիւղմթերքներ, յատկապէս՝ բամբակ, խաղող, գարի, կտաւատ եւ կտաւատի ձէթ[33]: Քաղաքը յայտնի էր նաեւ իր գորգերով եւ գեղեցիկ մետաքսեայ ջեջիմներով[34]:

Ինչ վերաբերում է Ֆերիէր-Սովբէֆի տեղեկութեան, թէ Նախիջեւանում «*ժամասացութիւնը կատարւում է ոչ թէ լատիներէնով, այլ ժողովրդական լեզուով [հայերէն]*», ապա նշենք, որ Մ. Ուդենրիյնը, խօսելով դոմինիկեանների՝ լատինաճէս ժամասացութիւնը տարածելու եռանդի մասին, գրում է, որ նրանք այն «*մինչեւ ԺԸ. դարուն կէսերը պահեցին*»[35]: Այս խնդրի վերաբերեալ արժէքաւոր վկայութիւններ կան Ալիշանի մօտ. նա յիշատակում է Յ. Բարբարոյի այցելութիւնը Ջահուկ (1477ին) եւ մէջբերում նրա խօսքերը Երնջակի դոմինիկեանների մասին. « *...պատարագեն ըստ մերս ծիսի, այլ իւրեանց լեզուաւ...* »[36]: Այնուհետեւ Ալիշանը մէջբերում է Նախիջեւանի միարարներին այցելած վենետիկցի անանուն վաճառականի հետեւեալ խօսքերը. « *...զպաշտօնն կատարեն ի հայ լեզու, զի մոռացեալ են զիտալականն...* »[37]: Այս վկայութիւնները հաստատում են Ֆերիէր-Սովբէֆի տեղեկութեան ճշմարտացիութիւնը. այսինքն, Նախիջեւանի դոմինիկեանները ժամասացութիւնը թէեւ կատարում էին լատինական ծէսով, սակայն ժամասացութեան լեզուն հայերէնն էր: Դրա պատճառը, սակայն, վանականների՝ իտալերէնը մոռացած լինելը չէր, այլ դա աւելի հեռահար

նպատակ էր հետապնդում. այն է՝ ժամասացութիւնը տեղաբնիկների մայրենի լեզուով կատարելու միջոցով բազմապատկել իրենց դաւանակիցների թուաքանակը:

Սակայն 1800ականներից սկսած՝ Նախիջեւանի բնակչութեան ժողովրդագրական պատկերը սկսեց փոխուել: Մահմեդական տարրը (թաթարներ, նաեւ պարսիկներ, քրդեր) աճի աւելի բարձր ցուցանիշներ արձանագրեց: ԺԹ. դ. վերջերին Նախիջեւանում մահմեդականները կազմում էին ամբողջ բնակչութեան մինչեւ 40-50%ը: Հակառակ դրան՝ 1900-1926ին շեշտակիօրէն սկսեց կրճատուել ու նուազել հայ բնակչութեան թիւը: Եթէ նախկինում հայերը կազմում էին ընդհանուր բնակչութեան թուի 40-50%ը, ապա 1960ականներին, Խորհրդային Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականութեան արդիւնքում, հայերի թուաքանակը զգալիօրէն կրճատուեց՝ կազմելով ամբողջ բնակչութեան մօտ 10-12%ը: Յետագայում եւս շարունակուեց Նախիջեւանի հայաթափումը, եւ օրէցօր նուազող նախիջեւանահայութիւնը (Նախիջեւանի ԻՀ բնակչութեան մօտ 2%ը) վերջնականապէս տեղահան արուեց եւ բռնագաղթեցուեց 1989ին[38]: Այդպիսով, Հայաստանի այս բնաշխարհն առժամանակ զրկուեց բնիկներից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Յովհաննէս Քռնեցի, *Յաղագս Քերականին*, բնագիրը հրատարակութեան պատրաստեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1977, էջ 28:

[2] Նոյն, էջ 21-221 Սուլթանիա կամ Սուլթանիէ քաղաքը գտնւում էր Ատրպատականում, Իրան:

[3] Հայր Սահակ Կոգեան, *«Հայոց եկեղեցին» Մինչեւ Փլորենտեան Ժողովը*, Պէյրութ, [ա.տ.]շ 1961, էջ 482:

[4] Ա. Վ. Բայբուրդեան, «XVII Դարում Արեւելեան Հայաստանում Կաթոլիկ Միսիոնէրների Գործունէութեան Պատմութիւնից», *Պատմաբանասիրական Հանդէս*, N 2, 1989, էջ 148:

[5] Մ. Ուդենրիյն, «Համառօտ Ակնարկ Մը Քարոզող Եւ Միաբանող Եղբարց Պատմութեան Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, N 1, 1922, էջ 21:

[6] Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 1893, էջ 387. նաեւ՝ Հ. Սահակ Ճեմճեմեան, *Նախիջեւանի Հայոց Վարժարանը Եւ Հոմը*, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 2000, էջ 7. նաեւ՝ Տ. Հ. Յակոբեան, «Հայերի Պայքարը Կաթոլիկական Միսիաների Ասիմիլիատորական Ձգտումների Դէմ Իրանում

(XVII-XVIII դդ.)», *Արեւելագիտական ժողովածու, Հտր. I*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960, էջ 267:

[7] Ճեմճեմեան, էջ 8:

[8] Ալիշան, *Սիսական*, էջ 387:

[9] Այս օրէնքի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Մ. Կարապետեան, ««Իմամ Ջաֆարի» Օրէնքը Եւ Արեւելահայերը (XVII-XVIII Դարեր)», *Պատմաբանասիրական Հանդէս*, N 1, 1988, էջ 219-221:

[10] 1657 Յուլիսի 28ին Նախիջեւանի արքեպիսկոպոս Պօղոս Փիրոմալլին հաղորդում է, որ, համաձայն «Իմամ Ջաֆարի» օրէնքի, Քոնա եւ Սալթաղ գիւղերից 130 ընտանիք, իրենց ունեցուածքից չզրկուելու համար, դարձան մահմեդական, Ապարաներից 60 ընտանիք եւս «թուրք» դարձաւ: 1674 Մարտի 24ին Մատթէոս Աւանիսենց արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ Գանձակ գիւղում բոլորը մահմեդական են, միայն 10 կաթոլիկներ են մնացել, Կէծուկում՝ 8 տուն, իսկ Ղարաղուշում՝ 5 տուն: Եթէ մէկ-երկու տարի էլ անցնի՝ ոչ մի քրիստոնեայ չի մնայ (Ճեմճեմեան, էջ 15-16):

[11] 1649 Նոյեմբերի 20ին Դոմինիկոս Նազարեանը Ապարաներից գրած նամակում հաղորդում է, որ Օգոստինոս Բաջենց արքեպիսկոպոսի ջանքերով 30 հոգի, որ առաջ մահմեդական էին, նորից դարձան կաթոլիկ, քանի որ արքեպիսկոպոսի հետ «ահագին ծախսով» գնացին շահի մօտ եւ յաջողեցին (Ճեմճեմեան, էջ 18):

[12] Արեւելեան Հայաստանում կաթոլիկների մշակութային գործունէութեան եւ նրանց թողած գիտամշակութային հարուստ ժառանգութեան մասին տե՛ս՝ Լ. Խաչիկեան, «Արտազի Հայկական Իշխանութիւնը Եւ Ծործորի Դպրոցը», *Բանբեր Մատենադարանի*, N 11, 1973, էջ 168-209. նաեւ՝ Քոնեցի, էջ 3-52. նաեւ՝ Ճեմճեմեան, էջ 7:

[13] Ղազար Ջահկեցի, *Գիրք Ասպուածաբանական, Որ Կոչի Դրախտ Ցանկալի*, Կ.Պոլիս, ՌՃՁԴ (1735), էջ 334: Մէջբերումն ըստ՝ Բայբուրդեան, էջ 151, հմմտ. Պ. Յակոբեան, *Հայ Կաթոլիկութիւնը Պատմա-Քննական Լոյսի Տակ, - Հրաւէր Ողջամտութեան*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 105:

[14] Ճեմճեմեան, էջ 19-20:

[15] Հ. Յ. Վ. Քօսեան, *Հայք Ի Զմիւռնիա Եւ Ի Շրջակայս, Հտր. Ա.*, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1899, էջ 301-320. նաեւ՝ Ա. Ա. Խառատեան, «Հայ Գաղթականութիւնը Էգէեանի Մերձափնեայ Շրջանում (XIV-XVIII դդ.)», *Պատմաբանասիրական Հանդէս*, N 4, 1988, էջ 40, 43. նաեւ՝ Ճեմճեմեան, էջ 20:

[16] Ճեմճեմեան, էջ 9:

[17] Ֆրանսիացի քաղաքական գործիչ եւ դիւանագէտ Լուի-Ֆրանսուա Ֆերիէր-Սովբէֆը ԺԵ. դարի վերջին քառորդի հեղինակ է. նրա ճանապարհորդութեան շարժառիթը դեսպանագնացական էր: Նա ծնուել է 1750ին Շամպայնի Մուլէն դ'Արնակ բնակավայրում: 1782-1789ին Լուի ԺՋ.ի կառավարութեան կողմից դիւանագիտական առաքելութեամբ ուղարկւում է Կ.Պոլիս եւ այստեղից երկու անգամ (1784-1785 եւ 1787) մեկնում է Իրան՝ Սպահան: 1788 Սեպտեմբերի

18ին Ֆերիէր-Սովբէֆը մեկնում է Կ.Պոլսից դէպի Ֆրանսիա եւ Հոկտեմբերի 15ին ափ իջնում Տուլոնում: Վերադառնալով Փարիզ՝ նա Արեւելքում ճանապարհորդական իր յիշողութիւնները հրատարակում է 1790ին Մասստրիխտում (2 հատոր), ապա նաեւ Փարիզում (1790, 2 հատոր): Ֆերիէր-Սովբէֆի ուղեգրութիւնը երրորդ անգամ հրատարակւում է Փարիզում, 1807ին *Voyages Faits en Turquie, en Perse et en Arabie* վերնագրով, 2 հատորով: Այն հրատարակուել է նաեւ գերմաներէն: Ուղեգրութեան ԻԱ.-ԻԴ. գլուխները նուիրուած են Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Շիրվանի, Ատրպատականի եւ Թաւրիզի նկարագրութեանը: Հեղինակը տեղեկութիւններ է հաղորդում տարբեր բնակավայրերի, այցելած երկրների քաղաքական, տնտեսական դրութեան, բնական հարստութիւնների, արտադրողական ուժերի, բնակչութեան էթնիկական կազմի, սովորոյթների ու հաւատալիքների, պատմական ու ռազմական անցուդարձերի մասին (*La Grande Encyclopédie Inventaire Raisonné des Sciences, des Lettres et des Arts, t. 17*, էջ 326. նաեւ՝ *Biographie Universelle Ancienne et Moderne, Nouvelle Edition, Tome Septième*, Bruxelles, 1843-1847, էջ 367. նաեւ՝ *Larousse du XX^e Siècle en Six Volumes, Publié sous la Direction de Paul Augé, Tome Troisième*, Paris, 1930, էջ 458 (այստեղ նրա ծննդեան թուական է նշուած 1762ը). նաեւ՝ M. A. Polyevtkov, *Yevropeiskie Puteshestvenniki XIII-XVIII VV. Po Kavkazu* (*XIII-XVIII Դարերի եւրոպացի ճանապարհորդները Կովկասում*), Թիֆլիս, 1935, էջ 106. նաեւ՝ Մ. Կ. Զուլալեան, *Հայ Ժողովրդի XIII-XVIII Դարերի Պատմութեան Հարցերը*, էջ 62:

[18] L.-F. Ferrières-Sauvebœuf, *Mémoires, t. 1*, Maastricht, 1790, էջ 215:

[19] Խօքը Պարսկաստանի պատմութեան ամենաինքնատիպ ու ականաւոր պետական գործիչներից մէկի՝ Նադիր շահի (1736-1747) մասին է: Նա եղել էր հասարակ զինուոր. իր աշխատասիրութեան ու տաղանդի, յամառ կամքի ու խիզախութեան շնորհիւ բարձրանալով ծառայողական աստիճաններով՝ դարձել էր զօրավար: Երիտասարդ տարիներից մասնակցել է Պարսկաստանում իրենց տիրապետութիւնը հաստատած աֆղանների դէմ մղուած ազատագրական պատերազմներին, ապա ծառայութեան անցել Թահմազ Բ. շահի մօտ, նշանակուել բանակի գլխաւոր հրամանատար: 1736ին Նադիրը գահընկեց է անում Աբաս Գ.ին եւ իրեն հռչակում Պարսկաստանի շահ: Նա յատուկ քաղաքականութիւն է մշակում հայոց եկեղեցու նկատմամբ, անձամբ այցելում էջմիածին, լինում Մայր Աթոռում, հանդիպում Ամենայն Հայոց Կաթողիկոս Աբրահամ Գ. Կրետացու հետ: Նա արտօնութիւններ է շնորհել հայոց եկեղեցուն եւ ազատել հարկերից: 1735ի հրովարտակով հաստատել է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան իրաւունքները: Չափազանց կարեւոր էր, որ հայ հոգեւորականութեան խնդրանքով Նադիրը սահմանափակում է կաթոլիկ առաքելութիւնների գործունէութիւնը Պարսկաստանում, արգելում նրանց քարոզչական առաքելութիւնը պարսկահայերի շրջանում, մի բան, որ առաջացրել էր Ֆրանսիայի դժգոհութիւնը: Նադիրը Երեւանի նոր խանին խստագոյնս

յանձնարարում է հոգատար լինել հայոց կաթողիկոսի եւ ընդհանրապէս հայերի նկատմամբ, խորհուրդ է տալիս չվստահել Երեւանի պարսիկ եւ թուրք աղաներին, այլ ամէն հարցում խորհրդակցել «կաթողիկոսի եւ հայ մելիքների հետ», քանի որ «*Երկիրն ու ժողովուրդը նրանցն են, եւ նրանք պէտք է այն շէնացնեն*»
(http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_Nadir_shahy_ev_hayery):

[20] Ղուկաս Ինճիճեան, *Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի, Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ. Եւ Ամէրիկոյ, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա., Ս. Ղազար, Վենետիկ, 1806,* էջ 266:

[21] Ալիշան, *Սիսական*, էջ 503:

[22] A. Dupré, *Voyage en Perse, Fait Dans les Années 1807, 1808 et 1809. T. 2*, Փարիզ, 1819, էջ 251:

[23] Յովհաննէս Յակոբեան, *Ուղեգրութիւններ. Աղբիւրներ Հայաստանի Եւ Անդրկովկասի Պատմութեան, Ուղեգրութիւններ, ԺԹ. Դարի Առաջին Քսանամեակ (1800-1820),* Հրտ. Մելգոնեան Ֆոնդի, Երեւան, 1934, Հտր. Ջ., էջ 311:

[24] Նոյն, էջ 419:

[25] Նոյն, էջ 449:

[26] Նոյն, էջ 551:

[27] Նոյն, էջ 636:

[28] Նոյն, էջ 776-777:

[29] P. G. Butkov, *Materiali Dlya Novoy Istorii Kavkaza S 1722 Po 1803 God* (Նիւթեր Կովկասի նոր պատմութեան համար 1722ից մինչեւ 1803), *Chast Vtoraya* (մասն երկրորդ), էջ 143:

[30] V.G., *Statisticheskoye Opisaniye Nakhichevanskoy Provintsii* (Նախիջեւանի գաւառի վիճակագրական նկարագրութիւն), Սանկտ Պետերբուրգ, 1833, էջ 68. նաեւ՝ F. M. Aliev, *Goroda I Gorodskaya Torgovlia V Azerbaydjane Vo Vtoroy Polovinie XVIII V.* (Քաղաքները եւ քաղաքային առեւտուրը Ադրբեջանում *XVIII դարի երկրորդ կէսին*), Ադրբեջանի ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, *Հտր. 13*, Բաքու, 1958, էջ 143:

[31] I. Shopen, *Istoricheskii Pamiatnik Armianskoy Oblasti* (Հայկական Մարզի պատմական յուշարձան), Սանկտ Պետերբուրգ, 1852, էջ 643-644. նաեւ՝ Խ. Յ. Աւդալբեգեան, *Հողային Հարցը Արեւելեան Հայաստանում (1801-1917 թթ.)*, Երեւան, 1959, էջ 14. նաեւ՝ Վ. Ե. Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը Եւ Նրա Զբաղուածութիւնը (1828-1978)*, Երեւան, 1979, էջ 164. նոյնի *Հայաստանի Բնակչութեան Վերարտադրութիւնը Եւ Տեղաշարժերը XIX-XX Դարերում, XXI Դարի Շէմին*, Երեւան, 2002, էջ 60:

[32] Shopen, էջ 635. նաեւ՝ Ա. Երիցեանց, *Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը Եւ Կովկասի Հայք XIX Դարում, Մասն Ա.*, Թիֆլիս, Շարաձէ, էջ 337. նաեւ՝ Ե. Լալայեան, *Նախճաւան կամ Նախիջեւանի Ոստիկանական Շրջան*, Թիֆլիս

(ա.թ.), էջ 29. նաեւ՝ Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը Եւ*, էջ 26, նոյնի՝ *Հայաստանի Բնակչութեան Վերարտադրութիւնը*, էջ 30:

[33] Յակոբեան, էջ 778:

[34] Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը Եւ*, էջ 177, 178:

[35] Ուդենրիյն, «Համառօտ Ակնարկ Մը Քարոզող Եւ Միաբանող Եղբարց Պատմութեան Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, N 2, 1923, էջ 37:

[36] Ալիշան, *Սիսական*, էջ 391:

[37] Նոյն, էջ 391:

[38] Վ. Ե. Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը Եւ*, էջ 164. նոյնի՝ *Հայաստանի Բնակչութեան*, էջ 60:

CERTAIN DEMOGRAPHIC FACTS RELATED TO NAKHICHEVAN'S HISTORY (late 18th-early 19th C.)

(Summary)

ARMAN MALOYAN
armanmaloyan@mail.ru

The article dwells on certain historical demographic facts related to Nakhichevan in the late-18th and early-19th centuries. It elaborates on the rise and fall of the city of Nakhichevan as a prosperous trade and transit hub in the region.

The author notes that this prosperity was partly related to the active presence of the Franciscan and Dominican fathers, whose missionaries had penetrated Eastern Armenia as early as the 14th century. These missionaries had converted large numbers of Orthodox Armenians to Catholicism. However, the local Armenian Catholics maintained the Armenian language in the liturgy conducted in their churches.

Due to the presence of Catholic missonaries, a number of Western European travellers came to the area, wrote about it and described life in Nakhichevan.

The author compares and contrasts the conflicting figures given by these travellers regarding the Catholic population of the city and notes that notwithstanding the ebb and flow of the Christian population of the area due to Ottoman versus Persian as well as Russian versus Persian wars, Armenians constituted the majority in Nakhichevan till the late-19th century.

The author notes that during the first quarter of the twentieth century the number of the Armenians dwindled significantly. It dropped to a tiny 10-12% in the 1960s due to anti-Armenian policies adopted by the Soviet Azerbaijani authorities. In 1989 the Nakhichevan Armenians constituted not more than 2% of the population of the Autonomous Republic of Nakhichevan.

ՀԱՅՈՑ ԱԶԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊՂՆՁԷ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ, ՁՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ, ԽՈՐՀՐԴԻՄԱՍՏԸ)

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐԵԱՆ
sardarapatasatryan@gmai.com

ՆԱԽԱԲԱՆ

ԺԹ. դարի վերջին ու Ի. դարի սկզբին հայոց աւանդական կենցաղում փայտէ ու կաւէ սպասքին զուգահեռ լայնօրէն օգտագործւում էր պղնձէ սպասքը[1]: Տասնեակ տարիների ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններում կատարուած ազգագրական գիտարշաւների ընթացքում հաւաքուել եւ Հայաստանի տարբեր թանգարաններում են պահպանւում պղնձէ սպասքի բազմաթիւ ու բազմապիսի նմուշներ՝ փոքրիկ ջրխմիկներից ու թասերից մինչեւ մեծ ու զանգուածեղ կաթսաները, որոնք պատրաստուած են ժամանակի պղնձագործ վարպետների կողմից՝ հիմնականում կռման, դրուագման, զօդման ու անագապատման եղանակներով եւ գեղազարդուած հիմնականում փորագրման եղանակով: Այս առումով յատկապէս աչքի են ընկանում Հայաստանի Պատմության, ինչպէս եւ Երեւան Քաղաքի Պատմութեան Թանգարանի հաւաքածուները:

Մինչ այժմ մասնագիտական գրականութեան մէջ անդրադարձ է կատարուել հիմնականում միջնադարեան Հայաստանի պղնձագործութեանը: ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի պղնձագործական արտադրանքի մասին տարբեր հեղինակների մօտ պահպանուել են գլխաւորաբար ընդհանրական տեղեկութիւններ, որոնք հիմնականում պատկերացում են տալիս մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հիմնականում պղնձագործ վարպետների, ենթավարպետների ու աշկերտների համքարութիւնների կառուցուածքի, մասամբ էլ առեւտրի, սակայն ոչ՝ արհեստաւորական արտադրանքի մասին[2]:

Հայոց Ազգագրութեան Թանգարանի ԱԿ-3 (Ազգագրութիւն եւ կենցաղ) ֆոնդում պահպանւում է շուրջ 2500 միաւոր պղնձեայ առարկայ: Այս առարկների ճնշող մեծամասնութիւնը (շուրջ 2000

առարկայ) ԺԹ. դարի վերջին ու Ի. դարի սկզբին Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջաններում օգտագործուող պղնձէ ամանեղէնն է:

Այս ժամանակի պղնձագործական արտադրանքն ըստ գործառոյթի բաժանւում է երկու մեծ խմբի՝ տնտեսական-կենցաղային սպասք (կաթսաներ, կովկիթներ, կժեր, փլաւքամիչներ եւն.) եւ եկեղեցական սպասք (խնկամաններ, բուրվառներ, մոմակալներ, աշտանակներ եւն.): Հաւաքածուի մաս է կազմում նաեւ Ի. դարասկզբին հայոց աւանդական կենցաղ մուտք գործած գործարանային առարկաների խումբը (լամպեր, նաւթավառներ, ինքնաեռներ եւն.)[3]:

Իրենց զանազան տարբերակներով եւ թեմատիկ բազմազանութեամբ հանդերձ՝ հաւաքածուում առանձնանում է առարկաների մի մեծ խումբ, որի աչքի ընկնող յատկանիշը գեղազարդումն է: Անկախ թեմատիկ պատկանելութիւնից ու գործառոյթից՝ հայոց աւանդական կենցաղում այս ժամանակաշրջանում գործածուող պղնձագործական արտադրանքը ըստ գեղազարդման բաժանւում է երկու խմբի.-

Ա. առարկաներ, որոնց գեղազարդումը տիպիկ հայկական է

Բ. առարկաներ, որոնց գեղազարդումն արաբանախշ[4] է (կամ՝ հայկական եւ արաբական նախշերի զուգորդմամբ):

Այս աշխատանքում անդրադարձել ենք այն նմուշներին, որոնց գեղազարդումը տիպիկ հայկական է: Բնականաբար՝ մէկ աշխատանքի ընթացքում հնարաւոր չէ սպառիչ կերպով լուսաբանել այս ժամանակուայ պղնձագործական արտադրանքի գեղազարդմանը վերաբերող հարցերը: Ուստի այստեղ կանգ ենք առել որոշապէս այն առարկաների վրայ, որոնց գեղազարդումը թեմատիկօրէն առաւել բազմաբովանդակ է եւ միաժամանակ առաւել համընդգրկուն՝ փորձելով այս կերպով տալ նշուած ժամանակաշրջանի պղնձագործական արտադրանքի գեղազարդման արուեստի ընդհանուր բնութագիրը, ինչպէս նաեւ՝ այն փոխադարձ կապը որը գոյութիւն ունի ԺԹ. դարի վերջին ու Ի. դարի սկզբին հայկական ժողովրդական-կիրառական արուեստի այլ ճիւղերի հետ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ, ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բուսանախշեր

ԺԹ. դարի վերջին ու Ի. դարի սկզբին հայոց աւանդական կենցաղում գործածուող պղնձագործական արտադրանքի վրայ հանդիպող զարդանախշերը հիմնականում բուսանախշ են (կամ երկրաչափականացուած բուսանախշ), երբեմն նաեւ կենդանանախշերի (թռչնանախշերի) համադրութեամբ:

Այս ժամանակահատուածում պղնձագործական արտադրանքի վրայ առաւել յաճախ հանդիպող զարդանախշը **կենաց ծառն** է: Այն հանդէս է գալիս ամենաբազմազան ձեւերով. «կենաց ծառ» արտայայտութիւնն անպայման չի նշանակում, թէ գործ ունենք ծառի հետ, այլ՝ ընդհանրապէս բոյսի[5]: Կենաց ծառի զարդաձեւի մէջ էականը ոչ թէ նրա արտայայտման ձեւն է, որը միշտ էլ կարող է տարբեր լինել, այլ նրա գաղափարական բովանդակութիւնը, մտածողութեան այն ամբողջ համալիրը, որը մարդիկ դարերի ընթացքում խտացրել են նրա մէջ[6]:

Կենացծառային զարդանախշերի բազմազան տարբերակները նիւթական ու հոգեւոր մշակոյթի յուշարձանների վրայ հանդէս են գալիս դեռեւս հնագոյն շրջանից:

Մեծամօրի պեղումներից յայտնաբերուած կճուճներից մէկի իրանը զարդարող թեք ակօսաշարից ցած, յատակից դէպի վեր են բարձրանում կենաց ծառ կամ տերեւներ խորհրդանշող զարդանախշեր[7]:

Գառնիի ամրոցի պեղումներից յայտնաբերուած գլանաձեւ կնիքի վրայ պատկերուած է այծ՝ կանգնած կենաց ծառի դիմաց: Ի տարբերութիւն ասորական եւ ուրարտական ոճաւորուած ծառով շատ կնիքների՝ Գառնիի կնիքի վրայի կենաց ծառը ներկայացուած է շատ աւելի բնական, պարզ: Նոյնը կարելի է ասել այծի մասին, որը ներկայացուած է նոյնպէս բնական, անշարժ վիճակում, առանց թեւերի եւ այլ կենդանակերպ կամ թռչնաձեւ զուգորդումների[8]:

Կենաց ծառի եւ նրա մօտ կանգնած այծի թեմատիկան շատ հին է եւ մեծ տարածում ունի Հին Արեւելքի մշակոյթում: Լեռնային այծը Շումէրում ճանաչուել է որպէս հզօր ուժի մարմնաւորող եւ

պատահականութիւն չէ, որ նրանց դիցաբանութիւնում Շումէրի կառավարիչներին յաճախ համեմատում են հզօր այծի հետ: Էլամի եւ Միջագետքի կնիքների վրայ այծերը յաճախ հանդէս են գալիս որպէս սրբազան կենաց ծառի պահապաններ[9]:

Մուխաննաթ Թափայի պեղումներից յայտնաբերուած ձուլման կաղապարի վրայ արուած փորուածքներից մէկը պատկերում է կենաց ծառ. կենտրոնական ակօսը դէպի աջ ու ձախ հնգական համաչափ ճիւղաւորումներ ունի, որոնցից իւրաքանչիւրն աւարտւում է կիսագնդաձեւ փորուածքներով՝ պտուղներով[10]:

Ուշագրաւ է, որ թէ՛ Գառնիի կնիքի, թէ՛ Մուխաննաթ Թափայի վրայ կենաց ծառերը պատկերուած են միեւնոյն ձեւով ու ոճով:

Կենացծառային զարդանախշերով են պատուած 1947ին Կարմիր Բլուրի պեղումներից յայտնաբերուած սեւ տուֆից քանդակուած եւ այժմ ՀԱԹում ցուցադրուող կանացիակերպ կուռքի գլուխն ու թեւերը[11]: Կամիր Բլուրից յայտնաբերուած այս, ինչպէս նաեւ նմանատիպ միւս կանացիակերպ կուռքերը[12] ներկայացնում են **կին-մայր-բոյս-ծառ** համալիր գաղափարը, որն ընկած էր արեւելեան բոլոր ժողովուրդների երկրագործական գաղափարաբանութեան հիմքում: Սա է պատճառը, որ իրենց առանձնայատկութիւններով հանդերձ, Կարմիր Բլուրի կանացի արձանները իմաստաբանական զուգահեռներ ունեն ողջ Արեւելքում, թէեւ վերջինների մի մասը ձեւական եւ գեղագիտական առումով խիստ տարբեր էն Կարմիր Բլուրի օրինակներից: Եգիպտոսի մայր աստուածուհին, օրինակ, պատկերւում էր կէս կին-կէս ծառի տեսքով, Ք.ա. Գ. հազարամեակով թուագրուող Թուրունգ Թեփէի մայր աստուածուհու արձանիկի վրայ պատկերուած կենաց ծառը սկսւում է կանացի օրգանից եւ ձգւում մինչեւ կուրծքը[13]:











Նուշ (նշածեւ նախշ)

Պղնձագործական արտադրանքի վրայ յաճախ հանդիպող կենացծառային զարդանախշերից է նշածեւ նախշը: Հայոց մէջ այն տարածուած է յարդարանքային-կիրառական արուեստի տարբեր ճիւղերում: Ասեղնագործութեան մէջ, օրինակ, նշիկները գերակշռում են Բարձր Հայքում (գոգնոցներին, էհրամների


եզրերին), Այրարատում (ձիու ծածկոցներ), Կիլիկիա-Կապադովկիայում (սրբիչներ, սփռոցներ), Վասպուրականում (սփռոցներ, սրբիչներ)[14]: Բարձր Հայքի կանանց գոգնոցների ներքեւի երկու անկիւններում ոսկեթելով ու արծաթաթելով ասեղնագործում էին նշաձեւ զարդեր[15], որոնք պտղակալման ու բեղմնաւորման գաղափարն են արտայայտում: Նշաձեւ պատկերների բազմազան տարբերակների ենք հանդիպում հայկական գորգարուեստում[16], կարպէտագործութեան մէջ[17]. դրանց կանոնաւոր, կշռութաւոր շարքերը զբաղեցնում են գորգի (կամ կարպէտների) ամբողջ հիմնադաշտը[18]: Երբեմն նշաձեւ կենաց ծառերը պատկերւում են բաւականին մեծ չափերով եւ դասաւորուած են լինում գորգի կենտրոնական վարդեակի (կամ վարդեակների) շուրջը[19]: Ուշագրաւ է, որ գեղազարդման նոյն սկզբունքն է գործում պղնձէ թասերի ու տապակների պարագայում. նշաձեւ զարդերը, ինչպէս եւ սկուտեղների գեղազարդման դէպքում, պատկերուած են կենտրոնական զարդայօրինուածքի շուրջը:

Թաս-փիալաների ու կովկիթների վրայ նշաձեւ կենաց ծառերը պատկերուած են քիչ այլ կերպ: N 1006/5 թաս-փիալայի վրայ, օրինակ, նշերը զարդարում են առարկայի գրեթէ ամբողջ իրանը. պատկերուած են ուղղահայեաց դիրքով, ունեն բուն-առանցք, «արմատ», վերեւում ճլարձակում են՝ ունեն եռաբողբոջ, ներսում ունեն ծաղկանախշ, որը պատկերւում է բաւականին իրապաշտօրէն:



Կովկիթների իրանները սովորաբար բաժանւում են միքանի զարդագօտիների, որոնցում պատկերուած են լինում բուսական տարբեր զարդանախշեր՝ ծաղկանախշ եւն.: Այս շարքերի միջեւ դարձեալ առանձնանում են վերոնշեալ նշաձեւ կենաց ծառերը ուղղահայեաց բուն-առանցքով, «արմատով», վերեւում եռաբողբոջով, ներսում պատկերուած ծաղկանախշով:

Նշաձեւ կենաց ծառերի առաւել ուշագրաւ օրինակներ ենք տեսնում սկուտեղների վրայ: N 203/2 սկուտեղի վրայ նշաձեւ զարդերը ունեն եռանկիւնաձեւ 'արմատ' եւ վերեւում ճլարձակում են, ունեն եռաբողբոջ: Այստեղ նշերն իրենք պատուաճ են մանր տերեւներով՝ այս ձեւով աւելի նմանուելով ծառի: Նոյն երեւոյթին ենք հանդիպում սկուտեղների նշազարդերը դիտելիս, այն տարբերութեամբ, որ այստեղ մանր տերեւները փոխարինուած են մանր շեղագծերով, սակայն դրանք ակնյայտօրէն նոյն գաղափարն են արտայայտում: Նմանատիպ նշաձեւ զարդեր ենք տեսնում Բարձր Հայքի կանանց գոգնոցների վրայ. այստեղ բնականաբար նշերը եզրազարդուած են ասեղնագործ մանր գալարանախշերով, եւ արտայայտում են նոյն իմաստը:



Մեր նկարագրած նշաձեւ զարդերի ճիշտ կրկնութիւնն ենք տեսնում Մանիա Ղազարեանի *Հայկական Գորգ* աշխատութեան մէջ. այստեղ պատկերուած նշազարդերը յար եւ նման են NN 203/2 եւ 638 սկուտեղների վրայ պատկերուած նշազարդերին. ունեն եռանկիւնաձեւ 'արմատ', վերեւում՝ եռաբողբոջ, ներսում պատկերուած է ծաղկանախշ[20]:


Ինչպէս տեսնում ենք, թէ՛ գեղարուեստական գործուածքի, թէ՛ պղնձագործական արտադրանքի վրայ պատկերուած են կենացծառային նոյն զարդանախշերն ու զարդայօրինուածքները եւ արտացոլում են նոյն գաղափարը, չնայած, որ դրանք պատկերուած են տարբեր նիւթերով ու եղանակներով:

Տերեւանախշ

Պղնձագործական արտադրանքի վրայ յաճախակի հանդիպող զարդերից է տերեւանախշը, որը հանդիպում է ափսէների շուրթերին, թասերի իրաններին:

Թոփրակ-Կալէի պեղումներից յայտնաբերուած արծաթոսկուց պատրաստուած լուսնազարդի վրայ պատկերուած է գահին բազմած Խալդի աստուածութիւնը եւ նրան ուլ մօտեցնող Ուարուբանի աստուածուհին: Լուսնազարդի 'եղջիւրներին' պատկերուած են մէկական բարդի յիշեցնող ծառ[21]:






Տերեւաձեւ երեք կենաց ծառեր են պատկերուած Արմաւիրի պեղումներից յայտնաբերուած կրծքազարդի կենտրոնական մասում[22]: Այսպիսի պատկերներ են արուած Պերսեպոլիսի քանդակներում: Ծառերը, աւելի ճիշտ՝ դրանց սաղարթները, ունեն տերեւաձեւ տեսք եւ կրկնում են Արմաւիրի կրծքազարդին[23]:

Ուրարտական Թէյշեբա աստուածը սովորաբար պատկերւում էր եզան վրայ կանգնած: Այս պատկերներից մէկում նա ձեռքին ունի կենաց ծառ[24], որի տերեւները յատկապէս նման են ափսէի շուրթին պատկերուած տերեւանախշին:

Վերը նկարագրուած կենաց ծառերի պատկերման ոճի ու ձեւերի ընդհանրութիւնն են իրենց մէջ խտացնում N 419/1 սկուտեղի վրայի ծառապատկերները: Այստեղ ծառերի սաղարթները պատկերուած են տերեւաձեւ (յստակ երեւում են միջնաջիղերը), եւ ունեն եռանկիւնաձեւ բուն-արմատ: Ընդ որում՝ ծառերը պատկերուած են մէկական եւ եռեակներով: Իրենց




մէկական պատկերներով ծառերը յիշեցնում են մասնաւորապէս Թոփրակ-Կալէի լուսնազարդի եղջիւրներին պատկերուած բարդու ծառերը, իսկ եռեակները՝ կարծես կրկնութիւնն են Արմաւիրի կրծքազարդի կենտրոնում պատկրուած երեք կենաց ծառերի:

Ինչպէս տեսնում ենք, նոյնիսկ պարզ համեմատութեամբ ակնյայտ է դառնում, որ վերը յիշատակուած երկու ափսէների ու թասի, ինչպէս նաեւ սկուտեղի վրայ փորագրուած տերեւանախշերն ու ծառապատկերներն իրենց ոճով եւ պարզութեամբ յար եւ նման են Թոփրակ-Կալէի լուսնազարդի ու Արմաւիրի կրծքազարդի վրայի ծառապատկերներին: Չնայած, որ ափսէների շուրթին ու թասի իրանին պատկերուած են միայն տերեւանախշերը՝ 'ծառերի սաղարթները' (բացակայում է 'ծառաբունը' կամ ցօղունը), սակայն բնական է, որ դրանք ինքնանպատակ չեն եւ պատկերուած են բուսանախշերի հետ միասին: Կարեւոր է նաեւ դրանց պատկերման համար յատկացուած տարածքը. նաեւ այս պատճառով է, որ դրանք մի դէպքում պատկերուած են առանց 'բուն-արմատ'ի, միւս դէպքում՝ եռանկիւնաձեւ՝ 'ոճաւորուած' բուն-արմատով:

Բուսական աշխարհի եւ յատկապէս ծառերի պաշտամունքի հիմնական նախապայմանը, ըստ երեւոյթին դրանց պտղաբերութեան ուժն է եղել: Մեր նախնիների պատկերացումներում ծառն արմատացել է որպէս պտղաբերութեան, առատութեան, գարնան զարթօնքի, մի խօսքով՝ կեանքի խորհրդանիշ, որն արձագանգներ է գտել տարբեր ծէսերում ու սովորոյթներում[25]:


Մովսէս Խորենացին նշում է, որ հնում Արմաւիրում գտնուող սրբազան համարուող սօսի ծառերի տերեւների սօսափիւնով հայոց աշխարհում գուշակութիւններ են արուել[26]:

Ծառապաշտութիւնը հայոց մէջ այս կամ այն դրսեւորումներով պահպանուել է ընդհուպ մինչեւ Ի. դարի սկիզբ: Պաշտուել են կաղնին, սօսին, բարդին, ուռենին, թխկին, հաճարենին, գիհին եւն.[27]: Ներսէս Շնորհալու վկայութեամբ՝ Սամոսատ քաղաքի հայ աղանդաւորների՝ արեւորդիների մէջ ԺԲ. դարում պահպանուել էր բարդու հնաւանդ պաշտամունքը: Արեւորդիները համարում էին, թէ Քրիստոսի խաչը եղել է բարդու փայտից, ինչի համար Շնորհալին զգուշացնելով ասում է. «*Զբարդի ծառն՝ մի՛ աւելի պատուէք քան զուռն եւ զկաղամախին եւ զայլս ի ծառոց, եւ մի՛ կարծէք թէ փայտ խաչին Քրիստոսի՝ բարդի էր*»[28]: Բարդի ծառի պաշտամունքի հետաւոր արձագանգները հայոց մէջ հասել են ընդհուպ Ի. դարի սկիզբ: Ներքին Բասէնում յատկապէս կանայք են պաշտել այս ծառը: Աղջիկներն իրենց մազակապերից կապել են ծառի բնին՝ «բախտը բացուելու», կանայք՝ իրենց մէջքի գօտին՝ պտղաւորուելու ակնկալիքով: Ալեքսանդրապոլում հիւադութիւններից ապաքինուելու եւ երեխայ ունենալու ակնկալիքով կանայք սուրբ համարուող բարդու շուրջը երեք անգամ պտտուել են եւ գունաւոր թելեր ու լաթեր կախել դրանից[29]:





Կենացծառային մի հազուագիւտ եւ ինքնատիպ զարդանախշ է պատկերուած N 1327/2 սկուտեղի վրայ: Վերջինիս կենտրոնական զարդայօրինուածքը շեղագիծ շրջագօտու մէջ ամփոփուած, բուսանախշերի մէջ առնուած, գագաթներով հակադիր (վեր եւ վար) եռանկիւնիներ ունի (այս մասին տե՛ս՝ ***եռանկիւն*** բաժնում): Այս զարդայօրինուածքին յաջորդում է բուսանախշ լայն զարդագօտին: Ընդ որում՝ բուսանախշերը պատկերուած են այնպէս, որ դրանց ցօղունները կազմում են շեղանկիւնիների կանոնաւոր կրկնուող շարքեր, իսկ ծաղիկները պատկերուած են շեղանկիւնիների կենտրոններում եւ հանգոյցներում:

Ոճա-պատկերային առումով նոյնպիսի զարդանախշեր են պատկերուած Կարսի շրջանի Զակիմ գիւղից եւ Անի-Պեմզայից



յայտնաբերուած բրոնզէ գօտիների վրայ: Բորիս Պիոտրովսկին նշում է, որ այդ գօտիների, ինչպէս նաեւ Կարմիր Բլուրից յայտնաբերուած գօտու բեկորի ծայրերին պատկերուած են խիստ ոճաւորուած կենաց ծառեր[30]: Ասատուր Մնացականեանը, հաստատելով Պիոտրովսկու տեսակէտը, իր հերթին նշում է, որ կենաց ծառեր են պատկերուած ոչ միայն գօտիների ծայրերին, այլեւ՝ դրանց ամբողջ երկարութեամբ: Զակիմ գիւում ու Անի-Պեմզայում յայտնաբերուած գօտիների վրայ 'շեղանկիւնիների մէջ' պատկերուած, են թեւաւոր ձիեր, առիւծներ, ցուլեր, նետաձիգներ, առանձին մարդու եւ առիւծի գլուխներ ու թռչուններ[31]: Սա ինքնին հասկանալի է, քանի որ այդ ժամանակուայ բրոնզէ գօտիների գեղազարդման թեմատիկան ու բովանդակութիւնը բնականաբար պիտի համապատասխանէր տուեալ ժամանակաշրջանի ժողովրդի հոգեւոր պատկերացումներին[32]:






Ինչպէս տեսնում ենք, վերը յիշատակուած կենացծառային նախշերը հանդիպում են հայոց աւանդական մշակոյթի տարբեր դրսեւորումներում ու փուլերում, զանազան տարբերակներով, սակայն դրանք միշտ միեւնոյն իմաստն են կրում:



Նուռ

Հայկական զարդարուեստում յաճախ հանդիպող զարդերից է նուռը: Այն տեսնում ենք հայկական քանդակագործութեան ու ճարտարապետութեան մէջ[33], մանրանկարչութեան մէջ[34], գորգարուեստում[35], ժամանակակից յարդարանքային արուեստում: Նռան պատկերներ են քանդակուած ՀԱԹի ցուցադրութիւնում ներկայացուած Ջրվէժից ու Նորատուսից բերուած խաչքարերի վրայ: Ջրվէժի խաչքարի վրայ դրանք պատկերուած են քիւին, իսկ Նորատուսի խաչքարի վրայ՝ վերին մասում՝ միջթեւային տարածութիւններում[36]:

Հայաստանում մեզ յայտնի նռան պատկերները վերաբերում են ուրարտական դարաշրջանին: Դրանցից է օրինակ ոսկուց պատրաստուած նռան պտուղը, որը զարդարում է անոթի կափարիչը: Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Կարմիր Բլուրից ածխացած նռան ծաղիկը, որը 27 դար զարմանալիօրէն լաւ պահպանուել է: Էրեբունիի որմնանկարներում եւ ուրարտական շրջանի շատ այլ պատկերներում կենաց ծառի ճիւղերն աւարտւում են նռան պատկերներով: Գառնիի տաճարի եզրազարդերից մէկում (հելլենիստական շրջան), որտեղ ոլորագծի միւս միջուկները վնասուած են, պահպանուել է ընդամէնը մէկ քանդակուած նռան պտուղ[37]: Նուռ է քանդակուած Դուինի պեղումներից



յայտնաբերուած, այժմ ՀԱԹի բացօթեայ ցուցադրութիւնում ներկայացուած, Դ.-Ե. դդ. թուագրուող կոթողի վրայ:

Հայկական լեռնաշխարհում նուռը մեծ դեր ունէր հեթանոսական ծէսում. այն նուիրաբերւում էր Անահիտ աստուածուհուն[38]: Վաղմիջնադարեան խաչքարերի որոշ օրինակներում խաղողի ողկոյզները համադրուած են նռան պտուղներով, կամ փոխարինուած նրանցով՝ հիմքում ունենալով երկուսից էլ գինի ստանալու ընդհանրական պատկերացումը[39]:

Եթէ խաչքարերի[40], գեղարուեստական գործուածքի[41] նմուշների վրայ նռան պատկերներն արուած են բաւականին իրապաշտօրէն, ապա Դուինի քանդակի վրայ այն պատկերուած է ոճաւորուած կերպով. շրջանին ներգծուած են մանր շեղանկիւնիների կշռութաւոր կանոնաւոր շարքեր, որոնք էլ հենց խորհրդանշում են նռան հատիկները:

Նռան պատկերները բաւականին յաճախ են հանդիպում նաեւ ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբի պղնձագործական արտադրանքի վրայ. այստեղ դրանք ունեն ճիշտ նոյն ոճաւորումը, ինչ Դուինի քանդակը: Օրինակ՝ N 5688/48 մատուցարանի շրթին, ինչպէս նաեւ N 5688/1 սկուտեղի վրայ նռները պատկերուած են նոյն ոճաւորմամբ. շրջանին ներգծուած են մանրիկ շեղանկիւնիների կանոնաւոր-կշռութաւոր շարքեր, որոնք խորհրդանշում են նռան հատիկները:



Ուշ միջնադարում նռան դառը կեղեւը խորհրդանշում էր Հին Կտակարանը, սերմերի քաղցրութիւնը՝ Նոր Կտակարանը. արդարամիտների դառը եւ փորձութիւններով լի կեանքը հակադրւում է յարութիւնից յետոյ սպասուող անմահական կեանքի քաղցրութեանը[42]: Միջնադարեան աստուածաբանական այս մեկնաբանութիւնն աւելի նեղ է, քան այն ընկալումը, որն առկայ է ընդհանրապէս հայկական մշակոյթում, որն արտացոլուած է, օրինակ, հանելուկներում, որտեղ նուռը կրում է «բազմութիւնը միասնութեան մէջ» իմաստը[43]:

Կենդանական նախշեր

Զարդանախշերն ուսումնասիրելիս տարբերակում են հետեւեալ հիմնական խմբերը.- բուսանախշ, կենդանանախշ եւ երկրաչափական նախշեր: Սովորաբար կենդանանախշերի խմբում են ընդգրկւում նաեւ թռչնանախշերը[44]:

Մեր ուսումնասիրութեան առարկան հանդիսացող պղնձագործական արտադրանքի վրայ, ինչպէս հայկական

յարդարանքային-կիրառական արուեստի այլ ճիւղերում (խեցեգործութիւն, արծաթագործութիւն, ասեղնագործութիւն եւն.) դրանք հանդիպում են բաւականին յաճախ, ուստի այս աշխատանքում հնարաւորինս մանրամասն եւ հանգամանալից անդրադառնանք նաեւ թռչնանախշերին ու դրանց մասին եղած պատկերացումներին:

Թռչնանախշ


Հայկական զարդարուեստի սիրուած ու տարածուած նախշերից է թռչնանախշը: Թռչնանախշը Հայկական Լեռնաշխարհում հանդիպում է հնագոյն շրջանից սկսած: Թռչնի ոճաւորուած պատկերներ ենք տեսնում ժայռապատկերներում[45], հնագիտական խեցեղէնի վրայ[46]. թռչնազոյգեր են պատկերուած վիշապ-կոթողների վրայ[47]:

Թռչնանախշը տարազի վրայ պատկերւում է ե՛ւ իրական տեսքով ե՛ւ ոճաւորուած: Թռչուն-հաւքը բոլոր մակարդակների կրօնական պատկերացումներում կապւում էր երկնքի հետ՝ հանդիսանալով արեւային աստուածութեան ուղեկից (արծիւ, ագռաւ, աքաղաղ): Թռչունը ծառի ճիւղին կամ գագաթին թեմատիկ զարդանախշն, ըստ երեւոյթին այդ պատկերացումների գծանկարային արտայայտութիւնն է[48]:

Թռչուն-բոյս (նշաձեւ կենաց ծառ) համադրութեան մի հազուագիւտ օրինակ է ՀԱԹի N 1143 գոգնոցի գեղազարդումը: Ինչպէս Բարձր Հայքի կանացի գոգնոցները՝ այս գոգնոցի եզրերը նոյնպէս, զարդանախշուած են ասեղնագործ ծաղկաշղթայով եւ երկու անկիւններում առկայ են վերը յիշատակուած մէկական նշաձեւ կենաց ծառեր՝ ներսում Մ եւ Ք տառերով: Էականն այն է, սակայն, որ այստեղ ծառերի գագաթներին պատկերուած է մէկական թռչուն՝ թեւատարած, կարծես թռիչքի պահին:

Թռչուն-բոյս համադրութիւնը հանդէս է գալիս նաեւ հորիզոնական դասաւորութեամբ: Այս առումով ուշագրաւ են Վասպուրականի ու Սիւնիքի կանանց ճակատնոցները, որոնք յիշեցնում են Տիգրան Մեծի ու Էրատո թագուհու թագերը, միայն այն տարբերութեամբ, որ արքայական թագերի վրայ պարզորոշ

արծիւներ են պատկերուած, իսկ վերոնշեալ ճակատնոցների թռչունների տեսակն անորոշ է, կարելի է ե՛ւ արծուի նմանեցնել, ե՛ւ աղաւնու: Բուսական զարդանախշերի երկու կողմում միմեանց դիմաց պատկերուած թռչուններով յօրինուածքն ասեղնագործւում էր կանանց ներքնաշորի (վարտիքների) փողքերին: Այդ կառուցուածքներում թռչուններն իրարից որեւէ մանրամասնով չեն տարբերւում, մինչդեռ գորգերի ու կարպէտների, ձեռագրերի խորանազարդերի նմանօրինակ յօրինուածքներում գունային հակադրութեամբ կամ արտաքին մանրամասներով ընդգծւում էր սեռերի տարբերութիւնը[49]:





Թռչնանազոյգերով (իրար հակադիր թռչնագլուխներով) են աւարտւում Սիւնիք-Արցախում ԺԹ. դարավերջից մինչեւ Ի. դարասկիզբն ընկած ժամանակահատուածում գործածւող կանացի գօտիների ճարմանդներն ու զարդատախտակները: Այստեղ պատկերն ստացւում է մասամբ մետաղէ յենքը մշակելով, մասամբ էլ սեւադապատման միջոցով:

Թռչնագլուխ ճարմանդներով գօտիների մէկ այլ տարբերակը կոչւում էր «արծուագօտի» եւ նուիրւում էր քաւորի կողմից նորապսակներին՝ նշանդրէքի օրը[50]: Երբեմն թռչնանախշը կամ թռչնազոյգը պատկերւում են միայն սեւադանախշման միջոցով՝ գօտու վերջի զարդատախտակի կամ ճարմանդի մասերից մէկի վրայ:

Թռչնանախշ է պատկերուած N 2624/3 անօթի վրայ: Վերջինս կազմուած է նստուկից, ոտքից եւ կիսագնդաձեւ իրանից: Փորագրազարդ իրանի կենտրոնական գօտու վրայ պատկերուած են թուով վեց միանման թռչուններ (կաքաւնե՞ր) կարծես թէ թռչելու պահին: Նմանատիպ թռչնանախշեր են պատկերուած N 5688/84 բաղնիքի թասի վրայ: Թռչնային ծնող զոյգ է պատկերուած N 610 խորանազարդ սկուտեղի ներքեւի մասում շեղանկեան երկու կողմում պատկերուած են իրար նայող թռչուններ, իսկ ներսում պատկերուած է ծաղկանախշ: Ըստ մի շարք ուսումնասիրողների՝ սա թռչնային ծնող զոյգն է, հետեւաբար կենտրոնի ծաղկանախշն էլ բեղմնաւորման, զաւակի գաղափարը[51]:

Քրիստոնէական մշակոյթում թռչունները յաճախ պատկերւում են խաչքարերի վրայ: Դրանք տեղադրւում են խաչքարային



[116] Ben size pek yakın bir misal olmak üzere Maarif Nezaretinin ahiran ihraz ettiği (...) maarif müfettişlerini gösterebilirim. İşte bugün maarif müfettişi namıyla icra-yı vazife eden memurlardan pek çok şikâyet vuku buluyor. Binaenaleyh bu bahis öyle baş aşağı atılacak bir şey değildir.(...) Hükümetin maarifin her bir safhasını nazar-ı teftişte bulundurmağa ve etfal-ı Osmaniyyeye yeknesak bir tedris ve terbiye-i Osmaniyye verilmesine dikkat etmeye selahiyeti yok mudur? Evet, bahsi bu suretle arz ederseniz buna karşı itiraz edecek kimse yoktur. Fakat hükümet bu terbiye-i Osmaniye tahtında ne anlıyor? Arnavutluk'ta "Siz Latin hurufatı kullanmayacaksınız?" diye tazyikleri mi anlıyor." (...) Bir maarif bahsi açıyoruz. İttihat-ı anasır böyle değildir. Buna dair pek müphem deliller söyleyeceğim. Mesela tarih kitaplarını bile men ediyorlar. İşte maarif müfettişleri bunları yapıyorlar. Terbiye-i Osmaniye bu mudur? Bir kere bu memlekette maarifin izni olmadan kitap nasıl basılır? Size kardeşane bir şey söyleyeceğim. Bu bahisleri kapamaktan ise bu yaraları açıp taaffünleri ref etmekten daha iyi bir tarik yoktur (gürültü)" (MMZC, Devre: 1, İctima Senesi: III, 2nci Cilt: 20 Kanunuevvel 1326 Tarihli Yirmibirinci İnikaddan-31 Kanunusani 1326 (1910) Tarihli Kırkıncı İnikada Kadar(Ankara: TBMM Basimevi, 1986), pp. 176-177).

[117] "Biz, bu vatanın ecza-yı muhtelifesi, müttehiden şu daireye gelmiş, birleşmişiz. Hepimiz hüsn-ü niyetle ve iki elimizle vatana sarılmış evlatlarıyız. Bu ittihadı daimi kılmak için her ne yapmak lazım ise onu da hüsnüniyetle bütün mevcudiyetimizle yapmak taraftarıyız" (MMZC: Devre: I, İctima Senesi: 1, Cilt: 4: 16 Mayıs 1325 Tarihli Seksenikinci İnikaddan-11 Haziran 1325 Tarihli Yüzuncü İnikada Kadarp. 208).

[118] Sharurian, p. 7.

[119] "Dinimiz muhtelif, mezhebimiz birdir. Hepimiz hürriyet meslekdaşlarıyız" (Zohrab, *Siyasi Nutuklar*, p. 9; Zohrab, *Öyküler*, p. 179).

[120] "İzah etsin, biz burada Osmanlıyız, biz burada menafi-i hususiye takip etmiyoruz. (Gürültüler) Osmanlı mebusuyuz, biz bundan başka bir şey değiliz zannederim" (MMZC: Devre: I, İctima Senesi: 1, Cilt: 1: 4 Kanunuevvel 1324 Tarihli Birinci İnikattan-19 Şubat 1324 Tarihli Otuzucuncu Inikata Kadar (Ankara: TBMM Basimevi, 1982), p. 152).

[121] Zohrab, "Hay Badkamavori Me," pp. 389-390.

[122] *Jamanak*, 24 December 1908/6 January 1909, no. 61 (*Yerger, Vol. V. 5*, p. 139).

[123] Zohrab, "Inch Ge Bahanche," p. 101.

[124] Ibid., p. 102

[125] Adenakrutiunk Azkayin Joghovo 1908-1909 (Minutes of National Assembly), (İstanbul: 1910), p. 65 (*Yerger, Vol. V*, pp. 93-94 - emphasis is mine).

[126] Krikor Odian, 1834, İstanbul-1887, Paris. Author, lawyer, bureaucrat, one of the most respected members of the Young Armenians. While acquiring university education in Paris, he witnessed the 1848 Revolution. He returned to İstanbul and worked on the Education Committee of the Armenian Patriarchate. In 1855 and 1860 he was a member of the commission charged with preparing a constitution for the Armenian community. He became a counselor of Mithat Paşa and helped him in drafting the first Ottoman Constitution. Before the Congress of Berlin he drafted a reform project for the Armenian Vilayets. In 1880 he settled in Paris.

[127] "Osmanyan Sahmanatrutyan Veraknnutyune" (Revising the Ottoman Constitution), *Manzume-i Efkar*, 20 August/2 September 1908, no 2205 (*Yerger, Vol. V*, p. 67-68).

[128] "Bugün akvam-ı Osmaniyye meşrutiyette birleşmiş ve bu toprağın en ufak bir cüzünü bile müdafaaya, her vakit müdafaaya müheyyadır" (MMZC: Devre: I, İctima Senesi: 2, Cilt: 1: 1 Teşrinisani 1325 Tarihli Birinci İnikaddan-13 Kanunısani 1325 Tarihli Otuzuncu İnikada Kadarp. 490).

[129] "(...) Kuvve-i bahriyemize karşı Hakan-ı Sabık kendi siyaset-i şahsiyesi iktizasından olmak üzere bir tahrip düsturu kabul etmiş ve 30 seneden beri o düstur istimal olunmuştur. (...) Meşrutiyetimiz Bahriye'yi bu şekilde buldu. Binaenaleyh, Meşrutiyet'e terettüp eden vazife, Bahriyeyi muhafaza değil – zira muhafaza edecek bir şey kalmamıştır – Bahriyenin yeniden ihdası vazifesi idi. (...) Vatan-ı Osmani, gerek kendi toprağından ve gerek kendi sularından teşekkül eder. Bir kısmını müdafaya muktedir olmak ve diğer kısmını müdafadan aciz kalmak yahut onun müdafası hususunda müsamaha etmek, müdafa-i vatan vazifesini hakkıyla ifa etmek değildir" (MAZC: Devre: I, İctima Senesi: 3, 2nci Cilt: 24 Subat 1326 (1910) Tarihli Otuzdokuzuncu İnikaddan-25 Nisan 1327 (1911) Tarihli Ellisekizinci İnikada Kadar[Ankara]: TBMM Basımevi, 1989), pp. 325-326).

[130] "Eğer hükümet noksanları tanzim etmek isterse, bizim mevki-i mahsusumuzu, mevki-i istisnaimizi düşünerek, umur-u sıhhiye için bir nezaret teşkil etmeli. Bendeniz Bahriye bütçesini tanzim ettiğim zaman şurada pek gözümünüzün önünde mutena bir binayı gezdim, bu gayet muhteşem Bahriye Hastanesi idi. Onun koğuşları gidip gezilse, en göz önünde bulunan ve en mühim bir müessesemiz zannedilen bu hastanede sararmış solmuş çehreler görüldü. Oradaki evlad-ı vatanın bir kere halini görün, acıyacaksınız,

ağlayacaksınız. (...) Düşününüz efendiler, mesela komşularımızdan biriyle bir muharebe etmek lazım gelse, acaba bir fedakarlık var mıdır ki, yapmayalım? Herkes koşmayacak mı? Halbuki milletin başucunda öyle bir düşman bekliyor ki; bir verem illeti, diğeri de illet-i efrenciye namıyla milleti tahrip ediyor. Siz burada gelmiş, israftır diye bağırıyorsunuz. Nasıl hamiyyet bu!" (MAZC: Devre: I, İctima Senesi: 3, 3ncu Cilt: 28 Nisan 1327 (1911) Tarihli 59ncu İnikaddan-21 Mayıs 1327 (1911) Tarihli 75nci İnikada Kadar ([Ankara]: TBMM Basımevi, 1989), p. 695).

[131] "Bu payitahta umum Osmanlıların şerefidir. Osmanlı vatanının şerefidir. Bu şerefte hepimiz alakadar, hepimiz hissedarız. Bu payitahtın selametine ait olan bu istikrazın işgal edilmeyerek kabul olunması taraftarıyım. (Alkış)" (MMZC: Devre: I, İctima Senesi: 2, 2nci Cilt, Fihristi: 16 Kanunusani 1325 Tarihinden-25 Subat 1325 Tarihine Kadar, p. 102).

[132] "Bugün bütün mevcudiyetlerini Osmanlılığın içinde tahlil etmiş olan Ermenilerin böyle kıyam için, mürettep olmak için müheyya bulunmak gibi bir bühtanı, bir iftirayı bütün mevcudiyedim, bütün kalbim, bütün vicdanımla reddederim" (MMZC: Devre: I, İctima Senesi: 1, Cilt: 3: 28 Mart 1325 Tarihli Elli Beşinci İnikattan-14 Mayıs 1325 Tarihli Seksen Birinci İnikada Kadar, p. 130).

[133] Alboyadjian, *Anhedatsogh*.

[134] Krikor Zohrab, "İttihadi yev İtilafi Masin" (About İttihat and İtilaf), *Azadamard*, 30 March/12 April 1912, no. 858 (*Yerger, Vol. VI*, Yerevan, 2004, pp. 173-175.

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ.
ՕՍՄԱՆՑԻ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Ամփոփում)

ՐՈՊԷՐ ՔՈՓԹԱՇ
rober.koptas@gmail.com

Ուսումնասիրութիւնը կ'ամբողջացնէ *Հանդէս*ի նախորդ (35րդ) հատորին մէջ լոյս տեսած աշխատասիրութեան հենքին վրայ կը ներկայացնէ Գրիգոր Զօհրապի կենսագրութիւնը, եւ լուսարձակի տակ կ'առնէ 1908ի սահմանադրութեան հռչակումով ծաւալ առած անոր քաղաքական գործունէութիւնը:

Զօհրապը կը ներկայացուի իբրեւ ատենի հայ քաղաքական շրջանակներու աշխուժ գործիչ եւ պոլսահայ կեդրոնական ներկայացուցիչ: Ան իր բարեկամական զօրաւոր կապերով առնչուած էր նաեւ թուրք յառաջադէմ քաղաքական շրջանակներու: Պատուական հիմնադիր-անդամ էր Ահրար Կուսակցութեան, միաժամանակ զօրաւոր պաշտպանը Իթթիհատին: Կը վերլուծուի հակասութիւնը որ գոյութիւն ունի Զօհրապի՝ իբրեւ կարծր քննադատ մը Իթթիհատի, բայց միաժամանակ զօրաւոր պաշտպանը անոր:

Հեղինակը կը հաւաստէ որ Զօհրապ լաւ գիտէր Իթթիհատի շարքերուն մէջ գործող ազգայնական թուրքերու գոյութիւնը: Միաժամանակ սակայն, ան կը հաւատար որ նոյն այդ կուսակցութեան մէջ հաւաքուած են թուրք ազատամիտ տարրերը, որոնց թիկունք կանգնելով կարելի կրնար դառնալ սահմանադրական վարչակարգին պահպանումը եւ ամրապնդել տակաւ աճող օսմանականութեան գաղափարախօսութիւնը՝ միակ երաշխիքը հայերու ապահով գոյակցութեան՝ Օսմանեան Կայսրութեան մէջ:

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ «ՅՈՅՍԻ ԵՐԳԸ»

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ
mayrenipublishing@comcast.net

Վահան Թէքէեան[1] Եգիպտոսի *Արեւ* թերթի[2] 21 Փետրուար 1916ի համարով ունի առաջնորդող յօդուած մը, զոր վերնագրած է «Յոյսի Երգը»:

Խմբագրական սիւնակներուն մէջ ամփոփուած այդ յօդուածը մէկէ աւելի առումով առանձին հետաքրքրութիւն ներկայացնելով՝ մեզ կը հրաւիրէ մեկնաբանելու զայն:


Յօդուածը կը սկսի այլաբանական յատկանշական պատկերով մը, ուր ընթերցողը կը տարուի լսելու Առաջին Աշխարհամարտի[3] ռազմական գործողութիւններուն ժխորը, միաժամանակ տեսնելով ուրուագիծը հսկայ բանտի մը նմանող օսմանեան բռնատիրութեան, որուն պատերուն քայքայման մէջ իրենց դերն են ունեցած կամաւորական գունդերով թէ ինքնապաշտպանական հերոսամարտերով իրենց արեան տուրքը բերած հայորդիներ, յուսալով որ ա՛լ ինչած է թրքական լուծը թօթափելով Դաշնակից Պետութեան մը թեւարկութեան ներքեւ անցնելու պահը:

Թէքէեանի գրչին տակ թրքական տիրապետութենէն «դաշնակից ազգի մը տիրապետութեան» անցնելու ակնարկութիւնը ուղղակի կ՚առնչուի Հայ Ազգային Պատուիրակութեան[4] պաշտօնական կեցուածքին, որ մշակուած էր Փեթրոկրատի մէջ եւ ներկայացուած Պօղոս Նուպարի[5], որպէսզի այդ հիմամբ վարէ իր բանակցութիւնները Դաշնակից պետութիւններու (Ռուսաստան, Ֆրանսա եւ Անգլիա) ներկայացուցիչներուն հետ[6]:

*Արեւ*ն ու իր շրջանակը կամ իր գլխաւոր աշխատակիցները սերտօրէն կապուած էին Պօղոս Նուպարի հետ: Թերթը կը գործէր իբրեւ խօսափողը Հայ Ազգային Պատուիրակութեան եւ գլխաւոր սատարիչը թէ՛ Պօղոս Նուպարի եւ խումբ մը գործակիցներու նախաձեռնութեամբ 1906ին Գահիրէ հիմնուած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան[7] եւ թէ՛ Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին[8] հաւանութեամբ եւ օրհնութեամբ

Պօղոս Նուպարի յայտարարած Ազգային Շահերու Պաշտպանութեան Հիմնադրամին[9]:

Գլխաւոր առիթը այս «յուսոյ երգ»ին՝ ռուսական բանակին յաղթական յառաջխաղացքն էր արեւելեան ռազմաճակատին վրայ եւ մասնաւորապէս թրքական ուժերուն նահանջը Կարին-Էրզրումէն[10]: Կարնոյ առումը ունէր շրջադարձային այնպիսի տարողութիւն[11], որ իրաւամբ կը կատարէր յուսադրիչ դեր, թէեւ Թէքէեանի մօտեցումով անխառն չէր այդ պահուն բերած ուրախութիւնը:


„ARMENIA"
PERIODICO MENSILE PRO ARMENIA
DIREZIONE ED AMMINISTRAZIONE:
Corso Regina Margherita N. 73
TORINO

Հայութիւնը բազամահազար զոհեր տուած էր տարագրութեան, սովին, կոտորածներուն, բռնի իսլամացման, եւ չէր կրնար իր ուրախութիւնն անխառն ըլլալ, չէր կրնար ժպիտին հետ միախառն արցունք չգտնուիլ վերապրողներու եւ աշխարհասփիւռ հայերու աչքերուն մէջ, ինչպէս որ չէր կրնար բարեգալստեան զգացումներուն կողքն ի վեր չսողոսկիլ ստուերը մեղադրանքի:

Դաշնակիցներէն աւելի՛ն սպասած էր հայութիւնը եւ աւելի՛ շուտ: Թերեւս նաեւ կար մորմոքը յաղթական հերոսամարտէ մը ետք ռուսական զօրքերու նահանջով Վանէն հայոց նահանջին, զոր Թէքէեան եւ իր գաղափարակիցները մինչեւ վերջ պիտի նկատէին անտեղի ու անարդարանալի սխալ:[12]

Կարեւորը, այդ պահուն, այն էր, հեղինակին եւ շատերու համար, որ թուրքին անկումը պիտի ըլլար անխուսափելի, նոյնքան անխուսափելի ըլլալով հայուն վերաշինութեան եւ վերականգնումի ճիգը:

Թուրքին անկման վարակիչ համոզումը կազմած էր հիմը արեւմտահայութեան ճակատագրով զբաղող քաղաքական պատասխանատու դէմքերու գործունէութեան[13]:

Այս համոզումին վառ արտայայտութիւնն էր արդէն Թէքէեանին «Պիտի Իյնաս» ինչեակը՝ ուղղուած «Հայուն Ոսոխին», որ ընթերցողներուն յանձնուած էր *Արեւի* երկրորդ համարով իսկ, 13 Մայիս 1915ին: Հոն Թէքէեան կ'ըսէր.

Պիտի իյնաս այս անգամ ... եւ ա՛լ իսպառ, անյարիր
Պիտի մընաս գետնին վրայ՝ ճանկռտելով հողը դեռ...
Եւ դեռ երկա՛ր չըմեռնիս պիտի, եւ տունըդ մոխիր
Եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի տո՛ւնդ եռուզեռ...
Հերի՛ք որքան աշխարհի ցաւ ու չարիք հասուցիր,
Որքան ի սուգ պատեցիր քաղաք ու գիւղ, դաշտ ու լեռ.
Հերի՛ք մայրերը լացին բոյներնուն վրայ ցանուցիր,
Եւ լեցուցիր մեր սիրտին խորը միայն ոխ ու հեռ...:
Պիտի իյնաս, կ'իյնաս ա՛լ...: Բայց որպէսզի դեռ ճանչնաս
Քու անարգ սիրտըդ ծակող մեծագոյն ցաւը վերջին՝
Պիտի զարնեն քեզ Անո՛նք որ քեզ յաճախ փրկեցին...
Եւ չըմեռած դեռ տեսնես պիտի, ահե՛ղ պատուհաս,
Ծաղկիլը մեր աշխարհին զոր թողուցիր աւերակ,
Եւ մեր խայտանքը ազատ՝ քու ըսպրուկի աչքիդ տակ...[14]:



«Յուսոյ Երգը» գրութեան մտայղացման երկրորդ դրդապատճառ դարձած էր Թէքէեանին՝ «բարեկամ»է կամ «երիտասարդ բժիշկ»է մը ստացած մէկ նամակը, որմէ լայն մէջբերում մը կատարած է ան իր առաջնորդող յօդուածին մէջ:

Ո՞վ էր արդեօք այդ եւրոպաբնակ երիտասարդ բժիշկը:

Նամակագիրին ինքնութիւնը բացայայտող ապացոյցը պիտի յայտնուէր Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան՝ Երուսաղէմ պահպանուող դիւանաթուղթերուն մէջ:

Թէ ինչպէ՞ս Թէքէեանին ուղղուած նամակ մը կրնար յայտնուիլ հոն, կարելի է տրամաբանօրէն ենթադրել թէ այդ նամակը պատահականօրէն կրնայ միացած ըլլալ խումբ մը ուրիշ նամակներու, որոնք անմիջական առնչութիւն ունեցած են Պոլսոյ Ազգային Ժողովին կողմէ Թէքէեանին վստահուած սաղիմական առա-

քելութեան հետ եւ հաւանաբար այդ իսկ պատճառով Թէքէեան որոշած է զանոնք յանձնել Ազգային Ժողովի քարտուղարութեան:

Թէքէեան, 1908ին Պոլիս վերադառնալէ քիչ ետք Ազգային Ընդհանուր Ժողովի երեսփոխան ընտրուած էր Եգիպտոսէն եւ այդ ընտրութիւնը վաւերացուած էր Ազգային Ժողովի 21 Նոյեմբեր 1908ի նիստին[15]: Նոյն ժողովը իր 17 Յունուար 1914ի նիստի ընթացքին Թէքէեանն ընտրած էր աշխարհական պատուիրակ՝ կրօնական պատուիրակ Մաղաքիա Արք. Օրմանեանի[16] հետ քննելու Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մատակարարական կացութիւնը, դարման մը գտնելու համար ատենէ մը իվեր հոն տիրող մտահոգիչ եւ անբաղձալի վիճակին: Համաշխարհային Առաջին Պատերազմն ու այլ պատճառներ Թէքէեանը մղած էին ընդհատելու իր առաքելութիւնն ու անցնելու Եգիպտոս[17]:

Թէքէեան Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան գործերով զբաղելու առաքելութեամբ պատուիրակի դերակատարութիւնը պիտի շարունակէր այս անգամ Ազգային Պատուիրակութեան առաջարկով 1918ի Ապրիլին: Ի տարբերութիւն առաքելութեան առաջին հանգրուանին, որ յաջողութիւն չէր գտած Օրմանեանի անուղիղ ընթացքին հետեւանքով, այս անգամ նոյն նպատակով Երուսաղէմ մեկնած Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանի[18] հետ սերտ գործակցութեամբ կը յաջողի կեանքի կոչել վարչական ժողով մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար զբաղիլ վանքին մատակարարութեամբ:

Վերադառնալով յայտնաբերուած նամակին, որ Իտալիոյ Թորինօ քաղաքէն գրուած է 26 Յունուար 1916ին, անոր հեղինակն էր *Armenia* պարբերականի հրատարակիչը՝ Նշան Տէր Ստեփանեան, որ ծնած էր Երզնկա 1889ին:

Թորինոյի Քաղաքային Արուեստի Թանգարանին մէջ պահպանուած նիւթերու համաձայն, Տէր Ստեփանեան 1913ին Թորինոյի մէջ հաստատած էր կաթնական մանրէաբուժութեան կամ այլապէս մածունի արտադրութեան աշխատանոց մը[19]:

Առաջին Աշխարհամարտը դժուար կացութիւն մը ստեղծած էր եւրոպական շարք մը երկիրներ բնակող թրքահպատակ հայերու համար, որոնց հանդէպ տեղական իշխանութիւններէն անոնք, որոնք պաշտօնապէս կեցուածք պարզած էին ընդդէմ գերմանեւթրքական դաշինքին կամ աւելի հակամէտ էին

պաշտպանելու Անգլիա-Ֆրանսա-Ռուսաստան առանցքին բռնած դիրքը, իբրեւ թշնամի պետութեան քաղաքացիներու կը վերաբերէին այդպիսիներու եւ հակամէտ էին արտաքսելու զանոնք, ինչպէս էր պարագան Անգլիոյ եւ Իտալիոյ մէջ:

Իտալիոյ պարագային, այդ հոսանքին հակազդելու, տեղական հայկական համայնքներու շահերը, անոնց քրիստոնէական նկարագիրն ու իրենց բնակած երկրին հանդէպ հաւատարմութիւնը շեշտելով պաշտպանելու, ապա նաեւ Հայկական Հարցն ու թուրքերու կողմէ հայոց հանդէպ գործադրուող ոճիրները տեղացիներուն ծանօթացնելու համար, Նշան Տէր Ստեփանեան Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանէն Միլան եւ Թորինօ բնակող խումբ մը ուրիշ շրջանաւարտներու հետ մէկտեղ եւ տեղաբնակ ունեւոր հայերու գործակցութեամբ նախաձեռնողներէն կ'ըլլար Իտալիոյ Հայոց Կոմիտէին հիմնադրութեան, կը ստանձնէր անոր քարտուղարի պարտականութիւնը եւ 1915ի Հոկտեմբերին իր խմբագրութեամբ լոյսին կը բերէր առաջին թիւը *Armenia* անուն իտալերէն պարբերականին[20], զոր պիտի հրատարակէր մինչեւ 1918ի Հոկտեմբեր ամիսը, նա՛խ իբրեւ «Հայկական շահերու արձագանգ» հանդիսացող ամսաթերթ՝ պատուակալ տնօրէն ունենալով գրաքննադատ, պատմաբան եւ բանաստեղծ Փրոֆ. Քորրատո Քորրատինօն (1852-1923):

Յետագայ իրադարձութիւններ Թէքէեանն ու Տէր Ստեփանեանը պիտի դարձնէին գործակից ու գաղափարակից:

Գործակի՛ց, որովհետեւ 1919ի աշնան Թէքէեան եւ Տէր Ստեփանեան, երկուքն ալ անդամ՝ Հայ Ազգային Համագումարի, Փարիզէն Պոլսոյ վրայով պիտի ուղղուէին Երեւան՝ հայկական միացեալ կառավարութեան մը ստեղծման գծով բանակցութիւններ ունենալու Հայաստանի Առաջին Հանրապետութեան վարիչներուն հետ:

Գաղափարակի՛ց, որովհետեւ Տէր Ստեփանեան պիտի միանար Փարիզ հիմնուած Հայ Ազգային Ազատական Միութեան[21], որուն գլխաւոր դէմքերէն մին էր Արշակ Չօպանեան եւ որ Թէքէեանի գործակցութեամբ պիտի հարթէր ազգայնական-ռամկավարական հոսանքներու միացումով Ռամկավար Ազատական Կուսակցութեան հիմնադրութեան գետինը 1921 թուականի 1 Հոկտեմբերին:

Ահաւասիկ պարբերականին նամակաթուղթով[22] Թէքէեանին ուղղուած նամակին բովանդակութիւնը, ուր շեղագրած ենք այն հատուածը, զոր Թէքէեան օգտագործած է իր առաջնորդող յօդուածին մէջ: Նկատելի են կէտադրական եւ ուղղագրական կարգ մը տարբերութիւններ, որոնք կրնան սպրդած ըլլալ գրաշարման պահուն կամ հետեւանքը ըլլալ Թէքէեանի միջամտութեան: Բացառուած չէ նաեւ երրորդ կարելիութիւն մը՝ թէ՛ գրաշարական եւ թէ՛ խմբագրական գործօններու համատեղ առկայութիւնը:

* * *

Թորինօ, 26/1/1916

Յարգելի Պարոն Վ. Թէքէեան

Ջերմապէս շնորհակալ եմ Ձեր 2 Դեկտ.ի շատ ազնիւ նամակին համար[23]: Ներեցէք, եթէ, բեռնաւորուած՝ ինչպէս եմ Armeniaի, propagandaի եւ անձնական զբաղումներով, Ձեզի քիչ մ'ուշ պատասխանելու թերութիւնը կը գործեմ: Երախտապարտ ենք Ձեզ՝ «Արեւ»ին մէջ Armenianով զբաղելնուդ[24]: Եւ պիտի խնդրէի՝ որ երբեմն, ինչպէս ամէն նոր թիւի առիթով, քանի մը տողով յանձնարարէիք Armeniaն հայ հասարակութեան: Որքան որ շատ աժան նշանակած ենք բաժանորդագրութեան գինը, այդ անփութանալի հասոյթ մը չի կազմեր Armeniaի աղքատ դրամարկղին համար:

Շնորհակալ եմ նաեւ ջերմապէս «Արեւ»ը, Ձեր պատուական «Արեւ»ը մեզ կանոնաւոր կերպով ղրկելնուդ, եւ կը խնդրեմ որ շարունակէք: Ճիշդ է որ պատերազմին յառաջ բերած փոստի անկանոնութեան պատճառով երբեմն թիւեր կը կորսուին, բայց ինչ որ կը հասնի՝ նուազ կարեւոր չէ մեզ համար: «Արեւ»ի հին թիւերէն շատ երախտիքով պիտի ստանայինք Վանի ինքնապաշտպանութեան վերաբերող յօդուածներ պարունակող թիւերը, ինչպէս եւ անոնք՝ որոնք կարեւոր գրուածքներ կը պարունակեն հայ կամաւորներու եւ 4000 կիլիկեցիներու դիւցազներգութեան[25] վերաբերող:

Հաճոյքով կ'օգտուիմ եւ պիտի օգտուիմ Ձեր թելադրութիւններէն: Դժբաղդաբար հայ գրականութենէն շատ քիչ բան ունինք տրամադրելի եւ պատերազմի այս օրերուն շատ դժուար է ձեռք բերել գիրքեր՝ որոնց ուր ըլլալը, ուր տպուած ըլլալը չենք գիտեր: Ինչպէս տեսած կ'ըլլաք, սակայն, արդէն

Դեկտ. 15 թիւին մէջ հրատարակեցի Գամառ Քաթիպայի[26] գեղեցիկ «Արաքսի արտասուքը»ին թարգմանութիւնը:

Հազիւ Ձեր նամակն ստացայ Ձեր հասցէին ղրկեցի քանի մը թիւ Armeniaի I թիւէն:

Կը շնորհաւորեմ Ձեզ ջերմօրէն «Արեւ»ի ուղղութեան համար: *Շատ ցաւալի բաներ կան, ճիշդ է, մեր ազգին մէջ. բայց ափ անխուսափելի է ամէն ազգի համար: Իմ խոնարհագոյն կարծիքով, մենք քիչ մը չափազանց կը տեսնենք մեր թերութիւնները, եւ շատ քիչ՝ ուրիշներունը, այն պարզ պատճառով որ ինքզինքնիս շատ քիչ կը ճանչնանք այն ամէն իրերուն մէջ՝ որոնք մեր դրական յատկութիւններն են, մինչդեռ ուրիշները առաւելապէս կը ճանչնանք իրենց դրական քան թէ բացասական արժանիքներուն մէջ: Մնաց որ, բնական է թէ աւելի ցայտուն կերպով տեսանելի ըլլան աղքատ եւ թշուառ ազգի մը թերութիւնները, ճիշդ ինչպէս աղքատ եւ թշուառ անձի մը թերութիւնները: Եւ եթէ ինքնաքննադատութիւնը բեղուն գործ է մինչեւ որոշ աստիճան մը, ափկէ վերջ կը դառնայ անշարժութեան եւ վհատութեան աղբիւր: Ես կը կարծեմ՝ թէ մենք նուազ «անմիաբանութիւն» ունէինք, քան ինչ որ սփեղծեցինք անմիաբանութեան դէմ պայքարելով: Եւ մեր անմիաբանութեան ցնորքով ոգեւորուելնուս պատճառը՝ մեր մօտաւոր նախնիքներուն հայկական պատմութիւնը շատ կողմնակի, միամիտ եւ ուրիշ պատմութիւններէն անկախ ճանչնալուն մէջն է: Ես կը յիշեմ թէ ինչպէս 7-8 տարեկան եղած ատենէս ի վեր՝ ամէն օր լսեր եմ մեր անմիաբանութեան մասին: Այնպէս որ մեր մանկութենէն կը սկսինք այդ վարկածով համակուիլ եւ զայն իբր բնազդ մը զգալ, եւ ոչ թէ իբր խստօրէն մտածուած իրականութիւն մը դաւանիլ: Եւ այսպէս ամէն անգամ որ հայը ձեռնարկի մը ձեռք կը զարնէ՝ իր շուրջ կը գտնէ սկեպտիկներու վոհմակ մը, որոնք սկեպտիկ են որովհետեւ նախապաշարուած են հայկական անմիաբանութեան հաւատամքով: Ու եթէ այսօր մեր մէջ իրականապէս գոյութիւն ունի անմիաբանութիւն, ափ մեր հոգիին մէկ բնածին յատկութիւնը չէ, այլ մեր նախապաշարեալ դաստիարակութեան մէկ ծնոյթը:*

Մեր միւս գլխաւոր դժբաղդութիւնն է եղած այն պարագան՝ որ լուրջ եւ մեծ պետեր չենք ունեցած եւ թերեւս ալ այսօր իսկ չունինք: Աւելի լաւ եղած պիտի ըլլար, եթէ մեր գործերը վարուած ըլլային մեծաքանակ bon sens ունեցող ուղղամիտ վաճառական եւ հետեւաբար գործնական մարդոցմէ, քան թէ մեր մտաւորականութենէն՝ որ թերութիւնը ունեցած է միշտ շատ գաղափարապաշտ ըլլալու եւ այդ գաղափարապաշտութեան հիւանդութեան բերումով իրականութիւնը իրականօրէն չտեսնելու: Մենք դեռ երէկ չէինք հասկցած եւ չեմ գիտեր թէ այսօր լաւ հասկցա՞ծ ենք, թէ այս աշխարհին մէջ այլեւս ամէն բան վաճառականութիւն է, թէ ամէն բան, մէջն առնելով գեղեցիկ բաները, պէտք է գնել, վճարել: Մենք այսօրուան արիւնոտ արցունքները պիտի չլայինք հաւանօրէն՝ եթէ փոխանակ մեր աւանդական ողբերով լեցնելու Եւրոպան, հոն քիչ մը աջ ու ձախ, մասնաւորապէս լրագիրներու խմբագրատուները[27], *ոսկի ցանած ըլլայինք:*

Հայաստանի ինքնավարութիւնն այսօր անվիճելի կարելիութիւն է: Ու ես իմ համեստ կարծիքով համոզուած եմ՝ որ եթէ մենք գիտնանք բաւականաչափ դրամ հաւաքել եւ նպատակայարմարօրէն գործածել, ան իրականութիւն պիտի ըլլայ: Անշուշտ խելքը, հանճարը, իրաւունքը եւն. իրենց արժէքը ունին, բայց այսօրուան աշխարհին մէջ այդ ամէն բաները կուտ չեն արժեր եթէ դրամով առանցքուած չըլլան: Չափազանց հեռու ենք ասպետական դարերէն: Ամէն ջանք թափելու է «Ազգ. Շահերու Հիմնադրամ»ը ուռճացնելու համար: Կ'ըսեն, աշխարհի մէջ յիմարօրէն տարածուած կարծիք է, թէ դրամ ունինք եւ շատ. արդ, այդ դրամները, եթէ կան, մէջտեղ հանելու ատենն է: Ես համոզուած եմ ամբողջ էութեամբս որ այսօր եւրոպական քաղաքականութեան մէջ նոյնիսկ ամենաչնչին ազդեցութիւն ունեցող անհատներուն 1000էն 1ը հազիւ իրականապէս ցաւակից է մեր վիճակին: Եւրոպան կ'անգիտանայ արցունքը, լացը, ան միայն հիանալու տրամադիր է եւ մանաւանդ դրամին վրայ հիանալու:

Ներեցէք այս թերեւս աւելորդ խօսքերով Ձեր ժամանակէն գողնալուս եւ ընդունեցէք իմ ջերմագին յարգանքներս:

Ն. Տէր Ստեփանեան

* * *

Ահաւասիկ Թէքէեանի առաջնորդող յօդուածն իր ամբողջութեամբ:

ՅՈՅՍԻ ԵՐԳԸ

Այժմէութեան խոշոր աղմուկին մէջէն, զոր հեռուէն թռչող եկող թնդանօթներու գոռումը, հրացաններու որոտն ու սուիններու շաչիւնը կը յօրինեն, ահա՛ նորէն կը լսուի Հայուն անունը, տկար ու երկչոտ, բանտի մը նկուղներուն մէջ խեղդուած մարդու մը ձայնին պէս, որ շէնքին փլչելովը երեւան կ'ելլէ եւ իր անզօր բայց որոշ նօթը կը խառնէ շուրջի ահաւոր ժխորին: Ձինք մեռած կը կարծէին, եւ ահա՛ ողջ է դեռ: Ան մինչեւ իսկ կրնայ, տեղ-տեղ, դուրս չգալ փլատակներուն տակէն, բայց թշնամի ու բարեկամ զինքը նորէն պիտի տեսնեն, նորէն պիտի լսեն իր հծծիւնը՝ որ մահուան եւ ուրախութեան հծծիւնն է միանգամայն, իբրեւ ուրուական մը պիտի տեսնեն ու պիտի լսեն զայն, ա՛յնքան լեցուն են այդ տեղերը իրմով, այնքան սպասեր էր ան այս վայրկեանին եւ մինչեւ վերջը իր ակռաներովն ու արմուկներովը կրծեր, մաշեցուցեր էր պատերն այս շէնքին որ վերէն վար կը փլչի կ'իյնայ ահա՛...: Էրզրումէն մինչեւ Տրապիզոն, մինչեւ Տիգրանակերտ, մինչեւ Ալեքսանտրէթ եւ մինչեւ Պօլիս, ամենուրեք ուր Հայ կար, ամէն քաղաք կամ գիւղ որ վաղը Թուրքին տիրապետութենէն պիտի անցնի դաշնակից ազգի մը տիրապետութեան ներքեւ, նոյն պատկերը պիտի պարզէ եւ նոյն ստուերը պիտի կանգնի անոր սեմին վրայ՝ աչքերուն մէջ ժպիտ եւ արցունք միանգամայն, ու բազուկները երկարած անհուն ժէսթով մը որ՝ բարի գալուստի եւ միեւնոյն ատեն մեղադրանքի ժէսթ մըն է կարծես...:

Ստուե՞ր, ի՞նչ ստուեր: Եթէ մինչեւ իսկ ան դադրած ըլլար մարմնով ապրելէ այդ տեղերուն վրայ, իր հոգին հոն էր եւ հոն է անշուշտ, եւ այդ հոգին շուտով պիտի միանայ, վստահ ենք, հայրենի հողին, օդին ու ջուրին, պիտի մարմնանայ վերստին եւ պիտի շարունակէ ցեղին գոյութիւնը զոր արիւնարբու եւ յիմար ոսոխ մը[28] իսպառ ջնջել կարծեց ա՛յսպէս, քանի մը ամսուան մէջ, սուրով եւ սովով միայն...: Էրզրումի մէջ եւ ուրիշ ամէն տեղեր, մենք ներկայ պիտի ըլլանք, այո՛, թուրք կայսրութեան փլուզումին, մեզ պիտի տեսնեն ամենքը, եւ մենք պիտի սկսինք անմիջապէս,

աւերակներուն վրան իսկ, մեր շինարար աշխատանքին որ մեր պատմական դերն է: Փլուզումը սկսած է, այս անգամ վճռապէս ու ճակատագրօրէն սկսած, ու ոչինչ զայն պիտի կասեցնէ այլեւս, ինչպէս որ ոչինչ պիտի կրնայ մեզ ալ կասեցնել—ոչ իսկ մե՛նք ինքզինքնիս—որ վերաշինութեան գործին մէջ մեր աշխատանքի խոշոր բաժինը ունենանք: Ասիկա նոյնքան անխուսափելի, նոյնքան ճակատագրական է՝ որքան անկումը միւսին:

***

Այս յուսալից ու կենսախայտ *նօթ*ին, որ այսօր, պարագաներուն դրդմամբը, կը հնչէ գրչիս տակ նո՛յնքան ինքնաբուխ որքան միւս տխուր *նօթ*ը որ հնչեց երկար ամիսներու ընթացքին, կուգայ միանալ, շատ բարեդէպ կերպով, հեռաւոր բարեկամի մը նամակին պարունակութիւնը, կատարեալ երգ մը յոյսի եւ հաւատքի, ծանր ու լուրջ՝ ինչպէս վայել է մեր վիճակին մէջ գտնուող ազգի մը:

Բարեկամը որ կը գրէ, անձամբ անծանօթ է ինծի: Գիտեմ միայն թէ երիտասարդ բժիշկ մըն է ան, Վենետիկի աշակերտ, որ եւրոպական երկրի մը մէջ հայկական բրօբականտի շատ օգտակար գործ մը կը կատարէ՝ շատ ալ համեստ կերպով: Ահա՛ թէ ինչ կ'ըսէ ան.

«… Շատ ցաւալի բաներ կան, ճիշդ է, մեր ազգին մէջ. բայց ատ անխուսափելի է ամէն ազգի համար: Իմ խոնարհագոյն կարծիքով, մենք քիչ մը չափազանց կը տեսնենք մեր թերութիւնները եւ շատ քիչ ուրիշներունը, այն պարզ պատճառով որ ինքզինքնիս շատ քիչ կը ճանչնանք այն ամէն իրերուն մէջ որոնք մեր դրական յատկութիւններն են, մինչդեռ ուրիշները առաւելապէս կը ճանչնանք իրենց դրական քան թէ բացասական արժանիքներուն մէջ: Մնաց որ, բնական է թէ աւելի ցայտուն կերպով տեսանելի ըլլան աղքատ եւ թշուառ ազգի մը թերութիւնները, ճիշդ ինչպէս աղքատ եւ թշուառ անձի մը թերութիւնները: Եւ եթէ ինքնաքննադատութիւնը բեղուն գործ է մինչեւ որոշ աստիճան մը, ատկէ վերջ կը դառնայ անշարժութեան եւ վհատութեան աղբիւր: Ես կը կարծեմ՝ թէ մենք նուազ «անմիաբանութիւն» ունէինք, քան ինչ որ սփեղծեցինք անմիաբանութեան դէմ պայքարելով: Եւ մեր անմիաբանութեան ցնորքով ոգեւորուելուն պատճառը՝ մեր մօտաւոր նախնիքներուն հայկա-

կան պատմութիւնը շատ կողմնակի, միամիտ եւ ուրիշ պատմութիւններէն անկախ ճանչնալուն մէջն է: Ես կը յիշեմ թէ ինչպէս 7-8 տարեկան եղած ատենէս ի վեր՝ ամէն օր լսեր եմ մեր անմիաբանութեան մասին: Այնպէս որ մեր մանկութենէն կ'սկսինք այդ վարկածով համակուիլ եւ զայն իբր բնազդ մը զգալ, եւ ո՛չ թէ իբր խստօրէն մտածուած իրականութիւն մը դաւանիլ: Եւ այսպէս ամէն անգամ որ հայը ձեռնարկի մը ձեռք կը զարնէ՝ իր շուրջ կը գտնէ սկեպտիկներու վոհմակ մը, որոնք սկեպտիկ են որովհետեւ նախապաշարուած են հայկական անմիաբանութեան հաւատամքով: Ու եթէ այսօր մեր մէջ իրականապէս գոյութիւն ունի անմիաբանութիւն, ատ մեր հոգիին մէկ բնածին յատկութիւնը չէ, այլ մեր նախապաշարեալ դաստիարակութեան մէկ ծնոյթը:

Մեր միւս գլխաւոր դժբախտութիւնն է եղած այն պարագան՝ որ լուրջ եւ մեծ պետեր չենք ունեցած եւ թերեւս ալ այսօր իսկ չունինք: Աւելի լաւ եղած պիտի ըլլար, եթէ մեր գործերը վարուած ըլլային մեծաքանակ bon sens ունեցող ուղղամիտ վաճառական եւ հետեւաբար գործնական մարդոցմէ, քան թէ մեր մտաւորականութենէն որ թերութիւնը ունեցած է միշտ շատ գաղափարապաշտ ըլլալու եւ այդ գաղափարապաշտութեան հիւանդութեան բերումով իրականութիւնը իրականօրէն չտեսնելու: Մենք դեռ երէկ չէինք հասկցած եւ չեմ գիտեր թէ այսօր լաւ հասկցա՞ծ ենք, թէ այս աշխարհին մէջ այլեւս ամէն բան վաճառականութիւն է, թէ ամէն բան, մէջն առնելով գեղեցիկ բաները, պէտք է գնել, վճարել: Մենք այսօրուան արիւնոտ արցունքները պիտի չլայինք հաւանօրէն՝ եթէ փոխանակ մեր աւանդական ողբերով լեցնելու Եւրոպան, հոն քիչ մը աջ ու ձախ, ոսկի ցանած ըլլայինք:

Հայաստանի ինքնավարութիւնն այսօր անվիճելի կարելիութիւն է: Ու ես իմ համեստ կարծիքով համոզուած եմ՝ որ եթէ մենք գիտնանք բաւականաչափ դրամ հաւաքել եւ նպատակայարմարօրէն գործածել, ան իրականութիւն պիտի ըլլայ: Անշուշտ խելքը, հանճարը, իրաւունքը եւլն. իրենց արժէքը ունին, բայց այսօրուան աշխարհին մէջ այդ ամէն բաները կուտ չեն արժեր եթէ դրամով առանցքուած չըլլան: Չափազանց հեռու ենք ասպետական դարերէն: Ամէն ջանք թափելու է «Ազգ. Շահերու Հիմնադրամ»ը ուռճացնելու համար: Կ'ըսեն, աշխարհի

մէջ յիմարօրէն տարածուած կարծիք է, թէ դրամ ունինք եւ շատ. արդ, այդ դրամները, եթէ կան, մէջտեղ հանելու ատենն է...:»

Յոյսի երգ մը կոչեցի այս նամակը, որովհետեւ ամէն բանէ առաջ Հայու առողջ միտք մը, զարգացած եւ առողջ մնացած միտք մը, կը ցոլացնէ ան: Իմ գաղափարապաշտութիւնս թերեւս հարուած մը կը կրէ անկէ, բայց իմ դրապաշտութիւնս, միւս կողմէ, ինքզինք ա՛յնպէս զօրացած ու փայփայուած կ՚զգայ անով՝ որ յօժարակամ կը մոռնամ հարուածին ցաւը...: Ես ուրիշ երիտասարդ[29] մըն ալ կը ճանչնամ, այստեղ, որ թէեւ ինքզինք այսքան լաւ բացատրելու կարող չէ, բայց նոյնպէս առողջ մտքի—եւ մարմնի ալ—նախանձելի տիպար մը ըլլալով՝ յաճախ ինծի կը թելադրէ որ «քիչ մըն ալ մեր աղէկ կողմերուն վրայ» խօսինք...:

Մինչեւ հիմա չկրցանք, կը խոստովանիմ: Այսուհետեւ, պարագաներն ալ օգնելով, թերեւս կարելի կ՚ըլլայ ատիկա...:

Վահան Թէքէեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Վահան Թէքէեան (1878-1945), բանաստեղծ, խմբագիր, ազգային հասարակական գործիչ:

[2] Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի շրջանակի պաշտօնաթերթ *Արեւ*ը իբրեւ «ազգային շահերու օրկան» հրատարակուիլ կը սկսի Աղեքսանդրիա, շաբաթը երեք անգամ, 11 Մայիս 1915ին, Լեւոն Մկրտիչեանի արտօնատիրութեամբ եւ Թէքէեանի տնօրէն-խմբագրապետութեամբ: Միայն 4 Մայիս 1921ին է որ թերթը բացայայտօրէն հանրութեան կը ներկայանայ «Պաշտօնաթերթ Հայ Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակի» նշումով: 7 Հոկտեմբեր 1921ի թիւը լոյս կը տեսնէ իբրեւ պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակի: 11 Դեկտեմբեր 1922ին *Արեւ* լոյսին կու գայ իբրեւ «ժողովրդական օրաթերթ», իսկ 9 Օգոստոս 1924ին *Արեւ* օրաթերթը կը փոխադրուի Գահիրէ՝ թերթին ճակատին վերստին ներկայանալով իբրեւ «Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակին»:

[3] Առաջին Աշխարհամարտը սկիզբ առած է 28 Յուլիս 1914ին՝ նոյն տարուան Յունիս 28ին Սարայեւոյի մէջ Աւստրիոյ գահաժառանգ Ֆրանց Ֆերտինանտի ահաբեկումէն ամիս մը ետք Սերպիոյ դէմ Աւստրօ-Հունգարական կայսրութեան յայտարարած պատերազմով եւ վերջ գտած է 11 Նոյեմբեր 1918ին հռչակուած զինադադարով:

[4] Հայ Ազգային Պատուիրակութիւնը Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաձեռնութեամբ կեանքի կոչուած էր 10 Նոյեմբեր 1920ին՝ արեւմտահայոց

իրաւունքները եւրոպական պետութիւններու միջամտութեամբ պաշտպանելու նպատակով: Պօղոս Նուպարի նախագահութեան ներքեւ գործող պատուիրակութեան կ'անդամակցէին Գէորգ Արք. Իւթիւճեան, Եագուպ Արթին, Մինաս Չերազ եւ Յարութիւն Մոստիչեան: Պատուիրակութիւնը իր աշխատանքները աւարտած նկատած էր 1914ի Փետրուարին՝ նկատելով որ Օսմանեան Թուրքիան ի վերջոյ ստորագրած էր հայկական նահանգներու բարեկարգութեան փաստաթուղթը 8 Փետրուար 1914ին, բայց Կաթողիկոսը խնդրած էր որ Նուպար շարունակէ պահպանել իր պաշտօնը: Պատուիրակութեան գործունէութեան երկրորդ շրջանը փաստօրէն պիտի սկսէր 1915ի Ապրիլին՝ առանց Մինաս Չերազի մասնակցութեան, Նուպարի կողմէ Կաթողիկոսին 28 Ապրիլ թուակիր հեռագրին ստացումէն ետք:

[5] Պօղոս Նուպար (1851-1930), հիմնադիր նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան:

[6] Փեթրոկրատի ծրագիրը կը նախատեսէր.

1. Ինքնավար Հայաստանի մը ստեղծումը Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մէջ:
2. Պահպանումը Թուրքիոյ գերիշխանութեան, որ մի միայն պէտք է սահմանափակուի տէրութեանց ընտրելիք Ընդհանուր Կառավարիչին Սուլթանին կողմէ անուանման եւ թուրք դրօշակին պահպանման մէջ: Անընդունելի են Հայաստանի ներքին գործերուն մէջ ո՛եւէ միջամտութիւն, ինչպէս նաեւ թրքական զինուորներու ներկայութիւնը Հայաստանի մէջ:
3. Հայաստանի թեւարկութիւն (protectorat) երեք տէրութեանց՝ Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի կողմէ:
4. Հայաստանի հողային սահմանները պէտք է պարունակեն, վեց վիլայէթներու հետ (ի բաց առեալ արեւմուտքի եւ հարաւի շրջանակները, որոնք գրեթէ ամբողջովին իսլամ բնակչութիւն ունին), Կիլիկիան՝ Միջերկրականի վրայ Մերսին նաւահանգիստով (Ալեքսանտրէթի ծոցը եւ Եումուրթալըքը նոյնպէս դուրս թողուած են):
5. Ինքնավարութեան ծրագիր մը, հիմնուած րեֆորմներու առաջին նախագծին վրայ, զոր Ռուսիա 1913ի ամառը առաջարկեց Կ. Պոլիսի մէջ, քաղաքական պայմաններու փոփոխութեան համաձայն ընդլայնուած բարեփոխումներով:

Նուպարի 1915-1916 թուականներու բանակցութիւններուն ամփոփագրերուն եւ թղթակցութիւններուն ի մօտոյ հրատարակելի հայերէն ժողովածուին մաս կազմող այս փաստաթուղթին ընդարձակ օրինակը տեսնել՝ Ջոն Կիրակոսեանի *Հայաստանը Միջազգային Եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում 1828-1923* ժողովածուին մէջ (Երեւան, Հայաստան Հրատ., 1972, էջ 371-374):

[7] Իր առաջին իսկ թիւին երկրորդ էջով տրուած յայտարարութեամբ մը խմբագրութիւնը կը նշէր. «ԱՐԵՒ Եգիպտոսի միակ հայաթերթն է որ օրը օրին կը հրատարակէ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ կեանքն ու գործը»:

[8] Գէորգ Ե. Սուրէնեանց (1847-1930) 1911ի Նոյեմբերին ընտրուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ, որուն իբրեւ Եգիպտոսի վիճակի աշխարհական ներկայացուցիչ մասնակցութիւն բերած էր Թէքէեան:

[9] *Արեւ*ի 1915ի Յուլիս 9ի համարով եւ «Ազգային Հիմնադրամը Եւ Ազգային Կարգախօսը» խորագիրը կրող գրութեան մը մէջ Վահան Մալէզեան կը յայտնէ թէ Նուպար 1915ի Մարտի սկիզբը ՀԲԸՄի ժողովատեղիին եւ ապա Հելիոպոլսոյ իր բնակարանին մէջ խորհրդակցութիւններ ունեցած էր այն համոզումով, որ անհրաժեշտ էր Եգիպտոսի մէջ կեդրոնացնել ազգային-քաղաքական մարմին մը եւ կազմել ազգային հիմնադրամ մը:

«Սակայն ... էնթրիկներու զոհ գնաց գործը. նախ՝ աշխատեցան գործադրութիւնը յետաձգել, յետոյ՝ իր սաղմին մէջ զայն վիժեցնել յաջողեցան անո՛նք՝ որ հասկնալի պատճառներ ունէին այս ազգաշէն ձեռնարկութեան մէջ մրցակցութեան վտանգ մը տեսնելու...:

Վսեմ. Պօղոս Նուպար փաշա ուշ հասկցաւ լարուած մեքենայութեանց բուն իմաստը, բայց երբ իրազեկ եղաւ կացութեան, բոլորովին մէկդի դրաւ Եգիպտոսի մէջ Կեդրոնական Յանձնախումբ մը կազմելու գաղափարը, եւ դառնութեամբ մը զոր չի ծածկեց՝ իր հոյակապ ծրագիրը զեղչեց «Ազգային Շահերու Պաշտպանութեան» յատուկ հանգանակութեան մը պարզ ձեռնարկին:

Այս պայմաններուն մէջ էր որ արտասահմանի Հայութիւնը չի կրցաւ ունենալ ազգային քաղաքականութեան կեդրոնական ղեկավար մարմին մը, ինչպէս Կովկաս յաջողած էր ունենալ ազգային կեդրոնական պիւրօ մը»:

Ապա անուան որդեգրման ակնարկելով, Մալէզեան կը տեղեկացնէ թէ Նուպար շրջահայեցաբար նշելով որ թրքահայութիւնը կը գտնուի թուրք խուժանի քմահաճոյքին տակ, իսկ եգիպտահայութիւնը՝ մահմետական երկրի մը մէջ, «Ազգային շահեր» անունը կացութեան փրկութեան կը ծառայէ:

[10] Կարին-Էրզրումի ռուսական արշաւանքը սկսած էր 10 Յունուար 1916ին եւ աւարտած՝ նոյն տարուան 16 Փետրուարին, դժուար բայց հետեւողական յառաջխաղացքներով:

[11] Պատմաբաններ յետագային վերլուծելով ռուսական ռազմական գործողութիւնները պիտի նշէին թէ ռուսերը իրենց յաղթարշաւը չշարունակելով եւ 1916ի Մարտին վերջ տալով իրենց յառաջխաղացքին՝ չկրցան առաւելագոյն արդիւնք քաղել Կարնոյ առումէն: 1916ի Փետրուարին, սակայն, կը տիրէր այն խանդավառութիւնը, թէ Կարնոյ անկումով դուռը լայն բացուած կ'ըլլար ռուսական բանակներուն առջեւ՝ թափանցելու մինչեւ Թուրքիոյ սիրտը: Խօսուն է այս առումով *Արեւ*ի 18 Փետրուար 1916ի թիւով Մ. Տ. (Միհրան Տամատեան) ստորագրութեամբ եւ «Վախճանին Սկիզբը» վերտառութեամբ փոքր գրութիւն մը, ուր կ'ըսուի. «Ներկայ միջազգային պատերազմի ամբողջ տեւողութեան միջոցին չէ՛ պատահած Հայկական ճակատին վրայ դէպք մը որ այնչափ մեծ կարեւորութիւն ունենայ՝ որչափ Էրզրումի առումը...: ...Էրզրումի առումը առաջնակարգ նշանակութիւն ունի

թէ՛ հայկական եւ թէ՛ մանաւանդ ռազմագիտական տեսակէտով: Էրզրումի առումը ոչ միայն կ'ամրացնէ ու վերջնական կը դարձնէ Վանայ գրաւումը, այլեւ կը նշանակէ խիստ մօտ ժամանակէն անխուսափելի անկումը Բաղէշին ու Մուշին, որով հայկական վեց նահանգներէն երեք կարեւորագոյնները՝ Էրզրում, Բաղէշ եւ Վան կրնան վերջնականապէս կորսուած նկատուիլ Թուրքիոյ համար: Ռուսական այս մեծ յաղթանակէն վերջ՝ ո՛չ միայն Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգները՝ այլ կարելի է ըսել ամբողջ Փոքր Ասիան բաց եւ անպաշտպան կը մնան Նիքոլա մեծ դուքսին քաջայաղթ բանակներուն առջեւ: ... Որչափ որ ազգային մեծ սուգեր ունենանք ողբալու, որչափ որ հայկական շահերու տեսակէտով իրաւունք ունենանք քիչ մը շատ ուշացած նկատելու այս վճռական եղելութիւնը, չենք կրնար զսպել մեր ուրախութիւնը՝ երբ ամէն պատճառ ունինք հաւատալու որ, ազատութեան ու բարօրութեան արշալոյսը կը բացուի վերջապէս դարաւոր ճնշումի ենթարկուած մեր դժբաղդ բայց անկորնչելի ազգին մնացորդներուն»:

[12] Այս «Յոյսի Երգը» առաջնորդողէն համար մը առաջ, Թէքէեան իր «Ձայնը Հնչեց» խորագրով առաջնորդող յօդուածին մէջ (*Արեւ* 18 Մայիս 1916) կը գրէ. «Ձայնը հնչեց...: Այս անգամ ճիշդ իր տեղէն, Էրզրումէն հնչեց: Ռուսօ-թուրք պատերազմը կարծես հիմա է որ իր վաւերական գոյնը կը ստանայ, իր պատմական շաւղին մէջ կը մտնէ, իր ռազմական տեսանելի ու շօշափելի պատկերը կը պարզէ: ...Եւ դէպքը պատահեցաւ... մեզի համար շատ ուշ, աւա՜ղ: Ինչո՞ւ պէտք է որ հեռագիրներու բերած այս աւետաբեր լուրը կարդալով, իւրաքանչիւր Հայ սրտի անհուն սեղմում մը զգայ այսօր, եւ փոխանակ ուրախութեան՝ ցաւի պատկերներ արթննան իր մտքին մէջ.- Դեռ Հայ մնացա՞ծ էր այնտեղ՝ երբ ազատարար բանակը գրոհ տուաւ Կարնոյ բերդերէն ներս... իսկ Թուրքիոյ ուրիշ կողմերու Հայե՞րը, ո՞ւր, ինչպէ՞ս, ի՞նչ վիճակի մէջ պիտի լսեն զայն... ինչպէ՜ս երջանիկ եղան—հակառակ վերջէն իրենց կրած մեծ դժբախտութեան—այս պատերազմի ընթացքին Վանեցիք ալ, երբ լման ու յաղթական, յանձնեցին իրենց քաղաքը Ռուսին, որ հին դարերու ասպետի մը պէս կը վազէր անոնց օգնութեան ձայնին, եւ ասպետավայել գեղեցիկ *ժէսթ*ով մը ՝ իրենց կը յանձնէր քաղաքը, զիրենք ազատելէ վերջ...: Մինչ հիմա...»:

[13] Յատկանշական են այս ուղղութեամբ Ա. Աշխարհամարտի շրջանին Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Նուպարի իբրեւ Օսմանեան Կայսրութեան բռնատիրութեան ներքեւ հեծող հայկական նահանգներու եւ Կիլիկիոյ հայ ազգաբնակչութեան իրաւունքներու խօսնակի վարած բանակցութիւններն ու գրած նամակները, որոնք պարփակուած են 2րդ ծանօթագրութեամբ նշուած անգլերէն ժողովածուին մէջ:

[14] Վերը ներկայացուող «Պիտի Իյնաս» հնչեակը Թէքէեան վերամշակած է յետագային եւ ընդգրկած՝ 1919ին Փարիզ հրատարակուած իր *Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս* հատորին մէջ (էջ 11): Թէքէեան հնչեակին գրութեան իբրեւ թուական նշած է 1914, որմէ կը փորձուինք մտածել թէ թուրքերու՝ գերմաններու կողքին Առաջին Աշխարհամարտին մասնակցութիւն բերելու

արարքը եղած ըլլալու է դրդապատճառը: Ահաւասիկ այդ վերամշակեալ օրինակը, որ ուղղուած է «Թուրքին» եւ ոչ թէ «Հայուն Ոսոխին».

Պիտի իյնաս այս անգամ, եւ ա՛լ իսպառ, անյարիր
Պիտի մընաս գետնին վրայ՝ ճանկռտելով հողը դեռ,
Եւ դեռ երկա՜ր չը մեռնիս պիտի եւ փունըդ մոխիր,
Եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի փո՛ւնդ եռուզեռ...

Հերի՛ք որքան աշխարհի ցաւ ու չարիք հասուցիր,
Որքան ի սուգ թաթխեցիր քաղաք ու գիւղ, դաշտ ու լեռ.
Հերի՛ք մայրերը լացին բոյներնուն վրայ ցանուցիր
Եւ մեր սիրող սրտերուն մէջ լեցուցի՜ր ոխ ու հեռ...

Պիտի իյնաս, կ՚իյնաս ա՛լ... Բայց որպէս զի դեռ ճանչնաս
Քու անարգ սիրտըդ ծակող մեծագոյն ցաւը վերջին՝
Պիտի զարնեն քեզ անո՛նք որ քեզ յաճախ փրկեցին...,

Եւ չը մեռած՝ դեռ տեսնե՜ս պիտի, արդա՛ր պատուհաս,
Ծաղկիլը մե՛ր աշխարհին զոր թողուցիր աւերակ,
Ու ցնծութի՛ւնը մերին՝ քու ըսպրուկի աչքիդ տակ...

[15] Արշակ Ալպօյաճեան, *Վահան Թէքէեան Իբր Հանրային Մարդ Եւ Հրապարակագիր,* Պէյրութ, Հայ Տիպ Քոմփիւկրաֆ-Թեքնոփրէս, 1988, էջ 116:

[16] Մաղաքիա Օրմանեան (1841-1918), Պատրիարք Թուրքիոյ Հայոց 1896-1908 տարիներուն: Իր *Խոհք Եւ Խօսք* (Երուսաղէմ, 1929) հատորին մէջ երկարօրէն անդրադարձած է իրեն եւ Թէքէեանի վստահուած առաքելութեան՝ շարժելով Թէքէեանի դժգոհութիւնը եւ պատճառ դառնալով որ Թէքէեան հարկ տեսնէ ճշդումներ կատարել *Արեւի* 4-11 եւ 13-15 Յունիս 1929ի համարներով:

[17] Ալպօյաճեան Թէքէեանի կեանքին եւ գործին նուիրուած իր վերոյիշեալ աշխատութեան մէջ ընդարձակ բաժին մը յատկացուցած է այս սաղիմական, պայմանականօրէն, առաջին առաքելութեան (էջ 192-213):

[18] Թորգոմ Գուշակեան (1874-1939) ձեռնհասօրէն վարելէ ետք Եգիպտոսի Հայոց Թեմի առաջնորդութիւնը եւ իբրեւ կաթողիկոսական նուիրակ առաքելութիւններ կատարելով Պարսկաստանի եւ Հնդկաստանի մէջ, 1931ին ընտրուած էր Պատրիարք Հայ Երուսաղէմի:

[19] http://www.museoarteurbana.it/gelati-chiavacci-e-yogurt-stepanian/, եւ http://blog.libero.it/lfde/10842650.html , 9 Ապրիլ 1916ի դրութեամբ:

[20] Յակոբիկ Մանուկեան, «Իտալիոյ Հայոց Միութիւնը», http://www.unionearmeni.it/storia/, 9 Ապրիլ 2016ի դրութեամբ:

[21] Հայ Ազգային Ազատական Միութիւնը հանրութեան պաշտօնապէս կը ներկայանար 23 Օգոստոս 1919ին Փարիզ հրատարակուած *Հայաստան* պաշտօնաթերթով: Հոն Չօպանեանի ստորագրութեամբ կը տարփողուէր «Վերակազմեալ Հնչակեան, Սահմ. Ռամկավար եւ Հայ Ժողովրդական» կուսակցութիւններուն միացման եւ ձուլման գաղափարը, որպէսզի իրենց

շուրջ բոլորելով նաեւ քաղաքական կուսակցութիւններէ հեռու մնացած «հայ ազգին ահագին մեծամասնութիւնը», կազմեն «յառաջդիմական, ազգասիրական, ապադասակարգային մեծ կուսակցութիւն մը» (էջ 2): Չօպանեանի գրութեան կը յաջորդէր Տէր Ստեփանեանի «Վատառողջ Պայքարը» խորագրեալ յօդուածաշարքին առաջին մասը, ուր կը քննադատուէին Փարիզ գումարուող Ազգային Համագումարի նիստերը ներքին քաղաքականութեան վերաբերող խնդիրներու եւ վէճերու թատերավայր դարձնող կողմերը, որոնց աւագ ուշադրութիւնը կեդրոնացած պէտք է ըլլար հայոց արտաքին քաղաքականութեան վերաբերող հարցերու վրայ:

[22] Նամակաթուղթի ճակատին կը կարդանք "Armenia" Periodico mensile pro Armenia. direzione ed amministrazione: Corso Regina Margherita N. 73, Torino: Ասիկա այն նոյն հասցէն է, որ կ'երեւի Տէր Ստեփանեանի մածունի աշխատանոցի կամ արտադրամասի ծանուցաթերթիկին վրայ (տեսնել՝ կցեալ նկարը):

[23] Ոչ մէկ տեղ հանդիպած ենք այդ նամակին պատճէնին, ցարդ:

[24] *Արեւ*ի 1 Նոյեմբեր 1915ի համարին երրորդ էջով, «Ազգային Քրոնիկ» գլխուն ներքեւ, կը հանդիպինք հետեւեալ հատուածին. «*Իտալերէն «Արմէնիա»*.- Կ'ողջունենք երեւումը իտալերէն Armenia ամսաթերթին, որուն երկրորդ թիւը միայն ստացանք, եւ որ սկսած է հրատարակուիլ Հոկտ. 15էն սկսեալ, Թօրինոյի մէջ, պատուակալ տնօրէնութեամբ Բրոֆ. Քօրրատօ Քօրրատինոյի:

«Սոյն թերթը, բացի հայկական խնդրոյ վերաբերեալ յօդուածներէ՝ ստորագրուած Իտալացի հայասէրներու կողմէ, կ'ամփոփէ մէկ կողմէ՝ հայկական աղբիւրէ ստացուած տեղեկութիւնները՝ ի պէտս հայկական դատով զբաղող եւրոպացիներու, եւ միւս կողմէ՝ օտար մամուլին մէջ Հայոց մասին երեւցած տեղեկութիւնները եւ կարեւոր յօդուածները: Անիկա այս կերպով կրկնակ շահեկանութիւն մը ունի թէ՛ Հայերու եւ թէ մեր խնդրով զբաղող օտարազգիներու համար: Ունի նաեւ պատկերազարդ ըլլալու առաւելութիւնը:

«Ամսաթերթին Բ. համարին մէջ տրուած Ա. համարի բովանդակութենէն հաճոյքով կ'իմանանք՝ որ անոր մէջ թարգմանաբար տպուած են «Արեւ»ի մէջ երեւցած հետեւեալ յօդուածները. «Բրուսիական թթուն»՝ Միքայէլ Կիւրճեանի, «Քսանը»՝ Անցորդի:

«Ամէն քաջալերութեան արժանի այս ամսաթերթին տարեկան բաժանորդագրութիւնն է ֆր. 3.50...»:

[25] Նկատի ունի Մուսա Լեռան դիւցազնական ինքնապաշտպանութիւնը:

[26] Գրչանունը Ռափայէլ Պատկանեանի (1830-1892), բանաստեղծ եւ արձակագիր:

[27] Թէքէեան այս երեք բառերը դուրս ձգած է իր մէջբերած հատուածէն:

[28] Տեղին պիտի ըլլայ դիտել տալ թէ Թէքէեան Թուրքիան իբրեւ «յիմար ոսոխ» ընդունելով՝ կը յարի ամբողջ հոսանքի մը, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին Թուրքիոյ բռնած դիրքը ինքնասպանական արարք նկատելով, յիմարութեամբ կը բացատրէին զայն: Այդ հոսանքին ցայտուն մէկ

դրսեւորումին կը հանդիպինք Հայկական Խնդրին վերաբերող այն յիշատակագրին մէջ, զոր Նուպար Ազգային Պատուիրակութեան նախագահի հանգամանքով յանձնած էր Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութեան 6 Յունիս 1915ին: Յիշատակագրին համապատասխան հատուածին հայերէն թարգմանութիւնը կ'ըսէ. «Թուրք կառավարութեան յիմարական արարքը, որով դէպի անձնասպանութիւն դիմեց, հակառակ անոր որ Դաշնակից Տէրութիւնները զինքը ապահովցուցած էին թէ պիտի պահպանուի Կայսրութեան ամբողջականութիւնը, այլեւս անխուսափելի դարձուց Թուրքիոյ անդամահատումը»:

[29] Հնարաւորութիւն չենք ունեցած պարզելու ակնարկեալ երիտասարդին ինքնութիւնը:

THE STORY OF A LEADING ARTICLE VAHAN TEKEYAN'S "SONG OF HOPE"

(Summary)

VATCHE GHAZARIAN
mayrenipublishing@comcast.net

In an optimistic leading article entitled "The Song of Hope," published during World War I on February 21, 1916 in "Arev" newspaper of Cairo, Vahan Tekeyan expressed hope that the time had come for the Armenian population of the historic Armenian provinces to free themselves from the Ottoman yoke and accept the collective protection of the Russian, British, and French allies.

This hope stemmed primarily from the fresh retreat of the Turkish army before advancing Russian troops in Erzurum, the victorious participation of Armenian volunteer fighters in the war, and the heroic battles of self-defense put up by local Armenian communities against the genocidal attempts of Turkish armed forces and mobs. Tekeyan's hope was also fueled by a letter he had received from a certain unnamed "young physician" living in Europe and cited in his article.

The original letter, dated January 26, 1916, was found in the Archives of the Armenian Patriarchate of Turkey, which are currently housed at the Armenian Patriarchate of Jerusalem. This discovery helped us identify the mysterious young physician as Nshan Der Sdepanian.

Der Sdepanian was born in Erzincan in 1889. Upon completion of his higher education as a physician, he settled in Turin or Torino, Italy where he engaged in the study of the therapeutic merits of yogurt and became, possibly, the first manufacturer of yogurt in Torino. In October 1915, Der Sdepanian published the first issue of a periodical, "Armenia," in Italian, to advocate for Armenian interests in Italy during World War I. The periodical published until October 1918.

Little did Tekeyan know at the time that he and Der Sdepanian would collaborate within the sphere of the Armenian National Delegation later and even travel together to Armenia to negotiate on behalf of the Armenian National Delegation with the Armenian government.



ՋՕՐԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՅՈՒՇԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԿՈՎԿԱՍԵԱՆ) ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1914 ՅՈՒԼԻՍ-1916 ԱՊՐԻԼ)

ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ
rubensahakyan58@gmail.com

ՄՈՒՏՔ

Ջօրավար-տեղակալ Թովմաս Յովհաննէսի Նազարբեկեանը (Ֆոմա Իւան Նազարբեկով, 1855-1931[1]), այն հազուադէպ զինուորականներից է, որ մասնակցել է միքանի պատերազմների՝ 1877-78ի ռուս-թուրքական, 1904-05ի ռուս-ճապոնական, 1914-17՝ Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի, 1918 Փետրուար-Յունիսի հայ-թուրքական, 1918 Դեկտեմբերին հայ-վրացական, 1918-20ի հայ-ադրբեջանական ընդհարումներին, 1920ի հայ-թուրքական մարտական գործողութիւններին:

Առաւել յայտնի է Նազարբեկեանի ռազմական գործունէութեան 1917-1920 շրջանը, ուստի մենք նպատակայարմար գտանք անդրադառնալու զօրավարի մարտական գործողութիւնների այն շրջանի լուսաբանմանը, որն ընդգրկում է 1914 Յուլիսից մինչեւ 1916 Ապրիլը, հիմնականում յենուելով Նազարբեկեանի ռուսերէն չհրապարակուած յուշերի վրայ, որոնք պահպանուում են Հայաստանի Ազգային Արխիւում (ՀԱԱ) զօրավարի անձնական ֆոնդում[2]: Յուշերը գրուած են ձեռագիր, թանաքով, աշակերտական տետրերում, որոնք 10ից աւելի են: Բացի այդ, Նազարբեկեանի անձնական ֆոնդում պահպանուել են ռուսերէն լեզուով հրամաններ, կարգադրութիւններ, նամակներ եւ այլ կարգի գրութիւններ, որոնք վերաբերուում են 1904-1905ի ռուս-ճապոնական պատերազմի եւ 1914-1917ի ռուս-թուրքական ռազմաճակատում

մղուած մարտական գործողութիւններին: Թարգմանութիւնները կատարել ենք մենք:

Կեանքի վերջին տարիները Նազարբեկեանը անց է կացրել Թիֆլիսում նիւթական անասելի ծանր պայմաններում: Զօրավարը ծանր հիւանդ էր, որն արդիւնք էր 1921ի ձերբակալութեան[3]: 1928 Յունուարի 16ին նա պաշտօնապէս դիմում է իշխանութիւններին, խնդրելով իրեն ճանաչել աշխատանքային հաշմանդամ եւ նշանակել թոշակ[4]: Թիֆլիսի խորհրդային իշխանութիւնները հրաժարուել էին զօրավարին զինուորական թոշակ նշանակել, պատճառաբանելով թէ նա պատերազմի ժամանակ չի վիրաւորուել:

Յուշերի շարադրման ժամանակ Նազարբեկեանին զգալի օգնութիւն է ցոյց տալիս Իւան Ենիկոլոպովը (Ենիկոլոպեան, 1888-1890): 1920ականներին Ենիկոլոպովը հանդիսանում էր Վրաստանում Խորհրդային Հայաստանի Արխիւային Վարչութեան ներկայացուցիչը եւ հնարաւորութեան դէպքում զօրավարին տրամադրել է արխիւային փաստաթղթեր:

Նազարբեկեանի յուշերը գրուել են 1928-1929ին: Նա օգտագործել է ոչ միայն իր մօտ պահպանուած փաստաթղթերը, որոնց մի մասը նրա ձերբակալուելուց յետոյ կորել էին, այլեւ նամակագրական կապ է ունեցել իր մարտական ընկերների՝ զօրավարներ Յովհաննէս Հախվերդեանի[5] եւ Մովսէս Սիլիկեանի (Մոիսէյ Սիլիկով)[6] հետ, որոնք իրենց հերթին օգնել են Նազարբեկեանին ճշտել այս կամ այն գործողութեան մանրամասները, լրացրել փաստերով այս կամ այն դէպքերն ու իրադարձութիւնները:

Կարելի է ենթադրել, որ զօրավարը նախաձեռնելով մարտական գործողութիւնների պատմութեան շարադրումը՝ նպատակ ունէր ոչ միայն իր նիւթական դրութիւնը բարելաւել, այլեւ ճշմարտացի ներկայացնել Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողութիւնների պատմութիւնը, որը խորհրդային իշխանութիւնների կողմից 1920ականներից արդէն սկսել էր արժանանալ ոչ-անաչառ գնահատականի: Որքան զարմանալի է՝ նոյնիսկ մեր օրերում Նազարբեկեանի անցած մարտական ուղին ճիշտ չի լուսաբանւում, օգտագործւում են նախկինում եղած, մի շարք դէպքերում ոչ-անաչառ, փաստաթղթեր, որպէսզի անուանարկեն զօրավարին[7]:

1914-1918՝ Նազարբեկեանն ականատես է արեւմտահայութեան Ցեղասպանութեանը: Նրա հրամանով կատարուել են թուրք-քրդական գազանութիւնների հետեւանքների լուսանկարներ, ենթակայ սպաները ներկայացրել են զեկուցագրեր հայերի զանգուածային ջարդերի ու տեղահանութեան մասին: Զօրավարն իր յուշերում յիշատակում է առանձին քուրդ եւ թուրք անհատների կողմից հայերին փրկելու դէպքեր, որոնք եզակի էին:

1914-1916՝ մղուած մարտական գործողութիւնների ընթացքում զօրավարը բազմիցս առնչուել է հայ կամաւորական խմբերի եւ նրանց հրամանատարների հետ: Նա յատկապէս առանձնացնում է Դրոյի կամաւորական խումբը, որին զօրավար Սիլիկեանը խորհրդային տարիներին գրած նամակում հետեւեալ գնահատականն է տուել՝ «Դրոյի դրուժինան՝ դա փառահեղ դրուժինա է, Հայաստանի հպարտութիւնն ու գեղեցկութիւնն է»[8]:

Նազարբեկեանի հրամանատարութեան ներքոյ կռուել է Անդրանիկի Հայկական Ա Կամաւորական Խումբը: Զօրավարը այն եզակի հրամանատարներից էր, որի հեղինակութիւնը ընդունում էր Անդրանիկը:

Իր յուշերում զօրավարը անհիմն է համարում հայ կամաւորների հասցէին եղած ամբաստանութիւնները: Նա հերքում է փոխարքայ Ն. Ռոմանովի ժամանակ տարածուող կեղծ տեղեկութիւնները[9]՝ իբր հայերը իրականացրել են մահմեդականների զանգուածային կոտորածներ[10]:

Նազարբեկեանը բարձր է գնահատում ռուսական բանակի մարտունակութիւնը եւ եթէ որոշ դէպքերում քննադատական խօսքեր է ասում մարտական գործողութիւնների ծրագրաւորման մասին եւ բարձրագոյն հրամանատարութեան հասցէին, ապա դրանք երբեւիցէ նպատակ չեն ունեցել վարկաբեկել կամ անուանարկել բանակը եւ հրամանատարութեանը: Զօրավարն աշխատել է անաչառ դիրքերից դիտել ու մեկնաբանել այս կամ այն գործողութիւնը եւ տուել է իր կարծիքը այս կամ այն որոշման մասին: Միաժամանակ չի թաքցրել իր հրճուանքը եւ հպարտութիւնը, երբ ներկայացրել է Կովկասեան Բանակի մղած այս կամ այն մարտական գործողութիւնը կամ ճակատամարտը:

Մեզ չյաջողուեց ՀԱԱում գտնել նրա յուշերի շարունակութիւնը, որոնք ընդգրկում են մինչեւ 1917 Հոկտեմբեր ընկած ժամանակա-

հատուածը: Նազարբեկեանի յուշերի միւս մասը, որն ընդգրկում է 1917 Հոկտեմբերից մինչեւ 1918 Ապրիլ, հրատարակուել են[11]:

1907ին Նազարբեկեանը պաշտօնաթող է լինում: Պատճառն այն էր, որ բարձրագոյն հրամանատարութիւնը հրաժարուել էր նրան շնորհել զօրավար-հազարապետի զինուորական կոչում եւ համաձայնուել էր այն շնորհել եթէ Նազարբեկեանը պաշտօնաթող լինի: Եւ Նազարբեկեանը, իրեն վիրաւորուած զգալով, նախընտրում է պաշտօնաթող լինել ու ստանալ այդ կոչումը:

Ցաւօք իր յուշերում զօրավարը չի գրում, թէ 1907-Յուլիս 1914 ժամանակահատուածը ինչով է զբաղուել: Նա իր յուշերի հիմնական մասը սկսում է շարադրել 1914 Յունիսի 28ից յետոյ, երբ Սարաեւոյում տեղի է ունենում աւստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանութիւնը[12]: Մարտական պատրաստականութեան է բերւում նաեւ Կովկասեան Ռազմական Օկրուգը (ԿՌՕ): Կովկասից ռուս-աւստրիական ռազմաճակատ են տեղափոխւում առկայ ուժերի երկու երրորդը[13]: Օսմանեան յարձակման դէպքում փոխարքայութիւնը գտնուելու էր վտանգաւոր վիճակում: Նազարբեկեանը սխալ է համարում այդ ուժերի տեղափոխումը Կովկասից, քանի որ բանակներում կային մեծ թուով սպաներ, որոնք մասնակցել էին 1877-1878 ռուս-թուրքական պատերազմին եւ լաւ գիտէին մարտական գործողութիւնների շրջանը[14]: Ռուս-աւստրիական ռազմաճակատ է տեղափոխւում նաեւ Արմաւիրում կազմաւորուած եւ ԿՌՕ ուղարկելու համար նախապատրաստուած Կովկասեան Հեծելազօրային Դիւիզիան[15]:

ԶՕՐԱՎԱՐ ՆՊԱԶԱՐԲԵԿԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ

1914 Սեպտեմբերի սկզբներին ռուս-թուրքական սահմանի անմիջական հարեւանութեամբ սկսում են յայտնուել թուրքական հետախուզական հեծելապարեկախմբեր: Գերմանացի եւ թուրք սպաները բացայայտ կատարում են տեղանքի քարտէզագրում: Իսկ Սեպտեմբերի 15ին եւ 23ին Կարսի Մարզի շրջանում տեղի են ունենում զինուած բախումներ ռուսական սահմանն անցած թուրք եւ ռուս զինուորների միջեւ[16]:

1914 Հոկտեմբերի 16ի լոյս 17ի գիշերը գերմանա-թուրքական ռազմանաւերը հրետակոծեցին ռուսական սեւծովեան Սեւաստոպոլ, Նովոռոսիյսկ եւ Թէոդոսիա քաղաքները: Հակառակորդին

> Դա այն ժամանակ էր – 1920 թ. – երբ համատարած վուլգար պրոպագանդը դեռեւս ուժեղ թափով, "քաղաքակիրթ"

Եւրոպայում, շարունակւում էր բոլշեւիկների եւ Հոկտեմբերեան յեղափոխութեան դէմ:
(…) Յաջորդ օրը, երեկոյեան, այն ժամանակ երբ Փարիզը լողանում է արեգակի վարդափրփուր լոյսերում, մտնում եմ "Լիբերտէ":
Շառլոտտան այնտեղ չէ: Գրաւում եմ իմ սեղանը: Սպիտակ սփռոցը ժպտում է: Նա ինձ ճանաչում է:
Հազիւ ստանում եմ սեւ կոֆէն կապոյտ գաւաթով, երբ աճապարանքով մտնում է ներս Շառլոտտան եւ, ձեռքի լրագիրը ճօճելով օդում, բացականչում է. L'Arménie soviéti[q]ue, l'Arménie soviéti[q]ue[:]
Խլում եմ Շառլոտտայի ձեռքից "Պըտի Փարիզիէն"-ի յաւելուածը եւ կարդում.
"Հայաստանի իշխանութիւնն անցաւ բոլշեւիկների յեղափոխական կոմիտէին":
(…) Վազում եմ դուրս, դէպի Փարիզի ցնծացող գիշերը, մխրճւում եմ ցնծացող գիշերում, բաց եմ անում սիրտս ցնծութեա՜ն…
Եւ իմ հոգում հիւսւում է մի երգ, բացւում է իմ հոգում պայծառ, ջինջ եւ դիւցազնական մի առաւօտ[192]:

Վերջին նախադասութիւնը յաճախ մէջբերուած է որպէս խորհրդանիշ Թոթովենցի խանդավառութեան՝ նոր կարգերուն նկատմամբ[193], առանց հաշուի առնելու դրուագին արուեստական բնոյթը: Արդարեւ, Թոթովենց սրճարանը կը մտնէ ու կը նստի, եւ անմիջապէս ներս կը վազէ սպասեակը՝ Շառլոտտան, Հայաստանի խորհրդայնացումը աւետող ֆրանսական թերթը ճօճելով:

Սակայն, երբ Հայաստանի խորհրդայնացման լուրը կը հասնէր Փարիզ, Վահան եւ Լուսիկ Թոթովենց արդէն Շերպուրկէն դէպի Ամերիկա մեկնած էին «Ատրիաթիք» նաւով 1 Դեկտեմբեր 1920ին[194]: Փարիզի *Le Matin* օրաթերթը, օրինակ, խորհրդայնացման լուրը տուած է Դեկտեմբեր 6ին, վկայակոչելով Դեկտեմբեր 4ի Պոլիսէն լրատուութիւնը, որ կ'արձագանգէր Նոյեմբեր 29ին տեղի ունեցած դէպքին. «Ըստ արժանահաւատ լուրերու, բոլշեւիկ զօրքերը անցած են Հայաստանի հիւսիս-

արեւելեան սահմանը եւ խորհրդային վարչակարգը հռչակած Դիլիջանի մէջ»[195]: Աւելի՛ն. *Petit Parisien*ը ո՛չ մէկ ձեւով արձագանգած է լուրին մինչեւ 26 Դեկտեմբեր 1920, երբ, անդրադառնալով Լիթուանիոյ խորհրդայնացումի հնարաւորութեան, թերթը գրած է. «Ի մի բան, Լիթուանիոյ մէջ կը պատահէր, ինչ որ նոր տեղի ունեցած է Հայաստանի մէջ: Զօրքերու շարժումներէ եւ զինուորական արտաքին ճնշումէ օգտուելով, ներքին յեղափոխութիւն մը տեղի կ՛ունենար՝ երկար ժամանակէ զինուորագրուած բոլշեւիկեան խումբերու միջոցով»[196]:

Եթէ իսկապէս երգ մը «հիւսւում էր» Թոթովենցի հոգիին մէջ, ատիկա միայն կրնայ տեղի ունեցած ըլլալ Ամերիկա ժամանելէ ետք, ուր *New York Times*ը, օրինակ, Հայաստանի խորհրդայնացման լուրը հրապարակած էր Դեկտեմբեր 5ին (ըստ Լոնտոնէն նախորդ օրը կատարուած լրատուութեան). «Ռուսական խորհրդային զօրքեր հայկական մայրաքաղաք Երեւանը գրաւեցին Հինգշաբթի օր [Դեկտեմբեր 2 - Վ.Մ.], իսկ Հայաստանը յայտարարուած է խորհրդային հանրապետութիւն»[197]: Արդարեւ, ճամբորդները Նիւ Եորք հասած էին 10 Դեկտեմբեր 1920ին: Բացի տարիքի նշումէն, որուն անդրադարձած ենք, նաւուն մեքենագիր յայտարարագիրը արձանագրած է, որ Վահան եւ Լուսիկ Թոթովենց նպատակ ունեցած են հաստատուիլ գրագէտին քրոջ քով (Mrs. Wjinis, 768 Columbus Ave., Boston, Mass) եւ ամերիկեան քաղաքացի դառնալ[198]. Wjinis հաւանաբար «Ձայնիկ»ի աղաւաղումն էր: Երիտասարդ ամուսինները Պոստոն հասած են Դեկտեմբեր 12ին[199]:

Թոթովենց գործակցած էր ռամկավար թերթերու հետ՝ թէ՛ Պոլիս, ուր *Ժողովուրդի Ձայնը*ի լայնօրէն աշխատակցած է, խմբագրութեան մաս կազմելով 1920ի իր կեցութեան ընթացքին[200], եւ թէ՛ Մ. Նահանգներ, ուր Պոստոն հաստատուած է որպէս Ազգային Ռամկավարական (այնուհետեւ՝ Հայ Ռամկավար) Կուսակցութեան Ամերիկայի շրջանակի գործիչ, չհրաժարելով Դաշնակցութեան հանդէպ իր քննադատական կեցուածքէն, որ ուժեղացած է՝ խորհրդայնացումին վաղորդայնին: 26 Դեկտեմբեր 1920ին, Թոթովենց կուսակցութեան Պոստոնի ակումբին կազմակերպած հանրաժողովին խօսք առնելով, «մի

առ մի թուեց Դաշնակցական կառավարութեան յիմարական սխալները, որոնք, իր կարծիքով, Միլլի յարձակողականէն շատ աւելի կորստաբեր դարձան երկրին»[201]: Գրագէտին գաղափարական կեցուածքին մասին, բաւական պերճախօս է գրախօսական մը *Պահակ* թերթի 1921ի բացառիկի մասին: Անդրադառնալով իր քեռայրին՝ Յովհաննէս Ծովիկեանի ընկերային շարժումներուն նուիրուած յօդուածին, Թոթովենց խիստ քննադատական տողեր գրած է համայնավարութեան մասին.

> Ըսել կ'ուզեմ, որ պոլշեւիզմը իր ծայրայեղութեամբ կը վնասէ ժողովուրդներու եւ անոնց բարւոք կենցաղին եւ իրական եւ բանաւոր յեղափոխութիւնը պիտի ձգտի խօսքէն գործի անցնիլ եւ յեղաշրջելով, փոթորկելով ստեղծել իրական տէմօքրասին, միեւնոյն ատեն պէտք է խոստովանիլ, որ Պոլշեւիզմը ընկերութեան անհանգստութեան փոթորիկն է[202]:

Թոթովենց նաեւ անդամակցած է 1921ին հիմնուած Ռամկավար Ազատական Կուսակցութեան՝ մինչեւ Հայաստան մեկնումը, որ կը թուի տեղի ունեցած ըլլալ՝ կուսակցութեան օժանդակութեամբ[203]: 1936ին ան գրած է. «1922 թուականի Սեպտեմբերին վերադարձայ Սովետական Հայաստան՝ ուրախ, ոգեւորուած եւ հաւատով լի լաւ օրերի նկատմամբ»[204]: Ան շարունակած է աշխատակցիլ *Ժողովուրդի Ձայնը*ին, ուր լոյս տեսած յուշագրական («Անգլիա, Պարսկաստան Եւ Ես») եւ գեղարուեստական («Քանի Մը Օր») գործերը[205] հրատարակուած են սկզբնատառերով, յայտնապէս՝ անձնական ապահովութեան նկատառումներով: Աւելի՛ն, «Քանի Մը Օր»ի հրատարակութիւնը ծանուցուած է հետեւեալ կերպով. «Այսօրուընէ կ'սկսինք հրատարակել ծանօթ գրողի մը կողմէ պատրաստուած հետաքրքրաշարժ վիպակ մը՝ *"Քանի մը օր"*, որուն ընթերցումը կը յանձնարարենք մեր ընթերցողներուն»[206]:

Մինչ այդ, Թոթովենց արտասահմանի հայութիւնը դատափետող յօդուած մը ստորագրած էր *Նորք* հանդէսի առաջին թիւին մէջ, քննադատելով նոյնիսկ իր նախկին կուսակիցները: Արդարեւ, Փարիզի ռամկավար («կղերապահպանողական») *Ապագայ* շաբաթաթերթին

անդրադառնալով, ան գրած է. «Պէտք է ասել, որ գաղութների պահպանողական մամուլը պաշտպանում է Խորհրդային իշխանութիւնը պարզապէս վարկաբեկելու համար դաշնակը, եթէ ոչ խորքում նրանք էլ պատկանում են հակախորհրդային կարգերին»[207]: Այս գրութեան յաջորդած է նոյնքան կծու շեշտով բաց նամակը Չօպանեանին, այն մեղադրանքով, թէ «Պարիզի գեղեցիկ բուլվարները բանտի տեղ են ծառայում հայ մտաւորականների համար. հարց եմ տալիս՝ ինչու մի գեղեցկագէտ մարդ, ինչպիսին դուք էք, չէք զգում ձեր բանտարկեալ լինելը»[208]: Ֆրանսահայ գրագէտը հակադարձած է, դատապարտելով «երէկ թունդ ազգայնական եւ այժմ թթու մարքսիստ մեր Վահան Թոթովենցը, որ գաղութներու Հայութեան մէջ ոեւէ լաւ բան չի գտներ, եւ ամենէն այլանդակ թերութիւններն ու յանցանքները կը վերագրէ անոր»[209]:

20 Մարտ 1931ին, Կոստան Զարեան կը գրէր Չօպանեանին. «Երբ ես մեկնում էի Հայաստանից, Թոթովենցը եկաւ մօտս եւ ասեց. "Սիրելի Զարեան, գիտենք չպիտի վերադառնաս եւ պիտի գրես ա՛յն ինչ որ մենք ամենքս մտածում ենք: Երբ վաղը մեզ ստիպեն քեզ դէմ գրել, կ'ներես, գիտես դրութիւնը..."։ Եւ այդ՝ բոլորի անունից»[210]: Այս նամակէն չորս ամիս ետք, զուգադիպութեամբ, Թոթովենց Մոսկուայի մէջ կ'աւարտէր եւ հրատարակութեան կու տար «Հայ Ազգի "Փրկիչ" Դաշնակները» գրքոյկը, որ առանձնայատուկ տեղ կը գրաւէ՝ պարսաւի եւ մեծաւ մասամբ լսովի տեղեկութիւններու վրայ հիմնուած անձնական յարձակումներու իր պարզունակ մակարդակով, անոր երբեմնի կուսակցութեան հասցէին (որուն դէմ բազմիցս գրած էր Երեւան հաստատուելէ առաջ ու ետք) կուտակուած խորհրդային գրականութեան մէջ[211]: Ապագայ ուսումնասիրողին կը մնայ ճշդել, թէ խորհրդային (կամ խորհրդահայ) ներքաղաքական ի՞նչ հանգամանքներ 1931ին Թոթովենցին պարտադրած են, որ իր մարդկային կերպարանքն ու գրական տաղանդը անճանաչելի դարձնող յիշեալ քաղաքական պատուէրը ստորագրէր որպէս հերթական տուրք վարչակարգին: Տաղանդաւոր հեղինակի մը գրականութիւնը հայրենասիրական նախնամիտ փառաբանութեան հետ շփոթող յանձնապաստան հասարակ տեղիքները, թէ «Վահան Թոթովենց հայ ժողովուրդի պարծանքն

է ու հպարտութիւնը» եւ «նաեւ հայ գրականութեան փառքի անուրանալի դափնիներէն մէկն է»,[212] չեն հերքեր Ադալեանի տեղին դիտարկումը, թէ «նա "դեղին լրագրութեան" էջերում եւ այլուր հանդէս է գալիս նոյնքան դեղին շարադրանքներով՝ պիես, ակնարկ, պատմուածք, յօդուած, որոնք այսօր էլ, իրենց դեղնած թերթօններից, ներում են հայցում (…): Նա այդ անում էր (…) շատ աւելի ծանր ու ճնշիչ ուժի՝ հետզհետէ ահագնացող քաղաքական մամլիչի թելադրութեամբ, երկրի եւ նրա պաշտօնական-պալատական գրականութեան խորթ կամ անառակ զաւակը դիտուելու վախից»[213]:

Որքան որ մեզի յայտնի է, 1934ին *Հոկտեմբեր-Նոյեմբեր Տարեգիրք*ին մէջ լոյս տեսածը առաջին տպագիր կենսագրական ակնարկն էր Թոթովենցի մասին, որ հոն տրուած տեղեկութիւնները ձեւով մը հրապարակաւ կը պաշտօնականացնէր: 1894ին ծնած ըլլալուն կողքին, հոն նաեւ յիշուած է, որ անոր նախախորհրդային գործերը՝ «նրա չափածոյ ստեղծագործութիւնը, նրա արձակը, մինչեւ "Փոթորկում" վէպը, տոգորուած են եղել նացիոնալիզմով»[214], ինչ որ եզակի մեղադրանք մըն էր տարեգիրքի աշխատակիցներուն պարագային: Ըստ առկայ տուեալներուն, իրաւացի կը շարունակէ մնալ Նշանեանի այն եզրակացութիւնը, որ ծննդեան թուականի փոփոխութեան հրապարակաւ պաշտօնականացումը գրագէտին մէկ հնարանքն էր իր կեանքէն հինգ տարի զեղչելու եւ, այդպէսով, աւելի կարճ անցեալի մը պատասխանատու ըլլալու՝ յաչս խորհրդահայ վարչակարգին[215]: Ի դէպ, հետաքրքրական է նշմարել, որ 1910-1912ին Դաշնակցութեան անդամակցած ըլլալու վերոյիշեալ պնդումը, զոր արձանագրած է Հոկտեմբեր 1937ի վկայութեան մէջ, նոյնպէս ուղղուած էր իր մեղքը 16-18 տարեկանի ծիրին մէջ տեղաւորելու:

Բաքու վէպին ակնարկելով, Թոթովենցի բանտակիցներէն Ս. Սահառունի 1955ին գրած էր. «Բայց իր այդ կեղծ գրական տուրքն էլ բաւական չեղաւ, որպէսզի Թոթովենցը զերծ մնար Էնկավեդէի հետապնդումներից: Նրան մեղադրեցին Չարենց-Բակունց ազգայնական գաղտնի կազմակերպութեան մասնակցելու մէջ»[216]: Ստալինեան մողոքը 1936-1938ին

Թոթովենցն ու իր գրչակիցները պիտի ճզմէր ու լափէր «նացիոնալիզմ»ի պատճառաբանութեամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր հետաքննութեան ընթացքին, օգտուելով նաեւ մեզի մատչելի արխիւային փաստաթուղթերու ընձեռած տուեալներէն, առիթը ունեցած ենք կարգ մը իրողութիւններ հաստատելու կամ վերատեսութեան ենթարկելու, որոնք ապագայ կենսագիրներու ուշադրութեան կը յանձնենք: Անոնց շարքին, նշենք հետեւեալները.-

ա) Թոթովենց գերդաստանը ծագումով Ակնէն էր, ու Մեզրէ հաստատուած էր ԺԹ. դարու երկրորդ կէսին: Սակայն, մօրենական ընտանիքը Ծովք լիճի կողմէն էր ու աւելի վաղ հաստատուած էր քաղաքը:

բ) Ըստ մեզի, ծննդեան թուականը 1889 կամ 1890 պէտք է նկատել, ինչպէս վկայած է գրագէտը գոնէ մինչեւ 1912: 1893 թուականը փաստացիօրէն երեւան եկած է 1920ին, իսկ 1894 թուականը՝ 1932ին, ըստ երեւոյթին՝ քաղաքական պատճառներով:

գ) Թոթովենցի առաջին Միացեալ Նահանգներ կեցութիւնը տեղի ունեցած է 1908-1915ին, ներառեալ՝ երկամեայ ուսումնառութեան շրջանը Ուիսքոնսընի Համալսարանը (1912-1914), զոր չէ աւարտած:

դ) 1915ին Կովկաս մեկնելէ ետք, մասնակցած է կամաւորական շարժումին (1915), այնուհետեւ աշխատած է Արեւմտեան Հայաստան հաստատուած որբանոցներու մէջ (1916), նիւթեր հաւաքած է «Վշտապատում»ի ծրագրին համար (1916-1917) եւ խմբագրած է Թիֆլիսի *Հայաստան* օրաթերթը (1917-1918):

ե) Թոթովենց ՀՅԴի համակիր ըլլալէ ետք, անդամակցած է անոր (հաւանաբար՝ 1910ին) եւ անոր շարքերուն մէջ մնացած է մինչեւ 1916ի վերջերը, երբ գաղափարախօսական պատճառներով (կամ պատճառաբանութիւններով) դուրս ելած է:

զ) 1920-1922ին, ան Ազգային Ռամկավարական (ապա՝ Հայ Ռամկավար) եւ անոր յետնորդ Ռամկավար Ազատական Կուսակցութեան անդամ եղած է:

է) 1922-1923ին՝ Խորհրդային Հայաստան հաստատումէն անմիջապէս ետք, ինչպէս եւ այնուհետեւ՝ մինչեւ 1930ականներուն եղերական վախճանը, կը պարտադրուէր գաղափարական հաւատարմութեան պարբերական փաստաթուղթեր հրապարակել՝ իր անցեալին հետ խզումը բացայայտ դարձնելու համար, թէ՛ Դաշնակցութեան եւ թէ՛, նուազ չափով, ՌԱԿի դէմ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Սեւակ Արզումանեան, *Վահան Թոթովենց,* Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 9:

[2] Նորայր Ադալեան, *Թոթովենց,* Երեւան, ա. հ., 1994, էջ 10:

[3] Վահան Թոթովենց, *Երկեր Երեք Գրքով, Գիրք 1*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1988, էջ 4:

[4] *Խարբերդ Եւ Անոր Ոսկեղէն Դաշտը,* աշխատասիրեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959, էջ 722:

[5] Անդ: Ի դէպ, վկայուած է մանկավարժ եւ թարգմանիչ Նիկողայոս Թօթվաեանի (Ակն, 1856-Կ. Պոլիս, 1912) անունը (Բախտիար Յովակիմեան, *Հայոց Ծածկանունների Բառարան,* Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2005, էջ 611), որ թերեւս ընտանիքի ակնցի ճիւղին անդամներէն էր:

[6] Պետրոս Ա. Կեօլճիկ [sic], «Մեր Պարտէզը Եւ Մեծ Մայրս», *Պայքար,* Նոր Տարուան բացառիկ, 1945, էջ 94-95:

[7] Պետրոս Ա. Կեօլճիկ, «Պաղտիկ Իր Պարտքը Կատարեց», *Պայքար,* Նոր Տարուան բացառիկ, 1948, էջ 185:

[8] Վահան Թոթովենց, *Երկեր Երեք Գրքով, Գիրք 3*, Երեւան, «Նայիրի» Հրատ., 1991, էջ 222:

[9] Վահան Թոթովիկ, «Իմ Երգս», *Արծիւ,* Դեկտեմբեր 1-16, 1908, էջ 12:

[10] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 373: 1936ի ինքնակենսագրութեան մէջ, Թոթովենց գրած է, թէ հայրը «բուրժուա՝ պետական աստիճանաւոր էր (գանձապահ)» (Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370):

[11] Տե՛ս՝ www.myheritage.com, ուր անունը թիւրիմացաբար գրուած է «Յովհաննէս Կէօլճիւքեան (ծն. Թոթովեան)»:

[12] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 379: Այս մասին ան նախապէս գրած էր «Իմ Հօրաքոյրը» պատմուածքին մէջ (անդ, էջ 104):

[13] Կեօլճիկ, «Մեր Պարտէզը», էջ 95:

[14] Տե՛ս՝ www.myheritage.com: Ուլուհոճեանները Դատեմի յայտնի գերդաստաններէն էին. իրենցմէ սերած է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան աբբահայր Սրապիոն Ուլուհոճեանը:

[15] Կեօլճիկ, «Մեր Պարտէզը», էջ 96:

[16] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 391:

[17] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370:

[18] Կեօլճիկ, «Մեր Պարտէզը», էջ 94:
[19] Տե՛ս՝ www.myheritage.com, ուր արձանագրուած են 12 զաւակներու անունները՝ Մարգարիտ Թոթովենց (1859-1915), Սառա Սանթուրճեան (1860-1915), Օղաբեր Թիւֆէնքճեան (1861-1915), Մարգար (1864-1939), Մարիամ Նագգաշեան (1869-1932), Հռիփսիմէ Կէօլճիւքեան (1870-1946), Պօղոս (1872-1944), Պետրոս (1874-1959), Պարթեւ (1878-1947), Տիգրան (1880-1935) եւ Գրիգոր (1883-1963):
[20] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 391:
[21] Կեօլճիկ, «Պաղտիկ», էջ 185-186:
[22] Ancestry.com, *Minnesota, Territorial and State Censuses, 1849-1905* [database on-line], Provo, Ut., Ancestry.com Operations, Inc., 2007:
[23] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 411:
[24] Տե՛ս՝ familylink.com:
[25] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vahan Totooyan անունին տակ:
[26] *Ոսկեմատեան Հ.Բ.Ը.Մ. – Արծաթեայ Յոբելեան, 1906-1931, Ա. Հատոր*, Բարիզ, «Մասիս» տպարան, 1935, էջ 120-121:
[27] Զանց պէտք է ընել 1903 թուականը, որ անբացատրելիօրէն սպրդած է Հրանդ Թորոսեանի հայ գրականութեան ֆրանսերէն պատմութեան մէջ (H. Thorossian, *Histoire de la Littérature Arménienne,* Paris, Imp. Araxes, 1951, էջ 344):
[28] Թոթովենց, *Երկեր 1,* էջ 421:
[29] Անդ, էջ 102:
[30] Անդ, էջ 421:
[31] Անդ, էջ 105-106:
[32] Տե՛ս՝ Ancestry.com, *1920 United States Federal Census* [database on-line], Provo, Ut., Ancestry.com Operations, Inc., 2010:
[33] Տե՛ս՝ ամերիկեան Ընկերային Ապահովութեան Վարչութեան ծննդեան ու մահուան տուեալները (ssdmf.info/by_number/pages/020180.html): Հմմտ.՝ Թորգոմ Փոսթաճեան, *Ականաւոր Հայ Գրական Դէմքեր*, Երեւան, «Զանգակ-97», 2006, էջ 68, ուր ըսուած է, թէ Պայծառ Շալեան Թոթովենցի կրտսեր քրոջ՝ Զայնիկի «քրոջ աղջիկ»ն էր:
[34] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 419:
[35] *Davison's Minneapolis 1915 City Directory,* Minneapolis, Minneapolis Directory Company, 1915, էջ 1999: Վահան եւ Գէորգ Թոթովենց միասին լուսանկարուած են 1914ին (ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 675):
[36] Տե՛ս՝ Ancestry.com, *U.S. World War I Registration Cards* [database on line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2005:
[37] Տե՛ս՝ Վ. Թոթովենցի նամակը Գ. Թոթովենցին, 12 Մայիս 1930 (ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 209):
[38] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 689:
[39] Վահէ Հայկ, էջ 621:
[40] Անդ, էջ 442:

[41] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 419:

[42] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vahan Totooyan անունին տակ:

[43] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 422:

[44] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Tzainik Tolovian [sic] անունին տակ. Էլիզ Այլընտ ժամանման յայտարարագրին մէջ նշուած է, թէ 18 տարեկան էր: Տե՛ս նաեւ՝ Ձայնիկ Ծովիկեանի (Tzainig Zovickian) Օգոստոս 1956ին ստացած ամերիկեան քաղաքացիութեան վկայագիրը (Ancestry.com, *United States Naturalization Records Indexes, 1794-1995* [database on-line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2010): Ան Tzainig Totovig անունով (24 տարեկան, այսինքն՝ ծնած 1896ին) յիշուած է 1920ի ամերիկեան մարդահամարին մէջ (Ancestry.com, *1920 United States Federal Census* [database on-line], Provo (Utah), 2010): 1930ի ամերիկեան մարդահամարին մէջ, ան յիշուած է նոյն անունով որպէս 33ամեայ, այսինքն՝ 1897ին ծնած (Ancestry.com, *1930 United States Federal Census* [database on-line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2002):

[45] Ծովիկեանի առաջին կինը՝ Հայկանուշ Տէր Մարկոսեան-Ծովիկեան, «ծաղիկ հասակին» մահացած է 27 Հոկտեմբեր 1919ին («Հայ Գաղթականութիւն», *Կոչնակ,* 15 Նոյեմբեր 1919, էջ 1383): Երկրորդ ամուսնութեան 1920 թուականը տե՛ս՝ Ancestry.com, *Massachussetts, Marriage Index, 1901-1955 and 1966-1970* [database on-line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2013: Պահպանուած է Վահան ու Լուսիկ Թոթովենցը եւ Յովհաննէս ու Ձայնիկ Ծովիկեանը պատկերող լուսանկար մը (ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 674), զոր պէտք է թուագրել 1921 թուականով:

[46] Տե՛ս՝ Լուսիկ Թոթովենցի նամակը Ձայնիկ Ծովիկեանին, 27 Օգոստոս 1924 (ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 498) եւ Ձայնիկ Ծովիկեանի նամակը Վահան Թոթովենցին, 4 Յուլիս 1930 (անդ, թ. 351):

[47] Մահուան վկայագիրը (Յունուար 1985) յիշած է զայն Tzainig Zovickian անունով, ծննդեան տարեթիւը՝ 1895 (Ancestry.com, *United States Naturalization Records Indexes, 1794-1995* [database on-line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2010):

[48] Սիմոն Վրացեան, «Վահան Թոթովենց (Նիւթեր Իր Կենսագրութեան Համար)», *Հայրենիք* տարեգիրք, Պոստոն, 1945, էջ 158: Ինքնակենսագրութեան արտատպումին համար, տե՛ս՝ Մինաս Թէօլէօլեան, *Դար Մը Գրականութիւն 1850-1950, Բ. Հատոր*, Գահիրէ, «Յուսաբեր» տպարան, 1956, էջ 440-441, իսկ անգլերէն թարգմանութեան համար՝ Richard D. Wilkinson, "Nationalist Literature in Armenia and the Soviet Regime: The Case of Vahan Totovents," *The Slavonic and East European Review,* April 1981, էջ 202-203: Հմմտ.՝ Marc Nichanian, "Vahan Totovents: *Simulacrum* and Faith Lent," in Richard Hovannisian (ed.), *Armenian Tsopk/Kharpert,* Costa Mesa (Ca.), Mazda Publishers, 2002, էջ 427. Idem, *Writers of Disaster, Vol. I: The National Revolution*, Princeton and London, Gomidas Institute, 2002, էջ 250 (վերջին

հատորին յաւելուածին 1885 թուագրումը մեքենագրական վրիպակ պէտք է նկատել. տե՛ս՝ անդ, էջ 347):

[49] Վահան Թոթովենց, *Երկեր,* Երեւան, Հայպետհրատ, 1957, էջ 3. նաեւ՝ Վահէ Հայկ, էջ 1207: Հմմտ.՝ Sarkis Ashjian (ed.), *Great Armenian Short Stories,* Beirut, Atlas, 1959, էջ 92. նաեւ՝ Vahan Totovents, *Scenes from an Armenian Childhood,* translated by Mischa Kudian, London, Oxford University Press, 1962, էջ VII. նաեւ՝ D. R. Dudley and D. M. Lang (eds.), *The Penguin Companion to Literature,* vol. 4, London, Penguin, 1969, էջ 319. նաեւ՝ Geoffrey Goshgarian, "List of Armenian Literary Works Translated into English," *Armenian Review,* Spring 1985, էջ 117:

[50] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 4:

[51] Յովակիմեան, էջ 611:

[52] Ն. (Նազարէթ Պէրպէրեան), «Վահան Թոթովենց (1889-1937). Հայու Յուզաշխարհին Մարդկայինն Ու Ազգայինը Շնչաւորած Մեծատաղանդ Գրողը», *Ազատ Օր,* Յուլիս 18, 2012:

[53] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vahan Totooyan անունին տակ:

[54] ԳԱԹ, Արշակ Չօպանեանի ֆոնտ, I, թ. 2410. նաեւ՝ Վարդան Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի Հինգ Նամակներ՝ Ծանօթ Եւ Անծանօթ», *Կամար,* 24, 2015, էջ 56 (սոյն հրապարակման հինգ նամակները նախապէս լոյս տեսած էին Թոթովենցի *Երկեր*ուն երրորդ հատորին մէջ, սակայն բազմաթիւ վրէպներով եւ ծանօթագրական պակասներով): Հմմտ.՝ *Երկեր Գիրք 3,* էջ 518:

[55] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vauhan [sic] Totoventz եւ Lucie Totoventz անուններուն տակ: Ուիլքինսըն, որ 1972ին տեսակցած է Լուսիկ Թոթովենց-Աբեղեանի հետ, նշած է, որ ան կասկած չունէր ամուսնոյն 1894ի ծնունդ ըլլալու մասին (Wilkinson, էջ 203):

[56] Սարիբէկ Մանուկեան, *Վահան Թոթովենց,* Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1959, էջ 7: Հմմտ. Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բառարան, Հատոր Ա.*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1973, էջ 365. նաեւ՝ Vahan Totovents, *Tell Me, Bella,* edited and translated by Mischa Kudian, London, Mashdots Press, 1972, էջ 7 (Մ. Գիւտեան սրբագրած է 1962ի տուեալը). նաեւ՝ Ara Baliozian, *The Armenians: Their History and Culture,* New York, Ararat Press, 1985, էջ 89:

[57] Վ. Թ., «Անգլիա, Պարսկաստան Եւ Ես», *Ժողովուրդի Ձայնը,* 30 Դեկտեմբեր 1922: Հմմտ. Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 405:

[58] Եղիշէ Չարենց, Ակսէլ Բակունց եւ Եղիա Չուբար (խմբ.), *Հոկտեմբեր-Նոյեմբեր Տարեգիրք,* Երեւան, Պետհրատ, 1932, էջ 76: Հմմտ.՝ *Արդի Հայ Գրականութիւն (Ժողովածու), Հատոր Գ. Հայաստանի Գրողներ*, Փարիզ, «Հայ Գրագէտներու Բարեկամներ» Մատենաշար, Տպ. «Արաքս», 1944, էջ 59:

[59] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370:

[60] Արզումանեան, *Վահան Թոթովենց*, էջ 10. նաեւ՝ Ադալեան, էջ 8, որուն հետեւած է Փօսթաճեան, *Ականաւոր*, էջ 54: Քլէր Մուրատեան յիշած է 1894 թուականը, բայց մահուան թուականը համարած է 1937 (Claire Mouradian, *De Staline a Gorbachev. Histoire d'une République Soviétique: l'Arménie,* Paris, Ramsey, 1990, էջ 242): Հմմտ.՝ Ara Krikorian, *Dictionnaire de la Cause*

Arménienne, Créteil, Edipol, 2002, էջ 234 (1894?-1937) եւ Victoria Rowe, *A History of Armenian Women's Writing, 1880-1922,* London, Cambridge Scholars Press, 2003, էջ 198 (1894-1937):

[61] Հայկ Խաչատրեան (կազմող), *Գրական Տեղեկատու,* Երեւան, «Հայաստան» Հրատ., 1975, էջ 239:

[62] Դաւիթ Գասպարեան, *Փակ Դռների Գաղտնիքը. Չարենցը, Բակունցը Եւ Միւսները,* Երեւան, «Ապոլլոն» Հրատ., 1994, էջ 80:

[63] Սեւակ Արզումանեան, «Թոթովենց, Վահան», *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտր. 4*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1978, էջ 195. նաեւ՝ Հայկ Խաչատրեան (կազմող), *Գրական Տեղեկատու,* Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1981, էջ 153. նոյն, *Գրական Տեղեկատու,* Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1986, էջ 194. նաեւ՝ «Թոթովենց, Վահան», *Հայկական Համառօտ Հանրագիտարան, Հտր. 2*, Երեւան, Հայկական Հանրագիտարան, 1995, էջ 300. նաեւ՝ «Թոթովենց, Վահան», *Ով Ով Է. Հայեր, Կենսագրական Հանրագիտարան, Հտր. 1*, Երեւան, Հայկական Հանրագիտարան, 2005, էջ 433: Հմմտ.՝ Wilkinson, էջ 200. նաեւ՝ Kevork Bardakjian (comp.), *A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920,* Detroit, Wayne State University Press, 2000, էջ 541. նաեւ՝ Agop Jack Hacikyan, Gabriel Basmajian, Edward S. Franchuk, Nourhan Ouzounian (eds.), *The Heritage of Armenian Literature, Vol. III: From the Eighteenth Century to Modern Times*, Detroit, Wayne State University Press, 2005, էջ 934. նաեւ՝ Պօղոս Սնապեան, *Երկու Սպանդ,* Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 2008, էջ 114:

[64] Վարդան Մատթէոսեան, *Գրական-Բանասիրական Ուսումնասիրութիւններ,* Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2009, էջ 189-191:

[65] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 407:

[66] Անդ, էջ 413:

[67] Անդ, էջ 414:

[68] Անդ, էջ 415:

[69] Տե՛ս՝ www.ellisisland.org:

[70] *Ward 12-Precinct 1, City of Boston, List of Residents 20 Years of Age and Over as of January 1, 1936,* Boston, City of Boston Printing Department, 1936, էջ 21: Պոստոնի բնակիչներու այս ցուցակին «ենթադրեալ տարիք» (suspected age) սիւնակը հաւանաբար նկատի ունի, ուր անոնց տուեալները մատուցուած էին առ 1 Յունուար 1935: 1941ի հատորը Եղսա Թոթովեանի տարիքը նշած է որպէս 53, փոխանակ 58ի, ինչ որ թերեւս տպագրական վրիպակ մըն է (*Ward 12-Precinct 1, City of Boston, List of Residents 20 Years of Age and Over,* Boston, City of Boston Printing Department, 1941, էջ 24):

[71] Տե՛ս՝ familylink.com, ուր նշուած են երեք զաւակներ եւս՝ Ազատուհի, Կայծակ եւ Նուպար: Յիշուած չէ 1907ին մահացած Տիգրանը, որուն առիթով Թոթովենց գրած է իր առաջին տպագիր ոտանաւորը (Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 481):

[72] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 420: Վէպին «Աշուր» անունը կարդացուած է «Աշոտ» (Փօսթաճեան, *Ականաւոր,* էջ 56): Հմմտ.՝ 1936ի ինքնակենսագրութիւնը. «Գրագիտութիւն սովորել եմ ասորի պոէտ ուսուցչի մօտ» (ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370): Խաչատրեան «ուսուցչի» բառը կարդացած է «ուսուցչիս» (Խաչատրեան, *Գրական,* 1975, էջ 239):

[73] Կենսագրութիւնը տե՛ս՝ Նազարէթ Փիրանեան, *Խարբերդի Եղեռնը*, Պոստոն, «Պայքար» տպարան, 1937, էջ 60-61:

[74] «Նամակ Կարինէն», *Կոչնակ,* 4 Նոյեմբեր 1916, էջ 1172:

[75] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 4:

[76] Վահէ Հայկ, էջ 443:

[77] Փիրանեան, էջ 60:

[78] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370: Խաչատրեան այս պարբերութիւնը հրապարակած է հետեւեալ տեսքով. «Իմ դասատուներն էին հայ արձակի վարպետներ Թլկատինցին եւ Ռուբէն Զարդարեանը» (Խաչատրեան, *Գրական,* 1975, էջ 239):

[79] Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 10: Խաչատրեան այս գրքոյկին հրատարակութիւնը սկզբնապէս թուագրած էր 1906ին (*Գրական,* 1975, էջ 240. նաեւ՝ *Գրական,* 1981, էջ 154), իսկ 1986ին տուած է ճիշդ՝ 1908 թուականը (*Գրական,* 1986, էջ 194): Որպէս հետեւանք, Պարտագճեան սխալմամբ ցուցակագրած է երկու հրատարակութիւններ՝ 1906ին եւ 1908ին (Bardakjian, *A Reference Guide,* էջ 541), որոնցմէ առաջինը գոյութիւն չունի:

[80] Վահէ Հայկ, էջ 429-430:

[81] Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 491:

[82] Թլկատ, «Զալըմ Տղան», *Մուրճ,* Յունուար 1904, էջ 32-52. Փետրուար 1904, էջ 28-42. Մարտ 1904, էջ 19-30. Ապրիլ 1904, էջ 78-102. Մայիս 1904, էջ 72-96:

[83] Ն. Տ. Ս. Թաշճեան, «Կրթական Շարժում Մը (Յուշեր Մեզրէի [Խարբերդ] Կեդրոնական Երկսեռ Վարժարանէն», *Հայրենիք Ամսագիր,* Յուլիս 1930, էջ 112: Բնականաբար, անճիշդ է այն տեղեկութիւնը, որ Թաշճեան Մեծ Եղեռնի զոհերէն եղած է (Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 563): Ան Միացեալ Նահանգներ հաստատուած էր 1915էն առաջ եւ աշխատած՝ որպէս ատամնաբուժ, ըլլալով միաժամանակ ՀՅԴ գործիչ: Մահացած է 1945ին (Յովակիմեան, էջ 608):

[84] Տե՛ս՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 4-5: Այս մականունը կը բացակայի մօրենական ընտանիքի մասին մեզի յայտնի տուեալներուն մէջ: Ադալեան գրած է, թէ «սկզբնապէս՝ տեղի [Մեզրէի - Վ.Մ.] Ազգային կրթական վարժարանում սովորելիս, Վահանը կրում էր մօր ճիւղի Գոյումճեան ազգանունը (...)» (Ադալեան, էջ 10), ինչ որ վերոյիշեալ տեղեկութենէն մակաբերում մը կը թուի: «Ազգային կրթական վարժարան»ը հաւանաբար մեքենագրական վրիպում մըն է՝ «Ազգային Կեդրոնական Վարժարան»ի տեղ:

[85] Վահէ Հայկ, էջ 1207: Հմմտ. Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 11:

[86] Թոթովենց, *Երկեր 1,* էջ 481:

[87] Վահէ Հայկ, էջ 443:

[88] Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 12:

[89] ԳԱՌ, Վ. Թոթովենցի ֆոնտ, թիւ 370, ուր *Արեւելեան Մամուլը* սխալմամբ ամսաթերթ կոչուած է:

[90] Թոթովենց, *Երկեր 1,* էջ 421 (հմմտ. անդ, էջ 481):

[91] Վահան Թոթովենց, «Արտօսրի Կայլակներ», *Արեւելեան Մամուլ,* 11 Ապրիլ 1907, էջ 308:

[92] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 482: Ի դէպ, հարկաւոր է ճշգրտել գրագէտին տեղեկութիւնը. «Ցանկացայ, որ իմ առաջին գիրքս տպուի "Ծիածան"ի նման, միեւնոյն թղթով, ձեւով, շապիկով, միեւնոյն տպարանից: Այդպէս էլ եղաւ» (անդ): Մեծարենցի առաջին հատորը լոյս տեսած է «Սագաեան» տպարանէն, իսկ Թոթովենցի երախայրիքը՝ «Յ. Ասատուրեան» տպարանէն: Սակայն, անոնք ունեցած են միեւնոյն հրատարակիչը՝ «Վ. եւ Պ. Զարդարեան» գրատունը:

[93] Թաշճեան, «Կրթական Շարժում Մը», էջ 112: Աւելցնենք, որ ամերիկահայ ուրիշ ապագայ դէմք մը՝ Համաստեղը (1895-1966), 16 տարեկանին պիտի աւարտէր Մեզրէի Կեդրոնական Վարժարանը ՝ 1911ին (անդ, էջ 113):

[94] Wilkinson, էջ 203:

[95] Թոթովենց, *Երկեր Գիրք 1*, էջ 482:

[96] Մշակ, «Եղբայրութեան Դրօշը», *Ազատամարտ,* 22 Դեկտեմբեր 1909/4 Յունուար 1910: Բանաստեղծութիւնը ձօնուած է «Արշաւիր Կամսարականի յիշատակին», իսկ ստորագրութեան քով գրուած է «Ամերիկա»: «Մշակ» Թոթովենցի ծածկանունն էր (Յովակիմեան, էջ 301):

[97] Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 158 (ընդգծումը մերն է):

[98] Wilkinson, էջ 203:

[99] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370:

[100] Թոթովենց, *Երկեր,* էջ 3:

[101] Մանուկեան, էջ 15:

[102] Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 10: Հետեւելով վերոյիշեալ աղբիւրներուն եւ նկատի ունենալով Թէոդիկին ուղղուած 26 Ապրիլ 1910ի նամակը Նիւ Եորքէն, ուր Թոթովենց ըսած է, թէ «այս քաղաքը հասնելուս պէս ձեր 1910ի տարեցոյցը ձեռքս հասաւ» (Վարդան Մատթէոսեան, «Թէոդիկին Ուղղուած Նորայայտ Նամակներ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԼԴ. Հատոր*, 2014, էջ 349), սխալմամբ ենթադրած էինք, որ այս խօսքը առնչուած էր Միացեալ Նահանգներ ժամանումին՝ 1909ի վերջերուն կամ, թերեւս, 1910ի սկիզբը (նոյն, *Գրական-Բանասիրական,* էջ 192):

[103] Արզումանեան, «Թոթովենց, Վահան», էջ 195:

[104] Խաչատրեան, *Գրական*, 1981, էջ 154. նոյն, *Գրական,* 1986, էջ 194:

[105] «Թոթովենց, Վահան», *Հայկական Համառօտ Հանրագիտարան,* էջ 300. նաեւ՝ «Թոթովենց, Վահան», *Ով Ով Է. Հայեր*, էջ 434:

[106] Փօսթաճեան, *Ականաւոր,* էջ 56:

[107] Վահան Թոթովենց, «Տօնօն», *Ժողովուրդի Ձայնը,* 4 Յուլիս 1922: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3,* էջ 117: Գրագէտը վերամշակած ու սրբագրած է վիպակին

առաջին՝ թերթօնային հրատարակութիւնը, որուն առաջին տողին մէջ գրուած էր. «1909-ի աշնանը Նիւ-Եօրք կը գտնուէի» (նոյն, «Տօնօն», *Հայաստան,* 8 Հոկտեմբեր 1917):

[108] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vahan Totooyan անունին տակ:

[109] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vauhan Totoventz անունին տակ:

[110] Lisa Boghosian Papas, "The First Minnesota: Keljik," *AGBU News,* July 1999, էջ 17:

[111] Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 151:

[112] *R. L. Polk & Co's St. Paul City Directory,* St. Paul (Minnesota), R. L. Polk & Co, 1909, էջ 1697:

[113] Տե՛ս՝ Մատթէոսեան, «Թէոդիկին Ուղղուած», էջ 349-350:

[114] Տե՛ս՝ Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի Հինգ», էջ 55: Հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 518-519:

[115] *R. L. Polk & Co's St. Paul City Directory,* St. Paul (Minnesota), R. L. Polk & Co., 1911, էջ 1669:

[116] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370: Հնարաւոր է, որ «Վիկանսըն»ը մեքենագրական վրիպակ մը ըլլայ:

[117] Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 12 (ընդգծումը մերն է):

[118] Տե՛ս՝ Արզումանեան, «Թոթովենց, Վահան», էջ 195. նաեւ՝ Խաչատրեան, *Գրական*, 1981, էջ 154. նոյն, *Գրական*, 1986, էջ 194. նաեւ՝ «Թոթովենց, Վահան», էջ 300 (*Հայկական Համառօտ Հանրագիտարան*). «Թոթովենց, Վահան», էջ 434 (*Ով Ով Է*):

[119] Վահէ Հայկ, էջ 444-445:

[120] Stephen G. Svajian, *A Trip Through Historic Armenia,* New York, Green Hill Publishing, 1977, էջ 546: Հմմտ.՝ Անդրանիկ Չելեպեան, *Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական Շարժումը,* Լոս Անճելըս, Տպ. «Ապրիլ», 1984, էջ 373, 411:

[121] Wilkinson, էջ 200:

[122] *The University of Wisconsin: Directory of Officers and Students, November 1913,* Madison (Wisconsin), University of Wisconsin, 1913, էջ 158:

[123] *The University of Wisconsin Catalogue 1913-1914,* Madison (Wisconsin), University of Wisconsin, 1914, էջ 673:

[124] *The Badger,* assembled and published by the class of 1915 of the University of Wisconsin at Madison, vol. 29, 1914, էջ 382 եւ 528:

[125] Nichanian, "Vahan Totovents," էջ 428. նաեւ՝ Idem, *Writers of Disaster*, էջ 270: Ուսումնասիրողներու ուշադրութենէն վրիպած է այն փաստը, որ Ճէյմզ Թաշճեան աւելի կանուխ կատարած կը թուի ըլլալ նոյնպիսի քննութիւն մը: Գրախօսելով Թոթովենցի *Կեանքը Հին Հռոմէական Ճանապարհի Վրայի* անգլերէն թարգմանութիւնը, ան 1982ին յայտնած էր, թէ 1912-1914ին, «ըստ համալսարանի արձանագրութիւններուն», գրագէտը աշխատած էր իբրեւ «յատուկ ուսանող գրականութեան եւ ուսմանց» ("special student in letters and studies") (James H. Tashjian, "Vahan Totovents, *Scenes from an Armenian*

Childhood," *The Armenian Review,* Spring 1982, էջ 110): Ադալեան գրած է, թէ Թոթովենց համալսարանական ուսումը ընդհատած էր 1915ին (Ադալեան, էջ 20): 1912-1915 թուագրումին համար, տե՛ս՝ Hacikyan, Basmajian, Franchuk, and Ouzounian, էջ 934:

[126] "The University of Minnesota: The Annual Register, 1913-1914," *Bulletin of the University of Minnesota,* March 1915, էջ 156:

[127] Ադալեան, էջ 132:

[128] Տե՛ս՝ Մատթէոսեան, *Գրական-Բանասիրական,* էջ 191-194:

[129] Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 157: Յիշեալ նամակներուն ճակատագիրը յայտնի չէ:

[130] Մատթէոսեան, «Թէոդիկին Ուղղուած», էջ 349: 1912ին *Արմենիայի* խմբագրութիւնը շնորհակալութիւն յայտնած էր բազմաթիւ անձերու, որոնց շարքին՝ Պետրոս Կէօլճիկին եւ Վահան Թոթովենցին, "for their effective work in behalf of 'Armenia'" («յանուն *Արմենիայի* իրենց կատարած արդիւնաւէտ աշխատանքին համար») ("To Our Subscribers", *Armenia,* July 1912, էջ 359):

[131] Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 158: Ուիլքինսըն նշած էր, թէ Թոթովենց ամերիկեան տարիներուն «ծանօթ դարձած էր» Պոստոնի դաշնակցական կեդրոնատեղիին մէջ (Wilkinson, էջ 202):

[132] «Զաւարեանի Մահը. Հեռագիրներ Ու Նամակներ», *Հայրենիք,* 15 Նոյեմբեր 1913 (ընդգծումը մերն է):

[133] Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 157: Յիշեալ նամակներուն ճակատագիրը յայտնի չէ:

[134] *Davison's Minneapolis 1915 City Directory,* Minneapolis, Minneapolis Directory Company, 1915, էջ 1999:

[135] Վահան Թոթովենց, «Տօնօն», *Ժողովուրդի Ձայնը,* 27 Յուլիս 1922: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3,* էջ 171:

[136] Գէորգ Տօնապետեան, *Հ.Յ.Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի Մէջ, Բ. Հատոր (1910-1923)*, Պոստոն, «Հայրենիք» Հաստ., 1995, էջ 298, 305:

[137] Սեդրակ Բախտիկեան, «44 Տարի Առաջ», *Հայրենիք* ամսագիր, Հոկտեմբեր 1960, էջ 105-106:

[138] Տօնապետեան, էջ 298, որ նաեւ հրատարակած է կամաւորներու խմբանկարը Փեթրոկրատի մէջ (անդ, էջ 295):

[139] Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 161:

[140] Անդ:

[141] Փիրանեան, էջ 224:

[142] Ադալեան, էջ 19-20:

[143] Փիրանեան, էջ 224-225 (ընդգծումը մերն է): Ըստ ուրիշ վկայութեան, կարաւանը բաղկացած էր 1.000 ունեւոր ընտանիքներէ (Esther Mugerditchian, *From Turkish Toils: The Narrative of an Armenian Family Escape,* New York, George H. Doran, 1918, էջ 14):

[144] Փիրանեան, էջ 227:

[145] Mugerditchian, էջ 30:

[146] «Նամակ Կարինէն», էջ 1171:

[147] Տե՛ս՝ Ancestry.com, *U.S. World War I Registration Cards* [database on line], Provo (Utah), Ancestry.com operations, Inc., 2005:

[148] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vauhan Totoventz եւ Lucie Totoventz անուններուն տակ:

[149] Ադալեան, էջ 20:

[150] Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 418-419:

[151] Փիրանեան, էջ 296-299:

[152] Վահէ Հայկ, էջ 628:

[153] Գասպարեան, էջ 81:

[154] Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 217: Վրացեան, որ 1915ին Երեւան էր, ուր հանդիպած է Թոթովենցին, նոյնպէս վկայած է, որ ան Արղութեանի գունդին մաս կազմած է (Վրացեան, «Վահան Թոթովենց», էջ 161):

[155]«Ազգային Կեանք», *Կոչնակ,* 3 Յունիս 1916, էջ 604: Տե՛ս՝ Ագապի Նասիպեան, *Բրիտանիա Եւ Հայկական Հարցը 1915-1923,* Պէյրութ, «Սիփան» Հրատ., 1994, էջ 66-68:

[156] "Armenians Dying in Prison Camps," *The New York Times,* 21 August 1916:

[157] Ադալեան, էջ 126:

[158] Վահան Թոթովենց, «Տօնօն», *Ժողովուրդի Ձայնը,* 17 Օգոստոս 1922: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3,* էջ 217: Այս վկայութիւնը հիմնազուրկ կը դարձնէ այն պնդումը, թէ «կը միանայ հայ կամաւորական շարժումին: Կը ծառայէ Անդրանիկի բանակին» (Փօսթաճեան, *Ականաւոր,* էջ 56), որ կրկնուած է գրականութեան հետ աղերս չունեցող հայհոյալից պարսաւագրի մը մէջ. «Ան կը ծառայէ Անդրանիկի բանակին մէջ՝ որպէս կամաւոր զինուոր» (Թորգոմ Փօսթաճեան, *Վահան Թոթովենց. Ներբող Իր Փառապանծ Անձին Եւ Վաստակին Եւ Հաշուեյարդար Սրբապիղծ Ընդդիմագիրներու,* Լոս Անճելըս, Տպ. «Երեւան», 2011, էջ 35):

[159] Թոթովենց, «Տօնօն», *Ժողովուրդի Ձայնը,* 17 Օգոստոս 1922: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3,* էջ 217-218: Ուիլքինսըն արդէն գրած էր, թէ կամաւորական գունդերու լուծարումէն ետք, շրջան մը Թոթովենց աշխատած էր որպէս ուսուցիչ Կարնոյ մէջ (Wilkinson, էջ 200):

[160] Գասպարեան, էջ 81:

[161] Սեդրակ Բախտիկեան, «44 Տարի Առաջ», *Հայրենիք* ամսագիր, Փետրուար 1960, էջ 44:

[162] Գրիգոր Շահինեան, *Ձիւներն Ի Վեր. Մենագրութիւն Լ. Շանթի Մասին,* Պէյրութ, Տպ. «Մշակ», 1967, էջ 154: Շանթ ու Արամ Մանուկեան Երեւան գումարուած Արեւմտահայ Համագումարի համանախագահ ընտրուած էին 1 Մայիս 1916ին, իսկ այնուհետեւ Շանթ Արեւմտահայ Խորհուրդի անդամ ընտրուած էր (Սիմոն Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն,* Ա. տպագրութիւն, Փարիզ, Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ի Հրատ., 1928, էջ 27): Այս տեղեկութիւնը անվաւեր կը դարձնէ Արփիկ Աւետիսեանի ծանօթագրութիւնը,

թէ Շանթ պատերազմի շրջանին Լոզան կը գտնուէր (Զապէլ Եսայեան, *Նամակներ,* Երեւան, ԵՊՀ Հրատ., 1977, էջ 337):

[163] Ամատունի Վիրաբեան եւ Գոհար Աւագեան (կազմողներ), *Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. Վերապրածների Վկայութիւններ, Հտր. 1*, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2012, էջ 6-8:

[164] Եսայեան, *Նամակներ*, էջ 135: Աւետիսեան հիմնազուրկ կերպով «Վահան»ը նոյնացուցած է Վահան Տէրեանի հետ (անդ, էջ 337):

[165] «Յուշ Մը Վահան Թոթովենցէն», տե՛ս՝ Կարօ Գէորգեան, *Ամէնուն Տարեգիրքը*, Պէյրութ, Տպ. «Ատլաս», 1960, էջ 220:

[166] Վ. Թ., «Անգլիա, Պարսկաստան Եւ Ես»: Հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 406-417:

[167] Նասիպեան, էջ 68:

[168] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 116: Տե՛ս՝ Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի Հինգ», էջ 56 (հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 518):

[169] «Մեծ Եղեռնի Պատմութիւնը», *Հայաստան,* 10 Նոյեմբեր 1917:

[170] «Հայ Հորիզոնէն», *Շանթ,* 21 Յունիս 1919, էջ 400:

[171] Վիրաբեան եւ Աւագեան, էջ 8-9:

[172] Վ. Թ., «Անգլիա, Պարսկաստան Եւ Ես»: Հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3*, էջ 405 (ընդգծումը մերն է):

[173] Վահան Փափազեան, *Իմ Յուշերը, Հատոր Երկրորդ*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1952, էջ 456:

[174] Վահան Թոթովենց, «Երկու Խօսք Հայկական Դատի Էութեան Մասին», *Ազգ,* 1 Ապրիլ 1921: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3*, էջ 395:

[175] «Իրաւունքի Մը Մասին», *Աշխատանք,* 31 Օգոստոս 1916:

[176] Արշակ Սաֆրաստեան, «Կովկասեան Դէպքերը Մեծ Պատերազմի Միջոցին», *Արեւ,* 14 Փետրուար 1919:

[177] Փափազեան, էջ 458 (ընդգծումը բնագրային է):

[178] Սաֆրաստեան:

[179] Անդ:

[180] ԳԱԹ, Արշակ Չօպանեանի ֆոնտ, I բաժին, թ. 2411: Տե՛ս՝ Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի», էջ 57 (հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 519):

[181] Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 29:

[182] ԳԱԹ, Արշակ Չօպանեանի ֆոնտ, I բաժին, թ. 2412: Տե՛ս՝ Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի», էջ 59-60 (հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 520-521):

[183] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370:

[184] Մանուկեան, էջ 17-18 (ընդգծումները մերն են): Հմմտ.՝ Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 18:

[185] ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճեանի ֆոնտ, թ. 1366: Տե՛ս՝ Մատթէոսեան, «Վահան Թոթովենցի», էջ 62 (հմմտ.՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 3,* էջ 523):

[186] «Հայկական Լուրեր», *Ժողովուրդի Ձայնը,* 31 Մայիս/13 Յունիս 1920. «Ժամանում», *Առաւօտ,* 14 Յունիս 1920: Երկու թերթերը գրած են, թէ

Թոթովենց հասած էր 12 Յունիսին, ու զինք ներկայացուցած՝ որպէս *Հայաստանի* խմբագիր, թէեւ թերթը դադրած էր երկու տարի առաջ:

[187] 1919ին հաղորդուած էր, թէ Թոթովենց կը ծրագրէր անգլերէն թերթ հրատարակել Կովկասի մէջ («Հայ Հորիզոնէն», *Շանթ,* 25 Յունուար 1919, էջ 143): Այս ծրագիրը իրականացած չէ: Միւս կողմէ, Նորենց վկայած է, որ 1919ին Թոթովենց ու Շիրվանզադէ այցելած են անոր որբանոցը Թիֆլիսի մէջ (Վաղարշակ Նորենց, «Վահան Թոթովենցի Ծննդեան 70-ամեակը», *Բիւրակն,* 27 Յուլիս 1966):

[188] Վահան Թոթովենց, «Մեր Պետութիւնը», *Ժողովուրդի Ձայնը,* 2/15 Յունիս 1920:

[189] Վահան Թոթովենց, «Թափառումներ», *Ժողովուրդի Ձայնը,* 3/16 Յունիս 1920: Հմմտ.՝ նոյն, *Երկեր Գիրք 3,* էջ 382 (բնագրային մանր տարբերութիւններով):

[190] Վահան Թոթովենց, «Գրական-Գեղարուեստական Կեանքը Հայաստանի Մէջ», *Ժողովուրդի Ձայնը,* 4/17 Յունիս 1920:

[191] Վահան Թոթովենց, «Բաց Նամակ Արշակ Չօպանեանին», *Խորհրդային Հայաստան,* 24 Յունուար 1923: Թոթովենցն ու իր կինը Հոկտեմբեր 1920ին արդէն Փարիզ էին, ինչպէս ցոյց կու տայ անոր մէկ պատմուածքին կցուած տեղեկութիւնը (Նոյն, «Հօ՛, Հօ՛, Հօ՛...», *Ազգ,* 4 եւ 5 Նոյ. 1920):

[192] Վահան Թոթովենց, "L'Arménie soviétigue" [sic], *Գրական Դիրքերում,* Նոյեմբեր-Դեկտեմբեր 1930, էջ 46-47:

[193] Մանուկեան, էջ 18: Տե՛ս նաեւ՝ Արզումանեան, *Վահան Թոթովենց,* էջ 19. նաեւ՝ Թոթովենց, *Երկեր Գիրք 1,* էջ 10:

[194] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vauhan [*sic*] Totoventz եւ Lucie Totoventz անուններուն տակ: Բնականաբար, Օկիւսթ Ռոտէնի թանգարանին այցելութիւնը տեղի ունեցած է այդ թուականէն առաջ, թէեւ թղթակցութիւնը լոյս տեսած է աւելի ուշ, երբ գրագէտը արդէն Միացեալ Նահանգներ կը գտնուէր (Վահան Թոթովենց, «Փարիզեան Նամակներ. Օկիւսթ Ռոտէն», *Ժողովուրդի Ձայնը,* 6/19 Դեկտեմբեր 1920):

[195] "Les Bolcheviks 'Protègent' l'Arménie," *Le Matin,* 6 décembre 1920:

[196] "La Lithuanie et la Perse vont-être Sovietisés," *Le Petit Parisien,* 26 Դեկտեմբեր 1920:

[197] "Reds Seize Erivan, Capital of Armenia," *The New York Times,* 5 Դեկտեմբեր 1920:

[198] Տե՛ս՝ www.ellisisland.org՝ Vauhan [sic] Totoventz եւ Lucie Totoventz անուններուն տակ:

[199] «Կուսակցական Կեանքէ», *Ազգ,* 1 Յունուար 1921:

[200] Յովհաննէս Պօղոսեան, *Կուսակցական Կեանքի Յուշերս,* Պէյրութ, 1987, Տպ. «Տօնիկեան», էջ 14: Թոթովենցի ժամանումէն գրեթէ անմիջապէս ետք, ծանուցուած է, որ ան «ընկերական զեկոյց» մը պիտի ներկայացնէր Հայ Ռամկավար Կուսակցութեան Բերայի ակումբին մէջ՝ 17 Յունիս 1920ին (*Ժողովուրդի Ձայնը»,* 4/17 Յունիս 1920):

[201] Կիրակոս Ա. Չագարեան, «Պոսթոնի Ռամկավար Ակումբին Հրապարակային Ժողովը», *Ազգ,* 1 Յունուար 1921:

[202] «Նոր Գրքեր (Գրախօսական)», *Ազգ,* 10 Փետրուար 1921: Ծովիկեան Ազատական Կուսակցութեան անդամ էր. տե՛ս՝ Հայ Ռամկավար եւ Ազատական կուսակցութիւններու միացեալ դաշտահանդէսի ծանուցումը, որուն բանախօսներն էին «ընկերներ Վահան Թոթովենց եւ տոքթ. Յ. Ծովիկեան» (*Ազգ,* 22 Սեպտեմբեր 1921):

[203] Տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Երկու Անտիպ Նամակ Վահան Թոթովենցէն», *Բագին,* Յունիս 2005, էջ 41-42:

[204] ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնտ, թ. 370:

[205] Վ. Թ., «Քանի Մը Օր», *Ժողովուրդի Ձայնը,* 6-16 Յունուար 1923:

[206] «Քանի Մը Օր», *Ժողովուրդի Ձայնը,* 6 Յունուար 1923:

[207] Վահան Թոթովենց, «Հայ Կեանքը Գաղութներում», *Նորք,* գիրք առաջին, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1922, էջ 245:

[208] Թոթովենց, «Բաց Նամակ Արշակ Չօպանեանին»:

[209] Արշակ Չօպանեան, «"Նորք"ին Առիթով», *Ապագայ,* 5 Մայիս 1923:

[210] Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Նամակները Արշակ Չօպանեանին (1922-1931)», *ՀՀՀ, Հատոր Լ.*, 2010, էջ 450:

[211] Տե՛ս՝ Վահան Թոթովենց, *Հայ Ազգի «Փրկիչ» Դաշնակները,* Մոսկուա, ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչութիւն, 1931:

[212] Փօսթաճեան, *Վահան Թոթովենց,* էջ 56:

[213] Ադալեան, էջ 260-261:

[214] Չարենց, Բակունց Եւ Չուբար, *Հոկտեմբեր-Նոյեմբեր*, էջ 76: Ուշադրութեան արժանի է հետեւեալ նշումը հայ լրագրութեան նուիրուած բառարանային ամփոփումի մը մէջ. «1920ական եւ վաղ 1930ականներուն, երբ հայ բոլշեւիկները Խորհրդային Հայաստանի մշակութային ինքնավարութեան տպաւորութիւնը կ'ուզէին ձգել, քանի մը կարկառուն հայ գրողներ, ինչպէս Վահան Թոթովենց (1893-1938), կարողացան ազգայնական լրագրութեամբ (nationalist journalism) զբաղիլ» (Ross Eaman, *Historical Dictionary of Journalism,* Lanham (Maryland), University Press of America, 2009, էջ 76): Կը մնայ չբացայայտուած, թէ ինչո՞ւ այս ակնարկին հեղինակը Թոթովենցը յատկապէս առանձնացուցած է եւ՝ «ազգայնական լրագրութեան» ո՞ր օրինակներու հիմամբ:

[215] Տե՛ս՝ Nichanian, "Vahan Totovents," էջ 427. նաեւ՝ Idem, *Writers,* էջ 250:

[216] Ս. Սահառունի, «Մթին Որջերի Բնակիչները», *Հայրենիք* ամսագիր, Հոկտեմբեր 1955, էջ 60:

ISSUES IN VAHAN TOTOVENTZ'S EARLY BIOGRAPHY

(Summary)

VARTAN MATIOSSIAN
varny1@yahoo.com

The life and deeds of writer Vahan Totoventz (1889-1938), before he settled in Soviet Armenia (1922), have been studied to a certain extent, but many issues still

remain unclear. The ideological ups and owns of the writer have indirectly created an obstacle for Soviet Armenian biographers, who were obliged to work with incomplete data and offer equally incomplete information. One of the reasons for this was the contradictory nature of the biographical data made available by Totoventz himself. Mostly, these data have not been double checked against documentary information, even in those cases when such a verification did not create any risks.

After a thorough study of available printed and unpublished sources, including archival documents, newspaper articles, and a secondary bibliography, the author has formulated certain conclusions that may be of interest for future biographers:

a) The Totoventz family (the name has continued in the United States as Totovig) was originally from Akn, Western Armenia, and had settled in Mezre (administrative center of the vilayet of Mamuret-el-Aziz) in the second half of the nineteenth century. However, the writer's maternal family (Goljukian, known in the United States as Keljik) came from the township of Dzovk, near the homonymous lake (known in Turkish as Golcuk), and had moved to Mezre at an earlier date.

b) Totoventz's year of birth should be regarded as 1889 or 1890, as the writer himself attested until 1912 at least. The alternative year 1893 appeared in 1920, while the other alternative, 1894, was first published in 1932, apparently for political reasons.

c) Totoventz first resided in the United States from 1908 to 1915, including a two-year period of studies at the University of Wisconsin-Madison (1912-1914).

d) Totoventz departed for the Caucasus in 1915 to enroll in the Armenian volunteer battalions attached to the Russian army. Afterwards, he worked at orphanages opened in Western Armenia (1916), gathered accounts of survivors for a project to collect and publish them (1916-1917), and became the editor of the Tiflis-based *Hayastan* daily (1917-1918).

e) After being a sympathizer of the Armenian Revolutionary Federation (ARF), Totoventz became a member of this party, probably in 1910, and remained in its ranks until the end of 1916, when he left for ideological reasons or pretexts.

f) From 1920 to 1922 he was a member of the National Democratic Party (later Armenian Democratic) Party and its continuation, the Democratic Liberal Party (DLP).

g) After moving to Soviet Armenia, where he would become a victim of the Stalinist purges, he was forced in 1922-1923 and later to periodically publish declarations of ideological faith, both against the ARF and, less often, the DLP, to make explicit once and again the break with his past.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՓԱԿՈՒՄԸ (1920-1933)

ԳԱՐԻԿ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

Ի. դարի առաջին տասնամեակները հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան ամենամռայլ շրջաններից են: Յեղափոխական շարժումների, ազգամիջեան բախումների, Առաջին Աշխարհամարտի, օտար պետութիւնների քաղաքական շահերին պարբերաբար զոհ գնալու ողբերգական հետեւանքները հայութեանը բերեցին նորանոր անլուր զրկանքներ, տեղահանութիւններ, գաղթ եւ հայրենազրկում, կոտորածներ ու ցեղասպանութիւն, մարդկային, տարածքային, հոգեւոր ու նիւթական արժէքների անասելի հսկայական եւ մեծամասամբ անդառնալի կորուստներ:

Յիշեալ տասնամեակները ծանրագոյն փորձութիւններով լի տարիներ էին նաեւ արցախահայութեան համար, փորձութիւններ, որոնք առաւել ծանրացան 1918ին եւ իրենց գագաթնակէտին հասան 1920ին: 1918ին կովկասեան թաթարների համար առաջչացուեց «Ադրբեջան» անունով մի նոր պետութիւն: Ռուսական նախկին կայսրութեան Ելիզաւետպոլի (Գանձակի) եւ Բաքուի նահանգների հիմնական տարածքը զբաղեցնող պետութիւնն անմիջապէս զաւթողական նկրտումներ ի յայտ բերեց՝ տիրանալու աշխարհագրօրէն եւ պատմականօրէն հայոց հայրենիքի անբաժանելի մաս կազմող Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի երկրամասերին: Շուրջ երկու տարի Արցախն օրհասական պայքար էր մղում իր զաւթողական ծրագրերն իրագործել փորձող մուսաւաթական Ադրբեջանի անհաւասար ուժերի դէմ: Ծանրագոյն այդ պայքարի հետեւանքով «*Խորհրդային կարգերի հաստատման նախօրեակին Արցախ-Ղարաբաղն արդէն վերածուել էր աւերածութիւնների ենթարկուած մի տարածքի, որտեղ թուրք-մուսաւաթական ուժերը բարբարոսաբար ոչնչացրել էին 59 գիւղ, անօթեւան էր մնացել 37 հազար բնակիչ, փոշիացուել էր 7000 տնտեսութիւն, զոհուել էր 25*

հազար մարդ, այրուել էր երկրամասի տնտեսական ու մշակութային կենտրոն Շուշի քաղաքի հայկական թաղամասը, փակուել կամ ոչնչացուել էր ֆաբրիկաների ու արհեստանոցների 90 տոկոսը»[1]:

1920 Ապրիլի 28ին սովետական 11րդ Կարմիր Բանակի միջամտութեամբ Ադրբեջանը վերածւում է խորհրդայինի, ինչը, սակայն, բացարձակապէս ոչնչով չի ազդում նրա հակահայ քաղաքականութեան եւ զաւթողական ախորժակի վրայ. «*Այս անգամ գոյնը փոխած Ադրբեջանը փորձում է խորհրդային Ռուսաստանի աջակցութեամբ տիրանալ Լեռնային Ղարաբաղին: Խորհրդային Ադրբեջանի կառավարութիւնը եւ 11-րդ կարմիր բանակի հրամանատարութիւնը Հայաստանի Հանրապետութեանը վերջնագիր են ներկայացնում՝ անյապաղ մաքրելու Լեռնային Ղարաբաղի տարածքը: Այս պահանջով Խորհրդային Ռուսաստանը կայացման փուլում խախտեց իր իսկ յայտարարած բարձրագոչ սկզբունքները, այն է՝ ազգերի ինքորոշման սկզբունքը*»[2]:

Խորհրդային Ռուսաստանը Ադրբեջանի միակ գործուն աջակիցը չէր Արցախի զինեալ պայքարը կոտրելու եւ երկրամասը կովկասեան թաթարների ողորմածութեանը թողնելու հարցում. իրենց ցաւալի ներդրումն ունեցան նաեւ հայ բոլշեւիկները (որոնք սեփական կուսակցական շահից այն կողմ ոչինչ չէին տեսնում եւ Ադրբեջանի ռազմական յարձակողապաշտութիւնը ու Արցախի կենաց-մահու պայքարը ներկայացնում էին սոսկ որպէս «մուսաւաթականների ու դաշնակցականների կռիւ»[3])՝ պառակտիչ գործունէութեամբ թիկունքից անընդհատ հարուած հասցնելով արցախահայութեան ինքնապաշտպանութեանը[4]:

1920 Մայիսին 11րդ Կարմիր Բանակի զօրամասերը մտնում են Արցախ, եւ «առաջնորդուելով Ադրբեջանի Յեղկոմի ցուցումներով»՝ կոմունիստական կուսակցութեան Շուշիի օկրուգկոմը յատուկ պատուիրակութեան միջոցով Դրաստամատ Կանայեանի հետ բանակցութիւնների մէջ է մտնում՝ «առանց դիմադրութեան Լեռնային Ղարաբաղի սահմանները թողնելու պահանջով»[5]: Նոյն պահանջն են ներկայացնում նաեւ Մայիսի 15ին Շուշի ժամանած Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (Ռ.Կ(բ)Կ) Կենտկոմի եւ սովետական

կառավարութեան լիազօր ներկայացուցիչ Սերգօ Օրջոնիկիձէն եւ Համառուսական Արտակարգ Յանձնաժողովի Յատուկ Բաժնի պետ Սահակ Տէր-Գաբրիէլեանը: Մայիսի 22ին բանակցութիւններ են ընթանում մի կողմից Դրոյի ու ՆԺդեհի, միւս կողմից Սաքօ Համբարձումեանի գլխաւորած բոլշեւիկեան պատուիրակութեան միջեւ: Արդիւնքում համաձայնութիւն է ձեռք բերւում, ըստ որի Հայաստանի Հանրապետութիւնից ժամանած զօրամասերն անխոչընդոտ կը հեռանան Արցախից՝ տեղի բոլշեւիկներին թողնելով զինամթերքի, պարենի եւ հանդերձանքի մի զգալի մասը: Մայիսի 24ին Աւետարանոց Գիւղում կայացած խորհրդակցութեան ժամանակ, որին մասնակցում էին Դրօն, ՆԺդեհը, գնդապետ Միրիմանեանը, Ա. Միքայէլեանը եւ ուրիշներ, որոշւում է իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին եւ հեռանալ Արցախից, ինչն էլ ի կատար է ածւում յաջորդ օրը: Իսկ արդէն Մայիսի 26ին Թաղավարդ Գիւղում բոլշեւիկների ղեկավարութեամբ տեղի է ունենում Արցախի հայութեան 10րդ համագումարը, որով Լեռնային Ղարաբաղը յայտարարւում է խորհրդային[6]:

Խորհրդայնացումն արցախահայութեան համար որեւէ խնդրի դրական լուծում չբերեց, ընդհակառակը՝ «*այն յոյսը, թէ խորհրդային կարգերի հաստատումը կը նպաստի մայր հայրենիքի հետ միանալուն, շուտով յօդս ցնդեց, եւ միանգամայն պարզ դարձաւ, որ 11րդ կարմիր բանակը երկրամասը բռնազաւթել է՝ ի օգուտ Խորհրդային Ադրբեջանի*»[7]: Արցախահայութիւնը չհաշտուեց այս իրողութեան հետ, եւ 1920ին Թեւան Ստեփանեանի գլխաւորութեամբ Արցախում բռնկուեց ազատագրական զինեալ պայքար, որն ուժերի յարաբերակցութեան, մեղմ ասած, անհաւասարութեան պայմաններում, 1921ին ճնշուեց խորհրդային զօրքերի կողմից[8]:

Ի վերջոյ, ՌԿ(բ)Կ Կովկասեան բիւրոյի 1921 Յուլիսի 5ի տխրահռչակ որոշմամբ Արցախն ուղղակիօրէն նուիրաբերուեց Ադրբեջանին[9]:

Արդարութեան համար պէտք է նշել, որ իրերի ընթացքը սառը ցնցուղ եղաւ Արցախի հայ բոլշեւիկների մի մասի վրայ, որոնք, խիստ ուշացած հասկանալով իրենց ճակատագրական սխալը, սկսեցին պաշտպանել Արցախը Հայաստանին միացնելու

գաղափարը: Սակայն այդ տեսակէտի կողմնակիցները՝ Համբարձումեանի գլխաւորութեամբ, պարտութիւն կրեցին եւ հեռացան Արցախից: Ասպարէզն ամբողջովին մնաց Ադրբեջանի հլու կամակատարներին՝ Արմենակ Ղարագէօզեանի (Կարակոզով) գլխաւորութեամբ[10]:

Ադրբեջանի կազմում Արցախի կարգավիճակը յստակեցւում է միայն 1923 Յուլիսի 7ին Ադրբեջանի Կենտգործկոմի ընդունած հռչակագրով, որով կազմաւորւում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Ինչպէս արդարացիօրէն նշում է լրագրող Թաթուլ Յակոբեանը՝ կատարուածը պատմական անկանոնութեան տիպիկ օրինակ էր. «*Խորհրդային ինքնավարութիւնների տրամաբանութիւնը յուշում էր, որ Ղարաբաղում պէտք է բնակուէին ղարաբաղցիներ (ազգ իմաստով), մինչդեռ աշխարհում նման ժողովուրդ եւ լեզու գոյութիւն չունի: Երկրորդ անոմալիան՝ միութենական 15 հանրապետութիւններից միակը Հայաստանը եւ միակը հայերն էին, որոնք, ունենալով միութենական հանրապետութեան կարգավիճակ, մէկ այլ ազգային կազմաւորում ունէին՝ ի դէմս ԼՂԻՄի, հարեւան միութենական հանրապետութեան սահմաններում*»[11]:

Իսկ այն, ինչ ընդգրկուել էր նորաստեղծ մարզի սահմաններում, պատմական Արցախ Նահանգի բզկտուած մի հատուածն էր միայն. երբեմնի 11,5 հազար կմ^2 տարածքից թողնուել էր միայն 4,4 հազար կմ^{2}ը: ԼՂԻՄի սահմաններից դուրս մնաց Դաշտային կամ Ներքին Արցախը, բռնի կերպով անջատուեց նաեւ ողջ Հիւսիսային Արցախը: Քրդական հարցի լուծման պատրուակով Արցախը վերեւից ներքեւ բառացիօրէն կտրուեց մայր հայրենիքից. Արցախից եւ անգամ ՀԽՍՀից կորզուած զգալի տարածքների վրայ արհեստականօրէն կազմաւորուեց քրդաբնակ գաւառ՝ Կարմիր Քրդստանը, որն էլ յետագայում՝ 1930ին, մասնատուեց ու վերածուեց ամբողջովին ադրբեջանական շրջանների (Քելբաջար, Լաչին, Կուբաթլի, Զանգելան)[12]: Նպատակը կռահելը դժուար չէ. նախ՝ «վիճելի տարածք» Արցախից հնարաւորինս շատ հատուածներ այդպիսով «անվիճելի» էին դառնում՝ համարուելով զուտ ադրբեջանական տարածքներ[13], ապա նաեւ՝ Հայաստանից անջատելով ԼՂԻՄը եւ

ադրբեջանաբնակ շրջանների խիտ օղակի մէջ առնելով այն՝ առաւել իրագործելի էր դառնում Արցախը վերջնակապէս հայաթափելու եւ խնդիրը մէկընդմիշտ լուծելու ծրագիրը:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ

Վերոնշեալ քաղաքական իրադարձութիւնների արդիւնքում Խորհրդային Ադրբեջանի գերիշխանութեան տակ յայտնուեց նաեւ Հայաստանեայց Եկեղեցու ամենահին ու պատմական վիճակներից մէկը՝ Արցախի թեմը: Թեմի անցած ճանապարհը հարուստ էր ամէն տեսակի - նաեւ ողբերգական - իրադարձութիւններով, սակայն պատմական այս նոր փուլը, թերեւս, ամենաողբերգական հանգրուանը դարձաւ նրա համար:

Արցախի բռնակցման հարցերը լուծելուց յետոյ Ադրբեջանի համար պակաս կարեւոր չէր նաեւ իր զաւթողական ծրագրերի համար հաւանական վտանգ ներկայացնող անձանց ու հաստատութիւնների չէզոքացումն ու ոչնչացումը: Եւ բնական է, որ սանձազերծուած բռնութիւնների կիզակէտում պիտի յայտնուէր Հայ Առաքելական Եկեղեցին, որը դարերի ընթացքում հայ ժողովրդի համար ամենաճանր պահերին անգամ նեցուկ էր կանգնել իր հոգեւոր հօտին, պետականութեան կորստի պայմաններում ստանձնել առաջնորդի ողջ պատասխանատուութիւնը, դարձել համահայկական շահերի պաշտպանն ու ազգային արժէքների պահապանը, բոլոր իրականացրել ազգապահպան առաքելութիւն: Այդ համապատկերում ադրբեջանական իշխանութիւնների համար իրենց ազդեցութեան ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարուող եւ ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ աւանդոյթներ ունեցող Արցախի թեմը, թերեւս, վառօդի տակառի հետ էր նոյնականացւում, որի հզօր պայթիւնը մի օր կարող էր յօդս ցնդեցնել իրենց հայավնաս «ձեռքբերումներն» ու հեռահար ծրագրերը: Իսկ այն փաստը, որ ողջ Խորհրդային Միութեան տարածքում բառացիօրէն պատերազմ էր յայտարարուած կրօնի ու եկեղեցու դէմ, մոլեգնում էր մարտնչող անաստուածութեան քարոզչութիւնը, բռնագրաւում էին եկեղեցական գոյքն ու արժէքները, կողոպտւում, փակւում կամ այլ հաստատութիւնների էին վերածւում եկեղեցիները,

բռնութիւնների էին ենթարկւում կամ սպանւում հոգեւորականները, կարճ ասած՝ ուղղակիօրէն ոչնչացման եզրին էր հասցւում եկեղեցին[14], - պարզապէս անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականութեան համար: Ի հետեւանս դրա թեմի վիճակը կրկնակի էր վատթարանում, քանզի եթէ «*Խորհրդային Հայաստանում եկեղեցին դիտւում էր որպէս նոր կարգերին ընդդիմադիր ուժ, ապա Ղարաբաղում այն համարւում էր նաեւ հակաադրբեջանական շարժումը ոգեշնչող ու կազմակերպող գործօն: Ուստի եւ, պատահական չէր, որ 1920ի ամռանը ձերբակալուած մի խումբ հայրենասէրների շարքում եղան նաեւ հոգեւորականներ: Արմենակ Ղարագէօզեանի հրամանով ձերբակալուեցին Տէր Մեսրոպ Շահնազարեանը, Դալի Մահրասան .... եւ ուրիշներ, որոնց տարան Թարթառ, յանձնեցին թուրք դահիճներին, որոնք էլ բոլորին կացնահարեցին*»[15]:

Ժամանակակիցներից Աբրամ Կիսիբեկեանն իր յուշերում ներկայացնում է 1920ականներին մեկնարկած բռնութիւններն ու հաշուեյարդարները. «*Ղարաբաղի աշխատաւորութեան դրութիւնը գնալով սոսկալի էր դառնում: .... նոր կառավարութեան գործիչների ճնշումներն ու հալածանքներն անասելի չափերի էին հասել մանաւանդ Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ժամանակ աչքի ընկած մարդկանց նկատմամբ: Նրանցից շատերը բանտարկուեցին ու տասնեակներով գնդակահարուեցին: .... Բանտերը նետուեց Ղարաբաղի ինտելիգենցիայի մեծագոյն մասը*»[16]: Այնուհետեւ, նկարագրելով իր ձերբակալութեանը հետեւած տառապանքները, երբ նրան ու հարիւրաւոր բախտակիցների Արցախի ու Ադրբեջանի բանտերով մէկ ամիսներով քարշ էին տալիս, ենթարկում զանազան ստորացումների, տանջանքների, ոմանց էլ գնդակահարում ճանապարհին[17], Շուշիի բանտից Գանձակ տարուելու ճանապարհի դրուագներից մէկում յիշատակում է. «*Մեզ հետ էր նաեւ Ամարասու Վանքի վանահայրը՝ Սուրէն աբեղայ Թորոսեանը՝ գլխին դրած մի ծղոտէ լայնեզր գլխարկ: Թուրք կալանաւորները վերցնում էին նրա գլխարկը, «մահրասա» գոռալով, շպրտում դէպի առաջ, իսկ գլխարկը քամու հոսանքով թռչում էր բաւական հեռու, եւ երբ խեղճ աբեղան հասնում էր*

գլխարկին, մի ուրիշ թուրք էր վերցնում ու նորից շպրտում, եւ այսպէս շարունակ՝ այսպէս ծաղրի առարկայ դարձնելով նրան[18]»: Չնայած որ խիստ աղքատիկ են տեղեկութիւնները Ամարասի վանահօր բանտարկութեան շրջանի կամ էլ թէ ինչ հրաշքով է կարողացել ազատուել[19], այդուհանդերձ պատկերն այնքան խօսուն է, որ մնում է ենթադրութիւններ անել, որ եթէ անգամ թուրք կալանաւորներն էին նման ստորացումների ենթարկում հայ հոգեւորականին, ինչե՛ր կարելի էր ակնկալել նրանց բանտապահներից ու դահիճներից…

Արցախի թեմի ծայրայեղ անմխիթար վիճակն առաւել ծանրացնում էր նաեւ այն փաստը, որ այն Խորհրդային Ադրբեջանի գերիշխանութեան տակ էր անցել փաստացիօրէն գլխատուած վիճակում. թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տէր Գրիգորեանը եւ թեմական վարչութեան անդամների մեծ մասը դաժանաբար սպանուել էին 1920ի մարտեան սոսկալի ողբերգութեան ժամանակ, երբ ադրբեջանական իշխանութիւնների սանձազերծած կովկասեան թաթարների ամբոխը սպանդի էր ենթարկել Շուշիի բազմահազար հայ բնակչութեանը եւ աւերակների վերածել հայկական թաղամասերը[20]: Երկու տարի շարունակ թեմը զրկուած էր առաջնորդից եւ ղեկավարւում էր առաջնորդական փոխանորդների՝ Բիւզանդ ծայրագոյն վարդապետի, այնուհետեւ Սուրէն աբեղայի կողմից, եւ այդ ընթացքում հասել էր քայքայման եզրին[21]: Մայր Աթոռը Վահան սրբազանի սպանութիւնից միայն երկու տարի անց կարողացաւ առաջնորդ նշանակել. 1922 Մարտի 27ին Գէորգ Ե.ի հայրապետական տնօրինութեամբ Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը կարգուեց Արցախի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Վարանդայի Աւետարանոց Գիւղ)[22]: Պատկերը, որին ականատես է լինում նորանշանակ առաջնորդը, խիստ հեռու էր մխիթարական լինելուց. «*պաշտօնավարութեան հենց սկզբից թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի՝ Էջմիածին ուղարկած զեկուցագրերից եւ նամակներից պարզւում է, որ Արցախի թեմը լրիւ կազմալուծուել էր խորհրդային իշխանութեան կողմից: Ըստ նրա հաղորդումների՝ 1922 թուականին թեմի մէջ մտնող 159 բնակավայրերից 27ը չունէին եկեղեցի, քահանաներ ունէին միայն 39ը: Այդ ժամանակ*

թեմն ընդգրկող բնակավայրերն ունէին 19004 ընտանիք՝ 109526 բնակիչներով»[23]*:* Չնայած խորհրդային իշխանութիւնների կողմից տարուող համատարած հակակրօնական պայքարին եւ եկեղեցականների ու հաւատացեալների նկատմամբ ահաբեկչական քաղաքականութեանը՝ Արցախի բազմաթիւ բնակավայրերից պարբերաբար համախոսական վճիռներ ու նամակ-խնդրագրեր էին ուղղուել Մայր Աթոռին ու թեմական իշխանութեանը՝ իրենց համար հոգեւոր հովիւներ ձեռնադրելու եւ նշանակելու[24], սակայն դրանք *«խորհրդային իշխանութիւնների ջանքերով մնում էին անպատասխան, կամ հակառակ արդիւնքն էին ունենում»*[25]:

Դրան զուգահեռ նրանք հետեւողականօրէն շարունակում էին թեմի քայքայմանն ուղղուած քայլերը: Արցախի թեմի հոգեւոր խորհրդի անդամ, Վարարակն աւանի նախկին հոգեւոր հովիւ Զաւէն քահանայ Ադամեանը Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանին 1923 Օգոստոսի 19ին գրած զեկուցագրով յայտնում է, որ գիւղերի ժողովուրդը բարեպաշտութիւնից հիասթափուած է, քահանաները գտնւում են տնտեսական սուղ պայմաններում եւ առանց բացառութեան բոլորն էլ պատրաստ են հրաժարուել իրենց հոգեւոր կարգից եւ այլ գործով զբաղուել՝ մի կերպ գոյութիւն քարշ տալու համար, իսկ որոշ գիւղերի քահանաներ արդէն իսկ կարգաթող էին եղել: Զաւէն քահանան, իր զեկուցագիրն աւարտելով, ահազանգում է. «*Ղարաբաղի թեմը այսպիսի կրիտիկական հանգամանքներում գտնուելով հանդերձ, որեւէ կերպ հնարաւոր չէ առաջնորդարանի ծախքերը հոգալ: Ուստի իմ համեստ կարծիքն է դիմել Նորին Վեհափառութեան եւ դիւանի խորհրդին զբաղմունքի նիւթ դարձնելով Ղարաբաղի թեմը եւ այդ թեմի առաջնորդարանի ապրուստի հարցը*»[26]:

Նոյն Զաւէն քահանան Օգոստոսի 30ին մէկ այլ զեկուցագրով յայտնում է, որ Ստեփանակերտը Ղարաբաղի կենտրոն յայտարարելուց յետոյ իր նախկին ծխականներից Օգոստոսի 13ին հրաւէր էր ստացել Աստուածածնի Վերափոխման տօնն իրենց մօտ նշելու: Յաջորդ օրը շտապում է Ստեփանակերտ եւ իր նախկին համայնքի հետ տեղի Ս. Գէորգ եկեղեցում հանդիսաւորապէս կատարում տօնական արարողութիւնները: Այնուհետեւ յայտարարում է, որ պատրաստւում է միքանի օրից

վերադառնալ իր նախկին ծուխը, իսկ դրանից յետոյ երեւի Ղարաբաղի նոր կենտրոն կը տեղափոխուի նաեւ թեմի առաջնորդարանն ու թեմական խորհուրդը: Սակայն Ստեփանակերտից հեռանալուց միքանի օր անց կրկին գրութիւն է ստանում իր ծխականներից, որոնք յայտնում են, որ կառավարութիւնը գրաւել է եկեղեցին ու եկեղեցապատկան սենեակները. «*Այնուհետեւ ես գնում եմ սփռուգելու եւ գտնում եմ իմ սենեակները դարձրած արհեստանոց, իսկ եկեղեցին էլ պահեստատեղի, բայց վերջերս լսելով եկեղեցին ուզում են վերածել ժողովարանի: Ուստի այս առթիւ յայտնում եմ Ձերդ Սրբազնութեան ի գիտութիւն եւ խնդրում եմ բողոքել ուր հարկաւոր է*»[27]: Երեւի միամտութիւն կը լինի տեղի ունեցածը պատահականութիւն համարելը: ԼՂԻՄ կազմաւորելով՝ Ադրբեջանի իշխանութիւնները նորաստեղծ մարզի կենտրոն յայտարարեցին ոչ թէ Արցախի պատմական մայրաքաղաք Շուշին, այլ անշուք Վարարակն աւանը (ինչպէս թուրքերն էին անուանում՝ Խանքենդին), որը յայտնի կոմունիստ Ստեփան Շահումեանի անունով դարձաւ Ստեփանակերտ: Բնականաբար նման քայլի դրդապատճառը ճաշակի թելադրանքը չէր. «*Ադրբեջանցի ազգայնամոլները համոզուած էին, որ եթէ Շուշին դառնար մարզի կենտրոն, ապա երկրամասի հայ բնակչութիւնը, մանաւանդ նախկին շուշեցիները, կը սկսէին վերադառնալ այնտեղ եւ [Շուշին] կրկին կը դառնար Արցախ աշխարհի տնտեսութեան, հոգեւոր եւ վարչական կենտրոնը*»[28]: Եւ ահա յանկարծ հոգեւոր նոր կենտրոն դառնալու յայտ կարող էր ներկայացնել Ստեփանակերտը, ինչը բացարձակապէս չէր բխում Ադրբեջանի հեռահար նպատակներից: Ուստի միանգամայն հասկանալի է կառավարութեան կողմից նման կայծակնային արագութեամբ տրուած արձագանգի նպատակը:

Թեմից ստացուող տագնապալի լուրերը խոր վրդովմունք են պատճառում Անանիա սրբազանին, եւ նա 1924 Մարտի 12ին նամակ է ուղարկում ԼՂԻՄ Գործկոմի նախագահին՝ իր բողոքը յայտնելով եկեղեցու համար գանձուող նուիրատուութիւններն արգելելու, եկեղեցիների ունեցուածքը յափշտակելու, եկեղեցիները ժողովատեղիների կամ թատերական բեմերի վերածելու, քահանաների վրայ դրուած ծանր տուրքերի,

եկեղեցին ծաղրուծանակի ենթարկելու դէպքերի վերաբերեալ[29]: Սակայն թեմակալ առաջնորդի նամակին անգամ պատասխան չի տրւում:

1924 Մայիսի 1ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած գրութեամբ Անանիա սրբազանը ներկայացնում է այն ապօրինութիւնները, որոնց ենթարկւում է թեմը. Ստեփանակերտի եկեղեցուց ու քահանայի սենեակներից բացի բռնագրաւուել էին նաեւ մի շարք եկեղեցիների վերանորոգման համար նախատեսուած շինանիւթերը: Արգելուել էր թեմի համար կամաւոր նուիրատուութիւնների հաւաքումը: Կոմունիստներն իրենց հակաքրիստոնէական ելոյթներն արդէն կատարում էին եկեղեցու խորանից[30]:

Իհարկէ, Հայ Եկեղեցու՝ Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնուող միւս թեմերն էլ, մեղմ ասած, բարուօք պայմաններում չէին գտնւում: Սակայն այն փաստը, որ Արցախի թեմում առաւել ծայրաստիճան ծանր իրավիճակ էր տիրում, փաստւում է նաեւ Գանձակի հայոց հոգեւոր առաջնորդ Լեւոն եպիսկոպոսի՝ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին 1924 Փետրուարի 7ին գրուած զեկուցագրից, որտեղ, ներկայացնելով ադրբեջանական իշխանութիւնների բռնաճնշումներն ու կամայականութիւնները թեմի ու անձամբ իր նկատմամբ, Լեւոն սրբազանն աւելացնում է. «*Այս դրութիւնը աւելի տգեղ պատկերով կայ Ինքնավար Լեռնային Ղարաբաղում եւս …. Ընդհանրապէս Ղարաբաղից եկողները անհաւատալի գոյներով նկարագրում են տեղի եկեղեցական-հոգեւորական կեանքը, որի համեմատութեամբ երջանկութիւն համարելով այստեղի պայմանները*»[31]:

Իվերջոյ, պատկառելի տարիքում գտնուող Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը, այլեւս անկարող լինելով աշխատել ստեղծուած անտանելի ծանր պայմաններում, 1924 Մայիսի 27ին հրաժարական է ներկայացնում Մայր Աթոռին. «*խնդրում եմ յարգանօք բաւ համարել երկամեայ ծառայութիւնս, արձակել ներկայ առաջնորդական պաշտօնից, իմ մնացեալ օրերս անցուցանել Մայր Աթոռոյ հովանու տակ. ըստ որում դժուար է այլեւս եօթանասունամեայ ծերունոյս այսպիսի պատասխանատու ծանր պաշտօն վարել*»[32]: Գէորգ Ե.

հայրապետը յարգում է Անանիա սրբազանի խնդրանքը եւ 1924 Յունիսի 3ի գրութեամբ նրան ազատում առաջնորդական պարտականութիւններից[33]:

Արցախի թեմը դարձեալ մնում է առանց առաջնորդի: Առիթից օգտուելով՝ տեղական իշխանութիւններն աւելի սանձարձակ են դառնում իրենց գործողութիւններում. «*տեղական կոմունիստները, հակառակ պետական ընդհանուր դեկրէտի՝ խղճի ազատութեան եւ կրօնական արարողութիւնները անարգել կատարելու մասին, դիմում են բռնի միջոցի եւ արգելքներ են յարուցանում, իսկ ժողովուրդը տգիտաբար կարծելով թէ դա պետական օրէնք է, չի համարձակւում բողոքել բարձր իշխանութեան, ինչպէս եւ իրենք քահանաները, չունենալով պաշտպան գլուխ-առաջնորդ, մնացել են տարակուսութեան մէջ*»՝ Արցախում տիրող իրավիճակի մասին 1924 Նոյեմբերի 3ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին է հաղորդում Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթէոս սրբազանը՝ խնդրելով արագացնել թեմի նոր առաջնորդի նշանակումը[34]:

ՎՐԹԱՆԷՍ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

1925ին Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս ծայրագոյն վարդապետ Յակոբեանը նշանակւում է Արցախի թեմի առաջնորդ եւ Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր (նստավայրը՝ Գանձասար): Նշանակման վկայականը նրան տրւում է Փետրուարի 26ին, իսկ հայրապետական կոնդակը՝ Մարտի 5ին[35]: Նորանշանակ առաջնորդն Արցախ է հասնում Ապրիլի 7ին եւ գտնում թեմը սոսկալի վիճակում. այնտեղ «*ոչ միայն որեւէ հոգեւոր ներկայացուցչութիւն գոյութիւն չունէր, այլեւ ամբողջ շրջաններ, քահանայք եւ ժողովուրդ դադարել էին եկեղեցական ծէս եւ արարողութիւն կատարելուց, նոյնիսկ հայի համար ամենանուիրական փօներին՝ Ծննդեան եւ Զատկին*»[36]: «Թեմումս կան 162 հայ գիւղեր իւր 136 եկեղեցիներով, վերջիններս քարաշէն վայելուչ են, բայց դռները բաց, անտէր»՝ Օգոստոսի 13ին Գէորգ Ե.ին գրում է Վրթանէս ծայրագոյն վարդապետը: Երկու տարի առաջ եղած 88 քահանաներից հրապարակայնօրէն կարգաթող էին եղել 32ը, վախճանուել էին 4ը, ծերութեան կամ

կուրութեան պատճառով չէին քահանայագործում 16ը, մամուլով չէին յայտարարել, բայց փաստացի չէին քահանայագործում 9ը քահանաներ. «*մնացած 28 քահանաները թեմի ընդարձակութեան համեմատ այնքան քիչ են, որ կարելի է ասել, որ Արցախի թեմն առանց քահանաների է*»: Տեղական իշխանութիւնները բռնագրաւել էին Ստեփանակերտի, Մուշկապատի, Սխտորաշէնի, Հաղորտիի, Ղուշչիշէնի, Խնուշինակի, Նինգիի, Կուսապատի եւ այլ բնակավայրերի եկեղեցիները, ինչպէս նաեւ Ամարասի ու Երից Մանկանց վանքերի եւ Աւետարանոցի եկեղեցու սրբութիւններն ու հնութիւնները[37]:

Չվհատուելով դառն իրականութիւնից՝ Վրթանէս ծայրագոյն վարդապետը եռանդուն գործունէութիւն է սկսում թեմը վերակենդանացնելու համար: Վերոնշեալ զեկուցագրից յայտնի է դառնում, որ նա չորս ամսուայ ընթացքում տարբեր կերպերով իր շուրջն է համախմբել մի շարք քահանաների, փորձել է օրինապահ յարաբերութիւններ ձեւաւորել իշխանութիւնների հետ, ստեղծել թեմական հոգեւոր ատեան, թեմական խորհուրդ եւ 13 գործակալութիւն, հաշուառել բոլոր վանքերի գոյքը, վանահօր պաշտօնակատար նշանակել Ամարասի Վանքում, շրջել Խաչէնի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գիւղերը եւ քարոզել ու հոգեւոր միջոցառումներ կազմակերպել: Նախատեսում էր նաեւ հրաւիրել թեմական պատգամաւորական ժողով: «*Կարելի է ասել, որ ժողովուրդը ներկայում մասամբ կազմակերպուած է իւր եկեղեցու շուրջը*»[38]:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գոհունակութեամբ է ընդունում Արցախի թեմի առաջնորդի գործունէութիւնը եւ յանձնարարում «*աշխատել ամէն կերպ փակուած եկեղեցիները վերաբանալ եւ թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել եւ յորդորել հոգեշունչ քարոզներով ու կապել եկեղեցու եւ նրա անբաժան նախնաւանդ ծէսերի եւ սովորութիւնների հետ*»[39]:

Վրթանէս ծայրագոյն վարդապետի նշանակումը Արցախի թեմի առաջնորդի պաշտօնում թէկուզ ժամանակաւոր, այդուհանդերձ փրկութիւն էր թեմի համար: Մեծ գնահատանքի ու դրուատանքի են արժանի նրա հերոսական, գերմարդկային ճիգերն ընդդէմ թեմը դէպի անդունդ գլորող խորհրդային մեքենայի, քանի որ նրա անձնազոհ գործունէութեան շնորհիւ

Արցախի թեմի գոյութիւնը երկարեց եւս միքանի տարիներով: 1928 Մարտի 1ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարեանին գրած նամակում, Արցախի թեմի առաջնորդն արձանագրում է որ իր առաջնորդութեան շրջանում «*շատ եկեղեցիներ վերաբացուեցին եւ ամէն անգամ թեմ շրջագայելիս, քարոզչութեան հետեւանքով, շատ քահանաներ մեզ մեղայականներ ներկայացրին*»[40]: «*Շնորհիւ իւր եկեղեցական, քարոզչական, վարչական ունակութեան եւ անդուլ աշխատանքի, թեմումս վերականգնուեց աստուածապաշտական կարգը, շրջելով եւ քարոզելով բոլոր գիւղերը նշանակեց թեմական խորհուրդ, գործակալներ, հոգաբարձուներ, որով թեմիս հոգեւոր գործերն սկսան իրենց բնականոն հունի մէջ մտնել*»[41]՝ դեռեւս 1925 Յունիսի 16ին Գէորգ Ե.ին գրում են Արցախի թեմական խորհրդի անդամները՝ խնդրելով Վրթանէս ծայրագոյն վարդապետին եպիսկոպոս ձեռնադրել: Ամենայն Հայոց Կաթողիկոսը յարգում է այդ խնդրանքն ու Արցախի թեմի առաջնորդի կատարած աշխատանքը եւ 1928ին նրան եպիսկոպոս ձեռնադրում: Եպիսկոպոսական աստիճանը թեմակալ առաջնորդին հնարաւորութիւն է տալիս աւելացնել թեմի քահանաների թիւը ոչ միայն մեղայագիր ներկայացրած տասնեակ քահանաների կրկին հոգեւոր ծառայութեան ընդունելով, այլ նաեւ անձամբ քահանաներ ձեռնադրելով (օրինակ՝ 1928 Դեկտեմբերի 9ին Վանք Գիւղի քահանայ է ձեռնադրում Դաւիթ Ղալաբեկեանցին[42]):

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած բազմաթիւ գրութիւնները վկայում են, որ իր պաշտօնավարման ողջ ընթացքում Արցախի թեմի առաջնորդը գտնւում էր նիւթապէս ծայրաստիճան ծանր կացութեան մէջ, յաճախ բառացիօրէն սովի մատնուած վիճակում՝ ստիպուած լինելով անընդհատ օգնութիւն խնդրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպէսզի կարողանար պահպանել ինչպէս իր, այնպէս էլ թեմի գոյութիւնը: Այդուհանդերձ, չնայած նրա նամակներում երբեմն հանդիպող յուսահատ արատայայտութիւնների[43], նա շարունակեց մինչեւ վերջին պահն էլ մեծագոյն պատասխանատուութեամբ կրել իր լուծը. «*մէնակ, զուրկ ընկերակցութիւնից, կուլտուրական բարիքներից, մի սարի*

գլխին, անտառներով շրջապատուած, դորա հետ էլ նիւթական դժուարին կացութիւն՝ սակայն իմ ներքին աշխարհում զգալով, գիտակցելով թէ պարտ եմ կատարում, եղել եմ յոյսով, տոկուն եւ պարտքի գիտակցութեան եւ հնարաւորութեան սահմաններում կատարման մէջ մխիթարութիւն որոնող, ջանք չխնայելով օգտակար լինել շրջապատիս համար, միւսները համարելով երկրորդական, ինչ էլ որ լինի»[44], - գրում է նա 1928ին:

Ահաւոր էր նաեւ թեմի քահանաների վիճակը, որոնց տնտեսական սուղ պայմանների մասին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին պատկերացում տալու համար թեմակալ առաջնորդը երկու օրինակ է բերում. «*Մոխրաթաղի ծխափէր Տ. Պետրոս քահանան 7 ր. 50 կ. քահանայական հարկը չկարողանալով վճարել, Ջրաբերդից ոտքով Բագու է գնում եւ մուրողութեամբ է այդ գումարը ձեռք բերում: Առաջածորի ծխափէր Տ. Յովհաննէսը ունեւոր թուրք գիւղերում մշակութեամբ է իւր սեւ հացը վաստակում*»[45]: Ըստ արժանւոյն պէտք է գնահատել այն փաստը, որ Մայր Աթոռը, նոյնպէս գտնուելով նիւթապէս ոչ-բարուօք վիճակում եւ գոյատեւելով թեմերից ստացուած նպաստներով[46], շարունակում էր իր խիստ սուղ միջոցներից օգնութիւն յատկացնել Արցախի թեմին, առանց ինչի թեմի գոյութիւնն աւելի կարճ կը տեւէր:

Սակայն Արցախի թեմի փակման հարցը Խորհրդային Ադրբեջանի համար շարունակում էր մնալ օրակարգային հարց, որի ի կատար ածումն ընդամէնը ժամանակի խնդիր էր: Արմենակ Ղարագէօզեանի գլխաւորութեամբ գործող տեղական իշխանութիւնների օգնութեամբ նրանք քայլ առ քայլ առաջ էին տանում թեմը խեղդամահ անելու եւ իսպառ վերացնելու նախորդ տարիներին սկսած իրենց քաղաքականութիւնը: 1925 Սեպտեմբերի 5ին Արցախի թեմի առաջնորդը հրաւիրել էր թեմական պատգամաւորական ընդհանուր ժողով՝ մասնակցութեամբ 28 քահանաների ու 8-10 աշխարհականների: Պիտի կազմուէր թեմական բիւջէ, մշակուէր եկամուտների գանձման ձեւ եւ հիմնուէր քահանայական ֆոնդ: «*Պալիտբիւրօն ժողովականներին ցրեց, ասելով, թէ նախ մեզ պիտի յայտնէին այս ժողովի մասին եւ երկրորդ մեզնից ներկայացուցիչ պիտի լինի այդ ժողովում: Եկեղեցու ներքին կազմակերպչական գործերին*

միջամտելու, ինչպէս եւ մեր հոգեւորականներիս փոխյարաբերութեանց մասին ազդեցութիւններ ցուցաբերելու առթիւ բողոքել եմ ժողկոմխորհին»[47՝] կատարուածի մասին Սեպտեմբերի 19ին Գէորգ Ե.ին զեկուցում է Արցախի թեմի առաջնորդը: Նոյնի մասին Հոկեմբերի 13ին տեղեկացնում է նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին՝ աւելացնելով, որ իրեն անյայտ պատճառներով ժողովականներին մէկ առ մէկ հարցաքննութեան են ենթարկել, այնուհետեւ արձանագրում, որ տեղական իշխանութիւնների կատարածի հետեւանքով թեմը զրկուեց եկամտի հնարաւորութիւնից[48]:

Արցախի թեմում տեղական իշխանութիւնների կողմից իրականացուող կամայականութիւններին ու հակաեկեղեցական գործողութիւններին արձագանգում է նաեւ Մայր Աթոռը. 1926 Յուլիսի 30ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Գիւտ եպիսկոպոս Տէր Ղազարեանը նամակ է ուղղում Լեռնային Ղարաբաղի Ժողկոմխորհի նախագահ Ղարագէօզեանին՝ վերջինիս ուշադրութիւնը հրաւիրելով Արցախի թեմի առաջնորդի կողմից նրան ուղարկուած անպատասխան բողոքների վրայ, որոնցից երեւում է, որ Արցախում մի շարք գիւղական եկեղեցինե-ր «*փակելուց, թափրոնի եւ ակումբի վերածելուց եւ այդպիսով գիւղական հաւատացեալ համայնքները կրօնական մխիթարութիւնից զրկելուց յետոյ, գիւղական իշխանութեան ներ-կայացուցիչները եւ կուսակցական անփորձ գործիչները թոյլ են տալիս իրենց գիւղերում վերին աստիճանի տգեղ ու վրդովեցուցիչ ձեւերով եւ անվայել արտայայտութիւններով վիրաւորել գիւղացի հաւատացեալների կրօնական սրբութիւններն ու զգացումները*»: Գիւտ եպիսկոպոսը, Ղարագէօզեանին յիշեցնելով խորհրդային հիմնական օրէնքով յայտարարուած խղճի եւ կրօնի ազատութեան պահանջի մասին, նշում է. «հենց Ձեզ ուղղած Արցախի առաջնորդի գրութեան մէջ յիշատակուած փաստերը ցոյց են տալիս, որ Ինքնավար Ղարաբաղի որոշ գիւղերում խղճի ու կրօնի ազատութեան գեղեցիկ սկզբունքները իրականապէս սահմանափակման են ենթարկուած»: Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամը խնդրում է. «*Ա. վերաբանալ տալ փակուած ե-կեղեցիները եւ յանձնել հաւատացեալ համայանքներին, Բ. պա-տասխանութեան ենթարկել .... յանցաւորներին եւ Գ. յստակ կար-*

գադրութիւն անել, որպէսզի հաւատացեալներին եւ քահանաներին այլեւս կրօնական վիրաւորանքներ չհասցնեն գիւղական վարչական անձերը»[49]: Գիւտ սրբազանի նամակին Սեպտեմբերի 7ին հետեւում է ԼՂԻՄ Ժողկոմխորհի պատասխանը. «*գիւղական հաստատութիւնների որոշմամբ փակուած եկեղեցիների բացման առիթով մինչեւ այժմ ոչ մի միջնորդութիւն չի ստացուած Ի. Լ. Ղարաբաղի Ժողկոմխորհի կողմից: Ինչ վերաբերում է խղճի եւ պաշտամունքի ազատութեան պաշտպանութեան առթիւ գոյութիւն ունեցող դեկրէտի՝ միքանի պաշտօնական անձանց կողմից իբր թէ տեղի ունեցած խախտման մասին Ձեր յայտարարութեանը, ժողկոմխորհի քարտուղարութիւնը յայտնում է, որ ամէն մի փուժող իրաւունք ունի անհատապէս դիմելու համապատասխան ժողդատարան*»[50]: Գրեթէ չքօղարկուած կեղծիքով ու լկտիութեամբ շաղախուած այդ պատասխանից յստակ զգացւում է, որ անիմաստ է իշխանութեան վերին օղակներից օրինականութեան շրջանակներում գործելու եւ հակաեկեղեցական հալածանքները դադարեցնելու հարցում որեւէ ակնկալիք ունենալը: Եւ դա բնական է, քանի որ «*այդ հալածանքները ոչ թէ առանձին անձանց ապօրինութիւնների, այլ խորհրդային իշխանութեան հակաեկեղեցական քաղաքականութեան եւ դրանից օգտուող Բաքուի վարչակարգի յանցաւոր գործողութիւնների արդիւնք էին*»[51]:

Յետագայ տարիներին էլ իշխանութիւնները շարունակում են իրենց եկեղեցահալած քաղաքականութիւնը, ի հետեւանս որի շարունակւում են թեմից խլուել նորանոր եկեղեցիներ[52], եւ ստեղծուած սարսափելի պայմաններում աւելանում է հարկադրաբար հրաժարական ներկայացրած քահանաների թիւը[53]: Ինքը՝ թեմակալ առաջնորդը, գտնւում էր իշխանութիւնների խիստ հսկողութեան տակ եւ պարտաւոր էր իր բոլոր կատարածների եւ յետագայ անելիքների մասին մանրամասն զեկուցել նրանց եւ ստանալ նրանց հաւանութիւնը: Ասուածի վկայութիւնն է 1927 Մարտի 16ին ԼՂԻՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղարկած զեկուցագիրը, որտեղ նա, ներկայացնելով իր կատարած աշխատանքներն ու յետագայ անելիքները, նշում է. «*թեմիս եկեղեցական-կրօնական այլեւայլ գործեր՝ գործակալական, քահանայական, թեմական ժողով կամ խորհրդակցութիւն*

չեն լինելու առանց պատշաճ իշխանութեան կանխօրօք թոյլտուութեան, որին պիտի ներկայացուի եւ օրակարգի խնդիրները: .... եթէ վերոյիշեալ կէտերից որեւէ մէկը չպիտի կատարեմ, ինձ անյայտ պատճառով, խնդրում եմ բարի լինէք ինձ յայտնել»[54]: Ամէն ինչ արւում էր թեմի առաջնորդին զանազան խոչընդոտների առաջ կանգնեցնելու եւ նուաստացնելու համար. «*Տեղական մարմինների՝ ինձ հասցրած (երբ թեմ եմ դուրս գալիս, կամ նորանից յետոյ) վիրաւորանքները եւ նեղութիւնները անասելի են*»[55՝] Գերագոյն Հոգեւոր Խորհրդին դառնացած յայտնում է նա իր գրութիւններից մէկում:

Կոմունիստների հակաեկեղեցական հերթական քայլերից է լինում այն, որ արգելում են եկեղեցական ծիսակատարութիւնները, յատկապէս մկրտութիւնը. յատուկ եւ հրապարակային ձեւով կազմակերպում են «հասարակական կարմիր կնունք»[56]:

1920ԱԿԱՆՆԵՐԻ ԱԽԱՐՏԸ

1929-1930ին ԽՍՀՄով մէկ առաւել լայն թափ ստացաւ կոլեկտիւացման շարժումը, որը «*յարմար պատրուակ ծառայեց հոգեւորականութեան նկատմամբ բացայայտ հալածանքներ սկսելու համար*»[57]: Համատարած բնոյթ ստացաւ «*եկեղեցիների գրաւումը եւ դրանք կոլտնտեսութիւնների կարիքներին ծառայեցնելը, մանաւանդ պահեստներ եւ շտեմարաններ դարձնելը*»[58]: Եկեղեցին ոչնչացնելու համար քահանաների վրայ հսկայական եկամտահարկեր դրուեցին՝ քաջ գիտակցելով, որ «*ոչ մի քահանայ չէր դիմանայ հարկերին, որովհետեւ նրա ընտանիքը պարզապէս կը մնար առանց հացի*»[59]: Ստալինեան բռնապետութեան մեքենան սկսեց նոր թափ հաւաքել՝ դուռ բացելով 30ականների սոսկալի մղձաւանջին:

Ադրբեջանի իշխանութիւնները, որոնց համար, ինչպէս արդէն նշել ենք, կանաչ լոյս էր վառել ԽՍՀՄ կործանարար քաղաքականութիւնն ընդդէմ եկեղեցու, պատեհ առիթը չկորցրեցին եւ արագօրէն անցան Արցախի թեմի փակման եզրափակիչ փուլի գործողութիւններին:

1929 Փետրուարի 11ին Վրթանէս եպիսկոպոսը Գերագոյն Հոգեւոր Խորհրդին յայտնում է, որ եկեղեցիների վերաբացման եւ

քահանաներին առնչուող մի շարք խնդիրներով նոյն թուականի Յունուարի 20ից մինչեւ Փետրուարի 7ը[60] գտնուել է Ստեփանակերտում[61]: Կարելի է ենթադրել, որ թեմի առաջնորդը փորձել էր մարզային իշխանութիւնների հետ բանակցելով՝ մեղմացնել հակաեկեղեցական քաղաքականութիւնը, սակայն ապարդիւն. «*Նա Գանձասար վերադարձաւ յուսահատուած, որովհետեւ հասկացել էր, որ Ադրբեջանի պարագլուխների պահանջով ԼՂԻՄի ղեկավարները բացայայտօրէն որոշել էին փակել Արցախի թեմը*»[62]:

Նոյն այդ զեկուցագրում Վրթանէս եպիսկոպոսը ներկայացնում է Արցախի թեմի վանքերի, եկեղեցիների ու քահանաների կացութեան տագնապալի պատկերը. 18 վանքերից խնամքով պահւում են միայն 7ը՝ Գանձասար, Երից Մանկանց, Ամարասի, Ս. Յակոբայ, Ինն Մասանց եւ Ս. Ղեւոնդեանց վանքերը (7րդը նշուած չէ), իսկ մնացածն անտէր վիճակում են. «*դժբախտաբար հնարաւորութիւններից միանգամայն զուրկ ենք այդ 11 վանքերը իսպառ կորստից փրկելու համար որեւէ բան անելու*»: 164 գիւղերի 112 եկեղեցիներից 79ը իշխանութիւններն արդէն բռնագրաւել էին եւ վեր ածել խրճիթ ընթերցարանի, դպրոցի ու շտեմարանի, 6 եկեղեցի կիսաւեր վիճակում էին, իսկ մնացած 27ն էլ փակման վտանգի տակ էին:

Պակաս անմխիթար տեսք չէր ներկայացնում նաեւ թեմի քահանաների ընդհանուր պատկերը. եթէ 1928ի սկզբին թեմում գործում էին 91 քահանաներ, ապա 1929 Փետրուարի 1ի դրութեամբ մնացել էին 22ը, որոնք էլ գտնւում էին ծայրաստիճան յուսահատ վիճակում. 3 քահանայ վախճանուել էր, 4ը՝ հեռացել այլ թեմ, իսկ մնացեալ 62ն ուղղակի հարկադրուած թողել էին իրենց քահանայական կարգը:

Բռնաճնշումների եւ ահաբեկումների էին ենթարկւում նաեւ հասարակ հաւատացեալները, որոնք բազմաթիւ ստորագրութիւններով դիմումներ էին ներկայացնում իրենց համայնքների եկեղեցիների վերաբացման խնդրանքով, սակայն իշխանութիւնների ներկայութեամբ կատարուած քուէարկութիւնների ժամանակ պարզապէս վախենում էին կողմ քուէարկել յօգուտ իրենց խնդրանքի կատարման:

Արցախի թեմի առաջնորդը դառնութեամբ ամփոփում է. «*Չնայած անակնկալներով լի մեր կեանքի, մեր կոչման եւ պատրաստութեանց խորը գիտակցութեամբ՝ մեր կողմից ոչինչ չի պակասել եւ խնայել անելու յօգուտ եկեղեցւոյ պահպանութեան եւ քահանայոց յուսադրութեան համար, բայց եւ այնպէս ընդհանուր պատկերը վերոգրեալն է, որ հետեւանք է ընդհանուր կացութեան*»[63]:

Խորհրդային իշխանութիւնների կողմից ինչպէս Արցախում, այնպէս էլ այլ թեմերում Հայ Եկեղեցու փաստացի ոչնչացմանը միտուած ապօրինութիւնների առաւել զանգուածային բնոյթ ստանալն ու առաւել աշխուժացումն աւելի են խորացնում Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տագնապը, ով 1929 Մարտի 4ին, «*Շիրակի, Երեւանի, Զանգեզուրի եւ Արցախի թեմերի հայ հաւատացեալ համայնքների, նոցա լիազօրների եւ եկեղեցական պաշտօնէութեան կողմից ամէնօրեայ գրաւոր եւ բանաւոր բողոքները իրաւունք չունենալով անտեսել, իբրեւ վերին հսկող յամայն Հայ եկեղեցու եւ իբրեւ Ազգընտիր Հայրապետ, պատասխանատու եկեղեցու եւ հայ հաւատացեալ ժողովրդի առաջ*», մի ծաւալուն բողոք-դիմում է յղում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Տէր Գաբրիէլեանին: Վեհափառ հայրապետն ամենայն մանրամասնութեամբ ու փաստացի ներկայացնում է հակակեղեցական անօրինականութիւնները, որոնք «*մեղանչում են պետական օրէնքի հիմնական երեք սկզբունքների դէմ, այն է՝ խղճի ազատութեան, կրօնական պրոպոգանդայի ազատութեան եւ հակակրօնական պրոպոգանդայի համար պետականօրէն ծրագրուած գործելակերպի դէմ*»: Նշելով որ ամէնուրեք եկեղեցիները փակւում են իշխանութեան հրամանով եւ կամ էլ իշխանութեան քօղարկուած թելադրանքով՝ անաստուածութեան խմբակների ու կոմերիտականների ձեռքով, Կաթողիկոսը աւելացնում է. «*Անցեալում էլ փեղի ունէին բռնագրաւումներ, …. սակայն նոքա քօղարկուած էին կատարւում եւ այսպիսի լայն ծաւալ ու ծրագրային բնոյթ չունէին. իսկ այսօր, յատկապէս այս Յունուարից սկսած՝ ամէնուրեք, որոշ ծրագրով ու բացայայտ են կատարում: Շիրակի, Երեւանի, Սիւնեաց եւ Արցախի թեմերի բոլոր շրջգործկոմները շրջում են գիւղերը եւ հրապարակով հրաւիրելով տեղական քահանաներին եւ կրօնական*

համայնքների լիազօրներին՝ պահանջում են յանձնել իրենց եկեղեցու բանալիները: Չյանձնելու դէպքում՝ բանտարկում ու ծայնազուրկ են հրապարակում իր բոլոր յարակից հետեւանքներով եւ ապա՝ բանալով կամ կոտրելով եկեղեցու դռները՝ գրաւում: …. Նոյն եղանակով եկեղեցիների գրաւումներ կատարւում են նաեւ գաւգործկոմների հրամանով գիւղխորհուրդների նախագահների ձեռքով եւ կամ այսպէս կոչուած համայնական ժողովներով»:

Քահանաներից պահանջում են հրաժարուել կոչումից, կամ էլ այնպիսի հարկադրման են ենթարկում ու այնպիսի ծանր տնտեսական պայմանների մէջ դնում, որ իրենք են ստիպուած լինում թողնել քահանայական կոչումը: «*Քահանաներին արգելում են քարոզ խօսել եւ կամ այնպիսի բծախնդիր վերաբերմունք են հանդէս բերում, որ նոքա կամովին հրաժարւում են քարոզելուց՝ իրենց գլուխը փորձանքից զերծ պահելու համար: Համարեա բոլոր երեսփոխաններն ու լիազօրները՝ ծայնազուրկ յայտարարուելու եւ հակայեղափոխական ճանաչուելու սպառնալիքի տակ՝ թողնում են իրենց պաշտօններն ու հեռանում: Նոցա հեռացման հետեւանքով է, որ եկեղեցիները անխնամ եւ անտէր մնալով՝ թալանի ու կողոպուտի են ենթարկւում….: Քահանաներն ու դպիրները՝ անկարող լինելով իրենց վրայ դրուած քահանայական չափից մեծ տուրքը հատուցանել, այլեւ հողազրկութեան ենթարկուելու եւ որդիներին դպրոցից ու պաշտօններից արձակման երկիւղից ահաբեկուած՝ թողնում են իրենց կոչումն ու պաշտօնը եւ հեռանում*»:

Հաւատացեալները, հողից ու ծայնից զրկուելու եւ անհատական տուրքի ենթարկուելու երկիւղից, դադարում են եկեղեցի յաճախել եւ անգամ եկեղեցիների փակման համար կազմակերպուած ժողովներում՝ բաց քուէարկութեան ժամանակ, ստիպուած են լինում կողմ քուէարկել եկեղեցու փակման որոշմանը: «*Իշխանութեան այսպիսի ելոյթները պարզ է, որ հակասում են օրէնքին եւ այնպէս ահաբեկել են հաւատացեալներին, որ նոքա յակամայից եւ ներքին դժգոհութեամբ ձեւականօրէն հրաժարւում են հաւատացեալների պարտականութիւններից եւ մինչեւ իսկ խուսափում հրապարակի վրայ տեսակցելուց իրենց ծխատէր քահանայի հետ՝ գիտենալով,*

որ տասնեակ անգամներ հարց ու փորձի պիտի ենթարկուեն իշխանութեան կողմից եւ կասկածի ու զրկանքների ենթակայ լինեն»[64]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, չնայած խնդրում եւ պահանջում է դադարեցնել սանձազերծուած անօրինականութիւնները, այդուհանդերձ վստահաբար քաջ գիտակցում էր, որ իրականացւում էր ծրագրուած պետական քաղաքականութիւն եւ հազիւ թէ իշխանութեան վերին օղակներից կարելի էր որեւէ դրական լուծում ակնկալել: Ասուածի վկայութիւն թերեւս կարելի է համարել նաեւ նրա այս գրեթէ մարգարէական խօսքերը. «*Ճշմարիտ է, այս գործելակերպի հետեւանքով եկեղեցիների դռները կը գոցուեն, քահանաներն ու հաւատացեալները կը դադարեն եկեղեցի յաճախելուց, սակայն նոցա սրտերը միշտ բաց կը լինեն աղօթքներ վերառաքելու Աստծուն եւ սիրելու իրենց հնադարեան մայրենի եկեղեցին, որով կառավարութիւնն իրապէս հասած չի լինի իր նպատակին*»[65]:

Որպէս հետաքրքրական զուգահեռ նշենք, որ վերոնշեալ դիմումին գրեթէ միաժամանակ՝ Մարտի 6ին, Ադրբեջանի Կոմկուսի 9րդ համագումարում Բաքուի վարչախմբի առանցքային դէմքերից Ասադ Կարաեւն իր զեկոյցում շեշտում է. «*այն մզկիթները, որոնք փակուած են ոչ կամովին, պէտք է հենց հիմա վերադարձնել*»[66]: Հրանտ Աբրահամեանն ընդգծում է, որ Ադրբեջանում «*ազատ եւ անարգել գործել են մուսուլմանական մեջիդներն ու մզկիթները: Խորհրդային իշխանութեան տարիներին այնտեղ մոլաները զանգուածային բռնաճնշումների չեն ենթարկուել եւ ոչ մի մեջիդ չի փակուել*»[67]:

Իսկ Արցախում լայն թափով շարունակւում էին հակաեկեղեցական բռնաճնշումները: Արդէն 1929 Սեպտեմբերի 20ին թեմի առաջնորդը յայտնում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին, որ թեմի գրեթէ բոլոր եկեղեցիները փակուել են, իսկ քահանաների մեծ մասը թողել է իր կարգը[68]: Մնացեալ քահանաների վրայ էլ շարունակւում էր անմարդկային ճնշում գործադրուել՝ հարկադրելով համալրել հրաժարական տուածների շարքերը:

Առաւել պատկերաւոր ներկայացնելու համար իբրեւ օրինակ բերենք Հաթերք Գիւղի հոգեւոր հովիւ Սարգիս քահանայ

Մինասեանի՝ 1929 Նոյեմբերի 3ի աղերսագիրը Վրթանէս սրբազանին, որտեղ 80ամեայ քահանան ներկայացնում է իր կրած նուաստացումներն ու տառապանքները: Պատմելով, որ ստիպուած չի կարողանում ծէս կատարել, քանի որ Ս. Հաղորդութիւն տալու համար անգամ ստիպուած կը լինի տուգանք վճարել, այնուհետեւ գրում է. «*Էս տարի ինձ նշանակեցին քահանայական եկամուտ. մէկ նշանակեցին 80 րուբլի, յետոյ դարձրին 300 րուբլի, իսկ հարկաթերթում նշանակեցին 800 րուբլի, եւ հարկ են պահանջում ինձանից 187 ր. 5 կոպ. եւ դիմեցի մեր գիւղխորհրդին եւ սոցիսպալկոմին* (հասարակական գործադիր կոմիտէ – Գ.Ս.) *եւ ամբողջ գիւղը վկայում է, որ 800 րուբլի չեմ սպացել, բայց նրանք ասեցին թէ քահանայութիւնից հրաժարուիր, քո տուրքը պակասեցնելու ենք, թէ չէ եկող տարի երկու տակ ես տալու*»: Իր կամքին հակառակ ստիպուած է լինում հրաժարական տալ եւ վճարել հարկի առաջին մասը, սակայն «*դրանից յետոյ էլի լրիւ հարկը պահանջեցին: Ես դիմում ներկայացրի չքաւորական ժողովին, ժողովը ընդունեց միաձայն, որ ես չքաւոր եմ, բայց կուսակցականների խօսքով պահանջուեց, որ ես գլխիս մազերը խուզեմ, մօրուքս թեթեւացնեմ, շորերս կարճացնեմ, որ նորից չքաւորական վկայական տան ինձ: Էդ էլ արի, յետոյ պահանջեցին պապի թերթում, որ գրեմ սորանից հետ ինձ օրհնեա Տէր չասեն. Էդ էլ արի.…*»: Ներկայացնելով, թէ ինչ պայմաններում է ստիպուած եղել կատարել իշխանութիւնների պահանջները, քահանան այնուհետեւ շարունակում է. «*Վարչական ձեւով ծէսերը արգելելով, չեկած եկամուտի անընդհատ պահանջին երեսից մէկ օրապող*[69] *նախարարների նման առերես հրաժարիր (նկատի ունի Վարդանանց առերես ուրացումը - Գ.Ա.) քո քահանայութիւնից, արցունք իմ աչից չի պակսիլ, խնդրում եմ մեզ էս ծանր, նեղ դրութիւնից փրկէք: Եւ ծառայողների գիւղի մէջ հրապարակում են ով որ փէրփէր ասող լինի, կամ օրհնէքապէր ասող լինի, նրան տուգանքի ենք տալու, իրան անունը տուէք, բայց հաւապացեալներ էլի օրհնէքապէր են ասում, եթէ մեր եկեղեցին, կամ քահանան հաստատուի ինչպէս որ հարսանեաց մէջ ուրախութիւն լինի, էսպէս էլ հաւապացիալները ուրախութիւն կ'անեն*»[70]:

ՎՐԹԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

Արցախի թեմում մոլեգնող բռնաճնշումների ալիքն ի վերջոյ հասաւ ամենավճռական հանգրուանին՝ վերջնական հարուածի սլաքն արդէն ուղղելով անմիջապէս թեմի առանցքային անձին. «*Արցախի թեմի փակման ազդանշանն եղաւ 1930 թուականի Փետրուարի 7ին Վրթանէս եպիսկոպոսի ձերբակալութիւնն ու արգելափակումը Շուշիի բանտում*»[71]: Շինծու մեղադրանքներով ձերբակալուած Վրթանէս եպիսկոպոսը շուրջ մէկ տարի ստիպուած է լինում Շուշիի բանտում սպասել իր դատին, բանտարկութեան ողջ ընթացքում ենթարկուելով ծայրայեղ զրկանքների ու նուաստացումների, ինչի վկայութիւնն են Մայր Աթոռ ուղարկուած գրութիւնները, որոնցով նա պարբերաբար ստիպուած էր նիւթական նպաստ եւ առաջին անհրաժեշտութեան իրեղէններ (հագուստ, սպիտակեղէն, օճառ եւն.) խնդրել[72]: 1931 Յունուարի 9ին շուշեցի Թալիշ Յովհաննիսեանը գրում է Մայր Աթոռ, որ Յունուարի 19ին նախատեսուած է Վրթանէս սրբազանի դատը, եւ խնդրում է փաստաբան ուղարկել[73]: Նոյն անձը Յունուարի 27ին ուղարկուած գրութեամբ տեղեկացնում է, որ Յունուարի 19-23ը Ստեփանակերտում տեղի է ունեցել Վրթանէս եպիսկոպոսի դատը, նրան առաջադրուած որեւէ մեղադրանք չի հաստատուել, սակայն սրբազանին կալանքից դեռեւս չեն ազատել, դատախազը գործն ուղարկել է վերաքննութեան, եւ Յունուարի 25ին Վրթանէս եպիկոպոսին կրկին տարել են Շուշիի բանտ[74]: Նոյն թուականի արդէն Հոկտեմբերի 25ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած ոմն Սարգիս Սաֆարեանի նամակից տեղեկանում ենք, որ Արցախի թեմի առաջնորդը շարունակում է բանտում մնալ, չնայած որ լիովին արդարացուել է իրեն ուղղուած մեղադրանքներից: Նամակագիրը նշում է. «*Նրան կալանքի տակ են պահում ոչ թէ նրա համար, որ ինչ-որ բանում մեղաւոր է, այլ որովհետեւ հաւատացեալ եպիսկոպոս է*»[75]:

Մայր Աթոռը ողջ ընթացքում իր ուշադրութեան ներքոյ է պահում Արցախի թեմի առաջնորդի շուրջ կատարուող իրադարձութիւնները՝ միաժամանակ հնարաւորինս բերելով ինչպէս բարոյական, այնպէս էլ նիւթական աջակցութիւն[76]: 1931 Նոյեմբերի 7ին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը դիմում է ՀԽՍՀ քաղվարչութեան նախագահութեանը. «*Ղարաբաղի թեմի*

առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոսը երրորդ փարին է ինչ գտնւում է Շուշու ուղղիչ փանը: Թէ Վրթանէս եպիսկոպոսից եւ թէ ուրիշներից սփացած տեղեկութիւններից երեւում է, որ նրա դափը փեղի է ունեցել, եւ նա արդարացել է եղած մեղադրանքներից: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յայտնելով վերոգրեալը, խնդրում է նախագահութեանդ՝ բաւ համարել Վրթանէս եպիսկոպոսի կրած նեղութիւնները եւ միջնորդութիւն յարուցանել ուր հարկն է, նրան կալանքից ազափելու եւ էջմիածին վերադառնալու համար»[77]: Միաժամանակ նոյնպիսի գրութիւն է ուղարկւում նաեւ Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոսին՝ յանձնարարելով «*Վրթանէս եպիսկոպոսին կալանքից ազափելու մասին միջնորդութիւն յարուցանել համապափասխան վարչութեան առջեւ*»[78]:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՓԱԿՈՒՄԸ

1932 Յունուարի 1ին Արցախի թեմի առաջնորդը վերջապէս ազատւում է կալանքից: Ազատուելուց յետոյ Վրթանէս եպիսկոպոսը շնորհակալական նամակ է գրում Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահ Խորէն արքեպիսկոպոս Մուրադբեկեանի[79] անունով. «*Սորանով խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեզ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդին եւ համայն միաբանական ուխտին՝ իմ վերաբերմամբ ցոյց փուած եղբայրական, նիւթական եւ բարոյական վերաբերմունքի համար: Ոչ մի բանի կարօտ այնպէս չեմ զգում, քան ամենքիդ փեսնելու, հոգեպէս մխիթարուելու:* Նոյն նամակով տեղեկութիւններ է յայտնում նաեւ իր առողջութեան վերաբերեալ. *«Մինչ այժմ առողջութիւնս լաւ էր, սակայն ներկայումս հիւանդ եմ, փառապում եմ ռեւմափիզմով, բայց եւ այնպէս եկեղեցի յաճախում եմ*»[80]:

Թեմակալ առաջնորդի առաջնահերթ անելիքն է լինում նախ շրջել թեմում եւ սեփական աչքերով տեսնել առկայ կացութիւնը, որից յետոյ մեկնում է Մայր Աթոռ՝ մի փոքր կազդուրուելու տանջալից բանտարկութիւնից: Հենց Մայր Աթոռում էլ Ապրիլի 12ին ներկայացնում է զեկոյց, որից ակնյայտ է դառնում իրականութիւնն իր ողջ ահաւորութեամբ. «*Մինչեւ 1930 թուի Փեփրուար ամիսը թեմումս գոյութիւն ունէին եկեղեցիներ,*

թեմական խորհուրդ, քահանայութիւն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական այլեւայլ հաստատութիւնների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառութեան հրաժարուել են, է՝ որ իրենց կոչումից, եւ է՝ քահանայագործութիւնից ու պարապում են իրենց տնտեսութեամբ եւ կամ ծառայում են որպէս ուսուցիչ, պետական ծառայող կամ կոլխոզնիկ»: Վանքերից հսկիչներ ունէին միայն Գանձասարի, Ս. Յակոբայ եւ Ինն Մաս վանքերը: Ամարասը գտնւում էր «Մաճկալ» կոմունայի ձեռքում, իսկ Երից Մանկանց Վանքը 1930ի երկրաշարժի հետեւանքով քանդուել էր. «*Ինչպէս եկեղեցիների, նաեւ բոլոր վանքերի գոյքը պետականացուած է*»[81]:

Այլ կերպ ասած՝ Արցախի թեմն արդէն գրեթէ գոյութիւն չունէր, եւ թեմը վերջնականապէս փակելու համար ադրբեջանական իշխանութիւններին մնացել էր թեմակալ առաջնորդից մէկընդմիշտ ձերբազատուելու հարցը լուծել:

Վրթանէս եպիսկոպոսի՝ Արցախի թեմում իրականացրած առաջնորդական գործունէութեան վերջին քայլերը եղան 1932 Յուլիս ամսին թեմական պատգամաւորների ընտրութիւնների կազմակերպումը՝ Նոյեմբերի 10ին Մայր Աթոռում կայանալիք կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելու համար: Յուլիսի 11-15ը կայանում է շրջանների պատուիրակների ընտրութիւնը: Ընտրուած պատուիրակները Յուլիսի 21ին Ստեփանակերտում ընտրում են թեմական պատգամաւորներին: Առաջնորդից բացի թեմը պիտի ներկայացնէին երեք պատգամաւոր, սակայն, հաշուի առնելով, որ հարիւր յիսուն հազար ընտրական ձայն ունեցող թեմի համար դա քիչ է, ընտրւում է նաեւ չորրորդ պատգամաւոր, ինչին Մայր Աթոռը չի առարկում: Յուլիսի 22ին եւ 28ին Վրթանէս եպիսկոպոսը Գերագոյն Հոգեւոր Խորհրդին զեկուցում է կայացած ընտրութիւնների եւ դրանց արդիւնքների մասին[82]:

Խորհրդային իշխանութիւններն անգամ խոչընդոտում են Արցախի թեմի՝ կաթողիկոսական ընտրութիւնների առիթով գումարուելիք ազգային-եկեղեցական ժողովին մասնակցութեան հրաւէրը ստանալուն. «*արտասահման ուղարկուած հրաւէրները տեղ հասան, իսկ ահա ԽՍՀՄի ներսում գտնուող հայոց թեմերից*

ոչ բոլորը սփացան հրաւէրներ: Այսպէս, Սփեփանակերտ՝ Արցախի հայոց թեմի առաջնորդ Վրթանէս եպիսկոպոսին ուղարկուած հրաւէրը կորաւ: Այսպիսով, սկսուեց ադրբեջանական իշխանութիւնների ճնշումը Արցախի հայոց հոգեւորականութեան վրայ: Սարսափելի աւարտի սկիզբը՝ հայ հոգեւորականութեան արտաքսումը, բոլոր հայ եկեղեցիների փակումը Արցախում»[83]: Իրականում սա սարսափելի աւարտի սկիզբը չէր, այլ գրեթէ վերջը:

1933 Ապրիլի 4ին Խորէն Ա. Կաթողիկոսին գրուած Վրթանէս եպիսկոպոսի յայտարարութիւնից յստակ է դառնում, որ Արցախի թեմի փակումն արդէն կայացած փաստ է. «*Ամսոյս 4ին մասնաւոր գործով գնացել էի Գէորգ Սրբազանի մօտ. մեր խօսակցութեան միջոցին ի միջի այլոց յայտնեց, որ ինքը Երեւանի պետքաղվարչութեան հետ բանակցել է իմ թեմ գնալուս մասին եւ անյաջողութեան է հանդիպել, յայտնեց նաեւ, որ Դուք կանչելու էք ինձ այդ մասին յայտնելու: Նոյն օրը Վեհարան հրաւիրուեցի եւ ներկայանալով Ձեզ, հետեւեալը յայտնեցիք. «Խորհրդակցութիւն ունեցանք այստեղ, Արսէն եպիսկոպոսին Բագու ուղարկեցինք, որ քեզ ընտրել տայ Բագուի թեմի առաջնորդ՝ մնալով միեւնոյն ժամանակ նաեւ Ղարաբաղի թեմի առաջնորդ: Քո՝ Ղարաբաղի թեմը գնալու առթիւ Գէորգ Սրբազանը Երեւանի պետքաղվարչութեան հետ բանակցութիւն է վարել, եւ ինչպէս երեւում է նրա գլխաւոր զեկուցումից, Ձեզ թոյլ չի տրւում Ղարաբաղի թեմը գնալու ....*»[84]: Արխիւային փաստաթղթերից մէկում պահպանուել է Խորէն Ա. Մուրադբեկեանի՝ Վրթանէս սրբազանի հետ զրոյցի առաւել մանրամասն պատկերը[85], որից կարելի է պատկերացում կազմել իրադարձութիւնների ողջ ընթացքի մասին: Ամենայն հաւանականութեամբ, կաթողիկոսական ընտրութիւններից յետոյ Ադրբեջանի իշխանութիւններն ուղղակի արգելել էին Վրթանէս սրբազանի վերադարձն Արցախ: Մայր Աթոռը չորս-հինգ ամիս շարունակ ամէն կերպ փորձել էր առաջնորդին վերադարձնել իր թեմ եւ այդպիսով պահպանել թեմի գոյութիւնը, սակայն ապարդիւն. «*Դեկտեմբեր ամսից Մեր պատուէրով, Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը բանակցութիւններ է վարում Կառավարութեան հետ Ձեր Ղարաբաղի թեմը վերադառնալու համար: Իհարկէ*

համոզուած պիտի լինիք, որ թէ Մեր եւ թէ Գերագոյն Խորհրդի անդամների ցանկութիւնն է, որ թեմերը թափուր չը մնան, ուստի եւ անհրաժեշտութիւն է եղել մեզ համար, որ Դուք գնաք Ձեր թեմը: Այդ է պատճառը, որ Տ. Գէորգ Սրբազանը սպացած մերժումներին Մեր անունից նոր պահանջներ է արել, խնդրելով նոր միջնորդութիւններ Ադրբեջանի եւ Թիֆլիզի Կառավարութիւններին անելու: Վերջին անգամ նոյնիսկ առաջարկ է եղել, որ Դուք ժամանակաւորապէս կեցունի վայր ունենաք Գանձակը, մինչեւ որ Գանձասարի Վանքի խնդիրը կը կարգաւորուի: Դժբախտաբար վերջին անգամ կտրականապէս յայտնել են, որ Ադրբեջանի Կառավարութիւնը անկարելի է համարում Վրթանէս Եպիսկոպոսի Ղարաբաղ վերադարձը: Յայտնում եմ, որ վարած բանակցութեանց հետեւանքով այդ հարցը Մեզ համար փակուած է եւ Դուք ազատ էք Ղարաբաղի թեմից: …. Այո ցաւալի է, որ չեն թոյլ տալիս Ձեզ վերադառնալ Ձեր թեմը: Եթէ Մենք փակուած ենք համարում այդ հարցը ուրեմն սպառուած ենք համարում բոլոր միջոցները եւ անօգուտ՝ տարիներ շարունակ Ձեզ Ղարաբաղի Առաջնորդ համարել, ուր գնալու իրաւունք չունիք: …. Ամէնից հաւանականը այս է, եւ դորա ապացոյցն է կառավարութեան վարած քաղաքականութիւնը, որ չեն ցանկանում Առաջնորդ տեսնել մի տեղում, ուր հակակրօնական պրոպագանդը հարիւր տոկոսով իր գործը կատարել է եւ ուր ինչպէս Դուք եւս Ձեր պաշտօնական յայտարարութեան մէջ ասում էք, ոչ թեմ կայ եւ ոչ եկեղեցի»[86]:

Վրթանէս սրբազանի՝ Ապրիլի 4ի վերոնշեալ յայտարարութիւնից այն տպաւորութիւնն է, որ նա որեւէ կերպ չի կարողանում հաշտուել կատարուածի հետ եւ կարծես չի ցանկանում հաւատալ, որ այն իրականութիւն է. «*Ինչպէս Ձեզ յայտնեցի, ես չեմ հրաժարուել Ղարաբաղի թեմի առաջնորդական պաշտօնից, ու այդ թեմի առաջնորդն էլ մնում եմ: Յայտնեցի նաեւ, որ ոչ մի պատճառ չկայ, իմ՝ թեմս չգնալու, սակայն ես չգիտեմ ինչպիսի բանակցութիւն է վարուել, որի հետեւանքով արգելւում է ինձ իմ թեմս գնալը*»[87]:

Սակայն կատարուածն իրօք անշրջելի իրողութիւն էր. Մայր Աթոռը, որն աստիճանաբար ինքն էր կանգնում փակման լրջագոյն սպառնալիքի յանդիման, անզօր էր որեւէ բան անել

Խորհրդային Ադրբեջանի սանձարձակ իշխանութիւնների կամայականութիւնների դէմ: Ապրիլի 7ին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Վրթանէս եպիսկոպոսին վերջնականապէս յայտնում է. «*Գեր. Հոգ. Խորհուրդը իւր ամսոյս 5ի թ. ԻԲ նիստի մէջ լսեց Հայրապետական լիազօր եւ խորհրդիս անդամ Գերաշ. Տ. Գէորգ արքեպիսկոպոսի ամսոյս 3ի գրաւոր զեկուցագիրը, որից ի միջի այլոց երեւում է, որ Հայրապետական լիազօրը Նորին Սրբութեան կարգադրութեամբ անցեալ թուի Դեկտեմբերից սկսած բանակցութիւններ է վարել ամենահնարաւոր միջոց գործ դնելով Ձեր՝ Ղարաբաղի թեմ վերադառնալու համար: Նոյն զեկուցումից երեւում է, որ Ադրբէյջանի կառավարութիւնը ընդհանրապէս ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտօնավարութիւնը Ադրբէյջանում: Վերոգրեալը հաղորդելով Ձեզ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Ձեր Արցախի թեմ գնալու վերաբերութեամբ բանակցութիւնները վերջացած է համարում*»[88]:

Սրանով իրօք ամէն ինչ աւարտւում է. Արցախի թեմի փակումը կանխելու բոլոր միջոցներն սպառուած էին: Ելնելով վերոնշեալ վերջին գրութեան ամսաթուից՝ պայմանականօրէն 1933 Ապրիլի 7ը կարող ենք համարել Արցախի թեմի փակման օր, թէպէտ, ինչպէս արդէն նշեցինք, փաստացիօրէն դա աւելի վաղ կայացած իրողութիւն էր:

Ցաւալի ճակատագիր ունեցաւ նաեւ Վրթանէս եպիսկոպոս Յակոբեանի յետագայ կարգավիճակի հարցը: Նրան որեւէ թեմում պաշտօնի նշանակելու Մայր Աթոռի ջանքերը կտրականապէս մերժուեցին խորհրդային իշխանութիւնների կողմից, եւ այդպէս էլ մինչեւ իր կեանքի վերջը՝ 1943 թուականը, Վրթանէս սրբազանը զուրկ մնաց հոգեւոր ասպարէզում որեւէ էական դերակատարութիւն ունենալու հնարաւորութիւնից[89]:

Արցախը շուրջ 60 տարի զուրկ մնաց թեմից, որի վերաբացումը հնարաւոր եղաւ միայն արցախեան պայքարի շնորհիւ՝ 1989 Մարտի 10ին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հրանտ Աբրահամեան, *Արցախահայութեան Հասարակական-Քաղաքական Կեանքը եւ Արցախի Թեմը (1901-1933)*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2009, էջ 200:

[2] Վահրամ Բալայեան, *Արցախի Պատմութիւնը Հնադարից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, Զանգակ-97, 2011, էջ 226-227:

[3] Գրիգոր Յովհաննիսեան, *Սովետական Իշխանութեան Հաստատումը Լեռնային Ղարաբաղում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1971, էջ 155:

[4] Խիստ յատկանշական է 1920 Ապրիլի կէսերին Դրաստամատ Կանայեանի ու Գարեգին Նժդեհի՝ Արցախին օգնութեան հասնելուց յետոյ ՌԿ(բ)Կ Կովկասեան Երկրային Կոմիտէի կոչը, որում մասնաւորապէս ասւում է. «*Ռճրագործութիւնը աչքի առաջ է. դաշնակները ուղարկել են Ղարաբաղ զօրք եւ ֆինանսական ահագին գումարներ՝ կամաւորական խմբեր կազմակերպելու համար... Արթուն եղէ՛ք, խմբուեցէ՛ք ձեր կոմունիստական կուսակցութեան շուրջը, անողոք կռիւ մղէ՛ք ձեր դասակարգային թշնամիների դէմ, թոյլ մի տուէ՛ք դաշնակներին կատարելու իրենց սեւ գործը*» (նոյն):

[5] Նոյն, էջ 162-163:

[6] Նոյն, էջ 164-166:

[7] Բալայեան, էջ 230:

[8] Հրանտ Աբրահամեան, *Մարտնչող Արցախը, Գիրք Ա*, Երեւան, Զանգակ-97, 2003, էջ 245-252:

[9] Առաւել մանրամասն տե՛ս՝ Աբրահամեան, էջ 208-233: Հմմտ.՝ Բագրատ Ուլուբաբեան, *Արցախի Պատմութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, «Մ. Վարանդեան» Հրատ, 1994, էջ 235-244:

[10] Աբրամ Կիսիբեկեան, *Յուշեր, 2*, Երեւան, Առասպէլ Ինդեքս, 2011, էջ 140-141:

[11] Թաթուլ Յակոբեան, *Կանաչ Ու Սեւ. Արցախեան Օրագիր*, Երեւան-Ստեփանակերտ, Հեղինակային Հրատ., 2008, էջ 418:

[12] Աբրահամեան, էջ 269, 272-273. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 249-251. նաեւ՝ Շ. Մկրտչեան, *Արցախում Ես Ուրիշ Պատերազմ Տեսայ*, Երեւան, Ամարաս, 1996, էջ 5-10:

[13] Փաստն այսօր աչքի առաջ է. Ադրբեջանը ողջ աշխարհով մէկ փողհարում է, որ Ղարաբաղից բացի հայերն «գրաւել» են նաեւ «բուն ադրբեջանական եօթ շրջաններ»: Մինչդեռ իրականութիւնն այն է, որ ներկայիս Արցախի Հանրապետութեան մաս կազմող եւ հասարակութեանն առաւելապէս «ազատագրուած տարածքներ» անուանումով յայտնի այդ շրջանները հիմնականում հենց վերոնշեալ հայկական տարածքներն են, որոնք ժամանակին Ադրբեջանն ինքն է բռնազաւթել հայերից, եւ դեռ մի զգալի մասն էլ, մասնաւորապէս Հիւսիսային Արցախը, շարունակում է գրաւուած պահել:

[14] Առաւել մանրամասն տե՛ս՝ Ստեփան Ստեփանեանց, *Հայ Առաքելական Եկեղեցին Սփալինեան Բռնապետութեան Օրօք*, Երեւան, Ապոլոն, 1994, էջ 3-123:

[15] Բալայեան, էջ 230-231:

[16] Կիսիբեկեան, էջ 44-45:
[17] Նոյն, էջ 46-76:
[18] Նոյն, էջ 55:
[19] Ստեփան Կերտողը (Ստեփանեանց), Կիսիբեկեանի վերոնշեալ վկայութիւնը մէջբերելուց յետոյ, Սուրէն աբեղայ Թորոսեանի մասին գրում է. «*Հայր Սուրբը 80 կալանաւորների շարքում 1920 թ. Սեպտեմբերի 6ին հասաւ եւ փակուեց Գանձակի բանտում, որից յետոյ տարուեց Ռոստով: Յետագայ ճակատագիրն անյայտ է*» (Ստեփան Կերտող, *Գիրք Տառապելոց. 1920-1950-ական Թուականների Բռնութիւնների Զոհ Հայ Հոգեւորականներ*, Երեւան, «Մուղնի» Հրատ., 2002, էջ 14): Չենք կարող համաձայնել վերջին նախադասութեան հետ, քանի որ բանտարկութիւնից շուրջ երկու տարի անց Սուրէն աբեղան կրկին զբաղեցնում էր Ամարասի վանահօր եւ անգամ Արցախի թեմի ժամանակաւոր կառավարչի պաշտօնները:
[20] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.)*, կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 2001, էջ 747:
[21] Աբրահամեան, *Արցախահայութեան,* էջ 200:
[22] Էդուարդ Դանիէլեան, *Գանձասարի Պատմութիւն*, Երեւան, «Գանձասար» Աստուածաբանական Կենտրոն, 2005, էջ 399:
[23] Աբրահամեան, *Արցախահայութեան,* նոյն:
[24] *Վաւերագրեր Գիրք Թ,* էջ 742-744, 751-758, 767-771:
[25] Դանիէլեան, էջ 399:
[26] *Վաւերագրեր Գիրք Թ,* էջ 827:
[27] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 2:
[28] Աբրահամեան, *Մարտնչող Արցախը*, էջ 273:
[29] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 3-4:
[30] *Վաւերագրեր Գիրք Թ,* էջ 828:
[31] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան (1920-1938 թթ.)*, կազմեց՝ Սանդրօ Բեհբուդեան, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1994, էջ 48:
[32] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 828-829:
[33] Նոյն, էջ 830:
[34] Վաւերագրեր (1920-1938 թթ.), էջ 55-56:
[35] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 831-834:
[36] Նոյն, էջ 841:
[37] Նոյն, էջ 843-844:
[38] Նոյն, էջ 844-845:
[39] Նոյն, էջ 846:
[40] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 4:
[41] *Վաւերագրեր Գիրք Թ,* էջ 841:
[42] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 32:
[43] *Վաւերագրեր Գիրք Թ,* էջ 867:
[44] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 26:

[45] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 854:
[46] Նոյն, էջ 868:
[47] Նոյն, էջ 848:
[48] Նոյն, էջ 850:
[49] Նոյն, էջ 860-861:
[50] *Վաւերագրեր (1920-1938 թթ.),* էջ 87:
[51] Դանիէլեան, էջ 410:
[52] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 869:
[53] Նոյն, էջ 861:
[54] Նոյն, էջ 866-867:
[55] Նոյն, էջ 869:
[56] Մելանիա Բալայեան, *Հայ Աղուանից Եկեղեցին (Սկզբնաւորումից Մինչեւ Մեր Օրերը)*, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» Հրատ., 2009, էջ 211:
[57] Արմենակ Մանուկեան, *Հայ Առաքելական Եկեղեցու Բռնադատուած Հոգեւորականները 1930-1938 (Ըստ ՊԱԿի փաստաթղթերի)*, Երեւան, Ամրոց, 1997, էջ 7:
[58] Աբրահամեան, *Արցախահայութեան*, էջ 213:
[59] Ստեփանեանց, էջ 71:
[60] Աբրահամեանը սխալմամբ նշում է «*1929 թ. Յունուարի 20ից մինչեւ 1930 թ. Փետրուարի 7ը*» (Աբրահամեան):
[61] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 883:
[62] Նոյն:
[63] Նոյն, էջ 883-834:
[64] *Վաւերագրեր (1920-1938 թթ.)*, էջ 173-178:
[65] Նոյն, էջ 177:
[66]ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 664, թ. 1:
[67] Աբրահամեան, էջ 208:
[68] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 885:
[69] Բառարաններում այս բառը չկայ. հաւանական է, որ «ուրացող» բառի սխալ կամ ժամանակի խօսակցական լեզուով հնչող տարբերակի գրելաձեւ է:
[70] Նոյն, էջ 888:
[71] Դանիէլեան, էջ 415:
[72] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 891, 893-894:
[73] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2736, թ. 1:
[74] Նոյն, թ. 3:
[75] Նոյն, թ. 12:
[76] Նոյն, թ. 4:
[77] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 895:
[78] Նոյն:
[79] 1930 Մայիսի 8ին Գէորգ Ե. Սուրէնեանցի վախճանուելուց յետոյ խորհրդային իշխանութիւնները երկու տարի շարունակ ձգձգում էին կաթողիկոսական ընտրութիւնները: Այդ ընթացքում Հայ Եկեղեցու գլուխ էր կանգնած Խորէն

Արք. Մուրադբեկեանը, ինչը նա, բնականաբար, շարունակեց պաշտօնապէս Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելուց մինչեւ իր ողբերգական վախճանը (Ստեփանեանց, էջ 73-123):

[80] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 896:

[81] Նոյն, էջ 896-897:

[82] Նոյն, էջ 897-902:

[83] Ստեփանեանց, էջ 91:

[84] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 903:

[85] Փաստաթուղթը թուագրուած չէ եւ չունի նշուած հասցէատէր ու ստորագրութիւն, սակայն բովանդակութիւնից միանգամայն պարզ է դառնում, որ այն Վրթանէս սրբազանի յիշատակած հանդիպման առաւել մանրամասն պատկերն է, որը, ամենայն հաւանականութեամբ, Խորեն Ա. Կաթողիկոսը ներկայացրել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին:

[86] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2689, թ. 6:

[87] Վաւերագրեր *Գիրք Թ,* էջ 903:

[88] Նոյն, էջ 904:

[89] Դանիէլեան, էջ 418-419:

THE OPPRESSIONS OF SOVIET AZERBAIJAN AUTHORITIES AND THE CLOSURE OF THE DIOCESE OF ARTSAKH (1920-1933)

(Summary)

Garik Asryan
monk-deacon@mail.ru

One of the most difficult stages in the history of the Diocese of the Artsakh Armenian Apostolic Church came after Artsakh's forced sovietization and annexation to Azerbaijan.

For the Azerbaijani authorities, for the devastation of the Armenian-populated region and its forcible appropriation, it was important to neutralize and wipe out individuals and institutions that would likely endanger the Azeri plan of appropriation. Azerbaijan's nationalistic policy, which was supported by the large-scale anti-religious campaigns of the USSR, aggravated the conditions of the Artsakh Diocese. Confiscations of churches and church properties, intimidation of believers, repression of the clergy and the imprisonment of the prelate eventually led to the closure of the Diocese.

Based on partly unpublished archival materials, the paper focuses on the steps and action taken by the Azerbaijan authorities towards this closure and details the decade-long desperate attempts of the Catholicosate of Echmiadzin to maintain the prelacy.

ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱՒԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1990ԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԵԱՆ
garshakyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Յօդուածը կ'անդրադառնայ ԽՍՀՄ փլուզումից յետոյ Թուրքիայի արտաքին քաղաքականութեան նոր գերակայութիւնների մշակման գործընթացին, նոր աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում յետխորհրդային տարածաշրջանում եւ յատկապէս Հարաւային Կովկասում նրա արտաքին քաղաքականութեան մէջ կտրուկ շրջադարձի հիմնական նախադրեալներին, դրդապատճառներին եւ զարգացման փուլերին:

Յօդուածում վերլուծւում են ռուս-թուրքական մրցակցութեան պայմաններում 1990ականներին Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ «Թուրքական մոդէլ»ի եւ պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնների դերը եւ նշանակութիւնը, այդ գաղափարների իրագործման գործընթացում Թուրքիայի ձեռքբերումներն ու բացթողումները:

Դիտարկւում է նաեւ Թուրքիայի հարաւկովկասեան քաղաքականութեան մէջ կարեւոր բաղադրիչ հանդիսացող թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները, դրանց զարգացմանը նպաստող հիմնական գործօնները:

Ա. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱՒԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

Հարաւային Կովկասը՝ որպէս աշխարհաքաղաքական տարածաշրջան, միշտ էլ մեծ հետաքրքրութիւն է ներկայացրել Թուրքիայի համար: 1920ականներին հարաւկովկասեան տարածաշրջանի խորհրդայնացումից յետոյ Թուրքիան հարկադրուած էր հրաժարուել Կովկասի հանդէպ ունեցած նկրտումներից, քանզի դա յանգեցնելու էր Խորհրդային

Միութեան հետ անմիջական առճակատման: «Սառը պատերազմ»ի տարիներին ԽՍՀՄի հետ ընդհանուր սահմանի առկայութիւնը մեծապէս բարձրացնում էր Թուրքիայի նշանակութիւնը Արեւմուտքի համար, քանզի «Սառը պատերազմ»ի շրջանակներում Արեւելք-Արեւմուտք հակամարտութեան պայմաններում Թուրքիան հանդիսանում էր կարեւորագոյն ռազմավարական եւ աշխարհաքաղաքական յենակէտ Արեւմուտքի համար Արեւելքից սպառնացող սպառնալիքին դիմագրաւելու գործում: Մասնաւորապէս, խորհրդային վտանգից Արեւմտեան Եւրոպային պաշտպանութեան ընդհանուր համակարգում Թուրքիան դիտւում էր որպէս ՆԱՏՕի հարաւային թեւ[1]:

1980ականների վերջին ԽՍՀՄ-Արեւմուտք հակամարտութեան թուլացման եւ ԽՍՀՄի փլուզման նախանշանների ի յայտ գալու պայմաններում Թուրքիայի համար առաջացան աշխարհաքաղաքական բարենպաստ պայմաններ: Մասնաւորապէս, միջազգային այս փոփոխութիւնների համապատկերում Թուրքիան սկսեց աշխուժացնել յարաբերութիւնները ԽՍՀՄ մահմեդական հանրապետութիւնների հետ: Մասնաւորապէս 1991ին ԽՍՀՄում տեղի ունեցած օգոստոսեան յեղաշրջման անյաջող փորձից յետոյ, երբ ԽՍՀՄում անջատողական գործընթացներն աւելի արագացան եւ ստացան անշրջելի բնոյթ, Թուրքիայի ղեկավարութիւնը հնարաւորութիւն ստացաւ աւելի աշխուժացնելու իր կապերը վերոյիշեալ հանրապետութիւնների հետ: Այդ կապակցութեամբ 1991 Սեպտեմբերին փորձառու դիւանագէտ եւ ճանաչուած պատմաբան Բիլալ Շիմշիրի գլխաւորութեամբ ԽՍՀՄ ուղարկուեց թուրքական պատուիրակութիւն, որն այցելեց խորհրդային թիւրքալեզու հանրապետութիւններ[2]: Պատուիրակութեան խնդիրն էր՝ պարզել այդ հանրապետութիւնների քաղաքական եւ մշակութային զարգացման հեռանկարները: Անկարան փորձում էր հասկանալ, թէ նրանք դէպի ուր են կողմնորոշուելու՝ Թուրքիա՞, թէ՞ Իրան[3]: Այցը ցոյց տուեց, որ 1991ին անկախութեան ուղին բռնած Կենտրոնական Ասիայի եւ Հարաւային Կովկասի թիւրքալեզու երկրների ղեկավարները մեծ ուշադրութիւն էին ցուցաբերում

դէպի Թուրքիան[4]: Այսպիսով, Թուրքիան 1990ականների սկզբներին վերանայում է տարածաշրջանային իր գերակայութիւնները՝ ձգտելով ներթափանցել Հարաւային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականութեան մէջ այդ նոր շեշտադրումների ի յայտ գալը պատահական չէր. վերոյիշեալ տարածաշրջաններ ներգրաւուելու համար Թուրքիան ունէր ներքին եւ արտաքին դրդապատճառներ: «Սառը պատերազմ»ի աւարտը Թուրքիան ընդունեց մեծ լարուածութեամբ եւ սպասումներով: Նա լրջօրէն անհանգստանում էր, որ «Սառը պատերազմ»ի աւարտի հետեւանքով կարող է կորցնել Արեւելք-Արեւմուտք հակամարտութեամբ պայմանաւորուած իր աշխարհաքաղաքական նշանակութիւնը, ինչն իր հերթին կը յանգեցնէր տնտեսական եւ ռազմական օգնութեան ծաւալների կրճատմանը: Դրա առաջին դրսեւորումն էր Թուրքիային յատկացուող ռազմական օգնութեան չափերը կրճատելու մասին ԱՄՆ Կոնգրէսի կողմից 1990ին ընդունուած որոշումը[5]: Երկրորդ, 1989ին, Եւրոպական Համայնքի (ԵՀ) կողմից Թուրքիայի անդամակցութեան յայտի մերժումը հաստատեց թուրքերի մտահոգութիւնն առ այն, որ Եւրոպան յետխորհրդային աշխարհակարգի պայմաններում այլեւս չունէր Թուրքիայի կարիքը, որպէս ԽՍՀՄ հարաւային սահմանների մօտ իր յենարանի[6]: Եւ ի վերջոյ Հարաւային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների վրայ իր ազդեցութեան օգնութեամբ Թուրքիան ցանկանում էր ոչ միայն վերականգնել իր ռազմավարական կարեւորութիւնը Արեւմուտքի համար, այլեւ օգտագործել այդ գործօնը ԵՀին վերջնական անդամակցութեան հարցում[7]:

Ներքին դրդապատճառները ունէին տնտեսական եւ քաղաքական բաղադրիչներ: Տնտեսական տեսանկիւնից նորանկախ իսլամադաւան հանրապետութիւները թուրքական արտահանման համար հանդիսանում էին նոր շուկայ, ինչպէս նաեւ գազի եւ նաւթի նոր աղբիւր էին, որոնց կարիքը խիստ զգում էր Թուրքիան[8]: Քաղաքական տեսանկիւնից 1989ին ԵՀի կողմից Թուրքիայի անդամակցութեան յայտի մերժումից յետոյ, Թուրքիայի հնարաւոր նոր դերը՝ որպէս թիւրքական

հանրապետութիւնների համայնքի ղեկավարի, էականօրէն կը բարձրացնէր նրա միջազգային դիրքը, ինչպէս նաեւ կը լուծէր նրա մեկուսացման մտավախութեան խնդիրը[9]:

Այսպիսով, «Սառը պատերազմ»ի ժամանակաշրջանի կանոնների փոփոխութեան եւ Թուրքիայի համար վերոյիշեալ նոր աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում նրա արտաքին քաղաքականութիւնը ենթարկուեց կտրուկ շրջադարձի, վերանայուեց նրա տեղն ու դերը աշխարհում ընդհանրապէս, եւ տարածաշրջանում՝ մասնաւորապէս: Դա յանգեցրեց նրան, որ ինչպէս Թուրքիայի ղեկավարութեան, այնպէս էլ հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում սկսուեց աշխուժօրէն քննարկուել նոր արտաքին քաղաքականութիւն մշակելու անհրաժեշտութեան հարցը: Սակայն այս գործընթացում Թուրքիայի առջեւ ծառացել էին որոշակի խնդիրներ: Արտաքին քաղաքական գերակայութիւնների որոշման հարցի շուրջ Թուրքիայում լուրջ քննարկումներ էին գնում, եւ առկայ էին տարբեր դիրքորոշումներ՝ նոր աշխարհակարգի պայմաններում Թուրքիայի դերակատարութեան վերաբերեալ:

Բ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1990ԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ

Թուրքիան, գտնուելով իր արտաքին քաղաքական գերակայութիւնների ընտրութեան կողմնորոշման գործընթացում, իր առջեւ ունէր յետագայ զարգացման հիմնական երեք ուղղութիւն: Արդիականացման կողմնակիցները ցանկանում էին Թուրքիան տեսնել որպէս եւրոպական պետութիւն, հետեւաբար նայում էին դէպի Արեւմուտք: Ծայրայեղ իսլամիստները հակուած էին դէպի Մերձաւոր Արեւելք եւ մահմեդական թիւրքալեզու համայնքները, ուստի նայում էին դէպի Հարաւ: Անդրադառնալով պատմութեանը՝ ազգայնականները թիւրք ժողովրդների նոր դերակատարութիւնը տեսնում էին կասպիական աւազանի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում՝ նայելով դէպի Արեւելք: Այս երեք ուղղութիւնների կողմնակիցների բախումները

յանգեցնում են որոշ անվստահութեան Թուրքիայի տարածաշրջանային դերի հարցում[10]:

Թուրքիայի արտաքին քաղաքականութեան նոր գերակայութիւնների մշակման գործընթացում 1990ականների սկզբներին աշխուժացան «Եւրասիական», ուղղութեան կողմնակիցները, ինչի արդիւնքում 90ականների սկզբներից երկրի քաղաքական քննարկումներում կարեւոր տեղ գրաւեց «Եւրասիայի ռազմավարութիւնը», որը համարւում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարութիւնը:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական եւ գաղափարական քննարկումներում «Եւրասիա» եզրին աւելի շուտ տրւում է քաղաքական, քան թէ յստակ գիտական իմաստ: Մասնաւորապէս, Թուրքիայի նախկին նախագահ Սուլէյման Դեմիրէլը վերոյիշեալ տարածաշրջանի բաղկացուցիչ մաս էր համարում Բալկանները, Կովկասը, Կենտրոնական Ասիան, Մերձաւոր Արեւելքը, Թուրքիան, Իրանն ու Իրաքը, իսկ նախկին փոխվարչապետ եւ պանթիւրքիստական Ազգային Շարժում Կուսակցութեան նախագահ Դեւլէթ Բահչելին Եւրասիայի կազմում ներառում է Բալկանները, Կովկասը եւ Մերձաւոր Արեւելքը[11]:

Թուրք վերլուծաբաններն ու հետազօտողները, օգտագործելով Եւրասիայի վերաբերեալ արեւմտեան հեղինակների դասական աշխարհաքաղաքական մօտեցումները, փորձեցին կազմել սեփական ռազմավարութիւնները, որոնք էապէս տարբերւում էին արեւմտեան հեղինակների տեսակէտներից: Մասնաւորապէս, Մարմարա Համալսարանի պրոֆեսոր Ռամզան Օզէյը նախապատրաստել էր «Թուրքերի կենտրոնական գերիշխանութեան» հայեցակարգը, ըստ որի, «Անատոլիան հանդիսանում էր «Աշխարհի ամրոցը», ուստի Թուրքիան, տիրապետելով Անատոլիան, հնարաւորութիւն է ստանում վերահսկելու Բալկաններն ու Եւրասիան: Սրանով իսկ Օզէյը, հաշուի առնելով Թուրքիայի աշխարհագրական դիրքը, օրինականացնում էր Թուրքիայի գերիշխանութիւնը Բալկաններում եւ Եւրասիայում»[12]:

Թուրքիայի քաղաքական վերնախաւում նոր արտաքին քաղաքականութեան ձեւաւորման գործընթացի շուրջ

քննարկումներն աւելի աշխուժացան 1991 Դեկտեմբերին, Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ:

Թէեւ ԽՍՀՄի եւ Արեւմուտքի միջեւ մերձեցման գործընթացը թուրք քաղաքական գործիչների մօտ ստեղծեց մեկուսացման եւ խոցելիութեան զգացումներ, մեր կարծիքով, Խորհրդային Միութեան փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարաւորութիւններ ընձեռեց: Համայնավար վարչակարգի տապալումը Ռուսաստանում, Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում կրօնական եւ էթնիկական յատկանիշներով Թուրքիայի հետ ընդհանրութիւն ունեցող հանրապետութիւնների ի յայտ գալն Անկարայի համար ստեղծեց բարենպաստ պայմաններ: Ըստ թուրք գիտնական Օմէր Քոջամանի՝ «*Յետխորհրդային աշխարհակարգը Թուրքիայի համար նոր աշխարհ բացեց, իսկ դրա հետ մէկտեղ՝ հնարաւորութիւն՝ դուրս գալու երկակի մեկուսացումից. մի կողմից Եւրոպայից, որն իրեն մերժել էր, միւս կողմից՝ արաբական Արեւելքից, որն իրեն չէր ընդունում*»[13]:

Հարաւային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական եւ անվտանգութեան տեսանկիւնից մեծ կարեւորութիւն էր ներկայացնում Թուրքիայի համար: Թուրքիան սկսեց աշխուժ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարաւային Կովկաս: Այդ ուղղութեամբ նրա առաջին քայլերից մէկը եղաւ Ադրբեջանի եւ Վրաստանի հետ սերտ յարաբերութիւններ հաստատելու քաղաքականութիւնը:

Հարաւկովկասեան տարածաշրջանում Թուրքիայի աշխարհատնտեսական շահերը մեծապէս պայմանաւորուած էին Թուրքիայի ձգտումով ոչ միայն ձեռք բերելու իր արդիւնաբերական ապրանքների արտահանման նոր շուկաներ, այլեւ բաւարարելու իր տարէցտարի աճող ջերմուժի պահանջարկն ի հաշիւ կասպիական եւ կենտրոնասիական տարածաշրջանի նաւթի եւ գազի պաշարների: Թուրքիայով վերոյիշեալ տարածաշրջանի ջերմուժի աղբիւրների դէպի Եւրոպա տարանցման երթուղիների ստեղծումը կը բարձրացնէր Թուրքիայի ռազմավարական նշանակութիւնը որպէս կամուրջ Արեւմուտքի եւ կասպիական ու կենտրոնասիական տարածաշրջանի միջեւ: Քանի որ ճանապարհը դէպի Կասպից

Ծով եւ Կենտրոնական Ասիա ընկած էր Հարաւային Կովկասով, Թուրքիան շահագրգռուած էր այդ տարածաշրջանների քաղաքական կայունութեամբ եւ այդ իսկ պատճառով Ադրբեջանի եւ Վրաստանի անկախութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը համարում էր իր ռազմավարական նպատակներից մէկը[14]:

Այս համապատկերում անվտանգութեան տեսանկիւնից թէեւ Թուրքիայի համար խորհրդային վտանգը վերացել էր, այնուամենայնիւ Հարաւային Կովկասում ընթացող ազգամիջեան հակամարտութիւնները պարունակում էին տարածաշրջանում երկարատեւ անկայունութեան լուրջ վտանգ: Սա, անկասկած, անցանկալի էր ոչ միայն Թուրքիայի, այլեւ նրա արեւմտեան գործընկերների համար: Այս համապատկերում, ինչպէս նշում է Ելենա Ուռազովան. «*Թուրքիան, ջանալով աշխուժօրէն ներգրաւուել յետխորհրդային տարածաշրջանում ընթացող գործընթացներին, փորձում էր ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Դրանով իսկ Թուրքիան ցանկանում էր ՆԱՏՕի հարաւային յենակէտից դառնալ Արեւմտեան եւ Եւրասիական աշխարհները կապող աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական կամուրջ՝ բարձրացնելով իր կարգավիճակը Արեւմուտքի աչքերում որպէս տարածաշրջանում նոր համընդհանուր միտումների «ուղեկցորդ»*»[15]:

Գ. «ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈԴԷԼ»Ի ԳԱՂԱՓԱՐԸ ՈՐՊԷՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Թուրքիան Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր քաղաքականութիւնն իրականացնելիս ստացաւ Արեւմուտքի աջակցութիւնը, որի դրդապատճառների մասին են վկայում 1992 Նոյեմբերին ԱՄՆի լրատուամիջոցների հրապարակումները. այնտեղ նշւում էր, որ Թուրքիան փորձում էր օգնել նոր մահմեդական երկրներին դառնալու աշխարհիկ պետութիւններ՝ կամրջի դեր կատարելով Արեւմուտքի, Բալկան-ների եւ Մերձաւոր Արեւելքի միջեւ: «*Տարածաշրջանում, որտեղ խոր էթնիկական հակասութիւններ ու թշնամութիւն կայ,*

Թուրքիայի հետ բարեկամութիւնը կենսական նշանակութիւն ունի Արեւմուտքի համար»[16]:

Յետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական եւ ռազմավարական նշանակութեան մեծացումը եւ Արեւմուտքի կողմից այդ փաստի ընդունումը որոշիչ գործօններ հանդիսացան Թուրքիայի արտաքին քաղաքական ուղու ձեւաւորման գործում: Օգտուելով Ռուսաստանի դիրքերի եւ ազդեցութեան էական թուլացումից եւ ունենալով Արեւմուտքի աջակցութիւնը՝ Թուրքիայի ղեկավարները սկսեցին յաւակնոտ յայտարարութիւններ անել, թէ իբր Թուրքիայի գլխաւորութեամբ ստեղծուելու է 120 միլիոն թիւրքալեզու բնակչութեամբ նոր թիւրքական աշխարհ: Մասնաւորապէս, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն, ի լուր աշխարհի յայտարարեց, որ 21րդ դարը լինելու է «թիւրքական դար»[17]:

Աւելի ուշ նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւններ իր այցելութեան ժամանակ Թուրքիայի վարչապետ Դեմիրէլը յայտարարեց, որ նոր թիւրքական աշխարհ եւ նոր քարտէզ է ձեւաւորւում: Հինգ նոր դրօշներ իրենց կիսալուսիններով աւելացել են Թուրքիայի դրօշի կողքին: Մեծ թիւրքական աշխարհը տարածուելու է Ադրիատիկից մինչեւ Չինական Ծով[18]:

Թուրքիայի պետական շրջանակներում տիրող այս ոգեշնչման պայմաններում կրկին վերածնուեց այսպէս կոչուած «թիւրքական միասնութեան» գաղափարը, որը 1990ականների սկզբներին աշխուժօրէն քննարկւում էր թուրքական մամուլում: Մասնաւորապէս, *Ենի Ֆորում* ամսագրի էջերում տեղ գտած «Ուշադրութիւն Դէպի Թիւրքական Աշխարհը» վերնագրով ծաւալուն յօդուածում վերլուծւում են այն լծակները, որոնք Թուրքիան կարող է օգտագործել ներթափանցելու համար նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնները: Մասնաւորապէս առանձնացւում էր կրօնական գործօնը[19]:

Յօդուածում նշւում էր, որ Թուրքիայի ամենամեծ խնդիրներից մէկն այն է, որ իր արտաքին քաղաքականութեան մէջ նա երկարատեւ միայնութեան մէջ է եղել: Ըստ յօդուածագրի, Թուրքիան չի պատկանում ո՛չ արաբական աշխարհին, ո՛չ Եւրոպային, ո՛չ սլաւոնական, ո՛չ էլ անգլօ-սաքսոնական աշխարհին: Լինելով մուսուլման՝ թուրքերը չեն կարող վստահել

քրիստոնեաներին, լինելով աշխարհիկ պետութիւն՝ դուրս են մնում նաեւ իսլամական աշխարհից: «Մեր միակ յոյսը մեր թիւրքալեզու եղբայրներն են»[20]:

Աշխարհաքաղաքական որոշ փոփոխութիւնների համապատկերում Թուրքիան մեծապէս փորձեց օգտուել այն հանգամանքից, որ ԽՍՀՄի փոխարէն Հարաւային Կովկասում յայտնուեցին երեք նորանկախ հանրապետութիւններ՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, իսկ Կենտրոնական Ասիայում՝ հինգ մահմեդական հանրապետութիւններ՝ Ղազախստանը, Ղըրղզստանը, Ուզբէկստանը, Թուրքմէնստանը եւ Տաջիկստանը, որտեղ ԽՍՀՄ փլուզումից յետոյ առաջացել էր քաղաքական թափուր: 1990ականներին այդ թափուրը լցնելու համար լուրջ մրցակցութիւն կար Թուրքիայի եւ Իրանի միջեւ: Այդ մրցապայքարում Արեւմուտքն էական աջակցութիւն ցուցաբերեց Թուրքիային, քանզի Արեւմուտքը լուրջ մտավախութիւն ունէր, որ նորանկախ իսլամադաւան երկրները կարող էին ընկնել իրանական իսլամիստական վարչակարգի ազդեցութեան տակ: Ուստի ԱՄՆի կողմից առաջ քաշուեց «թուրքական մոդէլ»ը[21], որպէս հակակշիռ իրանական կրօնապետութեան[22]:

«Թուրքական մոդէլ»ը, ըստ էութեան, մեծամասամբ մահմեդական բնակչութիւն եւ ժողովրդավարական համակարգ ունեցող աշխարհիկ պետութիւնն էր, որը սերտօրէն համագործակցելու էր Արեւմուտքի հետ:

Առաջ քաշելով «թուրքական մոդէլ»ի գաղափարը՝ ԱՄՆը ցանկանում էր իր ամենավստահելի դաշնակիցներից մէկի՝ Թուրքիայի, օգնութեամբ ոչ միայն վերացնել իրանական սպառնալիքը յետխորհրդային տարածաշրջանում, այլեւ օգտագործել Թուրքիան՝ հասնելու իր գլխաւոր նպատակներից մէկին՝ հնարաւորինս թուլացնելու Ռուսաստանի ազդեցութիւնը նորաստեղծ ԱՊՀ տարածաշրջանում: Այս հարցի շուրջ Թուրքիայի եւ ԱՄՆի շահերը համընկնում էին, քանզի Թուրքիան ոչ միայն էապէս շահագրգռուած էր ամրապնդելու իր դիրքերը Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, այլեւ հանդէս գալու, որպէս Ռուսաստանին հակակշռող գործօն՝ յետխորհրդային տարածաշրջանում: Ուստի Թուրքիան ողջունեց Արեւմուտքի դիրքորոշումը, ինչը հնարաւորութիւն էր ընձեռում

նրան ամրապնդելու իր դիրքերը միջազգային թատերաբեմում, մասնաւորապէս՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ տարածաշրջանային մրցապայքարում:

«Թուրքական մոդէլ»ի իրականացման գործընթացում 1990ականների հենց սկզբից Թուրքիայի եւ թիւրքալեզու երկրների միջեւ նկատւում են մերձեցման մեծ ներուժ եւ ձգտումներ: Թուրքիան, լինելով ՆԱՏՕի անդամ եւ վայելելով Արեւմուտքի աջակցութիւնը, բացառիկ հետաքրքրութիւն էր ներկայացնում նորանկախ թիւրքալեզու մահմեդական հանրապետութիւնների համար: Ուստի Թուրքիայի աշխուժ ներթափանցումը վերոյիշեալ երկրներ՝ սկզբնական շրջանում վայելում էր տեղի իշխանութիւնների աջակցութիւնը, քանզի նրանք Թուրքիայի օգնութեամբ ձգտում էին ոչ միայն զարգացնել իրենց տնտեսութիւնները, Արեւմուտքից ստանալ ֆինանսական աջակցութիւն, այլ նաեւ համարկուել եւրատլանտեան կառոյցներ[23]:

Թուրքիան նոյնպէս գործնական քայլեր էր ձեռնարկում՝ զարգացնելու իր յարաբերութիւնները նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ: Մասնաւորապէս, 1991 Հոկտեմբերին Թուրքիայի Արտաքին Գործերի Նախարարութիւնում յատուկ բաժին է ստեղծւում, որը պէտք է զբաղուէր նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ յարաբերութիւններով[24]: 1992ի սկզբներին Թուրքիան հիմնեց Թուրքական Համագործակցութեան Եւ Զարգացման Գործակալութիւնը, որի նպատակն էր բարելաւել յարաբերութիւնները թիւրքալեզու հանրապետութիւնների հետ[25]:

Թուրքիան մեծապէս շահագրգռուած էր զարգացնելու տնտեսական յարաբերութիւններն ԱՊՀ թիւրքալեզու երկրների հետ: Մասնաւորապէս, Թուրքիայի կողմից հիմնադրուած Թուրքական Առեւտրի եւ Զարգացման Բանկը միլիոնաւոր դոլարների վարկեր էր տրամադրում նորանկախ երկրներին: Թուրքական ընկերութիւններն աշխուժօրէն ներգրաւուած էին նորանկախ հանրապետութիւնների հեռահաղորդակցութեան, շինարարութեան եւ այլ ոլորտներում: Բացի այդ, 1993ին Թուրքիայում հիմնուեց նախկին ԽՍՀՄ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ տնտեսական կապերի հարցերով յատուկ

նախարարութիւն[26]: Թուրքիան նաեւ մեծ ելեւմտական ներդրումներ էր անում մահմեդական հանրապետութիւններում: 1990ականների սկզբներին նա աւելի քան 1 միլիարդ դոլարի վարկ էր բացել Կենտրոնական Ասիայի հանրապետութիւնների համար[27]:

Թուրքիան, յետխորհրդային տարածաշրջանում իրականացնելով աշխուժ տնտեսական, ելեւմտավարկային քաղաքականութիւն՝ ձգտում էր հանդէս գալ որպէս կամուրջ Արեւմուտքի եւ Հարաւային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի միջեւ, որի ամենաակնառու դրսեւորումներից էր Թուրքիայի նախագահ Դեմիրէլի յայտարարութիւնը, թէ Թուրքիան ԱՊՀ թիւրքալեզու հանրապետութիւնների համար ծառայում է որպէս «պատուհան դէպի արտաքին աշխարհ»[28]:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին Թուրքիան, օգտուելով ստեղծուած նպաստաւոր պայմաններից, որոշակի յաջողութիւններ ունեցաւ Հարաւային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ յարաբերութիւնների զարգացման գործընթացում: Ակնյայտ է, որ «թուրքական մոդէլ»ի իրականացման միւս կարեւոր նպատակն ուղղուած էր յետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցութեան թուլացմանը: Ուստի Թուրքիայի աշխուժ քաղաքականութիւնը յետխորհրդային հանրապետութիւններում առաջացնում էր Ռուսաստանի լուրջ մտահոգութիւնը, որը յանգեցնում էր ռուս-թուրքական յարաբերութիւնների լարուածութեան:

Հաշուի առնելով 90ականների սկզբներին Արեւմուտքի եւ Թուրքիայի գնալով մեծացող ներգրաւուածութիւնը յետխորհրդային տարածաշրջանում, Ռուսաստանում առկայ ներքաղաքական եւ ընկերա-տնտեսական ծանր իրավիճակը եւ արտաքին յարաբերութիւններում իր համար ոչ-բարենպաստ մթնոլորտը՝ Ռուսաստանը մշակեց արտաքին յարաբերութիւններ-ի բնագաւառում նոր հայեցակարգային մօտեցումներ, որոնք 1993 Ապրիլին հռչակուեցին, իբրեւ պաշտօնական քաղաքականութեան հիմնադրոյթներ: Հենց այդ ռազմավարական մօտեցումներն էլ շուտով վերածուեցին ՌԴ հայեցակարգային քաղաքականութեան հիմնադրոյթների, որտեղ

էական նշանակութիւն էր տրւում ԱՊՀ-ին[29]: Ռուսաստանի քաղաքական եւ ռազմական ղեկավարները յայտարարեցին, որ ԱՊՀն հանդիսանում է Ռուսաստանի «կենսական շահերի ոլորտը»: Մասնաւորապէս, 1994 Փետրուարին Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրէյ Կոզիրեւը նշեց. «Մենք չենք կարող հեռանալ հարաւկովկասեան տարածաշրջանից այսքան հեշտութեամբ: Մենք պատմական եւ աշխարհաքաղաքական շահեր ունենք այստեղ»[30]:

Ռուսաստանը սկսեց աշխուժօրէն ներգրաւուել եւ ուժեղացնել իր ազդեցութիւնն ԱՊՀ երկրներում: Հարաւային Կովկասում իր դիրքերը վերականգնելու համար Ռուսաստանը օգտագործեց տարածաշրջանային հակամարտութիւնները, ինչը բխում էր ՌԴ արտաքին քաղաքականութեան հիմնադրոյթներից: Այսպէս, 1993 Նոյեմբերի 2ի ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով հաստատուեց ռուսական ռազմական վարդապետութիւնը, որտեղ որպէս առաջնահերթ նպատակներ, նշւում էին հակամարտութիւնների եւ ռազմական գործողութիւնների կանխումը եւ խաղաղութեան հաստատումը[31]:

Ռուսաստանի աշխուժ ներգրաւուածութիւնն ԱՊՀ ողջ տարածաշրջանում յանգեցրեց նրան, որ Թուրքիայի դիրքերը սկսեցին թուլանալ: Սա անկասկած իր ազդեցութիւնն ունեցաւ «թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան վրայ, որն 1993-94ին գնաց ձախողման: «Թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան ձախողումը ունէր միքանի պատճառներ:

Չնայած 90ականների հենց սկզբից թիւրքալեզու երկրների միջեւ մերձեցման մեծ ներուժին եւ ձգտումներին՝ միջինասիական հանրապետութիւնների յետագայ քաղաքականութիւնը վկայում է, որ վերջիններս, այնուամենայնիւ, գերադասեցին «թուրքական մոդէլ»ից դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել: Նրանք չէին ցանկանում լինել Թուրքիայի ենթակայութեան տակ գտնուող երկրներ եւ նախընտրեցին Արեւմուտքի, Ռուսաստանի ու այլ երկրների հետ տնտեսական եւ քաղաքական յարաբերութիւնները զարգացնել ինքնուրոյն[32]: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիան տնտեսապէս համեմատաբար թոյլ երկիր էր: Թուրքիայի տարածաշրջանային յաւակնոտ նախագծերը եւ նրա ջանքերը Կենտրոնական

Ասիայում եւ Հարաւային Կովկասում խափանուեցին Անկարայի սահմանափակ կարողութիւնների պատճառով[33]:

Ռուսական զօրքերի առկայութիւնը Վրաստանում, Հայաստանում եւ Տաջիկստանում, հզօր տնտեսական լծակները՝ գազը եւ էներգակիրները, եւ նրա կարողութիւնը՝ վերահսկելու տարածաշրջանային հակամարտութիւնները, ստիպեցին տարածաշրջանի ղեկավարներին ուշադրութիւն դարձնել Ռուսաստանի ցանկութիւններին[34]: Միւս կողմից, «թուրքական մոդէլ»ը կորցրեց իր գրաւչութիւնն ինչպէս յետխորհրդային հանրապետութիւնների, այնպէս էլ Արեւմուտքի համար: Թուրքական քաղաքական համակարգը, ի վերջոյ, այնքան էլ գրաւիչ չէր Կենտրոնական Ասիայի եւ Հարաւային Կովկասի ղեկավարների համար, որոնք քիչ շահ ունէին իրենց երկրներում խրախուսելու աւելի լայն քաղաքական մասնակցութիւնը եւ բազմակարծութիւնը: Իր հերթին Արեւմուտքը հասկացաւ, որ իր սկզբնական մտավախութիւններն Իրանի ազդեցութեան առնչութեամբ չափազանցուած են[35]:

Դ. ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1990ականների սկզբներին Թուրքիայի հարաւկովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներից էր նաեւ ԽՍՀՄ փլուզմամբ Թուրքիայում նոր թափով սկիզբ առած պանթիւրքիզմի գաղափարախօսութեան դրսեւորումները: Մասնաւորապէս, 1990ականների սկզբներին Թուրքիայի մի շարք գիտնականներ, քաղաքագէտներ եւ որոշ պաշտօնատարներ յայտարարեցին պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման անհրաժեշտութեան մասին: Ըստ Այդըն Եալչինի, Խորհրդային Միութեան փլուզումը եւ կոմունիզմի վարկաբեկումն «ապահովել են հասարակական մտքի աջակցութիւնը պանթիւրքիզմին»[36]:

Յատկանշական է, որ Թուրքիայի դիւանագիտական շրջանակներն աւելի զգուշօրէն էին ձեւակերպում պանթիւրքիստական հայեցակարգի վերածնունդն՝ այն որակելով ոչ թէ սերտօրէն փոխկապուած թիւրքական քաղաքական միութիւն, այլ թիւրքական երկրների խումբ, որտեղ Թուրքիան

ունենալու էր տնտեսական եւ քաղաքական ղեկավարող դեր: Օրինակ, Թուրքիայի Արտգործնախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար Բիլալ Սամջրը անդրադառնալով նէօպանթիւրքիզմի գաղափարին, նշել էր, որ այն կարող էր յանգեցնել Սկանդինաւեան Միութեան, Արաբական Երկրների Լիգայի կամ Ամերիկեան Երկրների Կազմակերպութեան նման մի միութեան: Բնականաբար, Թուրքիան առաջատար դեր էր խաղալու նման կազմակերպութեան ձեւաւորման հարցում: Ըստ նրա, ճիշտ չէր այն որակել պանթիւրքիզմ կամ ծաւալողապաշտութիւն, քանի որ, եթէ սկանդինաւները, արաբները եւ միւս ժողովուրդները ունեն նման միութիւն, ապա թիւրք ժողովուրդներին եւս դա կարելի է[37]:

Աւելի արմատական երանգներ էին պարունակում թուրքական ծայրայեղ ազգայնականների եւ պանթիւրքիստների հրապարակումները, որոնց կարծիքով ԽՍՀՄ փլուզման արդիւնքում «թիւրքական աշխարհ»ի ծրագրերն իրական հեռանկարներ էին ստացել: Օրինակ կարող է ծառայել պրոֆեսոր Օզէյի գիրքը: Գրքում հեղինակը տալիս է թիւրքական աշխարհի ընդարձակ բացատրութիւնը, նրա աշխարհաքաղաքական առանձնայատուկ նշանակութիւնը ներկայում եւ ապագայում: Ըստ Օզէյի հաշուարկների, «թիւրքական աշխարհ»ի բնակչութեան ընդհանուր թիւը կազմում է 250 մլն., որոնց գերակշիռ մեծամասնութիւնը բնակեցուած է եւրասիական տարածաշրջանի տարածքներում՝ Ադրիատիկից մինչ Չինաստան: Օզէյը նաեւ ընդգծում է «թիւրքական աշխարհ»ի աշխարհաքաղաքական մեծ նշանակութիւնը եւ շեշտում, որ Թիւրքական Միութեան (Türk Birliği) գաղափարը պաշտպանում են ոչ միայն յետխորհրդային թիւրքական հանրապետութիւնների ղեկավարները, այլեւ՝ «թիւրքական աշխարհի ժողովուրդները»[38]: Ըստ էութեան, «թուրքական մոդէլ»ի քաղաքականութիւնը պանթիւրքիզմի նորագոյն դրսեւորումներից էր, որը Թուրքիան իրականացնում էր բացայայտ, եւ նրա շրջանակները ընդգրկում էին ԱՊՀ նորանկախ թիւրքալեզու մահմեդական հանրապետութիւնները:

Պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման մէջ առանձնայատուկ կարեւորութիւն էին ներկայացնում նաեւ

Ռուսաստանի մաս կազմող ինքնավար մահմեդական հանրապետութիւնները[39]:

Թուրքիայի որոշ շրջանակներ աշխուժ քայլեր էին ձեռնարկում ուժեղացնելու իրենց ազդեցութիւնը Ռուսաստանի մաս կազմող մահմեդական շրջաններում, մասնաւորապէս՝ Թաթարստանում, Բաշկորտոստանում, Եակուտիայում եւ յատկապէս հիւսիսկովկասեան հանրապետութիւններում: Մասնաւորապէս, թուրքական յատուկ ծառայութիւններն ու պանթիւրքիստական կազմակերպութիւնները հսկայ ջանքեր էին գործադրում՝ իրականացնելու տարածաշրջանային համարկման տարբեր նախագծեր՝ «Կովկասեան միութիւն», «Կովկասի իսլամական համադաշնութիւն», «Կովկասեան տուն», որի գլխաւոր նպատակն էր ստեղծել Ռուսաստանի կազմից դուրս Հիւսիսկովկասեան համադաշնութիւն կամ միութիւն: «Կովկասեան միութեան» գաղափարը նպատակ էր հետապնդում ստեղծելու միութիւն, որի մէջ ընդգրկուելու էին Ադրբեջանը, Վրաստանը եւ հիւսիսկովկասեան հանրապետութիւնները: Այս նախագծում մասնակցում էին պաշտօնական Բաքուի եւ Թբիլիսիի առաջին դէմքերը, նրանց մերձաւոր շրջապատը եւ ադրբեջանական ու վրացական յատուկ ծառայութիւնները[40]:

Թէեւ Թուրքիան պաշտօնական մակարդակով յայտարարում էր, թէ չի աջակցում պանթիւրքիզմի դրսեւորումներին, սակայն, դա իրականութեանը չէր համապատասխանում: Օրինակ, 1993ին Թուրքիայում Թիւրքական Պետութիւնների եւ Համայնքների Ընկերակցութեան, Եղբայրութեան եւ Համագործակցութեան Հիմնադրամի (TÜDEV) ֆինանսաւորմամբ Անկարան կազմակերպեց թիւրքական պետութիւնների եւ համայնքների հաւաքները: Այդ պանթիւրքական ժողովին մասնակցելու համար Թուրքիա էին ժամանել պատուիրակութիւններ ոչ միայն Հիւսիսային Կիպրոսից, Կենտրոնական Ասիայից եւ Անդրկովկասից, այլ նաեւ՝ Ռուսաստանի Դաշնութեան թիւրքալեզու հանրապետութիւններից՝ Թաթարստանից, Բաշկորտոստանից, Եակուտիայից[41]: Թէեւ այս ժողովները ոչ-պաշտօնական բնոյթ էին կրում եւ չէին արտօնուել Թուրքիայի Արտգործնախարարութեան կողմից, սակայն թուրքական ազդեցիկ քաղաքական գործիչները - ներառեալ նախագահ

Օզալը, վարչապետ Դեմիրէլը եւ ԱԳ նախարար Թանսու Չիլլէրը - հարկ համարեցին ներկայ գտնուել այդ ժողովներին եւ ելոյթ ունենալ: Յիշարժան են յատկապէս 1994ին Թուրքիայի նախագահ Դեմիրէլի խօսքերը. «Երկար տարիների ընթացքում մենք կիսում էինք Ռուսաստանի գերիշխանութեան տակ գտնուող եղբայրական երկրների ճակատագիրը: Ռուսական գերիշխանութիւնից ազատուած ժողովուրդները պէտք է դողան վաստակած անկախութեան համար: Թուրքիայի հետաքրքրութիւնը տարածաշրջանային գործերում ելնում է «թիւրքական հասարակութեան» իրավիճակի հանդէպ նրա խորը պատասխանատուութիւնից»[42]:

Յատկանշական է, որ բացի Ռուսաստանից, Հարաւային Կովկասում Թուրքիան իր պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման գլխաւոր խոչընդոտ համարում էր Հայաստանը: Թուրքիան Հարաւային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ Ադրբեջանը որպէս ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ունէր՝ թիւրքալեզու հանրապետութիւնների տնտեսական, քաղաքական եւ մշակութային միութիւն ձեւաւորելու հեռահար նպատակով: Ուստի, Հայաստանն իր գոյութեամբ նրա երկարաժամկէտ շահերի խոչընդոտ համարուեց[43]:

Դեռեւս պանթիւրքիզմի հիմնադիրներից Եուսուֆ Աքչուրան Հայաստանը նոյնացնում էր «թմբի» հետ: 1920 Յունուարի 29ին Աքչուրան Ստամբուլի Համալսարանում ներկաներին դիմելիս, պատճառաբանելով, թէ դաշնակիցները նրան իբրեւ թումբ ուզում են կանգնեցնել երկու եղբայր ժողովուրդների՝ Անատոլիայի եւ Կովկասի թրքութեան միջեւ, կոչ էր անում. «պէտք է ոչնչացնել Հայաստանը»[44]:

Հայաստանը եւ Արցախը, որպէս «Մեծ Թուրան» պետութեան գլխաւոր խոչընդոտ էր համարւում նաեւ ադրբեջանցի Նեսիբ Նեսիբզադէի կողմից առաջ քաշուած «*Ադրբեջանի առաքելութիւնը Նոր Թուրանի ստեղծման տեսանկիւնից*» նէօթուրանիզմի հայեցակարգում, որտեղ հեղինակը նշում էր, որ Նոր Թուրանում ամենակարեւոր դիրքը պատկանում էր Ադրբեջանին, քանի որ այն գտնուում էր «Թուրանի սրտում»: Հետեւաբար, Ադրբեջանին սպառնացող վտանգը սպառնալիք էր

ապագայ Թուրան պետութեան համար: Ուստի պէտք էր կանխել Արցախի անջատումն Ադրբեջանից եւ խանգարել Հայաստանի ուժեղացմանը տարածաշրջանում[45]:

Թիւրքական աշխարհի ներսում Ադրբեջանի կարեւորութեանն է անդրադարձել նաեւ թուրք հեղինակ Մուզաֆէր Օզդաղը: Ըստ հեղինակի, աշխարհի թուրքախօս բնակչութեան մօտ 80%ը բնակւում է Թուրքիա-Ադրբեջան-Թուրքեստան շրջանում: Այստեղ թուրքախօս բնակչութեան թիւը հասնում է մօտ 130 միլիոնի: Թուրքիան եւ Թուրքեստանը թիւրքականութեան երկու ուժային թեւերն են, իսկ Ադրբեջանը հանդիսանում է այս երկուսը միաւորող սրբազան կամուրջ[46]: Նա նաեւ նշում է, որ իրենց համար գոյութիւն չունի թիւրքականութիւնից դուրս, թիւրքական աշխարհին օտար ազերի ազգ, այլ իրենց համար գոյութիւն ունի փառաւոր անցեալ եւ փայլուն ապագայ ունեցող, մեծ թիւրքական ազգի երկիր հանդիսացող եղբայրական Ադրբեջան[47]:

Այսպիսով, Հայաստանը իր գոյութեամբ խոչընդոտ էր հանդիսանում թիւրքալեզու ժողովուրդների միաւորման թուրքական տրամաբանութեանը: Սակայն այստեղ հարցը միայն թուրքերի ադրբեջանցիներից տարանջատուելը չէր, այլեւ՝ Հարաւային Կովկասում Ռուսաստանի թուլացման ամերիկեան ծրագրերն էին, որոնց իրականացման գործում Թուրքիան մեծ պատրաստակամութիւն էր յայտնել:

Պանթիւրքիզմի նմանատիպ դրսեւորումների կապակցութեամբ թուրքական *Միլլիյէթ* թերթին տուած հարցազրոյցում Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշեւը, անդրադառնալով Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ազդեցութեան ուժեղացմանը եւ պանթիւրքիզմի դրսեւորումներին, նշեց, որ Ռուսաստանը նորմալ է վերաբերւում այդ երկրների հետ Թուրքիայի յարաբերութիւնների զարգացմանը: Սակայն այդ յարաբերութիւնների զարգացումը չպէտք է տեղի ունենայ պանթիւրքիզմի շրջանակներում: Եթէ Թուրքիայի եւ այդ հանրապետութիւնների միջեւ յարաբերութիւնները զարգանային ըստ միջազգային կանոնակարգերի ու չափանիշների, անհանգստութեան որեւէ պատճառ չէր լինի[48]:

Ե. ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Թուրքիայի հարաւկովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներից էր թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները: Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի նախագահութեան օրօք (1990-1992) թուրք-ադրբեջանական յարաբերութիւններն այդքան էլ հարթ չէին ընթանում: Մութալիբովի նախագահութեան ժամանակ Թուրքիան թէեւ աջակցում էր Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ընթացքում, սակայն դժգոհ էր նրա վարած արտաքին քաղաքականութիւնից, մասնաւորապէս նրա ռուսամէտ դիրքորոշումից[49]: Իրավիճակը փոխուեց 1992 Մարտի 6ին Մութալիբովի հրաժարականից յետոյ, ինչի արդիւնքում 1992 Յունիսին Ադրբեջանում իշխանութեան եկաւ Աբուլֆէզ Էլչիբէյը, որն էլ թուրք-ադրբեջանական յարաբերութիւնների ընդլայնման եւ ամրապնդման համար կարեւոր գործօն հանդիսացաւ[50]:

Նրա ժամանակ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերուեց սկզբունքային պայմանաւորուածութիւն Բաքու-Ջէյհան նաւթատարի կառուցման վերաբերեալ: Նախագահ ընտրուելուց յետոյ Էլչիբէյն սկսեց վարել խիստ թուրքամէտ եւ ընդգծուած հակառուսական քաղաքականութիւն: Նա իրեն համարում էր պանթիւրքիզմի գաղափարակիր եւ թուրք-ադրբեջանական սերտ յարաբերութիւնների կողմնակից[51]:

Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի իշխանութիւնների ջերմ վերաբերմունքը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ Ադրբեջանը կարեւոր տեղ էր զբաղեցնում պանթիւրքիզմի եւ «թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան գործընթացում. Թուրքիայի համար խիստ կարեւոր նշանակութիւն ունէր նաեւ ադրբեջանական նաւթը, որի նկատմամբ մեծացել էր Թուրքիայի եւ Արեւմուտքի հետաքրքրութիւնը:

Էլչիբէյի հակառուսական տրամադրուածութիւնն էապէս նպաստում էր Ադրբեջանում Թուրքիայի ազդեցութեան ամրապնդմանը: Օրինակ, 1992ին դեռեւս լինելով նախագահի թեկնածու՝ Էլչիբէյը յայտարարել էր, որ Ադրբեջանը չի անդամակցելու ԱՊՀին: 1992 Հոկտեմբերին Ադրբեջանի

խորհրդարանը միաձայն դէմ քուէարկեց ԱՊՀին Ադրբեջանի անդամակցութեանը[52]:

1993 Յունիսի 4ին Էլչիբէյի հրաժարականից յետոյ իշխանութեան եկած Հէյդար Ալիեւի օրօք ադրբեջանական ղեկավարութիւնը որոշակի շտկումներ մտցրեց չափից աւելի միակողմանի թուրքամէտ արտաքին քաղաքականութեան մէջ՝ դադարեցնելով մի շարք նաւթային պայմանագրերի իրագործումը, որոնցում արեւմտեան նաւթային ընկերութիւնները գերակշռող դիրք էին գրաւում: Աւելին, Ադրբեջանն ընդգրկուեց ԱՊՀ կազմում[53]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խորհրդային Միութեան փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարաւորութիւններ ընձեռեց: Թուրքիան սկսեց աշխուժ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարաւային Կովկաս, որը աշխարհաքաղաքական եւ տնտեսական մեծ կարեւորութիւն էր ներկայացնում իր համար՝ դիտարկուելով նաեւ որպէս իւրատեսակ կամուրջ դէպի Կենտրոնական Ասիայի թիւրքական նորանկախ հանրապետութիւնները:

2. Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր քաղաքականութիւնն իրականացնելիս Թուրքիան ստացաւ Արեւմուտքի եւ մասնաւորապէս ԱՄՆի աջակցութիւնը, ինչը պայմանաւորուած էր Արեւմուտքի կողմից վերոյիշեալ տարածաշրջաններում Ռուսաստանի աշխարհաքաղաքական գերակայութեան վերականգնման բացառման քաղաքական ուղու իրականացմամբ:

3. Չնայած 90ականների հենց սկզբից թիւրքալեզու երկրների միջեւ մերձեցման մեծ ներուժին եւ ձգտումներին. վերջիններս, այնուամենայնիւ, գերադասեցին «թուրքական մոդէլ»ից դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել:

4. «Թուրքական մոդէլ»ի ձախողմանը մեծապէս նպաստեց նաեւ Ռուսաստանի աշխուժ ներգրաւուածութիւնը եւ ԱՊՀ երկրներում ազդեցութեան ընդլայնման ուղղուած քայլերը: Հարաւային Կովկասում իր դիրքերը վերականգնելու համար Ռուսաստանը օգտագործեց տարածաշրջանային

հակամարտութիւնները:

5. «Թուրքական մոդէլ»ը կորցրեց իր գրաւչութիւնը նաեւ Արեւմուտքի համար:

6. Թուրքիայի հարաւկովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներից էր Ադրբեջանը, որը հանդիսանում էր հարաւկովկասեան տարածաշրջանում Թուրքիայի ամենասերտ դաշնակիցը:

7. Թուրք-ադրբեջանական յարաբերութիւնների ընդլայնման եւ ամրապնդման համար առանձնակի կարեւոր գործօն հանդիսացաւ Էլչիբէյի գլխաւորութեամբ «Ազգային ճակատ»ի իշխանութեան գալը:

8. Թուրքիայի հարաւկովկասեան քաղաքականութեան կարեւոր գործօններից էր նաեւ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով Թուրքիայում նոր թափով վերսկսուած պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը:

9. Թուրքիան Հարաւային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ Ադրբեջանը որպէս ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ունէր՝ թիւրքալեզու հանրապետութիւնների տնտեսական, քաղաքական եւ մշակութային միութիւն ձեւաւորելու հեռահար նպատակով:

10. Ռուսաստանից բացի Հարաւային Կովկասում Թուրքիան իր պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման գլխաւոր խոչընդոտ համարում էր Հայաստանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] T. Torosyan, "The Return of Turkey," *Russia in Global Affairs,* № 3, July-September 2009, էջ 124. նաեւ՝ Գրիգոր Արշակեան, Ա. Եղիազարեան, «Թուրք-Ադրբեջանական Ռազմաքաղաքական Յարաբերութիւնները 1991-2001թթ.», *21-րդ Դար,* թիւ 5 (45), 2012, էջ 34:

[2] Գրիգոր Արշակեան, *Թուրքիայի Քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում 1991-2001թթ.*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2009, էջ 13:

[3] H. Kramer, "Will Central Asia become Turkey's Sphere of Influence", *Perceptions: Journal of International Affairs,* March-May, 1996, էջ 3:

[4] E S. Cornell, *The Nagorno-Karabakh Conflict*, Department of East European Studies, Uppsala University, 1999, էջ 64:

[5] K. S. Gadjiev, Geopolitika Kavkaza (Կովկասի աշխարհաքաղաքականութիւնը), Մոսկուա, Mejdunarodnaya Otnosheniya Հրատ., 2003, էջ 346:

[6] S. Sayari, "Turkey: The Changing European Security Environment and the Gulf Crisis", *Middle East Journal,* Vol. 46, No 1, Winter 1992, էջ 11:

[7] B. Oran, "The Turkish Approach to Transcaucasia and Central Asia", Ole Hoiris and Sefa Martin Yürükel (eds.), *Contrasts and Solutions in the Caucasus*, Aarhus, Aarhus University Press, 1998, էջ 462:

[8] Z. Avşar, Ferruh Solak, *Türkiye ve Türk Cumhuriyetleri* (Թուրքիան եւ Թուրքիոյ Հանրապետութիւնը), Ankara, 1994, էջ 7:

[9] Oran, էջ 463:

[10] Աւելի մանրամասն տե՛ս՝ Z. Brzezinskii, V*elikaya Shakhmatnaya Doska* (Շախմատային մեծ խաղատախտակ), Մոսկուա, Mejdunarodnaya Otnosheniya Հրատ., 1998, էջ 161:

[11] R. Safrastyan, "Ob Ideologicheskom Obosnovamii Regionalnoy Politiki Turtsii: Kontseptsia Yevrazia-Yujni Kavkaz," *Regionalnaya Bezopasnost I Stabilinost, Materiali Konferentsii* («Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականութեան գաղափարական հիմնաւորման շուրջ: Եւրասիա-Հարաւային Կովկաս հայեցակարգ». տարածաշրջանային անվտանգութիւն եւ կայունութեան համաժողովի նիւթեր), ընդհ. Խմբ.՝ Գայիանէ Նովիկովա, Երեւան, Ամրոց Գրուպ Հրատ., 2004, էջ 70-71:

[12] Նոյն, էջ 72:

[13] O. Kodjaman, *Yujnii Kavkaz V Politike Turtsii I Rossii V Postsovetskii Period*, (Հարաւային Կովկասը Թուրքիայի եւ Ռուսաստանի քաղաքականութեան մէջ յետխորհրդային ժամանակահատուածում), Մոսկուա, Ruskaya Panorama Հրատ., 2004, էջ 85:

[14] A. Karaosmanoğlu, *Turkey's Objectives in the Caspian Region, The Security of the Caspian Region*, Oxford, University Press, 2001, էջ 151. նաեւ՝ M. Aydin, "Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey", *Marco Polo Magazine*, Vol. 3, 1998, էջ 45. նաեւ նոյնի՝ "Turkish Foreign Policy: Framework and Analysis," *Stratejik Araştirmalar Merkezi*, Ankara, 2005, էջ 63:

[15] E. Oorazova, *Ekonomicheskoe Sotrudnichestvo Turtsii I Turtsikh Gosudarstv SNG*, (Թուրքիայի եւ ԱՊՀ թիւրքալեզու երկրների միջեւ համագործակցութիւնը), Մոսկուա, ASTI-Հրատ., 2003, էջ 22-23:

[16] Gadjiev, էջ 347:

[17] J. Naegele, "Turkey: Foreign Policy Objectives", Part Two, RFE/RL, 13.08.1998, www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe ; *Turkish Daily News*, 05.06.1992:

[18] D. Pipes, *The Event of Our Era*, New York, Council on Foreign Relations Press, 1994, էջ 16. նաեւ՝ M. G. Winrow, "Turkey's Relations with the Transcaucasus and the Central Asian Republics," *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, էջ 136:

[19] Ա. Յովհաննիսեան, «ԽՍՀՄի Փլուզումը, 'Թուրք Միասնութեան' Գաղափարը Եւ Ղարաբաղեան Հարցը (1990-1995ականների Թուրքական Հրապարակումների Լուսաբանմամբ)», *Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ*, թիւ 20, Երեւան, «Զանգակ-97», 2001, էջ 76:

[20] Նոյն, էջ 77:

[21] «Թուրքական մոդէլ»ի գաղափարն առաջ է քաշուել ԱՄՆ պետքարտուղար Ջէյմս Բէյքըրի կողմից: Նա 1992ի սկզբներին Կենտրոնական Ասիայի երկրներ այցելութեան ժամանակ նորանկախ հանրապետութիւնների ղեկավարներին խորհուրդ է տալիս օգտագործել «թուրքական մոդէլ»ը իրենց երկրների քաղաքական եւ տնտեսական զարգացման համար: Սակայն պէտք է ընդգծել, որ «թուրքական մոդէլ»ի ռազմավարութեան հեղինակն իրականում ամերիկեան RAND վերլուծական կենտրոնի առաջատար մասնագէտներից Պրոֆ. Գրէմ Ֆուլլերն էր: Շուտով «թուրքական մոդէլ»ին իրենց աջակցութիւնը յայտնեցին նաեւ ԱՄՆ եւ եւրոպական այլ բարձրաստիճան պաշտօնեաներ (Kramer, էջ 2. նաեւ՝ Ռ. Սաֆրաստեան, «Ռուսաստանը Եւ Թուրքիան Հարաւային Կովկասում. Աշխարհառազմավարական Զինադադար», *21-րդ Դար*, 2005, No. 4, էջ 36. նաեւ՝ I. Bal, "The Turkish Model and the Turkic Republics," *Perceptions: Journal of International Affairs*, September-November 1998, էջ 5):

[22] Kramer, էջ 2:

[23] M. G. Winrow, "Turkey and the Newly Independent States of Central Asia and Transcaucasus," *Middle East Review of International Affairs Journal* (MERIA), Volume 1, No. 2 - July 1997, էջ 6:

[24] Արշակեան, էջ 24:

[25] A. Kuratov, "Turtsia I Turkoyazichniye Gosudarstva Tsentralnoy Azii: Lyubov Po Raschetu?" (Թուրքիա եւ Կեդրոնական Ասիոյ թիւրքախօս պետութիւնները. սէր՝ ըստ հաշիւի՞)՝ *Rosiya I Turtsia Na Poroge XXI Veka: Na Puti V Evropu Ili V Evrazyu?* (Ռուսաստան եւ Թուրքիա. 21րդ դարի շէմին. Ճանապարհ դէպի Եւրոպա՞, թէ՞ Եւրասիա), էջ 24. նաեւ՝ Z. Onis, "Turkey and the Post-Soviet States: Potential and Limits of Regional Power," *MERIA*, Volume 5, No. 2, June 2001, էջ 2:

[26] A. Svarants, *Panturkizm V Geostrategii Turtsii V Kavkaze*, (Պանթիւրքիզմը Թուրքիայի աշխարհառազմավարութեան մաս Կովկասում), Մոսկուա, Gumanitari Հրատ., 2002, էջ 170:

[27] S. Bilge, "An Analysis of Turkish-Russian Relations," *Perceptions: Journal of International Affairs*, Volume II, June-August 1997, էջ 10:

[28] ITAR-TASS, 30.08. 1995:

[29] A. Dawisha and K. Dawisha, *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia*, New York, ME. Sharpe, 1995, էջ 96-97:

[30] Z. Brzezinski and P. Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: Documents, Data, and Analysis*, New York, ME. Sharpe, 1997, էջ 145-146:

[31] I. Tuncer, "The Security Policies of the Russian Federation: The 'Near Abroad' and Turkey," *Turkish Studies,* vol 1, No 2, Autumn 2000, էջ 100. նաեւ՝ Cornell, էջ 49:

[32] I. Torbakov, Ankara's Post-Soviet Efforts in the Caucasus and Central Asia: The Failure of the "Turkic World" Model, www.eurasianet.org/departments/insight/articles/eav122602_pr.shtml :

[33] M. Aydin, "Turkey and Central Asia: Challenges of Change," *Central Asian Survey*, Vol. 15, 1996, էջ 158:

[34] Kodjaman, էջ 161:

[35] Onis, էջ 4:

[36] Kodjaman, էջ 87:

[37] Նոյն:

[38] R. Özey, *Dünya Platformunda Türk Dünyasi*, (Համաշխարհային հարթակի թուրքական աշխարհը), İstanbul, 1999, «Aktif Yayinevi», էջ 22-23:

[39] Svarants, էջ 301:

[40] Նոյն, էջ 165.

[41] Winrow, *Turkey and Newly Independent States*..., էջ 4:

[42] *Nezavisimaya Gazeta*, 10.03.1996:

[43] Յ. Չաքրեան, «Հայ-Թուրքական Յարաբերութիւնները Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Քաղաքական Զարգացումների Ենթատեքստում», *21-րդ Դար*, 2003, No. 1, էջ 101:

[44] Զարեւանդ, *Միացեալ Անկախ Թուրանիա*, Երեւան, Հայաստան Հրատ., 1993, էջ 119:

[45] Յովհաննիսեան, էջ 78-79:

[46] M. Özdag, *Türkiye ve Türk Dünyasi Jeopolitiği* (Թուրքիան եւ թիւրքական աշխարհի աշխարհաքաղաքականութիւնը), Ankara, «Avrasya-Bir Vakfi Yayinlari», 2003, էջ 295:

[47] Նոյն, էջ 297:

[48] *Milliyet*, 26.04.1993:

[49] P. İpek, "Azerbaijan: Oil Boom and Challenges," *Turkey's Neighborhood*, Mustafa Kibaroglu (ed.) Ankara, Foreign Policy Institute, 2008, էջ 113:

[50] S. Goldenberg, *Pride of Small Nations: The Caucasus and Post-Soviet Disorder*, Zen Books, London, 1994, էջ 119-120:

[51] E. G. Fuller, *Turkey Faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union*, Santa Monica, RAND, 1992, էջ 56. նաեւ՝ Svarants, էջ 167:

[52] Kodjaman, էջ 114:

[53] T. Goltz, "Letter From Eurasia: The Hidden Russian Hand," *Foreign Policy*, No. 92, Fall, 1993, էջ 95-97:

THE DISINTEGRATION OF THE USSR AND TURKEY'S SOUTH CAUCASUS POLICY IN THE 1990S
(Summary)

GRİGOR ARSHAKİAN
garshakyan@mail.ru

The disintegration of the Soviet Union opened new geostrategic possibilities for Turkey. Turkey started to take active step to penetrate the South Caucasus. The region had both geopolitical and economic importance for Turkey. Moreover, it was the bridge that linked Turkey to the newly independent Turkic states of Central Asia.

For Turkey to implement its Caucasian and Central Asian policies it needed the support of the West. This support was granted as long as Turkey's policies served the interests of the West in undermining Russia's influence in the region. Thus, it came with no surprise that as of the 1990s, many of these Turkic states tried to adopt the "Turkish model" as a state building track.

However, the Turkish policy was opposed by Russia, which considered these states to fall within her zone of influence. Soon Russia initiated the Commonwealth of Independent States (CIS) and enhanced her influence by stepping in as mediator in the conflicts that flared up the region.

The article analyses the attempts of Turkey in enlarging its influence in the region, the factors and means it used to materialize its policy, the role of Azerbaijan in this process, and the support and backing it received from the West on the one hand and the steps taken by Ryssia to counter and foil the Turkis policy.

ԴԱՍԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ
armenag@gmail.com

Տառադարձութիւնը՝ որեւէ լեզուի բառերու այլ լեզուով արձանագրութիւնն է, որ կրնայ ըլլալ ժամանակաւոր կամ մնայուն: Թէեւ ստուգաբանօրէն կը կրենք այն տպաւորութիւնը, թէ «դարձողը» տառն է,- ինչ որ բոլորովին սխալ չէ անշուշտ,- կամ մի՛այն տառն է, սակայն խորքին մէջ տառադարձութիւնը լայնօրէն կը յենի թէ՛ փոխատու լեզուի, թէ՛ փոխառու լեզուի մէջ տուեալ բառի ունեցած արտասանութեան վրայ. վճռորոշ գործօնը, վերջին հաշուով, արտասանութիւնն է: Մեր մատենագրութեան արշալոյսին, այսինքն՝ Ե. դարու առաջին կէսին, հայերէնը տառադարձական շատ խոր ու լայնածիր աւանդոյթ հաստատած էր, քանի առաջին անգամ թուղթին պիտի յանձնուէր երեք իրարմէ բոլորովին տարբեր լեզուներէ՝ պարսկերէնէ, ասորերէնէ եւ յունարէնէ մասամբ նաեւ լատիներէնէ ու եբրայերէնէ, կատարուած տարաբնոյթ փոխառութիւններու հսկայ պաշար մը:

Ասոնցմէ՝ պարսկականները յառաջացած էին միայն բանաւոր ճամբով եւ ունէին ժողովրդախօսակցական երկար անցեալ մը, քանի պարսկերէնը մեր նախնիներուն ծանօթ էր բազմադարեան շփումներու ճամբով: Այս փոխառութիւնները, որոնց թիւը (մօտաւորապէս 1400 արմատ) կը գերազանցէ միւս բոլորինը, կը բնորոշուին իրենց, կարելի է ըսել, անմիօրինակութեամբ ու անկանոնութեամբ: Այպէս է քանի անոնք կատարուած են բանաւոր ճամբով, լսովի. հայը պարսկական բառերը արձանագրած է այնպէս, ինչպէս ընկալած է զանոնք պարսիկին բերնէն, մինչ գրաւոր պարսկերէնը դեր չէ ունեցած մեր մատենագրական բարքերուն մէջ: Այս պարագային միօրինակութիւնը հակամէտ էր խախտելու թէ՛ պարսիկ արտասանողին կողմէ, թէ՛ հայ ընկալողին կողմէ, որ միաժամանակ արձանագրողն էր: Ոչ մէկ գրաւոր աղբիւր[1] միջամտած է, որպէսզի հաւանական անմիօրինակութիւնները դարմանուէին կամ նուազէին:

Բաւական տարբեր է պատկերը ասորական փոխառութիւններուն, որոնց թիւը կը հասնի մօտաւորապէս 210-ի: Ասոնք կը բնորոշուին իրենց յարաբերական կանոնաւորութեամբ, քանի որ ասորերէնը, 4-5 դար շարունակ միայն բանաւոր ճամբով թափանցելէ ետք, Ե. դարուն գրաւոր շատ խոր արմատներ ձգեց մեր բարքերուն մէջ, մէկ կողմէ՝ շնորհիւ այն մեծաթիւ ասորի հոգեւորականներուն ու քարոզիչներուն, որոնք աւելի քան մէկ դարէ ի վեր կը գործէին Հայաստանի տարածքին՝ ի ձեռի ունենալով ասորական բնագրեր, միւս կողմէ՝ շնորհիւ այն հայ ուսանողներուն, որոնք ասորերէն սորվելու կ'երթային Եդեսիա կամ ասորական այլ ոստաններ, եւ վերջապէս շնորհիւ ասորական այն լայնածիր գրականութեան, ներառեալ Աստուածաշունչ մատեանը, որ հայերէն թարգմանուեցաւ: Այս բոլոր տուեալները ի մի գալով մեր մատենագրական բարքերուն մէջ յառաջացուցած են տառադարձական բաւական կայուն ու տոկուն աւանդոյթ մը, որ, ինչպէս ըսինք, կը բնորոշուի միօրինակութեան ու կանոնաւորութեան բարձր աստիճանով: Այսուամենայնիւ այս պարագային եւս կարգ մը աննշան խախտումներ ընդմիշտ բացակայ չեն, քանի որ մեր փոխառութիւններու հէնքը միայն գրաւոր չէ եղած: Հայ-ասորի դարաւոր հարեւանութիւնը, որ կարգ մը նահանգներու մէջ (Աղձնիք, Եդեսիա, Մծբին) իսկական գոյակցութեան կը հաւասարէր, բանաւոր ճամբով մեզի կտակած է բառեր, որոնք հակամէտ էին անմիօրինակութեան, ճիշդ այն նոյն ձեւով, որուն ականարկեցինք վերը պարսկական փոխառութեանց առթիւ: Թուենք մէկ-երկու օրինակներ՝ ասորական Kaf-ը հաւասարապէս տուած է Ք եւ Կ, Pe-ն տուած է Պ եւ Փ, Lamed-ը տուած է Ղ եւ Լ եւն.: Նկատենք, որ շատ ըմբռնելի ու սահմանափակ,- ըսենք՝ անմեղ,- բազմաձեւութիւններ են ասոնք, եւ աւելցնենք, կրկնութեան գնով, որ ասորական փոխառութիւնները կը բնորոշուին կանոնաւորութեան բարձր աստիճանով մը:

Ինչ կը վերաբերի յունարէնին, ապա պէտք է գիտնալ, որ հայերս որեւէ ատեն յոյներու դրացնութեան մէջ չենք գտնուած, եթէ չհաշուենք այն հոյլ մը յոյն քարոզիչները, որոնք Գրիգոր Լուսաւորիչի օրերէն սկսեալ Հայաստան հաստատուեցան ծառայելու համար այստեղ հիմնուած հայ եկեղեցիներուն ու հայ դպրոցներուն մէջ: Այսպիսիներուն վրայ կ'աւելնային այն հայ

ուսանողները, որոնք յունական ոստաններու մէջ կը թրծուէին յունարէն լեզուով ու յունական մշակոյթով, ինչպէս Սահակ Պարթեւն էր, Եզնիկ Կողբացին, Մովսէս Խորենացին եւ ուրիշներ: Հետեւաբար, այն մօտաւորապէս 900 փոխառութիւնները, որ հայերէնը կնքած է յունարէնէն, կատարուած են մասնաւորաբար թարգմանութեանց ճամբով, որոնք շատ ծաւալուն եղած են, եւ բացառուած է ժողովրդախօսակցական ճամբով կատարուած փոխառութիւնը: Այս պայմաններուն մէջ կ'ակնկալուէր, որ այդ փոխառութեանց մէջ կիրարկուած ըլլար շատ միօրինակ ու կանոնաւոր տառադարձութիւն մը. սակայն այս չէ պարագան, եւ բազմաձեւութիւնը ներկայ է յունական փոխառութեանց մէջ եւս, հաւանաբար ասոնց բարձր քանակութեան պատճառով: Այսպիսիներէն կ'արժէ թուել յատկապէս Ξξ տառը, որ հաւասարապէս տուած է Քս, Կ, Գ. Բր տառը, որ տուած է Ր եւ Ռ. Հղ տառը, որ տուած է Է, Ե, Ի. Ու՝ տուած է Ու, Իւ, Ի, Ւ եւ այսպէս ալ ուրիշներ:

Կը գոհանամ այս ընդհանրութիւններով, իսկ աւելի լայն տեղեկութեանց համար ընթերցողը կը յղեմ Հրաչեայ Աճառեանի *Հայոց Լեզուի Պատմութիւն*ի Ա. հատորին[2], ինչպէս նաեւ տողերս գրողի *Մեսրոպեան Տառերու Ակունքները* աշխատութեան[3], որովհետեւ ներկայ յօդուածը տառադարձութեան ընդհանուր տեսութիւն մը չէ, այլ կը միտի անդրադառնալու տառադարձական մէկ քանի երեւոյթներու միայն:

ԴԱԽԻԹ

Այս յատուկ անունը ծագումով սեմական է եւ մեր բարքերուն մէջ մտած է Աստուածաշունչի ճամբով. թէեւ բոլորովին բացառուած չէ այն հաւանականութիւնը, թէ ան մեզի ծանօթ ըլլար այլապէս ալ՝ շնորհիւ եբրայական այն համայնքներուն, որոնք հաստատուած էին Հայաստանի մէջ յատկապէս Տիգրան Մեծի օրերէն սկսեալ, նոյնիսկ անկէ առաջ ալ, ինչպէս նաեւ շնորհիւ ասորիներուն, որոնց հետ մեր շփումնրը,- ինչպէս ըսինք,- սկսած են Քրիստոսէ առաջ. շատ աւելի հաւանական է այս վերջին վարկածը, քանի անունս կը թուի աւելի ժողովրդական ճամբով առնուած ըլլալ, քան թէ գրական, ինչպէս պիտի տեսնենք քիչ անդին: Այսուհանդերձ անոր նուիրագործումը թէ՛ մեզի, թէ՛ միւս

քրիստոնեայ ժողովուրդներուն համար տեղի ունեցաւ Աստուածաշունչով: Այսքանը՝ անոր ծագումին ու տարածումին մասին: Մեզ հետաքրքրողը՝ անոր գրութիւնն է, յարաբերաբար մէկ կողմէ՝ սեմական լեզուներու, միւս կողմէ՝ օտար լեզուներու, եւ ապա՝ հայերէնի:

Սեմական լեզուները՝ փիւնիկերէն, եբրայերէն, արամէերէն, ասորերէն, այս անունը կը գրեն արաբերէնի օրինակով՝ [4]داود: Նոյնիսկ եթէ ինչ որ աննշան տարբերութիւններ կան արաբերէնի ու միւս սեմական արձանագրութեանց միջեւ, ապա անունիս գոնէ առաջին եւ վերջին բաղաձանները,- որ մեր քննարկումին բո՛ւն առարկան են,- միշտ նոյնն են. ան սեմական Դալեթ տառն է կամ արաբական Դալ տառը, որով կը սկսի ու կը վերջանայ այս յատուկ անունը: Արեւմտեան լեզուներու մէջ ան հիմնուած է յունական տառադարձութեան վրայ, որ Δαβιδ է. այս պարագային եւս տառադարձական տարբերութիւնները չեն վերաբերիր անունիս առաջին ու վերջին տառերուն, որոնք միշտ նոյնն են, այսինքն՝ Δδ, որ յունական Դելտան է՝ համարժէքը սեմական Դալեթին: Յունարէնէն ան անցած է լատիներէնին՝ David տառադարձութեամբ, ապա միւս բոլոր արեւմտեան լեզուներուն:

Ասոնց բոլորին մէջ, սեմական թէ արեւմտեան, այս անունը կը սկսի ու կը վերջանայ նոյն տառով, որ կը նշէ լեզուատամնային ձայնեղ պայթական մը: Այլ խօսքով՝ սեմական եւ արեւմտեան բոլոր լեզուներուն միջեւ կը գտնենք կատարեալ համապատասխանութիւն մը ու ներդաշնակութիւն մը: Արդ, հայերէնը, ահա, կու գայ խանգարելու այս համատարած ու տիեզերական միօրինակութիւնը, քանի մենք այս անունը կը գրենք Դաւիթ, որուն առաջին՝ Դ տառը, ճիշդ է, նոյն լեզուատամնային ձայնեղ պայթականն է միւս բոլորին պէս, սակայն վերջինը՝ Թ, բոլորովին տարբեր է. ան լեզուատամնային խուլ շնչեղ պայթական մըն է, որով հայերէնը կը տարբերի սեմական թէ արեւմտեան բոլոր լեզուներէն: Այս զարմանալի ու անակնկալ շեղումն ալ արդարօրէն գայթակղեցուցած է Աճառեանը, որ կը գրէ. «*Յայտնի չէ սակայն թէ որտեղի՛ց առաջացել է հայերէնում Թ վերջածայնը, որ ոչ մի լեզուի մէջ էլ չկայ*»[5]: Այս առթիւ ան կը յիշատակէ իր ուսուցիչը՝ Հիւբշմանը, որ կը թուի գտնուած ըլլալ նոյն շփոթին առջեւ:

Արդ, տողերս գրողին կարելի դարձաւ, բոլորովին պատահականութեամբ մը, գտնել «ուրիշ լեզու մը»՝ եթովպերէնը, ուր այս անունը մերինին պէս կը սկսի լեզուատամնային ձայնեղ պայթականով մը, որ եթովպերէնի Դենթ տառն է, եւ կը վերջանայ լեզուատամնային խուլ շնչեղ պայթականով մը, որ եթովպերէնի Թաւի տառն է: Այս անակնկալ «գիւտը» կատարեցի, երբ գրադարձական փոքրիկ աշխատանք մը կը տանէի եթովպերէն Հին կտակարանին վրայ: Ուրեմն հայերէնը եւ եթովպերէնը[6] կատարելապէս կը համապատասխանեն իրարու, ինչ որ վրիպած է Աճառեանի, հաւանաբար նաեւ՝ Հիւբշմանի, ուշադրութենէն:

Ի՞նչ մտածել այս համապատասխանութեան առթիւ...:

Պէ՞տք է ենթադրել, որ ան պարզ զուգադիպութիւն մըն է...:

Կարգ մը այլ որոնումներ մեզ առաջնորդեցին հետեւեալ «յայտնաբերութեանց» եւս, որոնց անծանօթ էինք նախապէս: Առաջին՝ եթովպերէն Աստուածաշունչը թարգմանուած է 430-ին, որ մօտաւորապէս կը համապատասխանէ հայերէն Աստուածաշունչի երկրորդ թարգմանութեան, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ վերանայումին, որ տեղի ունեցաւ 432-ին Սահակ կաթողիկոսի ձեռքով: Ինչպէս կը նկատենք, այս երկու թուականները կատարելապէս կը համընկնին. նման մեծ գործի մը համար 1-2 տարուան տարբերութիւնը նշանակութիւն չի կրնար ունենալ: Երկրորդ՝ եթովպացիք իրենց թարգմանութիւնը կատարած են յունական Եօթանասնից կոչուած բնագրէն, իսկ այդ նոյն Եօթանասնիցէն կատարուեցաւ նաեւ մերինին վերանայումը: Այդ ընտիր օրինակը Եզնիկ եւ Կորիւն իրենց հետ բերեր էին Կոստանդնուպոլիսէն, այնտեղի պատրիարքէն իբրեւ նուէր Սահակ կաթողիկոսին:

Այս զուգադիպութիւնները ստոյգ բան մը կ'ըսե՞ն տառադարձական վերոնշեալ նոյնութեան մասին՝ հայերէնի ու եթովպերէնի միջեւ. դժբախտաբար ոչ: Եթէ յանկարծ երեւան ելլէր, ինչ որ յունական ձեռագիր մը, որ այդ թուականներուն թէկուզ ժամանակաւորապէս Դաւիթ անունը գրած ըլլար յունական Թէտայով՝ θ (այսինքն՝ Δαβιθ), որ համարժէք է հայերէնի Թ-ին եւ եթովպական Թաւիին, ապա հայ-եթովպական համապատասխանութիւնը պիտի ստանար իր լիարժէք բացատրութիւնը, սակայն նման բան չկայ կամ ծանօթ չէ մեզի. յունական ոչ մէկ ձեռագիր մեր ճանչցած Դաւիթ անունը գրած է յունական Թէտայով, այլապէս ան-

խուսափելիօրէն ան պիտի թափանցէր ուրիշ լեզուներու եւս: Կը մնայ փնտռել հայ-եթովպական շփման այլ եզրեր, որոնք տողերս գրողէն կը խուսափին, եթէ, անշուշտ, իրօք գոյութիւն ունեցած են այդպիսիները: Յամենայն դէպս բացայայտ է, թէ մեր երկու ժողովուրդներու շատ սիրալիր յարաբերութեանց այդ վաղնջական փուլը բոլորովին անծանօթ է մեզի, եւ այնտեղ կը գտնենք շատ սպիտակ էջեր, որոնք խոցելի կը դարձնեն մեր հետազօտութիւնները: Մաղթելի է, որ այս նշմարս խթան հանդիսանայ անոնց համար, որոնք կ'ուզեն հետամտել այդ հեռաւոր ժամանակներու պատմութիւնը եւ աւելի առաջ երթալ ճշմարտութեան որոնումին մէջ:

*

Մեր Դաւիթ անունի տառադարձութեան այժմ պիտի փորձեմ մօտենալ այլ տեսանկիւնէ մը՝ անջատելով զայն եթովպերէնի հետ հաւանական առնչութենէ, որքան ալ այս մէկը աւելի հրապուրիչ ըլլար ինծի համար:

Հայերէնը Ի ձայնաւորէն ետք ընդհանրապէս Դ չ'ընդունիր, յատկապէս բառավերջին, ուր Ի-ին յաջորդած կը գտնենք Տ կամ Թ. ստորեւ օրինակներ.

ա) Տ՝ ականակիտ, ակնիտ (աչացաւ), Անահիտ, անկղիտ (տրիփ), բիտ, գիտ (գէտ-գիտնալ), դիտ (դէտ-դիտել), ժպիտ, լաւիտ, խայտիտ, խիտ, խորափիտ, ծիտ, ծպիտ (ծպտուիլ բային արմատը), կոպիտ, կրկիտ, հովիտ, հտպիտ, ձրձիտ (գիշատիչ մը), ճիտ, ճշգրիտ, ճշմարիտ, մատիտ, մարգարիտ, միտ(իլ), նաքարակիտ, նիտ(ալ), շիտ(ակ), շիտ (բշտիկ), շռնիտ (կոնք, տաշտ), պաժիտ (ծուղակ), պաղատիտ (չոր թուզ), վճիտ, վտիտ, տիտ, օժիտ..:

բ) Թ՝ աղկիթ (ձկնկիթ), առիթ, բլիթ, գաւիթ, երիթ, զենիթ, խիթ, խրճիթ, ծղրիթ, կիթ, կնճիթ, կողկողիթ (մակալեզու), կսմիթ, հաւկիթ, հարսանիթ, ձանձախարիթ, մզկիթ, շիթ, սամիթ, փթիթ, քիթ եւն.:

Բառային այս հոծ փաղանգին դիմաց կը գտնենք ընդամէնը **փիւրիդ**, որ կը գրուի նաեւ **փիւրիթ**, եւ **քղամիդ**. երկուքն ալ յունարէնէ փոխառութիւն են, էապէս գրքունակ բառեր, այսինքն՝ ոչ-գործածական բառեր, որոնք բառարաններէ դուրս չեն եկած, այս պատճառով ալ հայերէնի արտասանական քմայքներուն չեն ենթարկուած, այլ անփոփոխ պահած են իրենց մոմիացած

ուղղագրութիւնը: Ունինք նաեւ **ծղրիդ**, որ հաւասարապէս կը գրուի **ծղրիթ**. կարելի է ըսել նոյնիսկ, որ գոնէ արեւմտահայերէնի մէջ աւելի տիրապետող է **ծղրիթ**-ը:

Արդ, լեզուական այսպիսի միջավայրի մը մէջ, որ կը խուսափի **իդ** բառավերջէն, ինչ որ նախնական Դաւիդ մը,- եթէ երբեք գոյութիւն ունեցած է ան,- շատ դիւրաւ հետզհետէ պիտի դառնար Դաւիտ կամ Դաւիթ՝ ենթարկուելով հայկական արտասանութեան, մանաւանդ որ շատ յաճախուած անուն մըն էր ան, հետեւաբար ենթակայ՝ հայերէնի հնչիւնաբանական աւանդոյթներուն եւ …քմայքներուն ալ:

Ենթադրելի է, որ այս անունը Աստուածաշունչի թարգմանութենէն զգալիօրէն առաջ մտած ըլլայ մեր բարքերուն մէջ, բերանացի կիրարկութեան ճամբով, եթէ ոչ հրեաներու կամ ասորիներու շփման բերումով,- ինչ որ անհաւանական չէ,- առնուազն գիրերու գիւտը կանխող հարիւր տարիներուն, երբ աստուածաշնչական անունները ականջով կ'ընկալուէին միայն, եւ ճիշդ այս միջոցին յունարէնի կամ ասորերէնի մէջ արտասանուած **Դաւիդ** անունը հետզհետէ «հայացաւ» ու տուաւ **Դաւիթ**. այն աստիճան, որ Աստուածաշունչի թարգմանութեան առթիւ մեր թարգմաիչները ձեւով մը կատարուած իրողութեան առջեւ գտնուեցան ու չհետեւեցան ո՛չ յունարէնին, ո՛չ ասորերէնին, այլ հետեւեցան հայեցի արտասանութեան: Այլապէս, եթէ թարգմանութեան ճամբով մտած ըլլար ան, ապա անկարելի է, որ այդ օտար բնագրերը՝ ասորերէն թէ յունարէն, հայերէնը յանգեցնէին **Դաւիթ** տառադարձութեան:

Այս ծիրէն ներս յիշատակութեան արժանի է մեր **կանթեղ** բառը եւս, որուն առթիւ նմանապէս խախտած է դասական տառադարձութեան կանոնը: Արդարեւ, բոլոր արեւմտեան եւ սեմական լեզուները այս բառը կը գրեն լեզուատամնային ձայնեղ պայթականով՝ **ð-d-**ն որ կը համապատասխանէ մեր **Դ**-ին, իսկ մենք զայն կը գրենք **Թ**-ով:

ՈՎ

Հայերէն Աստուածաշունչի մէջ կը հանդիպինք մեծաթիւ յատուկ անուններու, որոնք օժտուած են **Ով** բաղադրիչով. օրինակ՝ Մովսէս, Յակովբ, Յովակիմ, Յովասափ, Յովէլ, Յովհաննէս,

Յովնաթան, Յովնան, Յովսէփ, Նասաովն, Ովբէդ, Սադովկ, Սիմովն եւ շատ ու շատ ուրիշներ: Արդ, ո՛չ ասորերէնը, ո՛չ ալ յունարէնը ունէին **Վ** հնչիւնը, ինչպէ՞ս բացատրել, ուրեմն, այս բաղաձայնին յառաջացումը այնքան մեծաթիւ յատուկ անուններու մէջ, որոնցմէ մէկ քանի նմուշներ միայն թուեցինք վերը: Եւ ոչ միայն յատուկ անուններու. զայն կը գտնենք հասարակ բառերու մէջ եւս, ինչպէս՝ **յովտ, ովկիանոս, լեգէովն, արիովթ** եւն., որոնք յունարէնէ փոխառութիւն են եւ յունարէնի մէջ, սակայն, **Վ** չունին: Ճիշդ ի՞նչը մղած է մեր թարգմանիչները, որ այս եւ նմանատիպ հայերէն բառերը օժտէին, աւելի ճիշդը խճողէին տառով մը, որ կը բացակայէր թարգմանելի բնագրերէն ու լեզուներէն:

Ուշադիր սերտողութիւնը ցոյց կու տայ, որ այս բոլոր **Ով**-երը սեմական յատուկ անուններու կամ բառերու հնչիւնական-արտասանական թելադրանքով չեն յառաջացած, այլ պարզապէս կը համապատասխանեն յունարէնի Օմեգա կոչուած տառին. ուրեմն՝ հոն, ուր յոյնը իր բառը կը գրէ Օմեգայով, հայերէնը անոր դիմաց ընդհանրապէս կը հանէ Ով տառախումբը, մինչ յունարէնի Օմիկրոնին դիմաց կը գտնենք պարզապէս Ո: Այսինքն՝

Օմեգա→Ով Օմիկրոն→Ո

Ինչու՞: Բացատրութիւնը մատչելի կը դառնայ, եթէ նկատի ունենանք Օմեգա տառին՝ Ω, Մեսրոպի օրով ունեցած հնչիւնական արժէքը: Արդարեւ, անցեալին յունարէնը ունեցած է երկու տեսակ օ. կարճը կամ պզտիկը, որ կը կոչուէր Օմիկրոն (**միկրոն** կը նշանակէ պզտիկ - Ա.Ե.) եւ կը գրուէր ճիշդ մեր օ-ին պէս՝ Οο (խորքին մէջ՝ մե՛նք է որ հետագային գրեցինք յունարէնի ձեւով), իսկ միւսը՝ երկարը կամ մեծը, որ Օմեգան էր (**մեգա** կը նշանակէ մեծ - Ա.Ե.): Արդի յունարէնի մէջ ամանակային այս տարբերութիւնը այլեւս չքացած է, եւ այդ երկուքը հաւասարապէս կարճ կ՚արտասանուին, հետեւաբար յոյն դպրոցականներն ալ ներկայիս կը չարչարուին որոշելու համար, թէ «օ» հնչիւնը ո՛ր մէկով պիտի գրեն՝ Օմիկրոնո՞վ, թէ՞ Օմեգայով:

Արդ, Օմիկրոնը հնչիւնական արժէքով կը համապատասխանէր մեսրոպեան Ո-ին, որ նոյնպէս կարճ է մեր բոլոր ձայնաւորներուն նման: Սակայն տարբեր էր Օմեգան. ան երկար կ՚արտասանուէր, իսկ հայերէնը երկար ձայնաւոր՝ ընդհանրապէս, իսկ երկար Օ՝ յատկապէս, չէ ունեցած, հիմա ալ չունի: Ահա այս բացը

յաչս յունարէնին լրացնելու համար է որ մեր թարգմանիչները, որոնք շատ ընտիր յունագէտներ էին, մասնաւորաբար Սահակ կաթողիկոսը, որ գլխաւոր թարգմանիչն էր Աստուածաշունչի, յարգելով յունական այս երկու տառերուն հնչիւնական տարբերութիւնը, Օմիկրոնը ներկայացուցած են Ո-ով, իսկ Օմեգայի պարագային՝ Ո-ին կից աւելցուցած են Վ մըն ալ, եւ Օմեգան մեր թարգմանութեանց մէջ դարձած է Ով (Ωω=Ով):

Մինչեւ այստեղ ամէն ինչ յստակ է:

Շփոթը կը սկսի ասկէ անդին. այս Ով-ը ինչպէ՞ս կ'արտասանուէր մեր առաջին թարգմանիչներուն կողմէ, ճիշդ անոնց, որոնք հաստատեցին տառադարձական այս կանոնը,- իբրեւ միահնչիւն երկար Օ՞, ինչպէս ներկայիս մենք պիտի գրէինք ու արտասանէինք Օ՛, թէ՞ իբրեւ լիարժէք երկհնչիւն Ով, այսինքն՝ ներառելով Վ-ին բնիկ արտասանութիւնն ալ, ինչպէս մենք այսօր կ'արտասանենք այդ երկհնչիւնը Յովհաննէս, Յովնան, Յովսէփ յատուկ անուններուն մէջ: Նման հարցադրում մը, որքան գիտենք, ոչ մէկ ատեն կատարուած է: Արդ, տողերս գրողին կարծիքը այն է, որ յիշեալ փոխառութեանց **Ով** բաղադրիչը կ'արտասանուէր իբրեւ երկար Օ՛, ճիշդ յունական Օմեգային համազօր, եւ ոչ թէ իբրեւ երկհնչիւն **Ով**: Ինչու՞ այսպէս կը մտածենք: Այն պարզ պատճառով, որ անհեթեթ պիտի ըլլար յունարէնի հնչիւնաբանութեան յատուկ նրբութիւն մը յարգելու եւ նշելու համար հայերէնի մէջ, այդ լեզուի բառերուն, որոնց հանդէպ երկիւղալի յարգանք ունեցած են մեր թարգմանիչները, հայերէն արտասանութեան խառնէինք հնչիւն մը, այսինքն՝ Վ հնչիւնը, որ խորթ էր յունարէնին: Ուրեմն, մեր կարծիքով՝ այդ Վ-ն՝ Ո-ին կից, արտասանելի չէր, այլ խաղացած է մեր արդի ուղղագրութեան մէջ կիրարկուող բացականչութեան կամ երկարի նշանին դերը, երբ այդ երկարով կ'օժտենք յատկապէս ձայնարկութիւններ՝ օ՛, ա՛, ո՛հ եւն.: Թերեւս մտածուի, թէ այս պարագային նախընտրելի պիտի չըլլա՞ր, որ Մեսրոպ Ո-ն պարզապէս օժտէր յատուկ նշանով մը ու այսպէս ստացուած տառը փոխարինէր յունական Օմեգան: Ճիշդ է, կարելի էր. սակայն ամէն գործիչ ունի իր ճաշակն ու ոճը. Մեսրոպ բացարձակապէս խուսափած է ձայնային ամէն նշանէ, որով այնքան խճողուած են այլ այբուբեններ, յատկապէս սեմականները, օրինակ՝ արաբերէնը:

Շատ յատկանշական է հետեւեալը. յունական այդ Օմեգան կը համապատասխանէ սեմական, այս պարագային՝ եբրայական ու ասորական[7] Ուաւ Þ տառին, որ իր կարգին երկար Ու մըն է կամ երկար Օ մը. օրինակ יעקוב անունը տառադարձուած է Ιωβ, հայերէնը՝ Յովբ. նկատելի է համապատասխանութիւնը ասորականին, յունականին ու հայերէնին միջեւ՝ **Þ=ω=Ով**, ինչ որ կը հաստատուի հարիւրաւոր օրինակներով. թուենք մէկ քանին՝ יעקוב-Ιακωβ-Յակովբ, יוסף-Ιωσηφ-Յովսէփ, عموس-Αμως-Ամովս, موسى-Μωσης-Մովսէս եւն.: Բայց ուշադրութի՛ւն, պէտք չէ հետեւցնել, թէ ուրեմն մեր Ով-ը միանշանակ կը համապատասխանէ ասորական Þ-ին. այդ համապատասխանութիւնը գոյութիւն ունի միայն յունարէնի միջնորդութեամբ հայերէնին անցած բառերուն մէջ: Իսկ հոն ուր սեմական փոխառութիւնը կատարուած է ուղղակի՝ **առանց յունարէնի միջնորդութեան**, մեր նախնիները Þ-ին դիմաց հանած են կա՛մ **Ու**, կա՛մ **Ո**. օրինակ՝ ասորերէնէ կատարուած **շուկայ, շուշան, շուշմայ, ծոմ, շեփոր, քարոզ** փոխառութեանց **Ու**-ն եւ **Ո**-ն կը համապատասխանեն ասորական ܘ-ին[8],- հատ ու կենտ բացառութիւններ միայն կը խախտեն այս համապատասխանութիւնը,- եւ ասոնցմէ ոչ մէկուն դիմաց հայը Ով դրած է: Ուրեմն **Ով**-ը ձեւով մը մենաշնորհն էր յունական Օմեգային:

*

Այսքանը դասական հայերէնի ծիրէն ներս, այսինքն՝ այն տարիներուն, ուր Սահակ ու Մեսրոպ ողջ էին, առաւել՝ հաւանաբար քանի մը տասնամեակ եւս, այնքան ատեն որ գործած են անոնց աշակերտները: Հետագայ սերունդները, սակայն, սկսան հետզհետէ մոռնալ, թէ երբեմնի այդ **Ով**-ը պարզապէս կը ծառայէր վերարտադրելու ու ճշգրիտ արտասանելու յունական Օմեգան, եւ սկսան զայն արտասանել իբրեւ լիարժէք երկհնչիւն Ով, այսինքն՝ ov, ճիշդ ինչպէս այսօր մենք կ'արտասանենք զայն Յովհաննէս, Յովսէփ, Յովնաթան անուններուն ու նմաններուն մէջ: Դժուար է հաւաքական յիշողութիւն պահպանել, մանաւանդ եթէ այդ յիշողութեան առարկան այնքան փխրուն տարր մըն է, ինչպէս էր **Ով** բաղադրիչին նախնական արտասանութիւնը. ան դատապարտուած էր մոռցուելու, եւ իրօք ալ մոռցուեցաւ: Այս

մոռացութեան մէկ ցայտուն ու գեղեցիկ օրինակ է Անանիա Շիրակացիի կողմէ (Է. դար) Վ-ի ջնջումը կամ զանցառութիւնը **Փիսովն** եւ **Գեհովն** յատուկ անուններէն, որոնք Աստուածաշունչի մէջ գրուած են **Վ**-ով. «*Նաեւ յեդեմական աղբերէն…առաջին **Փիսոն**…իսկ երկրորդ գետն՝ **Գեհոն**…*»[9]:

Կարելի է ենթադրել, թէ մեր **Ով** դերանունը նմանապէս ծնունդ առած է վերոյիշեալ հոլովոյթով: Դասական հայերէնը **Ով** չունէր, այլ կ'ըսէր **Ո**. յիշենք մահամերձ արքային վերջին բառերը՝ «**Ո՛** տայր ինձ զծուխն ծխանի…»: Յիշենք նաեւ Աստուածաշունչի մէկ փոքրիկ հատուածը՝ «**Ո** սիրէ զանձն իւր…»: Այլեւ հրեշտակին հարցումը իւղաբեր կանանց Յիսուսի թափուր գերեզմանին քով՝ «Կին դու, զի՞ լաս, **զո**՞ խնդրես» (զո՞վ կը փնտռես): Այս երեք օրինակներուն **Ո**-երը հաւասար են մեր արդի **Ով** դերանունին: Ուրեմն ի՞նչ պատահած է եւ ինչպէ՞ս **Ո**-ն դարձած է **Ով**: Շատ պարզ է. մեր նախնիներն ալ սովորութիւն ունէին **Ո** դերանունը շատ յաճախ երկար արտասանելու, ինչ որ այս բառին էութենէն բխող կիրարկութիւն մըն է: Այս երկար արտասանութիւնն ալ հետզհետէ գրուած է **Ով**՝ արտասանուելու համար **Ո՛:** Սակայն ժամանակի ընթացքին ան պարզապէս արտասանուած է երկհնչիւն **Ով**, եւ այդպէս ալ հասած է մեզի. ան այլեւս բացականչական առոգանութիւն չունի: Իսկ եթէ կ'ուզենք բացականչական առոգանութեամբ արտասանել, ապա կը գրենք **Ո՛վ**, այսինքն՝ վրան կ'աւելցնենք բացականչութեան նշանը՝ երկարը. օրինակ՝ Ո՛վ դարք, ո՛վ բարք:

Երկու բառ ալ այս Ով-ին ճակատագրին մասին:

Անգամ մը, որ Ով-ը ըմբռնուած է իբրեւ երկհնչիւն բաղադրիչ եւ արտասանուած է ov, ան որոշ կայունութեամբ գոյատեւած է հնագոյն բնագրերու (յատկապէս շնորհիւ Աստուածաշունչի) մէջ, որոնց վերարտադրութիւնները կամ վերընդօրինակութիւնները կատարուած են մեծագոյն հաւատարմութեամբ եւ բծախնդրութեամբ: Սակայն ժամանակի ընթացքին, մեր լեզուի աշխարհաբարացումին զուգահեռ, թերեւս նաեւ շփուելով այլ լեզուներու հետ, օրինակ՝ արաբերէնին,- ուրկէ կը բացակայի Վ հնչիւնը,- որոշ «սրբագրութիւն» մը սկսած է բնական ճամբով յառաջանալ, եւ **Ով**-ը սկսած է դառնալ **Ո**: Այսպիսիներէն թուենք **Յովհաննէս-Օհաննէս-Օհան, Յովսէփ-Յուսէփ-Ուսէփ, Յակովբ-**

Յակոբ, Սիմովն-Սիմոն, Սողոմովն-Սողոմոն, Սիովն-Սիոն, Թովմաս-Թոմաս-Թուման, Յովբ-Յոբ, Քերովբ-Քերոբ, Սերովբ-Սերոբ, Ովսաննա-Օսաննա-Օսան եւն.: Աստուածաշունչի աշխարհաբար նորագոյն հրատարակութիւններուն մէջ յատուկ անուններու բացարձակ մեծամասնութիւնը կորսնցուցած է **Վ** բաղաձայնը, եւ **Ով** դարձած է **Ո**:

Հոն ուր, սակայն, **Ով**-ը ինկած է երկու ձայնաւորներու միջեւ, ան կը ցուցաբերէ զգալի կայունութիւն մը. օրինակ՝ **Յովասափ, Յովակիմ, Յովաթամ** եւն.. այսպիսիներուն մէջ Վ բաղաձայնը կը կատարէ ձայնակապի պաշտօն եւս՝ արգիլելով յօրանջի յառաջացումը, որ խորթ է հայերէնին. օրինակ՝ մեզի համար անարտասանելի են **Յոասափ, Յոակիմ, Յոաթամ** եւ նմանները, ահա թէ ինչու ասոնք անվթար պահած են Վ-ն:

Հասարակ բառերէն Վ-ն ինկած կը գտնենք **լեգէովն** բառին մէջ, որ դարձած է **լեգէոն**:

*Ծանօթ.- Երկար Ō ունի ասորերէնը եւս, սակայն մեր թարգմանիչները անփարբեր գտնուած են անոր հանդէպ եւ զայն ընդհանրապէս փառադարձած են Ո,- երբեմն ալ այլ պարզ ձայնաւոր մը,- բացի **krōwē** բառէն, որ փառադարձուած է **քերովբէ**, ուր Ō փուած է Ով՝ յունարէնի նմանողութեամբ: Ունինք ասորական երկրորդ բառ մըն ալ srāfē, որ է **սերովբէ**. յատկանշական է, որ այս վերջինին մէջ ասորական բառամէջի Ալեֆին դիմաց հայը դրած է Ով, մինչ բառամէջի այլ Ալեֆներու հանդէպ անփարբեր գտնուած է ան ու պարզապէս դրած է Ա:*

ԱՅ

Մեր քերականական եւ ուղղագրական արդի ձեռնարկներուն մէջ ընդհանրապէս կը տիրէ այն տեսակէտը, թէ հայերէնի մէջ **ա**-ով բառ չի վերջանար, այլ ան կը պահանջէ բառավերջի **յ** մը, օրինակ՝ **ընծայ, շուկայ.** թէեւ այսպէս դաւանողները չեն վարանիր իսկոյն եւ ակամայ թուելու քանի մը կիսատ-պռատ «բացառութիւններ», որոնք կը վերջանան **ա**-ով: Այս մտածողութեան հետեւանքով բազմաթիւ նոր փոխառութիւններ հետագային մեքենաբար ու բռնազբօսաբար ծանրաբեռնուած են բառավերջի **յ**-ով մը հոն, ուր փոխատու լեզուն անոր համարժէքը[10] չէ ունեցած: Մինչդեռ իրողութիւնը այն է, որ **ա**-ով վերջացող

բառեր միշտ ալ գոյութիւն ունեցած են եւ ունին ընդհանուր հայերէնի մէջ եւ անոնք կը ներկայացնեն բաւական կոկիկ ցանկ մը, որ ահաւասիկ.

ա) Դերանուններ՝ **սա-դա-նա, սորա-դորա-նորա, սմա-դմա-նմա, սոքա-դոքա-նոքա, սոցա-դոցա-նոցա**:

Զանց կ'ընենք ասոնց համապատասխան հայցականները, որոնք նմանապէս կը վերջանան **ա**-ով:

բ) Զանազան բայերու, յատկապէս **ալ** լծորդութեան պարզ կանոնաւոր բայերու, հրամայական եղանակի եզակի երկրորդ դէմքի ձեւերը. օրինակ՝ **աղա՛, զգա՛, խոկա՛, կարդա՛, հաւատա՛, մուրա՛, տեղա՛, լուա՛, իմա՛, ասա՛, արա՛, երգեա,՛ քաւեա՛, օրհնեա**՛ եւն.:

գ) Անսահմանափակ թիւով յատուկ անուններ՝ բնիկ թէ փոխառեալ. օրինակ՝ **Արա, Շարա, Անանիա, Շաղիտա, Եւա, Աննա, Եղիա, Դալիլա, Սառա, Արաբիա, Նիկիա, Եդեսիա, Գալիլեա** եւն.:

դ) Սովորական բառեր՝ **աբբա, ահա, հապա, մեսիա, կասիա, հիմա** (այս մէկը միայն աշխարհաբարի մէջ), **ալէլուիա, ակադեմիա, լայքա, լուբիա** եւն.:

Ասոնց դիմաց ունեցած ենք մօտաւորապէս 150 բառ, որոնք արձանագրուած են վերջագիր **այ**-ով եւ որոնց մանրամասն ցանկը մեծ բարեխղճութեամբ բերուած է Խաչիկ վ. Աթանասեանի աշխատութեան մէջ[11]: Արդի հայերէնի մէջ այս ցանկէն՝ բառավերջի յ-ն արտասանելի է հետեւեալ բառերուն մէջ միայն՝ **ա՛յ, բայ** (verbe), **կայ** (կացարան), **հայ, ճայ, նայ, պայ** (ոգի), **ռայ** (դրօշակ), **վա՛յ**: Մնացեալ 143-ին մէջ այդ **յ**-ն անձայն կամ համր է:

Մեր հետազօտութեան առարկան հետեւեալն է. ի՞նչ էր սկզբնապէս այդ բառավերջի **յ**-ին հնչիւնական արժէքը հոն, ուր ան կը գրուէր: Արտասանելի՞ էր ան, թէ՞ համր էր, ինչպէս այսօր է պարագան:

*

Առաջին նուագ կը տարուինք մտածելու, թէ ան, այո, կ'արտասանուէր, այլապէս ինչու՞ պիտի գրուէր: Այս մտածողութեան կը նպաստէ նախ եւ առաջ գոյութիւնը այն բառերուն, որոնք **ա**-ով կը վերջանան: Եթէ մնացեալներուն մէջ

բառավերջի **յ**-ն պիտի չարտասանուէր, կարելի էր ասոնք եւս գրել **ա**-ով, փոխանակ գրելու **այ**-ով: Մենք ունինք այս կողմնորոշումին նպաստող աւելի զօրաւոր փաստարկ մը, որ հետեւեալն է. **ա**-ով վերջացող յատուկ անուններու սեռականը գրաբարի մէջ, գէթ սկզբնապէս, կը ստացուէր **յ**-ի մը յաւելումով. այսպէս՝ **Եղիա-Եղիայ, Եդեսիա-Եդեսիայ, Յուդա-Յուդայ** եւն.: Արդ, հայերէնի, գրաբար թէ աշխարհաբար, մնացեալ բոլոր բառերու պարագային ուղղականն ու սեռականը երկու տարբեր հոլովաձեւեր ունին, ինչ որ կը նշանակէ, թէ այս երկուքին տարբերակումը անհրաժեշտութիւն է հայեցի մտածողութեան համար. հայը չի կրնար մտածել ու խօսիլ, եթէ արտասանութեամբ չզանազանէ ուղղականի ու սեռականի տարբերութիւնը: Քանի այսպէս է, ապա ուրեմն **Եղիա-Եղիայ** տիպի տարբեր ուղղագրութիւնները, որոնք վկայուած են մեր մատենագրութեան մէջ, պէտք է ունենային տարբեր արտասանութիւն եւս. այլ խօսքով՝ ասոնցմէ առաջինը բառավերջին արտասանուէր պարզապէս **a**, իսկ երկրորդը՝ **ay**. ասոնք զանազանելու ուրիշ ձեւ ու միջոց չէր կրնար ըլլալ: Եւ վերջապէս ունինք այս մտածողութեան նպաստող երրորդ փաստարկ մը եւս. ծանօթ են փոխառեալ բառեր, որոնք փոխատու լեզուներուն մէջ օժտուած են բառավերջի կիսաձայնով մը, որ համարժէք է մեր **յ**-ին. այսպիսիներէն թուենք **վկայ**, որ ունի պարսկական ծագում, ուր ան կը գրուի vīkay, որուն y-ն արտասանելի է եւ համահունչ է մեր **յ**-ին. մեր **մեքենայ** բառը յունական փոխառութիւն է, իսկ յունարէնի մէջ բառս μηχαναί է, որուն վերջին տառը արտասանելի է եւ համարժէք է մեր **յ**–ին. եւ վերջապէս յիշենք ասորական Եդեսիա մայրաքաղաքի Ուռհայ անուանումը, որ ասորերէնի մէջ կը գրուէր Orhāi, որուն i-ն կը համապատասխանէ սեմական ـِـي-ին, որ նմանապէս արտասանելի է եւ համարժէք է մեր **յ**-ին:

Բառավերջի **յ**-ի արտասանութեան ի նպաստ կը խօսին նաեւ մեր այն բառերը, որոնց մէջ ան ունի քերականական տարբերակիչ արժէք. օրինակ՝ **գամ-գաս-գայ**, ուր **յ**-ն ցուցիչն է եզակի գ. դէմքին ի հակադրութիւն **մ**-ին եւ **ս**-ին, որոնք կը բնորոշեն ա. եւ բ. դէմքերը: Ըստ այսմ ալ բառավերջի **յ**-ն արտասանելի պէտք է ըլլար **ապագայ, առարկայ, ենթակայ,**

ներկայ, բացակայ, հետագայ բառերուն եւ նմաններուն մէջ: Ան արտասանելի պէտք է եղած ըլլայ այն բառերուն մէջ, ուր մաս կը կազմէ քերականական մասնիկի մը, ինչպէս՝ կամ-**կամայ,** արք-**արքայ,** ընձեռ-**ընձեռայ**: Ան արտասանելի էր **եայ** վերջածանցին մէջ՝ **աշտեայ, ափսեայ, բազեայ, հրեայ, պաշտօնեայ, քուեայ, անդեայ, դժնեայ, դուզնաքեայ** եւն.. այսպէս է, քանի որ եթէ այդ **յ**-ն չարտասանուէր, ապա **եայ** ածանցը չէր կրնար հետագային **է** դառնալ. **եայ>է** հնչիւնափոխութիւնը կամ ամփոփումը կրնայ յառաջանալ միայն **յ**-ի արտասանութեան պայմաններուն մէջ հետեւեալ աստիճանումով՝ **եայ>եյ>է**, ուրեմն՝ **աշտեայ>աշտեյ>աշտէ**: Եթէ բերուած օրինակներուն մէջ բառավերջի **յ**-ն չարտասանուէր, այդ բառերը պիտի զգենային տարբեր տարազ մը՝ **աշտեայ>աշտե**, քանի որ **եա** արտասանութիւնը կը յանգի **ե**-ի, օրինակ՝ **ատեան-ատենապետ, մատեան-մատենագիր** եւն.:

Այս ալ ըսենք, որ վերոնշեալներուն դիմաց ունինք այնպիսի փոխառութիւններ, որոնց բառավերջի **յ**-ին արտասանութիւնը արդարացնող կամ հաստատող փաստարկները կը խուսափին մեզմէ. այսպիսիներէն թուենք՝ **սպայ, սարբինայ, կլիմայ, սիղոբայ, փոսուռայ** եւն.. այս փոխառութեանց դիմաց փոխատու լեզուն բառավերջի կիսաձայն չունի. ուրե՞մն: Պէտք է ենթադրել, որ այսպիսիները նուիրականացած են համաբանութեամբ: Սակայն այս մասին՝ քիչ անդին:

Վերոնշեալ բառերու կամ բառախումբերու վրայ ալ հիմնուելով մենք կրնայինք անվարան վճռել, որ այն օրերուն, երբ Մեսրոպ կը յօրինէր մեր ուղղագրութիւնը, բառավերջի **յ**-ն ամէնուրեք արտասանելի էր. ու վե՛րջ: Բայց այս չէ պարագան. կացութիւնը տարբեր է: Արդարեւ, աչքի առաջ ունինք ասորական մեծաթիւ փոխառութիւններ, որոնց վերջի **յ**-ին արտասանութիւնը ոչ մէկ արդարացում ունի. այս փոխառութիւնները մեզ կը դնեն բոլորովին նոր կացութեան մը առջեւ:

Հայ-ասորական յարաբերութիւնները կը սկսին Քրիստոսէ առաջ եւ այնուհետեւ անընդմէջ կը շարունակուին մեր պատմութեան ողջ տեւողութեան, ըսենք՝ մինչեւ Մեծ Եղեռնը, եթէ ոչ մինչեւ մեր օրերը: Այս գոյակցութենէն, ինչպէս նշուած է նախապէս, մեզի կը հասնին մօտաւորապէս 210 բառեր, որոնց

մէկ կարեւոր մասը ամէնօրեայ շփումներու արդիւնք է, միւս մասը՝ թարգմանութիւններու ճամբով մտած է մեր լեզուին մէջ: Ասորերէնէ փոխառութիւններուն մէջ **այ**-ով աւարտող բառերուն թիւը կը գերազանցէ միւս բոլոր փոխառութիւնները միասին առած: **Այ** վերջաւորութիւնը այնքան բնորոշ է ասորական փոխառութեանց, որ երբ հայերէն բառի մը վերջը հանդիպինք այս բաղադրիչին, պէտք է նախ մտածենք անոր ասորական ծագումին մասին, նոյնիսկ եթէ արտաքին երեւոյթները տարբեր ուղղութիւն թելադրեն. օրինակ՝ մեզմէ շատեր կը կարծեն, թէ **փիլիսոփայ** բառը յունարէնէ փոխառութիւն է, մանաւանդ որ այսպէս մտածողները չեն վարանիր մինչեւ իսկ ստուգաբանելու բառիս արմատները, որոնք իրօք ալ յունական են: Բայց եւ այնպէս մեր այս բառը յունարէնէ փոխառութիւն չէ, այլ ասորերէնէ, ուր ան կ'արտասանուէր ճիշդ մերիրնին պէս՝ **փիլիսոփա**, մինչ յոյները զայն կ'արտասանեն **փիլիսոփոս** (աւելի ճիշդը՝ ֆիլիսոֆոս):

Վերոնշեալ 210 փոխառութեանց 140-ը ասորերէնի մէջ օժտուած է բառավերջի Ալեֆով մը: Անցնելով հայերէնին՝ ասոնց մեծ մասը կորսնցուցած է այդ բնիկ Ալեֆը. մեր լեզուին մէջ բառավերջի **այ**-ով արձանագրուած են հետեւեալները՝ **աբեղայ, ագուգայ** (ջրանցք), **աթութայ** (տառ, գիր), **գուրպայ** (որ դարձած է գուլպայ), **զոպայ** (համեմային բոյս մը), **լումայ**, **խլայ** (զգեստ), **ծնծղայ, կաթսայ, կապելայ, կասկառայ, կարկուրայ** (նաւակ), **կթխայ** (գաւաթ, բաժակ, թրքերէն՝ ղատեհ), **հեգենայ** (կարդալ, հեգել), **հռիտորայ** (որ յետոյ դարձած է հռետոր), **հրեայ, մամոնայ, մանանայ, մաշարայ** (հիւանդութիւն մը), **շափիւղայ, շիփորայ** (որ յետոյ դարձած է շեփոր), **շուկայ, շումրայ** (վայրի սամիթ), **շուշմայ, շուփայ** (ծարիր), **պողոտայ, սաբայ** (ծեր, երէց), **սատանայ, տղայ, փեգենայ** (բոյս մը՝ սատապ), **փիլիսոփայ, քահանայ, քաղդեայ** (գուշակ), **քուրայ, քուսիթայ** (վեղար) եւն.: Արդ, ասոնցմէ ոչ մէկը ասորերէնի մէջ օժտուած է բառավերջի սեմական ֵ-ով, որ կարենար թելադրել մեր բառավերջի **յ**-ն, այլ ունին Ալեֆ մը այդ դիրքին վրայ, ինչ որ պէտք է Ա տար հայերէնի մէջ. ուրեմն ի՞նչ կ'ընէ այդ **յ**-ն մեր բառերուն վերջը, աւելի պարզ ըսած՝ ինչպէ՞ս կ'արտասանէինք մենք վերոնշեալ բառերը,- բառավերջի **a**-ո՞վ, թէ՞ **ay**-ով:

Աճառեան կը մտածէ, որ ասորական փոխառութեանց բառավերջի **յ**-ն արտասանելի էր, իսկ անոր գերմանացի հայագէտ ուսուցիչը՝ Հիւբշմանը, որ հմուտ ասորագէտ ալ էր, «կը կարծէր, որ հայերէնի մէջ վերջածայն **այ** կը հնչուէր **ա**, որովհետեւ տարօրինակ կը գտնէր, որ հայը ասորիներէն **a** լսէր եւ ինքը **ay** գրէր»[12]: Ինչպէ՞ս բացատրել այս «հակասութիւնը»:

Փորձենք պատասխանել տառադարձական այս առեղծուածին:

Սեմական լեզուները, որոնցմէ մէկն է ասորերէնը կամ արամէերէնը, ունեցած են ու կը շարունակեն ունենալ մինչեւ այսօր, երկու տեսակ ձայնաւոր՝ կարճամանակ ու երկարամանակ: Կարճ ձայնաւորները ներկայիս կը նշանակուին ձայնային նշաններով միայն, որոնք կը դրուին զիրենք կանխող բաղաձայնին վրան կամ տակը, իսկ երբեմն ալ բնաւ չեն նշանակուիր. մինչ երկար ձայնաւորները հարկադրաբար կ'արձանագրուին բառին կազմին մէջ ʾ-ʿ-ˈ տառերով: Արդ, հայերէնը կարճ ու երկար ձայնաւորի զանազանութիւն չունի, ինչպէս այդ տեսանք արդէն յունարէնի Օմեգային առթիւ. մեր բոլոր ձայնաւորները կարճ են: Սակայն այս հանգամանքը պատճառ չէր կրնար ըլլալ, որ մեր նախնիները չնկատէին օտար, իմա՝ ասորերէնի, նրբութիւնները: Ասորերէնը այնքան ծանօթ ու հարազատ էր մեր թարգմանիչներուն,- չմոռնալ, որ մեր գիրերը Ասորիքի մէջ հնարուած են,- որ անոնք չէին կրնար անտեսել կամ աննկատ ձգել ասորական բառերու վերջը արտասանուող երկար **ա**-ն: Հնչիւնաբանական ու տառադարձական այս կացութիւնը անոնք լուծած են, ահա, բառավերջի այդ Ալեֆին դիմաց արձանագրելով **Այ** տառախումբը, որ պէտք է ծառայէր արտասանուելու ոչ թէ իբրեւ **ay**, այլ իբրեւ **aˊ**: Ուրեմն **աˊ** եւ ոչ թէ **այ**: Այսպէս լուծուած է հարցը մեր առաջին թարգմանիչներուն՝ Սահակի, Մեսրոպի, Եզնիկի, Կորիւնի ու ասոնց գործակիցներուն ու ժամանակակիցներուն կողմէ: Այս լուծումը ձեւով մը մէկ զուգահեռ տարբերակը կամ հաւասարազօրն էր յունական Օմեգային տրուած լուծումին, որ այդ տառին դիմաց հանուած **Ով**-ն էր: Ուրեմն՝

Օմեգա>Ով Ալեֆ>Այ

Այս երկու հնարներն ալ ծառայած են օտար բառերը ճիշդ ու հարազատ արտասանելու:

Այսպիսին էր կացութիւնը մեր առաջին թարգմանիչներուն եւ անոնց անմիջական աշակերտներու օրերուն, ըսենք՝ Ե. դարու մօտաւորապէս մինչեւ վերջերը, երբ ահա հայերէնի մէջ սկսան յառաջանալ պատմական հնչիւնափոխութեան շատ բարդ ու տարողունակ երեւոյթներ, որոնցմէ մէկն ալ կը վերաբերի բառավերջի **յ**-ին, որ սկսաւ պարզապէս համրանալ, հոն ուր ան գոնէ երբեմն շատ հաւանաբար կ'արտասանուէր. այսպէս՝ **խաղայ, բարւոյ, սիրոյ** սկսան արտասանուիլ **խաղա, բարւո, սիրո** եւն.: Ինքնաբերաբար մոռացութեան մատնուեցաւ նաեւ բառավերջի **յ**-ին դերը ասորական փոխառութեանց մէջ: Այնուհետեւ նոր հասնող սերունդներու մտածողութեան մէջ բառավերջի **յ**-ն,- ինչ ալ եղած ըլլար անոր ծագումն ու դերը,- ըմբռնուեցաւ իբրեւ ուղղագրական համր տաբու մը, ձեւով մը զարդ, որ յատուկ էր հայերէնին եւ պէտք է հարկադրաբար երեւէր բառավերջի **ա**-էն (եւ ո-էն) ետք եւ առանց որուն կարելի չէր ըմբռնել մեր բառերը, ճիշդ ինչպէս մենք կամ մեզմէ շատեր կը մտածեն այսօր ալ: Եւ ճիշդ այս մտածողութիւնը պատճառ դարձաւ, որ հետագային բառավերջի **յ**-ով գրուէին այն բոլոր նոր փոխառութիւնները, որոնք ո՛չ փոխատու լեզուներու մէջ **յ** կը բովանդակեն, ո՛չ ալ հայերէնի մէջ կ'արտասանուին **յ**-ով: Մինչդեռ, մեր նախնիները, ինչպէս տեսանք, անվարան **ա** գրած են հոն, ուր բառս կ'արտասանուէր բառավերջի **ա**-ով, եւ **այ** դրած են հոն, ուր ան կ'արտասանուէր բառավերջի **այ**-ով: Ահա այդպիսի փոխառութեան սխալ մեկնաբանուած ու տառադարձուած կամայական օրինակներ՝ անկախ իրենց կենսունակութենէն եւ արդի հայերէնի մէջ ունեցած յաճախականութենէն.

ա) Արդի պարսկերէնէն

Աշկարայ (անայլայլ, առանց այլեւայլի, անտատան), **բահրայ** (տասանորդ), **բէչարայ** (խեղճուկ), **բէվաֆայ** (անհաւատարիմ), **զառինայ** (մկնդեղ), **թամաշայ** (տեսարան, խառնակութիւն), **խարուանդայ** (իշավար), **շահինայ** (ոստիկան), **քուֆթտայ** եւն.:

Ասոնք փոխ առնուած են պարսիկներու իսլամացումէն ետք եւ ընդհանրապէս մերժուած են գրական հայերէնի կողմէ: Հատ ու

կենտ կը կիրարկուին ժողովրդախօսակցական մակարդակի վրայ միայն:

բ) Արաբերէնէ

Բակլայ, կապայ, հինայ, հերիսայ, նշայ, նուսխայ (դեղագիր, հմայագիր), **քուշնայ** (ուտելի բոյս մը), **օշնայ** (մամուռի տեսակ մը), **դուռայ** (վերարկու), **կարուրայ** (միզաման), **մաշարայ** (ածու), **նոպայ** (ջերմութիւն), **շումրայ** (վայրի սամիթ), **սափրայ** (մաղձ):

Աւելի նորագոյն փոխառութեանց մէջ զգալի է որոշ տատանում մը.

օխա - Գայայեան եւ Աթանասեան կը գրեն **յ**-ով, Տէր Խաչատուրեան՝ առանց յ-ի, հայր Կոռանեան չունի:

քուլա - Գայայեան չունի, միւսները գրած են **յ**-ով:

մեսիա - **յ**-ով գրութեան ոչ մէկ պարագայ:

լուբիա - **յ**-ով գրութեան ոչ մէկ պարագայ:

Անշուշտ գովելի օրինակ մըն է այս վերջինը. սակայն ինչու՞ **բակլայ**-ն պէտք էր **յ**-ով վերջանար. չէ՞ որ երկուքն ալ արաբական փոխառութիւններ են, այսինքն՝ որդեգրուած են լեզուական նոյն շրջանէն ու միջավայրէն:

մուսա - միշտ կը վերջանայ **յ**-ով (Մ. Պեշիկթաշլեան արդէն կանխած է աշխարհաբար գրողները ու կիրարկած է այս բառը **մուսայ** ձեւով. «*Ուր հէգ **մուսայս** մատն ի յերեր մոռանայցէ երգել զսէր…*»):

ամիրա - Գայայեան չունի. Աթանասեան կը գրէ **յ**-ով, իսկ Տէր Խաչատուրեան ու Կոռանեան կը գրեն առանց **յ**-ի:

ՈՅ

Այս տառազոյգը աշխարհաբարի մէջ ունեցած է եւ արեւմտահայերէնի մէջ մինչեւ հիմա կը շարունակէ ունենալ երեք տարբեր արտասանութիւններ՝ նայած անոր դիրքին.

ա) երկու բաղաձայնի միջեւ ան ունի երկբաբառային **ouy-ույ** արտասանութիւնը, ինչպէս՝ **քոյր-քույր, կոյտ-կույտ, թոյն-թույն** եւն.:

բ) բաղաձայնի մը ու ձայնաւորի մը միջեւ ան ունի **oy** արտասանութիւնը, ինչպէս՝ **գոյական, հոյակապ, շոյանք** եւն.: Այս նոյն արտասանութիւնը ունի ան միավանկ գոյականներու վերջը. օրինակ՝ **գոյ, խոյ, կոյ, հոյ, Նոյ**:

գ) բազմավանկ բառերու վերջը ան ունի **օ** արտասանութիւնը, օրինակ՝ **դշխոյ-դժխօ, պիտոյ-պիտօ, սիրոյ-սիրօ, հանածոյ-հանածօ, պահածոյ-պահածօ** եւն.: Այս նոյն արտասանութիւնը ունի ան միավանկ գրաբարեան **գոյ** բային մէջ եւս, որ եզակի օրինակ է ամբողջ հայերէնի մէջ:

Իսկ ինչպէ՞ս կ'արտասանուէր ան հին՝ դասական հայերէնի մէջ, ըսենք՝ Մեսրոպի օրով: Արդի տուեալներով՝ մենք ոչ մէկ ստոյգ պատասխան ունինք այս հարցումին, մասնաւորաբար բ. եւ գ. կէտերու առնչութեամբ, որոնք այնքան ալ չեն հետաքրքրեր մեզ, քանի որ ներկայիս պիտի ծանրանանք միմիայն ա. կէտին, այսինքն՝ **ոյ**-ի ենթադրեալ երկբարբառային արտասանութեան վրայ միայն:

Այս կիրարկութիւնը կը գտնենք մասնաւորաբար պարսկերէնէ մեծաթիւ փոխառուեանց մէջ, օրինակ՝ **anōš-անոյշ, kapōt-կապոյտ, kōr-կոյր, kōt-կոյտ, makōk-մակոյկ, mōk-մոյկ, patrōk-պատրոյգ** եւ շատ ու շատ ուրիշներ, որոնց մէջ **ոյ** կը զուգակշռէ միջին պարսկերէնի **ō** երկար ձայնաւորը (ոյ=ō): Այս վերջին ձայնաւորին էութիւնը ծանօթ է արդի լեզուաբանութեան. ան կը ներկայացնէ սեմական կամ փիւնիկեան w տառը, որ պարսկերէնի մէջ հաւասարապէս կ'արտասանուէր իբրեւ երկար O եւ երկար Ou, ճիշդ ինչպէս է պարագան ներկայիս արաբերէնի մէջ, երբ ան կը կիրարկուի իբրեւ ձայնաւոր (եւ ոչ իբրեւ բաղաձայն):

Եւ ահա մենք կը բախինք այն նոյն հարցումին, որ ծառացաւ մեր առջեւ յունական Օմեգային եւ ասորական Ալեֆին առթիւ, որոնք նմանապէս երկար ձայնաւորներ են: Մեր տառադարձութեանց մէջ մտնող Յ կիսաձայն տառը (օրինակ՝ **անոյշ**-ին մէջ,) կ'արտասանուէ՞ր, թէ՞ կը ծառայէր միայն երկարելու Ո-ին արտասանութիւնը: Այսինքն՝ **անոյշ**-ը **անո՞ւշ** էր, թէ՞ **անո՜ւշ**: Ճիշդ ինչպէս որ Օմեգան կրող յունարէն բառերը Վ չեն ունեցած իրենց կազմին մէջ, եւ իրենց վերջը Ալեֆ կրող ասորական բառերը Յ չեն ունեցած իրենց վերջը, այնպէս ալ Ō ունեցող պարսկական բառերը Յ չեն ունեցած իրենց կազմին մէջ: Հապա ուրկէ՞ կու գայ հայերէնի Յ-ն եւ ի՞նչ է ասոր հնչիւնական արժէքը: **Անոյշ**-ը, օրինակ, **անո՞շ** էր, **անո՞Ւշ** էր, թէ՞ **անոՒՅշ** էր: Այսօր դժուար է հաւատալ **անոշ** արտասանութեան մը, բոլորովին անտեսելով **յ** տառին ներկայութիւնը այսպիսիներու կազմին մէջ,

բայց եւ այնպէս մենք ունինք բաւական զօրաւոր կռուան մը այսպէս մտածելու. հայերէնէ փոխ առնուած վրացական բառերու մէջ այդ **յ** կիսաձայնը չէ արձանագրուած, բացակայ է ան. օրինակ՝ մեր **համբոյր**-ը վրացերէնի մէջ տուած է **ամբորի,** այս ալ կը նշանակէ, որ վրացին հայուն բերնէն **(հ)ամբոր** կը լսէր եւ ոչ թէ (հ)**ամբույր**: Այս տրամաբանութեամբ ալ պարսկական Ō-ն մնացեալ բառերուն մէջ եւս պիտի արտասանուէր իբրեւ երկարացուած Ո, այսինքն՝ Ո՛ եւ **ոչ** թէ **Ույ**. ուրեմն՝ **անո՛շ**, որուն մէջ մեսրոպեան Յ-ն կը ծառայէր պարզապէս երկարելու մեսրոպեան Ո-ն, որ ունէր Օ-ի արտասանութիւնը. այլ խօսքով՝ ՈՅ զուգակշիռն էր պարսկական Ō-ին, որ է Ո՛, ճիշդ ինչպէս յունական տառադարձութեան մէջ **Ով**-ը Ո՛ էր, իսկ ասորական տառադարձութեանց մէջ **Այ**-ը Ա՛ էր:

*

Այսպէսով մենք կը յանգինք տառադարձական շատ հետեւողական սկզբունքի մը, որ գործած է դասական հայերէնի մէջ, ուր մեր նախնիները հարազատօրէն ներկայացնելու համար յունարէնի, ասորերէնի ու պարսկերէնի երկար ձայնաւորները,- որոնցմէ զուրկ է հայերէնը,- հայկական համապատասխան պարզ ձայնաւորները օժտած են կիսաձայնով մը, որ ասորերէնի ու պարսկերէնի պարագային **Յ**-ն է, իսկ յունարէնի պարագային **Ւ** կիսաձայնն է, սակայն տրուած ըլլալով որ **Ո**-ն իրեն կից **Ւ**-ով պիտի արտասանուէր **ՈՒ**, ապա **Ւ** կիսաձայնը փոխարինուած է **Վ**-ով:

Այս հետեւողականութիւնը հաստատող բաւարար օրինակներ տուինք արդէն: Պատահած են կարգ մը փոխանցումներ եւս ի նպաստ **Ոյ**-ին. օրինակ՝ յունարէն **ιων** բառը տառադարձուած է **յոյն**՝ փոխանակ **յովն**-ի, որ սպասուած ձեւն էր (ուրիշ ոչ մէկ անգամ **ω** տառադարձուած է **ոյ**). ասորական **yaxmūrā** բառը տառադարձուած է **յամոյր**՝ փոխանակ **յամուր**-ի, որ իր կարգին սպասուած ձեւն է (քանի որ ասորական **ū**-ն, որ ըստ էութեան երկար **Ու** մըն է այդ լեզուին մէջ, հայերէն կանոնաւորապէս պարզ **Ու** տուած է), նմանապէս ասորական **zauga** բառը, որ տրամաբանօրէն պէտք է տար **զաւգ** (Au=Աւ), որպէսզի հետագային դառնար **զօգ**, իր կարգին տուած է **զոյգ**: Ասոնք օրինակներ են, որոնք կը հաստատեն **Ոյ**-ին կենսունակութիւնն ու վայելած ժողովրդականութիւնը:

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆ

Ծանօթ իրողութիւն է, որ հայերէնը միշտ ալ խորշած է արմատական կրկնակ բաղաձայնէն. եղած օրինակները խաբուսիկ են. այսպէս՝ կկու-կուկու, ճճի-ճիճի, տարր-տարեր, թթու-թութու, մրրիկ-մրուրիկ եւն., ուրեմն այս կրկնութիւնները յառաջացած են հնչիւնափոխութեան հետեւանքով միայն: Յատկանշական է, որ կրկնակ բաղաձայնէ խուսափումը անշեղ գործած է փոխառութեանց պարագային եւս, բոլոր լեզուներէ, սակայն յատկապէս ասորերէնէ կատարուած փոխառութեանց մէջ, ուր կրկնակ բաղաձայնի պաշարը զգալիօրէն կը գերազանցէ միւս լեզուները: Ստորեւ տեսնենք այն լուծումները, որ հայերէնը տուած է ասորերէնէ փոխառեալ կրկնակ բաղաձայններուն:

Մեր հաշուումներով՝ ասորական փոխառութեանց 19-ին բնորդները օժտուած են կրկնակ բաղաձայնով. պատշաճութեան համար երկու անջատ խումբերով կը սերտենք ասոնք: Ձախին կը դնենք ասորական բնորդը, աջին՝ հայերէն համարժէքը:

ա) գեզզըթա - գզաթ (բուրդ)
գուբբա - գուբ (փոս)
կակկըւա - կաքաւ
խածծինա - կացին
մըգալլըթա - մագաղաթ
մըխատտա - մախաթ (դուր)
մաննա - մանանայ
մաշշար - մաշար
շաբբըթա - շաբաթ
սափփիլա - շափիւղայ
սափփար - սափրել
քեննարա - քնար

Այս խումբի ասորական բառերը, անցնելով հայերէնին, ստացած են բաւական խայտաբղէտ լուծումներ: Ութ բառեր՝ **գզաթ, գուբ, մագաղաթ, մաշար, շաբաթ, սափրել, շափիւղայ, քնար**, պարզապէս նետած են իրենց բաղաձայներէն մէկը եւ պահած են միայն միւսը՝ առանց որեւէ փոփոխութիւն մտցնելու պահուած բաղաձայնի որակին մէջ: **Կաքաւ, կացին, մախաթ** բառերը հայերէնի մէջ նմանապէս նետած են իրենց բաղաձայններէն

մէկը, սակայն մնացող բաղաձայնը փոխած է իր որակը. ասորական զոյգ խուլերը հայերէնի մէջ տուած են մէկական խուլ շնչեղ՝ **կկ>ք, ծծ>ց, տտ>թ**: Իսկ ասորական **մաննա** բառին կրկնակ ռնգային բաղաձայններուն միջեւ հայերէնը մուծած է **ա** ձայնաւորը՝ պարզապէս խուսափելով բաղաձայնի կրկնութենէ:

բ) ագգանա - անգան (սանդ, լական, տաշտ)
թագգար - թանգար (վաճառական)
ծեծծըլա - ծնծղայ
մագգըլա - մանգաղ
շափփուդա - շամփուր
քաքքըրա - քանքար
խազզուրա - խնձոր

Այս խումբի ասորական բառերը, անցնելով հայերէնին, իրենց զոյգ բաղաձայններէն առաջինը վերածած են **ն**-ի՝ **գգ>նգ, ծծ>նծ, փփ>մփ, քք>նք, զզ>նձ**: **Շամփուր**-ին մէջ **ն**-ի փոխարէն ունինք **մ**, որովհետեւ հայերէնի մէջ **բ, պ, փ** պայթականներէն առաջ **ն** չի կրնար գալ, այլ միայն **մ**. իսկ բառավերջի ասորական **դ**-ին հայերէնի մէջ **ր**-ի վերածումը խորթ չէ հայերէնին, օրինակ՝ պարսկական **adšav** բառը հայերէն տուած է **արշաւ**, այլ օրինակներ չեն պակսիր: Ինչ կը վերաբերի **խազզուրա-խնձոր** զոյգին, Աճառեան ոչ մէկ ակնարկութիւն ըրած է ասոր, մինչ Հիւբշման կը մտածէ, թէ կրնայ պատահիլ, որ ասորիները իրե՛նք փոխ առած ըլլան այս բառը հայերէնէն, թէեւ հակառակն ալ անկարելի չի համարեր[13]: Այս վերջին պարագային **զ>ձ** անցումը բոլորովին օրինաչափական է. պարսկերէնէ փոխառութեանց մէջ եւս կը գտնենք նման անցումներ՝ **darzak>դերձակ, zēt>ձէթ** եւ ուրիշներ:

Աճառեան, ակնարկելով բ. խումբի օրինակնրուն, կը գրէ. «Մի խումբ բառերի մէջ, ուր որ ասորին ունի կրկնակ բաղաձայն, հայերէնի մէջ առաջինը դառնում է **ն**»[14]: Աճառեանէն ետք ուրիշ լեզուաբան մը կը կրկնէ նոյն միտքը՝ հիմնուելով ասորական **քաքքար**-ին վրայ, որ հայերէն դարձած է **քանքար**. «*Ինչպէս տեսնում ենք բառամիջի երկու **քք** հնչիւնները հայերէնում վեր են ածուել **նք**-ի, սա օրինաչափ է ասես սեմական լեզուներից հայերէնին անցած բառերի համար. որտեղ կրկնակի պայթական հնչիւններ կան բառամիջում դրանց դիմաց հայերէնում առաջինը վեր է ածւում ռնգային **ն** հնչիւնի: Օրինակ՝ ասորերէն **մագգելա***

հայերէն ***մանգաղ***...»[15]: Ինչպէս նկատելի է, նման ակնարկ մը կրնայ մեծ շփոթի տեղիք տալ՝ ձգելով այն տպաւորութիւնը, թէ ասորական բառերու այդ կրկնակ բաղաձայններէն առաջինին **ն**-ի վերածումը միայն հայերէնին յատուկ երեւոյթ մըն էր, ինչ որ ճիշդ չէ: Նման ինչիւնափոխութիւն մը գործած է հայերէնէն դուրս ու հայերէնէն անկախ՝ լեզուական բոլորովին տարբեր միջավայրերու ու պայմաններու մէջ, որոնք շատ ծանօթ չեն. օրինակ՝ **ագգանա** դարձած է **ինգան**՝ արաբերէնի մէջ, **ծեծծըլա>ծանածլ**՝ եթովպերէնի մէջ, **մագգըլա>մինգալ**՝ արաբերէնի մէջ, **քաքքըրա>գինգոր**՝ ղպտերէնի մէջ: Հիւբշման բերած է **թագգարա>թանգարա** օրինակը մանդայերէնէն, որ սեմական շիջած լեզու մըն է: Բաց աստի, ասորական **մշշար** բառին դէմ մենք ունինք **մաշար** (սղոց)՝ առանց **ն**-ի, մինչ արաբերէնը ունի **մինշար**՝ ն-ով. այս մէկ հատիկ օրինակը պէտք է բաւէր հաստատելու համար, որ ասորական կրկնակ բաղաձայններէն առաջինին **ն**-ի վերածումը հայերէնին յատուկ երեւոյթ մը չէ, եւ թէ հայերէնը միայն հետեւող եղած է աւելի ընդհանրական երեւոյթի մը, որ կայացած է իրմէ դուրս ու իրմէ անկախ եւ որուն ծննդաբանութիւնը կը խուսափի մեր գիտութենէն: Շատ հաւանական է, որ գոյութիւն ունեցած ըլլայ ասորական բառբառ մը, որ կրկնակ բաղաձայններէն առաջինը **ն**-ի վերածելու հակամէտ էր, եւ հայերէնը, որ կը խորշի կրկնակ բաղաձայնէ, հետեւած ըլլայ յիշեալ բարբառին: Այս առթիւ պիտի թուենք շատ յատկանշական պարագայ մը. այս նոյն երեւոյթը զարմանալիօրէն կը պարզեն կարգ մը յունական ծագումով բառեր եւս. օրինակ՝ յունարէն ερυγγιον բառը լատիներէն տուած է eryngium (հայերէնը՝ երնջնակ), ուր առկայ է gg>ng ինչիւնափոխութիւնը: Յոյները իրենք ասորական այբուբենը կոչած են στρογγυλη (stroggulé), եւ այս անունը այսօր համաշխարհային բանասիրութեան մէջ ծանօթ է estrangelo անունով, ուր դա՛րձեալ առկայ է **gg>ng** ինչիւնափոխութիւնը: Աւետարանին յունարէն անունն է Ευαγγελλιον (Euaggellion), որ արաբերէն դարձած է إنجيل, իսկ ֆրանսերէն՝ Evangile. երկու անուանումներուն մէջ ալ առկայ է **gg>ng** ինչիւնափոխութիւնը, որ ոչ մէկ առնչութիւն ունի հայերէնին հետ: Յունական σπόγγος (spoggos) բառը հայերէն, այո, տուած է **սպունգ**, բայց նոյնը

արաբերէն տուած է إسفنجة, ֆրանսերէն՝ éponge, իսկ անգլերէն՝ sponge. այս բոլորին մէջ առկայ **g>ng** հնչիւնափոխութիւնը, ըսելու հարկ չկայ, չէր կրնար հայերէնի ներգործութեամբ յառաջացած ըլլալ:

Բերենք կրկնակ բաղաձայնի պարզեցման քանի մը այլ օրինակներ եւս. մեր **եկեղեցի** բառը փոխառութիւն է յունարէնէ, ուր ան կը գրուի երկու **կ**-ով. մեր **քուռակ**-ը փոխառութիւն է պարսկերէնէն, ուր ան կը գրուի երկու **ր**-ով, իսկ եբրայական **ռաբբի** բառը ընդհանրապէս տառադարձած ենք **ռաբի, ռաբուն,** հազուագիւտ՝ **րաբուն(ի)** ձեւը եւս. յիշենք Շնորհալիի «Առաւօտ լուսոյ»-էն՝

Րաբունդ *երկնաւոր,*
Րոտեա՛ զաշակերտս
Րամից երկնայնոց:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Պարսկական գիրերը մեծ տարածում ունէին հայոց առօրեային մէջ,- ինչպէս յատուկ նշած է Մովսէս Խորենացի,- սակայն գոյութիւն չէ ունեցած պարսկերէն որեւէ գրաւոր երկ, որ թարգմանութեան արժանացած ըլլայ եւ որով հաստատուած ըլլայ պարսկերէնէ-հայերէն տառադարձական աւանդոյթ մը:

[2] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն, Ա. Հատոր*, Երեւան, Հայպետհրատ, 1940:

[3] Արմենակ Եղիայեան, *Մեսրոպեան Տառերու Ակունքները,* Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 2005, էջ 19, 20 եւ յաջորդք:

[4] Իբրեւ սեմական այբուբենի նմուշ ընտրած ենք արաբականը այն տրամաբանութեամբ, որ ան աւելի մատչելի է հայ ընթերցողներուն, այլապէս պէտք է գիտնալ, որ արաբերէնը դասական շրջանին անծանօթ էր մեր մատենագիրներուն: Յամենայն դէպս իրենց գրաբանական յատկութիւններով սեմական բոլոր այբուբենները իրարու նման են:

[5] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան, Հտր. Բ.*, Հրատ. Սեւան, Տպ. Սեւան, 1972, էջ 22:

[6] Նկատի ունինք դասական եթովպերէնը, որ կը կոչուէր Գեեզ եւ որը յառաջացած է արաբական կամ նախաարաբական բարբառէ մը: Եթովպացիներու նախնիները, գէթ ասոնց մեծագոյն մասը, եկած են պատմական Սաբայէն, որ կը համապատասխանէ Արաբական թերակղզիի մօտաւորապէս ծայրագոյն հարաւին՝ արդի Եմենին:

[7] Ե. դարուն փիւնիկերէնն ու արամէերէնը շիջած լեզուներ էին, իսկ սեմական միւս ժողովուրդներուն, գոնէ արաբներուն, հետ որեւէ շփում չունէինք: Սեմական ըլլալով կը մնային ասորերէնն ու եբրայերէնը:

[8] Յունարէնը շատ անկատար կը տառադարձէր սեմական բառերը, քանի զրկուած էր ասորական ու եբրա ת-ש-ע-ס-ש տառերէն, որոնց դիմաց պարզապէս կ'անճրկէր ան ու չէր ալ յաջողեր միօրինակ վերաբերում ցոյց տալ՝ իր այս ընթացքին մէջ զարմանալի հեշտութեամբ մը քարշ տալով հայերէնը եւս:

Այսպէս՝ ص-ش-س տառերը հաւասարապէս կը տառադարձէր իր մէկ հատիկ Σ-ով, իսկ ع տառը ընդմիշտ կը ջնջէր՝ ոչինչ ունենալով դնելիք անոր դիմաց. օրինակ՝ شمعون յատուկ անունը յունարէն տուած է Σίμων, որուն հետեւողութեամբ հայերէնը գրած է Սիմովն՝ առանց նկատի ունենալու, որ ունինք մեսրոպեան Շ տառը. թէեւ այլուր այս նոյն անունը ուղղակի ասորերէնի վրայէն տառադարձուած է Շմաւոն ձեւով ալ, ինչ որ շատ աւելի հարազատ է սեմական արտասանութեան: Յունարէնը իսպառ կ'անտեսէր սեմական ת տառը, որուն դիմաց ոչինչ կը դնէր, իսկ շ-ին հանդէպ ունէր կրկնակի վերաբերում մը. կա՛մ χ մը կը հանէր անոր դէմ, կա՛մ ընդմիշտ կ'անտեսէր զայն. այսպէս, սեմական راحيل անունին դիմաց յունարէնը դրած է Ραχηλ, այսինքն՝ շ-ին դիմաց հանած է χ, որ Խ կ'արտասանուի. իսկ այս χ-ն հայերէն կու տայ Ք, ուստի անունս տառադարձուած է Ռաքէլ, որ այնքան հեռու է սեմական բնորդէն հոն, ուր կարելի էր պարզապէս գրել Ռախիլ: Իսկ حقل բառին մէջ, որ կը նշանակէ **դաշտ**, յունարէնը բոլորովին ջնջած է շ-ն ու գրած է ακελ, որուն հետեւողութեամբ հայերէնն ալ մեքենաբար դրած է **ակեղ**՝ իր կարգին անտեսելով բնագրային շ-ն, որուն դիմաց ասորերէնէ թարգմանութեանց մէջ կանոնաւորապէս կը գտնենք մեսրոպեան Խ մը: Վերջին օրինակ մըն ալ այն այլանդակ զառածումներէն, որոնց մատնած է մեզ յունարէնը. حبقوق յատուկ անունը բոլորովին խեղեալ տառադարձութեամբ մը յունարէն տուած է Αμβακουμ, որուն դիմաց հայերէնը հաւատարմօրէն իր կարգին հանած է Ամբակում, մինչդեռ առարկայական մօտեցում մը պիտի տար Խաբակկուկ կամ Խաբաքուկ. ու՛ր է Ամբակում-ը եւ ուր...Խապաքուկ-ը:

[9] Աշոտ Աբրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագիտութիւն*, Երեւան, 1944, էջ 242:

[10] Մեսրոպ Յ տառը յղացած էր իբրեւ ոչ-վանկարար կիսաձայն Ի մը, մինչ այս վերջինը լիարժէք ու վանկարար ձայնաւոր մըն է: Այս նրբութիւնը եւ պերճանքը օրին միայն հայերէնի այբուբենը ունէր: Յունարէնի Ιι տառը,- որ iota կը կոչուի, հայերէն՝ յովտ,- կը կիրարկուէր թէ՛ իբրեւ լիարժէք ձայնաւոր, թէ՛ իբրեւ կիսաձայն: Յունական այս տառին զոյգ կիրարկութիւններով օժտուած էր սեմական ي տառը, որ yod կը կոչուէր եւ որը նմանապէս ձայնաւոր է (օրինակ՝ في բառին մէջ) ու կիսաձայն է (օրինակ՝ ايام բառին մէջ): Ուրեմն Յ-ն iota-ին ու yod-ին մի՛այն կիսաձայնային կիրարկութիւնները կը զուգակշռէր տառադարձութեանց պարագային:

[11] Խաչիկ Վրդ. Աթանասեան, *Յանգարան եւ Թանգարան Հայ Լեզուի*, Պէյրութ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1961:

[12] Աճառեան, *Հայոց Գրերը*, Վիեննա, 1928, էջ 318:

[13] Հայնրիխ Հիւբշման, *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, էջ 278, § 44:

[14] Աճառեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն*, *Հտր. Ա.*, էջ 346:

[15] Ներսէս Մկրտչեան, *Բառերի Կենսագրութիւնից*, Երեւան, Զանգակ-87, 2008, էջ 196:

A FEW ISSUES IN CLASSICAL ARMENIAN TRANSLITERATION
(Summary)

ARMENAG YEGHIAYAN
armenag@gmail.com

The author focuses on certain aspects of Classical Armenian tranliteration, basinghis study on fifth-century Armenian root words borrowed from the Latin, Greek, Persian, Hebrew and Assyrian languages.

He argues that Classical Armenian established a very deep and broad transliteration tradition, setting a precedent from the first time those borrowed words were written in Armenian letters.

The author notes that the some 1400 Persian root words imported to Classical Armenian all came through the centuries-old daily communication that existed between the two nations. This is why the transliteration of these words does not follow a strict and well-established set of rules. The borrowed Assyrian words (around 210) were also imported through centuries-old daily communication that existed between the Assyrians and the Armenians. However, these words by and large follow a set of transliteration rules due to the large number of clerics who used to serve in Armenia throughout the 4th and early 5th century, as well as due to the large number of young Armenian students who went to Assyria to learn the language and translate the Bible from Syriac.

Unlike these two cases, all the 900 root words imported from the Greek language came through translating Greek scriptures into Armenian, as Armenians did not have direct daily contact with the Greeks. The author notes that, contrary to expectations, Greek to Armenian transliteration is not consistent.

The author highlights the proper name David, which is transliterated into Armenian as Davith, and argues that the Ethiopian language writes this proper name like the Armenians. Furthermore, he discerns a set of patterns in certain root words borrowed from Greek and hypothesises that Classical Armenian had established a tradition for borrowed words which had double consonants. The author proves as well that 5th century Classical Armenian had established a firm rule regarding the transilteration of elongated vowels (which Armenian lacks) in Assyrian, Greek and Persian, by adding semi-sounds to the corresponding Armenian vowel.

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹՈՒՄ
(ԸՍՏ ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ)[1]

ԿԱՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
karenhovhov@mail.ru

ՄՈՒՏՔ

Այլ ժողովուրդների նման հայոց մէջ եւս առկայ են համակարգուած պատկերացումներ աշխարհի կառուցուածքի, տարածութեան եւ ժամանակի մէջ աշխարհակառոյցի (աշխարհի մոդէլի) դիրքի եւ յարաշարժութեան մասին: Աշխարհակառոյցը կազմակերպում եւ պայմանաւորում է իր մէջ գոյութիւն ունեցող մարդկային հանրութիւնը՝ աշխարհի մէջ մարդու յստակ դերով եւ տեղով, դրա հիմքով է հաստատւում կարգուկանոնը, օրէնքը՝ քաոսը վերափոխելով կոսմոսի: Աշխարհի մոդէլը համընդհանուր երեւոյթ է, որն ունի նախատիպային հիմք: Դրա մասին պատկերացումներն արտայայտւում են տարբեր ձեւերով. բանահիւսութիւն, ճարտարապետութիւն, կրօն եւ հաւատալիք եւն.:

Աշխարհի մոդէլին որպէս հայեացքների համակարգ անդրադարձել են շատ գիտնականներ. Մ. Էլիադէ[2], ՈՒ. Եուսեուկով[3], ՈՒ. Տոպորով[4], հայ գիտնականներից՝ Ա. Մնացականեան[5], Ս. Յարութիւնեան[6], Հ. Պետրոսեան[7], Թ. Հայրապետեան[8], Լ. Սիմոնեան[9] եւ այլք: Իւրայատուկ տեղ է գրաւում Կ. Գ. Եունգի *Փիլիսոփայական Ծառ*[10] աշխատութիւնը, որտեղ հեղինակը տիեզերական ծառը բացայայտում է հոգեբանական տեսակէտից՝ բերելով բազմաթիւ առասպելական, փիլիսոփայական, ալքիմիական նիւթեր, ինչպէս եւ հոգեբանական այցելութիւնների ընթացքում իր այցելուների ձեռքով արուած բազմաթիւ նկարներ:

Սոյն աշխատասիրութեան համար օգտագործուած բանահիւսական նիւթերը վերցուած են հայ ժողովրդական աւանդութիւններից[11], հեքիաթներից[12], հանելուկներից[13], երգերից[14]:

Ա. Լոսեւը, քննելով Եու. Լոտմանի յօդուածը մոդէլների մասին, անդրադառնում է հեղինակի հետեւեալ պնդմանը. «*Մոդէլաւորող համակարգը տարրերի կառուցուածքը եւ դրանց միացման կանոններն են, որ գտնւում են ճանաչման, գիտակցման, կարգաւորուածութեան առարկայի ամբողջապէս հաստատուած զուգադրութեան իրավիճակում*», որը ճիշտ է համարում եւ շարունակում է. «*Մոդէլաւորել չի նշանակում ցանկացած իրականութեան արտացոլում, այլ յարաբերակցել իրար միջեւ արտացոլման բոլոր տարրերը եւ դարձնել այն յստակ տրամաբանական համակարգ*»[15]: Այսպիսով աշխարհի մոդէլ ասելով պէտք է հասկանալ տուեալ հանրութեանը բնորոշ տարածա-ծաւալային եւ ժամանակային-տիեզերական ընկալումները, աշխարհում դիրքորոշուելու մարդու տրամաբանական ուղին: Վ. Տոպորովը տիեզերական ծառին *կառուցուածքը* վերագրում է, մինչդեռ Լոսեւը ճշտում է մտցնում, որ *կառուցուածքը* ոչ թէ տիեզերական ծառին է վերաբերում, այլ աշխարհի մոդէլին, որի դրսեւորումներից է տիեզերական ծառը: Լոսեւը այնոը համարում է արքետիպ եւ աշխարհի մոդէլի համընդհանուր գաղափար[16]:

Աշխարհի տարածական մոդէլն արտայայտւում է մի շարք գաղափարներով եւ կերպարներով: Տիեզերական սիւն - յայտնի թէ՛ արխայիկ, թէ՛ աւելի զարգացած մշակոյթներում, երկնքի ու երկրի միջեւ կապը, որ մարմնաւորւում էր լեռան, պալատի, տաճարի, երբեմն երկնային սիւնի մէջ[17]: Տիեզերական ծառը լրացնում, կրկնորդում կամ փոխարինում է տիեզերական լեռանը: Երկուսն էլ աշխարհի ուղղահայեաց առանցքի դրսեւորումներն են[18]: Երկբաժանութեան նախատիպարի համաձայն, կենաց ծառը կապւում է իգական, իսկ տիեզերական ծառ-սիւնը՝ արական սկզբի հետ, որոնք համապատասխանաբար պտղաբերութեան եւ երկինք-երկիր տիեզերակառոյցի, նաեւ միմեանց հետ կապի խորհրդանիշներն են[19]: Ըստ Էլիադէի, տիեզերական ծառը մի կողմից խորհրդանշում է տիեզերքը իր յաւերժական վերածնութեամբ, հանդիսանալով կեանքի անսպառ ակունք, որով դառնում է կենաց ծառ եւ կապւում է արարման, պտղաբերութեան, ծնման հետ, ստանալով բացարձակ իրականութեան եւ անմահութեան գաղափար: Տիեզերական ծառը հարստանում է բազ-

մաթիւ առասպելական երկուորեակներով եւ ձեռք է բերում իգական որակներ՝ անցնելով մեծմօր արքետիպին: Միւս կողմից ներկայացնում է երկինքը, երբեմն՝ Ծիր Կաթինը[20]:

Ուղղահայեաց աշխարհակառոյց. Տիեզերքը որպէս մոդէլ ձեւաւորւում է վերից վար կամ վարից վեր՝ աշխարհի առանցքով: Այսպիսով տիեզերքը բաժանւում է երեք մասի. երկինք, երկիր եւ ստորերկրեայք. այդ մասերը միշտ չէ, որ հաւասար են իրար:

Ըստ Էլիադէի, տիեզերակառոյցի հիմնական ուրուագիծը երեք խոշոր տիեզերական տարածքներն են, որոնցից կարելի է հետեւողականօրէն անցնել, քանի որ դրանք միացուած են առանցքով: Այդ առանցքը անցնում է անցքի միջով, որտեղով աստուածներն իջնում են երկիր, մեռեալները՝ գնում ստորգետնեայ աշխարհ[21]: Ըստ Տոպորովի, տիեզերական ծառը[22] մարդկային հանրութիւնների աշխարհի մոդէլի կերպարն է: Եթէ պալէոլիթի արուեստում յարաբերակցութիւնները դեռ յստակ չեն, ապա աւելի զարգացած պատկերագրութեան մէջ դրանք վերափոխւում են եռամաս ուղղահայեաց համակարգի. թռչունները բնորոշում են երկինքը, սմբակաւորները, գազանները կամ մարդիկ՝ միջին, եւ օձերն ու ձկները՝ ստորին աշխարհը[23]: Ուղղահայեաց կառուցուածքի գաղափարկերպարներն են տիեզերական ծառը, նրան համազօր լեռը, տաճարը, սիւնը, մարդանման էակը եւն.[24]: Ըստ Բ. Ֆրոլովի, Հայաստանին աւելի բնորոշ է ուղղահայեաց մոդէլը[25]: Ստորին պալէոլիթից Ֆրոլովը դուրս է բերում աշխարակառոյցի երկու աւանդական պատկերացում, որոնցից ուղղահայեացը ներկայացուած է թռչունների եւ օձերի զարդանախշերով, շարժման կշռոյթը միշտ եռամաս է, մոտիւները աստղային-տիեզերական իմաստաւորմամբ են՝ երկու ոլորտների ընդգծումով. երկինք-թռչուն, երկիր-օձ[26]: Հայկական լեռնաշխարհում տիեզերական երեք շերտերի նշանագրումը այդ շերտերում ապրող կենդանիներով շարունակւում է բրոնզէ դարում, եւ աւելի ուշ[27]: Տիեզերական ծառը արքետիպ է, ըստ առասպելական ընկալման այն տիեզերքի եւ տիեզերքի կենտրոնում գտնուող մարդու տարածաժամանակային-մարմնակազմական միասնական մոդէլն է: Այսինքն՝ այդ

ընկալումների համաձայն աշխարհը, ժամանակն ու մարդը դիտւում են իբրեւ հաւասարազօր իրողութիւններ[28]:

Հորիզոնական աշխարհակառոյց. Տիեզերքը որպէս մոդէլ ձեւաւորւում է առանցքի չորս կողմերով, որոնք համապատասխանում են աշխարհի չորս կողմերին եւ հաւասար են իրար: Ըստ Ֆրոլովի, հին քարէ դարում այս օրինակը արտայայտւում է միայն ցամաքային կաթնասուններով, զարդանախշերում յաւելւում են խաչեր, ու շարժման կշռոյթը քառամաս է[29]: Եզնիկ Կողբացին, խօսելով չորս տարերքների մասին ըստ հիմնական յատկութիւնների[30], համադրում է դրանք աշխարհի չորս կողմ անկիւններին. «*Եւ ահա տեսնում ենք այս աշխարհն ինչպէս մի կառք՝ լծուած չորս երիվարներով՝ տաքութեամբ, ցրտութեամբ, չորութեամբ ու խոնաւութեամբ: Եւ կայ կառավարող մի գաղտնի զօրութիւն, որն այդ չորս հակառակորդները հաշտ ու խաղաղ պահելով, ենթարկում է իրեն: Այդ կառքը բոլոր ուղղութիւններով է ընթանում: Երբ դէպի արեւելք է ընթանում, որեւէ արգելք չկայ, որ դէպի արեւմուտք արշաւի, եւ երբ դէպի հիւսիս է սլանում, որեւէ արգելք չկայ, որ դէպի հարաւ սուրայ, որովհետեւ կառավարողի ձեռքը ունակ է դէպի ամէն կողմ ուղղելու եւ փիեզերքի չորս անկիւններն արշաւել տալու*»[31]: Կողբացին տիեզերքը ներկայացնում է որպէս տուն, ուր առաստաղը երկինքն է, յատակը՝ երկիրը, դրանց միջեւ վառուող ճրագը՝ արեգակն է, իսկ տան չորս անկիւնները՝ աշխարհի չորս կողմերն են[32]:

Միասնական աշխարհակառոյց. Համաշխարհային կրօնների աշխարհի պատկերացումը սկզբունքօրէն չի տարբերւում արխայիկ կրօնական հաւատալիքներից, տարբեր են միայն մանրամասները: Կարեւորագոյն նորութիւնը յետմահու վարձքի-հատուցման գաղափարն է՝ դրախտի եւ դժոխքի մասին պատկերացումների կերպով[33]: Աւելի բարդանալով, երկու աւանդական մոդէլները միանում են, ստացւում է եօթ կէտ, որոշ մշակոյթներում կարող են լինել նաեւ հինգ կամ ինը[34]: Այդ կէտերը տեղադրւում են աշխարհի առանցքի շուրջ, որը նաեւ յենասիւնն է[35]: Կենդանիներին՝ թռչուն, ցուլ, այծ, ոչխար, գայլ, օձ, ձուկ, վիշապ եւն., աւելանում են եւ ոլորտների գունային բնորոշումները. սեւ (ստորին), կարմիր (միջին), սպիտակ (վերին), երբեմն՝ կանաչ, դեղին, կապոյտ: Հորիզոնական բաժանումը յաճախ եւս եռամաս է՝ աջ,

կենտրոն եւ ձախ, եւ, ի տարբերութիւն ուղղահայեացի՝ բաց համակարգ է[36]: Ֆրոլովը, համադրելով աշխարհա-առոյցի էթնիկ տարբերակները արուեստում, գտնում է, որ ուղ-ղահայեացը եւ հորիզոնականը ցոյց են տալիս աշխարհի առան-ձին մասերը, այնպէս որ դրանք պէտք է միանան՝ լրացնեն ի-րար, որպէսզի առաւել ամբողջական ստացուի տիեզերքի կերպարը[37]:

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Աշխարհի մոդէլի մասին բաւական նիւթ պահպանուել եւ մեզ է հասել բանահիւսութեան շնորհիւ: «Վահագնի Ծնունդը» հնա-գոյն առասպել-երգը սկսւում է հենց աշխարհակառոյցի ներկա-յացմամբ, իւրաքանչիւր շերտ երկունքի մէջ է, եւ ծնւում է Վա-հագնը: Վահագնը երեք շերտերը կապող հուր-լոյսն է[38], որ իջ-նում է երկնքից երկիր եւ ծով[39]: Կրակը նոյնպէս կարող է ըն-կալուել որպէս տիեզերական ծառ-առանցք, ուղղահայեաց աշ-խարհի մոդէլ, որի շուրջ ձեւաւորւում է աշխարհը. վեր շարժուող կրակը կապ է հաստատում աշխարհակառոյցի մասերի միջեւ, առանձնացնելով աշխարհը քաոսից՝ արտայայտելով աշխարհի յարաշարժական հաւասարակշռութիւնը[40]:

Համաձայն Ալաշկերտի նիւթի. Աստուած հրամայեց, եւ ստեղծուեցին երկինքն ու երկիրն իրենց եօթ աստիճաններով կամ յարկերով: Երկնքի առաջին յարկը երկրի մակերեւոյթն է, երկրորդը՝ ամպերը, երրորդը՝ լուսինը, չորրորդն՝ արեգակը, հինգերորդը՝ աստղերը, վեցերորդը՝ հրեշտակների ու սրբերի կայանը եւ եօթերորդը՝ Աստծոյ աթոռը, որ լուսեղէն է եւ դրուած է սերովբէների ու քերովբէների թեւերի վրայ[41]: Թէ՛ երկնքում եւ թէ՛ երկրում կայ Սեւ ջուր ովկիանոս. ջրհեղեղի ժամանակ երկինքն ու երկիրը պատռուեցին, եւ Սեւ ջուրը ողողեց երկիրը: Ինչպէս երկրի վրայ, այնպէս էլ ծովի յատակին կան լեռներ ու դաշտեր, իսկ լեռների ու դաշտերի տակ կան ծովեր ու ովկիանոսներ, եւ դրանք յաւերժական շրջապտոյտի մէջ են: Երկիրը տափարակ է ու շրջանաձեւ՝ անիւի պէս, դրուած է վիթխարի եզան կոտոշների վրայ: Երբ միջատները խայթում են եզան աչքերը, նա ցաւից ցնցում է գլուխը, այդ ժամանակ լինում են երկրաշարժեր: Ըստ այս աւանդութեան, Լեւիաթան ձուկը պատել է երկրի չորս կողմն

այնպէս, որ գլուխը պոչից մի թզաչափ հեռու է: Լեւիաթանը շարունակ հետամուտ է բռնել եւ կծել իր պոչը՝ լողալով երկիրը շրջապատող ովկիանոսի մէջ՝ երկրին փաթաթուած: Բայց Լեւիաթանը չի կարող կծել իր պոչը, քանի որ ստեղծած օրից մինչեւ աշխարհի վերջը մազաչափ չի աճել: Եթէ Լեւիաթանը բռնի իր պոչը, ապա աշխարհը ջարդուփշուր կը լինի: Իր պոչը բռնելու համար նրա ցատկերից լինում են երկրաշարժներ: Երկիրը եւս ունի եօթ աստիճան-յարկեր, վերեւից ներքեւ. Դժոխք, Սանդարամետք, Տարտարոս, Գեհէն, Անդունդք, Անյատակ: Տիեզերքն իր ամբողջութեամբ երեք գլխաւոր յարկերի է բաժանւում, առաջինն ստորգետնեայ աշխարհն է, երկրորդը՝ երկրի վրայ, երրորդը՝ երկնքի մէջ: Այս երեք յարկերում էլ ապրում են մարդիկ, որոնք զբաղւում են երկրագործութեամբ եւ երկրի վրայի այլ գործերով: Տարբերութիւնը միայն հագուստի մէջ է, ներքեւի յարկի մարդիկ իրենց գօտիները ծնկների վրայ են կապում, միջինը՝ մենք՝ փորի վերին մասի վրայ, իսկ վերին յարկի մարդիկ՝ սրտի վրայ: Երկիրը սուրբ է, որպէս Աստծոյ ձեռքերի գործ, ինչպէս երկինքը[42]: Գօտիների տեղադրութիւնը բխում է մարդու մարմնի եւ տիեզերքի համադրութիւնից. գլուխը երկինքն է, որովայնը՝ երկիրը, իսկ գօտկատեղից ներքեւը՝ ստորերկրեայքը:

Նոր Բայազէտում հաւատում էին, որ երկնակամարը մի անսկիզբ եւ անծայր ծով է, որ կազմուել է, երբ Աստուած երկրի վրայի ջրերը բաժանել է: Այստեղ էլ այն եօթ շերտ է, երկնակամարից վերեւ գտնւում է Աստծու ոսկէ գահը, իսկ աւելի վերեւ՝ եօթ ափ ջուր, որից երբ Աստծուած բարկանում է, մի կաթիլ է թափւում նրա գլխին՝ հանդարտեցնելու[43]: Երկիրը տափարակ է, անծայր եւ անվերջ: Ցամաքը շրջապատուած է Մեռեալ ծովի կամ ովկիանոսի ջրով, ուր մշտական խաւար է տիրում եւ միայն մի մեծ ձուկ է ապրում: Այս ձուկը, ինչպէս եւ ալաշկերտցիների Լեւիաթանը, փաթաթուել է ցամաքին եւ մի թիզ է մնացել, որ գլուխը պոչին հասնի, երբ հասաւ՝ աշխարհը պիտի կործանուի: Երկիրը կանգնած է եզան պոզերի վրայ, երբ նա Աստծու հրամանով ցնցում է գլուխը՝ երկրաշարժ է առաջանում: Երկիրը բաղկացած է լոյս եւ մութ աշխարհներից: Լոյս աշխարհը երկրի վրայ է, իսկ մութը՝ երկրի մէջ: Մութ

աշխարհում երկու խոյ կայ՝ սեւ ու սպիտակ, որոնք գալիս միմեանց հետ կռւում են. եթէ մութ աշխարհ ընկածը կարողանայ հեծնել սեւ խոյին՝ սա նրան կը տայ սպիտակին եւ վերջինս նրան կը հանի լոյս աշխարհ, իսկ եթէ սպիտակին հեծնի՝ սա կը գցի նրան սեւի վրայ եւ վերջինս կ'իջեցնի նրան մութ աշխարհի խորքերը: Լոյս աշխարհում միշտ, Ադամից էլ առաջ, մարդիկ են եղել: Սրանք մարդակերպ են եղել, սակայն անասունի պէս անլեզու եւ անխելք: Սրանցից Աստուած ընտրել է Ադամին, խօսելու շնորհ եւ խելք տուել ու դրախտում բնակեցրել: Ծովերը անյատակ են եւ լի ձկներով, ծովային աղջիկներով (ծովահարս, ծովանուշ), սատանաներով, ձիերով եւ գոմէշներով[44]:

Վարանդայում հաւատում էին, որ գետնի տակ ապրում է մի եղջերու, որի եղջիւրին դրուած է մեծ կաթսայ, լի հեղուկով: Երբ հեղուկը տաքանում է, կոտրում է կաթսան՝ կտորները խփւում են գետնին, եւ առաջանում է երկրաշարժը: Կամ գետնի տակ մի եզ կայ, պոչը դրած մէջքին, երբ շարժում է պոչը եւ խփում գետնին, երկրաշարժ է լինում: Կար նաեւ ձուկը. գետնի տակ մի ձուկ կայ, երբ մէջքը քոր է գալիս, շարժւում է եւ իր հետ շարժում երկիրը[45]:

Լոռիում հաւատում էին, որ կապոյտ երկնակամարը ահագին ծով է՝ կանգնած Աստծոյ հրամանով, դրանից բարձր գտնւում է Աստծոյ ոսկէ աթոռը: Երկիրը մեծ տափարակ է, որի շուրջ փաթաթուած է հսկայ Լիկիոն օձը, որի պոչը բերանից մի թիզ հեռու է: Լիկիոնը միշտ ուզում է բռնել պոչը, բայց չի կարողանում, եւ իր շարժումներից առաջանում են երկրաշարժեր: Երկրի ամենահեռաւոր վայրերում ապրում են սիրունատես օղուզներ (հսկաներ), աճիճ-պաճիճներ (գաճաճներ), որոնց մօրուքը հասնում է գետնին, թափագէօզներ (կիկլոպներ), կան եւ երկսեռ էակներ, որոնք իրենք իրենց բեղմնաւորում ու ծնում են (անդրոգիններ): Ծովերն անյատակ են եւ սրանցում ապրում են բոլոր այն արարածները, որոնք կան երկրի վրայ[46]:

ՀԵՔԻԱԹՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Աշխարհակառոյցի մասին որոշակի պատկերացումներ կարելի է կազմել նաեւ հեքիաթներից[47]: Տարածուած հեքիաթներից են Լուս ու Մութ աշխարհների առկայութեամբ հեքիաթները: Որպէս օրինակ վերցնենք դրանցից մէկը՝

«Անմահական Խնձոր»[48] հեքիաթը: Հերոսին եղբայրները թողնում են հորում (անցք աշխարհների միջեւ), ուր կան երեք սենեակներ, իւրաքանչիւրը պատկանում է ժամանակային միաւորներ խորհրդանշող 7, 12 եւ 24 գլխանի դեւերին, որոնք գերել են մէկական աղջիկ: Հերոսը նրանց ազատում է, բայց եղբայրների դաւի պատճառով մնում է հորում: Կրտսեր աղջիկը խորհուրդ է տալիս հերոսին՝ ուրբաթ օրը գնալ աղբիւրի մօտ, ուր երեք ոչխար կը տեսնի՝ սեւ, սպիտակ ու կարմիր, որ գալու են ջուր խմելու: Հերոսը սկզբից պէտք է ցատկի սեւի վրայ, սեւը նրան կը գցի կարմրի վրայ, կարմիրն էլ՝ սպիտակի, սպիտակն էլ լոյս աշխարհ կը հանի հերոսին: Սակայն հերոսը հակառակն է անում ու սեւ ոչխարը նրան գցում է մութ աշխարհ: Հերոսը մութ աշխարհին ազատում է աղբիւրի ակը փակած եօթ գլխանի վիշապից: Թագաւորից որպէս պարգեւ խնդրում է իրեն Լոյս աշխարհի ճանապարհը ցոյց տալ: Պարզւում է, որ լոյս աշխարհ կարող է տանել միայն Զմրութ ղուշը: Հերոսը անտառում գտնում է հսկայ մի ծառ, որի վրայ Զմրութ ղուշի բոյնն էր: Երբ հսկայ վիշապը գալիս, փաթաթւում է ծառի բնին ու վեր սողում, որ ուտի ճտերին, հերոսը սպանում է վիշապին: Երախտապարտ ղուշը հերոսին հանում է լոյս աշխարհ: Այստեղ առկայ են երկու աշխարհներ, որոնք կապուած են միմեանց եւ արտաքին աշխարհի հետ հորի միջոցով: Առաջին աշխարհը եռաշերտ-հորիզոնական է. դէպի վերեւ, ինչպէս եւ ներքեւ կարելի է անցնել գունաւոր՝ երեք աշխարհները խորհրդանշող ոչխարների միջոցով: Երկրորդ աշխարհը եռաշերտ-ուղղահայեաց է, եւ այստեղ առանցքը տիեզերական ծառն է, յստակ ներքեւով՝ վիշապ եւ վերեւով՝ Զմրութ ղուշ[49]:

Աշխարհակառոյցին վերաբերող հեքիաթների միւս խումբը կապուած է Բոր կամ Կարմիր տիեզերական եզի հետ[50]: Բոր եզի մի եղջիւրից մեղր է կաթում, միւսից՝ անմահական ջուր: Բոր եզը իմաստուն է եւ հերոսի պահապանն է, նա պաշտպանում է նրան խորթ մօրից: Ի վերջոյ, հերոսին փրկելու համար, եզը նրան փախցնում, բերում դնում է մի ծառի վրայ, իսկ ինքն արածում է: Գալիս է վիշապը, եզն ու վիշապը մենամարտում են, վիշապը յաղթում է, բայց մեռնելուց առաջ եզը ծառն ու վրայի հերոսին յանձնում է վիշապին. «*Ամանաթ Աստուած, ամանաթ ծառ*»:

Վիշապը միշտ այս ծառի տակ է ուտում իր զոհերին, այսինքն նա ծառի պահապանն է: Վիշապը հերոսին որդեգրում ու տանում է իր տուն, որը քառասուն սենեակ ունի: Վիշապի տանը կայ չորս գունաւոր ձի՝ սեւ, սպիտակ, կարմիր եւ մոխրագոյն: Միայն մոխրագոյն ձին է այնքան հզօր, որ կարող է անցնել աշխարհների անցք-սահման հորի վրայով: Վիշապը գալիս է՝ ուսին մի ծառ, որն ունի քառասուն հազար ճիւղ, ամէն ճղին՝ քառասուն հազար թռչուն: Վիշապը հետապնդում է հերոսին, բայց խեղդւում է ծովում: Քառասուն հազար ճղանի ծառը կրկնապատկում է տիեզերական ծառի ու իր պահապան վիշապի մոտիւը: Եզը հերոսի երկուորեակն է եւ խորհրդանշում է միջին՝ մարդկային աշխարհը, սակայն կապուած է նաեւ ստորգետնեայ աշխարհի հետ[51]: Հեքիաթում սովորական երեք ձիերի փոխարէն՝ չորս ձի է, որոնք խորհրդանշում են տարուայ չորս եղանակներն ու աշխարհի չորս կողմերը: Հզօր մոխրագոյն ձին գարունն է[52]:

Տիեզերակառոյցի տարրեր կան նաեւ «Ձուկ Տղան»[53] հեքիաթում: Զաւակ չունեցող վաճառականն երեխայ է խնդրում Աստծուց, եւ նրա կինը ձուկ է ծնում: Հերոսին ամուսնացնում են թագաւորի աղջկայ հետ, ով իր մօր խորհրդով այրում է հերոսի ձկան մաշկը, հերոսը դառնում է աղաւնի եւ թռչում, հեռանում է: Կինը գնում է նրան փնտռելու: Նա եօթ ճանապարհի մէջտեղում պանդոկ է կառուցում եւ ամէն անցորդի հարցուփորձ անում: Մի անգամ մի հայր ու որդի հանդիպում են մի ժայռի, որի տակ դուռ կար, որից ներս, սփռոցի մօտ երեք աղաւնի նստած՝ խմում են հերոսի կենացը: Աղջիկը գնում է այդտեղ, թաքնւում աղբրի մօտ: Երեք աղաւնիները գալիս են, աղբիւրի մօտ դառնում են գեղեցիկ աղջիկներ, Արաբին հրամայում են, որ բերի «ամանաթը»: Արաբը բարձրանում է ծառը, մի արկղ է իջեցնում, որը աղջիկները բացում են, արկղի միջի սրտի վրայից վերցնում են թուղթը, եւ դուրս է գալիս հերոսը: Աղջիկները լողանում են, յետոյ տղային դնում են արկղը, իրենք նորից դառնում են աղաւնի ու հեռանում են: Հերոսուհին կրկնում է նրանց գործողութիւնները, եւ մի տարի այդտեղ ապրում է արկղից ելած ամուսնու հետ: Աղաւնիների յայտնուելու ժամանակ աղջիկը շտապելուց թուղթը սխալ է դնում, աղաւնիներն ամէն ինչ

հասկանում են, եւ Արաբին հրամայում, որ արկղը տանի Բաղեմա քաղաքը: Աղջիկը ծառի մօտի աղբիւրից մէկ բուռ թանկագին գոհարներ է վերցնում ու գնում է մօտակայ քաղաքը: Նրա որդին լինում է արդէն 10 տարեկան, նա խաղում է այդ գոհարներով, թագաւորը դա տեսնելով, որոշում է կործանել երեխային: Տարբեր դժուար յանձնարարութիւններ է տալիս, որոնցից մէկն էլ լինում է Բաղեմա քաղաքից անմահական խնձորներ բերելը: Այդ քաղաքը դարպաս չունէր, տղան մտնում է ջրանցքով, քաղաքի կենտրոնի մեծ այգուց, մարմարէ ջրաւազանի մօտի խնձորենուց քաղում է խնձորները: Բայց մինչ այդ տեսնում է նոյն տեսարանը, որ եղել էր անտառում՝ աղաւնիների եւ արկղի հետ: Նա մօր հետ գալիս է Բաղեմա քաղաք, մայրը ազատում է ամուսնուն, աղաւնիների կաշին գցում է կրակը, եւ երեք գեղեցիկ աղջիկների հետ տուն վերադառնում[54]: Անտառի բացատը կրկնապատկում է Բաղեմա քաղաքի կենտրոնական այգուն՝ տիեզերական ծառ-առանցքով, հրաշալի աղբիւր-ջրաւազանով: Իսկ հերոսը ձուկ եւ աղաւնի է, միաժամանակ վերին եւ ստորին աշխարհների ներկայացուցիչը եւ տիեզերական ծառը:

Թէեւ տիեզերական ծառի վրայ նստած թռչունի նախնական առասպելը կարծես թէ արծուի մասին է, այդուհանդերձ երկինքն ու երկիրը կապող առասպելական թռչունը կարող էր ներկայացուել տարբեր թռչնատեսակների ձեւով, մասնաւորապէս, այն միանգամայն կարող էր ի յայտ գալ իբրեւ ցին, անգղ կամ գիշատիչ այլ թռչուն:

Այսպիսի թռչուն է Խարբերդի «Մոքոս» էպոսում հանդէս եկող Չեչէլ չերքէզը, որին բանասաց Մինաս Բաբարը նկարագրում է որպէս հաւի նման, սագի չափ սպիտակ-դեղնաւուն մի թռչուն, որի գլխին մազ չկայ, որի զոյգը համատեղ ապրում է մինչեւ 150 տարի եւ որը մահ չունի: Նրա մահը միայն այն ժամանակ է, երբ «*բարձրէն սրընթաց կուժուրտալէն կ'իջնայ, քարի ծառի կը դպի*»: Երբ այս թռչունի բմբուլները թափւում են, նա չի կարող թռչել, բայց կենդանի է մնում, եւ նրան կերակրում է իր ընկերը: Այդ թռչունը կարող է թռչել Աստծոյ մօտ եւ լուրեր բերել, սակայն երբ շատ բարձր է թռչում, արեւն այրում է նրա գլուխը, ահա թէ ինչու է «չեչէլ», ճաղատ: Վէպի մէջ Չեչէլ չերքէզը

Մօքոսի մունետիկն է, որ արագ սլանում է եւ լուր բերում մարդու համար անհասանելի տեղերից: Մօքոսը գտնում է Չեչէլ չերքէզին ծառի վրայ՝ իր ընտանիքի կորուստը ողբալիս, եւ թռչունը պատմում է, որ իր բոյնը կրակ են գցել, ձագերին վառել, նետով սպանել են կնոջը, իսկ ինքը ելել է երկնքի կէսը: Այնտեղ նրա վրայ յարձակուել են շահին-բազէն՝ վերեւից եւ տողանը՝ (հաւանաբար ինչ-որ գիշատիչ թռչնազգի) ներքեւից, նրանք սարեր ու ձորեր են ընկել եւ կռուել երեք օր ու գիշեր, եւ միայն Զմրութ ղուշի օգնութեամբ է Չեչէլ չերքէզին յաջողուել ազատուել: Բայց երբ նրանք իջել են երկիր, տեսել են, որ «*աշխարք վառմուն է*»[55]:

Նոյն կերպարին հանդիպում ենք Մինաս Բաբարի պատմած «Կրակոտ Ոսպ» հեքիաթում: Եւ նորից Չեչէլ-քերքէզը կապուած է Զմրութ ղուշի հետ: Այդ Զմրութն է յայտնում թագաւորի գլխատուած որդուն կենդանացնելու ջուրը որոնող դերուիշին, որ «*աշխրքի էրեսը Չեչէլ-քերքէզ կայ, ան գննա, ընի Աստծու ստեղծածն է: Տահա չէ մեռեր*»: Զմրութ ղուշը գտնում է փետրազուրկ, ծերացած Չեչէլ-քերքեզին, որ պառկած է հողի վրայ եւ չի կարող թռչել: Երեք ժամ տեւող ընդհանուր աղօթքով նրա բմբուլները նորից աճում են եւ նա, պահանջելով միս եւ գինի, թռչում է դէպի երկինք: Ինը ոլորտներից բաղկացած երկնքի առաջին ոլորտն անցնելիս արեւն այրում է նրա գլուխը, յետոյ նա յայտնուում է սառոյցի մէջ եւ հասնում է չորրորդ ոլորտ, որտեղ նրան է հասնում հրեշտակը եւ յանձնում կենաց ջրի կարմիր եւ ճերմակ սրուակները: Երբ ներքեւում թագաւորը հարցնում է թռչունին, թէ ինչու է նա վիրաւոր վերադարձել, Չաչալ-չերքէզը նկարագրում է. «*մէկ դասը կրակ է, մէկ դասը սասպիկ ցուրտ է, մէկ դասը աժդահար է, մէկ դասը օձ ու կարիճ է*»[56]:

«Ղսմաթի Նաղլը» հեքիաթում հերոսը օձ է, որի անուան արգելքի խախտման հետեւանքով նա դառնում է թռչուն եւ հեռանում է: Այս հեքիաթում հերոսին լուս աշխարհ հանող ղուշը «քաչալ», 300 տարեկան է[57]:

«Թաքաւերին Տղան ու Ծուին Ծառը» հեքիաթում եօթ սարի մէջ մի ծառ կայ՝ ճիւղերն երկնքով մէկ սփռած: Ծառի կատարին ճրագի նման լոյս տուող երեք ձու, ծառի տակ եօթ «ջանաւար» են քնած: Ըստ Թամար Հայրապետեանի, առկայ են տիեզերակառոյցի բաղադրիչները. ծառ, փչակ, ձու, թռչուն, օձ,

որոնք պահպանում են մակրո- եւ միկրոկոսմոսների ներդաշնակութիւնը[58]:

Հեքիաթներում հանդիպում է նաեւ հորիզոնական մոդէլը: Նման հեքիաթ է «Ծովինարը»: Հերոսը սկսում է ճանապարհորդութիւնը սեւ երկրից, յետոյ անցնում է սպիտակ եւ կանաչ երկրներ: Իր սիրելի Ծովինարն ապրում է կարմիր երկրում, ծովի միջի պալատում[59]: Պառաւը Նհարի (հերոսի) խանչալը գցում է ծովը, Նհարը դառնում է կիսամեռ: Սեւ, սպիտակ ու կանաչ ընկերները գալիս են օգնութեան: Ձին՝Բհարը ասում է, որ խանչալը կամ ծովի յատակն է, կամ աստղերին է հասել, կամ էլ ցամաքին է ընկել: Սպիտակ ձիաւորը գնում է դէպի աստղերը, կանաչը դէպի ցամաքը, սեւը՝ ծովի տակ[60]: Եթէ իրար համադրենք գոյներն ու աշխարհի չորս կողմերը, ապա կը ստանանք. սեւ - արեւմուտք, սպիտակ - հիւսիս, կանաչ - արեւելք, կարմիր - հարաւ[61]: Ընդ որում կարմիր երկիրը գտնւում է ծովի (Վանայ Լի՞ճ) մէջ: Ծովինարի պալատը, հնարաւոր է, առանձին աշխարհակառոյց է՝ ծով, կղզի, պալատ եւ աստուածուհի աստիճանաւորմամբ:

Աշխարհի հորիզոնական մոդէլն առկայ է նաեւ Երուանդ Լալայեանի կողմից գրառուած «Արա Գեղեցիկ» աւանդավէպում[62]: Արամ թագաւորը ապրում էր Մոսուլ քաղաքում, որը կոչւում է Նինուէ[63]: Մի օր նա կուրանում է եւ բժշկուելու համար, մի ծերունու խորհրդով, իր կրտսեր որդի Արա Գեղեցիկին ուղարկում է Վան, Շամիրամի մօտ, բերելու իր դեղը: Երկար գնալուց յետոյ Արան եւ նրա երկու եղբայրը հասնում են մի բերդի, որի մէջ բանտարկուած աղջիկը՝ Խազալին, զգուշացնում է, որ սա մի հզօր դեւի բերդ է: Արան իմանալով, որ դեւը գնացել է արեւմուտք, եզրակացնում է, որ նա կը վերադառնայ արեւելքից: Ազատելով Խազալիին դեւից, նրան տալիս է իր մեծ եղբօրը: Երկրորդ բերդում աղջկայ տէր դեւը նշուած չէ, թէ որ կողմ է գնացել եւ որ կողմից է գալու: Երկրորդ աղջկան տալիս է իր միջնեկ եղբօրը: Երրորդ բերդը ժայռի վրայ էր, որի միջի աղջկայ աչքերը փայլում էին արուսեակի պէս: Այս դեւը եօթ գլխանի էր, եւ առաւօտեան դէպի հարաւ էր գնացել, ուրեմն երեկոյեան պէտք է հիւսիսից գար[64]: Աղջկայ անունը Զուարթ է, նա Բրօ թագաւորի դուստրն էր: Զուարթը Արային

խորհուրդ է տալիս ինչպէս հասնել Շամիրամին. երեք օր գնալուց յետոյ հասնելու է մի լեռան, որ Հայաստանի ու Վանի սահմանն է, լեռան վրայ հսկայ սաղարթախիտ մի ծառ կայ, որի կոճղի մօտ նստած է մի ծերունի, այդ ծերունին իր խորհուրդներով կ'օգնի Արային: Այդ Ծառուկ ծերունին երեք դեւերի հետ Շամիրամի երկրի չորս պահապաններն են, իսկ ծառի քառասուն տերեւները, ծերունու կախարդութեամբ, հզօր կարողութիւններ են տալիս Արային[65]:

Եռամաս ուղղաձիգ կառոյցի կողքին առկայ է աշխարհի տարբեր մասերի, յատկապէս դրախտի եւ դժոխքի երբեմնի հորիզոնական ընկալումը՝ դրախտի «հակառակ կողմում» դժոխքն է[66]: Դրախտում է գտնւում Անգին քաղաքը, որից այն կողմ լուսոյ դրախտն է, ուր աճում է ծառ խնկենին՝ հոգիների ամենասիրած ծառը, անթառամ ծաղիկը, վարդենիներ եւն.: Այնտեղ ցայտում է Կաթնաղբիւրը՝ անմահութեան աղբիւրը[67]: Գարեգին Սրուանձտեանցի մօտ. «*Տափմէր Ասլիկ, որ տեզելք էր, կգեփ, տեսայ մազէ կարմունջ կապեր են. էն գլուխ դրախտն էր, էս գլուխ դժոխք*»: Նկարագրւում է դժոխքը, ուր սատանաները տարբեր կերպ տանջում են յանցաւորներին: Դրախտում «*հազար հազար հրեշտակներ, ուր կողկուշտ* [շրջապատ] *անմահութնի ջրեր, անմահութնի խնծոր, ծաղիկներ, պտուղներ, Աստծո սեղան Աստծո բարութնով լի ուր առջեւ. հրեշտակ մինքն էր դարձէ իդոր նստած աթոռ, իդոր բնակռած դարպասի քարեր մէկ մէկ արեգակին*»[68]:

Երբեմն տիեզերական ծառն արտայայտւում է երեք ոլորտներից մէկը խորհրդանշող կենդանիով, հիմնականում ստորին աշխարհի բաղադրիչ հանդիսացող վիշապով կամ օձով: Հին աշխարհում տիեզերական օձը կամ վիշապը տիեզերակառոյցի, աշխարհի առանցքի նախատիպարի մարմնաւորումներից մէկն էր, մանաւանդ եթէ դա գրեթէ ամփոփ շրջան կազմող օձ էր (հմմտ. ալքիմիական ուրուբորոսի, նաեւ վերը բերուած ժողովրդական աւանդութիւնների Լիկիոն օձը կամ Լեւիաթան ձուկը[69]): Տիեզերական ծառի հետ օձին կապում են օձ-ծառի առասպելները: «Աղքատ Յովանէս» հեքիաթում աղքատը երկու սատկած օձ է բերում, գցում իր բակում, որոնք վերածւում են երկու գեղեցիկ ծառերի, որոնց տեսակն ու նիւթը

ոչ ոքին յայտնի չէ[70]: Նոյն մոտիւը ունի «Օձուենի Ծառ» հեքիաթը, որտեղ սատկած օձի դիակից ծլում է հրաշալի բարդի ծառը[71]: Իբրեւ տիեզերական ծառ օձը դառնում էր իմաստունի կամ ուղղակի սրբազան գաւազան եւ աստուածային պիտոյք (ատրիբուտ)[72]: Կենաց եւ տիեզերական ծառերի հետ գաւազանի առնչութիւնը վկայուած է «Գաւազանագովք» տաղում: Գաւազանը ծաղկել է դրախտում, արարչի ձեռքով, հողից չի բուսել, ջուր չի ըմպել, գաւազանը կանգնել է Գողգոթայում՝ Ադամի գանգի վրայ, գաւազան-խաչին բազմել է սիրամարգը, գլխին՝ ոսկէ թագը, սիրամարգի ահից դողում է դժոխքը, նրա ձայնից ցնծում է երկինքը[73]: Գաւազանը նոյնանում է խաչին, իսկ վրայի սիրամարգը՝ Քրիստոսն է:

Թէեւ աւանդական պատկերացումներով աշխարհակառոյցն ունի երեք, չորս, կամ եօթ առանցքային կէտեր, կեանքը հիմնականանում ընթանում է միջին ոլորտում՝ երկրի վրայ, եւ տեսանելի է երկինքը, որն էլ ոչ պակաս դերակատարութիւն ունի մարդկանց կեանքում: Ուստի հիմնական տիեզերակառոյցը, եթէ կարելի է այդպէս ասել, արտայայտւում է Երկինք-Երկիր անխախտելի կապով: Երկինքն ու Երկիրը ստուգաբանւում են որպէս երկու իր (նիւթ) ունեցող ոլորտներ: Ըստ Յովհաննէս Երզնկացու. «*Զի երկինքն երկու իրք է՝ հուր եւ օդ, եւ երկիրս երկու իրք է՝ հող եւ ջուր*»: Ըստ Երզնկացու երկիր է կոչւում, որովհետեւ ունի չորս պատճառ, որոնցից առաջինն է. «*Նախ զի երկու երկնիցս ծայր ունի. երկայն զարեւելս եւ զարեւմուտս եւ երկու ի լայն՝ զհիւսիս եւ զհարաւ…*»[74]:

Տիեզերական ծառը, աշխարհակառոյցը կարող է տեղադրուած լինել նաեւ նաւի վրայ[75]: Բայց երբեմն նաւին փոխարինում է սայլը: Ուրարտական մի կնիքի վրայ պատկերուած է քառանիւ մի սայլ, որի վրայ ձօղերով ամրացուած է ծառը, սայլի ետեւում հանդիսաւոր տեսքով մի քուրմ եւ արծուաոիւծ: Նման մի կնիք էլ յայտնաբերուել է Թոփրակ-Կալէում[76]: Ըստ Ասատուր Մնացականեանի, նաւով կամ սայլով տօնահանդէսը տեղի է ունեցել գարնանը, արտայայտելով ծննդի կամ վերածնութեան գաղափարը[77]: Այս տեսարանին շատ մօտ մի տեսարան է նկարագրւում Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան» տաղում: Մասիսի վրայ մի սայլ

կայ, որի վրայ ոսկէ աթոռ է, աթոռին բեհէզ ծիրանի, վրան որդին արքայի, նրա աջից վեցթեւանի քերովբէներ, ձախից՝ բազմաչեայ քերովբէներ, առջեւից մանուկներ, որդու գիրկը՝ սաղմոսարան եւ քնար, ձեռքում՝ փրկչական խաչ: Սայլը զարդարուած է արծաթով, ոսկով, ապրշումով, կերպասով ու ծաղիկներով: Սայլի անիւները չորս Աւետարաններն են: Լծուած է սեւ ու սպիտակ եզներով, որոնց եղջիւրները խաչանման են, իսկ մազերը՝ մարգարիտ: Սայլը տեղից չի շարժւում, մինչեւ չի գալիս խարտիշագեղ Սուրբ Կարապետը, եւ սայլը իջնում է՝ անուշահոտ բուրմամբ ընթանալով: Սայլն իջնում է Մասիսի արեւելեան լանջով եւ մտնում Երուսաղէմ (Էջմիածին): Եւ Մասիսը համադրւում է Սիոն լեռան հետ[78]:

Ինչպէս ասուել է, աշխարհի առանցքը յաճախ արտայայտւում է սրբազան լեռան կերպարով: Հայկական Լեռնաշխարհը հարուստ է բարձր գագաթներով. դրանցից ոմանք ընկալուել են որպէս աշխարհի առանցքներ: Այստեղ կ'անրադառնանք միայն Մասիս Լեռան ժողովրդական-աւանդական ընկալումների մի մասին: Մովսէս Խորենացին, խօսելով Հայկի սերունդների կողմից Հայկական Լեռնաշխարհի մշակութայնացման մասին, գրում է, որ Արամանեակը գալիս, հասնում է մի դաշտավայր, որի արեւմուտքից գետ էր անցնում, իսկ դաշտը ձգւում էր արեւելքի կողմը, եւ դաշտավայրում կային բազմաթիւ աղբիւրներ: Դաշտավայրի հարաւային բարձր լեռն Արամանեակը կոչեց իր անունով՝ Արագած, իսկ դաշտի հիւսիսում գտնւում էր արեգակնաճեմ, սպիտակափառ գագաթով մի լեռ, որ բուսել (ծառի մոտիւ) էր երկրից՝ պինդ գօտեւորուած մարդու երեքօրեայ ճանապարհի շրջապտոյտով եւ հետզհետէ սրւում էր դէպի վեր՝ «իսկապէս մի ծերունի լեռ»[79]: Այդ լեռը, Արամանեակի թոռան՝ Ամասիայի անունով կոչւում է Մասիս, որի ստորոտում նա շինում է երկու տուն, մէկն արեւելք, միւսն՝ արեւմուտք[80]: Այս դաշտավայրը, որի արեւմուտքում Արաքս գետն է, հարաւում՝ Արագածը, իսկ հիւսիսում՝ Մասիսը, որից արեւմուտք եւ արեւելք երկու իշխանական տներն են՝ Արարատեան դաշտավայրը՝ հայոց միջնամաս-կենտրոնը:

Աժդահակը երազում տեսնում է մի բարձր լեռ, որի գագաթին երեւում է երկնագոյն քօղով մի ծիրանազգեստ կին, որ բռնուած

էր ծննդի երկունքով: Նա երեք զաւակ ծնեց, կատարեալ դիւցազուններ: Առաջինն առիւծ հեծած՝ սլանում էր դէպի արեւմուտք, երկրորդն ինձ հեծած՝ դէպի հիւսիս, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշաւում էր դէպի Աժդահակի տիրոյթը (Մարաստան՝ արեւելք)[81]: Այսինքն Աժդահակը Մասիսն ընկալում է որպէս Հայոց Երկրի կենտրոն, որից աշխարհի կողմերն են սլանում, ամենայն հաւանականութեամբ, Տիգրանի որդիները՝ Բաբը, Տիրանը եւ Վահագնը[82], գուցէ նկատի ունենալով, որ նրանք յետագայում նուաճելու են Մասիսից այդ երեք կողմերն ընկած տարածքները:

Յետագայում Տիգրանը, յաղթելով Աժդահակին, նրա կնոջը՝ Անուշին ու Աժդահակի սերունդներին բերում, բնակեցնում է Մասիսի արեւելեան ստորոտում[83]: Աժդահակի ու Անուշի սերունդից Արգամը (Արգաւան), Մուրացան տոհմի նահապետը, տիրում է Մասիսի ամբողջ ստորոտին: Մի օր Արգաւանը դաւ է նիւթում հայոց արքայ Արտաշէսի դէմ, եւ դրա համար Արգամին իր բոլոր զաւակներով կոտորում է Արտաշէսի որդին՝ Արտաւազդը[84]: Սակայն Արտաշէսի մահից յետոյ, հալածելով իր բոլոր եղբայրներին, Արտաւազդը տիրանում է ամբողջ Հայաստանին: Արտաւազդը բողոքում է մեռած Արտաշէսին, թէ նա ինչպէ՞ս իշխի դատարկ երկրում, ինչի համար Արտաշէսը նրան անիծում է, որ քաջքերը որսի ժամանակ Արտաւազդին տանեն դէպի Ազատն Մասիս: Մի անգամ նա անցնում էր Արտաշատ քաղաքի կամրջով՝ Գինա ակունքների մօտ որսի համար, յանկարծ խելագարւում է, ձիուց ընկնում մի խոր փոսի մէջ ու անհետանում[85]: Արտաւազդը շղթայւում է մի քարանձաւի մէջ, երկու շուն կրծում են նրա շղթաները, եւ նա ջանում է դուրս պրծնել ու կործանել աշխարհը, բայց դարբինները Կիրակի օրերը երեք կամ չորս անգամ կռանով խփում են սալին, որ Արտաւազդի շղթաներն ամրանան, ու նա դուրս չգայ: Ըստ առասպելի միւս տարբերակի, Արտաւազդին դեռ օրօրոցում գողացել են վիշապազուններն, իսկ փոխարէնը դեւ են դրել[86]:

Այսպիսով Արտաւազդը մի կողմից վիշապազուններին յաղթողն է, գտնւում է տիեզերական լեռան վրայ, միւս կողմից՝ ինքն է վիշապ, գտնւում է ներքեւում: Թէեւ Մուրացանները վիշապազուն են կոչւում, քանի որ սերում են Աժդահակ-

վիշապից, սակայն դեռեւս ուրարտական աղբիւրներում յիշատակւում է Կուառզանի երկիրը[87], որ ընկնում է Մասիս Լեռան արեւելեան - հարաւային լանջերին: Յատկապէս ուշագրաւ է, որ ուրարտական վիշապանման դիցոյթ Կուեռան պարսկերէն անուանուել է Աժի-Դահակ, իսկ Արգաւանը Աժդահակի եւ Անուշի սերնդից էր, ում հետ եւ պատերազմում էր Արտաւազդը[88]: Արտաւազդը Մասիսի շուրջ ձեւաւորուող աշխարհին հաղորդում է յարաշարժական (դինամիկ) կառուցուածք. միաժամանակ լինելով ե՛ւ վերեւը, ե՛ւ ներքեւը, ամբողջացնելով շրջանը:

Ժողովուրդը Մասիս սրբազան լեռը համարում էր ընդհանուր մարդկութեան երկրորդ ծնող, քանի որ այս սարի վրայ է հանգչել Նոյեան Տապանը: Մասիսը նաեւ անմատչելի է, ոչ ոք չի կարող բարձրանալ նրա գագաթը: Նոյնիսկ սուրբ Մծբնայ Յակոբ հայրապետը Աստծոյ հրամանով չի կարողացել բարձրանալ Մասիսի գագաթը[89]: Ըստ աւանդազրոյցի, Արագածն ու Մասիսը վիճում են, եւ Արագածն անիծում է Մասիսին, որ նրա վրայ մարդ չբարձրանայ, մատաղ չանի, եւ մինչ օրս էլ մարդ չի բարձրացել Մասիսի վրայ ու մատաղ չի մորթել[90]:

Նոյեան Տապանի առասպելը ուշ է կապուել Ազատն Մասիսի հետ: Յամենայնդէպս այն յայտնի չէ Ժ. դարի պատմիչ Թովմա Արծրունուն, եւ ըստ նրա Տապանը իջեւանել է Կորդուաց լեռների Մասիուսի վրայ[91]: Ժողովրդական առասպելական շարքը կապում է ջրհեղեղի եւ Նոյի պատմութիւնը մի կողմից՝ Ռշտունիքի, Մոկսի ու Տարօնի հետ, միւս կողմից՝ Նախիջեւանի հետ[92]: Ս. Յակոբ Մծբնացու աղբիւրի հետ կապուած աւանդազրոյցներ պատմւում են ե՛ւ Մասիսի, ե՛ւ Ռշտունիքի լեռների մասին[93], ընդ որում Ս. Յակոբ Մծբնացին բարձրացել է Կորդուաց լեռները, սակայն Մասիս նա չի կարողացել բարձրանալ: Ըստ երեւոյթին Մասիսը, աւելի ու աւելի ընկալուելով որպէս Հայոց Աշխարհի կենտրոն, իր վրայ է առել նաեւ ջրհեղեղի առասպելաբանութիւնը, քանի որ միայն աշխարհի կենտրոն-առանցքից կարող է սկսուել նոր աշխարհը:

Սովորական մահկանացուն չի կարող բարձրանալ սրբազան լեռան գագաթը, քանի որ դա նշանակում է

ճանապարհորդութիւն դէպի աշխարհի կենտրոն: Միայն շամաններն ու հերոսներն են իրականում բարձրանում տիեզերական լեռը[94]: Ըստ Ագաթանգեղոսի, երբ կառուցւում էր Մայր Տաճարը, Տրդատ արքան անցաւ եօթնօրեայ ճանապարհը դէպի Մասիսն ի վեր, որի գագաթից բերեց ութ հսկայական քար, որոնցից ոչ մէկը չէր կարող շարժել թէկուզ մարդկանց ահագին բազմութիւն[95]: Ըստ ժողովրդական աւանդազրոյցի, երբ Տրդատը տաճարի քարերը բերում էր Մասիսի գագաթից, Լուսաւորիչն աղօթում էր, որ նա յաջող տեղ հասնի: Տրդատը սրտնեղում է, եւ երբ Լուսաւորիչը դադարում է աղօթել, Տրդատը մինչեւ ծնկները խրւում է հողի մէջ[96]:

Ըստ ժողովրդական հաւատալիքների, Ուռնայի կալում է լինելու Աւետ Դատաստանը: Լոռուայ մի հեքիաթում նկարագրւում է հարթավայր, ծայրին մի ծառ, որի մի «տուտը» երկնքում է, միւսը՝ գետնին, տակն էլ: աղբիւր: Ծառի վերեւում գտնւում է Ուռնայի կալը եւ այդ ծառով հերոսը բարձրանում է երկինք՝ Ուռնայի կալ[97]: Ուռնայի կալում Քրիստոսի աւետ դատաստանի մոտիւը շատ տարածուած է բանահիւսութեան մէջ[98], աստղային ծածկագրում այն նշանակում է Ծիր Կաթինը[99]: Ուռնայի կալ հասնելու համար պէտք է անցնել Մազէ կամուրջը, որի տակով հոսում է Կպրէ գետը, որի վրայից արդարները անցնում են թռչելով, իսկ մեղաւորներն ընկնում են գետը՝ յաւիտեան չարչարուելու[100]: Ուռնայի կալում կատարուող վերջին դատաստանին նուիրուած առասպել-երգում յիշատակւում է այդ ժամանակ փչող հրեղէն Հարաւի քամին, իսկ արեւելքից ելնում է սուրբ խաչը՝ Քրիստոս, եւ նստում է Ուռնայի կալում, իր անողորմ աթոռին[101]: Ինչպէս նշում է Եպս. Ժամկոչեանը, Ուռնայի կալը *Աստուածաշունչ*ում չի կապւում Յիսուսի եւ Աւետ Դատաստանի հետ, այլ դա այն վայրն է, ուր Դաւիթ արքան շինեց զոհասեղան Տիրոջ հրամանով՝ իր մեղքով ժողովրդին պատուհասած ժանտախտից ազատելու համար (Գ. Թագ. ԻԴ., 16-25), եւ այդ պատկերացումը զուտ հայկական ժողովրդական աւանդոյթ է[102]: Աւետ դատաստանը կապւում է նաեւ խնկի ծառի հետ: Աղօթքներից մէկում Սուրբ Կոյսը ձայն է տալիս Պետրոսին ու Պօղոսին, կանչում է նրանց Հռոմսիմի հարսանիքին: Փչում են Գաբրիէլական փողերը, կապում են մազէ կամուրջը, տնկում են

խնկի ծառը՝ ջոկում են արդարին մեղաւորից: Արդարներն, անցնելով մազէ կամրջով, յայտնւում են խնկի ծառի վրայ, իսկ մեղաւորները չոքում-լացում են[103]:

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՎԻՊԵՐԳԵՐՈՒՄ ԵՒ ՓՈՔՐ ՍԵՌԻ ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ ՆԻՒԹԵՐՈՒՄ

Աշխարհի մոդէլի, տիեզերական ծառի մոտիւները բաւական տարածուած են ժողովրդական հանելուկներում: Այդ հանելուկներում պատմւում է մի հսկայ ծառի մասին, որն աճում է Հնդու քաղաքում եւ ճիւղերը սփռել է աշխարհով, ամէն ճղին կամ կատարին՝ սինամահաւք, կամ ճրագ[104]: Ըստ Սարգիս Յարութիւնեանի, հանելուկների ծառը տիեզերական է, միմեանց է կապում երկինքն ու երկիրը, իսկ Հնդու քաղաքն՝ աշխարհի կենտրոնն ու երկնային քաղաքն է: Քրիստոնէութեան ազդեցութեամբ՝ Հնդու քաղաքը ընկալւում է որպէս Երուսաղէմ՝ աշխարհի կենտրոն, ծառի աշխարհասփիւռ ճիւղերը՝ քրիստոնէութիւն, սինամահաւքը՝ Քրիստոս, ճիւղերին վառուող ճրագները՝ առաքեալներ ու սրբեր, աշխարհով մէկ քրիստոնէութեան հաւատի լոյս տարածողներ[105]: Հանելուկներում ծառը կարող է նաեւ արտայայտել տիեզերական ժամանակը, որն արտայայտւում է մէկ տարով[106]. տարին՝ ծառը, 12 (ամիս) կամ եօթ (շաբաթ) ճիւղ, չորս (եղանակ) կամ երեսուն (ամիսների օրեր) տերեւ կամ խնձոր, կէսը սպիտակ (ցերեկ), կէսը՝ սեւ (գիշեր)[107]:

Մարդու մարմինը, մասնաւորապէս գլուխը եւս կարող է արտայայտուել ծառի, սիւնի կամ լեռան կերպարներով, որպէս տիեզերք[108]: Մարդն իբրեւ ծառ եւ սիւն մանրակոսմոս է: Ինչպէս տիեզերական ծառը համախմբում, կազմակերպում, է աշխարհի տարբեր մասերը, նրա տարբեր գօտիները ուղղահայեաց եւ հորիզոնական դասաւորութեամբ՝ ի հակակշիռ քաոսային խառնակ անորոշութեան, այդպէս էլ նոյն ծառի կամ սեան պատկերն է միաւորում մարդու մարմնի տարբեր մասերը[109]:

Աղօթքները եւս արտայայտում են տիեզերակառոյցի մասին պատկերացումներ: Աղօթքներին յատկապէս բնորոշ են սահմանային անցումները՝ քաոսից կոսմոս, կամ ժամանակի աւարտ եւ Ահեղ դատաստան: Քաոսից կոսմոսին անցնող

աշխարհի մասին «Ծառ մի կայր ի մէջ երկրի» սկզբնատողով աղօթքն է: Այդ ծառը չունի ո՛չ ճիւղ, ո՛չ տերեւ, ո՛չ արմատ. վրան մի անգլուխ, անթեւ, անոտք արծիւ է նստել, նրան հարցնում են, թէ ինչո՞ւ է նստել, պատասխանում է. որ ուտի մարդկանց միսը եւ ուղեղը ծծի ու կուրացնի: Եւ արեգակի սրտում գտնուող 365[110] հրեշտակապետերն ու հրեշտակները կապում են (հմայական մոգութիւն) արծուին, որ էլ մարդկանց չվնասի[111]: Սա, թերեւս, քաոսային վիճակ է, կոսմոսը նոր է ձեւաւորւում, եւ այն ձեւաւորում են 365 սրբերը, որ արեգակի՝ Քրիստոսի սրտում են:

«Գնացի ծովը, ծովն էր ծիրանի» սկզբնատողով աղօթքը նոյնպէս սահմանային իրադարձութեան մասին է: Ծիրանի ծով, մէջը ծիրանի (գոյն) ծառ, ծառի ճղերը, ճղերի վրայի բունը, բնի միջի ճուտը նոյնպէս ծիրանի են, գնացողը անոտք ելնում է ծառն, անդանակ մորթում է ճտին ու անեփ ուտում է[112]: Ծիրանի ծով-քաոսը հակադրւում է իր մէջ գտնուող ծիրանի ծառին, որ տիեզերական ծառն է, իսկ ծիրանի ճտի անբնական մատաղը փոխակերպում է քաոսը կոսմոսի: Ըստ Յարութիւնեանի, հմայական բոլոր աղօթքները, որոնցում պատկերուած է տիեզերական ծառը, ուղղուած են տարբեր հիւանդութիւնների՝ մարդու բնական վիճակի խախտման դէմ: Մարդու վիճակը կախուած է այդ տիեզերական ծառի վրայ հերթագայութեամբ դասաւորուած առարկաների ու կենդանիների կարգից, այսինքն՝ կարգուկանոնից: Որպէսզի մարդն ապաքինուի, զոհաբերւում է ծառի վրայ գտնուող թռչունը կամ օձը[113]:

Տիեզերքը կազմակերպւում է ըստ Աստծոյ հրամանի, եւ մեծամտացողներին, Աստծուն չլսողներին պատիժ է սպասւում՝ Աստուած կործանում է նրանց աշխարհը, այդ է վկայում գողտրիկ մի երգ, հաւանաբար աղօթք. արընկին ծովում կար ծառ, որի կատարին հաւքը հիւսել էր իր բոյնը, որն ընկալւում է որպէս քաղաք, տիեզերակառոյց: Հաւքը սարքեց այն՝ գերաններ բերելով աշխարհի տարբեր կողմերից: Բոյնը սարքելուց յետոյ, մեծամտանալով, Աստծուն փառք չտուեց ու նստեց իր բնին: Աստծոյ հրամանով կրակ է ընկնում բոյնը եւ ամբողջն այրւում է[114]:

Թէ որքան բարդ կառուցուածք է ունեցել Հայկական Աշխարհի մոդէլը լաւագոյնս արտայայտուած է «Տաղ

ուրախութեան խաղու ի վերայ ծովու եւ նաւի» ծիսական երգում: Այս մեծ տաղում հերթականութեամբ նկարագրւում է ուղղահայեաց տիեզերակառոյցը, որ բարձրանում է ներքեւից վերեւ՝ ամէն մի մասում կրկնելով նախորդ կազմութիւնը՝ վրան աւելացնելով ամէն անգամ եւս մի մաս: Վերջում ստացւում է ամբողջական պատկերը, որ տրւում է վերեւից ներքեւ. ձուն բնի, բոյնը ճիւղի, ճիւղը ծառի, ծառը յենարանի, յենարանը խաչի, խաչը բեմի, բեմը վէմի, վէմը նաւի, նաւը ծովի, ծովը՝ մանր աւազի վրայ են, ձուից ելնում է ձագը, որի թեւերը խաչին են, ինքը արեւինն է, ծովն էլ ծոցում է[115]: Ըստ Մնացականեանի ծառն ու ճիւղը այստեղ խորհրդանշում են նաեւ հին զոհասեան գաղափարը, իսկ ձուից դուրս եկած ձագը թեւի խաչանշանով՝ զոհաբերուած Քրիստոսին, որի զոհաբերութեամբ կանգուն ու հաստատուն է մնում աշխարհի կարգուկանոնը[116]:

Քաղաքի, տաճարի ու տան որպէս աշխարհի մոդէլ ընկալուելու հանգամանքը դրսեւորւում է ժողովրդական աւետիսների մէջ: Աշխարհակառոյցը հաստատող, նորոգող, նոր մոդէլ ձեւաւորող նիւթը առկայ է Լիլիթ Սիմոնեանի դասակարգմամբ՝ «աւանդական» աւետիսներում: Այդ աւետիսների հիմնական նիւթը երեք կերպարի ճանապարհորդութիւնն է դէպի հրաշալի անտառը՝ Չամչա մէրինը (մայրիների կամ Շամաշի անտառ), որտեղ աճում է սրբազան խնկի ծառը: Նրանց առաքելութիւնն է տիեզերական ծառը բերելը՝ սրբազան քաղաքի մայր տաճարի շինարարութեան համար[117]: Այդ ծառը դառնալու է կենտրոնական սիւնը, որի միջոցով վերականգնուելու-կառուցուելու է քաղաք-տաճար-տունը եւ ստեղծուելու է նոր աշխարհ, որի կենտրոնը տան կրտսեր զաւակն է[118]: Ծառը կտրելուց՝ սղոց քաշելուց արիւն է ֆշշում, կացին զարկելուց՝ ծառը ճչում է: Վերջապէս կտրում են, լծում են քառասուն մոզի, բայց մոզիները չեն կարողանում քաշել, բերում են Ուռֆայի պառաւի մոզին, որն էլ քաշում, բերում է ծառ խնկենին: Որոշ տարբերակներում լծում են Սերամ ու Սգամ եզներին, բայց նրանք իրար հետ չեն կարող լուծ քաշել, ուստի Սգամի փոխարէն լծում են Պառաւի մոզուն, նոր կարողանում են ծառը բերել: Ծառը բերելուց յետոյ նրանից սիւն են սարքում, որը

երկարում, կարճանում է, եւ նրանով շինում, թամամում են Երուսաղէմը: Յետագայ շարադրանքում մանրամասն նկարագրւում է զարդարուող տունը, որը դառնում է տաճար եւ նոյնանում Երուսաղէմին (մի տարբերակում Էջմիածնին). չորս կողմը սիւներ են կանգնենցնում, լուսեղէն կանթեղներ են կախում, սիւն ու գերանով Սողոմքաշ (հազարաշէն) են կառուցում, տանիքը ոսկուց, վրայի հողը մարգարիտ, թոնիրն էլ դառնում է եկեղեցի: Յետոյ տալիս են տան փոքր տղայի անունը եւ նկարագրում են նրան իբրեւ մեծ ծառի (գերդաստանի) ճութ: Տղան երկար մազերը փռում է ծառի ճիւղին եւ ինքն էլ ճթանում է, իր կախարդական պտուղներից ու անմահական գինուց նախնիները գեղեցկանում եւ անմահանում են՝ նոյնանում ծառի հետ[119]:

Ծառ-սիւնը կապուած է եզի հետ, նրան բերում է հանդերձեալ աշխարհի ներկայացուցիչ՝ Ուռֆայի պառաւի մոզին: Ուռֆայի պառաւը տիեզերական Մեծմայրն է, որին եւ պատկանում է ծառ խնկենին[120]: Եզը խորհրդանշում է տիեզերական ծառի միջին հատուածը, սակայն կապուած է նաեւ ստորգետնեայ աշխարհի հետ[121]:

Սիմոնեանը աւետիսի այս շարադրանքներում հաշւում է երեք տիեզերական ծառ. ծառ խնկենին, տուն-տաճար-պալատի գլխաւոր սիւնը եւ տոհմածառը: Տան փոքր տղան ճութն է՝ մէկ այլ ծառի պտուղ, սակայն նա նոր, ճթացող գերդաստանի հիմք պէտք է լինի: Աւետիսներում թոնիրը նոյնանում է եկեղեցուն: Այն դիտարկւում է իբրեւ ստորերկեայ templum՝ սրբավայր), աւելի ճիշտ՝ mundus՝ անցք, մուտք դէպի անդրաշխարհ[122]:

Աւետիս երգելիս երեխաները երդիկից կողով էին իջեցնում, որի մէջ դրւում էին նուէրները: Երդիկը կապում է միջին աշխարհը վերին աշխարհի հետ, իւրօրինակ մուտք ծառայելով դէպի վերին իրականութիւն: Հռոմէական տան երդիկը՝ նոյնպէս ծառայում էր իբրեւ մուտք ծիսական տարածութիւն եւ զուգահեռւում էր քաղաքի «պորտ»ին, որը մուտք էր ստորգետնեայ թագաւորութիւն[123]: Ջրհեղեղի հետ կապուած հայկական առասպելաբանութեան վառ տեղական մոտիւն է ջրհեղեղի սկսուելը թոնիրից[124]: Հիմնականում այս առասպելները կապւում են երէց-երէցկին-աղքատ եռեակ հերոսների հետ:

Երէցկինը, չկարողանալով մերժել մուրացկանի խնդրանքը եւ նրան համբոյր տալով, ամօթահար նետւում է վառուող թոնիրը: Թոնիրը ջրով է լցւում, ջուրը դուրս է թափւում եւ սկսում է ջրհեղեղը[125]: Նոյի մասին պատումների շարքում համբոյրի մոտիւը փոխարինւում է մէկ այլ արգելքի՝ չխօսկանութեան խախտմամբ, երբ հարսը Նոյին ասում է ջրի մօտենալու պատճառով թոնրի չվառուելու մասին[126]: Եթէ երդիկը կապն էր վերեւի՝ երկնքի հետ, ապա թոնիրը ստորգետնեայ աշխարհի կապն է, հետեւաբար թոնրատունն էլ միջին աշխարհն է:

Քաղաքը, տաճար-պալատը, տունը նոյնանում են տիեզերական ծառի, տուեալ դէպքում ծառ խնկենու գաղափարով: Ծառ խնկենին ստորին եւ միջին աշխարհները կապող եւ դէպի Աստծոյ դուռը՝ վերին աշխարհը, կամուրջն է[127]: Այն տիեզերական ծառ-տիեզերքի առանցքն է, սիւնը, որի վրայ պէտք է պահուի տիեզերքի անխախտ կառոյցը, պետականութիւնը, տոմարը, այսինքն քաղաքը՝ հնագոյն քաղաք-պետութիւնը[128]:

Տիեզերակառոյցը ստեղծուել եւ ձեւաւորուել է Աստծոյ հրամանով եւ Աստծոյ շուրջ: Այն ունի սկիզբ, մէջտեղ եւ վախճան՝ ամփոփուելով պտոյտի մէջ: Համաձայն ժողովրդական առասպելի, աշխարհի վերջը կապուած է Փոքր Միերի ազատուելով, աշխարհ դուրս գալու ժամանակ: Նա բանտարկուած է Զըմփ-զըմփ լեռնագագաթի անձաւի մէջ. «*Զըմփ-զըմփ մաղարայի լեռնագագաթը բերդաձեւ է, այնտեղից բազմաթիւ իրեր են գտնում, հողակոյտերու տակ բացւում են շէնքեր: Միերի դուռը ամենալերջ քար է, զոր տաշեր եւ կոկեր են մեծ դրան ձեւով եւ վրան բեւեռագրեր գրած են, խիստ յստակ: Միերի դրան վերէն սեւ ջուր մը կաթ կաթ կը ծորի: Միերն ու իւր ձին Աստծոյ հրամանով փակուեր են այն տեղը: Ճախրի Ֆալակ կը դառնայ, Միերը շարունակ անոր վրայ կը նայի, երբ այդ ճախրը դադարի, այն օր Միեր դուրս կ'ելլէ ու աշխարհը կ'աւրէ*»[129]:

Ժամանակի մէջ գոյացած ու կազմակերպուած աշխարհը ժամանակի ընթացքում՝ համապատասխան պարբերաշրջաններից յետոյ, ենթարկուելու է կործանման: Աշխարհի կործանումը սկսուելու է ժամանակի վախճանով՝

Ճախրի Ֆալաքի պտոյտի դադարումով: Այս աւանդութեան մէջ առկայ է ժամանակի նախասկզբնական եւ վերջնական ընկալումը՝ ժամանակի սկիզբ (որ զրոյցում ենթադրւում է) եւ վախճան[130]: Նման մի վերջ էլ աւանդուած է Արտաւազդի առասպելական պարբերաշրջանում, ինչպէս եւ Քրիստոսի վերջին գալստեան ժամանակ: Իրական ժամանակը վերջանալու է, եւ լինելու է միայն յաւերժութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում դոկտոր Թամար Հայրապետեանին եւ պ.գ.թ. Լիլիթ Սիմոնեանին օժանդակութեան, քննարկման եւ խորհուրդների համար:

[2] Mircha Eliade, *Kosmos I Istoria,* (Կոսմոսն ու պատմութիւնը), Մոսկուա, Պրոգրէս Հրատ., 1987:

[3] Valeriy Evsyukov, *Mifi O Mirozdanii* (Առասպելներ աշխարհաստեղծման մասին), Մոսկուա, *Politicheskoy Literaturi* Հրատ., 1986:

[4] Vladimir Toporov, *Mirovoe Drevo. Universalnie Znakovie Kompleksi, V 2 tomakh,* (Տիեզերական ծառ. նշանային համընդհանուր համակարգեր, 2 հատորով), Մոսկուա, Ռուսիայի ձեռագիր հուշարձանները *Rukopisnie Pamyatniki Drevney Rusi* Հրատ., 2010:

[5] Ասատուր Մնացականեան, *Հայկական Զարդարուեստ*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատ., 1955:

[6] Սարգիս Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, Պէյրութ, Տպ. Համազգային, 2000:

[7] Համլէտ Պետրոսեան, *Խաչքար. Ծագումը, Գործառոյթը, Պատկերագրութիւնը, Իմաստաբանութիւնը*, Երեւան, Փրինթինֆօ, 2008:

[8] Թամարա Հայրապետեան, «Խորհրդանշային Ցուցիչները Հայ Ժողովրդական Հեքիաթներում Եւ Վիպապատմական Բանահիւսութեան Մէջ» (Դոկտորական ատենախօսութեան ձեռագիր, էջ 162-236): Այս աղբիւրը տրամադրելու համար շնորհակալութիւն եմ յայտնում հեղինակին:

[9] Լիլիթ Սիմոնեան, *Տոմարային Ծիսաշար, Հտր. 1. Տոմար, Նոր Տարի, Սուրբ Ծնունդ*, Երեւան, ՎՄՎ-պրինտ, 2006. նաեւ՝ Լ. Սիմոնեան, *Հաւքն Իր Թեւով, Օձն Իր Պորտով*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2011:

[10] Karl Gustav Yung, *Filosofskoe Drevo,* (Փիլիսոփայական ծառ), Մոսկուա, *Akademicheskiy Proekt* Հրատ., 2008:

[11] Երուանդ Լալայեան, «Վարանդա, Հաւատք», *Ազգագրական Հանդէս Գիրք Բ.*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1897. նաեւ՝ Լալայեան, «Բորչալուի Գաւառ», *Ազգագրական Հանդէս Գիրք X*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1903. նաեւ՝ Լալայեան, «Նոր Բայազէտի Գաւառ, Հաւատք», *Ազգագրական Հանդէս Գիրք XVII*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց 1908:

[12] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հտր. I*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1959, *ՀԺՀ, հտր. II*, 1959, *ՀԺՀ, հտր. VII*, 1979, *ՀԺՀ, հտր. VIII*, 1976, *ՀԺՀ, հտր. IX*, 1968, *ՀԺՀ, հտր. XI*, 1980, *ՀԺՀ, հտր. XII*, 1984, *ՀԺՀ, հտր. XIII*, 1985:

[13] Սարգիս Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1965:

[14] Սիմոնեան, *Տոմարային*, յաւելուած:

[15] Aleksey Losev, *Znak, Simvol, Mif, Moskva,* (Նշան, խորհրդանշան, առասպել), Մոսկուա, *Moskovskogo Universiteta* Հրատ., 1982, էջ 226:

[16] Losev, էջ 224-226:

[17] Eliade, էջ 150:

[18] Նոյն, էջ 155:

[19] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Karl Gustav Yung, *Libido, Ego Metamorfozi I Simvoli,* (Լիբիդոն, իր փոխակերպումներն ու խորհրդանշանները), Սանկտ Պետերբուրգ, *Vostochno-Evropeyskiy Institut Psikhoanaliza* Հրատ., 1994, էջ 213-265. նաեւ՝ Սիմոնեան, *Տոմարային*, էջ 125:

[20] Eliade, էջ 156-157:

[21] Նոյն, էջ 145:

[22] Վ. Տոպորովը աշխարհակառոյցի փոխարէն յաճախ կիրառում է տիեզերական ծառ կերպարը, ինչը, կարծում եմ, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ աշխարհակառոյցի ոչ միայն ծառի կերպարով է դրսեւորւում: Տոպորովն ինքն է բազմաթիւ այլ կերպարներ նշում որպէս աշխարհի մոդէլ:

[23] Vladimir Toporov, *K Proiskhojhdeniyu Nekotorikh Poeticheskikh Simvolov (Paleoliticheskaya Epokha)* (Բանաստեղծական որոշ խորհրդանշանների առաջացման մասին (հինքարէդարեան ժամանակաշրջան), *Rannie Formi Iskusstva,* (Արուեստի վաղ ձեւերը), Մոսկուա, *Iskusstvo* Հրատ., 1972, էջ 93:

[24] Նոյն:

[25] Boris Frolov, "Nachala Pervobitnoy Simvoliki (Po Materialam Izucheniya Drevneyshikh Kultur Armenii I Sopredelnikh Territoriy) (Նախնադարեան խորհրդաբանութեան սկիզբը (Հայաստանի եւ յարակից տարածքների հնագոյն մշակոյթի ուսումնասիրութիւնների նիւթերի հիման վրայ)", *Պատմաբանասիրական Հանդէս*, 1984, 1, էջ 65:

[26] Նոյն:

[27] Frolov, էջ 61. նաեւ՝ Մնացականեան, էջ 611:

[28] Յարութիւնեան, էջ 21:

[29] Frolov, էջ 58:

[30] Այստեղ Կողբացին ազդուած է միլէթեան դպրոցի Ք.ա. Զ. դարի հեղինակ Անաքսիմանդրոսի ուսմունքից (F. Kessidi, *Ot Mifa K Logosu,* (Առասպելից դէպի բան), Մոսկուա, *Misl Հրատ., 1972*, էջ 126:

[31] Եզնիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1970, էջ 36-37: Հմմտ.՝ չինական աշխարհակառոյցի հետ, երբ աշխարհի կողմերի պահապան ոգիները պատկերւում կամ քանդակւում են անկիւններում,

վերեւում. աջից՝ Կանաչ վիշապ-արեւելք, ձախից՝ Սպիտակ վագր-արեւմուտք, ներքեւում. աջից՝ Կարմիր թռչուն-հարաւ եւ ձախից՝ Սեւ զինուոր-հիւսիս, որը պատկերւում է որպէս կրիային փաթաթուած օձ, խորհրդանշում է Երկնքի ու Երկրի ամուսնութիւնը (Yuan Ke, *Mifi Drevnego Kitaya,* (Հին Չինաստանի առասպելները), Մոսկուա, Glavnaya Redaktsiya Vostochnoy Literaturi (Արեւելեան գրականութեան գլխաւոր խմբագրութիւն), 1987, էջ 90-91, 375-376:

[32] Կողբացի, էջ 35:

[33] Evsyukov, էջ 20-21:

[34] Եթէ այդ կէտերին գումարենք մէկը՝ հենց առանցքը, կը ստացուի ութ, վեց կամ տասը, եւ այս կէտերը կողմնացոյց են յիշեցնում, երկնքի ու երկրի հատուածների գաղափարը, երբ աւելի ամբողջական ներկայացնելու համար արտայայտւում են ոչ միայն աշխարհի կողմերը, այլեւ անցումները. հիւսիս-արեւելք, հարաւ-արեւելք, հիւսիս-արեւմուտք, հարաւ-արեւմուտք, այսինքն ութի շուրջ, իսկ եթէ աւելացնենք զենիթն ու նադիրը, կը ստանանք նաեւ տասը:

[35] Evsyukov, էջ 23:

[36] Toporov, էջ 94-95:

[37] Frolov, էջ 58:

[38] Վահագնի ծագումն ու գործառոյթները չեն մտնում սոյն աշխատանքի թեմայի մէջ: Վահագնը դիտարկւում է որպէս կրակ՝ ելնելով հիմնարար չորս տարրերի սկզբունքից. երգում առկայ են երկինք-օդը, երկիր-հողը, ծով-ջուրը, ուստի Վահագնը բացակայող լոյս-կրակն է (հմմտ.՝ Լիլիթ Սիմոնեան, «Վահագն Դիցոյթը Որպէս Կրակ Տարերքի Տիրակալ», *Բազմավէպ*, ՃԿԹ տարի, թիւ 3-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2011, էջ 646-678:

[39] Հմմտ.՝ Կողբացի, էջ 35:

[40] Aleksandr Demirkhanyan, “K Probleme Simvoliki Trekhchastnikh Kompozitsiy Drevney Armenii” (Հին Հայաստանի եռամաս կոմպոզիցիաների խորհրդաբանութեան խնդիրների մասին), *Պատմաբանասիրական Հանդէս*, 1982, 4, էջ 157:

[41] Երկնքի եւ երկրի եօթ գօտիների բաժանման մանրամասն վերլուծութիւնը տե՛ս՝ Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւնը*, էջ 10-12:

[42] Գրիգոր Քհնյ. Նժդեհեան, «Պառաւաշունչ», *Ազգագրական Հանդէս, Գիրք IX*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1902, էջ 263-271:

[43] Երուանդ Լալաեան «Նոր-Բայազէտի», էջ 94:

[44] Նոյն, էջ 91-93:

[45] Երուանդ Լալայեան, «Վարանդա», էջ 221:

[46] Երուանդ Լալայեան, «Բորչալուի Գաւառ», *Ազգագրական Հանդէս, Գիրք X*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1903, էջ 198:

[47] Սոյն աշխատանքի սահմաններում՝ աշխարհակառոյցի եւ տիեզերական ծառի վերաբերեալ որոշ հեքիաթների մեկնաբանութիւնը տե՛ս՝ Թամարա Հայրապետեան, «Տոմարական Եւ Աստղաբաշխական Պատկերացումները

Հայ Ժողովրդական Հեքիաթներում», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2007, թիւ 2, էջ 257-272:

[48] «Անմահական Խնձոր», *Հայ Ժողովրդական, Հտր. II*, , էջ 23-38:

[49] Նման հեքիաթների շարքում տե՛ս՝ «Լուս Ու Մութ Աշխարք» (Տարօն), *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. XIII*, Երեւան, 1985, էջ 9-13 (այս հեքիաթում հետաքրքիրն այն է, որ արծիւը բոյնը սարքել է տիեզերական ծառի տակ), «Սինամահաւք» (Ալաշկերտ), *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. IX*, 1968, էջ 13-34, «Լուս Նան Մթէն Աշխարքնէն» (Արցախ), *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. VII*, 1979, էջ 11-15, «Ոսկէ Խանձուրուն Նաղըլը» (Մեղրի), նոյն, էջ 585-597 եւն.: Այս հեքիաթներում տարբերւում են թռչունների անունները՝ Զմրուխ Ղուշ, Սինամահաւք, Արծիւ. տարբեր են աշխարհներն խորհրդանշող գունաւոր կենդանիները՝ խոյ, ոչխար, ձի, այծ եւ տարբեր են մսի ու գինու քանակը, որ պահանջւում են ամէնօրեայ ճանապարհի համար՝ եօթ կամ քառասուն, մնացածը նոյնն է:

[50] «Կարմիր Եզն Ու Հ'ուշապ», *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. XII*, Երեւան, 1984, էջ 524-539. նաեւ՝ «Բոր Եզ», *Հայ Ժողովրդական, Հտր. XIII*, էջ 161-177 եւն.:

[51] Կարմիր եզան կամ կովի եղջիւրների վրայ գտնուող աշխարհի մասին տե՛ս՝ սոյն աշխատանքի սկզբում:

[52] Սիմոնեան, *Հաւքն Իր Թեւով*, էջ 77:

[53] «Ձուկ Տղան», *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. I*, Երեւան, 1959, էջ 407-414:

[54] Նոյնը, էջ 407-414:

[55] *Մոքոս, Ժողովրդական Վէպ*, գրի առաւ Սարգիս Հայկունի, Էջմիածին, Մայր Աթոռ, 1896, էջ 37-38:

[56] *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. XVI*, Երեւան, 2009, էջ 362-363:

[57] Թ. Հայրապետեան, «Ծիսաառասպելական Տարրերը Ղարաբաղում Կենցաղավարող Հրաշապատում Հեքիաթներում Ըստ 2006-2008 թթ. Գրառած Նիւթերի», *Կրթութիւնը Եւ Գիտութիւնը Արցախում*, Երեւան-Ստեփանակերտ, 2008, էջ 35:

[58] Անդ:

[59] «Ծովինարը», *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. VIII*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 444-446:

[60] Նոյն, էջ 448:

[61] Համմտ.՝ չինականի հետ. սպիտակ-արեւմուտք, սեւ-հիւսիս, կանաչ-արեւելք, կարմիր-հարաւ (Yuan Ke, էջ 375): Գունային լուծումներ ունի նաեւ Ֆրիկի «Կամիմ ընդ ձեզ բան մի խօսել» սկզբնատողով պոէմում նկարագրուող աշխարհն ու տիեզերական ծառը. դեղին, կարմիր, կապոյտ եւ կանաչ (Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 21-22, տողատակը): *Էֆիմերտէ* գրքում, ի թիւս այլ երեւոյթների, աշխարհի չորս կողմերը կապւում են գոյների հետ. սեւ-հիւսիս, սպիտակ-արեւելք, կարմիր-հարաւ, դեղին-արեւմուտք (*Էֆիմերտէ*, Երեւան, «Ապոլոն», 1992, էջ 147-148):

[62] «Արա Գեղեցիկ», *Ազգագրական Հանդէս, Գիրք IX*, 144-159:
[63] Նոյն, էջ 157:
[64] Նոյն, էջ 146-149:
[65] Նոյն, էջ 153-154:
[66] Յարութիւնեան, էջ 17:
[67] Նոյն, էջ 438:
[68] Գարեգին Սրուանձտեանց, *Երկեր, 2 Հատորով, Հտր. 1*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 150-151:
[69] Նման ապարանջաններ՝ երկու ծայրերին օձի երկու գլուխ, կամ պոչը գրեթէ կծող օձ լայնօրէն տարածուած են Հայկական Լեռնաշխարհում, բրոնզէ դարից մինչեւ ուշ միջնադար, նաեւ եպիսկոպոսական գաւազանի վրայ:
[70] «Աղքատ Յովանէս», *Հայ Ժողովրդական, Հտր. XII*, էջ 41-42:
[71] «Օձուենի Ծառ», *Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Հտր. XI*, էջ 292-294:
[72] Սիմոնեան, *Հաւքն*, էջ 64-65:
[73] Մնացականեան, էջ 440:
[74] Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Հտր. Բ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1973, էջ 62-63, երկին եւ երկիր բառերի տակ. նաեւ՝ *Էֆիմերտէ*, էջ 165:
[75] Պատկերագրական օրինակներ տե՛ս՝ Մնացականեան, էջ 102, նկ. 270, 271:
[76] Մնացականեան, էջ 101-102:
[77] Անդ:
[78] «Տաղ Յարութեան Գրիգորի Նարեկացւոյն Ասացեալ», Գրիգոր Նարեկացի, *Տաղեր Եւ Գանձեր*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981, էջ 59-65:
[79] Մովսէս Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1997, էջ 87:
[80] Նոյն, էջ 88:
[81] Նոյն, էջ 105-106:
[82] Նոյն, էջ 112:
[83] Նոյն, էջ 109-110:
[84] Նոյն, էջ 167:
[85] Նոյն, էջ 173-174:
[86] Նոյն, էջ 174:
[87] Այս երկիրը կոչւում էր Կուեռա ուրարտական վիշապ աստուածութեան անունով (Ս. Գ. Հմայակեան, *Վանի Թագաւորութեան Պետական Կրօնը*, Երեւան, 1990, էջ 51:
[88] Նոյն, էջ 53-54:
[89] Գրիգոր Ա. Յակոբեան, *Ներքին Բասէնի Ազգագրութիւնը Եւ Բանահիւսութիւնը*, Երեւան, Հայաստան Հրատ., 1974, էջ 251, 252:
[90] Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, Հայաստանի ԳԱ Հրատ., 1969, թիւ 11:
[91] Թովմա Արծրունի Եւ Անանուն, *Պատմութիւն Արծրունեաց Տան*, Երեւան, Հայաստան Հրատ., 1999, էջ 36:

[92] Անուշաւան Եպս. Ժամկոչեան, *Աստուածաշունչը եւ Հայ Բանաւոր Աւանդոյթը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2012, էջ 68:
[93] Ղանալանեան, թիւ 258 եւ 293:
[94] Eliade, էջ 154:
[95] Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, Սովետական Գրող, 1977, էջ 117:
[96] Ղանալանեան, թիւ 602:
[97] «Երկինք Գնացող Տղէն», *Հայ Ժողովրդական, Հտր. VIII*, էջ 202-203: Հմմտ.՝ շամանական ծառի հետ, որով բարձրանում են Բայ Ուլգէնի պալատը (Eliade, էջ 155):
[98] Ղանալանեան, էջ 350-351. նաեւ՝ Ժամկոչեան, թիւ 28, 29, 146, 148, 149:
[99] Կարապետ Գաբիկեան, *Բառգիրք Սեբաստահայ Գաւառալեզուի*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1952, էջ 449-50: Հմմտ.՝ ծառով դէպի Ծիր Կաթին կամ Երկինք բարձրանալը այլ ժողովուրդների մօտ (Eliade, էջ 156-157):
[100] Ժամկոչեան, էջ 303:
[101] Նոյն, էջ 304:
[102] Նոյն, էջ 104:
[103] Ժամկոչեան, էջ 105:
[104] Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական* Հանելուկներ, թիւ 12, 12բ, 13, 75 եւն.:
[105] Յարութիւնեան, էջ 19:
[106] Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական* Հանելուկներ, թիւ 140բ, 140գ, 141բ, 148:
[107] Յարութիւնեան, էջ 20:
[108] Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական* Հանելուկներ, թիւ 1010ա, 1010ը եւն.:
[109] Յարութիւնեան, էջ 21:
[110] Լեւոն Խաչիկեան, «Նախամեսրոպեան Գրի Հարցը Եւ Հմայագրերը», *Աշխատութիւններ, Հտր. Ա.*, Երեւան, «Գանձասար» 1995: Գրքում տպագրուած է ԴՃԿԵ, բայց Դ չորս է, Գն է երեքը, ըստ ամենայնի գրքում տպագրական սխալ է տեղ գտել:
[111] Նոյնը, էջ 20-21:
[112] Յարութիւնեան, էջ 21-22:
[113] Նոյն, էջ 23:
[114] Գարեգին Սարկ. Յովսէփեանց, *Փշրանքներ Ժողովրդական Բանահիւսութիւնից*, Թիֆլիս, Տպ. Մ. Շարաձէի, 1892, էջ 22:
[115] Մնացականեան, էջ 104-105: Հեղինակի կարծիքով, թէեւ այս տաղում առկայ են քրիստոնէական խորհրդանշաններ ու գաղափարներ, այն պէտք է որ շատ աւելի հին լինի:
[116] Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 27:
[117] Սիմոնեան, *Տոմարային*, էջ 122:
[118] Նոյն, էջ 119:
[119] Նոյն, թիւ 22, 23, 25, 26, 27, 30, 35, 57 եւն. Աւետիսներ:
[120] Նոյն, էջ 125-126, 266:

[121] Համմտ.՝ վիշապ-կոթողների միւս անուանման հետ՝ օհուզ (թրք. ez), Մնացականեան, էջ 547:
[122] Նոյն, էջ 131, տողատակը:
[123] Նոյն, էջ 100:
[124] Նման առասպելների վերաբերեալ տե՛ս՝ Ղանալանեան, թիւ 289, 269, 252 եւն. նաեւ՝ Ժամկոչեան, էջ 69:
[125] Նոյի եւ ջրհեղեղի հայոց առասպելաբանութեան տեղական առանձնայատկութիւնների մանրամասն վերլուծութիւնը տե՛ս՝ Ժամկոչեան, էջ 66-72:
[126] Ժամկոչեան, թիւ 33, 38 եւն.:
[127] Սիմոնեան, *Տոմարային*, էջ 126:
[128] Նոյն, էջ 122-123:
[129] Սրուանձտեանց, *Հտ. 1*, էջ 88:
[130] Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 445-446:

THE WORLD MODEL IN ARMENIAN FOLKLORE (SUMMARY)

KAREN HOVHANNISIAN
karenhovhov@mail.ru

As Armenian civilization is a part of the Mediterranean cultural space the author briefly explains the Mediteranean perception of the world model. He defines “the world, or the universe model” as a system of cultural time and space structured around the universal axis in which a society lives.

Human society has for ages made its territory cultural, separated it from nature, but it is still in relationship with nature. The zone of human habitat was comprehended as cosmos, in contrast to chaos, the space outside culture. In many cases areas of water (seas, lakes, rivers) were considered zones of chaos, probably because people could not live there. The sky was always the abode of deities, time was calculated with the help of the sky, the sun, the moon, stars, and planets, while heavenly bodies were the main topic of myths on the origins and structure of the universe. Finally, the general configuration of the universe, according to the archetypal dichotomy, is the constant connection of heaven and earth. Trees, mountains, temples, the palace, the city, the house etc. were perceived as images of the world structure, while its layers were symbolically represented by animals, colours, and basic elements.

The Armenian perception of world structure is a dynamic system placed in time and space. In Armenian folklore the vertical and the horizontal axes of the universe are represented in connection with iconic and traditional architectural forms. The world model is expressed as a tree (incense-tree, or juniper), column (staff as symbolic column), mountain (Masis), temple (Solomon’s temple) etc. *Tonratun* (bakery, kitchen) on the other hand, represents the microcosm. The flood starts when *tonir* (traditional oven) is filled with water and, thus, chaos invades cosmos.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ “ԼՈՌԵՑԻ ՍԱՔՕՆ” ԺԱՄԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ
mnacakanyaneva@mail.ru

Բացառիկ մեծ է Յովհաննէս Թումանեանի դերը պոէմի գրական սեռի զարգացման գործում: Նա քնարավիպական այդ սեռը հասցրել է դասական կատարելութեան եւ հայ գրականութեան պատմութեան մէջ մնացել որպէս հաւասարը չունեցող խոշորագոյն վարպետ: Պատահական չէ, որ դեռեւս 1890ին, երբ նոր էր ներկայանում ընթերցող հասարակութեանը, նրա ստեղծագործութիւնների մէջ բարձր էին գնահատւում յատկապէս պոէմները («Լոռեցի Սաքօն», «Մեհրի», «Ալեք»): Տեղին է յիշատակել 1902 Յուլիսի 21ին Աւետիք Իսահակեանի՝ Թումանեանին ուղղուած նամակի հետեւեալ միտքը. «*Բայց ինչ էլ որ լինի[,] քո պոէմներդ՝ մեր գրականութեան մէջ դարաշրջան են կազմելու*»[1]:

Թումանեանի գրական ժառանգութեան անփոխարինելի մաս կազմող պոէմների մէջ առանձնանում է «չարչարուած»[2] մի գործ՝ «Լոռեցի Սաքօն»: Դեռեւս ոչ մի երկ այնպիսի թէական վերաբերմունքի եւ քննութեան, հեղինակային փոփոխութիւնների[3] եւ մշակման չի ենթարկուել, ինչպէս այս պոէմը: Քննադատութեան թիրախ են եղել պոէմի թեման եւ հերոսի՝ սնահաւատութեան ազդեցութեամբ խելագարուելու հոգեբանական պատճառաբանուածութիւնը: Էդուարդ Ջրբաշեանը *Թումանեանի Պոէմները* արժէքաւոր աշխատութեան մէջ համոզիչ փաստարկումներով հիմնաւորում է պոէմի հիմքում ընկած կենսական փաստի հաւանականութիւնն ու հաւաստիութիւնը[4]:

Մեր խնդիրն է պատմական հեռանկարի մէջ դիտարկել պոէմին տրուած ժամանակի գնահատականը, պարզաբանել՝ ե՛րբ եւ ու՛մ կողմից է առաջադրուել այս կամ այն հայեցակէտը, եւ դա ի՛նչ փոփոխութեան է ենթարկուել ժամանակի ընթացքում:

Առաջինը Ղազարոս Աղայեանն էր[5], որ, մինչ Թումանեանի *Բանաստեղծութիւններ* անդրանիկ ժողովածուի տպագրուելը ծանօթ լինելով պոէմին, բարձրաձայնում է իր առարկութիւնները Սաքոյի խելագարուելու փաստի՝ հոգեբանօրէն արդարացուած չլինելու վերաբերեալ: Թումանեանը 1890 Յուլիսի 29ին Անուշաւան Աբովեանին ուղղած նամակում գրում է. «*Կարդացինք «Լոռեցի Սաքօն». «Աղայեանցը նոյնիսկ առաջին տողերից շատ բծախնդիր լինելով, ես սփիւռեցայ*

պահպանողական դիրք բռնել. միմեանց չզիջանք. այնպէս որ բանը վիճաբանութեան փոխուեց (բայց իհարկէ մեղմ): Դեռ կէսը չհասած մի գոռգոռոց սարքեց, թէ բոլորովին հոգեբանութեանը հակառակ է Սաքոյին խելագարեցնելը: Ես հակառակն ապացուցեցի, բայց նա դժգոհ իմ բացատրութիւնից այսպիսի հարցեր առաջարկեց.- փարուայ ո՞ր եղանակին է խելագարւում: Նրանց ցեղում էլ խելագար եղած է՞ր թէ չէ. ինչո՞ւ չէ խելագարուած փախչելիս մի քարից վեր ընկնում մեռնում..»[6]:

Ինչպէս տեղեկանում ենք նամակից, վիճաբանութեանը ներկայ են եղել նաեւ Պերճ Պռոշեանը, մանկավարժ Սարգիս Բեկնազարեանցը, որոնք ընդդիմացել են Աղայեանին՝ պոէմը համարելով «հրաշալի»: Վերջինս, յայտարարելով, որ «*նրանք հոգեբանութեան այբբեն էլ չգիտեն*»[7], մնում է նախկին համոզմունքին[8]: Հետաքրքրական է, որ նոյն դիտարկումը անում են նաեւ Մոսկուայի ուսանողները, որոնք նոյնպէս մինչ առաջին ժողովածուի տպագրութիւնը ծանօթացել էին Թումանեանի ստեղծագործութիւններին: Մեծ հիացմունքով ու ոգեւորութեամբ ընդունելով նորայայտ բանաստեղծի մուտքը գրական աշխարհ, այնուամենայնիւ, ուսանողութիւնը հնչեցնում է որոշակի առարկութիւններ՝ Սաքոյի հոգեկան աշխարհի, խելագարութեան առնչութեամբ: Ներսիսեան Դպրոցի շրջանաւարտ Բագրատ Թումանեանը, Մոսկուայից ուղարկուած Նոյեմբերի 10ի նամակում գրում է. «*Սաքոյի» համար ասում են, թէ դա մի փոքր անբնական է, թէ նա այդպէս շուտով չէր կարող խելագարուել*»[9]: Նամակագիրը, սակայն, միանգամայն իրատեսական եւ նոյնիսկ ծանօթ է համարում պոէմում պատկերուած երեւոյթները. «*թէ՛ իմ տպտպս պատմածները եւ թէ՛ զանազան հանգամանքներում ինձ հետ եղած պատահարները, բոլորը այստեղ պարզ նկարած է*»[10],- գրում է Բ. Թումանեանը յաջորդ նամակում:

Այսպիսով, դեռեւս ձեռագիր վիճակում «Լոռեցի Սաքօն» դառնում է քննութեան եւ վիճաբանութեան նիւթ: Տեղին է յիշատակել գրականագէտ Զաւէն Աւետիսեանի ուշագրաւ դիտարկումներից մէկը[11], թէ՝ Աղայեանի համար ընթերցուած ձեռագիրը պոէմի նախնական տարբերակն է եղել, եւ 1889ի անդրանիկ գրքի տպագրութիւնից առաջ Թումանեանը «*ձեռագիր պոէմը ենթարկել է փոփոխութեան՝ աշխատելով հաշուի նստել Աղայեանի կարծիքի հետ*»[12]: Այս կարեւոր դիտողութեան օգտին է խօսում նաեւ այն, որ Թումանեանի երկերի առաջին լուրջ քննադատը՝ Մանուկ Աբեղեանը, գրախօսելով *Բանաստեղծութիւններ* ժողովածուն[13], այդ թւում նաեւ «Լոռեցի Սաքօն», գրականագէտին յատուկ խոր ներքնատեսութեամբ բարձր է գնահատում պոէմը եւ համարում յաջողուած՝ նախեւառաջ հոգեբանական ճիշտ լուծումների տեսանկիւնից: «*Մեր վիպերգական բանաստեղծութեան մէջ*,- գրում է

Աբեղեանը,- *այդ երեք քերթուածները («Լոռեցի Սաքօն», «Մեհրի», «Ալեք») չունեն իրենց նմանը թէ՛ կենդանութեամբ, թէ՛ զգացմունքների բնականութեամբ, թէ՛ գրաւիչ, սահուն եւ, որ գլխաւորն է, կանոնաւոր գեղեցիկ լեզուով*»[14]:

Անդրադառնալով «Լոռեցի Սաքօն»ին՝ գրախօսը ընդհանուր գծերով ներկայացնում է պոէմի բովանդակութիւնը՝ ուշադրութիւնը բեւեռելով աներկիւղ հսկայ Սաքոյի կերպարին, տալիս նրա հոգեկան խանգարման աստիճանական զարգացման նկարագրութիւնը: Աբեղեանը միանգամայն պատճառաբանուած է համարում իգիթի հոգեկան հաւասարակշռութեան խաթարումը. մանկական սնոտիապաշտ կրթութիւնը յաղթում է, եւ բնութեան զաւակ աժդահայ Սաքօն «*ընկճւում է իր երեւակայութեան առաջ*»: «*Սաքոյի երեւակայութեան խանգարուելը եւ այդ խանգարման աստիճանաբար զօրանալը հոգեբանական մանրամասն ճշտութեամբ պարզած է վէպի մէջ. եւ մարդ խղճալով ցաւում է այն աներկիւղ կտրճի վրայ, որ «Շատ անգամ միայն ձեռքի մահակով քշել է գայլերին ամբողջ վոհմակով», իսկ այժմ իր իսկ երեւակայութեան ստեղծած ճիւաղներից, ինչքան էլ չի ուզում, սարսափահար է լինում*»[15]:

Աբեղեանի յօդուածին հետեւում է Լեւոն Մանուէլեանի գրախօսականը *Մուրճ* ամսագրի թիւ 1ում: Մանուէլեանը, ողջունելով Թումանեանի գրական մուտքը, ընդգծում է կարեւոր մի առանձնայատկութիւն. «*Նա իր պոէմաների մէջ նման չէ ո՛չ մեր հին, ո՛չ նոր բանաստեղծներին, նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրոյն է, նա մի տեսակ նորութիւն է մեզ համար: Այդ առանձնայատկութիւնը ժողովրդական տարրն է, որ կազմում է նորա վիպական ոտանաւորների իսկական զարկերակը*»[16]: Խօսելով «Լոռեցի Սաքօն»ի արժանիքներից՝ Մանուէլեանը մատնանշում է անպաճոյճ, գեղեցիկ լեզուով կերտած տեսարանները՝ սրտամօտ ու հարազատ ընթերցողին: Սակայն, ըստ գրախօսի, բովանդակութեան տեսանկիւնից պոէմը թոյլ է, անհետաքրքիր, «*անարժան ուշադրութեան*», գլխաւոր հերոսն էլ՝ գրեթէ անկենդան: Մանուէլեանը պարզունակ եզրակացութեան է յանգում, թէ՝ Թումանեանի նպատակն է բացայայտել՝ ինչպէ՛ս է պահպանւում եւ փոխանցւում ժողովրդական սնոտիապաշտութիւնը: Նկատելի է՝ այստեղ իսպառ բացակայում է Սաքոյի հոգեբանութեանն ու խելագարութեանն առնչուող հարցերի քննութիւնը: Մանուէլեանը, հետեւելով պոէմի սիւժէի արտաքին զարգացմանը, շրջանցում կամ չի նկատում կերպարի ներքին զարգացումը, հոգեբանական փոփոխութիւնները. ուստի պոէմի գաղափարական ընկալումը մնում է թերի, նոյնիսկ՝ չբացայայտուած:

Ուշագրաւ է, որ Թումանեանը 1893ին կատարելով որոշակի փոփոխութիւններ ու վերամշակումներ, փորձում է հոգեբանօրէն աւելի՛

համոզիչ դարձնել Սաքոյի խելագարութիւնը: Նոյն թուի Նոյեմբերի 18ի նամակում, Աղայեանին գրում է. «*Ի դէպ, ասեմ, որ եւր եմ նայում հիմա եւ հին գրածներս ուղղում. առաջին հատորից արդէն ուղղել եմ 'Լոռեցի Սաքօն' եւ 'Արեւն ու Լուսինը': Եթէ յիշում էք, «Լոռեցի Սաքոյի" մէջ Դուք մի սխալ էիք ցոյց տալիս, այդ սխալը ես այժմ եմ գլխի ընկել եւ ուղղել. այդ պոէման կը լաւանայ*»[17]: Որոշակիօրէն ի՛նչ սխալի մասին է ակնարկում Թումանեանը՝ դժուար է ասել, սակայն պոէմը ենթարկւում է վերամշակման: Ձգտելով գեղարուեստական առաւել համոզիչ երանգներով ներկայացնել Սաքոյի խելագարութիւնը՝ բանաստեղծը կատարում է յաւելումներ, որոնք, սակայն, ոչ միայն չեն նպաստում խնդրի բացայայտմանը[18], այլեւ՝ ընդհակառակը:

1896ին առանձին գրքով հրատարակւում է *Լոռեցի Սաքօն* պոէմի երկրորդ տարբերակը, որը բաղկացած էր 476 տողից՝ ի տարբերութիւն առաջինի, որն ունէր 287 տող: Տպագրութեանը հետեւում է Շիրվանզադէի գրախօսականը. «*Պ. Թումանեանի պոէման կարդացում է սիրով: Նրա ոճը բաւական սահուն է, յանգերը՝ գեղեցիկ: Հեղինակը ունէ առհասարակ բանաստեղծական կրակ եւ զգացումների խորութիւն*»[19]: Պոէմը, ըստ վիպասանի, Թումանեանի «*բանաստեղծական ձիրքի*» «*անհերքելի*» ապացոյցն է, թէպէտ եւ զերծ չէ թերութիւններից՝ բարբառային բառերի յաճախակի կիրառութիւն, համեմատութիւնների ու պատկերաւորութեան բացակայութիւն, յատկապէս՝ բնութեան նկարագրութիւններում[20]: Գրախօսութեան վերջում Շիրվանզադէն մէկ անգամ եւս ընդգծում է. «*Թումանեանը մեր երիտասարդ քնարերգակների շարքում առաջնակարգ տեղերից մէկն է բռնում զգացումների խորութեան տեսակէտից*»[21]: Կարելի է հետեւցնել, որ մեծանուն գրողը պոէմի արժանիքներից է համարում մարդկային ներաշխարհի վարպետ պատկերումը:

Տրամաբանօրէն հակառակ կարծիքն է ներկայացնում նոյն թուի Մայիսի 29ին *Մշակ*ում տպագրուած Լէոյի գրախօսականը: Չժխտելով Թումանեանի բանաստեղծական շնորհքը՝ գրախօսը բարձր է գնահատում պոէմի՝ բնութեան ու միջավայրի նկարագրութիւնները[22]. «*Կտորներ կան լեռների նկարագրութիւնների մէջ, որոնք կատարելապէս գեղեցիկ են, ներկայացնում են հիացած սրտի սիրուն նուէրները բնութեան աներեւ տեսարաններին*»[23]: Լէօն, այնուամենայնիւ, պոէմը համարում է նկարագրական բնոյթի, բովանդակութիւնից զուրկ, իսկ Սաքոյի կերպարը՝ «*մի աղօտ սպուերագիծ*»: Ըստ գրախօսի՝ կերպարի հոգեբանական զարգացումը թերի է, Սաքոյի նման աժդահայ իգիթի նմանօրինակ վախկոտութիւնն ու դրան հետեւող խելագարութիւնը՝ անհամոզիչ: «...*Հսկայական հոգին ճնշելու համար հարկաւոր է հսկայական աղէտ*,- գրում է Լէօն:- *Սաքօն մի ակնթարթում չպիտի*

ընկնէր ահուդողի մէջ. սարսափելի ճգնաժամին «աժդահան» փախչելու մասին չէ մտածում, այլ կռուի, մրցութեան մասին»[24]: Այստեղ առկայ է միայն նախապաշարուած մարդու սարսափը, այնինչ, Էէոյի կարծիքով, բաց է մնում քաջ հովուի երեխայական վախկոտութեան, հոգեկան զարգացումների պատճառաբանուած նախապայմանը: Այդուամենայնիւ, գրախօսը յոյս է յայտնում, որ եթէ Թումանեանը «*աշխատէ եւ բովանդակութեան, հոգու եւ մտքի մասին, կարող է տալ մեզ գեղեցիկ, կոկ եւ ախորժելի պատմութիւններ ոտանաւորով*»[25]: Ուշագրաւ է, որ այս յօդուածում արուած դիտարկումները ներառում էին գեղագիտական որոշակի սկզբունքներ:

Բոլորովին այլ միտում էր հետապնդում Էէոյի «Ռուսահայ Գրականութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը» յօդուածը: Ի թիւս այլոց գրախօսը անդրադառնում է նաեւ Թումանեանին՝ անուանելով նրան «*լերան երգիչ*»: Էէոյի գրելաոճում նկատելի է ընդգծուած միտումնաւորութիւն: Խօսելով «Լոռեցի Սաքօն» պոէմի մասին՝ Էէօն գրում է. «*Բանաստեղծը չէ նկատում, որ Սաքոն իսկապէս մի ողորմելի վախկոտ է, որ ծիծաղ է յարուցանում: Հոգեբանութիւն չկայ, վիթխարի հերոսի այդքան խղճուկ վերջը բաւականաչափ բացատրուած չէ, արդարացրած չէ: Գոնէ պ. Թումանեանց յիշէր, որ ժողովրդական առասպելների մէջ հերոսները կռիւ են սկսում դեւերի դէմ, երկար մրցութիւնից յետոյ են ընկճւում: Ոչ մի աշխատանք՝ սեփական ձեռքով նկարած հերոսին պատշաճ հոգեկան աշխարհի մէջ զետեղելու համար: Մի խօսքով, պ. Թումանեանց մարդ է տեսել լեռներում եւ չգիտէ, թէ ինչ անէ նրան*»[26]: Հետեւելով Էէոյի՝ վերը յիշատակուած ծաւալուն ուսումնասիրութեանը, եզրակացնում ենք որ այն գրուել է մինչեւ Թումանեանի *Բանաստեղծութիւններ* երրորդ ժողովածուի լոյսընծայումը[27], ինչը նշանակում է՝ «Լոռեցի Սաքօն»ի մասին արուած դիտողութիւնները վերաբերում էին երկրորդ տարբերակին: Այդ մասին խոստովանում է նաեւ Էէօն՝ տարիներ անց փորձելով պարզաբանել իր դիրքորոշումը:

Նկատենք, որ 1903ի ժողովածուի մէջ ընդգրկուած «Լոռեցի Սաքօն» ենթարկուած էր որակական փոփոխութիւնների եւ ի տարբերութիւն նախորդի՝ հոգեբանական հաւաստիութեան եւ գեղարուեստական կատարելութեան տեսանկիւնից անհամեմատ բարձր էր: 1904 Յունուարի 16ին *Մշակի* թիւ 2ում տպագրւում է Թումանեանի՝ *Բանաստեղծութիւններ* ժողովածուին (1903) վերաբերող Էէոյի գրախօսականը, որը դարձեալ կրում էր մշակականների անբարեացակամութեան կնիքը եւ ընդգծուած միտումնաւորութիւնը: Ըստ Էէոյի՝ Թումանեանին՝ իբրեւ գիւղի մարդու, սկզբնապէս յաջողուել է վառ գոյներով, բնութիւնից ստացած տպաւորութիւններով հիւսել երգեր,

պոէմներ, որոնցում գեղեցիկ նկարագրական էջեր կան: «*Նրան յաջողւում է պատկերներ եւ տեսարաններ նկարել.- դրանք արտաքին զարդարանքներ են, բայց բովանդակութեան գործողութեան մէջ լեռներ երգող բանաստեղծը մնում է միակողմանի, միամիտ*»[28]՝ եւ եզրակացնում, որ 17 տարուայ ընթացքում Թումանեանը այդպէս էլ չի զարգացել ու «*հասունացել*». աւելին՝ «Պոէտն Ու Մուսան» պոէմը ապացոյց է, որ նա սովորել է յանգեր կազմել եւ «*իզուր բռնաբարում է իր միտքը՝ մի նոր բան տուած լինելու համար*»: Ըստ գրախօսի՝ Թումանեանը կորցրել է նոյնիսկ ժողովրդական նիւթից «*մի բան ստեղծելու վաղեմի ընդունակութիւնը*» (իբրեւ ապացոյց նշում է «Սասունցի Դաւիթ»ը) եւ «*այժմ չունի կամ շատ քիչ ունի*» շնորհք, որի միակ դրսեւորումը համարում է «Դէպի Անհունը» պոէմը: Լէոյի կարծիքով՝ այստեղ «*չկայ գործողութիւն, բայց կայ խոր զգացմունք, կան մտքի թռիչքներ*»[29]: Յօդուածի ուշադիր ընթերցումից նկատելի է դառնում, որ գրախօսը երբեմն հակասում է ինք իրեն. թւում է՝ երկու տարբեր մարդիկ են գնահատում Թումանեանին, մէկը՝ գրականութեան խոր տեսաբանը, միւսը՝ *Մշակի* «թայֆայական» հոգեբանութեամբ առաջնորդուող քննադատը, որ երբեմն-երբեմն միակողմանի եւ մերկապարանոց յայտարարութիւններ է անում:

Հետաքրքրական է այն, որ գրախօսականում Լէօն բացարձակ լռութեան է մատնում «Լոռեցի Սաքօն»: Կարելի է հետեւցնել, որ վերամշակուած պոէմը որակապէս տարբերուել է նախորդից, եւ Լէօն այս անգամ խուսափել է որեւէ կարծիք յայտնելուց. բացասական արտայայտուել՝ գրախօսը չէր կարող, իսկ դրական գնահատականը հակասում էր ե՛ւ մօտ անցեալում հնչեցրած իր կարծիքին, ե՛ւ *Մշակի* պաշտօնական տեսակէտին: Մշակական ազդեցութիւնից ազատուելուց յետոյ Լէօն վերարժեւորում է իր կարծիքը[30]:

Նշենք, որ տարիներ անց, երբ Թումանեանը անառարկելի հեղինակութիւն էր, իսկ նրա բանաստեղծական տաղանդը՝ անժխտելի իրողութիւն, «Լոռեցի Սաքօն» (արդէն վերջնական տարբերակը) դարձեալ գնահատուել է վերապահումով: Այսպէս, 1910ին *Հանդէս Ամսօրեայի* թիւ 1ում տպագրւում է Գրիգոր Բալասանեանի «Ռուսահայոց Նորագոյն Բանաստեղծները. Յովհաննէս Թումանեան» ինը մասից բաղկացած մեծածաւալ ուսումնասիրութիւնը, որտեղ ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Թումանեանի տաղանդն ու բանաստեղծական արուեստը՝ Բալասանեանը մերժողական կարծիք է յայտնում «Լոռեցի Սաքօն»ի վերաբերեալ:

Յօդուածի Բ. եւ Գ. մասերում մանրամասն ներկայացնելով պոէմի նիւթը, բովանդակութիւնը՝ գրախօսն անցնում է պոէմի վերլուծութեանն ու մեկնաբանութեանը: Ակնյայտ դրսեւորուած ժխտական մօտեցման

հիմքում Բալասանեանը դնում է հետեւեալ հարցադրումը՝ ինչու՛ են Սաքոյին իգիթ անուանել. պոէմում չկան այն դէպքերն ու իրադարձութիւնները, որոնք երեւան են հանում Սաքոյի իգիթութիւնը: «*Բանաստեղծը ասում է*,- գրում է Բալասանեանը,- *որ Սաքօն անվախ է, չգիտէ՝ ի՞նչ բան է վախը, բայց բանից դուրս է գալիս, որ Թումանեանի Սաքօն ոչ միայն վախկոտ է, այլեւ իր շուաքից էլ փախչող է: Քաջքերից վախեցող մարդը ի՞նչ հերոս կարող է լինել, որքան էլ տարուած լինէր նա նախապաշարմունքների ազդեցութեամբ*»[31]: Ինչպէս նկատում ենք, Բալասանեանը իգիթ անուան համար պահանջում է կենսականօրէն ապացուցուած հիմքեր, գաղափարական-հերոսական մի տիպ, որ յանուն ժողովրդի ու հայրենիքի բարօրութեան անձնուիրութեան օրինակ է ցոյց տուել: «*Ով չգիտէ, որ նախապաշարմունքները շատ վատ են ազդում մարդու սերնդի վրայ եւ պէտք է դրանց դէմ զինուել: Բայց ի՞նչ հարկ կայ քաջքերից վախեցող մի խաւարամիտ ապուշի դուրս բերել իգիթ, կարծես միայն նրա համար, որ նա անպատճառ վախենում է քաջքերից եւ իր կեանքում ոչ մի քաջագործութիւն չի արել եւ ոչ մի տեղ չի երեւայ նրա «վեհանձնութիւնը*»[32]:

Ըստ Բալասանեանի՝ պոէմում «*չկայ հոգեբանութիւն*», Սաքոյի ներքին աշխարհը պատուած է մշուշով. փոխարէնը պոէմը հարուստ է բնութեան նկարագրութիւններով, որոնք իրապէս ապացոյց են, որ Թումանեանը իսկական բանաստեղծ է: Գրախօսն ափսոսում է, որ «*այնքան գողտրիկ նկարագրութիւնները յատկացուած են մի «երկչոտ նապաստակ» եւ ծիծաղելի հերոսի, որ «երեւակայական վեհանձնութիւն» ունի եւ «անյայտ, մշուշապատ քաջնազգական ոգի*»[33]:

Այսպիսով, Բալասանեանը հանդէս գալով Թումանեանի երկերի բարձր գնահատմամբ, կտրականապէս դէմ է արտայայտւում Սաքոյի մարդկային տեսակի՝ իբրեւ կերպարի գեղարուեստական արտայայտութեանը: Նկատելի է, որ Բալասանեանը, առաջ քաշելով մի շարք հարցեր, անտեսում է մի կարեւոր հանգամանք. պոէմի թեման եւ դրա շուրջ արտայայտուած բանաստեղծի գաղափարը բոլորովին այլ նպատակ են հետապնդում: Թումանեանի խնդիրը չէ բացայայտել իր հերոսի քաջութիւնն ու նուիրուածութիւնը ժողովրդին, ուստի քաջ եւ անվախ լինելու ապացոյցներ պէտք չեն: Հարցը այստեղ առաւել նուրբ հոգեբանական մօտեցում է պահանջում:

Վախը մարդկութեանն ուղեկցող հնագոյն երեւոյթներից է, որի գիտական ուսումնասիրութիւնը ժամանակի ընթացքում նորանոր բացայայտումներ է արել[34]: Յայտնի է, որ մարդու բնաւորութեան, մտածողութեան, հոգեբանութեան ձեւաւորման գործում մեծ դեր է խաղում մանկութիւնը: «Նախադպրոցական մանկութեան տարիների համար բնորոշ է չկանխամտածուած ուշադրութեան եւ յիշողութեան

գերակշռող դերը,- գրում է յայտնի հոգեբան Վերա Մուխինան:- Երեխան ուշադրութիւն է դարձնում այն ամէնի վրայ, ինչը նրան հետաքրքրում է անմիջականօրէն եւ յոյզեր է առաջացնում: Նա մտապահում է այն, ինչը գրաւում է նրա ուշադրութիւնը եւ «ինքնաբերաբար մտապահւում է»:[35] Մեծահասակների պատմած տարատեսակ հեքիաթներն ու պատմութիւնները աներեւոյթ ուժերի, կենդանիների, քաջքերի եւ այլնի մասին խոր տպաւորութիւն են թողնում երեխայի աշխարհընկալման ձեւաւորման վրայ եւ ապրում են նրա ինքնագիտակցութեան մէջ: Մանուկ հասակում ունեցած վախերը անհետեւանք չեն մնում: Երբեմն դրանք կարող են դառնալ հոգեկան եւ ջղային հիւանդութիւնների պատճառ եւ ի յայտ գալ տարիներ անց, երբ մարդը մտասեւեռուի դրանց շուրջ. այս մասին բազմատեսակ փաստարկումներ կան հոգեբանական գրականութեան մէջ (Զիգմունդ Ֆրոյդ, Ալեքսանդր Զախարով, Ուիլիըմ Կրէյն, Եուրի Շերբատիխ, Տատիանա Շիշովա....): Շիշովան, անդրադառնալով երեխաների անհատականութեան ձեւաւորման գործում գեղարուեստական գրականութեան դերին, անչափ կարեւորում է այն հանգամանքը, որ պատմուող կամ ընթերցուող ստեղծագործութիւններն անպայման պէտք է համապատասխանեն երեխաների տարիքային հոգեբանութեանը, զերծ լինեն վախ առաջացնող տարրերից, իսկ «ժողովրդական հեքիաթները պէտք է լինեն գրական մշակմամբ եւ նախատեսուած՝ յատկապէս երեխաների համար, քանի որ անմշակ տարբերակում չափազանց շատ են հնօրեայ դաժանութիւնները: Առաւել զգուշ պէտք է մօտենալ ... առասպելներին»:[36]

Այսպիսով՝ Բալասանեանն ուշադրութիւնը բեւեռում է առաւելապէս հարցի արտաքին կողմին՝ անտեսելով ներքին խորութիւնը:

1912ին *Գարուն Ալմանախ*ի 3րդ գրքում տպագրւում է երկու յօդուած, որոնք պատկանում էին Դաւիթ Անանունի եւ Պօղոս Մակինցեանի գրչին: «Անցեալի Մեծարանք» վերնագրով ուսումնասիրութեան մէջ Անանունն անդրադառնում է Թումանեանի բանաստեղծական աշխարհին, փորձում բացայայտել այն առանձնայատկութիւնները, որոնք բնորոշ են բանաստեղծի կերտած գիւղաշխարհին: «*Թումանեանի գիւղացին ամբողջովին խմորուած է տոհմական բնազդներով, նա բնութիւնը բնակեցրել է ոգիներով, որոնցից խիսթ երկիւղ է կրում... Հաւատում են թովչութեան ու կախարդութեան ուժին, նոքա նախապաշարուած են «հին-հին դարերի» աւանդութիւններով ու սովորութիւններով*»[37]: Անանունի այս դիտարկումը կարծես համոզումն է այն բանի, որ Սաքօն լինելով «*սարերի որդի*», իրապէս կարող էր կորցնել հոգեկան հաւասարակշռութիւնը: Յօդուածագիրը մի տեսակ հաւատալով է մեկնաբանում Սաքոյի գործողութիւնները. «*Ամէն մի խշշոց կամ չրըխկոց նրա լարուած ուղեղի մէջ արձագանգ է տալիս, որպէս*

«ժանտ ու սեւերես» ոգիների ճիչ ու աղաղակ, «զուռնա-փըհոլ»: Նա խրախուսում է իրան, ճիգ է թափում հեռու վանել զարզանդ պատկերներ, բայց ապարդիւն: Այլեւս նրա համար ֆանտազիայի սփեղծագործութիւնը կատարեալ իրականութիւն է, եւ նա դիւահալած դուրս է թռչում փարախից, ընկնում սար ու ձոր, որոնք դարձեալ լցուած են այդ անողորմ ոգիներով»[38]:

*Գարուն Ալմանախ*ում պոէմի մասին բացայայտ մերժողական կարծիք է յայտնում ժամանակի մէկ այլ լուրջ քննադատ՝ Մակինցեանը: Ըստ ամենայնի արժեւորելով Թումանեանի արուեստը՝ նա Սաքոյին համարում է «*անկարելիութիւն*»: «*Անհաւատալի է*,- գրում է նա,- *որ մեր օրերի չոբանը, վերյիշելով փափի զրոյցները չարքերի մասին, այնքան խորն ու ինդենսիւ վերապրի այն յուշերը, որ խելագարութեան հասնի: Մի այդպիսի չոբան՝ որպէս փիպ, հոգեբանական անհնարութիւն է, իսկ եթէ դա մի եզակի, մի ուրոյն դէմք է... այդ դէպքում «Սաքօն» իսպառ անկատար մի գործ է: ...Թումանեանը չի կարողացել մեզ այնպէս ներկայացնել իր հերոսի ապրումները, նրա բնաւորութեան ուրոյն յատկութիւնները, որ մեզ համոզիչ թուայ նրա պատմութիւնը*»[39]:

Ինչպէս նկատում ենք, ժամանակի գրաքննադատների մեծ մասի համար անհամատեղելի են ուժը, քաջութիւնը եւ վախի զգացումը, ուստի այս դիտակէտից էլ անընդունելի եւ անհամոզիչ է համարուել Սաքոյի կերպարը: Ճիշդ է նկատել Ջրբաշեանը՝ գրելով, որ տրուած գնահատականներում «*ոչ միայն նսեմացւում էր պոէմի գեղարուեստական ուժը, այլեւ անտեսւում ...նրա նպատակադրման առանձնայատկութիւնը՝ ցոյց տալ, որ նահապետական մարդու հոգեբանութեան վրայ այնքան ուժեղ է սնահաւատ աւանդութեան իշխանութիւնը, որ նոյնիսկ Սաքոյի նման քաջ մարդը կարող էր հոգեկան հաւասարակշռութիւնը կորցնել*»[40]:

Գեղարուեստական կատարելութեան հասնելու նպատակով, ինչպէս գիտենք, Թումանեանը պոէմում փոփոխութիւններ կատարել է, սակայն մի բանում բանաստեղծը միանգամայն համոզուած է եղել: Սաքոյի հոգեկան խանգարման ոչ-հաւաստի ու անբնական լինելու մասին կարծիքները Թումանեանը համարել է սխալ: Դեռ 1890 Նոյեմբերի 29ին Անուշաւան Աբովեանին ուղղուած նամակում բանաստեղծը գրում է. «*Մի շատ յամառ կարծիք կայ (սրանց թիւը մեծ է, եւ առհասարակ լուսաւորուածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թէ նա, լինելով առողջ եւ աներկիւղ «իգիթ», չէր կարող վախենալ քաջքերից եւ խելագարուել: Ես թէեւ շատ պակասութիւն եմ խոստովանում իմ գրքում, բայց այս կարծիքին ես հաւան չեմ: Դու իսօ լաւ գիտես, որ կան մարդիկ՝ իգիթ մարդիկ, որ աշխարհք վրայ գայ՝ աչք չեն ճպիլ, ամա ինչ անես, մեռելից,*

անշունչ մեռելից վախում են, սպանես, մի աւերակի մօտից մէնակ անց չեն կենալ...»[41]:

Այսպիսով, «Լոռեցի Սաքօն»ի մասին ընկերական եւ հրապարակային արձագանգները իւրօրինակ գնահատականներ էին եւ բացայայտում էին ո՛չ միայն Թումանեանի ստեղծագործական աշխարհը, այլեւ ժամանակի գրաքննադատական միտքն ու հայեացքները եւ այն միջավայրը, գրական մթնոլորտը, որտեղ ապրում, ստեղծագործում էր բանաստեղծը:

ԻԱ. դարի հեռաւորութիւնից գնահատելով «Լոռեցի Սաքօն» պոէմը՝ նկատում ենք, որ այն ոչ միայն տալիս է հնարաւորութիւն ճանաչելու նահապետական գիւղը՝ իր բնորոշ կողմերով, այլեւ բացայայտում է մարդ արարածի ներաշխարհն ու նրա անիմանալի, թաքուն անկիւնները, որոնց յատուկ են երբեմն անհնարին թուացող, բայց եւ իրական զգացողութիւններ ու ապրումներ: Դրանք տեսնելու եւ ըմբռնելու, գեղարուեստօրէն արտայայտելու համար անհրաժեշտ են ե՛ւ բանաստեղծական տաղանդ, ե՛ւ մարդկային ներաշխարհը թափանցելու հանճարեղ կարողութիւն ու նուրբ դիտողականութիւն, ինչը, մասնակի բացառութիւններով, աննկատ է մնացել ժամանակի գրաքննադատութեան կողմից:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Աւետիք Իսահակեան, *Երկերի Ժողովածու Վեց Հատորով*, *Հտր. 6*, Երեւան, Հայաստան Հրատ., 1979, էջ 41:

[2] Բնորոշումը Դերենիկ Դեմիրճեանինն է (*Յովհաննէս Թումանեան. Ուսումնասիրութիւններ Եւ Հրապարակումներ*, *Հտր. 2,* Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 176):

[3] Գրականագէտ Զաւէն Աւետիսեանը, զուգադրելով եւ համադրելով ձեռագիր ու տպագիր տարբերակները, ուշագրաւ դիտարկում է կատարում, թէ՝ պոէմը անցել է ստեղծագործական մշակման 7 փուլ (Զաւէն Աւետիսեան, «Լոռեցի Սաքօն Պոէմի Մշակման Փուլերը», *Յովհաննէս Թումանեան. Ուսումնասիրութիւններ*, *Հտր. 2,* էջ 175-201):

[4] Էդուարդ Ջրբաշեան, *Թումանեանի Պոէմները*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1986, էջ 113-125:

[5] Թումանեանի առաջին տպագիր երկը «Արեւն Ու Լուսին» առասպելն է: Բարձր գնահատելով Թումանեանի գրական տաղանդը՝ Ղազարոս Աղայեանը *Աղբիւր* ամսագրում տպագրում է այն՝ դառնալով նրա գրական «կնքահայրը»:

[6] Յովհաննէս Թումանեան, *Երկերի Լիակատար Ժողովածու 10 Հատորով, Հտր. 9*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1997, էջ 23-24:

[7] Նոյն, էջ 24:

[8] Ուշագրաւ է, որ Աղայեանը, անբնական համարելով Սաքոյի խելագարութիւնը, *Արութիւն Եւ Մանուէլ* վէպում անդրադառնում է իրենց գիւղի քաջ ու աներկիւղ տղաներին, որոնք, գիշերը գերեզմանատան կամ քանդուած եկեղեցու կողքով անցնելիս կարող էին սարսափահար լինել պատահական ցից քարից կամ ստուերից: «*Նա,*- ասում է Արութիւնը,- *էդպէս դէպքերում տեսնում է էն, ինչ որ չկայ. նա ձայն էլ է լսում, թէպէտ ոչ մի ձայն հանող չկայ: Նրա երեւակայութիւնը խանգարւում է, եւ ինչ որ պիտի զգայարանքներից ստանար, երեւակայութիւնն է թելադրում զգայարանքներին*» (Ղազարոս Աղայեան, *Երկերի Ժողովածու*, *Հտր. 1*, Երեւան, Հայաստան Հրատ., 1962, էջ 72, 74-75):

[9] Յովհաննէս Թումանեան, *Ուսումնասիրութիւններ Եւ Հրապարակումներ*, *Հտր. 4*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1994, էջ 282:

[10] Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Թումանեանի ֆոնտ, թիւ 646:

[11] Աւետիսեան, էջ 175-201:

[12] *Յովհաննէս Թումանեան*, *Ուսումնասիրութիւններ, Հտր. 2,* էջ 176:

[13] *Բանաստեղծութիւններ* առաջին ժողովածուի մասին շատ բարձր է արտայայտուել Գէորգեան Ճեմարանի երիտասարդ ուսուցիչ Ստեփանոս Լիսիցեանը: Նա յիշում է, որ ազատ դասերից մէկի ժամանակ ուսանողների խնդրանքով կարդացել է «Լոռեցի Սաքօն», իսկ զանգը հնչելուց յետոյ նրան է մօտեցել Սողոմոն սարկաւագը՝ Կոմիտասը, եւ շշնջացել. «*Լաւ է, չէ՞, լաւ է, չէ՞...*» (*Թումանեանը ժամանակակիցների Յուշերում*, 1969, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, էջ 348):

[14] Վարսամ, «Մատենախօսութիւն. Յովհաննէս Թումանեանց. Բանաստեղծութիւններ», *Նոր-Դար*, թիւ 197, 1890:

[15] Նոյն:

[16] Լեւոն Մանուէլեան, «Յովհաննէս Թումանեանի 'Բանաստեղծութիւնները'», *Մուրճ*, թիւ 1, 1891, էջ 95:

[17] Թումանեան, *Երկերի Լիակատար*, *Հտր. 9*, էջ 123:

[18] Ջրբաշեան, էջ 118-120:

[19] Շիրվանզադէ, «Մատենախօսութիւն», *Տարազ*, թիւ 16, 1896, էջ 257:

[20] Այս դիտողութիւնները իւրօրինակ դասեր էին, որ օգնեցին երիտասարդ բանաստեղծին՝ յետագայում ստեղծելու իրապաշտ անզուգական պատկերներ:

[21] Շիրվանզադէ:

[22] Լէօն յուշերում գրում է, որ այդ առաւելութիւնները նկատելու պատճառով ընդհարում է եղել իր եւ *Մշակի* գլխաւոր աշխատակիցների միջեւ (*Թումանեանը Ժամանակակիցների*, էջ 51):

[23] Լէօ, «'Լոռեցի Սագօն' - Պոէմա Յովհաննէս Թումանեանցի», *Մշակ*, թիւ 57, 1896:

[24] Նոյն:

[25] Նոյն:

[26] Լէօ, «Ռուսահայ Գրականութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը», *Գեղունի*, թիւ 1-10, 1903, էջ 63:

[27] Յայտնի է, որ 1903ի բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ «Մերժուած Օրէնք» պոէմը ընդգրկուած չի եղել, իսկ վերը յիշատակուած ուսումնասիրութեան մեջ Լէօն անդրադարձել է նաեւ այդ պոէմին:

[28] Լէօ, «Մատենագրութիւն. Յովհաննէս Թումանեան – 'Բանաստեղծութիւններ'», *Մշակ*, թիւ 2, 1904:

[29] Նոյն:

[30] Թումանեանի մահուան առիթով գրուած յուշերում Լէօն իր բացասական գնահատականները փորձում է մեկնաբանել իբրեւ «*մի ցաւալի զուգադիպութիւն*». «*Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութեան նուիրուած փողերիս մէջ գրել էի, թէ Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութիւններն ամփոփուած են Մոսկուայում տպուած երկու փոքրիկ հատորների մէջ... Չափազանց պարզ է, ուրեմն, որ ես գնահատել եմ Յովհաննէս Թումանեանին այն նիւթերով, որ տալիս են Մոսկուայի այդ երկու հատորիկները... եւ ոչ 1903-1904-ինը*» (*Թումանեանը Ժամանակակիցների*, էջ 53-54): Լէօն, սակայն, 1904ի *Մշակի* թիւ 1ում գրախօսել էր Թումանեանի 1903ին լոյս տեսած *Բանաստեղծութիւններ* ժողովածուն, որի գնահատականները առաւել քան բացասական էին: Ուստի, Թումանեանի արուեստին տրուած որակումները բոլորովին էլ զուգադիպութեան արդիւնք չէին:

[31] Գրիգոր Բալասանեան, «Ռուսահայոց Նորագոյն Բանաստեղծները. Յովհաննէս Թումանեան», *Հանդէս Ամսօրեայ*, թիւ 1, 1910, էջ 6:

[32] Նոյն, էջ 7:

[33] Նոյն, էջ 8:

[34] Դեռեւս 1887ին *Նոր-Դար* թերթի թիւ 126ում «Ժողովրդական Աղօթքներ» ուսումնասիրութեան մէջ Վ. Տաշրացին (թարգմանիչ,

մանկավարժ) գրում է. «*Վախը՝ վախկոտութիւնը, մեր ժողովրդի կեանքի մէջ մեծ տեղ է բռնում: Երեխայութիւնից գիւղացին սնւում է հեքիաթներով, առասպելներով, սնոտիապաշտութիւններով, որոնք լիքն են ...արհաւիրքներով եւ սարսափելի տեսարաններով: Այդ պատմութիւնները ծնուցանում են նրա մէջ երկիւղ, սարսափ: Գիշեր ժամանակ նա աներկիւղ ման գալ չէ կարող, որովհետեւ վախենում է սատանաներից, դեւերից եւ չարերից: ...Գիշերը մի բուի ձայն գիւղացու համար դժոխքից ելած ձայն է: Այս ժամանակ քարերն էլ ոտ են լինում եւ սեւ-սեւ ուրուականների պէս երեւում: Մի խօսքով, վախը իր շատ զոհերն է տանում մեր ժողովրդի միջից*»:

[35] *Տարիքային Եւ Մանկավարժական Հոգեբանութիւն*, խմբ.՝ Ա. Վ. Պետրովսկի, Երեւան, «Լոյս» Հրատ., 1977, էջ 74:

[36] T. Shishova, *Strakhi - Eto Seryozno: Kak Pomoch Rebyonku Izbavitsya ot Strakhov* (Վախերը լուրջ են. ինչպէս օգնել երեխային ձերբազատուելու վախից), Մոսկուա, Dom-Iskatel Հրատ., 1997, էջ 88:

[37] Դաւիթ Անանուն, «Անցեալի Մեծարանքը», *Գարուն Գրական-Քննադատական Ալմանախ, Գիրք 3*, Մոսկուա, Տպ. Ե. Աւետիքեանի, 1912, էջ 113, 115:

[38] Նոյն, էջ 121:

[39] Պօղոս Մակինցեան, «Դիմագծեր», *Գարուն Գրական-Քննադատական Ալմանախ, Գիրք 3*, Մոսկուա, Տպ. Ե. Աւետիքեանի, 1912, էջ 261:

[40] Զրբաշեան, էջ 114-115:

[41] Թումանեան, *Երկերի Լիակատար, Հտր. 9*, էջ 54-55:

“LORETSI SAKO” (SAKO FROM LORI): HOVHANNES TUMANYAN’S POEM AND ITS LITERARY CRITICISM BY CONTEMPORARIES
(Summary)

YEVA MNATSAKANYAN
mnacakanyaneva@mail.ru

Tumanyan's poem, “Loretsi Sakon” (Sako from Lori) is a rare case in Armenian literature as it elicited an unsurpassed amount of criticism and contradictory assessments.

The paper surveys the contemporary critiques of the poem. It analyses the nature of the critiques as they argued whether a strong, courageous figure like the hero of the poem, Sako, could fall victim to superstitions and become psychologically ill.

The literary critics of the time, with few exceptions, rejected the author’s combination of courage and fear from supersititions in one person. They argued that such a duality in a hero’s personality was not convincing.

The paper concludes, however, that notwithstanding the modifications and improvements Toumanyan made to the poem based on the criticism, he did not shift from his conviction and maintained the conceptual climax of the poem, that superstition – particularly in those days – could make such courageous people its prey.

ՀԱՅՈՑ ՊԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԸ Ի. ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒՄ

ՆԱՐԻՆԷ ՇԱՄԱՄԵԱՆ
dancenano@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ի. դարի հայկական սինեմայի մի շարք գեղարուեստական եւ վաւերագրական ֆիլմերում առկայ են բազմաբնոյթ պարեր, որոնք տուեալ ժամանակաշրջանի պարարուեստի ուսումնասիրութեան համար որոշակի նիւթ են հանդիսանում:

«Հայֆիլմ» կինօստուդիայի գործունէութեան սկզբնական շրջանում (1923) հայ կինօռեժիսորները տարբեր ֆիլմերում նկարահանել են նաեւ ազգային սովորոյթներ, որոնց համակարգում նաեւ՝ ժողովրդական պարեր: Այս առումով «Հայֆիլմ»ի հրապարակած մի շարք ֆիլմերի հատուածներ արժէքաւոր եւ փաստացի նիւթ են պարարուեստի ուսումնասիրութեան համար:

Այս յօդուածի հիմնական նպատակն է ի մի բերել եւ համակարգուած ձեւով ներկայացնել տուեալ ժամանակաշրջանի գեղարուեստական եւ վաւերագրական ֆիլմերում դրսեւորուող պարային նմուշները: Ի. դարի ընթացքում պարերի գրանցումներն Հայաստանում հիմնականում իրականացուել են ժամանակաշրջանին բնորոշ այլ մեթոդներով, ուստի նկարահանուած պարերի գրանցումները սակաւ են: Այդ առումով կարեւորւում է նիւթի ամբողջացումը եւ դրա հիման վրայ յետագայ ուսումնասիրութեան իրականացումը, որպէս տուեալ ժամանակաշրջանի կատարողական արուեստի վաւերական սկզբնաղբիւր:

Վերոնշեալից ելնելով քննարկւում են այն պարային նմուշները, որոնք պատկերուել են Համօ Բեկնազարեանի (1891-1965), Հենրիկ Մալեանի (1925-1982), Արման Մանարեանի (1929-2016), Ժիրայր Աւետիսեանի (1927-2011), Ֆրունզէ Դովլաթեանի (1927-1997), Էդմոն Քէօսաեանի (1936-1994), Արտաւազդ Փելէշեանի (ծն. 1938) եւ Արա Վահունու (ծն. 1956) ֆիլմերում:

ՊԱՐԵՐԸ ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒՄ

«Հայֆիլմ»ի գործունէութեան առաջին շրջանը նշանաւորւում է Համօ Բեկնազարեանի ֆիլմերով, որոնցից *Նամուս*ում, *Պէպօ*ում, *Զանգեզուր*ում կան պարային տեսարաններ:

Նամուս

Ալեքսանդր Շիրվանզադէի *Նամուս* ստեղծագործութիւնը կինօբեմագիրի վերածելիս, Բեկնազարեանի կողմից ներմուծուել են տեսարաններ հայկական կենցաղից, որոնց նա ականատես է եղել դեռեւս մանուկ հասակից: Ֆիլմը նկարահանուել է 1925ին եւ հայկական առաջին խաղարկային ֆիլմն է: Այնտեղ պարային տեսարաններին կ'անդրադառնանք ըստ դրուագների հերթականութեան:

Ֆիլմում առաջին պարային դրուագը ամուսնացող զոյգի՝ Սուսանի (Մարիա Շահուբաթեան) եւ Ռուստամի (Հրաչեայ Ներսիսեան) հարսանիքի տեսարանն է, որտեղ երկու երիտասարդներ պարում են դէմ դիմաց: Պարողները՝ թեւերն ուղղահայեաց տարածած, թաշկինակներ ծածանելով, սլացիկ պարային թռիչքներով շարժւում են տան շեմից՝ բակի ուղղութեամբ, իսկ նրանց ետեւից դանդաղ քայլերով առաջանում են հարսն ու փեսան:

Հայերի հարսանեկան ծէսում, տան շեմի մօտ կատարուող պարերն իրենց գործառոյթով չարխափան նշանակութիւն ունեն[1], որը եւ արտացոլուել է Բեկնազարեանի ֆիլմում: Հայոց մէջ շեմին վերագրւում է չարքերով լի սահման, այդ իսկ պատճառով էլ դռան շեմին կատարւում են չարխափան ծէսեր՝ այդ թւում պարեր: Այդպիսի գործառոյթ ունի դռան շեմին նորապսակներին դիմաւորելիս լաւաշները ձեռքին խաղացնելով թագուորամօր մենապարը:

Ֆիլմի յաջորդ տեսարանը հարսանեկան երթն է մասնակիցների համապատասխան դասաւորութեամբ, երբ առջեւից գնում են երաժիշտներն ու մենապարողները, ապա հարսն ու փեսան, իսկ նրանց ետեւից՝ միւս մասնակիցները: Երթում կատարւում են ձեռնպարեր եւ երգեր[2]:

Երթի տեսարանից յետոյ Շպանիկի (Նինա Մանուչարեան) մենապարի տեսարանն է Ռուստամի տան առջեւ: Շպանիկի պարի անուանումը յայտնի է միայն Շիրվանզադէի *Նամուս*ի մէջ: Պարը տարածուած է եղել Շամախիում[3] եւ կոչւում է «Ղայթաղի»[4]:

Յատկանշական է, որ ֆիլմի այս հատուածում Շպանիկի մենապարը Բեկնազարեանը վերարտադրել է գրական ստեղծագործութեանը համապատասխան՝ առանց որեւէ փոփոխութիւնների: «- Ղայթաղի ածեցէք, ադա՛,- հրամայեց նա զուռնաչիներին եւ կռնատակից հանելով մի ափսէ, պահեց իւր գլխից վեր, պարը շարունակելով: Սանամը ծոցից քսակը հանեց եւ մի բուռն արծաթադրամ թափեց բաժակակալի մէջ: Չորս կողմերից հանդիսականները հետեւեցին նրան, եւ մի քանի րոպէում Շըպպանիկի ափսէն լեցուեց պղնձէ, արծաթէ եւ թղթէ դրամներով: Երաժիշտների վառուած աչքերը ագահութեամբ ճանապարհ դրին այդ փողերը մինչեւ Շըպպանիկի գրպանը, որտեղից վերջինի աջ ձեռը հեռանալով, մի վիրաւորական նշան արաւ զուռնաչիներին»[5]:

Հայոց մէջ հարսանեկան արարողութիւններում նորապսակներին պարով դիմաւորելու սովորոյթը կարեւոր նշանակութիւն ունի, քանի որ ըստ հաւատալիքի այդ օրը նրանք յատկապէս խոցելի են չար աչքից, չար մտքից ու գործից: Այդ իսկ պատճառով պարի միջոցով «սրբազան տարածք» են ապահովում, որպէսզի չէզոքացնեն չարքերին՝ հեռացնելով դրանք նորապսակների ճանապարհից[6]:

Ֆիլմի հարսանեկան խնջոյքի տեսարանում, պարում են նաեւ այլազգի պարեր: Քանի որ ֆիլմն անձայն է, ուստի հնարաւոր չէ պարեղանակները լսել, իսկ պարերի տեսակները տարբերակել հնարաւոր է միայն ըստ պարային պատկերների, դիրքերի եւ շարժումների: Իրենց կատարման ձեւով դրանք նման են եւրոպական պարերի շարքին պատկանող «Մազուրկա», «Պոլկա» զուգապարերին[7]:

Պէպօ

1935ին նկարահանուած հայկական առաջին հնչիւնային ֆիլմում՝ *Պէպօ*ում Բեկնազարեանը նկարահանում է մի շարք հայկական ծէսեր: Նա գրում է. «*Սունդուկեանը* Պէպօ *պիէսը գրել է թափրոնի համար, որտեղ գեղարուեստական կերպարի միակ արտայայտիչը խօսքն է, եւ մենք մեծագոյն սխալ կ'անենք, եթէ սցենարի վրայ փարուող աշխատանքի ընթացքում սահմանափակուենք պիէսի նիւթով: Մենք խնդիր ունենք*

ներկայացնել հին Թիֆլիսի պատկերը՝ փողոցներ, բակեր, շուկայ, դուքեան, բաղնիք, եկեղեցի»[8]: Ֆիլմում արտացոլուել է թիֆլիսեան քաղաքային միջավայրը, որտեղ տեսնում ենք արեւելեան շուկան, բազմաթիւ արհեստագործներ, մրգավաճառներ՝ իրենց իւրովի ձայնային ելեւէջային կանչով, որով յաճախորդ են հրաւիրում իրենց տաղաւար:

Ֆիլմի տեսարաններից են Քուռ Գետի վրայ լողացող լաստանաւի վրայ կինտօների խմբի երգն ու նուագը եւ մենապարուհու պարը: Համանման պատկեր կայ նաեւ Սերգէյ Իսրայէլեանի *Գիքոր* ֆիլմում, որտեղ նոյն Քուռ Գետում սահող լաստանաւի վրայ երաժիշտները «Շալախօ»ի պարեղանակ են նուագում, իսկ կինտօներից մէկը մենապարում է, երկու ձեռքերը հորիզոնական ուղղութեամբ տարածած՝ զոյգ թաշկինակներն օդում պտտեցնելով: Բեկնազարեանն իր յուշերում նկարագրում է կինտօների սովորոյթները. «*Ես՝ որպէս ազգային նիւթով աշխատող ռեժիսոր, յաճախ եմ մտածում այն մասին, թէ ինչպէս վարուեմ, որ ազգային ձեւը չդառնայ միայն գեղարուեստական կերպարանք (ֆակտուրա), այլեւ՝ լինի նրա օրգանական մասը, էական կողմը, օրինակ կինտօների քայլուածքը լայն ու փոքր-ինչ ճօճուն է, որտեղ արտայայտւում է անկախ, ազատ ոգին, ձեռքերը մշտապէս գօտու տակ դրուած, այս կերպարի մէջ ե՛ւ շինականի (պլեյբէյ) հպարտութիւն կայ, ե՛ւ անհատապաշտութիւն*»[9]:

Կինտօների պարերը կովկասեան քաղաքային պարաոճին պատկանող պարեր են. «Շալախօ», «Լեզգինկա», «Միրզէյի»: Նշուած պարերը տեսնում ենք նաեւ Կեկէլի նշանդրէքի ժամանակ: Բաւականին ուշագրաւ է «Միրզէյի» պարը, որը կատարում է ֆիլմի հերսուհիներից մէկը՝ Նաթէլը (Նինա Մանուչարեան)[10]: Նաթէլի պարում շեշտւում է հասարակութեան մէջ այդ կնոջ զբաղեցրած դիրքը եւ նրա հանդէպ շրջապատի տղամարդկանց հետաքրքրութիւնը: Մենապարն առանձնանում է կոնքերի նրբագեղ շարժումներով, ձեռքերի ափերի բաց դիրքով, դաստակի կտրուկ պտոյտներով՝ մերթ աջ եւ մերթ ձախ ուղղութիւններով: Հայերի պարային մշակոյթում՝ որպէս կանոն ընդունուած է եղել պարելուց ձեռքի ափերը փակ, ներս պահել. պարի ընթացքում բաց ափերը բնորոշ չեն եղել կանանց պարերին:

Նաթէլի պարին յաջորդում է Դարչոյին պարի հրաւիրելու տեսարանը: Դարչօն (Համբարձում Խաչանեան) յաւակնում է միայն «Լեզգինկա» պարել: Այս դրուագում է նաեւ, որ հնչում է «Փեսի Հաւա» անուանուող պարեղանակը: Դարչոյին առաջարկում են «Շալախօ» պարել, իսկ նա ներկաներից իրեն բարձր դասելով՝ պատասխանում է. «*Եիս իդ պարը չիմ պարում*», այսինքն իր պատուից վեր է համարում պարել տեղական ժողովրդական պար եւ աղաւաղուած ֆրանսերէնով պատուիրում է. «*պարտեզբանդէ Լեզգինկա*»: Ներկաները Դարչոյի ասածից ոչինչ չեն հասկանում, յատկապէս երաժիշտները, ովքեր զարմացած միմեանց դէմքին նայելով ասում են. «*Ա՛ դէ մի բան ածէք էլի*»: Երաժիշտները նուագում են Լեզգինկայի պարեղանակ, իսկ Դարչօն՝ պարի շարժումներին այնքան էլ չտիրապետելով պարում է, որը ներկաների ծիծաղն է յարուցում եւ ծաղրական արտայայտութիւնների տեղիք տալիս՝ «*մալադէց փեսայ*»: Այս դրուագում արտացոլուած է նաեւ տուեալ ժամանակի պարային նախասիրութիւններն ըստ դասակարգային պատկանելութեան, ուր նախապատուութիւն է տրւում ոչ թէ ազգային, այլ օտարամուտ պարերին:

Յաջորդ պարային տեսարանում «Շալախօ» պար-մրցոյթով հանդէս են գալիս Պէպօն (Հրաչեայ Ներսիսեան) եւ Կակուլին (Դաւիթ Մալեան), որոնք ժողովրդական խաւի ներկայացուցիչներ են: Նրանց կատարած «Շալախօ» պար-մրցոյթին հիմնականում բնորոշ են բարձր թռիչքները, *չաթման*ները[11], իսկ ձեռքերը հորիզոնական դիրքում են կամ գօտկատեղին: Այնուհետեւ պարողները պարաշրջանից դուրս են գալիս եւ ուրիշ երկուսն են մտնում պարը շարունակելու: Այս պարում յաղթող է ճանաչւում նա, ով կարողանում է պարել մինչեւ երաժշտութեան աւարտը:

Հայերի մէջ տարածուած Շալախոյի եղանակը տարբերւում է վրացական, ադրբեջանական եղանակներից: Հայկական Շալախոյի մէջ գերակշռում են թռիչքներով խաչաձեւ պարաքայլերը, որոնք բնորոշ չեն ադրբեջանական Շալախոյին[12]:

Դեռեւս Ի. դարասկզբին եւրոպական պարերը տարածուած են եղել ինչպէս Երեւանում, այնպէս էլ թիֆլիսեան քաղաքային միջավայրերում: Օտար մշակոյթի նմանակման այդ միտումը իր վերարտադրումն է գտել ֆիլմում: Դրա վկայութիւնն է Զիմզիմովի

երիտասարդ կնոջը՝ Էփեմիային «Պոլկա» դասաւանդելու տեսարանը:

Ֆիլմի յաջորդ պարային տեսարաններից է Զիմզիմովի եւ մի տիկնոջ «Ուզունդարա» զուգապարը: Զիմզիմովին՝ ռուս ցարին ոսկէ մեդալով պարգեւատրելու խնջոյքի ժամանակ առաջին պարը տեղական «Ուզունդարա»ն է: Զիմզիմովը տեղից թռչելով հաճոյքով սկսում է պարել եւ ներկայ կանանցից մէկին հրաւիրում իր հետ պարելու: Աւետ Աւետիսեան-Զիմզիմովի պարը բնութագրում է իր կերտած կերպարը եւ իւրովի միջոց դառնում այն ամբողջացնելու: Դերասանի խաղը եւ պարը լրացնում են միմեանց[13]: Զիմզիմովի մենապարում յատկապէս շեշտւում են ձեռքերի շարժումները եւ մատների խաղը, որոնք առանձնանում են դիրքերի բազմազանութեամբ եւ փոփոխականութեամբ: Նրա կտրուկ, սուր արտայայտուած մատների շարժումները բնորոշում են կերպարի վաշխառու էութիւնը: Պարն աւարտելուց յետոյ՝ խոնարհւում է հիւրերի առջեւ եւ հպարտութեամբ ասում. «*լաւ պարեցի չէ՞*»: Ֆիլմի նոյն այդ հատուածում ռուսական բարձրաստիճան սպաներից մէկն իր քամահրական վերաբերմունքն է արտայայտում Զիմզիմովի նկատմամբ, քանի որ նա հասարակութեան մէջ զբաղեցրած իր դիրքին համապատասխան եւրոպական պար չի պարում, այլ կովկասեան Ուզունդարա. «*Այսքան հարուստ, մեդալը կրծքին, բայց ասիական պար է պարում*», այնուհետեւ բարձրաձայն յայտարարում է «*Պոլկա՛*»: Ներկայ կանայք միանում են այդ արձագանգին, այդ թւում նաեւ Դարչօն կիսա-ֆրանսերէն եւ ռուսերէն՝ «*Պոլկա՛ սի ով պլէ դաւայտէ*»:

«Ուզունդարա»ն հայերի մէջ յայտնի է որպէս կանացի մենապար: Այն հիմնականում հարսի մենապար է, որը կատարւում է հարսանեկան խնջոյքի աւարտին: Պարի ընթացքում հարսին թղթադրամներ (*շաբաշ*) են նուիրում: «Ուզունդարա»ն իր կատարման տեմպով հանդարտ է, հանդիսաւոր, շորորածեւ[14]: Պարում հարսի հայեացքը եւ ձեռքերի նրբագեղ շարժումներն ընդգծում են հարսի համեստութիւնն ու խոնարհութիւնը: Պարաքայլերը հիմնականում *սիւզմա* եւ մանրուքի շարժումներից են բաղկացած: Այս շարժումները կիրառւում են նաեւ «Շալախօ» տղամարդու մենապարում[15]:

Զանգեզուր

Բեկնազարեանի *Զանգեզուր* ֆիլմում (1938) պարային տեսարանները երկուսն են: Երկու տեսարաններում էլ մենապարողը Արմէնն է: Դրանցից առաջինը «Արծուապար»ը, նա պարում է նախքան կռուի սկսելը եւ լեռան բարձունքից նետուելը: Արմէնը պարում է ոտքերի խաչածեւ, թռիչքային շարժումներով, իսկ ձեռքերը՝ հորիզոնական դիրքով կողք են տարածուած: Մենապարողը նաեւ պտոյտներ է կատարում իր առանցքի շուրջ:

«Արծուապար»ը հաւանական է, որ Զանգեզուրի շրջանին բնորոշ պար է: Այս պարը կրկին տեսնում ենք Արմէնի զոհուելուց առաջ, երբ խմբապետ Սաքօն ատրճանակը պահում է նրա վրայ եւ ստիպում պարել: Արմէնը պարի ընթացքում անսպասելիօրէն գրկում է խմբապետ Սաքոյին եւ նետւում լեռան բարձունքից՝ իր հետ անդունդ տանելով նրան:

Յայտնի են դէպքեր, երբ թշնամին զոհաբերուողին սպանելուց առաջ ստիպում է պարել, ինչպէս օրինակ թուրք հրոսակների առաջ յոյն երիտասարդ աղջիկներն ու կանայք պարում էին հին յունական «Ռոմայկա», նախքան ժայռից իրենց նետելը[16]: Նմանատիպ երեւոյթ արտացոլուել է նաեւ Ատոմ Էգոյեանի *Արարատ* ֆիլմում (2002). իրական փաստերի վրայ կառուցուել է այն տեսարանը, որտեղ հայ աղջիկներին մերկացնում ու մեռնելուց առաջ բռնի ստիպում են պարել: Ազգագրական գիտարշաւների ընթացքում մեր կողմից նմանօրինակ նիւթեր եւս գրանցուել են: Մեծ Եղեռնի ժամանակ թուրք բարբարոսները նախքան սպանելը հայ աղջիկներին ստիպել են պարել, յատկապէս «Իւրի-իւրի» պարեղանակի ներքոյ, ինչն էլ պատճառ է դարձել, որ բաւականին երկար ժամանակ այդ պարեղանակը չնուագեն հայկական հարսանիքներում[17]:

Եռանկիւնի

Մալեանի ֆիլմերում պարային տեսարաններ հանդիպում են միայն *Եռանկիւնի* ֆիլմում: Այնտեղ ներկայացուում է աշխատաւորութեան տօնակատարութեան ժամանակ կատարուող տղամարդկանց շուրջպար[18]: Այն ինքնատիպ է իր պարեղանակով, կշռոյթով, կատարման ձեւով, պարաքայլերով եւ թեւ-թեւի բռնելաձեւով: Պարուսույց Աղասի Շաբոյեանի պարի

խումբն է պարում: Կարելի է ենթադրել, որ նկարահանուած շուրջպարը Շաբոյեանի բեմադրութիւնն է յատուկ ֆիլմի համար կամ էլ մի շուրջպար, որը մոռացութեան է մատնուել:

Նուագախմբի Տղաները

Մալեանի յաջորդ ֆիլմը *Նուագախմբի Տղաները*՝ նկարահանուել է 1960ին, Հենրիկ Մարգարեանի (ծն. 1925) հետ համահեղինակութեամբ: Ֆիլմի հատուածներից մէկում կատարւում է «Գիւմրուայ Տրնգի»ն: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման նախօրէին ֆիլմի գլխաւոր հերոս՝ բոլշեւիկ Ցոլակ Դարբինեանը (Լեւոն Թուխիկեան) յեղափոխական գործունէութիւն է ծաւալում դաշնակցական բանակի նուագախմբում: Նոյն օրերին Երեւան է ժամանում Կարմիր Բանակը եւ Դարբինեանը մեծ շուքով դիմաւորում է նրանց: Հիւրասիութեան ժամանակ հանդիսասրահ են ներխուժում դաշնակներ՝ Կակօն (Թաթուլ Դիլաքեան) եւ Բախշօն (Գարուշ Խաչատրեան): Բախշօն՝ ձեռքի ատրճանակը պահելով Դարբինեանի վրայ կարգադրում է, որ նուագախմբի տղաները նուագեն Գիւմրուայ Տրնգի: Մենապարը կատարում է Կակօն: Առհասարակ Տրնգին Գիւմրու քաղաքային միջավայրին բնորոշ տղմարդու մենապար է: Դիլաքեանը տիրապետելով պարի նրբութիւներին՝ վարպետօրէն կատարում է պարը՝ ամբողջութեամբ արտայայտելով Գիւմրուայ Տրնգու շարժուձեւերի առանձնայատկութիւնները: Նախ՝ ձեռքերը աստիճանաբար բարձացնելով վեր ուսերի մակարդակին՝ հորիզոնական դիրք ընդունելով, սկսում է պարել: Պարի ընթացքում ձեռքերի դիրքերն անընդմէջ փոփոխւում են, որը կատարւում է հմտօրէն՝ կտրուկ, շեշտակի շարժումներով:

Մենապարով արտահայտւում է դաշնակների անհանդուրժողականութիւնը, բողոքը կարմիր բանակայինների նկատմամբ:

Հեղնար Աղբիւր

Մանարեանի այս ֆիլմում (1971) տեսնում ենք մեծահասակ տղամարդկանց դանդաղ, հանդիսաւոր գովնդապարը, որը պարում են Ուստա Մկրտիչի (Սօս Սարգսեան) կառուցած կամրջի բացման արարողութեանը:

Հայկական աւանդութեան համաձայն կամրջի ամրութիւնը ստուգելու համար՝ կամուրջ կառուցող վարպետի ընտանիքը պէտք է կամուրջի տակ տեղակայուի եւ ծանրաբեռնուած կառքը՝ անցնի կամրջի վրայով: Եթէ կամուրջը կառքի անցնելու ընթացքում չի փլւում՝ կառուցումը նշւում է մեծ շուքով, երգերով, պարերով:

Մանարեանը ֆիլմում վերարտադրում է հայոց մէջ տարածուած կամրջի շինարարական ծէսի մի պատկեր, որտեղ մեծահասակների գովնդապարը յաջողութեան գրաւական է խորհրդանշում:

Հայոց մէջ գովնդապար, գովնդ, գունդ նշանակում է շրջան, շուրջպար: Գովնդապարի տեսարանում, պարագլուխ է կանգնած յաղթական վարպետ Մկրտիչը, ձեռքին՝ թաշկինակ: Պարի տեմպը դանդաղ է, կշռոյթը համաչափ: Պարի կառուցուածքն ուղղագիծ է, դէպի աջ կատարուող պարաքայլերով, բռնելաձեւը՝ ձեռքերը գօտկատեղի հատուածից առաջ մղած եւ ափերը բռունցքաձեւ ագուցած: Բացի գովնդապարից նոյն այդ տեսարանում նաեւ զուգապարում են մի տարեց կին եւ մի տղամարդ:

Ձորի Միրօն

Ժիրայր Աւետիսեանի *Ձորի Միրօն* ֆիլմի (1979-80) սիւժէի հիմքում ընկած է հայ ժողովրդի Ցեղասպանութեան թեման: Ֆիլմը հարուստ է ազգային աւանդոյթների, ծէսերի, պարերի եւ երգերի տեսարաններով:

Վարդավառի արարողութիւնները ուխտատեղում մէկ ամբողջական տեսարանով պատկերում են հետեւեալ պարերը՝ «Տալ Տալա», «Գորանի», աղջիկների շուրջպար[19]: «Տալ Տալա» պարն առանձնանում է իր բռնելաձեւով: Այս պարատեսակի բոլոր տարբերակներում բռնելաձեւը ճկոյթներով է, իսկ այստեղ թեւ-թեւի է: «Տալ Տալա» պարը բնորոշ է Վասպուրականի եւ Բալուի տարածաշրջաններին: Այն պարերգ է: Դրա Բալուի տարբերակը կատարում է Մարօ Նալպանտեանի կողմից[20]: Այնուհետեւ տեսնում ենք երիտասարդ աղջիկների գովնդապարը, որի ընթացքում միքանի տղաներ մօտենում են իրենց ընտրած աղջիկներին եւ նրանց նռերի շարան նուիրում:

«Գորանի» պարատեսակը տարածուած է եղել Տարօնում, Սասունում[21]: Սասունում թուարկուած պարերը կատարում էին սրինգի, դհոլ-զուռնայի նուագակցութեամբ եւ երգով[22]: «Գորանի»ն իր բնոյթով հանդիսաւոր, դանդաղ շորորաձեւ շուրջպար է, կատարւում է երկսեռ մասնակիցների կազմով: Յատկանշական է, որ «Տալ Տալա», «Գորանի» շուրջպարերը կատարուել են ոչ միայն ուխտատեղերում, այլեւ հարսանեկան խնջոյքների ժամանակ:

Ֆիլմում, ֆիդայիների երդման արարողութեան տեսարանում, Գէորգ Չաուշի գլխաւորութեամբ կատարւում է «Եար Խուշտա» մարտապարը: Այս տեսարանը նկարահանուել է Թալինի Շրջանի Ծաղկասար Գիւղի Բղութ Սարի մօտ: Մարտապարի մասնակիցները եղել են Թալինի շրջանի պարողները[23]:

Ռազմապարերը մարտական ոգին բարձրացնող եւ յաղթանակի զգացողութիւն առաջացնող յատկութիւն ունեն: Հայոց ռազմապարերից են «Վանայ Քերծի»ն, «Կիլիկոյ Տափկէ»ն, «Մուսա Լեռան Դափկէ»ն, «Սասնայ Եար Խուշտա»ն: Դրանք հիմնականում պարում են մարտիկները պատերազմից առաջ եւ յետոյ, ինչպէս նաեւ կռւում նահատակուածին յուղարկաւորելու ժամանակ[24]: Նման վկայութիւններ կան փաստագրական աղբիւրներում, գեղարուեստական գրականութեան մէջ, ինչպէս նաեւ դաշտային ազգագրական հետազօտութիւնների ընթացքում հաւաքուած մի շարք նիւթերում:

Փաստագրական աղբիւրները վկայում են, որ Գէորգ Չաուշի եւ նրա զինակիցների ժողովներից մէկում, որտեղ քննարկւում էին ինքնապաշտպանական ջոկատների եւ հայդուկներին վերաբերող հարցեր, առաջադրւում՝ նոր ինքնապաշտպանական ծրագրեր, աւարտին մասնակիցները խրոխտ պարում են «Քոչարի»ն, որը գլխաւորում էր Գէորգ Չաուշը: «*Նրանց խրոխտ պարից թնդում էր անտառը: Հայդուկները պարում էին կռուելու պէս եւ կռւում պարելու պէս*»[25]: Նմանատիպ օրինակի հանդիպում ենք նաեւ Խաչիկ Դաշտենցի *Ռանչպարների Կանչը* գրքում, որտեղ հայդուկները երկարատեւ մարտից յետոյ սկսում են պարել ռազմական «Թռնոքի», «Ծափ Պար»: «*Այդ ոչ թէ պար էր, այլ հողմի շառաչ: Զոյգերով կանգնեցին ճակատ-ճակատի: Ծունկի են իջնում, բարձրանում, օրօրւում եւ պտոյտներ գործելով ձեռքերը*

թափով բախում են իրար: Նորից են չոքում, կռանում, կանգնում եւ նորից շառաչելով բախւում են միմեանց[26]»: Մարտապարեր կատարւում էին նաեւ կռիւն աւարտուելուց յետոյ յաղթանակ տօնելիս: Գէորգ Չաւուշի ջոկատի յաղթանակը թուրք ոստիկանական ուժերի դէմ մղած մարտերից մէկում տօնւում է ռազմական «Քոչարի» պարով: «*Գէորգը այնպէս պարեց, որ մասնակիցների յիշողութեան մէջ մնաց ընդմիշտ*»[27]:

Ֆիլմում տեսնում ենք ոչ միայն հայոց մշակոյթին բնորոշ մարտապարերից մէկը, այլեւ թուրքերի «Սուիններով Պար»ը: Այն կատարւում է շրջանաձեւ, բայց առանց ձեռքեր բռնելու: Մասնակիցները հաւասարաչափ օդ են նետում իրենց ձեռքի եաթաղանը, ապա արագօրէն բռնում: Պարաշրջանը մերթ պտոյտներ գործելով շրջանի ուղղութեամբ մեծանում է, մերթ պտոյտներ գործելով՝ փոքրանում: Այնուհետեւ պարի մասնակիցները եաթաղանները շրջանի կենտրոնում խրելով հողի մէջ, շարունակում են նոյն վայրագ տեմպով պարել:

Մենաւոր Ընկուզենին

Դովլաթեանի ֆիլմում (1986) Հայկական Լեռնաշխարհի հեռաւոր գիւղերից մէկում տեղի ունեցող հարսանեկան ծիսակատարութիւն է պատկերուած, ինչպէս նաեւ երթի, խնջոյքի ժամանակ կատարուող մի շարք պարային տեսարաններ:

Ֆիլմում «Շալախօ» մենապարը կատարում է Սահակ Կամսարեանը (ֆիլմի ռեժիսոր-դերասան Դովլաթեանը): Նրա պարը առանձնանում է կտրուկ, սուր արտայայտիչ շարժումներով եւ խրոխտ դիմախաղով: Այս տեսարանում իր կերպարի խառնուածքին բնորոշ պարով հանդէս է գալիս նաեւ Ռազմիկը՝ (Արմէն Ջիգարխանեանը): Ի տարբերութիւն Դովլաթեանի նա ոչ թէ պարում է Շալախոյին բնորոշ շարժումներով, այլ իր պարի միջոցով ընդգծում գիւղում միակ տղամարդ լինելու հանգամանքը: Ըստ կինօգէտ Սիրանուշ Գալստեանի, դերասանի համար պարը իր կերտած կերպարն ընդգծելու ոչ թէ նպատակն է, այլ միջոցը՝ կերպար ստեղծելու, կերպարի բնոյթը լրացնելու: Այդ դրուագում ռեժիսոր Դովլաթեանը իսկապէս պարում է, իսկ Ջիգարխանեանի պարը միջոց է խաղալու, կերպարի խառնուածքն ընդգծելու համար[28]:

Տղամարդու «Շալախօ» մենապարը քաղաքային ֆոլկլորի պարանմուշ է: Այս մենապարը տարածուած է ոչ միայն հայերի, այլեւ կովկասեան մի շարք ժողովրդների մէջ[29]: Պարին բնորոշ են բարձր թռիչքները, թռիչք կքանիստերն ու թռիչքներով կատարուող այլ շարժումներ: Այդ հիմնական բնութագրական շարժումների հետ մէկտեղ Դովլաթեանի ֆիլմում նկարահանուած «Շալախօ»ն պարեղանակով եւ կատարման ձեւով այնուամենայնիւ տարբերւում է Բեկնազարեանի *Պէպօ* ֆիլմում կատարուող Շալախոյից:

Տղամարդիկ

Քէօսէեանի ֆիլմի (1972) որոշ հատուածների միջանկեալ մասերում հայ ժողովրդական պարային տեսարանները իւրօրինակ անցումային լուծումներ ունեն: Առաջին տպաւորութիւնն այն է, թէ պարային հատուածները ընդհանուր ֆիլմի սիւժէի հետ կապ չունեն, սակայն խմբապարերը կապուած են ֆիլմի ներքին բովանդակութեան հետ: Տղամարդկանց պարերը՝ որպէս միասնականութեան խորհրդանիշ ներքին կապ են ստեղծում ֆիլմի սիւժէի հիմքում ընկած մի խումբ տաքսու վարորդների մտերիմ ընկերութեան եւ ֆիլմում կատարուող դէպքերի միջեւ: Այսինքն՝ պարերն այստեղ դառնում են արտայայտչամիջոց՝ տաքսի վարող ընկերների միասնութեան գաղափարն ընդգծելու եւ նրանց հոգեվիճակն արտայայտելու համար:

Նշենք, որ ֆիլմում կատարուող «Քոչարի», «Վերվերի», «Եար Խուշտա» պարերը հայոց մէջ տարածուած տղամարդկանց խմբապարեր են[30], եւ ընդգրկուած են Հայաստանի Պարի Պետական Անսամբլի պարացանկում:

Ֆիլմում կատարուող «Վերվերի» պարն ունի բարդ պարաքայլեր, որոնց կատարումը վարպետութիւն է պահանջում: Այդ տարբերակը ազգագրական հետազօտութիւնների ընթացքում չի հանդիպել: Ամենայն հաւանականութեամբ իր բարդ կատարման պատճառով դադարել է կենցաղավարուել ժողովրդի մէջ: «Վերվերի» պարատեսակը կազմուած է պարզ եւ բարդ պարաձեւերից[31]: Ֆիլմում կատարուող «Վերվերի»ի բռնելաձեւը ափ ափի է, պարաքայլերի հաշիւը եօթն է՝ ի

տարբերութիւն ընդունուած վեցի: Պարի վերջին պարբերութեան եօթերորդ հաշուի քայլին ձախ ոտքով թեթեւ կքանստում են, որի ընթացքում մարմնի ծանրութիւնն ընկնում է ձախ ոտքի վրայ, ապա աջ ոտքն երկարացնելով աջ ուղղութեամբ կռունկով շեշտակի հարուածում են գետնին: Այս շարժման շնորհիւ՝ ընդհանուր պարի վերջին պարբերութեան պատկերը շեղակի ձեւ է ստանում: Պարաքայլի այդ բարդ շարժումով «Վերվերի»ի այս տարբերակը բացառիկ է միւս կատարուող տարբերակների կողքին:

Յաջորդ պարային հատուածը «Քոչարի»ն է: *Տղամարդիկ* ֆիլմում «Քոչարի»ի մասնակիցների պարաշարքը խիտ դասաւորութեամբ է, ուս ուսի, բռնելաձեւը՝ ափերով ագուցուած: Պարաքայլերը սկսում են ելման դիրքում ձախ ոտքի խորը ծնկածալով, ապա աջ ուղղութեամբ երկու անգամ քայլ կատարւում: Դրան յաջորդում են թռիչքներով խաչաձեւող պարաքայլերը. ձախ ոտքի խաչաձեւ թռիչքով անցում է կատարում աջ ոտքի վրայով, որի արդիւնքում աջ ոտքը անընդհատ մնում է ձախ ոտքի ետեւում:

Յաջորդող դրուագում «Ծափ Պար» պարատեսակին պատկանող «Թաք Եար Խուշտա» մարտապարն է: «Ծափ Պար» պարատեսակներին անդրադարձել են պարագէտներ Սրբուհի Լիսիցեանը[32], Նայիրա Կիլիչեանը[33]: Նշուած մարտապարը ներկայում էլ տարածուած է Թալինի շրջանում, որտեղ բնակչութեան զգալի մասը ծագումով Սասունից է:

Ֆիլմում մասնակիցների կազմը երկու հակառակորդ շարքից է կազմուած, պարի դասաւորութիւնը՝ դէմ դիմաց: Քանի որ խմբապարը մենամարտ է յիշեցնում եւ ձեռքերն ազատ են բազմատեսակ շարժումներ կատարելու համար, մասնակիցների շարքերը մերթ թեւերը կողմ տարածելով, մերթ ծեքծեքալով հաւասարաչափ առաջ են շարժւում, ապա պարակենտրոնի հատման գծում միայն մի ձեռքով հարուածում են ափերին՝ առաջ շարժուելով հակառակորդ շարքի ելման դիրք: «Եար Խուշտա»յի ընդունուած տարբերակն է երկու ձեռքերի ափերով հակառակորդին հարուածելը, իսկ ֆիլմում տեսնում ենք մէկ ձեռքով, ինչը վկայում է նաեւ այս տարբերակի գոյութիւնը: Ֆիլմի վերնագրին համահունչ՝ այս պարերը խորհրդանշում են տղամարդկանց միաբանութիւն, ուժը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԸ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒՄ ԵՒ ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԱՆԻՒԹԵՐՈՒՄ

Տարուայ Եղանակները

Փելէշեանի վաւերագրական ֆիլմում (1975) եւս հարսանեկան պարեր են նկարահանուած: Հարսանեկան արարողութիւնները նկարահանուել են Թալինի շրջանի Վերին Սասնաշէն գիւղում, որտեղ այդ ժամանակահատուածում գիւղական հարսանիք էր[34]: Պարային տեսարանները սկսւում են հարսին հայրական տանից հանելու պահից, երբ կատարւում է մեծահասակների դանդաղ «Գովնդապար»[35]:

Յաջորդող տեսարանում հարսի մենապարն է, որը կատարւում է փակ պարաշրջանի կենտրոնում: Շուջպարի բռնելաձեւը ափ ափի է, գլխի մակարդակից վերեւ բարձրացրած, պարաշրջանի ուղղութիւնն՝ աջ: Շուրջպարի կենտրոնում հանդէս է գալիս մենապարող նորահարսը՝ մի ձեռքում գումար հաւաքելու սկուտեղ բռնած, իսկ միւսը մեղմօրէն պտտեցնելով: Այս կադրերին յաջորդում են հարսանեկան գիշերային ջահերով երթը եւ երթին ուղեկցող պարերը:

Հայոց աւանդական հարսանեկան արարողակարգում ընդունուած է հարսին հայրական տանից հանել երեկոյեան, երբ արդէն մթնշաղ է: Ըստ ժողովրդական հաւատալիքի, դրա բացատրութիւնն հետեւեալն է. «*մինչեւ ճանապարհ են ընկնում, հասնում հարսնացուի տուն՝ արդէն օրը կիսւում է, մի քանի ժամաչափ այնտեղ մնալով՝ վերադարձին արդէն մութ էր լինում, որտեղ սփռպուած էին լինում ջահերը վառել*»[36]: Ըստ ազգագրագէտ Միրչա Էլիադէի՝ ճանապարհը հանդիսանում է անցում աշխարհիկից՝ սրբազան, իրականութիւնից՝ յաւերժութիւն, մահից դէպի կեանք[37]: Ֆիլմում պարաշղթայի կառուցուածքը հետեւեալն է. բռնելաձեւը թեւ թեւի, պարաքայլերը՝ թռիչքաձեւ առաջ շարժուելով: Հայերի մէջ կարեւոր նշանակութիւն ունեն հարսանեկան «Ճանապարհի Պարեր»ը, քանի որ դրանք դիտւում են որպէս կեանքի ճանապարհ, բախտի թել[38]: Հարսանեկան երթերի եւ ուխտագնացութիւնների ժամանակ կատարուող ճանապարհի պարերը ժողովուրդն անուանում է «Երկու Տակ», այսինքն մի ճանապարհով գնում եւ հակառակ ճանապարհով վերադառնում են, ինչը եւ խորհրդանշում է կեանքի

շարունակութեան, նոր կեանքի փուլ մտնելու, ճանապարհը յաղթահարելու գաղափարը: Նաեւ կարեւորւում է պարի դասաւորութեան սկզբունքը, որը շղթայաձեւ բռնելաձեւով եւ շարանատիպ է (թելի նման) պարը չկտրուելու նպատակով[39]:

Կանչ

Վահունու վաւերագրական ֆիլմում (1977) ներառուած են այնպիսի ծէսեր, ինչպիսիք են պատանու առաջին սափրուելու արարողութիւնը՝ մեծահասակների գովնդապարի ուղեկցութեամբ, հարսանեկան երթի մէջ աքլոր, գաթա պարեցնելը: Ծիսական գաթաներով պարող երիտասարդ աղջիկներին սասունցիներն անուանում են Բրբուտիկ[40], իսկ ալաշկերտցիները՝ Զէի[41]:

Սափրուելու արարողութիւնը հանդիպում է նաեւ աւանդական հարսանեկան ծիսահամալիրում: Այս արարողութեան օրգանական մասն են կազմել գովնդապարերը: *Կանչ* ֆիլմում տուեալ ծէսում պարում են տղայի՝ առաջին անգամ սափրուելու արարողութեան ընթացքում: «Գովնդապար»ը կատարւում է տղայի շուրջ, որի ընթացքում սափրիչը ածիլում է: Պարին մասնակցում են ե՛ւ կանայք, ե՛ւ տղամարդիկ: Պարի կառուցուածքը կիսաշրջան է, ուղղութիւնն՝ աջ, բռնելաձեւը՝ թեւ թեւի, պարի տեմպը՝ միջին արագութեամբ: Այս դրուագին յաջորդում է հարսանեկան երթը, որտեղ տեսնում ենք աքլոր պարացնողին. աքլորն առհասարակ լինում է «աղուէս»ի[42] ձեռքին, ով հարսանեկան արարողութեան մէջ սուրհանդակի դեր է կատարում: Տեսնում ենք նաեւ գաթաներ պարեցնող աղջիկների: Հարսանեկան գաթային, առհասարակ տօնածիսական համալիրում թխուող գաթաներին վերագրւում է հմայական նշանակութիւն, որոնք յատուկ քանակով են թխւում տանտիրուհու կողմից[43]: Այն տրւում է միայն փեսայի երթում գտնուող երիտասարդ աղջիկներին որպէս տարոս:

Նմանատիպ երթերը բնորոշ են գրեթէ բոլոր ազգագրական շրջաններին: Դրանց մասին բազմաթիւ վկայութիւններ կան ազգագրական աղբիւրներում, գեղարուեստական գրականութիւնում[44]:

Յատկանշական է Երկրորդ Աշխարհամարտի աւարտին՝ 1945ին, Բեռլինում նկարահանուած փաստագրական ֆիլմը, որտեղ հայկական «Քոչարի» են պարում: Որպէս յաղթանակի պար, տարբեր ազգեր հերթով պարում են իրենց ժողովրդական պարերը: Հայկական Թամանեան Դիւիզիայի մուտքը հրապարակ նշանաւորւում է յաղթական Մշոյ «Քոչարի» մարտապարով: Առջեւից դանդաղ քայլերով գնում են երաժիշտները՝ զուռնա-դհոլ նուագողները, այնուհետեւ տեսնում ենք «Քոչարի»ի շարքը՝ ուս ուսի միացած, հաւասարաչափ շարժումներով, գրեթէ նոյն տեղում կատարուող պարաքայլերով: Առհասարակ «Քոչարի» պարատեսակը տարածուած է հայոց մէջ: Գրեթէ իւրաքանչիւր տարածաշրջան՝ ինչպէս Արեւմտեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստանում ունի իրեն տարածքին բնորոշ քոչարին, մէկը միւսից տարբեր՝ օրինակ «Վանայ Քոչարի», «Ալաշկերտի Քոչարի», «Մշոյ Քոչարի», «Սասնայ Քոչարի», «Կարնոյ Քոչարի», «Լոռուայ Քոչարի», «Մարտունու Քոչարի» եւն.[45]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով՝ Ի. դարում նկարահանուած ֆիլմերում տեսնում ենք այնպիսի պարեր, որոնց մի մասը այսօր չի կատարւում կենցաղի մէջ, մի մասն էլ ձեւափոխուած է: «Հայֆիլմ»ի նկարահանած նշուած ֆիլմերում պատկերուած պարային տեսարանները տուեալ ժամանակաշրջանի պարային մշակոյթի վաւերական աղբիւր են հանդիսանում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Նարինէ Շամամեան, «Պարի Ու Հացի Կապը Հայկական Հարսանեկան Ծէսում», *HABITUS*, Երեւան, 2014, էջ 181:

[2] Srb. Lisitsian, *Armyanskie Starinnie Plyaski* (Հայկական հինաւուրց պարեր), Երեւան, 1983, էջ 160. նաեւ՝ N. Shamamian, "Dorojnie Plyaski V Armyanskoy Svad'be" *Mejdunarodnaya Nauchnaya Konferentsiya "Arkheologiya, Etnologiya, Folkloristika Kavkaza"* (Ճանապարհի պարերը հայոց հարսանեկան ծէսում. Միջազգային գիտաժողով, Կովկասի Հնագիտութիւնը, բանահիւսութիւնը, ազգագրութիւնը), Թբիլիսի, 2011, էջ 588:

[3] Շամախին յայտնի է եղել մենապարերի մշակոյթով, որն արտացոլուել է Արմէն Օհանեանի *Շամախայի Պարուհին* աշխատութեան մէջ: Պարուհի Օհանեանի

պարարուեստի բնագաւառում կատարած գործունէութիւնները ուսումնասիրուել են Արծուի Բախչինեանի եւ Վարդան Մատթէոսեանի կողմից՝ A. Ohanian, *The Dancer of Shamakha*, London, 1922: Արծուի Բախչինեան, Վարդան Մատթէոսեան, *Շամախեցի Պարուհին*, Երեւան, ԳԱԹ Հրատ., 2007:

[4] Ա. Շիրվանզադէ, *Նամուս*, *Հտր. 2*, Երեւան, 1986, էջ 119:

[5] Նոյն:

[6] Lisitsian, էջ180:

[7] Եւրոպական պարերը տարածուած են եղել հայոց մէջ՝ յատկապէս Թիֆլիսում եւ Երեւանում: Երեւանում Ի. Դարի սկզբից գործել է Գիմնազիայի պարի դպրոց՝ Արամ Էմին Տէր-Գրիգորեանի ղեկավարութեամբ: Այս դպրոցում երիտասարդ տղաներն ու աղջիկները սովորել են հիմնականում այլ ազգերի պարեր, այդ թւում՝ Պոլկա, Մազուրկա, Կրակովեակ, Պա-դը Էսպանդեկատի, Վալս: Վալսի ուսուցումն իրականացուել է խաղային ձեւով եւ ֆրանսերէն ձայնարկութիւններով: Երբ պարողները յոգնել են, պարուսոյցը նոյն եղանակի ներքոյ այլ պարախաղ է հրաւիրել, օրինակ՝ Գրանդ ռոմբ՝ մեծ շրջան կազմել, Կորբէյ՝ զամբիւղ կազմել, փոխել տեղերը, պարընկերոջը, առաջ ու ետ շարժուել եւն.: Եւրոպական պարերը սահուն էին կատարւում: Բարդ էր Մազուրկան, որի ճիշտ կատարումը քչերին էր յաջողւում: Եւրոպական պարերը սովորեցնում էին գրամոֆոնով, որն այդ ժամանակների համար թանկ հաճոյք էր եւ քչերն ունէին (Տ. Կ. Կարապետեան, «Երեւանը Քսաներորդ Դարի Առաջին Քսանամեակում (Ականատեսի Աչքերով), Երեւանի Ազգային Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Արխիւ (ՀԱԻ Արխիւ), Երեւան, 1982, էջ 166):

[8] Կ. Քալանթար, *Համօ Բեկնազարեան*, Երեւան, 1986, էջ 288:

[9] Քալանթար, էջ 203:

[10] «Միրզէյի» պարը կնոջ հանդիսաւոր մենապար է, որի մասին տուեալներ են գրանցուած Շիրակի Մարզում, Ղարաբաղում եւ Հին Նախիջեւանում: Այդ գրանցումների համաձայն «Միրզէյի» մենապարը նոյնպէս տարածուած է եղել Արեւելեան Հայաստանի մի շարք շրջաններում (Ն. Շամամեան, Դաշտային Ազգագրական Նիւթեր (ԴԱՆ), «ՀՀ Շիրակի Մարզ, 2013, Բանասաց՝ Սուսաննա Գրիգորեան». նաեւ՝ Ա. Ղազիեան, «Ղարաբաղի Պարերը», ՀԱԻ Արխիւ., թղթ. 1, Մատեան 3. Թ. նաեւ՝ K. A. Nikitin, *Nakhichevan, Etnograficheskie Ocherki, Otdel 2, Vipusk Vtoroy*, (Նախիջեւան, Ազգագրական Նշումներ, 2րդ բաժին), Tiflis, 1882, էջ 8):

[11] Շալախօ պարում թռիչքներով կքանստելը հայ ժողովրդի պարային խօսակցաձեւում տարածուած է «Չաթմա նստել կամ Չաթմա զարկել» անուններով:

[12] Ն. Շամամեան, ԴԱՆ, ՀՀ Լոռուայ Մարզ. 2015, Բանասաց՝ երաժիշտ Տիգրան Շահվերդեան:

[13] Ս. Գալստեան, *Հայեացք Մեր Կինոյին*, Երեւան, 2011, էջ 169-170:

[14] «Ուզունդարա» մենապարը տարածուած է եղել Անդրկովկասեան ժողովուրդների մէջ՝ այդ թուում հայերի: Պարը բաղկացած է ոտքերի եւ ձեռքերի դանդաղ ու ընդգծուած շարժումներից: Այն բնորոշ է Հայաստանի որոշ ազգագրական շրջաններին՝ Ղարաբաղ, Շիրակ, Լոռի եւն. (Ա. Ղազիեան, ՀԱԻ Արխիւ, Թղթապանակ 1, Մատեան 3, էջ 2. նաեւ՝ Ն. Շամամեան, ԴԱՆ, «ՀՀ Շիրակի Մարզ 2015». նաեւ՝ Ն. Շամամեան, ԴԱՆ, «ՀՀ Լոռու Մարզ, 2015, բանասաց Սուրէն Շահվերդեան»):

[15] Մանրուքի շարժումը ոտքերի թաթերի վրայ կանգնած թեթեւ, գրեթէ տեղում շարժումներն են, *սիւզման*՝ յատակից ոտքերը չկտրելով օձաձեւ շարժումը:

[16] Curt Sachs, *The World History of the Dance*, New York, 1937, էջ 5:

[17] Ն. Շամամեան, ԴԱՆ, «ՀՀ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի Մարզեր, 2009-2013»:

[18] Ֆիլմի ուշագրաւ դրուագներից է նաեւ Մկոյի հարսանեկան արարողութեան պատրաստուելը՝ բաղնիքի տեսարանը, որտեղ խմբով լողացնում են փեսային կամ ՋԱԳՍի եւ այնտեղից դուրս գալու տեսարանը, որն ուղեկցւում է «Կալոսի Պոկէն» հարսանեկան եղանակով: «Կալոսի Պոկէն» մեղեդին, որը հնչել է հարսին հայրական տանից հանելու ժամանակ տարածուած է եղել Թիֆլիսի, Երեւանի եւ Գիւմրիի հարսանեկան արարողութիւններում:

[19] Հնչում են նաեւ բազմաթիւ ժողովրդական երգեր՝ «Առաքել Մուշեղ», «Հայ Նուբար», «Խորոտիկ Հայ Խորոտիկ» եւ «Համբարձման Երկուշաբթի»:

[20] Պետրոս Ալահայտոյեան, *Բալուի եւ Տարածաշրջանի Երաժշտական Ազգագրական Հաւաքածոյ*, Դրազարկ Հրատ., Կլենտէյլ, Քալիֆորնիա, 2009, էջ 138:

[21] Վ. Պետոյեան, *Սասնայ Ազգագրութիւն*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1965, էջ 266:

[22] Նոյն:

[23] Ն. Շամամեան. ԴԱՆ «ՀՀ Արագածոտնի Մարզ, Գիւղ Կաքաւաձոր, 2015»:

[24] Lisitsian, էջ 121-131:

[25] Ս. Պօղոսեան, *Ինձ Բահ Տուէք...Գէորգ Չաւուշ*, Երեւան, NB-Փրէս, 1990, էջ 422:

[26] Խաչիկ Դաշտենց, *Ֆիդայիներ, Ռանչպարների Կանչը*, Երեւան, 1992, էջ 209:

[27] Նոյն:

[28] Շնորհակալութիւն եմ յայտնում կինօգէտ Սիրանուշ Գալստեանին տուեալ տեղեկութեան համար:

[29] Ժ. Խաչատրեան, «Կովկասեան Պարերն Ու Խաղերը Վանօ Խոջաբեկեանի Գծանկարներում», *Աւանդականը եւ Արդիականը Հայոց Մշակոյթում, Հայ Ժողովրդական Մշակոյթ XV*, Երեւան, 2010, էջ 306, 320. նաեւ՝ Ն. Կիլիչեան, «Հայկական Ժողովրդական Բեմադրական Պարը», *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւսութիւն, Հտր. 26*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 2009:

[30] Նշուած պարատեսակները կենցաղավարւում են մինչ այսօր Թալինի եւ Ապարանի շրջաններում արդէն խառը կազմով՝ տղամարդկանց եւ կանանց

մասնակցութեամբ, իսկ դրանց մասին կան բազմաթիւ ազգագրական ուսումնասիրութիւններ:

[31] Lisitsian, էջ 150:

[32] Նոյն, էջ 140:

[33] N. Kilichyan, "Clap Dances: The Stage Version," *Dans Muzik Kultur*, Istanbul, 2000, էջ 305-308. նաեւ՝ Ն. Կիլիչեան, «Եար Խուշտա Ռազմական Խաղ-Պարը», *Ծիսական Պարը Հայոց Մէջ, Գիտաժողովի Նիւթեր*, Մուղնի Հրատ., Երեւան, 2002:

[34] Ն. Շամամեան. ԴԱՆ ՀՀ «Արագածոտնի Մարզ, Գիւղ Վերին Սասնաշէն 2015»:

[35] Ծանր գովնդապարերի մասին հանգամանալից խօսել է Սրբուհի Լիսիցեանը (Lisitsian, *Starinnie Plyaski I Teatralnie Predstavleniya Armyanskogo Naroda* (Հայ ժողովրդական հինաւուրց պարերն ու թատերական ներկայացումները) *Հտր. 1*, Երեւան, 1958, էջ 172-203:

[36] Գ. Ստեփանեան, «Սեւանի Շրջանի Դդմաշէն Գիւղ. Մաս 2», ՀԱԻ Արխիւ, 1961, էջ 95:

[37] Mircha Eliade, *Mif O Vechnom Vozvrashenie*, Սանկտ Պետերբուրգ, 1998, էջ 33:

[38] Ն. Շամամեան եւ Հ. Ասատրեան, «Թելի Խորհուրդը Հայոց Աւանդական Ճամփու Պարերում Եւ Խաղերում», *Աւանդականը Եւ Արդիականը Հայոց Մշակոյթում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2014, էջ 225-233:

[39] Շամամեան եւ Ասատրեան, էջ 225-233:

[40] Ն. Շամամեան. ԴԱՆ «Թալինի Շրջան, 2015»:

[41] Ն. Շամամեան ԴԱՆ «Մարտունու Շրջան, 2015»:

[42] Աղուէսի դերը հարսանեկան ծէսում տրւում է փեսայի ամենախորամանկ, ճարպիկ ընկերներից մէկին: Վերջինիս պարտականութիւնների մէջ է մտնում փեսայի հարսանեկան երթից շուտ հասնել հարսի տուն եւ աւետել փեսայի գալուստն ու այդ ընթացքում հաւաբնից մի աքլոր գողանալ:

[43] Ն. Շամամեան, *Տարի Հացի Արարողութիւնը Գիմրիում*, Երեւան, 2010:

[44] Հարսանեկան արարողութիւններին անդրադարձել են շատ ազգագրագէտներ՝ Երուանդ Լալայեան, «Ջաւախք», *Ազգագրական Հանդէս, Գիրք 1*, Շուշի, 1895. նաեւ՝ «Գողթն», *Ազգագրական Հանդէս, Գիրք XII*, Թիֆլիս, 1905. նաեւ՝ «Զանգեզուր», *Ազգագրական Հանդէս, Գիրք IV*, Թիֆլիս, 1898. նաեւ՝ Ե. Տէր-Մինասեան, *Անգիր Դպրութիւն Եւ Հին Սովորոյթներ, Հտր. Բ*, թիւ 14, Կ. Պոլիս, 1904. նաեւ՝ Ե. Շահազիզ, «Նոր-Նախիջեւանը Եւ Նոր Նախիջեւանցիք», *Ազգագրական Հանդէս, Գիրք VII-VIII*, Թիֆլիս, 1902. նաեւ՝ Քաջբերունի, «Հայկական Ծէսեր Եւ Սովորութիւններ», *Ազգագրական Հանդէս, Գիրք VII-VIII*, Թիֆլիս, 1901. նաեւ՝ Յ. Չոլաքեան, *Քեսապ, Հտր. II*, Հալէպ, 1998. նաեւ՝ Վ. Սվազլեան, *Կիլիկիա. Արեւմտահայոց Բանաւոր աւանդութիւնը*, Երեւան, 1994. նաեւ՝ Ղուկաս Տէր Ղազարեան, *Շատախի Երէցը*, Երեւան, 2011 եւն.:

[45] «Քոչարի» պարատեսակին մանրամասնօրէն անդրադարձել է Լիսիցեանը, այս պարատեսակը դասակարգելով ըստ տեղական պարաձեւերի եւ

առանձնայատկութիւնների (Lisitsian, *Starinnie Plyaski I Teatralnie Հպր. 2*, Երեւան, 1972):

THE DANCES IN 20TH CENTURY ARMENIAN MOVIES AND DOCUMENTARIES
(Summary)

NARINE SHAMAMYAN
dancenano@mail.ru

Armenian cinematography was started by Hamo Beknazaryan, who launched the «Hayfilm» studio. He shot the first Armenian silent feature film, "Namus" (1925), as well as the first Armenian sound films "Pepo" (1935) and "Zangezur" (1937).

As a film director and patriot, Beknazaryan included dance episodes in his films. These episodes were intended to reflect the local lifestyle rather than add an artistic feature to the film. Other Armenian filmmakers, like Henrik Malyan, Arman Manaryan, Jirayr Avetisyan, Frunze Dovlatyan, Edmond Keosayan, Artavazd Peleshyan, and Ara Vahuni maintained this tradition.

The article analyses the dances featured in these films as well as in those created in later decades like "Yerankyuni" (Triangle), "Heghnar aghbur" (The Spring named Heghnar), "Dzori Miron" (Miro of the Valley), "Menavor enkuzenin" (The Lonely Walnut Tree), "Tghamardik" (The Males), "Tarva Yeghanaknere" (The Seasons of the Year), and "Kanch" (The Call), as well as in other Soviet Armenian documentaries which are rich in Armenian traditional ritual dances as well as holiday and multiform (round, couple and single) dances. Some of the films include non-Armenian dances too.

The dances in the films are classified as single dances (Uzundara, Mirzeyi, Artsvapar), couple dances (Shalakho), round dances (Taltala, Yar Khushta, Khochari, Ververi, Gorani), ritual round dances of men and wedding dances.

The article explains the function of these dances and their meaning when danced at wedding ceremonies, celebrations or other occasions.

ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ *ՄՆԱՑՈՐԴԱՑ* ՎԷՊՈՒՄ

ՆԱՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ
monane@yandex.ru

Ազգային ինքնութեան գիտակցական ձեւաւորումը, ի թիւս այլ գործօնների, ենթադրում է լեզուական, մշակութային, հոգեկերտուածքային, կրօնական գործօնների առկայութիւն: Դարերի ընթացքում վերաձեւաւորուող հայկական ինքնութիւնը վերոյիշեալ գործօնների տարբեր համեմատութիւններով յարատեւ վերաձուլումն է, ինչի միջոցով, ազգային ինքնութիւնների խճանկարում, հայկականը տարբերւում է գոյութիւն ունեցող այլ ինքնութիւններից: Ո՞վ է հայը եւ որո՞նք են հայի ինքնութեան առանձնայատկութիւնները, համամարդկային ընդհանրութիւնները, բացթողումները:

Հայոց պատմութեան ամբողջ ընթացքում հետազօտողները ձեւակերպել են վերոնշեալ հիմնահարցը, պատասխանել կամ՝ ոչ, սակայն հիմնահարցի էութիւնը, թաքնուած ներիմաստներն ակնյայտօրէն ներկայացուած են Յակոբ Օշականի[1] *Մնացորդաց*[2] վէպում: Ուստի, հայկական ինքնութեան բարդ համակարգն իր ամբողջութեան մէջ դիտարկելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Օշականի նշած այն յատկութիւններին, որոնք բնորոշ են բուն հայկական ինքնութեանը: Այսպիսով, նախ առանձնացնենք հայի ինքնութեանը բնորոշ առաջին, բնազանցական յատկութիւնը:

Աշխարհի պատկերը ստեղծելիս իւրաքանչիւր ազգ օգտագործում է որոշակի իմացաբանական մեթոդ, որով էլ իրականութեան նշաններին տալիս է իմաստ, ինչն ազդում է ազգի արժէհամակարգի, սովորոյթների, մշակոյթի ձեւաւորման վրայ: Ըստ այդմ էլ կարելի է ինքնութիւնների խճանկարում տարբերակել ազգերն իրենց նմանութիւններով եւ տարբերութիւններով:

Աշխարհաճանաչման եւ դրանում իր դերն ու տեղն ունենալու հարցում Օշականի մօտեցմամբ հայն առաջնորդուել է նախեւառաջ զգայութիւններով: Այս է վկայում Օշականի հետեւեալ պնդումը. «*Սուտ չէ մտածումը, որ մեր ողբերգութեանց հնոցը կը զետրեղէ մեր զգայութեան անդունդին խորը*»[3]: Զգայութիւններով առաջնորդուող աշխարհի ճանաչողութեան արդիւնքն է այն, որ հայն աշխարհի պատկերը ստեղծել է իբրեւ արուեստագէտ, ինչն ենթադրում է երեւոյթների եւ իրերի ճանաչողութիւն իրենց բուն էութեան մէջ, աշխարհն անմիջականօրէն, առանց միջնորդի՝ զգայութիւններով ճանաչելու կամքը: Այս երեւոյթը արտայայտուել է նախեւառաջ երաժշտութեան մէջ: Գուցէ

առաջնորդուելով այս տրամաբանութեամբ Օշականը, որպէս հայկական ինքնութեան արտացոլանք, կրօնից աւելի շեշտում է ժողովրդի յոյզերը, աշխարհայեացքն արտայայտող հայկական երաժշտութիւնը՝ նշելով. «*Հելլէն քաղաքակրթութիւնը, Նիցշէին կարծիքով, ծնունդ է կրօնական երգերու…*,- ապա շարունակում՝- *Անշուշտ, թուրքերուն դեռ կը պակսի արուեստագէտը, որ քանի մը կարկառուն քանդակներով սեւեռէր մէկ-երկու երեսները իրենց հոգիին, ինչպէս մերը ըրած են մեր շարականները ու նոր օրերու մեր գեղջուկ երգերը*»[4]:

Երաժշտութեան ստեղծումը, ըստ էութեան, տուեալ ժողովրդի յոյզերի ամբողջական արտացոլումն է. հայը զգացմունքային է, ռոմանտիկ, եւ ինչպէս նկատում է Օշականը, հայը յայտնի է եկեղեցական շարականներով, որն էլ ինչ-որ չափով արտացոլել է հայի հոգեւոր ճանաչողութեամբ տրուած աշխարհի պատկերը: Ինչպէս փաստում է Նիցշէն. «*Ժողովրդական երգն աշխարհի երաժշտական պատկերն է… իսկ երաժշտութիւնը կամք է, քանզի այն արտայայտելու համար անհրաժեշտ է օգտագործել կիրքն իր ամբողջական շարժման մէջ՝ շշուկից մինչեւ խելայեղութիւն*»[5]: Ամբողջացնելով վերոնշեալը կարելի է եզրակացնել, որ հայի հոգին կենսատու է եղել արուեստի համար՝ թէ՛ աշխարհիկ եւ թէ՛ հոգեւոր երաժշտութեան բնագաւառում. «*երկինքն ու երկիրը հաշտեցնող իր երեւակայութեամբը*»[6]՝ ներդաշնակութեան եւ խաղաղութեան ձգտումով. «*բարութիւն, հեզութիւն, խոնարհութիւն, հաւատարմութիւն, ասոնք մեր սրտեղծած սրտառուչ գեղեցկութիւններն են, մեր գերութեան իսկ անդունդէն: Ու կ'ուրանաք, այսքան դժնդակ պայմաններու մէջ, մեր մեծութիւնը այս գեղեցկութեանց ծառայելու: Մենք ենք տուած Մօտ Արեւելքին՝ մեր լրջութիւնը, մեր թախիծը, մեր անմեռ հաւատքը դէպի լոյսն ու դէպի արուեստը*»[7]: Հայն իտիալիստ է, յուզական, եւ որոշակի իմաստով կրում է այս բոլոր համամարդկային գեղեցկութիւնները, հոգեւոր իմաստով դառնալով արժէքաւոր, իսկ ընկերային իրականութեան մէջ՝ անպտուղ: Գուցէ հային յատուկ այս ռոմանտիզմով է պայմանաւորուած նաեւ նրա մեկուսի, մենակեաց կեանքը, այլ կերպ՝ անհատապաշտութիւնը: Այս է հաստատում նաեւ Դէյւիդ Լենգի հետեւեալ եզրակացութիւնը. «*Հայերն ի ծնէ անհատներ են.…*»[8]:

Դեռեւս ԺԹ. դարում անհատականի եւ հասարակականի փոխյարաբերութեան մէջ անհատականի գերակայութիւնը հայ հրապարակախօսների մտահոգութեան առարկան էր: Այդ դարի հրապարակախօս, փիլիսոփայ Միքայէլ Նալբանդեանը նշում է. «*… ի՛նչ է ազգը, ի՛նչ է ազգութիւնը, ո՛վ կամի լսել ու հասկանալ, ո՛վ կամի վեր բարձրացնել ցեխի միջից իւր մինչ իսպառ անարգուած ազգը եւ ազգութիւնը. մասնաւորութեան կորստական հոգին վաղուց ահա*

թագաւորել է մեր ազգի անդամների վրայ: Եւ մի՞թէ այդ հոգին չէ պատճառը, այդ դատապարտելի մասնաւորութիւնը, որ մեր ազգը դուրս է ընկել մարդկութեան պատմագրքի տախտակներից. գո՛նէ մեք այլ պատճառ չգիտենք»[9]: Նալբանդեանը յատկապէս շեշտում է այն, որ հայը մշտապէս իր մասնաւոր անձն է առաջ մղում՝ անտեսելով ընկերայինը: Լուսաւորականները միակարծիք են անմիաբանութեան հարցում: Այն ժողովուրդը, որը միասնաբար չի ընտրում իր ապագան, չի զոհում իր մասնաւոր շահը ընդհանուրին, երկար գոյատեւել չի կարող: Իզուր չեն տնտեսական ծրագրերի, փոխատու ընկերութիւնների ստեղծումը, հողի մշակման մասին գրքերը, որոնք նպատակ ունէին հային պահելու իր հայրենիքում եւ այդ հայրենիքը միասնաբար բարեկարգելու: Այլ երկրներում աշխատանք փնտռող, ուսում ստացող տարագիր հայի խնդիրն արդիական էր նաեւ տասնիններորդ դարում: Լուսաւորականները տուեալ խնդրի պատճառը ոչ միայն համարում էին տնտեսական վատ պայմանները, կրթութեան ցածր որակը, այլեւ հայի բնոյթը: Անհրաժեշտ էր փոխել հայի ինքնագիտակցութիւնը կրթութեան, դաստիարակութեան միջոցով: Հայը պէտք է հայրենիքն ընկալէր իբրեւ իրեն պատկանող մի երեւոյթ: Եթէ լուսաւորական շարժման արդիւնքում հայերի որոշակի հատուած միաբանուէր եւ մնար իր երկրում, ապա ե՛ւ տնտեսութեան ե՛ւ գիտութեան ոլորտում շատ տեղաշարժեր կարող էին արձանագրուել: Անկախ կրօնական, քաղաքական, կուսակցական պատկանելիութիւնից, լուսաւորականները միակարծիք են միաբանուելու հարցում: «*Ազգին պինդ մեծ ուժը, միաբանութիւն է, ուր միաբանութիւն կայ, ազգ կայ, ուր միաբանութիւն չի կայ, կամ ազգ չի կայ, կամ չիք ըլլալու մօտ է, ըսել է որ առջի պարտականութիւննիս, ազգասէր ըսուելու համար միաբանութիւն ունենալու է. միաբանութիւն խորհրդոյ բանի եւ գործոյ*»[10]:

Ուստի, յուզականօրէն աշխարհը ճանաչելու, արուեստագէտի ինքնութեամբ այն վերաիմաստաւորելու կարողութիւնը շղթայաբար ձեւաւորում է հայի միւս յատկութիւնը՝ անձնակեդրոնութիւնը: Փորձելով զուգորդել յուզականութիւնն ու անհատակենտրոնութիւնը, ակնյայտ է դառնում այս երկուսի փոխադարձ պատճառական կապը: Աշխարհին անմիջականօրէն ընկալելով՝ հայը նախեւառաջ այն տեսնում է սեփական աչքերով, այնուհետեւ միայն ներառում այլ ազգերի փորձը: Հետեւաբար **ես**ի, անհատականի գաղափարը դառնում է գերակայ:

Ազգը նման է մարմնի, որի կենսականութիւնն ապահովում են բանականութիւնը եւ յուզականութիւնը: Հայի հոգեկերտուածքի առաջին աստիճանը ոգին է. յոյզերի անսահմանութիւն, բանականութեան տկարութիւն: Նկարագրելով բուն հայկական ինքնութիւնը՝ Օշականն անցում է կատարում արեւմտահայ ինքնութեանը: Անցումը վիպական է,

մասնաւորեցուած՝ հազարաւոր դէպքերից մէկով: Ահա Սողոմը, *Մնացորդաց*ի գլխաւոր հերոսը, ծնուել է Արեւմտեան Հայաստանում, համայնքացուել հայկական եւ թուրքական միջավայրում: Մարդկային տեսակով փայլուն գաղափարներ կրող կամ հանճար չէ, որով պէտք է գրաւի ընթերցողի ուշադրութիւնը… Սողոմը յանցագործ է, ով պատիժ է կրում բանտում: Նա հայ է եւ թուրք, որովհետեւ ապրել է նաեւ թուրքական միջավայրում: Այսպէս, Սողոմը հայ լինելուց բացի նաեւ իր ժամանակաշրջանի արտացոլանքն է, Դոստոեւսկու երկու հերոսների կերպարների ամբողջացումը՝ Ռոսկոլնիկովը եւ Իւանը՝ «ոճրագործը» եւ «սատանան»[11]: Թէեւ մարդկային կերպարով Սողոմը այս երկու հերոսների խտացումն է, սակայն գործողութիւնների ընթացքը չի յուշում իմացաբանական առումով ընդվզող եւ հակադրուող ոգու մասին: Նա հայի եւ թուրքի ինքնութիւնների խառնուրդ է, այլ կերպ՝ աշխարհաքաղաքացի, այստեղից ու այնտեղից վերցուած ինքնութեամբ, ով աշխարհը ճանաչել է Արեւմտեան Հայաստանում՝ թուրքական եւ հայկական միջավայրում: Հայկական միջավայր, որը ստուերւում է թուրքական ինքնութեամբ. հայերէնի կողքին թուրքերէն, հայկական երգերի կողքին՝ թուրքական երգեր, հայկական հեքիաթների կողքին թուրքական հեքիաթներ:

Առաջին հայեացքից պարզ թուացող թուարկումը ձեւաւորում է լուսանցքային ինքնութիւն, այլ կերպ շեղուելով բառի բուն իմաստից, կարելի է ասել ինքնութիւն լուսանցքի երկու կողմում: Սողոմը, որպէս արեւմտահայ, իր ծիներով հայկական սահմանում է, Արեւմտեան Հայաստանում, իսկ առօրեայով՝ թուրքական: Միտքը-բանականութիւնը՝ հոգին, ե՛ւ հայկական է, ե՛ւ թուրքական: Եւ բնական է, որ նժարին դրուող ազգային արժէքները չեն կարող լինել աւելի ուժգին, քան կեանքն է, յատկապէս երբ արեւմտահայն ընտելացել է տեսնել Ալլահին երկրպագող թուրքին, գիտի թուրքերէն երգեր, բանաստեղծութիւններ: Նա ինչ-որ իմաստով օտար չէ թուրքական առօրեային: Քանի որ արեւմտահայը կենցաղով թուրքական միջավայրում է՝ անպայմանօրէն կրելու է նաեւ դրա ազդեցութիւնը հոգեկերտուածքի, ինքնութեան մէջ նոր յատկութիւններ աւելացնելու առումով եւ եթէ չկայ ազգայինն իբրեւ հակակշիռ, ապա ժամանակի ընթացքում բուն ինքնութեանը բնորոշ յատկութիւնները փոխակերպման են ենթարկուելու: Օշականը ստեղծում է այս խաբկանքը նախ մեր բանականութիւնը ազատելու համար հային յատուկ առասպելական չափազանցութիւնից եւ շեշտելու, որ Արեւմտեան Հայաստանում ապրող հայերը հասարակ մահկանացուներ են, որոշ իմաստով՝ թուրքական միջավայրին ծանօթ եւ դրան յարմարուած, բայց նրանք ազգի դաւաճաններ չեն: Ճիշտ է, Սողոմը եւ հազարաւոր հայեր, կրելով իրենց ինքնութեան մնացորդները, անցնում են տաճկացման

ճանապարհը, բայց նրանք չեն կարող հայ չլինել: Օշականը Սողոմի տաճկացման ընթացքը ներկայացնում է ազգային ինքնութեան խորհրդանիշերից նրա հրաժարմամբ: Սողոմը նախ ուրանում է հայոց եկեղեցին, ըստ էութեան մերժելով ինքնութեան մէջ գլխաւոր խորհրդանիշը՝ կրօնը, մերժում է իր համայնքը, ինչը ենթադրում է ինքնութեան մի շարք գործօնների ամբողջութիւն՝ լեզու, հոգեկերտուածք, մշակոյթ: Սակայն եւ ոչ մի հարկադրմամբ նա չի կարողանում ուրանալ մօրը՝ իր սկիզբը: Օշականն ինքնութեան մէջ խորհրդանիշերի բացառմամբ յանգում է գլխաւորին սկզբին, որը մերժել, ջնջել ո՛չ մի կերպ չի կարելի: Կարելի է խօսել այլ լեզուով, դառնալ այլ մշակոյթի կրող, դաւանել այլ կրօն, բայց ծինաբանական յիշողութիւնն ունի իր պարտադրանքը եւ այն օրերից մի օր խօսելու է հայերէն, որովհետեւ այլ բան է տիրապետել մէկ այլ ինքնութեանը, *ունենալ* այդ ինքնութիւնը եւ այլ բան է *լինել* այդ ինքնութեան կրողը, կրել՝ դիտել այն որպէս սեփական անձի անքակտելի մաս: Այլ բան է լինելը եւ այլ՝ ունենալը[12]: Այդ է պատճառը նաեւ, որ Սողոմների որդիներն առանց անգամ մէկ հայերէն տառ իմանալու, դարեր յետոյ փնտռում են այն, ինչն իրենց պէտք է ամբողջացնի՝ սկիզբը, սաղմնաւորումը՝ հայկական ինքնութիւնը: Սողոմը տաճկացաւ, բայց գիտակցութեան մէջ ազգայինը բացառման չենթարկուեց, ինչի ապացոյցն է դերսիմահայութիւնը՝ մի փոքրիկ Հայաստան Թուրքիայում:

Հրանտ Դինքը, ով երկու ինքնութիւն կրող հայի փայլուն օրինակ է, նշում է. «*Ես երկու ինքնութեան եւ երկու գիտակցութեան կրող եմ: Առաջինը՝ թուրքաբնակ եմ, Թուրքիայի Հանրապետութեան քաղաքացի... Երկրորդը՝ հայ եմ*»[13]: Նոյնիսկ այս պնդումը փաստում է ինչպիսին է բուն հայկական ինքնութիւնից բացի այլ ինքնութեամբ ապրող հայը: Թուրքական եւ առհասարակ ոչ-հայկական ինքնութիւնը ներկայացնելիս սովորաբար շեշտադրւում է բնակավայրը, որոշակի օրէնքներ ներկայացնող եւ կրող լինելը, իսկ ահա հայկական ինքնութիւնը շեշտելիս նշւում է՝ հայ եմ... Դինքն այս տողերը գրել է *Մնացորդաց* վէպից մօտաւորապէս յիսուն տարի յետոյ՝ դառնալով Օշականի պնդման ճշմարտացիութիւնը փաստող կենդանի օրինակ:

Ինքնութիւնների խճանկարում հայի ինքնութիւնն այլ ազգերից տարբերակելու համար համեմատականներ անցկացնենք նաեւ *Մնացորդաց*ում ներկայացուող թուրքի ինքնութեան հետ: Հայն իր ցեղային յատկութիւններով, կշռոյթով զտարիւն է. հայի ծինաբանական անկրկնելի «տարազ» է, որն ունի սկզբնաւորման պատմութիւն: Կոստան Զարեանի բնութագրմամբ. «Ցեղը ռիթմ է»[14]: Թուրքը զուրկ է ցեղային տարազից, բացակայ է ռիթմով՝ կշռոյթով, սկզբնաւորման պատմութեամբ, չունի ցեղային վեհացումը, ծինաբանական առումով՝

տկար է, գրեթէ զուրկ՝ կենսատու սաղմերից, բայց որպէս ժողովուրդ հոյակապ է. հասարակական կեանքը կառուցարկելիս ունի նախագիծ, որն ընդհանուր է գրեթէ բոլոր թուրքերի համար: Օշականը նշում է. «*Թուրքերը, որոնց մասնագիտութիւնը եղաւ քաղաքակրթութիւնները թաղել, նոր է, որ իրենց ախորժակները կը տարածեն նաեւ ողջ տարրէն դէպի անողջը:...Կ'ըսուի, թէ անոնք մեր երկրին աւերակներն ալ ձեռնարկած են անյայտ ընելու, սկսելու համար նոր իրենց քաղաքակրթութիւնը, մաքուր թուղթի մը վրայէն*[15]:- ապա շարունակում.- *Խայտաբղէտ էր ասոնց տարազը, ամէն աստիճանէ, երանգով՝ ինչպէս որակով*»[16]: Թուրքը ենթագիտակցօրէն ատում է հային եւ այդ ատելութիւնը միակ թուրքինը չէ, այլ՝ բոլորինը: Իր ազգը «վերանորոգելու», վեհացնելու եւ մաքրելու ծրագիրն ընդունում է իբրեւ զինուոր, ով պատրաստ է կատարել բոլոր հրահանգները: Այնինչ, հինգ հայից չորսն անպայմանօրէն պէտք է լինեն զօրավար՝ ունենալով զինուորի կարիք: Իսկ ահա պետութեան իտիալը ենթադրում է «*.....ամբողջի եւ մասերի յարաբերութեան կայունութիւն, այն, թէ պետութիւնն ինչ կարող է ակնկալել* [իր քաղաքացիներից] *եւ որքանով են նրանք պատրաստ իրենք աջակցել պետութեանն իրենց սեփական մղումով եւ ներքին հակուածութեամբ*»[17]: Հայը չի համախմբւում մէկ գաղափարի շուրջ, չունի կեանքի նախագիծ, ի տարբերութիւն թուրքի, որը, որպէս ժողովուրդ, համախմբուած է եւ գերի է հասարակականին: Այստեղից էլ գլխաւոր յատկութիւնը՝ հայն ապահասարակական է եւ ներքին ջանքերն առաւելապէս ուղղում է իր անձին: Թուրքն ապաանձնական է, անկախ համոզմունքներից՝ միաւորւում է գաղափարի շուրջ: Թուրքի համոզմունքը հասարակութեան կայացումն է: Նա աշխարհին ներկայանում է ոչ թէ որպէս անհատ, այլ որպէս ազգ, ինչը հայի պարագայում նոյնը չէ: Հայը քաղաքացի չէ. «*...անոնք հլու թուրքին, անհուն ընդվզում էին իրարու դէմ*»[18]: Ուստի, հայը որպէս ցեղային յատկութիւններ կրող ազգ հոյակապ է, իսկ որպէս ժողովուրդ՝ անպիտան: Յայտնի է, որ ժողովուրդ լինելու գլխաւոր յատկութիւնը մէկ գաղափարի շուրջ համախմբուածութեամբ է արտայայտւում, այլ խօսքով՝ մէկ յոյզը պէտք է դառնայ հազարաւորներինը, ինչը, ըստ Օշականի, բացակայ է մեզանում եւ թուրք փաշայի միջոցով նշում է. «*Չէք խորհիր, որ հարիւր, հազար, փասը հազար հայ, նոյնիսկ խնճոյքի համար, քով քովի չեն կրնար խմբուիլ, առանց իրար ուտելու: ...Ձեր ազգային վէրքը, իրար կործանելու ձեր ծրի անըմբռնելի մոլուցքը*»[19]: Հայկական ինքնութեան տարօրինակութիւնն էլ հենց այն է, որ ծայրայեղ է՝ հերոսներ եւ դաւաճաններ, առանց որեւէ շեղման: Գուցէ ընդոծինների[20] մասին է գրում Օշականը, երբ գրում է հայերի մասին, ովքեր թուրքից էլ ջանասիրաբար վաճառում են իրենց հայրենիքը. վաճառականներ,

հոգեւորականներ, շարքային քաղաքացիներ: Նրանց դիմագիծն անորոշ է, ուստի դժուար է նրանց դասել հայ կամ թուրք ազգի շարքին:

Ինչպէս արեւելահայի եւ արեւմտահայի, այդպէս էլ հայի եւ թուրքի ինքնութեան տարբերութիւնն ակնյայտօրէն ներկայացուում է նաեւ թուրք փաշայի եւ Մաթիկ Մելիքխանեանցի[21] զրոյցում: Ըստ էութեան այս զրոյցն ինքնութիւնների եռանկիւնի է: Մելիքխանեանցը *Մնացորդաց*ի գլխաւոր հերոս Սողոմի հակապատկերն է, արեւելահայ ինքնութեան կրողը: Նա Մոսկուայի Համալսարանի Ատամնաբուժական Բաժանմունքի ուսանող է, եկել է Արեւմտեան Հայաստան իր հայրենիքը փրկելու գաղափարի վեհութեամբ, յեղափոխական է, ծինաբանօրէն եւ մտածողութեամբ՝ հայ: Նա համոզուած է, որ արեւմտահայը քաղաքական ազատութեան կարիք ունի, ուստի «մահ կամ ազատութիւն» նշանաբանի կենսագործումը կարող է լինել փրկութեան միակ ուղին: Մաթիկը կիրթ է, համարձակ, իտիալիստ… մահուան վախը չի կարող ստուերել գաղափարի նկատմամբ նրա հաւատը: Հակադիր կողմում թուրք փաշան է. Մաթիկից ոչ-պակաս տեղեկացուած է գրականութեան, արուեստի, երաժշտութեան մասին, բայց նրան կիրթ անուանել չենք կարող: Օշականը նրբօրէն շեշտում է կիրթ հայի եւ թուրքի տարբերութիւնը: Հայը գաղափարապաշտ է, թուրքը՝ օգտապաշտ: Եթէ Մելիքխանեանցի համար Դոստոեւսկին համամարդկային մտքի գագաթնակէտ է, ով վեր է հանում մարդկային հոգու գոյութենապաշտ ճգնաժամը, ապա թուրք փաշայի համար Դոստոեւսկու գրուածքները միջոց են ռուսական ինքնութեան թերութիւնները կամ քաղաքական ծրագրերը վեր հանելու եւ ապագայում դրանք ռուսների հետ յարաբերութիւններում օգտագործելու համար… Ահա իրար են հանդիպում երկու ինքնութիւնների գագաթները՝ ամբողջացնելով իրենց ազգերի առասպելները, իտիալները եւ արժէքները. թուրք փաշան եւ շղթայակապ արեւելահայ յեղափոխականը: Խօսակցութեան լեզուն ռուսերէն է: Յայտնի է, որ ԺԹ. դարում քիչ չէին ազգի ապագան Ռուսաց Կայսրութեանը վստահողները եւ, պատահական չէ նաեւ, որ Կովկասից եկած երիտասարդը իր հետ էր բերել ռուսական օգնութեան պատրանքը: Օշականը թուրք փաշայի միջոցով զգօնութեան կոչ է անում՝ շեշտելով, որ կը գայ ժամանակ, երբ ռուսը թուրքից վատ կը վարուի հայի հետ, եւ հայը, ով անհասկանալի նրբութեամբ եւ պաշտամունքով է վերաբերում ռուսերէնին եւ ռուսական մշակոյթին, երանութեամբ կը նախընտրի կոչուել ռուս եւ ոչ՝ հայ: «*Հարիւր տարի յետոյ ձեր այդ բարգաւաճ, շէն ժողովուրդէն դժուար թէ գտնուին քանի մը տասնեակ հազար նշոյլեր, այն ալ լեռներու խորը, ու ասիկա՝ առանց դանակի, ասիկա՝ ռուս աղջիկներով: Տոսթոեւսկիով,*

Մոսկուայով, Պագունինով,-[22] եւ ապա աւելացնում...- *ռուսահայերը կէս դար յետոյ պիտի ամչնան հայ ըլլալուն, պարոն յեղափոխական*»[23]:

Հայ յեղափոխականի իտիալն ազատագրուած հայրենիքն է, իսկ թուրք փաշայինը՝ իր պետութեան հզօրացումը: Թուրք փաշան հային տեսնում է որպէս ցեղային արժէքները գերագնահատող, մեծամիտ, անմիաբան ազգ, ով «քեռի ռուսին» է վստահել ապագայի պետութեան ստեղծումը կամ այլ կերպ՝ ազգային նախագծի իրականացումը. «*Մէկ դարու մէջ դուք խաբուեցաք ձեր այդ ռուսէն նոյնքան հանդիսաւոր կերպով ուրիշ անգամ ալ: Ու պիտի խաբուիք վաղն ալ, եթէ առիթ տրուի: Ու կը խաբուիք տակաւին այսօր, աւելի քիչ խոստումներով*»[24]: Սրան հակադրւում է Մաթիկը, հակադրւում ամբողջապէս հաւատալով իր գաղափարների, իտիալների ճշմարտութեանը. «*Հրեցիք զիս աջ ու ձախ, ըսէ ձեր աւանդական քաղաքականութեան, խեղդելու համար ազատութեան մեր սրբազան, անփեղիւրալի իրաւունքը օդային խորհրդածութեանց հեղեղի մը տակ*»[25]: Թուրք փաշայի երկարաշունչ հայի նկարագրի բնութագրումը ոչ միայն երկմտելու առիթ չտուեց Մաթիկին, այլեւ նա շարունակեց վստահօրէն պնդել, որ ազատութիւնը հայի իրաւունքն է: Ցաւօք, թուրքերը, ի տարբերութիւն հայերի, դիւանագիտօրէն շատ աւելի հասուն են, եւ մինչ հայոց Ցեղասպանութիւնը, շատ լաւ էին ուսումնասիրել հայի հոգեկերտուածքը, թերութիւններն ու առաւելութիւնները, պատմութիւնը, կրօնն ու մշակոյթը: Այս է հաստատում թուրք փաշայի եւ Մաթիկի երկխօսութեան ժամանակ թուրք փաշայի հետեւեալ դիտարկումը. «*Մենք յաղթեր ենք ու դուք ծառայեր: Հինգ հարիւր տարին ձրի չ'անցնիր ժողովուրդներու գլխէն: Այնպէս որ, առանց ձեր լեզուն գիտնալու, կը յաւակնիմ ձեզ ճանչցած ըլլալ շատ աւելի, որքան դուք չէք ճանչնար մեզ*»[26]: Ի տարբերութիւն թուրքի, Արեւմտեան Հայաստանում ապրող հայը գրեթէ ոչինչ չգիտէր նրա մասին: Նոյնիսկ ծայրայեղ իրավիճակում արեւմտահայերն առաջնորդւում էին այն կանխադրոյթով, թէ թուրքերն իրենց բարեկամներն են, չեն կարող վնասել, որովհետեւ դրա համար պատճառներ չկան: Հայկական դիւանագիտութիւնն անվերջ փաստում է դրա բացակայութեան մասին: Հայի ոգին բոցավառւում է կայծակնային արագութեամբ եւ նոյն արագութեամբ էլ հանգչում է: Թուրքը կարող է սպասել դարեր, ուսումնասիրել, հետազօտել եւ ոչնչացնել: Թուրքական դիւանագիտութիւնը քաղցրաբլիթի եւ մտրակի քաղաքականութիւն է: Այն դիպուկ է ներկայացնում Օշականը. սպառնալ, ծեծել, եթէ անօգուտ է՝ խնդրել, արտասուել, սիրաշահել, եթէ այդ էլ անօգուտ է՝ քառատել եւ հրճուել սեփական անզօրութիւնից[27]: Այսպիսի ճակատագիր ունեցաւ նաեւ Մաթիկը, հայի այն ոգին, որն անհնար է կոտրել:

Օշականն առաջադրում է Ցեղասպանութեան պատճառներից միւսը. թուրքը հինգ հարիւր տարի ուսումնասիրել է հայի պատմութիւնը, հոգեկերտուածքը, թերութիւններն ու առաւելութիւնները, մտերմացել է հայի հետ, դարձել նրա «բարեկամը», որպէսզի հասկանայ՝ ինչպէս պէտք է ոչնչացնել նրան: Իսկ հայն այդ հինգ հարիւր տարում միայն մէկ բան սովորեց «*Թուրքիայում աղաւնիներին չեն սպանում*» եւ յամառօրէն կառչած մնաց իր ինքնութեան այդ մնացորդին՝ միամտութեանը եւ պարզամիտ հաւատին: Իսկ ինչպիսի՞ թուրքի պէտք է իրականում ճանաչի արեւմտահայը: Չէ՞ որ երեւոյթը սահմանելիս այն պէտք է դիտարկել *որոշակի* համակարգում եւ *որոշակի* փոխյարաբերութեան մէջ: Ուրեմն, ինչպիսի՞ ինքնութիւն ունի թուրքը հայի հետ յարաբերուելիս: Օշականի *Մնացորդաց*ը թոյլ է տալիս այս հարցին միանշանակ պատասխանել՝ քինախնդրական[28] ինքնութիւն: Թուրքն այդ ինքնութեան կրողն է, ինչ-որ իմաստով ցեղային առումով նուաստ, թոյլ եւ խեղճ. սա է վկայում թուրք փաշայի կերպարը, ով ջանասիրաբար համոզում է, որ թուրքը ազնուացեղ է, բոլոր ժողովուրդներից ամենաբարին, ամենահամբերատարը եւ մեծամիտ հայի կողմից չգնահատուածը եւ չյարգուածը: Սա է վկայում թուրք մայրերի հրճուանքը, ովքեր «*...ափեցին մեր կիները էգ ափելութեամբ մը: Ածականը իմաստ ունի հոս: Ու կ'երգէին մեգերա այդ կիները այդ օրերու արիւնոտ երգը, զոր աշուղին մէկը, անշուշտ թաթխելէ յետոյ իր սազը փասնհինգամեայ փղու մը արիւնին մէջ, հաներ էր դէպի ցեղային զգայութիւն իր զգայութիւնը...*»[29]: Իսկ թուրք փաշան՝ թուրք մտաւորականը, ատում է հային ցեղային ատելութեամբ. նա ինչ-որ իմաստով նուաստացած է զգում իրեն հայի առաջ: Սա է վկայում թուրք փաշայի այն միտքը, թէ հայ յեղափոխականը արդեօք զարմացած չէ՞ իր դիմաց տեսնելով կիրթ թուրքի, չէ՞ որ միայն հայի առաքելութիւնն է լինել կիրթ, զարգացած, հմուտ: Հայ յեղափոխականի ապագայի հայրենիքը քաղաքական ազատութիւնն ու որպէս հետեւանք՝ պետութեան կառուցումն է: Թուրք փաշայի ապագայի հայրենիքը պանթուրքիզմն է՝ իր ցեղի նորոգումը, սրբագրումը եւ հզօրացումը:

Հայի եւ թուրքի ինքնութեան տարբերութիւններն ակնյայտ են ազգի, պետութեան գաղափարների շուրջ: Ի՞նչ էին այս երկու ազգերն ակնկալում ապագայից, ինչպիսի՞ յաւակնութիւններ ունէին, ինչպիսի՞ պետութիւն էին ցանկանում ստեղծել, եւ որո՞նք էին նրանց գործողութիւններն այդ ուղղութեամբ: Հայի պարագայում հնարաւոր է բաւականին պերճախօս լինել անհատական առաքինութիւնները թուարկելիս: Աւելին, կարելի է գովերգել, հպարտանալ, բայց երբ պէտք է խօսել պետութեան իտիալի եւ հայի «ձգտելիք աշխարհի» մասին, բառերն աղքատիկ են դառնում, իսկ բովանդակութիւնը զուսպ եւ

հակիրճ, ի տարբերութիւն թուրքի, որն այս ուղղութեամբ բաւականին պերճախօս է: Մինչեւ ԺԹ. դար օսմանցին եւ թուրքը չտարբերակուող հասկացութիւններ էին, աւելին՝ թուրք լինելը պատուաբեր չէր եւ «*նոյնիսկ պատմութեան մէջ չբացայայտուած անյայտ*», բայց ահա՝ «*Կարճ ժամանակ պահանջուեց, որպէսզի թուրք կոչուելը նախատինք համարող զինուորները բարձրաձայն գոչեն «Ես հպարտ եմ, որ թուրք եմ»*, սկիզբ դրուեց այնպիսի ազգայականութեան, որի հիմքն ազգային նիհիլիզմն է. ուրիշինը բռնի ժխտելու միջոցով սեփականի հաստատումը[30]: Ժխտելու ճանապարհը սահուն էր, քանի որ թուրք լինել - իրաւացիօրէն շեշտում է Օշականը - նշանակում է ամէն գնով տիրապետել իրաւունքին: Իսկ «նոր թուրքը» մշակոյթը նորոգելուց առաջ, նորոգել էր իր գիտակցութիւնը, Օշականի բառերով՝ ուղեղը:

Ամփոփելով վերը շարադրուածը, պէտք է նշել, որ Օշականի *Մնացորդաց*ը հայի թերութիւններն ու առաւելութիւնները, անցեալն ու ապագան ամբողջացնող պատկեր է, մի ինչ-որ իմաստով մեզ փոխանցուող ազգային «տարազի» ժառանգութիւն, որտեղ թուրքը միջանկեալ, թեթեւակի նշմարուող մի հիւղ է, հայի ինքնութիւնն անդրադարձնող հայելի: Այո՛, երբեմն պէտք է հարցնել «*Իսկ գիտէ՞ք, թէ ինչ է հայ ժողովուրդը. այդ այն ժողովուրդն է, որը ամբողջ մարդկութեան մէջ ամենախորհրդաւոր պատմութիւնն ունի...*»[31]: Երբեմն պէտք է կանգ առնել այնտեղ, որտեղ աւարտւում է ինքնաճաղկումը եւ ազգային գիտակցութիւնը տեսողութիւն է ձեռք բերում՝ մեղաւորութիւնից, խեղճութիւնից եւ յուսահատութիւնից անկախ: Օշականի *Մնացորդաց*ը փաստում է. հայի ցեղային մաշուածութիւնը գերակայ է թուրքի կարկատած ինքնութեան նկատմամբ: «*...Թուրքը Արեւելքին աղտն է, կեղը, թարախը: Անոր հոգին դեռ աւազներուն չոր արմատներն իսկ անպատկ է կենսաւորելու: Անցէք Պոլիսէն մինչեւ Հինտիգուշ, ու՛ր որ կանանչ կայ, ու՛ր որ երկու ծաղիկ աճեր կամ ութ-տասը քար կամարի մտեր, գիտցէք թէ մեր շունչն է կատարողը այդ հրաշքին: Ու մեր շարականները կը պատմեն մեր չմեռնող կենդանութիւնը*»[32]: Օշականը փորձում է տալ ոչ-այնքան երեւոյթի հայելային անդրադարձը, որքան երեւոյթն իր մասնիկայնութեան մէջ, այսինքն՝ երեւոյթն իր տարրերի կառուցուածքով եւ յարաբերութեամբ:

Ընդհանուրից գալով մասնաւորին պէտք է նշել մեր բուն ինքնութեանը բնորոշ յատկութիւնները, որոնք նկատել է Օշականը. աշխարհի ճանաչողութեան իտիալիստական մօտեցումը՝ երաժշտութիւն, բանաստեղծութիւն, ինչին հակադրւում է թուրքի՝ աշխարհը ճանաչելու եւ դրան յարմարուելու նիւթապաշտական մօտեցումը: Աշխարհաճանաչման այս մօտեցումներին էլ համապատասխանում են երկու ազգերի իտիալները՝ պետութեան, ազգի, հայրենիքի նկատմամբ.

հայը քաղաքական ազգ չէ, ինչն իրենից ենթադրում է պետական մտածողութիւն (հասարակական շահի գերակայութիւն), դիւանագիտութեան առկայութիւն, քաղաքական փորձառութիւն, ի տարբերութիւն թուրքի, որը հմուտ է այդ գործում: Թէեւ հայը քաղաքական առումով զիջում է թուրքին, բայց ակնյայտ առաւելութիւն ունի մտաւոր, բարոյական եւ արժէքային մօտեցումներում՝ մշակոյթ, լեզու, կրօն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յակոբ Օշականն (Յակոբ Քիւֆէճեան, Բուրսա 1883-Հալէպ 1948) իր ժամանակի հանրագիտակ մտածողներից է: Նրա գրչին են պատկանում *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան* բազմահատորեակը (գրականագիտական-վերլուծական հարուստ նիւթ պարունակող մի բացառիկ աշխատութիւն), գրականագիտական, գրաքննադատական, գրական-վերլուծական խորունկ ուսումնասիրութիւններ, նաեւ՝ բաղդատական ուսումնասիրութիւններ (*Զուգակշիռ Արեւելահայ Եւ Արեւմտահայ Գրականութեանց,* խմբ.՝ Պ. Սնապեան, 50ամեակի Հրատ. Թիւ 4, Պէյրութ, Տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1999) նաեւ թատերգութիւններ, գրաքննադատական գործեր, վէպեր, վիպակներ ու պատմուածքներ, որոնք ի մասնաւորի նիւթ ունեն հայ-թուրք յարաբերութիւնների այլեւայլ երեսակները: Օշականը եղել է *Մեհեան* եւ *Բարձրավանք* հանդէսների խմբագիրը: Ցեղասպանութեան տարիներին թուրքական կառավարութեան կողմից ձերբակալուել է, սակայն կարողացել է փախչել, ինչը նա համարում է ճակատագրի պարգեւ: Օշականին են նուիրուած հետեւեալ գործերը. Նշան Պէշիկթաշլեան, *Յակոբ Օշական: Կեանքը Եւ Գործը Իրաւ Երգիծաբանութիւնով,* Փարիզ, Տպ. Յ. Ֆ. Ճարեան, 1947. նաեւ՝ Գրիգոր Պըլտեան, *Մարտ*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1997. նաեւ՝ Կիմ Աղաբէկեան, *Յակոբ Օշական. Սփեղծագործական Աշխարհի Արահետներում*, Երեւան, Զանգակ-97, 2010. նաեւ՝ Ալբերտ Կոստանեան, *Բացարձակի Որոնում*, Երեւան, Սարգիս Խաչենց, 2004 եւն.:

[2] Օշականի *Մնացորդաց* վէպը գրուել է 1932-1934ին: Այն բաղկացած է երեք հատորից: Առաջին հատորը վերնագրուած է «Արգանդի Ճամբով», երկրորդ հատորը՝ «Արեան Ճամբով» իսկ երրորդ հատորը՝ «Դժոխք»: Այն, ինչպէս նշում է հեղինակը, նպատակ ունի ցոյց տալ բռնապետութեան մէջ արտայայտուող հայկական հոգեբանութիւնը, հայկական մնացորդները փրկելու ձգտումը ինչպէս նաեւ երկու ժողովուրդների ինքնութիւնների բախումը: *Մնացորդաց*ի առանձին հատուածներ նախ հրատարակուել են Գահիրէի *Յուսաբեր*ում, ապա լոյս տեսել ամբողջութեամբ, առանձին գրքով:

[3] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Գ Հատոր*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1988, էջ 87:

[4] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 84

[5] Friderich Nietzsche, *Antikhrist, Rojdenie Tragedii Ili Ellennstvo I Pessimizm*, (Հակաքրիստոս, ողբերգության ծնունդը կամ հելլենականութիւնը եւ յոռետեսութիւնը), Մոսկուա, Աստրէլ Հրատ., 2011, էջ 195-198:

[6] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 234:

[7] Նոյն, էջ 235:

[8] David Lang, *Armyane Narod-Sozidatel* (Հայերը. արարող ժողովուրդ), Մոսկուա, Ցենտպոլիգրաֆ, 2004, էջ 32:

[9] Միքայէլ Նալբանդեան, *Հրապարակախօսական Հատընտիր*, Երեւան, Հայաստան, 1979, էջ 32:

10 Րաֆֆի, *Երկեր, Հտր. 10*, Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 501:

[11] Իւանը ռուս գրող Ֆէոդոր Դոստոեւսկու *Կարամազով Եղբայրներ* վէպի հերոսներից մէկն է: Վէպը գրուել է 1879-80ին: Դոստոեւսկին նպատակադրուել է այս վէպը որպէս «Մեծ Մեղաւորի Պատմութիւնը» վիպաշարի առաջին մաս ներկայացնել, սակայն մահուան պատճառով այդ մտայղացումը չի իրագործուել: Վէպում հեղինակն արծարծում է փիլիսոփայական հարցեր Աստծոյ, ազատության եւ բարոյականութեան մասին: Ռոսկոլնիկովը Դոստոեւսկու *Ոճիր Եւ Պատիժ* (հրապարակուել է 1866ին) վէպի հերոսն է: Վէպում ներկայացւում են տուեալ ժամանակի հասարակութեան գոյութենական ճգնաժամը, օտարուածութեան հիմնահարցը եւ դրա ընկալումն ու արձագանգը ստեղծագործ անհատի կողմից:

[12] Լինելու եւ ունենալու հիմնահարցին անդրադարձել է Էրիկ Ֆրոմմը՝ բովանդակային առումով դիտելով այս երկուսը որպէս հակադիր հասկացութիւններ (E. Fromm, *Imet Ili Bit?* (Ունենա՞լ, թէ՞ լինել), Մոսկուա, Պրոգրէս Հրատ., 1990):

[13] Հրանտ Դինք, *Երկու Մօր Ժողովուրդ, Երկու Հեռու Հարեւան,* Երեւան, «Գրափունջ» ՍՊԸ, 2009, էջ 21:

[14] Կոստան Զարեան, *Անցորդը Եւ Իր Ճամբան*, Երեւան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆօ, 2010, Էջ 53:

[15] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 11:

[16] Նոյն, էջ 21:

[17] Hegel, *Politicheskie Proizvedeniya* (Քաղաքագիտական աշխատութիւններ), Մոսկուա, Նաուկա Հրատ., 1978, էջ 65-66:

[18] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Ա. Հտր.*, Անթիլաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1988, էջ 451:

[19] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 245:

[20] Հին նահապետական տունը, որպիսին եղել է Հայկինը՝ բաղկանում էր հարիւրաւոր մարդկանցից: Սրանց մի մասը բուն Նահապետի արիւնակից էին, նրա մերձաւոր կամ հեռաւոր սերունդները, սրանք են իսկապէս «ազգային օճախ» կազմողները: Սրանց հետ նոյն տանը ապրում էին, իբրեւ մշտական անդամներ՝ օտար արիւնից մարդիկ, որոնք եւս ունէին իրենց սերունդները, բայց տան բուն անդամների իրաւունքը չունէին, ինչպիսիք էին

մշակները, սպասաւորները եւն.: Սրանք են, որ կոչւում են ընդոծին (Մովսէս Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 367):

[21] Մաթիկ Մելիքխանեանցն իրական կերպար է, ով եկել էր Արեւմտեան Հայաստան, ազատագրական գաղափարներով: Այն, ինչ նկարագրել է Օշականն իրական հիմք ունի, ընդ որում՝ Մաթիկի եղերական մահը: Օշականն այնքան է տպաւորուել այս կերպարով, որ 1930ականների առաջին կեսէրին առանձին վէպ է գրել *Մաթիկ Մելիքխանեանց* վերնագրով (առանձին գիրքով հրատարակուած Պէյրութ, 2010):

[22] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 227

[23] Նոյն, էջ 233:

[24] Նոյն, էջ 238:

[25] Նոյն, էջ 282:

[26] Նոյն, էջ 229:

[27] Օշականն անմիջականօրէն, որեւէ ձեւակերպմամբ չի մատնանշում վերոնշեալ դրոյթը, թէեւ թուրք փաշայի եւ Մաթիկի միջեւ ծաւալուած երկխօսութեան բովանդակութիւնը թոյլ է տալիս ամփոփել եւ կատարել նման եզրակացութիւն (Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 221-294):

[28] Քինախնդրականը (resentmental) հոգեւոր եւ ընկերաբանական առումով ստորին աստիճանում գտնուող մարդու կամ ազգի յատկութիւնն է, որը վրիժառութեամբ, թոյնով է լցուած իրենից բարձր գտնուող մարդու կամ ազգի նկատմամբ:

[29] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Բ. Հտր.*, Անթիլիաս, Տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1988. էջ 331:

[30] Այշէ Հիւր, «Բարբարոս Թուրքից» «Մուսուլման Թուրքը» http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-turkey-ar/from-barbarian-turk-to-muslim-turk-armenian :

[31] Զարեան, *Անցորդը*, էջ 119

[32] Օշական, *Մնացորդաց, Բ. Հտր.*, էջ 141-142:

OBSERVATIONS ON ARMENIAN IDENTITY: HAKOB OSHAKAN'S *MNATSORTATS* (REMNANTS) NOVEL (SUMMARY)

MOVSISYAN NANE
monane@yandex.ru

Through insights from Hakob Oshakan's novel, *Mnatsortats* (Remnants) the article sheds light on certain peculiarities of Armenian identity, commonalities with and differences from Turkish identity.

The article compares and contrasts the diverse mindsets and, accordingly, approaches of the Armenian and the Turk regarding homeland and statehood. The author argues that Armenian identity is driven by an idealistic model based on vision and perception, music and poetry, while, on the contrary, a Turk's model of world recognition and adaptation is materialistic.

ՍԵԲԱՍՏԻԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՀՆՉՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐԴԱՆ Զ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
vz.petrosyan@mail.ru

Հնչոյթաբանութեան տեսութեան հիմնահարցերով զբաղուել են տարբեր լեզուաբանական դպրոցների ներկայացուցիչներ, սակայն յայտնի է, որ այդ գիտակարգի ձեւաւորումը առաւելապէս կապւում է կառուցուածքային լեզուաբանութեան, մասնաւորապէս՝ Պրահայի դպրոցի եւ ամերիկեան նկարագրական լեզուաբանութեան (descriptive linguistics) ներկայացուցիչների գործունէութեան հետ: Հնչոյթաբանութիւնը (phonology) ձեւաբանութեան (morphology), աւելի ճիշտ՝ ձեւոյթաբանութեան (morphemics) հետ միասին դիտւում էր լեզուաբանութեան այն բնագաւառներից մէկը, որում աւելի հեշտ էր կիրառել կառուցուածքային լեզուաբանութեան սկզբունքները, ի տարբերութիւն, օրինակ, բառագիտութեան, յատկապէս՝ իմաստաբանութեան[1]: Այս առումով կառուցուածքային լեզուաբանութեան աւանդական կենտրոններից հետեւողական էին յատկապէս դանիական դպրոցի ներկայացուցիչները, որոնց, սակայն, առաւելապէս զբաղեցրել է ընդհանուր լեզուաբանական տեսութիւն մշակելու գաղափարը: Ուստի նրանք հնչոյթաբանական (phonemic) քիչ թէ շատ ամբողջական ուսմունք չստեղծեցին: Դանիական կառուցուածքաբանութիւնը ամէնից հետեւողականը եղաւ Ֆերդինանտ Դը Սոսիւրի «Լեզուն ձեւ է եւ ոչ թէ սուբստանց» կանխադրոյթը կիրառելու հարցում: Սակայն 1960ականներին կառուցուածքային լեզուաբանութեան նոր սերնդի ներկայացուցիչներին, որոնց շարքերը համալրելու յայտ էր ներկայացրել նաեւ Սեբաստիան Կ. Շահումեանը, լեզուական կառուցուածքը բացայայտելու առումով այլեւս չէին գոհացնում աւանդական դպրոցների կողմից կիրառուող մեթոդները եւ նրանց հետեւողականութիւնը: Շահումեանը դրանով է բացատրել ինչպէս *երկասփիճան հնչոյթաբանութեան* (այսուհետեւ՝ ԵՀ), այնպէս էլ կառուցուածքային լեզուաբանութեան նոր կաղապարի մշակման անհրաժեշտութիւնը[2]:

ԵՀի ամբողջական շարադրանքը Շահումեանը ներկայացրել է «*Problemy Teoreticheskoy Fonologii*» («Տեսական հնչոյթաբանութեան հիմնահարցերը»)[3] գրքում, ապա զարգացրել է յետագայում հրապարակած յօդուածներում:

1) Հնչոյթաբանական ուսմունքները դասակարգելով երեք տեսակի՝ ֆիզիկական, յարաբերակցային-ֆիզիկական եւ յարաբերակցային, Շահումեանի կարծիքով իր ժամանակի գիտութեան չափանիշներով հետաքրքրութիւն են ներկայացնում միայն երկրորդ եւ երրորդ տեսակներին վերաբերողները, իսկ առաջինները (Լեւ Վ. Շչերբա[4] եւ Դանիէլ Ջոունզ) այլեւս ունեն միայն պատմական նշանակութիւն: Շահումեանը զուտ պատմական նշանակութիւն է վերագրում նաեւ *հնչոյթի* (phoneme) հոգեբանական հայեցակարգին՝ ի դէմս Բոդուէն Դը Կուրտենէի եւ Է. Սեպիրի հնչոյթաբանական պատկերացումների: Երկրորդ տեսակին են վերաբերում Նիկոլայ Ս. Տրուբեցկոյի[5], Լուի Ելմսլեւի[6], Ուիլեամ Թուոդէլի[7] հնչոյթաբանական հայեցակարգերը, ինչպէս նաեւ 1950ականներին ԱՄՆում Ռոման Եակոբսոնի, Գիւնար Ֆանտի, Մորիս Հալէի եւ Ե. Չեռիի կողմից մշակուած երկատումային հնչոյթաբանութիւնը[8]:

2) ԵՀի գլխաւոր առանձնայատկութիւնը վերացարկման երկու՝ *դիտարկման* եւ *կոնստրուկտի* (construkt, կառոյցք) աստիճանների տարբերակումն է, ըստ որոնց բնութագրւում են լեզուական միաւորները: Այս սկզբունքը Շահումեանը փոխառել է «ֆիզիկայի եւ միւս վերացական տեսական գիտութիւնների» ոլորտից (18): ԵՀի մեթոդաբանական հիմքը *վարկածային-արտածական մեթոդն* է (hypothetical-deductive method)՝ որպէս ընդհանուր գիտական մեթոդ: Վարկածային-արտածական մեթոդի համար նշւում է երկու հիմնական առանձնայատկութիւն. 1) այն «պահանջում է որոշակի տեսական հիմնախնդրի լուծմանը ենթակայ փաստերի խիստ ընտրութիւն» (19), 2) նրա կիրառումը «յանգեցնում է ոչ այնքան նոր փաստերի բացայայտմանը, որքան արդէն յայտնի փաստերը նոր լոյսի ներքոյ լուսաբանելուն» (20): Դիտարկման աստիճանում քննելի են ֆիզիկական, նիւթական բնութագիր ունեցող միաւորներն ու իրողութիւնները (օր.՝ հնչիւնները/sound), իսկ կառոյցքի աստիճանում՝ անմիջականօրէն ոչ-դիտարկելի, այսինքն՝ վերացական միաւորներն ու իրողութիւննե-

րը (օր.՝ հնչոյթները): Սա այն հիմնական սկզբունքն է, որով ԵՀը տարբերւում է հնչոյթաբանական միւս հայեցակարգերից: Ի տարբերութիւն հնչոյթաբանութեան միաստիճան հայեցակարգերի (այդպիսիք են համարւում միւս բոլոր տեսութիւնները), որոնցից որոշների՝ հնչոյթին տրուած բնութագրերում առկայ է ֆիզիկական բաղադրիչը (հմմտ. օր.՝ բաշխական, ձայնաբանական-արտաբերական եւ գործառական տեսութիւնները[9]),- երկաստիճան հայեցակարգում հնչոյթներ են համարւում «այն բաղադրիչները, որոնք իրենց մէջ ֆիզիկական ոչինչ չեն պարունակում» (35): Այլ խօսքով, ըստ *երկաստիճան հնչոյթաբանական հայեցակարգի* (ԵՀՀ)՝ հնչոյթները գիտական վերացարկումներ են: Հնչոյթները վերացական միաւորներ է համարում նաեւ Տրուբեցկոյը, որովհետեւ նրա կարծիքով դրանք խօսքում կիրառուող որոշակի հնչիւնների լեզուական համարժէքներն են եւ յաճախ հնչոյթաբանական մէկ միաւորի մէջ համատեղում են ձայնաբանական զգալիօրէն տարբեր բաղադրիչներ (հմմտ. «Հնչիւնները երբեք բուն հնչոյթները չեն, որքանով հնչոյթը չի կարող պարունակել հնչոյթաբանօրէն ոչ-էական ոչ մի գիծ, ինչը խօսքի հնչիւնի համար փաստօրէն անխուսափելի է: Որոշակի հնչիւնները, որոնք լսւում են խօսքում, աւելի շուտ հնչոյթների նիւթական խորհրդանիշներն են»[10]): ԵՀՀում հնչոյթները ոչ միայն վերացական, այլեւ բացառապէս յարաբերակցային միաւորներ են, այն է՝ *կառոյցքներ*[11], այսինքն՝ «գիտութեան չդիտարկուող առարկաների մասին հասկացութիւններ», որոնք կանխադրւում են «տարրական հասկացութիւնների հետ այսպէս կոչուած համապատասխանութիւնների սկզբունքի ճանապարհով» (34), իսկ «Հնչիւնները ուղղակի դիտարկմամբ տրուած բաղադրչներ են, որոնք ծառայում են հնչոյթների սուբստրատներ» (35):

Վերացարկման երկու տարբեր աստիճանների պատկանող միաւորների՝ հնչիւնների եւ հնչոյթների միջեւ կապ ստեղծելու համար կանխադրւում է յատուկ «վարկածային յարաբերութիւն», որին Շահումեանը տալիս է «մարմնաւորման յարաբերութիւն» անուանումը՝ «մարմնաւորում» եզրոյթը փոխառելով *կիբեռնետիկայի* ոլորտից (35): Հնչոյթների եւ հնչիւների միջեւ մարմնաւորման յարաբերութեան կանխադրումը նրան հիմք է տալիս խօսելու նոր որակի հնչիւնների առկայութեան մասին, որոնք «ոչ

թէ պարզապէս ֆիզիկական բաղադրիչներ են, այլ յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչներ», այսինքն՝ դարձեալ որոշակի վերացարկումներ: Դրանց նա տալիս է «հնչոյթային սուբստրատներ» անուանումը: Այդպիսով, նա տարբերակում է *հնչիւնի* հասկացութիւնը, *հնչոյթային սուբստրատի* հասկացութիւնը եւ *հնչոյթի* հասկացութիւնը, որոնցից առաջինները ֆիզիկական բաղադրիչներ են, երկրորդները՝ յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչներ, իսկ երրորդները՝ «մաքուր յարաբերակցային բաղադրիչներ, այսինքն՝ կառոյցքներ» (37): Այսպէս, tš յաջորդականութիւնը մարմնաւորում է երեք հնչոյթային սուբստրատ՝ tš(=«č») իսպաներէնում եւ լեհերէնում, t(«t») ու š(«š») անգլերէնում եւ գերմաներէնում: ԵՀի անհրաժեշտութիւնը հիմնաւորելու նպատակով Շահումեանը նշում է միաստիճան տեսութիւններին, մասնաւորապէս, Տրուբեցկոյի եւ Ելմսլեւի հնչոյթաբանական հայեցակարգերին բնորոշ՝ *հնչոյթի փոխակերպման* (transposition) եւ *հնչոյթի յարացուցային (paradigmatic)* ու *շարակարգային (sintagmatic) նոյնականացման անփոխարինելիութիւնները* (հակօրինութիւններ) եւ առաջարկում դրանց յաղթահարման հնարաւորութիւններն ըստ երկաստիճան տեսութեան: Այսպէս, 1) հնչոյթաբանական եւ ոչ-հնչոյթաբանական հակադրութիւնների, 2) հնչոյթաբանական միաւորի՝ որպէս հնչոյթաբանական հակադրութեան անդամի, 3) հնչոյթի՝ որպէս տուեալ լեզուի տեսանկիւնից անտրոհելի նուազագոյն միաւորի մասին Տրուբեցկոյի հիմնարար դրոյթները յանգեցնելով՝ 1) «հնչոյթները նշանակողների տարբերակմանը ծառայող բաղադրիչներ են» եւ 2) «հնչոյթները ձայնաբանական բաղադրիչներ են» դրոյթներին (24), Շահումեանը նշում է, որ եթէ առանձնաբար այդ դրոյթները ճիշտ են, ապա ամբողջութեան մէջ դրանք հակասում են մէկը միւսին, որովհետեւ «եթէ ճիշտ է, որ հնչոյթները ձայնաբանական բաղադրիչներ են, ապա այդտեղից հետեւում է, որ նրանք չեն կարող փոխակերպուել ֆիզիկական սուբստանցի այլ ձեւերի, այլապէս նրանք կը դադարեն լինել իրենք, այսինքն՝ ձայնաբանական բաղադրիչներ» (24): Ըստ Շահումեանի, ԵՀը այդ տեսական դժուարութիւնը յաղթահարում է՝ վերացարկման երկաստիճան մեթոդի կիրառումով եւ ֆիզիկական (=սուբստանցիոնալ) միաւորի՝ հնչիւնի եւ յարաբերակցային միաւորի՝ հնչոյթի միջեւ

կանխադրելով յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչը՝ *հնչոյթային սուբստրատը*:

Ինչպէս հնչոյթը, այնպէս էլ յարացուցային եւ շարակարգային հակադրութիւնները համարելով «առաջնային, չորոշակիացող հասկացութիւններ»՝ նա առաջարկում է հետեւեալ օրէնքը. «…. ցանկացած հնչոյթ պիտի հակադրութեան մէջ գտնուի առնուազն մէկ հնչոյթի նկատմամբ յարացուցային առանցքի վրայ եւ առնուազն մէկ հնչոյթի նկատմամբ շարակարգային առանցքի վրայ» (37):

Այս առնչութեամբ պիտի նկատել, որ Շահումեանը, յատոյթային մակարդակում տարբերակելով հնչաբանական բաղադրիչների վերացարկման երկու աստիճան, իրականում տարբերակում է հնչաբանական երեք միաւոր, որոնցից մէկը՝ «հնչոյթային սուբստրատը», կապող՝ միջանկեալ օղակի դեր է կատարում միւս երկուսի միջեւ:

3) Հնչոյթաբանական այլ տեսութիւններում (գործառական, բաշխական եւն) ընդհանուր առմամբ հնչոյթի եւ նրա կիրառական տարբերակի (= հնչիւնի, այլահնչակի, փոփոխակի եւն) յարաբերակցութիւնը դիտւում է որպէս դասի եւ նրա որոշակի ներկայացուցչի յարաբերակցութիւն. հնչոյթն ընկալւում է որպէս հնչիւնների դաս: Ըստ ԵՀի՝ հնչոյթի եւ հնչիւնի (կամ՝ *այլահնչակի*/*allophone*) միջեւ յարաբերակցութիւնը չի կարող լինել դասի եւ նրա անդամի, այսինքն՝ սեռի եւ տեսակի յարաբերակցութիւն, որովհետեւ դրանք պատկանում են վերացարկման տարբեր աստիճանների: Հնչոյթ-հնչիւն անցման շահումեանական սխեման բազմաշերտ է. այլահնչակի հասկացութիւնը փոխարինելով *հնչոյթակերպի* (phonemoid) հասկացութեամբ՝ դիտարկման աստիճանում նա գերադասում է խօսել «որոշակի հնչոյթակերպի» եւ «վերացարկուած հնչոյթակերպի» մասին, որոնցից առաջինը անհատական հնչիւնն է՝ որպէս «անհատական հնչոյթի սուբստրատ» (a_1, a_2, a_3…), իսկ երկրորդը՝ անհատական հնչիւնների դասն է՝ որպէս «նոյնական անյատական հնչոյթների սուբստրատ» (a): Կառոյցքների աստիճանում դրանց համապատասխանում են «որոշակի հնչոյթները» («a_1», «a_2» «a_3», …) եւ «վերացարկուած հնչոյթը» («a») (46): Ըստ այդմ՝ «անցումը հնչիւնի հասկացութիւնից հնչոյթի հասկացութեանը տեղի է ունենում անհատական հնչ-

իւններից դէպի անհատական հնչոյթները՝ անհատական հնչոյթային սուբստրատների միջոցով» (41):

Բաղադրիչների առանձնացման նշուած սկզբունքը հետեւողականօրէն կիրառւում է ինչպէս *ենթահատոյթային* (subsegmental), այնպէս էլ *վերյատոյթային* (supersegmental) մակարդակներում: Ենթահատոյթային մակարդակում ԵՀը հնչաբանական որոշակի կարգավիճակ է վերագրում «տարբերակիչ տարրերին» (կամ՝ տարբերակիչ յատկանիշներին): Միմեանցից տարանջատելով *ձայնաբանական յատկութիւնը* եւ *տարբերակիչ բաղադրիչը*՝ կառոյցքի աստիճանում սահմանազատւում են «որոշակի տարբերակիչներ» («T_1», «T_2», «T_3»….) եւ «վերացարկուած տարբերակիչ» («T»), իսկ դիտարկման աստիճանում՝ «որոշակի տարբերակիչակերպեր» (T_1, T_2, T_3….) եւ «վերացարկուած տարբերակիչակերպ» (T) (52): Վերհատոյթային մակարդակում Շահումեանը տարբերակում է *կուլմինատորի* (culminator)[12] հասկացութիւնը, որի տարատեսակներն են *առոգանոյթը* (prosodema) եւ *երաժշտականութիւնը* (musicality, musicalness): Առոգանոյթը «ազդանշանում է, թէ որքան բառոյթներ, բառեր կամ բառերի խմբեր կան խօսքային հոսընթացում», երաժշտականութիւնը «ազդանշանում է, թէ որքան են հնչոյթաբանական վանկերը խօսքային հոսընթացում» (74):

4) Վարկածային-արտածական մեթոդը հնչոյթաբանական վերլուծութեան մէջ կիրառելիս Շահումեանն առաջնորդւում է հնչոյթի եւ նշանակութեան (=իմաստի), լայն առումով՝ հնչոյթի եւ լեզուական նշանի (marker) յարաբերակցութեան այն պատկերացումով, ըստ որի՝ *հնչոյթները լեզւում ծառայում են ոչ թէ նշանակուողների (signified), այլ՝ նշանակողների (significant, signifier) տարբերակմանը:* Դա նոյնպէս ԵՀի հայեցակարգային դրոյթներից է, որով այն սահմանազատւում է հնչոյթաբանական այլ ուսմունքներից: Ի տարբերութիւն մինչեւ 1950ականները մշակուած տեսութիւնների, որոնք, անկախ հնչոյթի բնորոշման ելակէտից կամ առհասարակ նրան վերագրուած յատկութիւններից, ընդհանուր առմամբ հնչոյթի բնութագրական յատկանիշը կամ դրանցից մէկն են համարում աւելի բարձր մակարդակի միաւոր(ներ)ի՝ ձեւոյթի եւ բառի կազմում իմաստատարբերակիչ դեր ունենալը (Դը Կուրտենէ, Շչերբա, Բլումֆիլդ, Տրուբեցկոյ եւ ուրիշներ), ապա

ըստ ԵՀի՝ հնչոյթը ծառայում է համեմատուող միաւորների հնչիւնական պատեանների՝ *նշանակողների* (եւ ոչ թէ՝ *նշանակուողների*) տարբերակմանը[13]: Այդպիսի շրջադարձի համար հիմք են եղել, մի կողմից, հնչոյթաբանական տարբեր ուսմունքներում (Տրուբեցկոյի, Ելմսլեւի, Թուոդէլի) նկատուած անտինոմիաները (դրանցից մէկին մենք անդրադարձանք), միւս կողմից՝ լեզուներում առկայ բառային կրկնակները (doubles) (հմմտ. ռուսերեն kr*y*nka-kr*i*nka՝ «կուլա, պուլիկ», tsell*oo*loza-tsell*u*loza՝ «թաղանթանիւթ», dro*f*a-dro*kh*a՝ «(թռչուն) մեծ արոս», *s*istern-*ts*istern՝ «ցիստեռն», matra*s*-matra*ts*՝ «ներքնակ» եւն.[14]), որոնք ակնյայտ հակասութեան մէջ են հնչոյթի՝ իբրեւ իմաստատարբերակիչ միաւորի բնորոշման հետ: Ուստի, ըստ Շահումեանի, նպատակայարմար է, որ նշանակողների նոյնութիւններն ու տարբերութիւնները սահմանելիս հնչոյթաբանութիւնը իմաստաբանական չափորոշիչները փոխարինի «խօսողների լեզուաբանական պահուածքի չափորոշիչներով» (16):

ԵՀն «խօսողների լեզուաբանական պահուածքի տուեալները» դիտում է ելակէտային փաստեր, «որոնց համար մենք բացատրութիւններ ենք փնտռում հնչոյթաբանական տուեալների միջոցով»: Լեզուաբանական պահուածքի փաստերը, ըստ Շահումեանի, «խորքային լեզուաբանական օրինաչափութիւնների տրամաբանական հետեւանք են, որոնք անհրաժեշտ է բացայայտել խիստ լեզուաբանական վերլուծութեան ճանապարհով» (17): Միաժամանակ նա առաջարկում է գործառական հնչոյթաբանութեան մէջ կիրառուող «հնչոյթաբանական հակադրութեան» հասկացութիւնը փոխարինել «կոնտրաստի» հասկացութեամբ: Պիտի ասել, որ այդ երկու հասկացութիւններն էլ նա փոխառել է ամերիկեան կառուցուածքային լեզուաբանութիւնից (Զ. Հառիս, Չ. Հոքէտ), մասնաւորապէս՝ նրա մի դրսեւորումը համարուող սերող լեզուաբանութիւնից (Նոըմ Չոմսկի), որը նոյնպէս առաջարկում էր լեզուն բացառապէս ձեւային չափորոշիչներով վերլուծելու սկզբունքներ[15]:

Որ հնչոյթաբանական վերլուծութեան իմաստային չափորոշիչը բացարձակ ընդգրկում չունի, վերոյիշեալ օրինակներից բացի, վկայում են նաեւ համանունները, որոնց իմաստային տարբերակումը պայմանաւորուած է խօսքային իրավիճակով (հմմտ.

[zastavit'] 1. «մէկին ստիպել մի բան անել» եւ 2. «ցանկապատել, ծածկել» (=zagaradit'), vyderzhka 1. «ամրութիւն» եւ 2. «մէջբերում», metr 1. «100 սանտիմետր», 2. «բանաստեղծական չափ» եւ 3. «ուսուցիչ» եւն՝ ռուսերէնում,- right- 1. «իրաւունք», 2. «աջ կողմը», 3. «աջ հայեացքների տէր», rifle- 1. «հրացան», 2. «կողոպտել» եւն՝ անգլերէնում,- *դար*- 1. «հարիւրամեակ» 2. «լեռան գագաթ», 3. «հագուստ» 4. «միասին, հետը» եւն՝ հայերէնում): Սակայն, դրանով հանդերձ, ինչոյթների իմաստատարբերակիչ հակադրութիւնը լեզուաբանական չափորոշիչ է եւ լուրջ չափորոշիչ: «Խօսողների լեզուաբանական պահուածքը» ոչ միայն հնարաւոր չէ լեզուաբանական չափորոշիչ համարել, այլեւ բաւականին առանձգական, ոչ-յստակ եւ, մասնաւորապէս ինչոյթաբանութեան ոլորտում, գործնականում դժուար կիրառելի հասկացութիւն է:

5) Չնայած որ իբրեւ գիտակարգ՝ ինչոյթաբանութիւնը ձեւաւորուել է յատկապէս կառուցուածքային լեզուաբանութեան ներկայացուցիչների ջանքերով, բայց եւ այնպէս, ըստ Շահումեանի, ոչ-բոլոր ինչոյթաբանական ուսմունքները կարող են համարուել իսկապէս կառուցուածքային: Կառուցուածքային մօտեցումը պահանջում է, որ բոլոր բաղադրիչները «դիտարկուեն միայն որպէս որոշակի յարաբերութիւնների հատման կէտ, բաղադրիչի միւս բոլոր բնութագրերը կառուցուածքային տեսանկիւնից էական չեն» (85): Լեզուական կառուցուածքի նոյնպիսի պատկերացում է ընկած նաեւ կոպենհագընեան *լեզուոյթաբանութեան* (glossématics) հիմքում[16]: Ուստի ոչ-պատահականօրէն ինչոյթաբանական հայեցակարգերից մէկը, որի հետ ԵՀը շփման ընդհանուր եզրեր է դրսեւորում, հենց լեզուոյթաբանկական ինչոյթաբանութիւնն է, չնայած որ, ինչպէս արդէն ասուեց, լեզուոյթաբանները ինչոյթաբանական ամբողջական տեսութիւն չեն ստեղծել, այլ ինչոյթաբանութեան հարցերին անդրադարձել են ընդհանուր լեզուաբանական (=լեզուոյթաբանկական) տեսութեան շրջանակներում: Ինչպէս ինչոյթը, այնպէս էլ լեզուական միաւորները, առհասարակ, ելմսլեւեան լեզուոյթաբանութեան մէջ բնորոշւում են մի կողմից՝ նշանային յարաբերութեան, միւս կողմից՝ լեզուական կառուցուածքում յարաբերութիւնների տեսանկիւնից: Լեզուական նշանը կամ «նշանային արտայայտութիւնը» Սոսիւրի հետեւողութեամբ բնորոշելով որպէս «երկկողմանի էութիւն»[17], Ելմսլեւը առաջա-

դրում է *ֆիգուրի*՝ որպէս նշանի բաղադրիչի գաղափարը: Ըստ Ելմսլեւի՝ ֆիգուրն ունի միայն արտայայտութեան հարթակ. ֆիգուրներ են վանկերը եւ հնչոյթները, որոնք, չունենալով բովանդակութեան հարթակ, մասնակցում են բովանդակութեան հարթակ ունեցող միաւորների, օր.՝ բառերի կազմաւորմանը: Լեզուոյթաբանութեան առանցքային դրոյթներից մէկը բովանդակութեան հարթակի ձեւերի եւ արտայայտութեան հարթակի ձեւերի տարբերակումն է: Ըստ այդմ, ֆիգուրները եւս, չնայած որ ունեն միայն արտայայտութեան հարթակ, որպէս նշանի բաղադրիչներ՝ գործառում են երկու հարթակներում էլ[18]: Ի տարբերութիւն Ջունզի դպրոցի (Լոնդոնի դպրոց), որը, հնչոյթի տարբերակիչ դերն ընդունելով հանդերձ, այն չի ներառում սահմանումի մէջ, որ նոյնն է, թէ հիմնական չի համարում հնչոյթային բնութագրի համար, Ելմսլեւը պրահացիների նման ոչ միայն հակուած է յատուկ նշանակութիւն տալու «տարբերակիչ չափորոշիչին՝ որպէս միակ էականի», այլեւ այն համարում է Պրահայի խմբակի գլխաւոր ծառայութիւնը[19]: «Տարբերակիչ» (distinctive) եզրոյթը լեզուոյթաբանութեան մեջ գործածւում է լայն առումով՝ նկատի ունենալով լեզուական երկու հարթակների ձեւերը: Հետեւաբար ֆիգուրներին բնորոշ է նաեւ իմաստաբերակիչ գործառոյթը՝ որպէս նշանի բովանդակային հարթակի բաղադրիչ:

Ըստ Շահումեանի՝ հնչոյթի *լեզուոյթաբանական* հայեցակարգի «կարեւոր նուաճումը լեզուաբանական գիտութեան մէջ» այն է, որ հնչոյթը դիտւում է «մաքուր յարաբերութիւնների բաղադրիչ, որը ներկայացւում է հնչիւններով», բայց եւ որը իր մէջ ֆիզիկական ոչինչ չի պարունակում: Նա հնչոյթի լեզուոյթաբանական հայեցակարգի բացթողումն է համարում «տարբերակիչ բաղադրիչները» լեզուի ֆիզիկական սուբստանցին վերագրելը եւ ըստ այդմ՝ դրանք հնչոյթաբանութեան ուսումնասիրութեան շրջանակից դուրս թողնելը: Իսկ դրա պատճառը լեզվուոյթաբանութեան մէջ «*վերացարկման երկու աստիճանների՝ դիտարկման աստիճանի եւ կառոյցքների աստիճանի բացայայտ կերպով (explicit) սահմանազատման բացակայութիւնն է*», որի կիրառման դէպքում տարբերակիչ բաղադրիչները կը դասուէին կառոյցքների շարքում[20]:

Հնչոյթի երկաստիճան եւ լեզուոյթաբանական հայեցակարգերի միջեւ ընդհանրութիւնը առաջին հերթին պայմանաւորուած է նրանց համար ընդհանուր մեթոդական հիմքի՝ արտածական (deductive) մեթոդի առկայութեամբ, որը, ըստ Ելմսլեւի, առաջին անգամ ինքն է կիրառել լեզուաբանական վերլուծութեան մէջ[21]: Սակայն, ինչպէս երեւում է վերը ներկայացրածից, այդ երկու տեսութիւնները տարբերւում են մի կարեւոր հանգամանքով՝ *իմաստատարբերակիչ* գործօնի նկատմամբ վերաբերմունքով, որը հիմնական բնութագրիչ է հնչոյթի լեզուոյթաբանական հայեցակարգում եւ, ընդհակառակն, անընդունելի է ԵՀի համար:

Թուոդէլի հնչոյթաբանական հայեացքների ամփոփումը *Հնչոյթի Բնորոշման Շուրջ* աշխատութիւնն է: Հնչոյթը բնորոշելով իբրեւ բացասական, յարաբերական վերացարկում, որը գոյութիւն ունի միայն որպէս յարաբերակցութեան անդամ, իսկ հնչոյթաբանական համակարգը՝ ոչ թէ հնարաւոր կաղապար, այլ միայն որպէս հնչոյթաբանական յարաբերութիւնների գումար, Թուոդէլը, ըստ էութեան, հնչոյթը համարում է «վերացական անիրական միաւոր»: Հնչոյթը բնորոշելով որպէս միատեսակ կազմակերպուած դասերի միատեսակ կազմակերպուած անդամ՝ նա տարբերակում է *մակրոհնչոյթներ* /macrophoneme/ (հնչոյթային դասերը) եւ *միկրոհնչոյթներ* /microphoneme/ (դասերի անդամները): «Հնչոյթաբանօրէն նուազագոյն կերպով տարբերուող ձեւերի դասերի անդամների միջեւ յարաբերութիւնները» համարելով «նուազագոյն հնչոյթաբանական տարբերութիւններ»՝ Թուոդէլը միկրոհնչոյթը բնորոշում է իբրեւ «ձեւերի միջեւ նուազագոյն հնչոյթաբանական տարբերութեան (այդպիսի յարաբերութեան) անդամ»[22]: «Միկրոհնչոյթները, որպէս այդ նման եւ փոխ-միանշանակ տարբերութիւնների անդամներ, նման ձեւով կարգաբերուած են դասերի մէջ»: Ուստի նա մակրոհնչոյթները բնորոշում է իբրեւ «ձեւերի միջեւ նման նուազագոյն հնչոյթաբանական (յարաբերութիւնների) տարբերութիւնների՝ բոլոր նման ձեւով կարգաբերուած անդամների (միկրոհնչոյթների) գումար»[23]: Այսպէս, [p_1]ը pillում [pil] «դեղահատ» եւ [p_2]ը napում [næp] «նիրհ, նիրհել» միկրոհնչոյթներ են, որոնց միաւորումը <P> մակրոհնչոյթի մէջ ոչ թէ հնչման առարկայական նմանութեան արդիւնք է, այլ յարաբերութիւնների համամասնութեան: Միկրոհնչոյթի եւ մակրոհնչոյթի յա-

րաբերութիւնը հիմնուած է արտայայտութեան հարթակի բնութագրիչների վրայ: Այդքանով իսկապէս հնչոյթի թուոդէլեան ըմբռնումն ընդհանրութիւն է դրսեւորում ԵՀի հետ: Սակայն, ինչպէս լեզուոյթաբանութիւնից, Թուոդէլի հնչոյթաբանական պատկերացումներից եւս իմաստատարբերակիչ գործօնը լիովին օտարուած չէ: Համեմատուող, աւելի ճիշտ՝ յարաբերուող բաղադրիչները, այդ թւում՝ հնչոյթը, բնորոշելով «ձեւ» ընդհանուր անուանումով՝ Թուոդէլը գրում է. «Նոյնական համարուող ձեւերը համապատասխանում են <u>հնչիւնաբանօրէն իմաստակիր</u> (ընդգծ.՝ Վ.Պ.) նման դէպքերին: Այդպիսի ձեւերը կոչւում են հնչոյթաբանօրէն նմաններ»[24]: Ապա. «Բացառութեամբ համանունների, տարբեր համարուող ձեւերը համապատասխանում են <u>հնչիւնաբանօրէն իմաստակիր</u> [ընդգծ.՝ Վ.Պ.] տարբեր դէպքերին: Այդպիսի ձեւերը կոչւում են հնչոյթաբանօրէն տարբերներ»[25]:

Երկատումային դասակարգման (ԵԴ) հեղինակները հարազատ են մնում հնչոյթի՝ որպէս տարբերակիչ յատկանիշների փնջի բնորոշմանը[26], որը, ըստ ամենայնի, դեռեւս «Պրահայի խմբակի» գործունէութեան շրջանից Եակոբսոնի մօտ ամրապնդուած համոզում է եղել: Սակայն, ի տարբերութիւն գործառական հնչոյթաբանութեան ներկայացուցիչների, որոնք տարբերակիչ կամ հնչոյթաբանական յատկանիշ ասելով նկատի են ունենում արտաբերական յատկանիշները, Եակոբսոնը եւ համահեղինակները տարբերակիչ յատկանիշների մէջ ներառում են նաեւ ձայնաբանական յատկանիշներ: Ըստ այդմ, նրանք հնչոյթները բնորոշում են ըստ «կոնտրաստ» ձեւաւորող 16 յատկանիշների, որոնցից 4ը *առոգանական* են (prosodic), իսկ 12ը համարւում են *ներքին* (inside) յատկանիշներ: Առոգանականները տարբերակւում են ըստ *տոնի, ուժի, քանակութեան, շեշտի* եւ *երկարութեան միջեւ փոխկապակցուածութեան* յատկանիշների: Ըստ էութեան, կարեւոր են յատկապէս *ներքին* որակուածները: Վերջիններն իրենց հերթին բաժանւում են երկու տեսակի՝ 1) *հնչեղութեան յատկանիշների* (ձայնաւոր-ոչ ձայնաւոր, բաղաձայն-ոչ բաղաձայն, հաւաք (compact)-ոչ պարզորոշ (diffuse), լարուած-ոչ լարուած, ձայնեղ-խուլ, ռնգային-բերանային, ընդհատուած-չընդհատուած, կտրուկ-ոչ կտրուկ, կոկորդայնացած-չկոկորդայնացած) եւ 2) *տոնի յատկանիշների* (ցածր-բարձր, կիսվարային (flat)-

պարզ, կիսվերային (sharp)-պարզ)[27]: Թուարկուած յատկանիշներից իսկ երեւում է, որ հնչոյթների տարբերակումը, աւելի, քան որեւէ տեսութեան մէջ, հիմնուած է ֆիզիկական սուբստանցի վրայ: Աւելին, ԵԴի հեղինակները մերժում են հնչոյթի թուոդէլեան ըմբռնումը, ըստ որի՝ հնչոյթները «լեզուի վերացական, ոչ իրական միաւորներ»[28] են: Ի տարբերութիւն որոշ հնչոյթաբանների, որոնք հնչոյթաբանութեան եւ հնչիւնաբանութեան քննութեան ոլորտները սահմանազատելու, նրանց ուսումնասիրութեան բուն առարկաները տարբերակելու եւ վերջապէս նրանց ինքնուրոյնութիւնը շեշտելու համար կարեւորել են այդ երկու գիտակարգերի գէթ պայմանական տարանջատումը[29], ԵԴի հեղինակները, ընդհակառակն, հնչոյթաբանական իրողութիւնների բացայայտման համար կարեւորում են հնչիւնաբանութեան դերը[30]: Այս առումով, թերեւս, ԵՀի եւ ԵԴի միջեւ՝ իբրեւ հնչոյթաբանական հայեցակարգերի, ընդհանրութիւնն աւելի մեծ է, քան ԵԴի եւ գործառական հնչոյթաբանութեան միջեւ, ներառեալ երկու՝ Պրահայի եւ Մոսկուայի դպրոցները, երկու վերապահումով. 1) ի տարբերութեան ԵՀի, ԵԴն միաստիճան հայեցակարգ է, 2) ԵԴն հնչոյթի քննութեան նկատմամբ ունի «ներքին» (inside) մօտեցում, ի տարբերութիւն հնչոյթաբանական այլ հայեցակարգերի, այդ թւում՝ ԵՀի, որոնց մօտեցումը, ըստ էութեան, «արտաքին» (outward) է:

6) Կառուցուածքի ըմբռնումը հիմնարար նշանակութիւն ունի կառոյցքներով գործառող բոլոր տեսական գիտութիւնների համար: ԵՀի՝ որպէս իրականում կառուցուածքային հնչոյթաբանական ուսմունքի կառուցուածքաբանական նկարագիրը, ըստ Շահումեանի, ապահովում է վերացարկման կառոյցքների աստիճանը, որովհետեւ ոչ-դիտարկելի առարկաները հնարաւոր է քննել միայն որպէս կառոյցքներ: ԵՀի տեսանկիւնից «հնչոյթաբանական իրողութիւնների ճիշտ նկարագրութիւնը իր մէջ չպիտի պարունակի որեւէ այլ բան, խորհրդանիշների վերացական գործառութիւնների համակարգուած նկարագրութիւնից բացի» (86): Գործառոյթի հասկացութիւնը Շահումեանը կիրառում է «վերացական տեսական համակարգերում խորհրդանիշների գործառոյթների» նշանակութեամբ՝ եզրակացնելով, որ ցանկացած տեսական հասկացութեան բնորոշումը պիտի յանգի «խորհրդանիշների գործառոյթների հաւաքուծուի ցուցումի» եւ դրանում է

«կառուցուածքային նկարագրութեան էութիւնը» (87): Յարաբերակցային-ֆիզիկական հնչոյթաբանական տեսութիւնները, Շահումեանի կարծիքով, չեն բաւարարում կառուցուածքային նկարագրութեան պահանջներին, որովհետեւ հասկացութիւնները, որոնցով նրանք գործառում են, ազատուած չեն ֆիզիկական սուբստանցից: Ըստ ԵՀի հեղինակի, կառուցուածքային լեզուաբանութեան երկաստիճան տեսութեան ուղին անցնում է Սոսիւրի «Լեզուն ձեւ է եւ ոչ թէ սուբստանց» յեղափոխական դրոյթից բոլոր կարեւոր հետեւութիւնների հետեւողական դուրս բերման միջով (87):

ԵՀի՝ որպէս հնչոյթաբանական հայեցակարգի սոյն քննութիւնը բաւարար հիմք է տալիս հետեւեալ եզրակացութիւնների համար.

1) Կառուցուած լինելով վերացական տեսական (այդ թւում՝ բնական) գիտութիւններում լայնօրէն կիրառուող *վարկածային-արտածական մեթոդի* սկզբունքներով՝ ԵՀն ինքն էլ նախորդող փուլի հնչոյթաբանական տեսութիւնների համեմատութեամբ ձեռք է բերել խիստ վերացական տեսական նկարագիր: Հնչոյթաբանական բոլոր ուսմունքներից այն ամէնից յետեւողականն է եղել սոսիւրեան վերոյիշեալ կանխադրոյթը կիրառելու հարցում: Աւելի հետեւողական, քան լեզուոյթաբանութիւնը եւ նկարագրական հնչոյթաբանութիւնը: ԵՀն հակուած էր դէպի իր ժամանակի նորարական լեզուաբանական ուղղութիւնը՝ *սերող լեզուաբանութիւնը* (generative linguistics), որը, իբրեւ ամերիկեան կառուցուածքային լեզուաբանութեան դրսեւորումներից մէկը, լեզուի կառուցուածքաբանական քննութիւնը նոյնացնում էր նրա ձեւայնացուած քննութեան հետ: Շահումեանի՝ դէպի սերող լեզուաբանութիւնը հակուածութեան լրացուցիչ վկայութիւն է նրա հետեւեալ միտքը. «Փոխակերպական քերականութեան տեսական նշանակութիւնը կայանում է նրա վիթխարի բացատրողական, համադրողական ուժի մէջ: Փոխակերպական քերականութեան առանցքը լեզուի միջուկի մասին գաղափարն է, որը բաղկացած է պարզագոյն լեզուաբանական կառուցուածքներից, որից կարող են դուրս բերուել շատ կամ քիչ բարդութեան բոլոր միւս լեզուաբանական կառուցուածքները»[31]: Այսինքն, ի դէմս սերող լեզուաբանութեան՝ Շահումեանը տեսնում էր այն, ինչը նրա կարծիքով պակասում էր

կառուցուածքային լեզուաբանութեան աւանդական ուղղութիւններին:

2) ԵՀն երբեւէ ստեղծուած ամբողջական, հետեւողական եւ ինքնատիպ հնչոյթաբանական ուսմունքներից է: Այն ներառում է ինչպէս հատոյթային, այնպէս էլ վերհատոյթային հնչոյթաբանական մակարդակների բոլոր կարեւոր իրողութիւնները եւ փորձում է ԵՀի դիրքերից պատասխանել այդ գիտակարգին առնչուող հիմնական հարցադրումներին: Ինչպէս որեւէ նոր տեսութիւն, ԵՀն նոյնպէս հրապարակ է իջել նախորդող տեսութիւնների խոցելի կողմերը յաղթահարելու յաւակնութեամբ, սակայն պիտի նկատել, որ, արժէքաւոր գաղափարներ առաջարկելով հանդերձ, դէպի լեզուի ձեւայնացուած (=իմաստային կողմից կտրուած) նկարագրութիւնն իր դրսեւորած հետեւողական հակուածութեամբ գրեթէ խզման է հասցնում հնչիւնաբանական եւ հնչոյթաբանական հարթակների միջեւ յարաբերակցութիւնը: Կառոյցքի՝ որպէս սուբստանցից, այսինքն՝ նիւթական իրականութեան բաղադրիչից բացարձակօրէն կտրուած միաւորի ըմբռնումը հնչոյթաբանական հարթակի միաւորները (հնչոյթը, վերացարկուած հնչոյթակերպը, կուլմինատորը եւն) կտրում է իրենց նիւթական հիմքերից եւ վերածում հնարանքների: Ճիշտ է՝ կառոյցքի հասկացութիւնը կոչուած է տեսական կառուցումների միջոցով բացատրելու լեզուական իրողութիւնները, բայց հենց բացատրելու եւ ոչ թէ փոխարինելու դրանց: Մեր կարծիքով լեզուաբանութեան ուսումնասիրութեան նիւթը պիտի լինեն բուն լեզուական իրողութիւնները, իսկ կառոյցք(ներ)ը պիտի վերաբերեն անդրլեզուաբանութեանը (metalinguistics), քան բուն լեզուաբանութեանը:

3) Ինչպէս Շահումեանի կողմից առաջարկուած ԵՀն, այնպէս էլ առհասարակ նրա կառուցուածքաբանական տեսութիւնը, որի ամբողջական շարադրանքը հեղինակի *Կառուցուածքային Լեզուաբանութիւն* մենագրութիւնն է, առաջարկուած գաղափարների թարմութեամբ եւ ինքնատիպութեամբ չեն զիջում իր ժամանակի նոյնաբնոյթ տեսութիւններին, ուստի ամէնեւին էլ պատահական չպէտք է համարել, որ ժամանակակիցներից ոմանք չեն վարանել կառուցուածքային լեզուաբանութեան մէջ ընդունելու շահումեանական դպրոցի գոյութեան փաստը[32], իսկ *Մոսկովեան գործառական հնչոյթաբանութեան* հայրերից Ալեքսանդր Ռեֆորմատսկին,

ակնարկելով 1950ականներին հնչոյթի հասկացութեան շուրջ Սերգէյ Ի. Բեռնշտէյնի հետ բանավէճում Շահումեանի անզիջում կեցուածքը[33], վերջինիս «յոխորտացող» պահուածքի ետեւում տեսել էր վաղուայ ինքնատիպ լեզուաբանին[34]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Տե՛ս՝ V. G. Gak, “Leksikologiya // Linguisticheskiy Entsiklopedicheskiy Slovar” (Բառագիտութիւն // լեզուաբանական հանրագիտական բառարան), Մոսկուա, «Sovetskaya Entsiklopediya», 1990, էջ 260:

[2] Տե՛ս՝ S. K. Shahumyan, *Sovremennoe Sostoyanie Dvukhstupenchatoy Teorii Fonologii. Issledovaniya Po Fonologii* (Հնչոյթաբանութեան երկաստիճան տեսութեան ժամանակակից վիճակը. հնչոյթաբանական ուսումնասիրութիւններ), Մոսկուա, «Նաուկա», 1966, էջ 3. նաեւ նոյնի՝ S. K. Shahumyan, *Strukturnaya Linguistika* (Կառուցուածքային լեզուաբանութիւն), Մոսկուա, «Նաուկա», 1965, էջ 14: Շահումեանը իր ժամանակի կառուցուածքային լեզուաբանութեան թերութիւնն է համարում այն, «…. որ մի կողմից՝ լեզուի կառուցուածքը դիտւում է որպէս վարկած լեզուի խորքային կապերի մասին, իսկ միւսից՝ կառուցուածքային լեզուաբանութիւնը նոյնացւում է կայական լեզուաբանութեան հետ: …. Որպէսզի ժամանակակից կառուցուածքային լեզուաբանութեան մէջ ընդունուած կառուցուածքի ըմբռնումը կարողանայ իսկապէս արդիւնաւէտ լինել, անհրաժեշտ է վերանայել կառուցուածքային լեզուաբանութեան առարկայի մասին հարցը» (նոյն, էջ 15):

[3] S. K. Shahumyan, *Problemy Teoreticheskoy Fonologii* (Տեսական հնչոյթաբանութեան հիմնահարցերը), Մոսկուա, «IAN SSSR», 1962: Այս գրքին յղումները տրւում են բուն շարադրանքում:

[4] Լենինգրադի (Ս. Պետերբուրգի) դպրոցի հնչոյթաբանական ուսմունքը մենք որակել ենք որպէս *ծայնաբանական-արտաբերական* (Վ. Զ. Պետրոսեան, «Հնչոյթի Գաղափարի Սկզբնաւորումը Եւ Հնչոյթաբանական Գիտակարգը», *Ընդհանուր Եւ Հայ Լեզուաբանութեան Հարցեր*, Երեւան, Փրինթինֆօ, 2015, էջ 60-82): Մեր կարծիքով այդ երկու բնորոշումների միջեւ հակասութիւն չկայ. նրանց տարբերութիւնը *լայնի* (Շահումեանինը) եւ *նեղի* (մերը), այլ եզրոյթաբանութեամբ՝ *սեռի* եւ *տեսակի* յարաբերակցութիւն է:

[5] N. S. Trubetskoy, *Osnovi Fonologii* (Հնչոյթաբանութեան հիմունքներ), Մոսկուա, «Aspekt press», 2000:

[6] Lui Yelmslev, “Prolegomeny Teorii Yazika” (Լեզուի տեսութեան նախագիտելիքներ), *Novoe V Linguistike*, I issue, Մոսկուա, «IIL», 1960, էջ 264-389:

[7] W. F. Twaddell, *On Defining the Phoneme*, Language Monograph, N 16, Baltimore, «RIL», 1935:

[8] R. Jakobson, Gunar M. Fant, M. Halle, “Vvedenie V Analiz Rechi” (Խօսքի վերլուծութեան ներածութիւն), *Novoe V Linguistike*, II issue, Մոսկուա, «IIL», 1962, էջ 173-230. նաեւ՝ R. Jakobson, M. Halle, “Fonologiya I Yeyo Otnoshenie K

Fonetike" (Հնչոյթաբանութիւնը եւ նրա յարաբերութիւնը հնչիւնաբանութեանը) *Novoe V Linguistike*, II issue, Մոսկուա, «IIL», 1962, էջ 231-278. Նաեւ՝ E. Cherry, Halle, R. Jakobson, "K Voprosu O Logicheskom Opisanii Yazikov V Ikh Fonologicheskom Aspekte" (Լեզուների տրամաբանական ուսումասիրութեան հարցի մասին՝ նրանց հնչոյթաբանական հայեցակերպում), *Novoe V Linguistike*, II issue, Մոսկուա, «IIL», 1962, էջ 279-298:

[9] Գործառական տեսութիւններից ֆիզիկական սուբստանցի, այն է՝ հնչիւնական նիւթի հետ հնչոյթի յարաբերակցութիւնը աւելի շեշտուած է մոսկովեան դպրոցի ներկայացուցիչների կողմից տրուած բնորոշումներում (A. A. Reformatskiy, *Vvedenie V Yazkovedenie* (Լեզուաբանութեան ներածութիւն), Մոսկուա, «Prosveshchenie» Հրատ, 1967, էջ 211), քան Պրահայի դպրոցի (Trubetskoy, էջ 43):

[10] Trubetskoy, նոյն:

[11] Կառոյցքները՝ (կոնստրուկտներ) հասկացութիւններ են գիտութեան ոչ-դիտարկելի առարկաների մասին, որոնք կանխադրւում են դիտարկումով տրուած փաստերը բացատրելու համար: Կոնստրուկտի հասկացութիւնը լեզուաբանութեան մէջ լայնօրէն կիրառուել է 1970ականներին՝ ըստ էութեան, յանգեցնելով լեզուական միաւորի եւ նրա մասին պատկերացման տրամագծօրէն հակադիր ըմբռնումների: Կառոյցքի շահումեանական ըմբռնմանը շատ մօտ է, եթէ չասենք՝ նոյնական է, Վ. Ա. Զուեգինցեւի պատկերացումը, որում եւս նոյնացւում են լեզուական միաւորը եւ նրա մասին լեզուաբանական պատկերացումը՝ կոնստրուկտը (V. A. Zvegintsev, *Yazyk I Linguisticheskaya Teoriya* (Լեզուն եւ լեզուաբանական տեսութիւնը), Մոսկուա, 1973, էջ 15): Լեզուական միաւորի այսպիսի ըմբռնման դէմ առարկել են Ֆ. Բերեզինը եւ Բ. Գոլովինը (F. M. Berezin, B. N. Golovin, *Obshchee Yazikoznanie (Ընդհանուր լեզուաբանութիւն)*, Մոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1979, էջ 10-11):

[12] Հնչոյթաբանական բաղադրիչ, որն ունի գագաթնակէտային գործառոյթ:

[13] Համանման տեսակէտ է արտայայտել նաեւ Եու. Ստեպանովը (Yu. S. Stepanov, *Osnovy Obshchevo Yazikoznaniya* (Ընդհանուր լեզուաբանութեան հիմունքներ), Մոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1975, p. 81-82):

[14] *Օրինակներն ըստ O. S. Akhmanova, Ocherki* Po Obshchey Lexikologii (Ընդհանուր բառագիտութեան ակնարկներ), Մոսկուա, «GUPIMP RSFSR», 1957, էջ 197: Այս գրքից են նաեւ Շահումեանի կողմից բերուող օրինակները: Այդպիսիք են նաեւ հայերէնի դար*պ*աս-դար*բ*աս, հոն*կ*ուր-հոն*գ*ուր, զ(*ը*)րո-զ*ե*րո կրկնակները: Ռուսերէնում այսպիսի բառերի թիւն շատ աւելի մեծ է:

[15] N. Chomsky, "Sintaksicheskie Strukturi" (Շարահիւսական կառուցվածքներ), *Novoe V Linguistike*, II issue, Մոսկուա, «IIL», 1962, էջ 412-527. նաեւ նոյնի՝ "Logicheskie Osnovi Linguisticheskoy Teorii" (Լեզուաբանական տեսութեան տրամաբանական հիմունքները), *Novoe V Linguistike*, IV issue, «IIL», էջ 465-575:

[16] L. Yelmslev, "Ponyatie Upravleniya" (Կառավարման սմբռնումը)՝ *Istoriya Yazikoznaniya XIX-XX Vekov V Ocherkakh I Izvlecheniyakh* (XIX-XX դարերի

լեզուաբանութեան պատմութիւնը ակնարկներով եւ քաղուածքներով), խմբ.՝ V. A. Zvegintsev, Բ. Մաս, Մոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1965, էջ 101). նաեւ՝ L. Yelmslev, *Metod Strukturnovo Analiza V Linguistike* (Կառուցուածքային վերլուծութեան մեթոդը լեզուաբանութեան մէջ) *Istoriya Yazikoznaniya XIX-XX Vekov V Ocherkakh I Izvlecheniyakh* (XIX-XX դարերի լեզուաբանութեան պատմութիւնը ակնարկներով եւ քաղուածքներով), խմբ.՝ V. A. Zvegintsev, Բ. Մաս, Մոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1965, էջ 108):

[17] Yelmslev, Prolegomeny, էջ 316:

[18] Նոյն, էջ 324:

[19] Նոյն, էջ 323:

[20] Shahumyan, *Problemy*, էջ 57:

[21] Yelmslev, Prolegomeny, էջ 321:

[22] Twaddell, էջ 39:

[23] Նոյն, էջ 39:

[24] Նոյն, էջ 38:

[25] Նոյն:

[26] Տե՛ս՝ Jakobson, Halle, էջ 245:

[27] Նոյն, էջ 254-258: Ըստ Ստեպանովի, ինչպէս առհասարակ 1950ականներին առաջարկուած համընդհանուր երկատումային դասակարգումները, Եակոբսոնի, Ֆանտի եւ Հալէի կողմից մշակուած դասակարգումը եւս փորձում է «հաշուի առնել բոլոր հնարաւոր խօսքային հնչիւնները, որպիսիք միայն ունակ է արտաբերելու մարդը», իրականում, սակայն, երկատումային դասակարգումը բացայայտում է միայն հնչիւնատիպերը, որովհետեւ իրական խօսքում արտաբերուող հնչիւնների միջեւ տարբերութիւնը ոչ թէ «կամ մէկը-կամ միւսը» սկզբունքով է, այլ՝ աստիճանական հակադրութեամբ (Stepanov, *Osnovi*, էջ 68-69):

[28] Jakobson, Halle, էջ 240:

[29] Trubetskoy, էջ 21:

[30] Jakobson, Halle, էջ 235-236:

[31] S. K. Shahumyan, "Teoreticheskiye Osnovi Transformatsionnoy Grammatiki" (Փոխակերպական քերականութեան տեսական հիմունքները), *Novoe V Linguistike*, IV issue, Մոսկուա, «IIL», 1962, էջ 408:

[32] Տե՛ս O. S. Akhmanova, E. A. Afonov, V. Davidov, *K Voprosu O Sushchnosti I Metayazike Sintaxicheskoy Fonetiki* (Շարահիւսական հնչիւնաբանութեան անդրլեզուի եւ էութեան հարցի մասին), Issledovaniya Po Fonologii Հրատ., Մոսկուա, 1966, էջ 219:

[33] Ս. Կ. Շահումեանն այդ բանավէճին մասնակցել է "Problema Fonemu" (Հնչոյթի հիմնահարցը) յօդուածով՝ *Izvestiya, AN SSSR*, OLY, XI v., 4 issue:

[34] Տե՛ս՝ A. A. Reformatskiy, *Iz Istorii Otechestvennoy Fonologii* (Հայրենական հնչոյթաբանութեան պատմութիւնից), Մոսկուա, «Nauka», 1970, էջ 37:

THE TWO-LEVEL THEORY OF PHONOLOGY OF SEBASTIAN SHAHUMYAN
(Summary)

VARTAN Z. BEDROSSIAN
vz.petrosyan@mail.ru

Two-level phonology, elaborated by S. K. Shahumyan, was an early innovation in the phonological system, which was already rich in different conceptual approaches. The following features are typical of two-level phonology. 1) the use of the *hypothetical-deductive method* as a general scientific basis, in contrast to other theories at the basis of most of which lies the *inductive* method, 2) the use of the construct as the notion of scientific abstraction in the phonemic analysis and, according to this, the differentiation between the two levels of abstraction-*the stage of observation* and *that of constructs*, in contrast with the other theories of the phoneme, which are characterized by the one-level approach. 3) the import of the concept of "linguistic behavior" as a means of phoneme-distinction, in contrast with other theories, most of which (even the ones which give preference to the formal side of the phoneme) to some extent take into consideration the meaning-differentiating factor when differentiating between the phonemes. 4) the wholeness, i.e. two-stage phonology includes the two levels of phonemic analysis – *the segmental level* and *the suprasegmental one*. 6) the succession - two-stage approach, which lies at the basis of the analysis, is used in succession in the analysis of subphonemic, phonemic and supraphonemic phenomena. It should be considered that the vulnerable point of two-level phonology is the use of the notion of construct as that of scientific abstraction towards the phoneme and other constituents, which not only deprives the latter of their linguo-speech bases, but also puts in question the appropriateness of their study in general.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԳԻՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ[1] ԱՒԱՆԴՈՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
XORENBASK86@GMAIL.COM

ԱՌԱՋԱԲԱՆ

Հետազօտութեան հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետութեան երկրորդ մեծագոյն քաղաքի քաղաքային առեւտրի մշակոյթի դիտարկմամբ հասնել համեմատական վերլուծութեան՝ Երեւան քաղաքի հետ: Հետազօտութեան գլխաւոր կէտերն էին.-

- Դիտարկել առեւտրականի կերպարը Գիւմրիում.
- Փորձել քաղաքային առեւտրի մեջ դիտարկել սուպէրմարկէտային եւ բազարային[2] առեւտուրը.
- Տալ քաղաքային միջավայրում առեւտրատեղերի ու շուկաների տեղաբաշխուածութիւնը եւ առեւտրագօտիների առաջացման պատճառները:

Յօդուածի առաջին հատուածում ներկայացուելու է քաղաքային առեւտրի վերաբերեալ գրականութեան տեսութիւնը, որը թոյլ կը տայ պատկերացնել թէ ինչպիսի տեսութիւններն են հանդիսանում հիմնական քննարկման թեման:

Երկրորդ հատուածում Գիւմրու աւանդական՝ ԺԸ.-ԺԹ. դարերի նիւթի հիման վրայ, փորձելու ենք ներկայացնել ժամանակակից Գիւմրու առեւտրականների գործունէութիւնն ու շուկան:

ԱՌԵՒՏՐԻ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հասարակութեան առեւտրականացման եւ ընդհանրապէս հասարակագիտական գիտաճիւղում առեւտրի, շուկայի եւ տնտեսական փոխյարաբերութիւնների վերաբերեալ հետաքրքիր ուսումնասիրութիւններով հանդես է եկել գերմանացի ընկերաբան եւ մարդաբան Մաքս Վեբէրը իր «Տնտեսութիւն Եւ Հասարակութիւն» աշխատութեան մէջ: Վեբէրը փորձելով դասակարգել քաղաքային մշակոյթի առանձնայատկութիւնները՝ դրանցում կարեւոր դեր է տալիս քաղաքային հրապարակի եւ շուկայական յարաբերութիւններին: Ըստ Վեբէրի, քաղաքային հրապարակն ու շուկայական յարաբերութիւնները թոյլ են տալիս մրցակցութեան եւ փոխյարաբերութիւնների առաւել լայն շերտի պատճառով առաջ բերել զարգացում, որն էլ սկսել է անջատում մտցնել գիւղական եւ քաղաքային բնակավայրերի միջեւ[3]:

Իսկ գերմանացի տնտեսական մարդաբան Հայգօ Շրադէրը

ընդհանրապէս յատուկ ենթակառոյցների առանձնացմանն է դէմ՝ գտնելով, որ ինչպէս մշակութային մարդաբանութեան՝ յատկապէս բրիտանական գործառնական (ֆունկցիոնալիստների) դպրոցի այնպէս էլ ընդհանուր ընկալմամբ ժամանակակից հասարակութիւնը դեռեւս չի տարբերւում ենթահամակարգերի, ինչպիսիք են՝ տնտեսագէտներ, իրաւաբաններ, կրօնի, քաղաքական եւն., որոնք քիչ թէ շատ անկախ են միմեանցից - իւրաքանչիւր ընկերաբանական գործողութիւն այդ ենթախմբերի վրայ ազդում է համաչափ: Սրանով հանդերձ, ամէն մի գործողութիւն ինչքան տնտեսագիտութեան ուսումնասիրութեան նիւթ է, նոյնչափ մարդաբանութեան գործը[4]:

Ֆրանսիացի ազգագրագէտ եւ ընկերաբան Մարսէլ Մոսը նկարագրում է շարժիչ գործողութիւնը որպէս ընդհանուր ընկերաբանական երեւոյթ, միեւնոյն ժամանակ՝ տնտեսական, քաղաքական, կրօնական եւն., եւ այս տեսակէտը կանոնակարգերում ու աւանդոյթներում դրսեւորւում է փորձնական դաշտային ուսումնասիրութիւնների շնորհիւ: Հետազօտել հասարակութեանը, նշանակում է, փորձել նկարագրել դրա ընկերաբանական, քաղաքական, տնտեսական, կրօնական եւ այլ համակարգերը որպէս ամբողջութիւն, քանի որ սրանք անբաժան են միմեանցից[5]:

Փաստօրէն, վերոնշեալ տեսաբանական քննութիւնն ու դրան յաջորդող գրականութեան տեսութիւնը թոյլ են տալիս դիտարկել հասարակութեան առեւտրականացման մոդէլը՝ տեղային դաշտային նիւթի վրայ: Համեմատական այս անդրադարձը մենք չենք կտրի ինչպէս յետխորհրդային այլ հանրապետութիւնների այնպէս էլ յետխորհրդային համակարգից դուրս որոշ քննութիւններից:

ԱՌԵՒՏՈՒՐՆ ՈՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԳԻՒՄՐՈՒՄ

Աւանդական շրջանի Ալեքսանդրապոլի քաղաքային մշակոյթի վերաբերեալ հետաքրքիր դիտարկումներով է հանդէս գալիս ազգագրագէտ Գրիգոր Աղանեանը[6]: Ըստ նրա, Գիւմրի-Ալեքսանդրապոլի քաղաքային արհեստների եւ առեւտրի զարգացման կարեւոր խթանիչ է հանդիսացել ներկայումս Թուրքիայի տարածքում գտնուող հայկական Կարս, Կարին, Վան եւն. քաղաքների արհեստաւորների եւ առեւտրականների՝ դէպի Ալեքսանդրապոլ-Գիւմրի տեղաշարժը[7]: Տուեալ արհեստաւոր-առեւտրականութեան տեղաշարժը դէպի Ալեքսանդրապոլ կապուած էր քաղաքական մի շարք իրադարձութիւնների հետ: Արդարեւ, ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմները խթանեցին որ ներկայիս ՀՀ հիւսիսային դարպաս համարուող Գիւմրին (որը նաեւ կարեւոր յենակէտ էր Ռուսաստանի համար) արագ զարգացում ապրի:

Վերոնշեալից բացի Գիւմրի-Ալեքսանդրապոլի արհեստաւոր-առեւտրականութեան հետազօտական մեծ հնարաւորութեան նիւթ են հանդիսանում ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբ Կովկասում եւ Անդրկովկասում առեւտրական գործունէութիւնը, շուկան, առեւտրականին եւ գնորդին, վաճառականին որպէս մեծատունի ներկայացնելու լուսանկարիչ Դիմիտրի Երմակովի կատարած լուսանկարները: Հայոց Ազգագրութեան Թանգարանի[8] «Ֆ» ֆոնդի գիտաօժանդակ նիւթերում լուսանկարների մեծ հաւաքածուով է աչքի ընկնում հենց Երմակովի լուսանկարների հաւաքածուն: Երմակովի այս հաւաքածուն առաջին հերթին հանդէս է գալիս որպէս ժամանակի առեւտրի եւ շուկայի, վաճառականի եւ սպառողի կերպարների նկարագրման եւ ուսումնասիրման հիանալի նիւթ, իսկ որպէս թանգարանային հաւաքածու այն կարող է ցուցադրել որպէս տուեալ ժամանակի խանութ, առեւտրականի կենցաղ ներկայացնող միջոց. թէ՛ որպէս հիմնական եւ թէ՛ որպէս գիտաօժանդակ նիւթ:

Տուեալ ժամանակաշրջանի համար առեւտրի եւ առեւտրականութեան վերաբերեալ տուեալները հիմնականում հետեւեալ բնութագիրն ունեն, ըստ Գիւմրիի ժողովրդական ճարտարապետութեան, քաղաքային կենցաղի եւ ազգային ճարատարապետութեան Ձիթողցոնց տուն-թանգարանի տեղեկատուութեան:

Ալեքսանդրապոլում առեւտրականներն ըստ իրենց կատարած դերի, բաժանուած էին 4 կարգի.-

I- բազազներ-կտորի առեւտրով զբաղուողները, որոնց թիւն հասնում էր 300 (290 հազ. տարեկան շրջանառութիւն).

II- արթարներ արդուզարդի առեւտրով զբաղուողները, որոնց թիւն հասնում էր 150 (55 հազ. տարեկան շրջանառութիւն).

III – ալաֆներ - մրգերի եւ գիւղատնտեսական մթերքների առեւտրականներ, որոնց թիւը հասնում էր 120 (25 հազ. տարեկան շրջանառութիւն).

IV- դուքանչիներ, որոնք զբաղւում էին մանրածախ եւ խմիչքի առեւտրով, որոնց թիւը հասնում էր 100(60 հազ. տարեկան շրջանառութիւն).

Առեւտրականների ընդհանուր թիւը կազմում էր 670 մարդ, որոնց տարեկան շրջանառութիւնը կազմում էր 430 հազ. ռուբլի:

Առեւտրի աշխուժացման ազդակները բաւականին շատ էին՝ դրանցից էին ռուս-պարսկական երկրորդ պատերազմից (1826-1828) յետոյ հաստատուած երկարատեւ խաղաղութիւնը, մաքսային համակարգի կիրառումը, ճանապարհաշինութիւնը:

Սրան գումարւում էր եւ Օսմանեան Թուրքիայի տարանցիկ առեւտրի կարեւոր կէտ լինելը: Ալեքսանդրապոլ էին ներմուծւում կտորեղէնի

զանազան տեսակներ, մրգեր, գինի, օղի: Արտահանւում էր ցորեն, կաշի, բուրդ, օճառ եւն.:

Առեւտրի կազմակերպման բնագաւառում նորութիւնն այն էր, որ 1850ականներից կազմակերպւում էր ամէնամեայ տօնավաճառ, որը տեւում էր երկու շաբաթ:

Քաղաքում կային ամէնօրեայ շուկաներ՝ «Ղափան-ղանթար», որը տեղացիներն անուանել են «Չարսու», եւ «Մալիմէյդան»՝ անասունների շուկայ:

Առեւտրի կազմակերպման գործում իրենց զգալի դերը խաղացին քարաւանատները: Սրանք ունէին իրենց ախոռները, հիւրասենեակները, խանութները, պահեստները եւն.:

Քարաւանատներ էին Մոլլա-ալլունը, Կարմիր խանը, Բաբանենց խանը, Սաաթչոնց խանը, Սիլաջոնց խանը: Կային նաեւ 100ից աւելի խանութներ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐՆ ՈՒ ՇՈՒԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՄՐԻՈՒՄ

Ժամանակակից Գիւմրու քաղաքային առեւտրին հանդիպում ենք հենց միջքաղաքային աւտօկայանից սկսած, որը գտնւում է Գիւմրի քաղաքի հարաւ-արեւելքում: Աւտօկայանի դիմաց՝ ձախ եւ աջ կողմերում հերթականութեամբ դասաւորուած են խանութները, որոնք մեծածախ առեւտրի նշանակութիւն ունեն: Սա պայմանաւորուած է նրանով, որ հանդիսանալով շրջակայ բնակավայրերի կենտրոն, ինչպէս նաեւ Երեւանից ապրանքի բերման հիմնական նշանակման կէտ, այս խանութները եկամուտը առաւել մեծացնելու համար՝ փորձել են տեղաբաշխուել հենց քաղաքային աւտօկայանի մօտ:

Հետաքրքիր է, որ ընդհանրապէս Խորհրդային քաղաքաշինութեան մշակոյթում շուկաներն ու բազարները տեղակայում էին աւտօկայանների մօտ, քանի որ քաղաքները շրջանային կենտրոնների դեր էին կատարում եւ շրջակայ գիւղական միջավայրերը արբանեակներ էին տուեալ շրջանային կենտրոնի համար:

Գիւմրու աւտօկայանին մօտ խանութները ունեն հետեւեալ նկարագրութիւնը.-

Մէկ կամ երկու յարկանի քարի շինութիւններ են, որոնց դռներից սկսուած ցուցադրութեամբ շարուած են հիմնական վաճառքի ապրանքները: Աւտօկայանին առաւել մօտ խանութները հիմնականում տնտեսական բնոյթ ունեն. վառարաններ, ալիւր, փայտէ իրեր, կենցաղային տեխնիկա, բանջարա-պարտէզային մշակման գործիքներ եւն.:

Այս ցուցադրուող ապրանքները, իհարկէ ենթադրել են տալիս, որ շրջակայ գիւղական բնակավայրերի համար առաւել պահանջուած ապրանքները հենց սրանք են: Եթէ համեմատենք ՀՀ միւս մարզային կենտրոնների եւ այլ քաղաքային բնակավայրերի հետ, ապա նկատելի է, որ այս քաղաքներում եւս կարելի է հանդիպել նոյն երեւոյթին, երբ շուկայ-բազարը ընդգրկող տարածքը ապրանքների ցուցադրուող տաղաւարներն հեռու են ընկած եւ քիչ-քիչ ընդլայնում է ստանում այդ տաղաւարների ընդարձակումը: Որպէս այդպիսի համեմատական կարելի է նշել Իջեւան քաղաքի քաղաքային շուկան, որը շուկայի տարածքից արդէն շատ է հեռացել: Իջեւան քաղաքի պարագայում սա կապուած է նաեւ մէկ այլ հանգամանքի հետ[9]:

Գիւմրի քաղաքի քաղաքային շուկայի ձեւաւորման խնդրով, նշենք որ աւտօկայանից մինչեւ խորհրդային շրջանի քաղաքաշինութեան ընթացքում ձեւաւորուած շուկայ՝ մօտ մէկ կիլօմետր է: Սա մի ուղու վրայ է եւ մինչ շուկայ հասնելը կարելի է տեսնել բացօթեայ, շուրջ 30-40 խանութներ, որոնք փողոցի մայթերի վրայ են դասաւորուած: Սրանք հիմնականում վրանային կառուցուածք ունեն, սակայն հանդիպում են նաեւ դեռեւս Սպիտակի երկրաշարժի տարիներին որպէս օգնութիւն ստացած տնակները, որոնք յետագայում շէնքերի կառուցումից յետոյ վերածուել են խանութների, մանր արհեստաւորների արհեստանոցների, վարսաւիրանոցների, պահեստների: Բուն շուկան, որը մի ամբողջ համալիր է, պայմանականօրէն բաժանենք միքանի մասերի, որոնք ունեն իրենց առանձին անուանումները, որից ելնելով էլ ամէն շուկայի առանձին մասի ընկալում տարբեր է:

Գիւմրիի ժամանակակից քաղաքային շուկայի (Վարի շուկայ, Ներքեւի շուկայ) պայմանականօրէն բաժանման ենթարկուած հատուածներն են.-

- Բազար
- Անգար
- Տօնավաճառ Լիաննա
- Լաչինի Միջանցք

Բազարը դեռեւս խորհրդային քաղաքաշինութեան արդիւնքն է, որը որոշակի փլուզումների է ենթարկուել: Այստեղ երեք երկկողմ շարքով տաղաւարներ են շարուած մինչեւ 15մ երկարութեամբ ձգուելով: Բազարի մուտքի մօտ կենդանիների՝ հիմնականում թռչունների, վաճառք է իրականացւում: Տաղաւարների առաջին գիծը, որը սկսւում է հենց թռչնավաճառների մօտից, հիմնականում հիւսուածեղէնի վերավաճառողներն են: Վերավաճառողները այն մարդիկ են - հիմնականում թոշակառու - ովքեր մասնաւոր կամ պետական հիւսուածեղէնի հիմնարկներից, որոշ տոկոսադրոյքով վերցնում են

կտորեղէն, ներքնազգեստներ, մանկական հագուստներ եւ վաճառում: Թէ՛ ապրանքի գինը, թէ՛ վճարուող տոկոսի չափը որոշում են ապրանքի տէրերը:

Երկրորդ շարքը, տաղաւարների սկզբնական մասում համեմունքների վաճառքով է լցուած, դրան կից կան նաեւ տարբեր առարկաների, մանրավաճառային ապրանքներ: Երրորդ տաղաւարների շարքը եւս ունի հիւսուածեղէնի եւ մանրավաճառային ապրանքներ: Այս բազարի վերջին հատուածում երկաթագործ վարպետի արհեստանոցն է, իսկ արհեստանոցի դիմաց շարուած են վառարաններ, խողովակներ եւ այլ ցուցադրանմուշներ, որոնք եւս վաճառքի են հանուած: Այստեղից արդէն սկսւում է Գիւմրու շուկայի երկրորդ հատուածը՝ Անգարը:

Անգարը մեծ ամբարային տարածք է, նախկին խորհրդային պահեստ յիշեցնող շինութեամբ, որն այսօր վերածուել է փակ շուկայի եւ յարակից տարածքի: Այստեղ հիմնականում պտուղ-բանջարեղէնի վաճառք է իրականացւում: Անգարի փակ շուկան սակաւամարդ է. այստեղ շատ քիչ թուով առեւտրականներ կան: Հարցումներից պարզ դարձաւ, որ նրանք ներսում կանգնելու համար օրական 500 դրամ են վճարում, իսկ որոշ մարդիկ, որոնց վաճառողները լաւ էին ճանաչում, գալիս եւ հաւաքում են այդ 500 դրամները: Այստեղ առեւտրով զբաղուող իւրաքանչիւրն ունէր իր յատուկ, մնայուն տեղը, որպէսզի իրենց ճանաչող յաճախորդները շփոթմունքի մեջ չընկնեն. իրենք չեն փոխում իրենց տեղերը:

Անգարի բացօթեայ տարածքում եւս պտուղ-բանջարեղէնի վաճառք է իրականացւում: Այստեղ բեռնատար եւ մարդատար մեքենաներով ՀՀ Արմաւիր, Մասիս, Արտաշատ եւն. քաղաքներից բերւում է մեծաթիւ բանջարեղէն եւ միրգ ու հանւում վաճառքի: Այս վաճառողների համար դրսում առաւել յարմար է, քանի որ մեքենաների միջից էլ հենց իրականացւում է վաճառքը: Սա յարմար է այն տեսանկիւնից, որ փակ շուկայում ամէն երեկոյ պէտք է ապրանքը հաւաքել եւ միայն յաջորդ օրը նորից հանել վաճառքի, իսկ մեքենաների մէջ առաւել հեշտ է այդ առումով հաւաքելու կարիք չի լինում: Այստեղ եւս կայ տեղի վճար:

Անգարի դիմացում է գտնւում է Տօնավաճառ Լիաննան: Հայկական միջավայրում յետխորհրդային տարիների նոր ընկալումներից մէկն է հագուստեղէնի վաճառքի կէտերին անուանել տօնավաճառ: Այսպիսին են Երեւանի Ռոսիա Տօնավաճառը - որտեղ բացառապէս հագուստի վաճառքն է զարգացած - Մալաթիա Տօնավաճառը, որը եւս մեծամասամբ հագուստի վաճառքի կէտ է համարւում: Անգարի դիմաց գտնուող Լիաննա Տօնավաճառը նոյն ընկալումն ունի: Սա երկյարկանի շէնք է, որը 2000ականներին է կառուցուել եւ վերջերս վերանորոգուել: Այստեղ առանձին սենեակներ են յառաջացած, որտեղ հիմնականում

վաճառում է կօշկեղէն եւ հագուստ: Երկու մուտքերի առաջին սրահներում վաճառում է զարդեղէն: Այստեղ առեւտրականների մի մասը վերավաճառողներ են, որոնք օրը երկու կամ երեք հազար դրամ աշխատավարձով վաճառում են ապրանքատիրոջ ապրանքը: Այս ծառայութիւնից օգտւում են հիմնականում այն առեւտրականները, ովքեր միքանի տեղ են ապրանք հանում վաճառքի կամ ունեն նաեւ խանութ:

Անգարի ու բազարի մէջտեղում գոյացած միջանցքը գիւմրեցիները անուանում են Լաչինի միջանցք: Բանն այն է, որ այդ շուկայի յարակից փողոցում, որն իր նեղլիկ լինելու պատճառով գիւմրեցիների կողմից ստացել է «Լաչինի Միջանցք[10]» անուանումը, նոյնպէս մի հսկայ շուկայ է, ուր առեւտրականները տեղի համար չնայած մուծում են կրկնակի աւել վարձավճար՝ 2500-3000 դրամ, քան այդ շուկայում՝ Անգարում (ծածկած շուկայում), սակայն այն առաւել մարդաշատ վայր է: Այստեղ վաճառուող ապրանքներն են գիւղմթերքը, տնտեսական պարագաներ, հանդիպում են նաեւ հագուստի վրանային խանութներ: Բազարից դէպի Լաչինի Միջանցք մուտքի մօտ կանգնում են փող փոխողները՝ «վալիւտի գործ էնողները»: Լաչինի միջանցքը ձգւում է մօտ 500 մետր: Նախատօնական օրերին, այն առաւել մարդաշատ է լինում, քան շուկայի վերոնշեալ մնացեալ հատուածները:

Բացի բազարային առեւտրից Գիւմրիում լայն տարածում ունեն մեծ ու միջին խանութները, որոնք հանրախանութի ընկալում ունեն: Անուանումներում եւս նշւում է սոյն խանութների սուպէրմարկէտ լինելը: Ինչպէս աւտօկայանի յարող տարածքում, այնպէս էլ քաղաքի տարբեր վայրերում կան այդպիսի հանրախանութներ: Քաղաքային բնակչութիւնը բոլորի մասին յստակ տեղեկութիւն ունի: Յետխորհրդային Հայաստանում սուպէրմարկէտային առեւտրի մշակոյթը լայն տարածում գտաւ:

Սուպէրմարկէտային մշակոյթում կան նաեւ տեղական առանձնայատկութիւններ: Սուպէրմարկէտներում վաճառողուհիների քանակը մեծ է, ամէն բաժին ունի մէկ-երկու աշխատակից, ովքեր հանդիսանում են սպասարկող-խորհրդատուներ: Սուպէրմարկէտային առեւտրի կարեւոր բաղադրիչներից է իրերի, ապրանքների պիտակաւորումը, որոնց վրայ մանրամասն ներկայացուած է ապրանքի բաղադրութիւնը, արժէքը եւ արտադրման տարեթիւը: Սակայն հարցուած սուպէրմարկէտի աշխատակիցները նշում էին, որ իրենք հիմնականում խորհրդատուութիւն են ապահովում յաճախորդների համար: Սա առաւել բազարային առեւտուր յիշեցնող երեւոյթ է, երբ յաճախորդը մանրամասն տեղեկութիւն է փորձում ստանալ գնուող ապրանքի վերաբերեալ:

Բացի սուպէրմարկէտներից, շուկայից, բազարից Գիւմրում մեծ թիւ են կազմում շուկայից դէպի քաղաքային հրապարակ ձգուող քարաշէն խանութները, որոնց անուանումները հիմնականում հանդիսանում են կամ ապրանքի տեղի ցուցիչ կամ էլ տուեալ խանութպանի ընտանիքի անդամների կամ հենց իր անունով են լինում: Դրանց օրինակներից են «Փարիզ», «Դուբայ» եւն. անուանումներով խանութները, որոնց անունները պայմանաւորուած են ապրանքի ներածման վայրով: «ՍՍՍՐ» անուանումով խանութի գլխաւոր վերակացուն մեկնաբանեց, որ խանութը այսպէս է անուանուել, քանի որ «սովետի ժամանակ ապրանքը ջրի գին ունէր, մարդիկ ամէն ինչ ունէին»: Սա բնորոշ է հենց այդ խանութին, քանի որ իրենց խանութում ամէն ինչ վաճառւում է շատ մատչելի գներով: Որոշ խանութներ էլ որոշակի տեսականի ունէին: Օրինակ «Օժիտ» խանութում վաճառւում էին միայն ամուսնական պարագաներ եւ յաճախորդներին ուղղորդելու համար էլ հենց խանութը անուանել էին այդպէս:

Անդրադառնալով Գիւմրու ժամանակակից առեւտրականներին, կարելի է նշել որ նրանք իրենց չեն ընկալում որպէս առեւտրականներ: 30 մանր ու միջին առեւտրով զբաղուողների եւ 8-10 սուպէրմարկէտների, խանութների աշխատակիցները հարցման սկզբում որպէս մասնագիտութիւն նշում էին ոչ թէ առեւտրական կամ զբաղուածութիւնը որպէս առեւտուր, այլ այն առաջնային մասնագիտութիւնը, որով կրթութիւն են ստացել: Հիմնականում առեւտրական եզրոյթը բացասական ընկալումներ ունէր կամ մեծ առեւտրով զբաղուելու ընկալում ունէր: Բացասական ընկալման օրինակներից կարելի է համարել այն, որ առեւտրական եզրոյթը հայկական իրականութեան մէջ դեռեւս ունի խորհրդային շրջանից պահպանուած *սպեկուլեանտի*[11], խաբեբայի ընկալում:

Հետաքրքիր է, սակայն, որ հայկական միջնադարեան հեղինակներից Մխիթար Գօշը ունեցել է մի շարք կէտեր, որոնցով արգելքներ էր դրւում առեւտրականների այս կամ այն ոչ-ընդունելի արարքների վրայ[12]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Գիւմրին չնայած քաղաքաշինութեան եւ բնակչութեան թուաքանակով ու միգուցէ մշակութային բազմազանութեամբ քաղաքային բնակավայր է, սակայն ժամանակակից քաղաքային բնակավայրին բնորոշ առեւտրական յարաբերութիւններ հիմնականում չունի: Քաղաքային առեւտուրը ձեւաւորուել ու շարունակում է զարգանալ բացառապէս բազարային տիպով, հասարակական յարաբերութիւնները խստիւ կապուած են առեւտրական գործընթացների հետ՝ տնտեսական

Հեղինակն այնուհետեւ, նշուած ժամանակագրական տրամաբանութեանը հետեւելով, անդրադառնում է Ի. դարի հայ յօրինողական դպրոցի զարգացման առանձին փուլերում առաւել նշանակալի դերակատարում ունեցող անհատներին, որոնց ոճական առանձնայատկութիւններում դրսեւորւում է Ի. դարի սեռի եւ ոճական բազմաշերտութիւնը: Արամ Խաչատրեան եւ Առնօ Բաբաջանեան, Ղազարոս Սարեան եւ Աւետ Տէրտէրեան, Աշոտ Զօհրաբեան եւ Էդուարդ Հայրապետեան: Իդէպ, այս եւ յաջորդ բաժիններում ներկայացուած ստեղծագործողների ընտրութեան հարցում Սարգսեանը զարմանալի սկզբունքային եւ հետեւողական մօտեցում է դրսեւորում: Իր իսկ խօսքերով բնորոշելով այս մօտեցումը, տեղին է նշել, որ տարիների ընթացքում հետազօտողը, մասնագիտական հետաքրքրութիւններից ելնելով, վաղուց արդէն յստակեցրել է այն անունների շրջանակը, որոնք դարձել են «իր հեղինակները»՝ հոգեհարազատ, հասկանալի, ընկալելի, եւ դրանով իսկ մշտապէս հետաքրքրութեան արժանի: Նրանց ստեղծագործական իւրաքանչիւր ձեռքբերումն այս կամ այն ձեւով արժանանում է երաժշտագէտի անդրադարձին ու սկզբունքային գնահատականին: Գիտնականն անկեղծ է իր նախասիրութիւններում: Այդ հեղինակների ու յօդուածագրի շնչառութիւնն ու սրտի բաբախիւնները չափազանց ներդաշնակ են: Այդուհանդերձ, նրա գնահատականները զուրկ են աւելորդ ենթակայական հիացականութիւնից, այլ հիմնաւորուած են անկողմնակալ գիտական խորազնին ուսումնասիրութեամբ:

Երկրորդ բաժինը ունի «Արդի Երաժշտատեսական Գաղափարների Շրջանակում» խորագիրը: Այստեղ, առաջնորդող յօդուածը մասամբ լրացնում է հայ մասնագիտացուած երաժշտութեան ձեւաւորման պատմական գործընթացում իրենց մնայուն եւ հիմնորոշ դերակատարութիւնն ունեցած անհատներին, երաժշտատեսական-գեղագիտական մտքի փայլուն ներկայացուցիչների գործունէութեանը, որը զուգահեռաբար ընթացել է ռուսական (մասնաւորապէս Սանկտ-Պետերբուրգի) եւ Երեւանի կոնսերվատորիաներում: Խօսքը հայ երաժշտութեան տեսութեան եւ գեղագիտութեան երկու ռահվիրաների՝ Արշակ Ադամեանի եւ Քրիստափոր Քուշնարեանի մասին է: Ռուսական երաժշտագիտութեան համար բեկումնային հանդիսացող նախորդ դարի 1920ականներից ծաւալուող իրադարձութիւններում իրենց գործուն դերակատարութեամբ նրանք լրացրին եւ հարստացրին ժամանակի տեսական միտքը պոլիֆոնիայի, կշռոյթի, լադային մտածողութեան, ֆոլկլորի տիպաբանական վերլուծութեան մեթոդաբանութեան մշակման, երաժշտական գեղագիտական մտքի պատմութեան եւ տեսութեան, երաժշտութեան ներգործութեան եւ ընկալման հիմնահարցերի շուրջ կատարած ուսումնասիրութիւններով: Այս երկու գիտնականներն էլ կանգնած են եղել Երեւանի երաժշտանոցի հիմնադրման ակունքներում եւ իրենց ուրոյն ներդրումն են ունեցել առայսօր առաջադիմական հայեացքներով աչքի ընկնող ազգային երաժշտատեսական մտքի ձեւաւորման ու զարգացման գործում: Երաժշտատեսական ու գեղագիտական հարցերը, որոնք Ի. դարի առաջին կէսին մշակուեցին գիտնականների կողմից, այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականութիւնը ու շարունակւում են մերօրեայ գիտնականների աշխատութիւններում, որոնցից մէկն էլ ներկայացուող գրքի հեղինակն է:

Երկրորդ եւ մասամբ նաեւ Երրորդ՝ «Երաժշտութեան Ոլորտները» բաժիններում զետեղուած յօդուածները հիմնականում անդրադառնում են այլազգի արուեստագէտներին: Այս խճանկարում դրսեւորուել է հեղինակի լայն աշխարհայեացքն ու առանձին, մասնաւոր երեւոյթներում համընդհանուր օրինաչափութիւններ դիտարկելու ձիրքը: Լէոշ Եանաչէկ, Միկալոյուս Կոնստանտինուս Չիուլէոնիս, Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով, Սոֆիա Գուբայդուլինա, Քշիշտոֆ Պենդերեցկի, Դէորդ Կուրտագ, Պաւէլ Ֆլորենսկի, Մաուրիսիօ Կագէլ, Գիա Կանչելի, Ռոբերտ Ստուրուա եւ ուրիշներ: Տարբեր առիթներով հրատարակուած այս յօդուածները, ուղղակիօրէն չառնչուելով հեղինակի հիմնորոշ մենագրութիւնների բուն նիւթին, գալիս են լրացնելու ամբողջական պատկերացումը Սարգսեան գիտնականի, հետազօտողի ընդգրկուն գործունէութեան մասին:

Ինչպէս եւ հայ երաժշտութեանը վերաբերող յօդուածներում, այնպէս էլ օտարազգի յօրինողներին նւիրուած ուսումնասիրութիւններում

երաժշտագէտն անդրադառնում է թէ՛ գեղագիտական ու մշակութաբանական, թէ՛ առանձին տեսական, կառուցուածքային երաժշտալեզուական կամ սեռի ու ձեւի փոխյարաբերութեան հիմնախնդիրներին:

Երաժշտագէտն ընտրում է յատկապէս այն դիտանկիւնները, որոնք համընդհանուր եւ օրինաչափ երեւոյթ են ոչ միայն տուեալ հեղինակի լեզուամտածողութեան, այլեւ Ի. դարավերջի համաշխարհային երաժշտութեան կտրուածքով հիմնորոշ կերպարային-գեղագիտական եւ լեզուարտայայտչական հիմնահարցեր են, եւ դրանով իսկ առնչւում են նաեւ հայ երաժշտութեան նմանօրինակ դրսեւորումներին: Այսպէս, Եանաչէկի կուարտէտների վերլուծութիւնը դիտարկելով Ի. դարի ամենատարածուած եւ մնայուն լեզուահամակարգի տեսանկիւնից, որպիսին է նոր մոդալ մտածողութիւնը, հեղինակը երեւոյթը կապում է ոչ միայն համաշխարհային մեծութեան վարպետների արուեստի հետ, ինչպիսիք են Դեբիւսին, Այվզը, Չիւռլէոնիսը, Ստրաւինսկին, Բարտոկը, Մեսսիանը, այլեւ անսպասելի, անկանխատեսելի կապեր է տեսնում հայ արդի կոմպոզիտորների երաժշտութեան հետ:

Ի. դարավերջի արուեստում նորովի են արժեւորւում հնչիւնային տարածականութեան, հնչիւնարտաբերման, արհեստագիտական եւ ձայնային հնարքների կիրառումը, ժամանակի ու տարածութեան, երաժշտական ձեւակազմաւորման, աղմուկի եւ խօսուն լռութեան փոխյարաբերութիւնը, տեմբրային ինքնատիպ հնարքները: Այս հարցադրումները նոյնպէս հեղինակը լուսաբանում է՝ բացայայտելով Գուբայդուլինայի, Շտոկհաուզէնի ու Մեսսիանի, Պենդերեցկու, Քսենակիսի, Լուտոսլաւսկու եւ Աւետ Տէրտէրեանի լայնահայեաց աղերսները: Ստեղծագործական անհատականութիւնների բացարձակ իւրօրինակ դրսեւորումների հետ մէկտեղ, այդ արուեստագէտներին միաւորում է Արեւելքի ու Արեւմուտքի հոգեւոր իմացութեան ուսմունքների սինկրետիզմը, ինչն անվիճելիօրէն առկայ է այդ հեղինակների ստեղծագործութեան մէջ (էջ 146):

Գրքի Երրորդ՝ «Երաժշտութեան Ոլորտները» բաժինը ներառում է արուեստների փոխառնչութեան բազմաշերտ հարցադրումներ: Խորհրդանշական է, որ այս բաժնի առաջին յօդուածն անդրադառնում է Պաւէլ Ֆլորենսկու գեղագիտական հիմնադրոյթներին, մասնաւորապէս՝ խօսքի հնչիւնային տարածականութեան դիտանկեանը: Արուեստի պատմութեան եւ փիլիսոփայութեան բացառիկ գիտնականի հետաքրքրութիւնների շրջանակում երաժշտութիւնը, կարելի է ասել, երկրորդական տեղ է զբաղեցրել, սակայն գրեթէ մէկ հարիւրամեակ անց այս մեծ փիլիսոփայի ու աստուածաբանի գաղափարներն աւելի քան արդիական են հնչում՝ յատկապէս նորագոյն երաժշտական

մտածողութեան խորհրդապաշտական ընկալումների լուսաբանման հարցում: Այսպէս, «խորհրդանիշի ուժանիւթ» հասկացութեան մեկնաբանութիւնը թոյլ է տալիս աւելի ճիշտ ընկալել Սոֆիա Գուբայդուլինայի եւ Աւետ Տէրտէրեանի երաժշտութեան մէջ ժամանակատարածական իւրայատկութիւնները, հնչիւն-խորհրդապատկերների, նիշերի բազմիմաստութիւնը հոգեւոր տարածականութեան մեկնաբանութիւններում եւն.:

Ի. դարի արուեստում խորհրդապաշտական, դիցաբանական, պաշտամունքային, հոգեւոր գաղափարներն ու դրանց ընկալումները դրսեւորւում են բարդ ու բազմազան մեկնաբանութիւններում՝ ենթարկուելով ժամանակի արժէհամակարգերի փոփոխութիւններին: Նորովի մեկնաբանման եւ աննախադէպ հետաքրքրութեան առարկայ են դառնում դիցաբանական, աստուածաշնչեան դիպաշարերն ու հոգեւոր արժէքները, առանձին խորհրդապատկերներն ու ձեւակերպումները: Գիտնականը պատահական չի դիտարկում Պաւէլ Ֆլորենսկու երեւոյթի հանդէպ հետաքրքրութիւնը, Ռիմսկի-Կորսակովի, Սկրիաբինի, Ստրաւինսկու արուեստի նորովի արժեւորումը, յարակից արուեստների ներքին փոխառնչութիւններում են լուսաբանւում Չիուռլէոնիսի հոգեւոր ընկալումները, Սերգէյ Փարաջանովի շարժանկարների երաժշտական երեւոյթը, Ստուրուայի թատրոնի կերտող իրականութիւնը, Կագէլի գործիքային թատրոնի հայեցակարգը, Մինաս Աւետիսեանի կերպարուեստի գաղտնիքը:

Գրքի Երրորդ բաժինը եզրափակում է Մինաս Աւետիսեանի արուեստի հոգեւոր խորհրդապաշտական իւրօրինակ վերլուծութիւնը երաժշտագէտ-հետազօտողի դիտանկիւնով: Եւ դարձեալ ժամանակային ու աշխարհագրական աղերսների լայն վրձնահարուածներով հետազօտողը խորամուխ է լինում Մինասի հանճարի գաղտնիքի բացայայտմանը: Ընդունելով հայրենի եւ օտարազգի արուեստաբանների հեղինակաւոր դիտարկումները՝ Մինասի ոճական, գունային, լուսային, արհեստագիտական այլեւայլ հնարքների, գունանկարի եւ գծանկարի յօրինուածքային կառոյցի օրինաչափութիւնների վերաբերեալ, Սարգսեանն իրաւացիօրէն ընդգծում է, որ այդ ամէնը ածանցեալ նշանակութիւն են ձեռք բերում Մինասի երեւոյթի կարեւորագոյն գեղագիտական իւրայատկութեան առկայութեամբ՝ ուրոյն սիներգիզմով: Հոգեւոր հայրերի այս եզրոյթն ուսումնասիրում է մարդկային գիտակցութեան՝ աշխարհի հոգեւոր կողմը բացայայտող աշխուժ գործօնը… Արարող մարդու կողմից վերզգայական աշխարհի երեւոյթների հայեցողական ունակութիւնը (էջ 257): Այս իւրայատկութեամբ են նաեւ պայմանաւորուած Մինասի կտաւների բազմաթիւ աղերսները միջնադարեան մանրանկարչութեան եւ

որմնանկարչութեան խորհրդանիշների հետ՝ լինի բնանկար, կանխատեսումներով յագեցած յօրինուածք թէ խորաթափանց, գերզգայական, բազմաշերտ հոգեբանական դիմանկար: Ապշեցնող հաստատակամութեամբ նա մշտապէս հնարաւորութիւն է փնտռում արտայայտելու քրիստոնէական յաւերժական ճշմարտութիւններ, սրբապատկերներ եւ նշաններ՝ «*անհասանելի խորին խորհուրդ*», Աստուածամօր հնազանդութիւն, Յիսուսի զոհաբերութիւն, առաքելական իմաստնութիւն, հրեշտակային օրհնութիւն (էջ 261):

Ժողովածուի վերջին՝ Չորրորդ բաժնում՝ «Կատարողական Արուեստ», ընդգրկուած են հեղինակի պարբերական անդրադարձները վերջին երկու տասնամեակում Հայաստանի մայրաքաղաքի համերգային կեանքում տեղ գտած առաւել նշանակալի երեւոյթներին: Այս բաժինը երկու ենթաբաժիններից է կազմուած, որոնցից առաջինը՝ «Երաժիշտները Դիմանկարներով» ներկայացնում է վեց երաժիշտ-կատարողների, որոնք գործուն ազդեցութիւն են ունեցել Հայաստանի մշակութային զարգացման գործում թէ՛ երկրի ներսում, թէ՛ նրա սահմաններից դուրս՝ Օհան Դուրեան, Ռուբէն Ահարոնեան, Յարութիւն Թոփիկեան, Վալերի Գերգիեւ, Դաւիթ Խանջեան, Արաքս Դաւթեան: Երկրորդ բաժնում՝ «Փառատօներ», անդրադարձ է արւում երեւանեան կարեւոր երաժշտական նախագծերին, մասնաւորապէս Ազգային Պատկերասրահի, Երեւանեան Երաժշտական Փառատօնի, ԻԱ. Դարի Հեռանկարների, Քշիշտոֆ Պենդերեցկու, Սոֆիա Գուբայդուլինայի, Դէորդ Կուրտագի, Տիգրան Մանսուրեանի հեղինակային համերգաշարերին: Նշուած համերգային իրադարձութիւններն իրենց կատարողական բարձրակարգ մակարդակով եւ համաշխարհային մեծութիւնների մասնակցութեամբ յիրաւի կարող են համարուել մերօրեայ կատարողական արուեստի համաշխարհային ամրակայման փայլուն օրինակ (էջ 12): Ինչպէս նկատեցինք, այստեղ եւս հեղինակը սկզբունքային հետեւողականութեամբ անդրադառնում է յատկապէս «ի՛ր հեղինակներին», որոնց գործի արժէքն ու նշանակութիւնն այս դէպքում լուսաբանւում են հայ եւ բազմաթիւ օտարազգի մենակատարների ու երաժշտախմբերի մեկնաբանութիւնների ներքոյ:

Գրքի կարեւոր արժանիքներից մէկն էլ նրա բազմալեզուութիւնն է: Յօդուածների մեծ մասը, ռուսերէնից բացի, ներկայացուած են այն լեզուներով, որոնցով ժամանակին հրապարակուել են տարբեր պարբերականներում եւ ժողովածուներում՝ հայերէն, գերմաներէն, անգլերէն եւ ֆրանսերէն: Այս հանգամանքը, հեղինակի համոզմամբ, կարող է նպաստել ընթերցողների աւելի լայն շրջանակի ընդգրկմանը:

Գրքի վերջում զետեղուած են երկու յաւելուած՝ ժողովածուում ընդգրկուած յօդուածների հրատարակութեան վերաբերեալ

տեղեկատուութեամբ եւ օգտագործուած անձնանունների այբբենական բառացանկով, ամփոփում անգլերէնով եւ տեղեկութիւններ հեղինակի մասին՝ դարձեալ ռուսերէն եւ անգլերէն:

Արուեստագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Սվետլանա Սարգսեանի գիտական ուսումնասիրութիւնների այս ժողովածուն եւս մի հիմնորոշ ներդրում է հայ երաժշտագիտական մտքի պատմութեան մէջ: Անդրադառնալով դարերի սահմանագծի պատմական կարեւորագոյն շրջափուլի գեղագիտական, տեսական եւ ստեղծագործական հիմնահարցերին՝ գիտնականը շարունակում է նախորդ դարասկզբի երաժշտատեսական մտքի ռահվիրաներից մէկի՝ Արշակ Ադամեանի գործունէութեան գլխաւոր եռամիասնութեան սկզբունքը՝ արուեստ, գիտութիւն արուեստի մասին եւ արուեստագէտ:

ԾՈՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ
tsmovsisyan@yahoo.com

Inguna Kurcens, *Minas Avetisyan: Jivopis' I Risunok (K Voprosu O Formakh Assotsiativno-Simvolicheskoy Obraznosti V Armyanskoy Jivopisi 1960-1970kh Godov)* (Մինաս Աւետիսեան. գեղանկար եւ գծանկար, զուգորդական-խորհրդապաշտական պատկերայնութեան ձեւերի հարցը 1960–1970ականների հայ գեղանկարչութեան մէջ) **Երեւան, 2014.**

Ահա, վերջապէս, սեղանիս է դրուած ազգութեամբ լատիշուհի, բայց հոգով՝ հայրենակից, արուեստաբան Ինգունա Կուրցենսի սպասուած գիրքը՝ ռուսերէն[1]: Մենագրութիւնը հիմնուած է 1993ին Մոսկուայում պաշտպանած հեղինակի թեկնածուական ատենախօսութեան վրայ եւ լոյս է տեսել 2014ին, Երեւան, "Հայաստան" Հրատ.), բանասէր Արծուի Բախչինեանի խմբագրութեամբ, իսկ աւելի ճիշտ կը լինէր ասել՝ նրա նախաձեռնութեամբ: Մինչ այդ, 1989ին, Հայաստանի Ազգային Պատկերասրահի հրատարակութեամբ լոյս էր տեսել նոյն հեղինակի «Մինաս Աւետիսեան» խորագրով ռուսալեզու մի փոքր գրքոյկ, որը, բնականաբար, չէր կարող ներկայացնել հետազօտութիւնը ողջ ծաւալով:

Մինաս Աւետիսեանի մասին գրականութիւնն հսկայածաւալ եւ բազմաբնոյթ է՝ ընկերային յուշերից մինչեւ արուեստաբանական յօդուածներ ու մենագրութիւններ: Հեղինակները հիմնականում խորհրդային շրջանի հայ եւ ռուս ճանաչուած արուեստաբաններ են՝ Հենրիկ Իգիթեան, Շահէն Խաչատրեան, Նոնա Ստեփանեան, Ալեքսանդր Կամենսկի, Սոֆիա Կապլանովա եւ այլք:

Կուրցենսը չի սահմանափակւում նկարչի գեղանկարչութեան ձեւաստեղծման վերլուծութեամբ, այլ վերհանում է ձեւապաշտական նշանների ներքոյ թաքնուած բովանդակութիւնը: Նա չի գայթակղւում նկարչի արուեստում վաղանցիկ յեղափոխականութիւն տեսնելու ցանկութեամբ, թէպէտ խորհրդային արուեստի շրջանակներում այն իրօք յեղափոխութիւն էր: Սակայն, ըստ Կուրցենսի, Մինասի նորարարութիւնը կայանում է ոչ թէ մակերեսային-ձեւապաշտական, այլ դրանց միջոցով հոգեւոր բովանդակութեան արտայայտման եղանակների հնարքներում: Աշխատութեան այս գլխաւոր՝ վերժամանակային մօտեցումն է, որի շնորհիւ այն մնում է միշտ արդիական ու համամարդկային յաւերժական արժէքներին, այդ առումով հարազատանում հենց Մինասի արուեստին:

Մինաս Աւետիսեանի արուեստի մեկնաբանութիւնները հիմնականում յենուած են եղել պաշտօնական քարոզչականութեանը հակադրուող ձեւապաշտական մեթոդի վրայ: Այդուհանդերձ, բոլոր հեղինակները ձեւապաշտական բնութագրումներից ու թեմատիկ

առանձնայատկութիւնների արձանագրումից աւելի խորը չեն թափանցել: Մինաս Աւետիսեանի նկարչական լեզուն բաւական բարդ է, ընդգրկուն եւ այլաբանական, բայց եւ յստակ յղումներ ունի պատմական արդիապաշտութեան՝ տպաւորապաշտութիւնից ու յետ-տպաւորապաշտութիւնից դէպի հազիւ նշմարուող թռիչքը՝ Ի. դարի երկրորդ կէսի գունային դաշտերի վերացական նկարչութեանը: Այդուհանդերձ, Մինասի նկարչութիւնն իր հոգեւոր շեշտուածութեամբ, յաւերժականի արձարծմամբ հաւասարազօր է հաւատքի: 1960ականների խորհրդային արուեստը ընդհանրապէս ընկալւում էր իբրեւ նոր հաւատք եւ առաքելութիւն: Կուրցենսը զգալի ուշադրութիւն է դարձնում նկարչի գործերում հոգեւոր-կրօնական նշանների առատ այլաբանութիւներին եւ այն դիտարկում “ազատական կոմունիզմի” դարաշրջանի համախորհրդային արուեստի “դարձի” համապատկերում: Սա է Մինասի արուեստի էական տարբերութիւնը ե՛ւ արդիապաշտներից (ձեւի գերակայութեան եւ բովանդակութեան հետ նոյնանալը) եւ աւանդապաշտներից (ձեւի ենթարկուելը թեմային եւ բովանդակութեանը): Մինչդեռ, աւանդական-պաշտօնականի եւ նորարար-արդիապաշտականի բեւեռացման պայմաններում արուեստաբանները պէտք է տիրապետէին մի ընդհանրական մեթոդի, որը թոյլ կը տար համարժէք կերպով մեկնաբանել Մինասի եւ նրա սերնդակիցների արուեստը: Ձեւապաշտական մեթոդը ակնյայտօրէն բաւարար չէր՝ վերաբերուեր ազգային գեղարուեստական թէ արդիապաշտական աւանդոյթների բացայայտմանը: Բարդութիւնը թեմայի խնդրի վերանայման եւ բովանդակութեան հետ ձեւի՝ նոր, առանձնայատուկ, անուղղակի ագուցումների մէջ է: Հենց այդ ագուցուածքներն է, որ Կուրցենսը բացայայտում է որպէս “զուգորդական-խորհրդապաշտական պատկերայնութեան ձեւեր”: Պէտք է նկատել նաեւ արուեստաբանի առջեւ դրուած, թեմային համարժէք լեզուի ու եզրաբանութեան բարդ խնդիրը, որին նա, ի դէպ, մեծ ուշադրութիւն էր դարձնում նաեւ ուսանողների հետ իր աշխատանքում:

Յայտնի է, որ հայ կերպարուեստը մեծ համբաւ ունէր Խորհրդային Միութիւնում եւ մշտապէս ռուս արուեստաբանների հետաքրքրութեան կենտրոնում էր: Դա առաւել ցայտուն երեւաց յատկապէս 1960ականների վերելքի ժամանակ: Հայկական “ազգային արդիապաշտութեան” հանդէպ մեծ հետաքրքրութիւն էին ցուցաբերում յատկապէս մոսկովեան արուեստաբանական դպրոցի “արդիապաշտ” թեւի այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք էին Դմիտրի Սարաբեանովը եւ Ալեքսանդր Կամենսկին: Գիտահետազօտական գործունէութեանը զուգահեռ, նրանց ջանքերն ուղղուած էին խորհրդային

իշխանութիւնների կողմից պախարակուած “ձեւապաշտ” արուեստագէտների պաշտպանութեանն ու արդարացմանը: Կամենսկին, մասնաւորապէս, համարւում է այսպէս կոչուած “սուռովի ստիլի” (խստաշունչ ոճ) տեսաբանն ու ջատագովը, ով Մինասի արուեստին անդրադարձած գլխաւոր ռուս արուեստաբանն է: Կամենսկին էր, որ, ելնելով խորհրդային պաշտօնական արուեստին հակադրուող վաթսունականացիների գեղարուեստական լեզուի նորարարութիւններից, արուեստաբանական շրջանառութեան մէջ դրեց “պատկերային այլաբանութիւնների” հարցը: Նրա մեթոդի վրայ է յենւում Կուրցենսը: Լեզուաբանական կառուցուածքապաշտութիւնից փոխ առնուած այդ հասկացութիւնները զգալիօրէն ընդլայնում եւ հարստացնում էին արուեստաբանութեան գործիքակազմը, արուեստի մեկնաբանման մեթոդաբանութիւնն առաւել համարժէք դարձնում՝ բուն գեղարուեստական գործընթացին եւ ժամանակի արուեստաբանութեան արեւմտեան միտումներին: Իսկ այդ գործընթացն, ինչպէս վկայում է հենց Մինասի արուեստը, յենուած էր ենթիմաստների, արտայայտման անուղղակի եղանակների, խորհրդանիշների վրայ, որոնց ընթերցումը պահանջում էր յատուկ “ծածկագրերի” իմացութիւն:

Ահա, արուեստաբանութեան յաւելեալ կամ, ինչպէս այսօր կ'ասէին, միջմասնագիտական, այսօրինակ գործիքակազմն էր հարկաւոր՝ վերհանելու համար Մինասի արուեստի խորքային էութիւնը, որին իբրեւ մոսկովեան խորհրդային-արդիական դպրոցի ներկայացուցիչ, տիրապետում է Կուրցենսը: 1960–1970ականներից Խորհրդային Միութիւնում տարածուած նշանաբանութեան (սեմիոտիկա) եւ կառուցուածքային վերլուծութեան դպրոցի հիմնադիրն էր Տարտուի Համալսարանի ուսուցչապետ Եուրի Լոտմանը: Վերջինս եւ նրա նշանաբանական տեսութիւնը ճանաչուած էր նաեւ հայաստանեան “այլախոհական”, առաջադէմ մտաւորականների շրջանում: Սակայն, կառուցուածքային վերլուծութիւնն այդ թուականների հայկական արուեստաբանութեան մէջ տեղ չգտաւ. մտաւորական մեծ մասը ակնյայտօրէն տեղ էր տալիս ազգային (ազգայնական) մօտեցումներին, որոնց տեղային արդիականութիւնը հաստատւում էր օրախնդիր դարձած ազգային ինքնութեան վերահաստատման եւ խորհրդայինին հակադրուելու մէջ: Բանն այն է, որ 1960ականների հայ կերպարուեստի ազատական շարժումը, որի առաջատարն էր Մինաս Աւետիսեանը, յենուած էր ազգային աւանդոյթների վերաիմաստաւորման եւ արդիապաշտական ոճերի հետ համաձուլման վրայ: Զարմանալիօրէն, Կուրցենսի գրքում եւ ոչ մի անգամ չի արծարծուել “արդիապաշտութիւն” (կամ այլ “պաշտութիւն”) եզրն իսկ: Նա կարողացաւ ողջ խորութեամբ բացայայտել Մինասի

բանաստեղծականութեան բարդ շերտերը՝ կիրառելով վերազգային եւ վերպատմական կառուցուածքային վերլուծութեան մեթոդը, եզրաբանութիւնը եւ իր ուրոյն, առանձնայատուկ ձեւակերպումները: Սա չի նշանակում, որ հեղինակը չի տեսել Մինասի արուեստի ազգային հիմքերը. հակառակը՝ ազգայինը Մինասի արուեստում նա ներկայացրել է համամարդկային մարդասիրական արժէհամակարգի համապատկերում, ինչը ոչ միայն չէր հակասում 1960ականների համախորհրդային ազատականացման միտումին, այլ նոյնիսկ նոր հաստատումներ էր գտնում: Հայաստանեան իրականութեան մէջ Կուրցենսը առաջին եւ միակ արուեստաբանն է, որ Մինասի արուեստը դիտարկեց 1960-1970ականների համախորհրդային ազատականացման, հոգեւորի վերահաստատման համապատկերում, անգամ ընդհանուր եզրեր գտաւ “խստաշունչ ոճի” հետ: Զարմանալի չէ, որ տակաւին խորհրդայինի հետ կապուած, ուստիեւ՝ հայկական արդիական-ազգայնական տրամախօսութեան կողմից անտեսուող “խստաշունչ ոճի”ն Մինասի արուեստը առնչելը տեղային միջավայրին առնուազն խորթ կը լինէր: Ընդ որում, արուեստաբանը չի սահմանափակւում միայն Մինասի արուեստով, այլ լայնօրէն զուգահեռներ է կատարում նոյն ժամանակաշրջանի հայ, ռուս, մերձբալթեան եւ այլ ազգերի նկարիչների գործերի հետ:

Խորապէս հասկանալու համար Կուրցենս-անհատականութեան եւ արուեստաբանի տեսակը, մասնաւորապէս ըմբռնելու համար նրա “Մինասի…” նշանակութիւնն ու առանձնայատկութիւնը, պէտք է ճանաչել հեղինակին ու նրա անցած ուղին: Կոփուած լինելով դժուար ճակատագրի ոլորաններում՝ նա ոչ միայն չկոպտացաւ, չպարսպապատուեց պաշտպանական կոշտ շերտով, այլ ընդհակառակը՝ իր ոգու տոկունութեամբ աւելի բացուեց մարդկանց ու աշխարհի առաջ՝ պատրաստ նուիրուելու ու ծառայելու: Արուեստաբանը ծնուել է լատուիական Ալուքսնէ քաղաքում. նրա ծնողները աքսորուել են Ռուսաստանի Խակասիա երկրամասը, եւ փոքրիկ Ինգունան մեծացել է աքսորավայրում: Վաղ հասակից նա կլանուած է եղել երաժշտութեամբ, աւարտել է երաժշտական եօթնամեայ դպրոցը: Անձնական կենսագրութեան այդ ողբերգական կողմերը, թերեւս, պատճառ դարձան, որ ապագայ արուեստաբանը սեփական ապրումների միջով անցկացնի խորհրդային արուեստագէտների հալածանքներն ու ընդվզումները մամլիչ համակարգի դէմ: Անձնական ցաւի ու տառապանքի գնով գիտակցուած մարդկային կեանքի արժէքը դարձաւ Կուրցենսի կենսական եւ մասնագիտական հաւատամքը: Ահա թէ ինչու նրան դժուար է գայթակղել արուեստում մակերեսային

ձեւապաշտութեամբ. նա թափանցում է կտաւի՝ իբրեւ շնչող կենսաթրթիռ նիւթի ամենախորքը, որպէսզի ճանաչի նկարի հոգին:

Լենինգրադի (այժմ՝ Ս.Պետերբուրգի) Գեղարուեստի Ակադեմիան աւարտած Կուրցենսին Հայաստան էր բերել հենց սէրը Մինասի արուեստի հանդէպ եւ նրա մասին աշխատութիւն գրելու մղումը: Նախքան հայրենի Ալուքսնէ քաղաքում վերահաստատուելը, արուեստաբանը Հայաստանում ապրեց շուրջ 15 տարի՝ մեզ հետ կիսելով կամ, իբրեւ տարագիր, մեզանից է՛լ առաւել դաժանութեամբ զգալով անկախութեանը յաջորդած քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի փորձութիւնները: Նա հայկական արդի արուեստի իր հետազօտութիւններով, ելոյթներով, յօդուածներով եւ յատկապէս դասաւանդմամբ զգալի հետք թողեց եւ ընդլայնեց արուեստաբանական մեր՝ անկախութեան առաջին (պատերազմական "կորուսեալ") սերնդի, ըմբռնումները: Կուրցենսն աշխատեց նաեւ Հայաստանի Ազգային Պատկերասրահի հայ գեղանկարչութեան բաժնում եւ Երուանդ Քոչարի Թանգարանում՝ կատարելով մի շարք արդիական հետազօտութիւններ Երուանդ Քոչարի եւ 20րդ դ. 2րդ կէսի հայ կերպարուեստի վերաբերեալ: Դա էլ իր հերթին խիզախութիւն էր, քանի որ, վաթսունականների արդիապաշտ արուեստագէտներին եւ յատկապէս Մինասին ներկայացնելը գլխաւորապէս Ժամանակակից Արուեստի Թանգարանի մենաշնորհն էր՝ ի դէմս Հենրիկ Իգիթեանի: Եւ այսօր, Կուրցենսի ներդրումը հայաստանեան գեղարուեստական դաշտում գնահատելն ու արդիականացնելը ոչ միայն երախտագիտութեան եւ յարգանքի տուրք է նրա նկատմամբ, այլեւ արժէքաւոր գիտական աղբիւր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Գրքի մէկ գլուխը Արծուի Բախչինեանի հայերէն թարգմանութեամբ լոյս է տեսել *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ում (Ինգունա Կուրցենս, «Զուգորդական-Խորհրդապաշտական Պատկերաւորման Առանձնայատկութիւնները 1960-70ականների Խորհրդային Կերպարուեստում», *ՀՀՀ, Ի. Հատոր*, 2000, էջ 353-368):

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍԵԱՆ
sargsyanlilityerevan@gmail.com

Alexandre Siranossian (avec la collaboration de Maxime K. Yevadian), *Les Métamorphoses de Tigrane. L'épopée Arménienne dans le Théatre Classique et l'Art Lyrique*, Lyon, Sources d'Arménie, Tome I-II, 2014.

ԺՋ. դարի վերջից մինչեւ ԺԹ. դարի կէսերը եւրոպական գրականութեան եւ օպերային արուեստում ստեղծուել են բազմաթիւ երկեր, որոնց մէջ հանդէս են եկել հայ հերոսներ, եւ գործողութիւնները կատարուել են պատմական Հայաստանում: Փոյթ չէ, որ հայկական դիպաշարով օպերաների բեմադրութիւններում անգա՛մ դերակատարները կրել են ոչ թէ հայկական պատմական հանդերձանք, այլ եւրոպական արքունի հագուստներ, հայ արքաները ներկայացուել են բարձր կօշիկներով եւ կեղծամներով: Փոյթ չէ, որ հայ պատմական կերպարները սոսկ անուններով են եղել հայ, որ հեղինակները մեծ մասամբ տեղեակ էլ չեն եղել, թէ ինչ երկիր է Հայաստանը, եւ իրականում ովքեր են հայերը (աւելին, հանդէս են բերել մտացածին հայ պատմական դէմքեր), սակայն տուեալ դէպքում կարեւորը հայի եւ Հայաստանի բազմիցս յիշատակութիւնն է եւրոպացի հեղինակների ստեղծագործութիւններում, որոնք ընթերցուել եւ ունկնդրուել են եւրոպական քաղաքակրթութեան խոշոր կենտրոններում:

Եւ ցարդ ասպարէզի վրայ չկար որեւէ համակարգուած հետազօտութիւն սոյն թեմայով, չնայած խնդրի վերաբերեալ հատուկենտ ուսումնասիրութիւններ գրուել եւ հաղորդումներ կատարուել են արդէն Ի. դարի կէսերին[1]: Ինչ վերաբերում է օպերային արուեստին, ապա դրանով առաջինը խորութեամբ զբաղուել է ֆրանսաբնակ երգահան Աւետիս Մեսումենցը, որը երկու տարի Իտալիայի գրադարաններում եւ արխիւներում կատարած պրպտումների շնորհիւ երեւան է հանել հայկական թեմաներով տասնեակ օպերաների ձեռագրեր:

Տիգրան Մեծի վերաբերեալ օպերաների յայտնաբերմամբ զբաղուել է նաեւ իտալահայ խմբավար Անջելօ Էֆրիկեանը: Սփիւռքահայ մամուլում տարբեր ժամանակներում Տիգրան Մեծի վերաբերեալ օպերաների մասին հաղորդումներով հանդէս են եկել պատմաբան Հրանդ Ք. Արմէնը, բանասէր Հայկ Քալանթարեանը, մեր օրերում՝ երաժշտագէտ Հայկ Աւագեանը[2]: Նրանց հրապարակումների շնորհիւ հայ մասնագէտները եւ արուեստասէր հանրութիւնը տեղեակ է դարձել, որ Տիգրան Մեծի մասին գրուել են տասնեակ օպերաներ, որ Պիէռ Կոռնէյի, Կարլօ Գոլդոնիի որոշ թատերգութիւններում կան հայ կերպարներ, սակայն չափազանց գայթակղալից էր՝ իմանալ, որ նման ստեղծագործութիւնների թիւը հասնում է 640ի (380 երաժշտաստեղծի եւ բեմագրողի հեղինակութեամբ)…

Սոյն հրապուրիչ թեման ամբողջութեամբ ընդգրկելու գործին մեծապէս նպաստել է համացանցը, այնպէս որ գրքի ֆրանսահայ հեղինակները՝ նուագավար Ալեքսանդր Սիրանոսեանը եւ պատմաբան Մաքսիմ Եւադեանը, արդէն կարիք չեն ունեցել Մեսումենցի պէս անձամբ գնալ տարբեր քաղաքների գրադարաններ ու արխիւներ, այլեւ դիմել են համացանցին:

Սիրանոսեանի եւ Եւադեանի պրպտումների արդիւնքում արդէն ծանօթ ստեղծագործութիւնների կողքին ի յայտ են եկել ժամանակի փոշու տակ մնացած հարիւրաւոր վէպեր, թատերախաղեր, երաժշտախաղ-օպերաներ (dramma musicale կամ dramma per musica, որ պատկանում են սերիա-օպերա սեռին), բալէտներ, որոնցում կան հայ հերոսներ, հային ու հայկականին առնչուող բազում յիշատակումներ: Արդիւնքն ահա մի գրեթէ անծանօթ աշխարհ բացող այս երկու շքեղ հատորներն են՝ «Մեծն Տիգրանի Փոխակերպումները» աննախադէպ աշխատութիւնը՝ հրատարակուած Լիոնում գործող «Հայաստանի Սկզբնաղբիւրներ» կազմակերպութեան նախաձեռնութեամբ[3]: Այն արժէքաւոր է համակողմանիօրէն ներկայացուող փաստական հսկայական նիւթով, առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուող ուշագրաւ տեղեկատուութեամբ, մեկնութիւններով եւ 350 գունաւոր պատկերազարդումներով (դրանք, ըստ էութեան, բացում են մէկ այլ ոլորտ՝ եւրոպական կերպարուեստում հայկական թեմաների անդրադարձը):

Ուշ միջնադարում ընթերցող եւ հանդիսատես լայն հանրութեանը ծանօթ յունահռոմէական առասպելաբանութիւնից եւ պատմութիւնից փոխառուած թեմաների հետ մէկտեղ ժամանակի եւրոպական հեղինակները պարբերաբար անդրադարձել են հայոց թագաւոր-թագուհիների շուրջ հիւսուած դիպաշարերին, գրել պատմական որոշ հիմք ունեցող եւ կամ կեղծ պատմական բնոյթի գործեր՝ գործողութիւնների վայր ընտրելով հելլէնիստական կամ վաղքրիստոնէական Հայաստանը: Հիմնականում ֆրանսիացի, իտալացի, իսպանացի եւ գերմանացի թատերագիրները, վիպասանները հայոց մասին իրենց տուեալները քաղել են գլխաւորապէս հռոմէական սկզբնաղբիւրներից: Կատարուած ուսումնասիրութիւնից պարզւում է, որ յատկապէս մեծ թիւ են կազմում Տիգրան անուանուած հերոսները, որոնք ոչ միշտ են վերաբերում Տիգրան Մեծ արքայից արքային՝ յաճախ պատկերելով մտացածին, տարբեր երկրների թագաժառանգներ ներկայացնող Տիգրանների… Յատկանշական է, որ, ըստ ուսումնասիրողների, Տիգրանի մասին աւելի շատ օպերա է գրուել, քան որեւէ ուրիշ այլազգի արքայի:

Սիրանոսեանի եւ Եւադեանի աշխատութիւնը ԺԷ.–ԺԹ. դարերի եւրոպական երաժշտական թատրոնի, օպերայի եւ թատերգութեան մի իւրօրինակ հանրագիտարան է, որը տուեալներ է տրամադրում հարիւրաւոր հեղինակների մասին, տրւում է ներկայացուող իւրաքանչիւր ստեղծագործութեան գործող անձանց ցանկը, այնուհետեւ՝ համառօտ դիպաշարը գործողութիւն առ գործողութիւն, որից յետոյ յիշւում են բեմադրութիւնները՝ թուականներով եւ վայրերով:

Առաջին հատորը, որի վերնագրի թարգմանութիւնն է՝ «Հայկական հերոսապատումը դասական թատրոնում եւ քնարական արուեստում», բացւում է երեք ներածական յօդուածներով: Առաջինի հեղինակն է Քէօլնի «Մուզիկա Անտիկա» համոյթի ղեկավար, նուագավար Ռայնհարդ Գէօբէլը, որի նախաբանին հետեւում է գերապայծառ Լեւոն Զեքիեանի «Հայերն Արեւմուտքում. մասնաւոր մի առնչութիւն» պատմական ակնարկը: Հեղինակը մասնաւորապէս կենտրոնացել է Իտալիայում հայկական ներկայութեան վրայ, մատնանշել հայ մշակոյթին յատուկ մի տարիմաստութիւն՝ մի կողմից խիստ պահպանողականութիւն, միւս կողմից՝ որոշ յեղափոխական կամ անիշխանական ոգի, ինչի շնորհիւ էլ հայութիւնը միշտ բաց է եղել նորի հանդէպ եւ պահպանելով աւանդոյթը՝ մշտապէս ձգտել է առաջընթացի:

Երրորդ ներածութիւնը Ալեքսանդր Սիրանոսեանինն է, որը ներկայացրել է գրքի ստեղծման աշխատանքը, նախկինում սոյն թեմայի արծարծումները, սկզբնաղբիւրները, պատմական համապատկերը, ստեղծագործութիւնների դասակարգումը: Նա մասնաւորապէս պարզաբանել է, որ «*Ոմանք մեզ յանդիմանել են, որ մեծ կարեւորութիւն չենք տուել երաժշտաստեղծներին: Սակայն այստեղ երաժշտութիւնը մեր աշխատանքի միակ նպատակը չէ: Իրականում հնարաւոր կապ գոյութիւն չունի այս օպերաների երաժշտութեան եւ հայ երաժշտութեան միջեւ*» (Հտր. Ա., էջ 33), եւ այս առիթով թռուցիկ անդրադարձել ընդգրկուած ժամանակաշրջանից աւելի ուշ՝ Ի. դարում ստեղծուած հայապատում ստեղծագործութիւնների (սակայն, զարմանալիօրէն, ոչ օպերաների[4]):

Գրքի առաջին գլուխն է «Հայաստանը Կիւրոս Մեծի ժամանակներում»: Աքեմէնեան Պարսկաստանի այդ մեծ տիրակալին առանձին ներկայացնելը արդարացւում է այն հանգամանքով, որ նրան նուիրուած գրական-երաժշտական գործերում մշտապէս հանդէս է բերւում եւ նրա դաշնակիցը՝ հայոց Տիգրան Մեծ արքան: Մասնաւորապէս ներկայացուած է ԺԷ. դարի ֆրանսիացի գրողներ Մադլէն եւ Ժորժ դը Սկիւդերիների՝ 1649-1653ին հրատարակուած «Արտամէն կամ Կիւրոս Մեծ» վէպը (համարւում է երբեւէ հրատարակուած ամենածաւալուն արձակ գործը՝ 13095 էջ), որի հերոսներից է Տիգրան Մեծը: Այնուհետեւ

ժամանակագրական կարգով ներկայացւում են 1665-1807 թթ. Կիւրոսի մասին ստեղծուած այն գործերը (գործող անձանց ցանկով եւ համառօտ բովանդակութեամբ հանդերձ), որոնցում առկայ է նաեւ Տիգրանի կերպարը: Հայոց արքան հանդէս է բերուած նաեւ Կիւրոսի յաջորդներին վերաբերող երկու ստեղծագործութեան մէջ՝ Պիետրօ Անտոնիօ Բեռնարդոնիի «Ասպասիա» ողբերգութիւնում (1697) եւ Լուի Դուսիոյի «Հայաստանի իշխանները» վէպում (1774):

Երկրորդ գլխում՝ «Տիգրան Մեծի իմաստնութիւնը կամ Արտաշէսեանների էպոպէան», հայոց միակ կայսրութիւնը ստեղծած թագաւորի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններից յետոյ ներկայացուած են ստեղծագործութիւններ, որոնց գործողութիւնները կատարւում են Բութանիայի Թագաւորութիւնում, հանդէս է բերուած հայոց թագուհի (արքայադուստր) Լաոդիկէն (Դոմենիկօ Լալլիի «Նիկոմիդէս», Միքելէ Ռիսպոլիի «Արսինոէ»): Դրան հետեւում է «Տիգրան Մեծը՝ օպերաների հերոս» ենթագլուխը, որտեղ մանրամասն տրուած են 1710-1825 թթ. ներկայացուած երաժշտական մի շարք ստեղծագործութիւններ, որտեղ հայոց արքան հանդէս է բերուած որպէս կենտրոնական կամ գլխաւոր հերոս, գործողութիւնները յաճախ տեղի են ունենում հայոց մայրաքաղաք Արտաշատում (Պիետրօ Անտոնիօ Բեռնարդոնիի «Տիգրանը՝ Հայաստանի թագաւորը», անյայտ հեղինակի՝ երեք ձայնի համար գրուած կանտատը, որի հերոսներն են Տիգրանը, նրա կին Լաոդիկէն, զօրավար Արասպը. գործում է նաեւ հայերի երգչախումբը եւն.): Տիգրանի մասին օպերա գրած երգահանների թւում են համաշխարհային երաժշտութեան այնպիսի խոշոր դէմքեր, որպիսիք են Ալեսսանդրօ Սկարլատտին (1659-1725), Անտոնիօ Վիւալդին (1678-1741), Եոհան Ադոլֆ Հասէն (1699-1783), Քրիստոֆ Բիլիբարդ Գլիւքը (1714-1787) եւ այլք:

Թէեւ գրախօսուող հատորի հեղինակները չեն նշել, սակայն յիշենք, որ Տիգրանի կերպարն առկայ է նաեւ Վոլֆգանգ Ամադէուս Մոցարտի (1756-1791)՝ 15ամեայ հասակում գրած «Պոնտոսի արքայ Միհրդատը» օպերայում: Կարեւոր է նաեւ նկատի ունենալ, որ այդ ստեղծագործութիւններում հայոց արքայի կերպարը մեծ մասամբ սխալ է ներկայացուել, եւ դա՝ Տիգրանի մասին եւրոպական սկզբնաղբիւրի՝ յոյն պատմիչ Պլուտարքոսի մեղքով, որը միտումնաւոր կերպով վատաբանել է հայ արքային:

Երրորդ գլուխը վերնագրուած է «Զենոբիան, հպարտ Հռադամիստը եւ արքայազն Տրդատը»: Հռոմէացի պատմիչ Տակիտոսի «Տարեգրութիւններում» տեղ է գտել Ք.ա. Ա. դարում ապրած հայոց թագուհի Զենոբիայի պատմութիւնը, թէ ինչպէս նա իր ամուսին Հռադամիստի գահընկեց լինելուց յետոյ նրա հետ փախուստի է դիմել:

Երկիւղելով, որ հայոց նոր թագաւոր Տրդատ Ա.ն գերութեան կը վերցնի իրեն՝ յղի Զենոբիան խնդրել է Հռադամեսին՝ վերջ տալ իր կեանքին: Վերջինս նրան սրով հարուածել է եւ նետել Արաքս գետը, բայց թագուհին ողջ է մնացել. հովիւները ջրից հանել են եւ տարել Տրդատի մօտ, որը, սակայն, պատուով ու յարգանքով է ընդունել նրան: Այս ողբերգական պատմութիւնը բազմիցս արտացոլուել է եւրոպական երաժշտութեան, գրականութեան եւ նկարչութեան մէջ: Յատկանշական են Տոմազօ Ալբինոնիի «Հռադամիստ եւ Զենոբիա» (1698), Լուկ Անտոնիօ Պրեդիերիի «Զենոբիա» եւ Գէորգ Ֆրիդրիխ Հենդէլի (1685-1759) «Հռադամիստ» օպերաները. հայոց թագուհու դերերգը կատարել են հռչակաւոր երգչուհիներ անգլուհի Անաստասիա Ռոբինսոնը (1692-1755) եւ իտալուհի Կատարինա Գաբրիէլլին (1730-1796): Գրական գործերից յիշարժան է Պրոսպէր Ժոլիօ Կրեբիոն-աւագի «Հռադամիստ եւ Զենոբիա» ողբերգութիւնը, որի բեմադրութեան մէջ հայոց թագուհուն մարմնաւորել է ֆրանսիացի հռչակաւոր դերասանուհի Ադրիէն Լըկուվրէօրը (1692-1730): Աշխատութեանն առանձնակի շուք են տալիս Զենոբիային պատկերող եւրոպացի գեղանկարիչների եւ քանդակագործների (Ֆրանչեսկօ Ալբերի, Ժան Էսպրի Մարսըլէն, Վիլիամ Ադոլֆ Բուժըրը) գործերի վերատպութիւնները (նոյն դիպաշարով կտաւներ են ստեղծել նաեւ Նիկոլաս Պուսսէնը, Ֆելիքս-Անրի Զակոմոտտին, Պոլ-Ժաք-Էմէ Բոդրին, Լուիջի Սաբատելլին. այդ գործերը, սակայն, չեն արտացոլուել սոյն հատորում):

Արտաշէսեանների հարստութեան ժամանակաշրջանի Հայաստանի այլեւայլ դրսեւորումներին է վերաբերում աշխատութեան չորրորդ գլուխը՝ «Հայաստանը Պարթեւաստանի եւ Հռոմի միջեւ»: Այստեղից տեղեկանում ենք, որ ֆրանսիական գրականութեան մեծանուն դէմքերից մէկի՝ Վոլտէրի «Փառքի տաճարը» պատմական օպերա-բալէտի (երաժշտութիւնը՝ Ժան-Ֆիլիպ Ռամոյի) գործողութիւնները կատարւում են հայոց Արտաշատ մայրաքաղաքում, գլխաւոր հերոսը հռոմէական կայսր Տրայանոսն է: Նոյն ժամանակաշրջանը պատկերող մի շարք օպերաների հերոսուհի է եղել նաեւ Հայաստանի արքայադուստր Բերենիչէն (Բերենիս, նոյնինքն՝ Վերոնիկա), յօրինովի, սակայն դրական մի կերպար (Բարտոլոմէօ Վիտտուրիի «Բերենիչէ», Ապոստոլօ Զենոյի «Լուկիուս Վերուս» եւն.): Առհասարակ, պատմական մասնակի յենքով եւ կեղծ պատմական ստեղծագործութիւններին բնորոշ է մտացածին հերոսների կերտումը, եթէ նրանք մինչեւ անգամ թագաւորներ ու թագուհիներ են: Այսպէս, Ջովաննի Բատիստա Վոլպէի «Ռոզիլենա» երաժշտախաղի (1664) հերոսներից է Հայաստանի երիտասարդ թագաւոր Օրմոնդօն (Հտր. 2, էջ 17), Պիետրօ Անտոնիօ Բեռնարդոնիի «Իրենէ» ողբերգութեան (1695) հերոսներից է հայ իշխան

Իդրասպէն (Հտր. 2, էջ 24): Յատկանշական է, որ այս դարաշրջանում հեղինակները միմեանցից փոխ են առել շատ պատմական անուններ՝ երբեմն ձեւափոխելով դրանք: Այսպէս, նշուած Իդրասպէի անունը փոքր-ինչ փոխուած կրում է Ջովաննի Կարլօ Պագանի Չեզայի «Իդասպէ» հերոսական դրամայի (1751) համանուն հերոսը, որը Պարսկաստանի հայազգի իշխան է, որն էլ վերոյիշեալ «Մարիամմէ» ստեղծագործութեան հայազգի հերոսի պէս հանդէս է գալիս Արսաչէ (Արշակ) անուամբ (Հտր. 2, էջ 149), եւն.:

Քրիստոնէութեան արշալոյսի Հայաստանը եւս չի վրիպել եւրոպացի հեղինակների տեսադաշտից: Հինգերորդ՝ «Աստուածաշնչեան Պատմութեան Թատրոնը», գլուխը ներկայացնում է հայազգի վկայ Պողիկտոսի վերաբերեալ թատերա-երաժշտական գործերը, որոնց հեղինակների թւում են երկու մեծանուն երաժշտաստեղծ՝ իտալացի Գաէտանօ Դոնիձետտին (1797-1848) եւ ֆրանսիացի Շարլ Գունօն (1818-1893), ինչպէս նաեւ Կրիստոբալ Դէ Մոնրօ Ի Սիլվայի «Սուրբ Բարթուղիմէոսը Հայաստանում» թատերգութիւնը, Մատտէօ Նորիսի «Դիոկղետիանոս»ը, նաեւ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Բ. արքայի պատմութիւնը ներկայացնող միքանի երկ:

Վեցերորդ գլուխն է «Տիգրանի Փոխակերպումները», որտեղ մասնաւորապէս խօսւում է վենետիկեան մշակոյթում Տիգրան արքայի կերպարի դրսեւորումներին՝ որպէս պատմական, այնպէս էլ՝ մտացածին կերպար (Ֆրանսիս Բոմոնի եւ Ջոն Ֆլեչըրի «Թագաւոր եւ ոչ թագաւոր», Ուբալդօ Մարիի «Եւրիմեդոն կամ Փառաբանուած ծովահէնը» ողբերգակատակերգութիւնները, Ջովաննի Ֆաուստինիի «Դորիկլէա», Անտոնիօ Պապիի եւ Ջովաննի Բատիստա Բորգիի «Ալեքսանդրը Հայաստանում» օպերաները): Յաճախ Տիգրան անունը հեղինակների չիմացութեան պատճառով գործածուել է այլ ազգութեան հերոսների համար. օրինակ, Աւրելիօ Աւրելիի «Ռոզանէ, Ասորեստանի կայսրուհին» երաժշտախաղում Տիգրանը պարսկական բանակի զօրավար ափրիկեան արքայազն է (էջ 259), իսկ Ջովաննի Բատիստա Ներիի «Էրիֆիլէ» գործում՝ Կիպրոսի արքան (էջ 275):

Եւ վերջապէս եզրափակիչ՝ եօթերորդ գլուխը («Իշխան-վաճառականների հագուստը»), ներկայացնում է Իտալիայի հայ առեւտրական գերդաստաններին (Միրման, Շերիման, Սերպոս), թէ ինչպէս է նրանց հագուստը մուտք գործել եւրոպական արուեստ (յայտնի է Լիոտարի՝ «Ժան-Ժաք Ռուսօն հայկական հագուստով» գեղանկարը): Յատկապէս թանկարժէք քարեր վաճառող հայ առեւտրականի կերպարը յաճախադէպ է ուշ-միջնադարի եւրոպական գրական-թատերական երկերում (Դէ Պարադի Դէ Մոնկրիֆի «Ալիքսի եւ Ալեքսիսի մշտական սէրը» սիրավէպը, Գոլդոնիի «Կանանց

շաղակրատութիւնը» պիէսը): Որոշ կերպարների դէպքում էլ նշուել է, որ նրանք հայկական հագուստով են (Պոլ Սկարոնի «Դոն Յաբէթ Հայաստանցին», Սիլվիո Ստամպիլիայի «Պարտենոպէն» եւն.): Ի դէպ, այս գլխում տեղեկանում ենք նաեւ բալէտային արուեստին առաջին անգամ առնչուած հայորդու մասին, որը եղել է Վենետիկի Սեղբոսեան ազնուական ընտանիքի զաւակ, ականաւոր պարող եւ պարադիր Դոմենիկօ Սերպոսը, որը բեմադրել է տասնեակ բալէտներ եւ գործակցել ժամանակի այնպիսի մեծանուն երգահանների հետ, որպիսիք էին Ջոակինօ Ռոսսինին եւ Լուիջի Քերուբինին (էջ 291):

Աշխատութեան երկրորդ հատորը («Անձինք եւ նրանց ստեղծագործութիւնները» ենթավերնագրով) ընդգրկում է առաջինում տեղ գտած հարուստ տեղեկատուութեան դասակարգումները՝ հեղինակների կենսագրականները, ստեղծագործութիւնների ժամանակագրութիւնը, մատենագիտութիւնը, ինչպէս նաեւ մի շարք ցանկեր՝ գրողների, երգահանների, պարադիրների եւ նրանց ստեղծագործութիւնների, նաեւ կերպարների, ինչի շնորհիւ դիւրին է դառնում հեղինակների կամ երկերի որոնումը:

Գրքում տեղ են գտել ոչ միայն ներկայացուած պատմական համապատկերին առնչուող նկարներ (քանդակներ, մանրանկարներ, քարտէզներ, պատմական առարկաներ) եւ ներկայացուած գրական-երաժշտական գործիչներին ու երկերին առնչուող կերպարուեստի գործեր, այլեւ տուեալ ստեղծագործութիւնների մերօրեայ բեմականացումների լուսանկարներ: Ժամանակակից բեմադրութիւնների տեսարաններ են զարդարում նաեւ զոյգ հատորների կազմը՝ ընթերցողին ասես յուշելով, որ գիրքը վերաբերում է ոչ միայն անցեալին պատկանող թեմաների, այլեւ շարունակական մի երեւոյթի: Յիրաւի, այս կոթողային հրատարակութիւնը քիչ ծանօթ մշակութային մի մեծ շերտի վերհանում է, որի երեւան գալով՝ մի հսկայական քար է աւելանում հայագիտութեան բարձրաբերձ որմին…

Ի պատիւ հեղինակների պիտի ասել, որ նման ծովածաւալ նիւթում նրանք, որքանով տեսել ենք, թոյլ չեն տուել անճշտութիւններ. միակը, որ կարող ենք նշել, 1668ին Լվովում գրաբարով ստեղծուած «Մարտիրոսութիւն Սրբոյ Հռիփսիմէայ» թատերախաղը լեհահայ գործիչ Նիկոլ Թորոսովիչին սխալմամբ վերագրելն է (էջ 237): Յայտնի է, որ այդ երկի հեղինակը եղել է ֆրանսիացի կրօնաւոր Ալոիս Պիդուն: Նման աշխատանքում չեն բացառւում նաեւ վրիպումները. օրինակ, կարելի էր յիշատակել նաեւ Գայտանօ Դոնիձետտիի «Կատերինա Կորնարօ» օպերան՝ նուիրուած Հայաստանի թագուհու տիտղոսը վերջին անգամ կրած վենետիկցի ազնուականուհի Կատերինա Կորնարօ Լուսինեանին (1454-1510):

Անշուշտ, խելամիտ չի լինի նաեւ նման հսկայական թեմա մշակողներից ակնկալել նիւթի ամբողջական սպառում: Կարելի է սոյն նիւթը լրացնել բազմաթիւ օժանդակ տուեալներով, յատկապէս երբ խօսքը վերաբերում է սոյն գործերի արձագանգներին եւրոպական մշակոյթի, մասնաւորապէս գրականութեան մէջ: Այսպէս, Պրեդիէրիի «Զենոբիա» օպերայի բեմադրութիւններից մէկի նկարագրութիւնը ԺԸ. դարի Վիեննայի Արքունական Թատրոնում ներկայացրել է ֆրանսիացի նշանաւոր վիպասանուհի Ժորժ Սանդն իր «Կոնսուելօ» վէպի Բ. հատորում: Վէպի հերոսուհին՝ երգչուհի Կոնսուելօն, կատարում է Զենոբիա թագուհու դերը, վէպի հերոսներից Կաֆարիէլօն՝ Տրդատ թագաւորի, իսկ օպերայի գործողութիւնները կատարւում են «Հայաստան աշխարհում, հրաշալի Արաքսի ափին»: Ի դէպ, «Հռադամիստ եւ Զենոբիա» է կոչուել նաեւ ռուս գրող Ալեքսանդր Գրիբոյեդովի անաւարտ մի թատերախաղը: Եւ կամ, Դոնիձետտիի «Պողիկտոս» օպերայի առաջին բեմադրութեան առաջին յիշատակութիւնը հանդիպում ենք ֆրանսիացի գրող Ստենդալի «Պարմի մենաստանը» վէպում, գրուած օպերայի ստեղծման տարում՝ 1839ին: Վէպի հերոսուհին՝ իտալացի դքսուհի Ջինա Սանսեւերինան, մի առիթով ասում է. «*Ես համոզուած եմ, որ եթէ մի նոր Դեկոս կայսր գար աշխարհ, արքեպիսկոպոսը յանձն կ'առնէր նահատակուել, ինչպէս Պոլիկտոսն այն օպերայում, որ անցած շաբաթ ներկայացրին այստեղ*»[5]: Եւ որքան էլ կատարուած աշխատանքը անմիջական կապ չունենայ հայ իրականութեան հետ, դարձեալ սոյն հատորում հնարաւոր է գտնել հայ մշակոյթին առնչուող տարբեր փաստական մանրամասներ, որ կարող են առիթ տալ աւելի խոր ուսումնասիրութեան: Այսպէս, Սիրանոսեանն իր առաջաբանում վկայել է, որ, համաձայն Վենետիկի Մխիթարեանների բանաւոր վկայութեան, Դոնիձետտին «Պողիկտոս»ը գրելու ժամանակ այցելել է Սուրբ Ղազար կղզի՝ ծանօթանալով հայ պատարագի աւանդական երգերին, եւ որ նման տեղեկութիւն կայ Ջուզեպպէ Վերդիի վերաբերեալ, երբ նա գրելիս է եղել իր հռչակաւոր «Աիդան»[6] (Հտր. Ա., էջ 33): Վկայութիւններ, որ սպասում են նեղ մասնագէտների հետազօտութեանը եւ վերլուծութեանը...:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Խորհրդահայ գիտական մամուլում հրապարակումներ են կատարել բանասէրներ Վահրամ Թերզիբաշեանը եւ Էլիզ Պետրոսեանը (Վ. Թերզիբաշեան, «Հայ Թեմաները Համաշխարհային Գրականութեան Մէջ Հարցի Շուրջը», *Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի, Հասարակական Գիտութիւններ*, 1946, թիւ 6, էջ 55-80. նոյնի՝ *Հայ*

Դրամատուրգիայի Պատմութիւն 1668-1868, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 247: Է. Պետրոսեան, «Կլասիցիզմի Շրջանի Հայ-Ֆրանսիական Գրական Կապերի Շուրջը», *Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի, Հասարակական Գիտութիւններ*, 1946, թիւ 7, էջ 51-67):

[2] «Համառօտ Մատենագիտութիւն՝ Հայկական Դէպքեր Ու Դէմքեր Բովանդակող Օտար Օփերաներու», պատրաստեց՝ Հայկ Աւագեան, *Ծիծեռնակ, Եռամսեայ Երաժշտական Յաւելուած Ջահակիր Շաբաթաթերթի*, Ա. տարի, թիւ 1, Յունուար 2001, Գահիրէ, էջ 4-9:

[3] Գրքի հայաստանեան շնորհանդէսը կայացել է 2015ի Ապրիլի 26ին, Սպենդիարեանի Անուան Օպերայի Եւ Բալէտի Թատրոնում, որի ժամանակ ելոյթ ունեցան թատրոնի տասներեք մենակատարներ՝ կատարելով գրքում տեղ գտած օպերաներից առանձին մեներգեր եւ զուգերգեր: Հետաքրքրական է, որ այդ երգերից միքանիսը կատարւում էին պատմութեան մէջ երկրորդ անգամ՝ կատարուած լինելով առաջին անգամ ԺԷ. կամ ԺԸ. դարում, տուեալ օպերայի առաջին եւ վերջին բեմադրութեան ժամանակ…

[4] 20րդ դարում եւս, թէեւ օպերային սեռը որոշ առումով նահանջ է ապրել, յայտնի են հայկական թեմաներով օպերաների ստեղծման փաստեր: Ա. Աշխարհամարտի օրերին իտալացի երեք երաժշտասէրներ՝ բժիշկ Ջուզեպպէ Կոնիլիօն, երգահան Զեպպին եւ տիկին Ջուզեպինա Կաստիլին, կարդալով իտալական մամուլում տպագրուած «Եօթ կոյսերի հերոսական վախճանը Ախուրեանում» նիւթը, ձեռնամուխ են եղել այդ նիւթով օպերայի ստեղծմանը: Նրանք գրել են մէկ գործողութեամբ եւ երկու պատկերով «Մարիամ» օպերան, որի հերոսուհիները եօթ հայուհիներ են: 1970ականների սկզբին «Մարիամ» օպերայի պարտիտուրը փոխադրուել է Հայաստան: 1955ին ռումին կոմպոզիտոր Գ. Դումիտրեսկուն ստեղծել է «Հոսպոդար Եոն Ահարկու» ժողովրդական երաժշտական դրաման: Հերոսն է ԺՋ. դարի հայազգի ռումինական պետական գործիչ, Մոլդովայի Հոսպոդար Եոն հայը (Արմեանուլ, Ահարկու): Օպերայի լիբրետօն գրել է Գ. Թէոդոեսկուն՝ ռումին գրող Լ. Ֆուլգայի համանուն թատերախաղի հիման վրայ: Այն ներկայացուել է Բուխարեստի օպերային թատրոնում, Եոն իշխանին մարմնաւորել է ռումինահայ բարիտոն, Ռումինիայի ժողովրդական արտիստ Դաւիթ Յովհաննիսեանը, իսկ մի տեսարանում բանակայինները երգում են, որ իրենք հայի բանակից են (Ս. Է. Քոլանջեան, «Հայազգի Գործիչների Մասնակցութիւնը Միջնադարեան Մոլդովայի Եւ Վալաքիայի Ժողովուրդների Հակաօսմանեան Պայքարին (XV-XVIII դդ.)», *XVI-XVIII Դարերի Հայ Ազատագրական Շարժումը Եւ Հայ Գաղթավայրերը*, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ հրատ, 1989, էջ 68): 1957ին չեխ երգահան Եոզէֆ Մատէյը (1922–1992) օպերայի է վերածել Ֆրանց Վերֆէլի *Մուսա Լերան Քառասուն Օրը* նշանաւոր վէպը: 1993ին ներկայացուել է նաեւ Երեւանում (Դանիէլ Երաժիշտ, «Մուսա Լեռան Քառասուն Օրը» Օպերան», *Գեղարուեստ*, 1993,

Յունիս): Այս մասին տես մեր յօդուածում (Արծուի Բախչինեան, «Հայկական Թեմաները Համաշխարհային Օպերայում», *Հայրենիքի Ձայն*, 25, 02, 1993):

[5] *La Chartreuse de Parme de Stendahl* (Henry Beyle), Paris, Michel Lévi Frères, Librarires éditeurs, 1864, էջ 123. հմմտ.՝ Ստենդալ, *Պարմի Մենաստանը*, Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 169:

[6] Լրագրային մեր մի հրապարակման մէջ սոյն տուեալը նշուած չէ (Արծուի Բախչինեան, «Վերդիի 'Աիդան' Եւ Հայերը», *Հայրենիքի Ձայն*, 19-05-1993, նոյնը բուլղարերէն՝ Operata «Aida» na velikiya Verdi i armencite, *Երեւան*, 28.10.1993):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

ՆԻՐԱ ՍԹՕՈՒՆ
(1938-2013)

Հրեայ արուեստաբանուհի Դոկտ. Նիրա Սթօունը ծնուել է 15 Հոկտեմբեր 1938ին, Փեթաք Թիքուահում (այժմ՝ Իսրայէլում): Միջնակարգ կրթութիւնն ստացել է Թէլ-Աւիւում, բարձրագոյնը՝ Երուսաղէմի Եբրայական Համալսարանում (ԵԵՀ): Դոկտորական ատենախօսութիւն է պաշտպանել «Երուսաղէմի Հայկական Պատրիարքարանը. Հարանց Վարքը» թեմայով (հրատ. 2007ին): Տարիներ շարունակ եղել է հայկական եւ արեւելեան քրիստոնէական արուեստի դասախօս ԵԵՀի Արուեստի Պատմութեան բաժնում: Եղել է նաեւ Դաբլինի Չեսթըր Բիթի Գրադարանի խորհրդական, կազմել այնտեղի հայերէն ձեռագրերի եւ մետաղեայ կազմերի քարտարանները (*Catalogue of the Additional Armenian Manuscripts in the Chester Beatty Library in Dublin* (2012): Նրա հետաքրքրութիւնների ծիրը կազմել են Երուսաղէմի արուեստը, հայ արուեստը, Ադամը եւ Եւան հայ արուեստում, սատանայի կերպարը հայ եւ բիւզանդական արուեստում, Սուրբ Երկրի խճանկարները թեմաները եւն.:

Ամուսնու՝ ականաւոր հայագէտ Մայքլ Սթօունի հետ հրատարակել է անգլերէն աշխատութիւններ՝ հայագիտական, քրիստոնէագիտական, արուեստագիտական տարբեր հրատարակութիւններում: Առանձին գրքերով լոյս է տեսել նրա *The Kaffa Lives of the Desert Fathers: A Study in Armenian Manuscript Illumination* (1997), իսկ ամուսնու հետ՝ *The Armenians: Art, Culture and Religion* (2007) գրքերը:

Սթօունը եղել է Հայագիտական Ուսումնասիրութիւնների Միջազգային Ընկերակցութեան, Իսրայէլի Բիւզանդագէտների Միութեան, Հրէական Արուեստի Ուսումնասիրութեան Ամերիկեան Ակադեմիայի Կրօնական Կենտրոնի անդամ:

Նիրա Սթօունը մահացել է 26 Յունիս 2013ին, Երուսաղէմում:

ՋԱՌԱ ՏԷՐ-ՂԱՋԱՐԵԱՆ
(1951–2013)

Երաժշտագէտ, պրոֆեսոր Զառա Տէր-Ղազարեանը ծնուել է 17 Ապրիլի 1951ին, Երեւանում: Հայրը՝ Հայկ Տէր-Ղազարեանը, նկարիչ էր, մայրը՝ Մերի Սաղեանը, գրականագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի երկարամեայ գիտաշխատող:

Ուսանել է Չայկովսկու Անուան Միջնակարգ Մասնագիտական Դպրոցում, այնուհետեւ Կոմիտասի Անուան Պետական

Կոնսերվատորիայում: 1984ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Արամ Խաչատրեանի Ստեղծագործութեան Վաղ Շրջանի Ձեւաւորումը (Արեւելքի Եւ Արեւմուտքի Աւանդոյթի Լոյսի Ներքոյ)» թեմայով: 1973-2013՝ Կոնսերվատորիայում դասաւանդել է արեւմտաեւրոպական երաժշտութեան պատմութիւն: Չայկովսկու անուան դպրոցի 50ամեակին է նուիրել *Ճանապարհ Դէպի Պառնաս* գիրքը (1991, Մարգարիտ Յարութիւնեանի հետ համատեղ): Նա դասաւանդում էր Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայում եւ անդամ էր Հայաստանի Կոմպոզիտորների Եւ Երաժշտագէտների Միութեան:

Նրա գիտական հետաքրքրութիւնների կիզակէտը հայ երաժշտութիւնն էր ու Արամ Խաչատրեանը: Կազմել եւ խմբագրել է Տատիանա Հայրապետեանի *Մեղեդիներ Իմ Յուշերի…* (2005, ռուսերէն) հատորը: Եղել է նաեւ միքանի գրքերի խմբագիրը եւ երաժշտական խմբագիրը (Արամ Խաչատրեան. *Նամակները (1928-1978)* (1983) եւ *Նամակներ (1934-1978)* (1995), Ղազարոս Սարեան, *Սոնատ Թաւջութակի Եւ Դաշնամուրի Համար* (1998), Էմին Արիստակէսեան, *Ջութակի Եւ Նուագախմբի Կոնցերտ* (1999), Գէորգ Արմէնեան, *Ղօղանջներ* (1999), Սերգէյ Աղաջանեան, *Չորս Պոլիմոնոդիա* (2001), *Անմոռաց Երգեր* (կազմ.՝ Հերոս Մինասեան, 2011): Յետմահու լոյս տեսաւ նրա *Արեւմտաեւրոպական Երաժշտութեան Պատմութիւն. Հին Աշխարհից Մինչեւ XIX Դար* առաջին հայալեզու դասագիրքը (2014):

Ջառա Տէր-Ղազարեանը մահացաւ 25 Սեպտեմբեր 2013ին, Ժնեւում:

ՕԼԷԱ ՆՈՒՐԻՋԱՆԵԱՆ
olya@vem.am



ԻԴԱ ԲԱԲԱՅԵԱՆ
(1939-2014)

Արուեստագիտութեան թեկնածու Իդա Արսենտիի Բաբայեանը ծնուել է 9 Նոյեմբեր 1939ին Բաքուում, ծառայողի ընտանիքում: 1963ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտը՝ ռուսաց լեզու եւ գրականութիւն մասնագիտութեամբ:

1963ին աշխատանքի է անցել Հայկական ՍՍՀ ԳԱ տպարանում որպէս սրբագրիչ, 1964ին տեղափոխուել *Հայաստանի Կենսաբանական Հանդէս* որպէս աւագ գրական աշխատակից:

1969ից Բաբայեանի գիտաստեղծագործական գործունէութիւնն անխզելիօրէն կապւում է Հայկական ԽՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի հետ. նա աշխատանքի է անցնում ինստիտուտի Թատրոնի Բաժնում, սկզբում որպէս կրտսեր գիտաշխատող: 1987ին պաշտպանել է

թեկնածուական ատենախօսութիւն եւ ստացել արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան: 2009ից Բաբայեանը ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Սփիւռքահայ Արուեստի եւ Միջազգային Կապերի Բաժնի աւագ գիտաշխատող էր:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտում շուրջ կէս դար Բաբայեանն անմնացորդ նուիրումով ծառայեց հայ թատերական արուեստին: Նրա գրչին են պատկանում արժէքաւոր գրքեր ու գիտական յօդուածներ, այդ թւում՝ հայ ականաւոր բեմադրիչ Վարդան Աճէմեանի մասին *Վարագոյրի Եփեւում* (1982, 2006), *V Masterskoy Vardana Adjemyana* (Վարդան Աճէմեանի արուեստանոցում, 2012) եւ *Վարդան Աճէմեանի Աշխարհը Վաւերագրերում* (2006) աշխատութիւնները: 2008ին հրատարակուեց նրա *Sundukyan Na Gruzinskoy Scene XIX Veka (1874-1903)* (*Սունդուկեանը ԺԹ. Դարի վրացական թատրոնում*, *1874-1903*) մենագրութիւնը:

Իդա Բաբայեանի գրքերի շնորհիւ աճէմեանագիտութիւնը հարստացաւ եւս երկու բարձրարժէք աշխատութիւններով՝ իրենց տեսակի մեջ աննախադէպ ու շատ կարեւոր: *Վարդան Աճէմեանի Աշխարհը Վաւերագրերում* ստուարածաւալ աշխատութիւնը, Վարպետի կեանքի եւ ստեղծագործական գործունէութեան տարեգրութիւնն է: Աշխատութեան մէջ առաջին անգամ գիտական շրջանառութեան են դրւում ցարդ անյայտ փաստեր, վաւերագրեր, անտիպ նամակներ, գրութիւններ, արխիւային նիւթեր, որոնք նոր լոյս են սփռում արուեստագէտի կեանքի հարուստ ուղու վրայ:

Վարագոյրի Եփեւում աշխատութեան մէջ ընթերցողի աչքի առջեւ յառնում է Աճէմեանի ստեղծագործական աշխատանոցը՝ բեմադրիչի հինգ բեմադրութիւնների փորձերի գրառումները, նաեւ Վարպետի՝ օպերային բեմադրութեան բարձրարուեստ նմուշներից մէկը եւս՝ Սպենդիարեանի *Ալմաստ* օպերայի բեմադրութիւնը (1971): *Վարագոյրի Եփեւում* գրքում առաջին անգամ ներկայացուած են բազմաթիւ վաւերագրական նիւթեր եւ Աճէմեանի բոլոր՝ թուով 52, գծանկարները:

Իդա Բաբայեանը մահացաւ 6 Ապրիլի 2014ին, Երեւանում:


ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտ

ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎՐԴ. ՍԵՔՈՒԼԵԱՆ
(1921-2014)

Մատենագիր, դրամագէտ, Մխիթարեան Միաբանութեան երիցագոյն անդամ, Հայր Օգոստինոս Վրդ. Սեքուլեան ծնած է 19 Սեպտեմբեր 1921ին Թրանսիլվանիոյ Ճուրճով քաղաքը (այժմ՝ Ռումանիա): Իր նախնիք, 1319ին, Անիէն գաղթած են նախ Ղրիմ ու Մոլդաւիա եւ 1654ին եկած Թրանսիլվանիա:

Նախնական ուսումը աւարտելէ ետք իր ծննդավայրի նախակրթարանին մէջ, 1931ին, հազիւ տաս տարեկան, մտած է Վիեննայի Մխիթարեան կղերանոցը: 31 Դեկտեմբեր 1944ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ: 1945-46՝ կը ստանայ Մագիստրոսի տիտղոսը Վիեննայի Պետական Համալսարանէն:

Ի շարս այլ պաշտօններու, 1957-1961՝ Պէյրութի արուարձան Հազմիէի Մխիթարեան Վարժարանէն ներս կը վարէ փոխտնօրէնի եւ ուսուցչի պաշտօն: Կրկին կը վերադառնայ Լիբանան եւ 1972-1978՝ կը ստանձնէ Մխիթարեան Վարժարանի տնօրէնութիւնն ու ժառանգաւորաց բաժնի պատասխանատուութիւնը:



1978-1992՝ եղած է Ընհանուր Աթոռակալ Վիեննայի Միաբանութեան: 1992-2009՝ եղած է տնօրէն Լոս Անճելըսի Մխիթարեան Վարժարանին: 1999ին Վարժարանը փոխադրած էր Թահանկայի նոր հողամասը: Մխիթարեան Միաբանութիւնը վերջին յիսնամեակին չէ ունեցած նման եկեղեցական մը որ յաջողած ըլլայ այսպիսի հոյակապ կալուած մը ձեռք ձգել, ամբողջութեամբ վճարուած, զայն յանձնելով իր Միաբանութեան:

Ունի բազմաթիւ բանասիրական, դրամագիտական, ծիսագիտական եւ տոմարագիտական աշխատանքներ, նամանաւանդ *Հանդէս Ամսօրեայի* մէջ տպուած: Հրատարակութեան պատրաստած է Հին եւ Նոր Կտակարաններու աշխարհաբար թարգմանութիւնը: Կազմած եւ հրատարակած է *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին Ի Վիեննա* ձեռագրացուցակի Գ. Հատորը (Վիեննա, 1983):

Վախճանեցաւ 19 Յուլիս 2014ին, Լոս Անճելըսի մէջ:

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՍԷՆ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ
(1928-2014)



Փիլիսոփայ, ակադեմիկոս Սէն Արեւշատեանը ծնուել է 7 Յունուար 1928ին Երեւանում: Հայրը՝ Սուրէն Արեւշատեանը, Թատերական Ինստիտուտի դասախօս էր: 1951ին գերազանցութեամբ աւարտել է ԵՊՀ

Պատմութեան Ֆակուլտէտը: 1951-1954՝ ՀՍՍՀ ԳԱ ասպիրանտուրայում մասնագիտացել է հայ հին եւ միջնադարեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ: 1956ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ ԺԴ.-ԺԵ. դարերի ականաւոր գիտնական Գրիգոր Տաթեւացու փիլիսոփայական հայեացքների վերաբերեալ: 1954-1959՝ եղել է ՀԽՍՀ ԳԱ Փիլիսոփայութեան Եւ Իրաւունքի Սեկտորի գիտաշխատող: 1959 Ապրիլին աշխատանքի է անցել ՀԽՍՀ Մինստրների Խորհրդին Առընթեր Հին Ձեռագրերի նորաստեղծ Գիտահետազօտական Ինստիտուտում՝ Մատենադարանում, որպէս սկզբնաղբիւրների գիտական թարգմանութեան բաժնի վարիչ: 1972ին ստացել է փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի աստիճան: 1973ին ղեկավարել է Մատենադարանի Հին Բնագրերի Ուսումնասիրութեան Եւ Հրապարակման Բաժինը, իսկ 1982-2007՝ 25 տարի, եղել է Մատենադարանի տնօրէն, նաեւ համատեղութեան կարգով եղել է ՀԽՍՀ ԳԱ *Պատմաբանասիրական Հանդէս*ի պատասխանատու քարտուղարը (1958-1960), Փիլիսոփայութեան Եւ Իրաւունքի Ինստիտուտի աւագ գիտաշխատող՝ 1972-1979, իսկ մինչեւ 2014՝ ինստիտուտի Գիտաթեմատիկ Խմբի գիտական ղեկավարն էր: 1975-1978՝ դասաւանդել է ԵՊՀում:

1982ին Արեւշատեանն ընտրուում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2007-2014՝ Մատենադարանի Կառավարման Խորհրդի նախագահ, Տնօրէնի Գլխաւոր Խորհրդական:

Հեղինակ է աւելի քան 150 գիտական աշխատութիւնների, այդ թւում՝ 30 մենագրութիւնների եւ բազմաթիւ յօդուածների:

Արեւշատեանի գիտական գործունէութեան կարեւոր մասն են կազմում հայ իմաստասէրներ Մեսրոպ Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դաւիթ Անյաղթի, Անանիա Շիրակացու, Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու երկերի ռուսերէն թարգմանութիւնները: Երեւանում առանձին գրքերով լոյս են տեսել նրա *Գրիգոր Տաթեւացու Փիլիսոփայական Հայեացքները* (1957, ռուսերէն), *Անանիա Շիրակացի. Կոսմոգրաֆիա* (1962, ռուսերէն), *Դաւիթ Անյաղթ «Մեկնութիւն Ի Վերլուծականն Արիստոտէլի* (1967), *Փիլիսոփայական Գիտութեան Ձեւաւորումը Հին Հայաստանում (5-6րդ դդ.)* (1973), *Դաւիթ Անյաղթ* (1980), *Role of David the Invicible in the Development of Ancient Armenian Philosophy* (1980), *Գլաձորի Համալսարանը Միջնադարեան Հայաստանի Լուսաւորութեան Կենտրոն* (1984), *Հայ Փիլիսոփայութեան Պատմութիւն. Հին Շրջան Եւ Վաղ Միջնադար* (2007), *Սուրբ Գրիգորի Վարդապետութիւնը* (2007), *Գրիգոր Տաթեւացի. Սողոմոնի Առակների Մեկնութիւնը* (2009): Մենագրութիւններից իւրաքանչիւրը բովանդակում

է նոր գաղափարներ, մշակոյթի պատմութեան ժամանակաշրջանների նոր իմաստաւորում, գրաւոր յուշարձանների նոր ընթերցում:

Արեւշատեանի գիտական վաստակի կարեւորագոյն մասը հայ փիլիսոփայութեան պատմութեան եւ առհասարակ հայ հին եւ միջնադարեան հոգեւոր մշակոյթի պատմութեան աղբիւրագիտական հիմքի ամրապնդումն ու հարստացումն էր: Նրա գիտական գործունէութեան մէջ համատեղւում էին պատմաբանը եւ մշակութաբանը, ազգագրագէտն ու հնագէտը, լեզուաբանն ու բանասէրը: Արեւշատեանի գործերի մի զգալի մասը վերաբերւում է անտիկ շրջանից քրիստոնէականին անցմանը՝ Ե.-Է. դարերին, երբ դեռեւս ուժեղ էին անտիկ աւանդները, գեղագիտական համակարգը, որոնց գումարուել էին նաեւ քրիստոնէական աշխարհայեացքը եւ եկեղեցական դիրքորոշումը: Իր ուսումնասիրութիւններով նա ամբողջացրեց եւ պարբերացրեց հայ փիլիսոփայական մտքի պատմութեան ընթացքը՝ Անյաղթից մինչեւ Տաթեւացի եւ այլք: Այս տեսանկիւնից դասական օրինակ է Դաւիթ Անյաղթի գործերի նրա համակողմանի ուսումնասիրութիւնը:

Մեծ է Արեւշատեանի վաստակը Անյաղթի փիլիսոփայական ժառանգութեան ուսումնասիրման եւ նրա միջազգային ճանաչման գործում: 1960-1980՝ հրատարակել է Անյաղթի երեք աշխատութիւնների քննական բնագրերը՝ ռուսերէն զուգահեռ թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով: Կազմել ու աշխարհաբար թարգմանութեամբ հրատարակել է նաեւ Անյաղթի երկերի հատորը: Նրա առաջաբանով եւ ծանօթագրութիւններով 1975ին Մոսկուայում «Փիլիսոփայական Ժառանգութիւն» մատենաշարով ռուսերէն լոյս տեսաւ հայ մտածողի երկերը, որը վերահրատարակուեց Անյաղթի ծննդեան 1500ամեայ յոբելեանի օրերին: Վերջապէս, յոբելեանի առթիւ Արեւշատեանը պատրաստել, ծանօթագրել եւ ծաւալուն առաջաբանով հրատարակել է Անյաղթի փիլիսոփայական չորս երկերի ժողովածուն: Հնարաւոր չէր լինի առանց Արեւշատեանի աւելի քան քսանամեայ նախապատրաստական տքնաջան աշխատանքի իրագործել Դաւիթ Անյաղթի ծննդեան 1500ամեայ յոբելեանի տօնակատարութիւնը եւ այն էլ այդպիսի ծաւալով ու միջազգային հնչեղութեամբ: Անյաղթի *Սահմանք Իմաստասիրութեան* երկի Արեւշատեանի կազմած գրաբար քննական բնագիրը դարձել է դասական բնագիր՝ այդ երկի օտարազգի թարգմանիչների եւ ուսումնասիրողների համար:

Արեւշատեանը Մատենադարանի՝ իբրեւ գիտահետազօտական ինստիտուտի ձեւաւորման առաջին իսկ օրից աշխատանքի անցաւ այնտեղ, եւ հիմնադիր տնօրէնից՝ ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանից յետոյ ղեկավարեց այն: Խաչիկեանի եւ միւս համախոհների հետ նա

Մատենադարանը սկզբնաւորողներից եւ կերտողներից էր: Նրանք են համալրել այն գիտական աշխատակիցներով՝ ուղենշել եւ հունաւորել նրա ապագան: Այդ ստեղծարար աշխատանքի շնորհիւ օր օրի աճել է Մատենադարանի հեղինակութիւնը հայրենիքում եւ ի սփիւռս աշխարհի:

Անգամ տասնամեակների դաժան փորձութիւնների ընթացքում Արեւշատեանը կարողացել է անխաթար եւ անկորուստ պահել Մատենադարանի ներքին կառոյցը, հարստացնել նրա հաւաքածուները:

Նա բարոյական բացառիկ նկարագրի տէր մարդ էր: Մինչեւ կեանքի վերջին օրերը զբաղուած էր աշխուժ գիտական գործունէութեամբ, իր կարեւոր նպաստն էր բերում ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի աշխատանքներին:

Ակադեմիկոս Սէն Արեւշատեանը Երեւանի պատուաւոր քաղաքացի էր, «Պօ-Արաքս» ընկերութեան (Վենետիկ) անդամ, Փիլիսոփայական Միջազգային Ակադեմիայի իսկական անդամ, «Արարատ» Միջազգային Ակադեմիայի (Փարիզ) թղթակից անդամ: Նա ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր էր (1978), 2004ին արժանացել է Հայ Առաքելական Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի, 2008ին պարգեւատրուել ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան ոսկէ մեդալով, 2010ին՝ «Հայրենիքին Մատուցած Ծառայութիւնների Համար» առաջին աստիճանի մեդալով:

Սէն Արեւշատեանը մահացաւ 25 Յուլիսի 2014ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Նախագահութիւն
Մաշտոցի Անուան Մատենադարանի Տնօրէնութիւն

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ
(1913-2014)

Բազմավաստակ ուսուցիչ եւ կրթական գործի կազմակերպիչ, նախկին տնօրէն Երուանդ Պապայեան ծնած է 25 Մայիս 1913ին Այնթէպ: Զաւակն է Ներսէս Ա. քահանայ եւ երիցուհի Նեկտար Պապայեաններու: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի Կիլիկեան եւ Հայկազեան վարժարաններուն մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Հալէպի ֆրանսական Լիսէ Վէյգանի մէջ, աւարտելով 1933ին: Կիլիկեան Վարժարանին որպէս ուսուցիչ ծառայած է 1933-1940, իսկ որպէս տնօրէն՝ 1940էն մինչեւ 1953:

Հիմնադիրներէն է Հալէպի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան, որուն ատենապետը եղած է հիմնուած տարին՝ 1935ին: Հիմնադիրներէն է նաեւ Հալէպի առաջին մշակութային հայ երիտասարդական միութեան՝ «Արեգ»ին:

Ընտանեօք Պէյրութ փոխադրուած են 1953ին:

1953-54ին հետեւած է Սէն Ժոզէֆ Համալսարանի հայագիտութեան եւ արեւելեան դպրութեան դասընթացքներուն եւ ստացած համալսարանական վկայական: 1961ին մանկավարժական ճիւղին մէջ մասնագիտանալու համար դասընթացքներու հետեւած է Centre International d'Etudes Pedagogiques-ին՝ Կիւլպէնկէան Հիմնարկութեան աջակցութեամբ:

Պէյրութի Վահան Թէքէեան Վարժարանին ծառայած է որպէս տնօրէն 32 տարի՝ 1953էն սկսեալ: 1986ին վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս:

1983ին, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրեն շնորհած է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան յատուկ կոնդակով, Լիբանանի Կրթական Նախարարութիւնը զինք պարգեւատրած է Արժանեաց կրծքանշանով: 2003ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ իրեն շնորհած է Ս. Մեսրոպ Շքանշանը:

1961-1963՝ հրատարակած է աշխարհագրութեան հայերէն դասագիրքերու շարք մը, Օննիկ Սարգիսեանի եւ Սիմոն Սիմոնեանի գործակցութեամբ: Աշխատակցած է սփիւռքահայ մամուլին:

Ունի հրատարակած գիրքեր՝ *Ժողովուրդին Եւ Հայրենիքին Հետ*, 1983, *Պատմութիւն ՀԲԸՄի* (դասագիրք, 1989), *Յիշատակներու Արահետներով* (1998), եւ խմբագրած է *Պատմութիւն Այնթէպի Հայոց*, Գ. *Հատորը* (1994):

Երուանդ Պապայեան իր մահկանացուն կնքեց 6 Օգոստոսի 2014ին, Լոս Անճելըս:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ



ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ
(1934-2014)

Կեանքի 81րդ տարում մահկանացուն կնքեց պատմաբան Էմմա Կոստանդեանը, որն իր մեծ աւանդը ներդրեց արեւմտահայութեան ԺԹ. դարի պատմութեան տարբեր խրթին հիմնահարցերի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում:

Կոստանդեանը ծնուել է 1934ին Կիրովական քաղաքում (այժմ՝ Վանաձոր), ուր ստացել է նախնական կրթութիւնը: 1951-1956ին ուսանել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի Հայոց Լեզուի եւ Գրականութեան բաժնում: 1958ին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում իբրեւ լաբորանտ,

յետագայում զբաղեցրել այլ հաստիքներ, իսկ 2003-2012ին իրականացրել է Նոր Պատմութեան Բաժնի վարիչի պարտականութիւնները: 1964ին ընդունուելով ասպիրանտուրա, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի ղեկավարութեամբ 1971ին պաշտպանել է «Գարեգին Սրուանձտեանցի Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը» թեմայով թեկնածուական ատենախօսութիւն: Պատմական գիտութիւնների դոկտորի աստիճան ստացել է 1999ին՝ Մկրտիչ Խրիմեանի հասարակական-քաղաքական գործունէութեանը նուիրուած ատենախօսութիւնը պաշտպանելուց յետոյ:

Կոստանդեանի գիտական գործունէութիւնն անքակտելիօրէն շաղկապուած էր ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հետ, ուր նա աշխատել է աւելի քան կէս դար եւ հեղինակել շուրջ հարիւր տարաբնոյթ գիտական ուսումնասիրութիւններ: Դրանց թւում հարկ է առանձնացնել *Գարեգին Սրուանձտեանց (Կեանքը Եւ Գործը)* (1979, 2008), *Մկրտիչ Խրիմեան: Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը* (2000, 2008), *Ակնարկներ Արեւմտահայ Մշակութային Եւ Հասարական-Քաղաքական Կեանքի Պատմութեան (ԺԹ. Դարի 80ական Թուականներ)* (2005) մենագրութիւնները եւ *Հայագիտական Ուսումնասիրութիւններ* (2013) յօդուածների ժողովածուն: Նրա խմբագրութեամբ է լոյս տեսել Գարեգին Սրուանձտեանցի *Երկեր*ի երկրորդ հատորը (1982):

Կոստանդեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակները կենտրոնացուած էին մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի ԺԹ. դարի երկրորդ կէսի հիմնախնդիրների ուսումնասիրութեան վրայ: Նրա ուշադրութեան կենտրոնում էին ոչ միայն արեւմտահայ կեանքում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, մշակութային եւ կրթական տեղաշարժերը, այլեւ ազգային-ազատագարական շարժումների ելեւէջները: Այս առումով յատկանշական է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանին նուիրուած նրա մենագրութիւնը, ուր թէ՛ ռուսական կենտրոնական եւ թէ՛ հայկական տարբեր արխիւներից քաղուած նորայայտ փաստաթղթերի մանրազնին քննութեան հիման վրայ, նա հետեւել է հայ հասարակական մտքի զարգացման առանձնայատկութիւններին եւ ազգային-ազատագրական պայքարի առաջընթացին, միաժամանակ բացայայտել Խրիմեանի դերը հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակութիւն ունեցած պատմական իրադարձութիւններում:

Հարկ է նաեւ արժեւորել հանգուցեալի աւանդն արեւմտահայ մամուլի ուսումնասիրութեան գործում: Նա պատրաստել է *Կոստանդնուպոլսի «Արեւելք» Օրաթերթը* (2003) մենագրութիւնը, առանց իր սուղ ժամանակն ափսոսալու կազմել է *«Արծուի Վասպուրական» Ամսագրի*

Մատենագիտութիւն (1855-1856, 1858-1864) (2006) հատորը եւ դրանով իսկ մեծապէս օժանդակել բոլոր նրանց, ովքեր ցանկութիւն կը դրսեւորեն ուսումնասիրել ԺԹ. դարի երկրորդ կէսի արեւմտահայ մամուլի պատմութիւնը:

Կասկածից վեր է Կոստանդեանի ներդրումը ԺԹ. դարի նշանաւոր հայ հոգեւոր գործիչների քաղաքական եւ կրօնական գործունէութեան մանրազնին ուսումնասիրութեան բնագաւառում: Նա կեանքի վերջին տարիներին ուշադրութիւնը բեւեռեց Մաղաքիա Օրմանեան պատրիարքի գործունէութեան վրայ, որին ցանկանում էր նուիրել առանձին մենագրութիւն: Ցաւօք, նրան վիճակուած չէր իրականացնել այս մտադրութիւնը: Նրա վերջին, ի դէպ, մեծ այժմէականութիւն ունեցող՝ «Մաղաքիա Օրմանեանի Բանախօսութիւնները» խորագրով յօդուածը լոյս ընծայուեց նրա մահից միքանի օր անց ԵՊՀ *Հայագիտութեան Հարցեր* (2014, թիւ 2) քառամսեայ պարբերականում: Հայ Առաքելական Եկեղեցին 2012ին նրան պարգեւատրեց «Սուրբ Մեսրոպ-Սուրբ Սահակ» շքանշանով:

Կոստանդեանն անմասն չմնաց նաեւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի կողմից տպագրութեան պատրաստուող քառահատոր *Հայ Ժողովրդի Պատմութիւն*ի հրատարակութեան աշխատանքներին, հանդէս եկաւ իբրեւ երրորդ հատորի առաջին գրքի (2010) պատասխանատու խմբագրի տեղակալ եւ համահեղինակ: Սակայն առաւել էականը, այն բծախնդիր վերաբերմունքն էր, որ Նոր Պատմութեան Բաժնի նիստերում նա ցուցաբերում էր սոյն հատորի համար նախատեսուած յօդուածների քննարկման ժամանակ: Երկար տարիներ աշխատելով Կոստանդեանի գլխաւորած բաժնում, տողերիս հեղինակն իրաւասու է հաւաստելու, որ նա համանման մօտեցում էր դրսեւորում նաեւ մեր կողմից քննարկուող բոլոր ձեռագիր աշխատանքների՝ մենագրութիւնների, ատենախօսութիւնների նկատմամբ: Դա պայմանաւորուած էր ոչ միայն նրան բնորոշ պատասխանատուութեան բարձր զգացումով, այլեւ շատ քչերին յատուկ անզիջում սկզբունքայնութեամբ, որը նրան զարդարող՝ նրա բնաւորութեան հիմնական առանձնայատկութիւնն էր: Յիշում եմ դեռեւս խորհրդային տարիներին այն քննադատական ելոյթները, որոնցով նա բազմիցս հանդէս էր գալիս Պատմութեան Ինստիտուտի ժողովներում եւ գիտական խորհրդի նիստերում, այնուհետեւ նոյն ինստիտուտին կից գործող՝ հայ ժողովրդի պատմութեան գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդում, որի անդամներից էր կեանքի վերջին տարիներին:

Կոստանդեանը չէր զլանում նաեւ գիտական գործունէութիւնը երբեմն համատեղել մանկավարժական աշխատանքի հետ եւ նոյնիսկ

տարեց հասակում դասաւանդում էր Բրիւսովի Անուան Լեզուաբանական Համալսարանում ու Գեղարուեստի Ակադեմիայում՝ իր նպաստը բերելով երիտասարդ սերնդի կրթութեան շնորհակալ գործին: Նա մասնակցում էր նաեւ միջազգային գիտաժողովների. Խրիմեանին եւ հայկական ազգային-ազատագրական շարժումներին նուիրուած զեկուցումներով հանդէս է եկել ԱՄՆի եւ Իրանի հայ համայնքների համար:

Պատմաբանի անժխտելի արժանիքներից է նրան խիստ բնորոշ եւ անթաքոյց հայրենասիրութիւնը: Չնայած առաջադիմած տարիքին եւ առողջական անկայուն վիճակին, նա չէր զլանում այցելել ՀՀ տարածքում տեղակայուած տարբեր զօրամասեր եւ ելոյթներ ունենալ մեր հայրենիքի երիտասարդ պաշտպանների համար, ոգեւորել նրանց:

Էմմա Կոստանդեանը, որի մահը մեծ կորուստ էր ոչ միայն Պատմութեան Ինստիտուտի, այլեւ հայ ժողովրդի Նոր Պատմութեան ուսումնասիրողների համար, մահացաւ 23 Օգոստոս 2014ին Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

ՌՈՒԶԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ
(1959-2014)

Պատմական գիտութիւնների թեկնածու Ռուզան (Ռուզաննա) Սարգսեանը ծնուել է 3 Յուլիս 1959ին, Երեւանում, ականաւոր արեւելագէտ, ակադեմիկոս Գագիկ Սարգսեանի ընտանիքում: Մանկուց նա հնարաւորութիւն է ունեցել իմօտոյ շփուել գիտութեան եւ արուեստի ներկայացուցիչների հետ: Ռուզանի մեծհայրը՝ Խորէն Սարգսեանը, եղել է ճանաչուած բանասէր Հայաստանում, իսկ մայրը՝ երաժշտագէտ Կարինէ Խուդաբաշեանը, մինչ օրս ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Ընտանիքում առկայ գիտութեան եւ արուեստի մթնոլորտը շատ բանով պայմանաւորել է նրա կեանքի ուղին: 1981ին նա աւարտել է ԵՊՀ Պատմութեան Բաժինը: Որոշ ժամանակ *Հայկական Հանրագիտարան*ում աշխատելուց յետոյ նրա ողջ աշխատանքային գործունէութիւնը կապուել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հետ՝ իսկզբանէ գիտական հետազօտութիւնների առարկայ ունենալով հայ Սփիւռքը: Նրա առաջին մանրամասն գիտական ուսումնասիրութիւնը նուիրուած էր Լիբանանի հայ համայնքի




դպրոցներին: Սարգսեանը հաւաքել, մշակել եւ համակարգել էր ինքնատիպ եւ մեծաքանակ փաստական նիւթ, որը դարձաւ 1991ին յաջողութեամբ պաշտպանած նրա «Լիբանանի Հայ Համայնքի Դպրոցները (1920-1980 թթ.)» ատենախօսութեան հիմքը: Նոյն թուականին այն հրատարակուեց առանձին գրքով:

Լինելով դիւանագէտի կին եւ ուղեկցելով ամուսնուն գործողումների ժամանակ՝ նա չէր կարողանում լիարժէք իրականացնել իր հետազօտական ծրագրերը, սակայն իւրաքանչիւր երկիր, որտեղ որ գտնւում էր, դառնում էր նրա նոր եւ հետաքրքրական գիտական հետազօտութիւնների առարկան: Ապրելով Մոսկուայում, Ալմաթըում, Թբիլիսիում եւ Վարշաւայում՝ նա անխոնջ հաւաքում էր նիւթեր տեղի հայ համայնքների վերաբերեալ: Նա յօդուածաշար է հրատարակել Ղազախստանի եւ Վրաստանի հայ համայնքների դպրոցների, բարեգործութեան, ազգային հանրային կազմակերպութիւնների վերաբերեալ: Նրա «Հայերը Միջին Ասիայում» յօդուածն ընդգրկուել է Պատմութեան Ինստիտուտի հրատարակած *Հայ Ժողովրդի Պատմութիւն* բազմահատորեակում:

Կեանքի վերջին տարիներին Ռուզան Սարգսեանը գրեց *Բարեգործութիւնը Թիֆլիսում* ռուսերէն մենագրութիւնը՝ կենտրոնանալով հայ բարեգործական միութիւնների եւ անհատ բարերարների վրայ (առայժմ՝ անտիպ): Կեանքով եւ եռանդով լի, կենսասէր, մարդասէր, ջերմ Ռուզան Սարգսեանը անսպասելիօրէն կեանքից հեռացաւ 12 Հոկտեմբեր 2014ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Իսնտիտուտի
Հայ Գաղթավայրերի Եւ Սփիւռքի Բաժին

ՖԵԼԻՔՍ ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ
(1939-2014)



Հնագէտ Ֆելիքս Իւանի Տէր-Մարտիրոսովը ծնուել է 28 Յուլիս 1939ին, Թբիլիսիում, հայաշատ Սոլոլակ թաղամասում, որտեղ էլ յաճախել է միջնակարգ ռուսական դպրոց: Դպրոցական տարիներին ծանօթանում է վրացի հնագէտ Ի. Ա. Գզելիշվիլու հետ եւ ամառային արձակուրդներին մասնակցում նրա ղեկավարած պեղումներին, որոնք էլ պատանու մէջ մեծ հետաքրքրութիւն են առաջացնում դէպի հնագիտութիւնը:

1961ին ընդունւում է Մոսկուայի Միխայիլ Լոմոնոսովի Անուան Պետական Համալսարանի Պատմութեան Բաժինը եւ 1966ին գերազանց աւարտում հնագիտութեան բաժինը: Այդ տարիներին նա եռանդուն մասնակցում է հնագիտական պեղումների: Նրա դիպլոմային աշխատանքը եղել է «Գառնիի Հեթանոսական Տաճարը»:

Ուսանողական տարիներին նա գալիս է Հայաստան՝ մասնակցելու Բորիս Պիոտրովսկու ղեկավարած Կարմիր Բլուրի՝ ուրարտական Թէյշեբայինի Ամրոցի պեղումներին: Մասնակցելով այդ յուշարձանի՝ պեղումներին եւ ծանօթանալով հայրենիքի հարուստ պատմութեանը՝ երիտասարդ հնագէտը որոշում է իր յետագայ մասնագիտական գործունէութիւնը շարունակել Հայաստանում:

Համալսարանն աւարտելուց անմիջապէս յետոյ նա տեղափոխւում է Հայաստան եւ աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ Հնագիտութեան Եւ Ազգագրութեան Ինստիտուտում որպէս կրտսեր գիտաշխատող (1985ից աւագ, իսկ 1995ից՝ առաջատար գիտաշխատող): 1966-1970՝ հնարաւորութիւն է ունենում մասնակցելու Գառնիի հնագիտական արշաւախմբի պեղումներին՝ ակադեմիկոս Բաբկէն Առաքելեանի ղեկավարութեամբ, իսկ 1970-75՝ Ալեքսանդր Սահինեանի կողմից իրականացուող Գառնիի Տաճարի վերականգման աշխատանքներին: Այս տարիների հնագիտական պեղումները եւ Գառնիի Տաճարի ճարտարապետական եւ աղբիւրագիտական յետագայ ուսումնասիրութիւնները հիմք հանդիսացան նրա՝ 1995ին լոյս ընծայած *Գառնիի Ամրոցի Տաճարը՝ Հերէոն, Վկայարան* մենագրութեան համար: Շուտով լոյս տեսան նրա միւս երկու արժէքաւոր մենագրութիւնները՝ *Հայոց Թագաւորութեան Կազմաւորումը Պատմական Տուեալների Եւ Պատմական Յիշողութեան Համատեքստում* (1995) եւ *Արջուկը Եւ Հայկական Դիցաբանութեան Միւս Կերպարները* (1996) աշխատանքները: Նա հրատարակել է նաեւ շուրջ 100 գիտական յօդուած:

1970ականներին նա եռանդուն մասնակցութիւն է ունեցել նաեւ Արմաւիրի եւ Արտաշատի, Ներքին Սասնաշէնի, Դիտակի, Տաճարաբակի հնագիտական արշաւախմբերին: 1977ին Գ. Կարախանեանի հետ համատեղ սկսել է Ախուրեանի ջրամբարի տարածքում գտնուող անտիկ Շիրակաւանի պեղումները (1982-1984՝ որպէս ղեկավար), որոնք մեծ կարեւորութիւն ունէին ինչպէս Հայաստանի անտիկ շրջանի մշակոյթի ուսումնասիրութեան, այնպէս էլ Շիրակաւանի յուշարձանի ու նրա նիւթական արժէքների փրկութեան համար, որոնք վտանգուած էին ջրամբարի շինարարութեան պատճառով: 1984ին նա պաշտպանում է թեկնածուական

ատենախօսութիւնը՝ «Հելլէնիստական Հայաստանի Խեցեղէնը Որպէս Պատմական Աղբիւր»:

1985-1986՝ ղեկավարում է Երուանդաշատի հնագիտական-հետախուզական արշաւախումբը: Այդ տարիներին նրան յաջողւում է միքանի խուզահորերի, մասնակի պեղումների եւ վերգետնեայ նիւթի ուսումնասիրութեան շնորհիւ ճշգրտումներ մտցնել Մովսէս Խորենացու հաղորդած տեղեկութիւնների Ք.ա. Գ. դարում Երուանդ թագաւորի կենտրոնների տեղադրութեան հարցում, ինչպէս նաեւ հետազօտել Երուանդաշատից հիւսիս գտնուող Բագարան եւ Մրէն քաղաքների շրջակայ տարածքների՝ Ախուրեանի ձախ ափին տեղակայուած մի շարք դժուարամատչելի յուշարձաններ:

1985ին նա պեղումներ եւ ուսումնասիրութիւններ է կատարում վաղմիջնադարեան Երերոյքի Բազիլիկի տարածքում՝ ճշտելու համար այստեղ աւելի վաղ յուշարձանների առկայութիւնը: Այստեղ նա բացայայտել է երկու գետնափոր վաղ քրիստոնէական հաւաքատեղի, որոնք թուագրւում են Բ.-Գ. դարերով: 1988-1989ին հնագէտը ղեկավարում է Անուշաւան Գիւղի տարածքում գտնուող անտիկ բնակատեղիի պեղումները:

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան Ինստիտուտի Նորակառոյցների Հնագիտութեան Բաժնի լուծարումից յետոյ՝ 1998ին Տէր-Մարտիրոսովը նշանակւում է նոյն աշխատանքներն իրականացնող հնագիտական խմբի ղեկավար, որը պէտք է հետեւէր ՀՀ շինարարական եւ այլ բնոյթի աշխատանքների ընթացքում հնագիտական յուշարձանների փաստագրմանը, ուսումնասիրմանն ու պահպանմանը:

Տէր-Մարտիրոսովը Հայաստանի առաջին միջազգային հնագիտական արշաւախմբերի կազմակերպիչներից եւ ղեկավարներից էր: 1989ից նրա գլխաւորութեամբ գործում է Բենիամին Գիւղի մօտ գտնուող անտիկ դաստակերտի հնագիտական արշաւախումբը, որը 1999-2006՝ գործել է որպէս համատեղ հայ-ֆրանսիական արշաւախումբ: Կազմում ընդգրկուած հնագէտների մի մասը շարունակեցին իրենց ուսումնասիրութիւնները Էրեբունիի հայ-ֆրանսիական արշաւախմբի կազմում, որը 1998-2007՝ ղեկավարում էր Ֆելիքս Տէր-Մարտիրոսովը:

Նա գործակցել է եւրոպական մի շարք մշակութային կառոյցների եւ համալսարանների հետ. 1994-2001՝ փորձագիտական շրջան է անցել Փարիզի, Նանտի, Լիոնի, Ռէնի յուշարձանների պահպանութեան վարչութիւններում, 1999ին դասախօսութիւններ կարդացել Սորբոնի Համալսարանում, 1999-2001՝ եղել է INTASի (նախկին ԽՍՀՄի, այժմ Անկախ Պետութիւնների Գիտնականների Հետ Համագործակցութեան Աջակցման Միջազգային Կազմակերպութիւն) Հայաստանի պատմական յուշարձանների աշխարհագրական տուեալների համակարգչային

ծրագրի համաղեկավար: 2000-2001՝ եղել է «Էրեբունիի Յուշարձան-Թանգարանը Եւ Ուրարտուի, Հին Հայաստանի Մշակոյթն Ու Արուեստը» գիտակրթական ծրագրի հեղինակ եւ կազմակերպիչ, իսկ 2001-2002՝ մասնակցել ԻԻՆԵՍԿՕի «Հայ Արուեստի Վիրտուալ Թանգարան» նախագծին: 2005ից հանդիսացել է Եւրոպայի Խորհրդի Հայաստանի մշակութային հարցերով փորձագէտ: 2013ին մասնակցել է WMFի (Յուշարձանների Միջազգային Ֆոնդ) «Անին Կոնտեքստում» սեմինարին որպէս հնագիտական հարցերով փորձագէտ:

Տէր-Մարտիրոսովի ղեկավարած վերջին հնագիտական ուսումնասիրութիւնը եղաւ Երուանդաշատի արշաւախումբը, որի պեղումները իրականացուեցին 2005-2014ին: Դրանց արդիւնքում բացուեցին Ք.ա. Գ. դարի Երուանդ թագաւորի կառուցած որսորդական պալատը եւ նրան յետագայում կցուած կառոյցները, այդ թւում Արտաշէս Ա.ի Ք.ա. Բ. դարի վերաշինութիւնները, երբ Երուանդի պալատը վերածւում է ամրոցի:

Գիտնականը մեծ աւանդ ունի նաեւ երիտասարդ սերնդի մասնագիտական կրթութեան եւ ապագայ հնագէտների պատրաստման գործում: Դասախօսական գործունէութիւնը նա սկսել է 1983ին Երեւանի Գեղարուեստի Ինստիտուտում (այժմ՝ Երեւանի Գեղարուեստի Պետական Ակադեմիա) եւ արժանացել պատուաւոր պրոֆեսորի կոչման՝ դասաւանդելով մինչեւ 2006ը: ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի Հայ Արուեստի Պատմութեան եւ Տեսութեան ԻԻՆԵՍԿՕի Ամբիոնի բացումից յետոյ (1997), նա եղել է ամբիոնի առաջատար դասախօսներից, աշխատել դոցենտի պաշտօնում եւ արժանացել շնորհակալագրերի: ԵՊՀ Հայ Արուեստի Եւ Հնագիտութեան Ու Ազգագրութեան ամբիոններում նա դասաւանդեց մինչեւ 2013-2014 ուսումնական տարին:

Հնագէտի գիտական հետաքրքրութիւնների շրջանակը բաւականին լայն էր: Զբաղուելով հիմնականում Հին Հայաստանի ուրարտական, աքեմէնեան եւ անտիկ շրջանների պատմութեամբ եւ գործնական հնագիտութեամբ՝ նա յաճախ է անդրադարձել հայ արուեստի որոշ խնդիրների եւ ունի մի շարք արուեստաբանական յօդուածներ, ինչպէս նաեւ ուշագրաւ ուսումնասիրութիւններ վաղքրիստոնէական մշակոյթի վերաբերեալ:

Ֆելիքս Տէր-Մարտիրոսովը մահացաւ 27 Հոկտեմբեր 2014ին, Մոսկուայում: Թաղուած է Մոսկուայում:

ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
mikalil@mail.ru

ԼԱՒՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ
(1937-2014)

Պատմաբան Լաւրենտի Աշոտի Բարսեղեանը ծնուել է 6 Յունուար 1937ին, Երեւանում: 1959ին աւարտել է ԵՊՀն: 1968-1972՝ ղեկավարել է Էրեբունի Ամրոցի, Գառնիի Տաճարի, Յովհաննէս Թումանեանի տուն-թանգարանի (Դսեղ) վերականգնման աշխատանքները: 1973-1978՝ եղել է ՀԽՍՀ Մշակոյթի Նախարարութեան Մշակութալուսաւորչական Հիմնարկների վարչութեան պետ, 1978-1985՝ Հայաստանի Ազգագրութեան Թանգարանի տնօրէն, իսկ 1984-1985՝ միաժամանակ՝ Հայաստանի Պատմութեան Թանգարանի տնօրէն: Աւելի ետք՝ Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի տնօրէն: 1988-1991՝ Բարսեղեանը ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին Առընթեր Պատմութեան Եւ Մշակոյթի Յուշարձանների Պահպանութեան Եւ Օգտագործման Գլխաւոր Վարչութեան պետն էր, իսկ 1992-1995՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահը:

1998ին արժանացել է պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի: Եղել է Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրների Միջազգային ԳԱ նախագահութեան անդամ (1998ից), Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրների Համահայկական Ակադեմիա հասարակական կազմակերպութեան նախագահ (2003ից):

Բարսեղեանի աշխատութիւնները վերաբերում են հայ ժողովրդի ծագման ու կազմաւորման հարցերին եւ Հայոց Ցեղասպանութեանը:

Առանձին հատորներով լոյս են տեսել Բարսեղեանի *Հայ Ժողովրդի Ծագման Եւ Կազմաւորման Պրոբլէմը Հայագիտութեան Մէջ* (1974), *Պատմագրական Վկայութիւնները Հայկական Լեռնաշխարհի Երկրաշարժերի Մասին* (1995), *Հայ Ժողովրդի Ծագման Եւ Կազմաւորման Հարցերը Պատմագիտութեան Մէջ* (1996), *Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հայոց Ցեղասպանութեան Դատապարտումը Եւ Թուրքական Հակազդեցութիւնը* (2001), *Հայոց Ցեղասպանութեան Հրապարակայնօրէն Դատապարտման Եւ Ճանաչման Ժամանակագրութիւնը (1915-2000 թթ.)* (2001) աշխատութիւնները:

Արժանացել է Ֆրիտիոֆ Նանսէն Միջազգային Հիմնադրամի ոսկէ յուշամեդալին (2002) եւ ՀՀ Մովսէս Խորենացու մեդալին (2003):

Լաւրենտի Բարսեղեանն իր մահկանացուն կնքեց 6 Դեկտեմբեր 2014ին, Երեւանում:

ՆՈՆԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ
(1932-2014)

Հայ արուեստի ճանաչուած գիտակ Նոնա Սուրէնի Ստեփանեանը ծնուել է 1932ին, Բաքուում: Հայրը՝ Սուրէն Լեւոնի Ստեփանեանը (1895-1971) քանդակագործ էր, Հայաստանի ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր, մայրը՝ Անահիդա Շէկ-Օսիպեանը (1895-1981), գրադարանի աշխատող:

Նոնա Ստեփանեանը 1949ին ոսկէ մեդալով աւարտել է Երեւանի Պուշկինի Անուան Միջնակարգ Դպրոցը: 1954ին աւարտել է Մոսկուայի Համալսարանի Պատմական Բաժանմունքի Արուեստաբանական Բաժինը, ապա՝ Հայաստանի ԳԱ Արուեստի Ինստիտուտի ասպիրանտուրան: 1962ին նրան շնորհուել է արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան՝ «Ազգայինը Հայկական Գեղանկարում» աշխատութեան համար: 1987ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն: 1989-2004՝ եղել է Ռուսաստանի Գեղարուեստի Ակադեմիայի Ի. Դարի Հայրենական Նկարչութեան Բաժնի վարիչ (2004ից՝ գլխաւոր գիտաշխատող): 2005ից աշխատել է նոյն Ակադեմիայի Մոնումենտալ Արուեստի Բաժնում:

Գրել է ռուսերէն, չնայած նրա ստորագրութեամբ մասնագիտական յօդուածներ են լոյս տեսել նաեւ Երեւանի *Սովետական Արուեստ* ամսագրում, ինչպէս նաեւ *Ինչպէս Դիտել Գծանկարը* գրքոյկը (1974): Զբաղուել է արուեստի պատմութեան եւ տեսութեան հարցերով, ուսումնասիրել մի շարք հայ գեղանկարիչների (Յակոբ Յովնաթանեան, Սերգէյ Եւանգուլով, Յակոբ Կոջոյեան, Ալեքսանդր Բաժբէուկ-Մելիքեան, Գէորգ Գրիգորեան, Ռոբերտ Էլիբեկեան) ստեղծագործութիւնը: Հայ արուեստին են նուիրուած նրա՝ առանձին հատորներով հրատարակուած ռուսերէն աշխատութիւնները.- *Հայկական ԽՍՀի Արուեստը* (1967), *Միջնադարեան Հայաստանի Դեկորատիւ Արուեստը* (1971, ռուսերէն եւ ֆրանսերէն, ֆրանսերէնի մի տարբերակը վերահրատարկուել է 1995ին, Մարսէյում), *Խորհրդային Հայաստանի Ճարտարապետական Յուշարձանները* (1971, ռուսերէն եւ անգլերէն, համահեղինակ՝ Ստեփան Մնացականեան, վերահրատ.՝ 1978ին, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն), *Սերգէյ Պաւլովիչ Եւանգուլով* (1977), *Երեւան, Գառնի-Գեղարդ, Էջմիածին, Աշտարակ* (1985, համահեղինակ՝ Ա. Գ. Գրիգորեան), *Հայաստանի Կերպարուեստի Ակնարկ* (1985, ռուսերէն եւ անգլերէն), *Գրիգոր Խանջեան. Նկարչութիւն, Գծանկար* (1987, համահեղինակ՝ Բորիս Զուրաբով), ինչպէս եւ հայ արուեստին նուիրուած յօդուածներ՝ տարբեր ռուսալեզու ժողովածուներում եւ արուեստի պատմութեան գրքերում:

1981ին Բեռլինի Union Verlag հրատարակչութիւնը լոյս է ընծայել նրա, Բուրհարդ Բրենտէսի եւ Ստեփան Մնացականեանի *Kunst des Mittelalters in Armenien* (Միջնադարեան արուեստը Հայաստանում) աշխատութիւնը, որ յետագայում վերահրատարկուել է Վիեննա-Միւնխէնում: Իսկ 1984ին Պետերբուրգի Աւրորա եւ Լոնդոնի Փենգուէն հրատարակչատների հետ համատեղ անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն առանձին հատորներով հրատարակել է *Գորգեր Եւ Կարպէտներ Կովկասից* գիրքը (համահեղինակներ՝ Լաթիֆ Քերիմով, Տատիանա Գրիգոլիա, Դաւիդ Յիցիշվիլի):

Մոսկուայում 1989ին լոյս է ընծայուել նրա *Հայաստանի Արուեստը. Պատմագեղարուեստական Զարգացման Գծերը* պատկերազարդ մեծադիր հատորը՝ հնագոյն ժամանակներից մինչեւ 1980 հայ արուեստի տարբեր դրսեւորումները (մանրանկար, կիրառական արուեստ, հաստոցային նկարչութիւն, քանդակագործութիւն) ներկայացնող:

Հեղինակ է նաեւ եւրոպական, ռուսական եւ խորհրդային կերպարուեստի մասին տարբեր հետազօտութիւնների:

Կերպարուեստի խնդիրների եւ արդի վիճակի մասին զեկուցումներով հանդէս է եկել մի շարք գիտաժողովներում: Կազմել եւ խմբագրել է ուսումնական ձեռնարկներ: Եղել է Ռուսաստանի Թանգարանների Գիտական Խորհրդի անդամ:

Նոնա Սուրէնի Ստեփանեանը մահացաւ 8 Դեկտեմբերի 2014ին, Մոսկուայում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

ԺԱՆԷՏ ԼԱԶԱՐԵԱՆ
(1940-2014)

Իրանահայ մշակութաբան, լրագրող Ժանէտ Տիգրանուհի Լազարեան Շաղրողին ծնուել է 1940ին, Թեհրանում, Նախիջեւանից գաղթած ընտանիքում: Տարրական ու միջնակարգ կրթութիւնն ստացել է Սպահանում ու Թեհրանում, բարձրագոյնը՝ Լոնդոնի Արքայական Քոլէջում, որտեղ մասնագիտացել է համաշխարհային արուեստի պատմութեան մէջ: Նրա առաջին յօդուածները լոյս են տեսել 1967ին՝ պարսկական *Ֆերդոսի* ամսագրում՝ գեղանկարչութեան, երաժշտութեան ու կինոյի մասին: Յետագայում աշխատանքի է անցել անգլիալեզու *Tehran Journal* օրաթերթում որպէս արուեստի բաժնի վարիչ: Լայնօրէն լուսաբանել է (նաեւ իրանեան հեռուստատեսութեամբ) ժամանակակից երաժշտական եւրոպական փառատօները՝ ոչ մի առիթ բաց չթողնելով անդրադառնալու նաեւ հայկական արուեստին: Նրա

միջնորդութեամբ է ծագումով հայ լեհ մեծ երաժիշտ Քրիշտոֆ Պենդերեցկին 300 հոգանոց նուագախմբով ժամանել Իրան եւ հանդէս եկել համերգային ծրագրով: Տարբեր կինօփառատօներում Լազարեանը բողոքի ձայն է բարձրացրել ի զօրակցութիւն Սերգէյ Փարաջանովի, երբ վերջինս գտնւում էր արգելափակման մէջ: Որպէս լրագրող մասնակցել է պարսկական եւ միջազգային կինօփառատօների:

Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ Լազարեանը որպէս ազատ լրագրող աշխատակցել է պարսկալեզու *Դոնիա Սոխան*, *Բոխարա, Թաւուս* ամսագրերին եւ *Tehran Times, Iran News* անգլերէն օրաթերթերին: Լրագրական գործունէութեան ընթացքում նա հարցազրոյցներ է վարել Ուիլիըմ Սարոյեանի, Քեթի Բէրբէրեանի, Արամ Խաչատրեանի, Առնօ Բաբաջանեանի, Հերբերտ Ֆոն Կարայեանի, Զուբին Մեհթայի, Փիթըր Բրուքի հետ:

2001ին, քաղաքակրթութիւնների երկխօսութեան տարուայ շրջանակներում Թեհրանի Ժամանակակից Արուեստների Թանգարանում կազմակերպել է հայաստանցի եւ իրանահայ ժամանակակից նկարիչների գործերի մեծ ցուցահանդէս, իսկ 2004ին Հայաստանի Ազգային Թանգարանում՝ Իրանի 3 սերնդի նկարիչների գործերի ցուցահանդէս: 2008ին Թեհրանում բացել է Լազար պատկերասրահը, որի տնօրէնն էր մինչեւ իր մահը:

Նրա ամենամնայուն գործը, սակայն, 2012ին Երեւանում պարսկերէնից թարգմանաբար լոյս տեսած *Իրանահայոց Հանրագիտարանն* է (թարգմանիչ՝ Ժորժ Աբրահամեան), որի 462 էջերում իմի են բերուած անուանի իրանահայերի կենսագրականներ, լուսանկարներ, այլեւայլ տեղեկութիւններ:

Ժանէտ Լազարեանը մահացել է 2014ին, Թեհրանում:

ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ
(1923-2015)



Պատմաբան, քաղաքագէտ, ընկերաբան, Հայդելբերգի Համալսարանի պատուաւոր ուսուցչապետ Մանուէլ (Էմանուէլ) Սարգիսեանցը թէեւ հայագէտ չէր, սակայն գրել է նաեւ Հայաստանի պատմութեանն առնչուող մէկ աշխատութիւն:

Ծնուել է 1923ին, Բաքուում, վեց տարեկանից ընտանիքով բնակուել է Թեհրանում: Ուսանել է Թեհրանի Համալսարանում: 1946–1956՝ բնակուել է ԱՄՆում, ուսումը շարունակել Նիւ Եորքի Իրանական Հաստատութիւնում: 1952ին

դոկտորական աստիճան է ստացել Շիքագոյի Համալսարանում: Չկարողանալով ԱՄՆում հրատարակել իր առաջին գիրքը՝ *Ռուսաստանը Եւ Արեւելքի Մեսիականութիւնը* (ռուսերէն թարգմանութիւնը լոյս է տեսել 2005ին, Սանկտ Պետերբուրգում), այն տպագրել է 1956ին, Թիւբինգէնում, գերմաներէն, որի պատճառով նրան արտաքսել են ԱՄՆից: Հաստատուելով Գերմանիայում՝ Սարգիսեանցը 1956-1962՝ աշխատել է Քիլի եւ Ֆրայբուրգի Համալսարաններում, 1962-1967՝ եղել է Քանզասի Համալսարանի հիւր դասախօս, 1967ից՝ Հայդելբերգի Համալսարանի քաղաքագիտութեան հաստատութեան ուսուցչապետ:

Չնայած փայլուն կրթութեանը եւ տարբեր լեզուներ տիրապետելուն՝ Սարգիսեանցի գիտական կեանքն այնքան էլ յաջող չի եղել. նրան մշտապէս հետաքրքրել են թեմաներ, որոնք տարբեր պատճառներով տաբու են եղել արեւմտեան գիտական շրջանակների համար: Սարգիսեանցի գիտական հետաքրքրութիւնները ներառել են Ռուսաստանի, Հարաւ-Արեւելեան Ասիայի, Լատինական Ամերիկայի ընկերվարութեան կրօնական ակունքները: Լ. Ամերիկայի, Բիրմայի, Ֆիլիպինների, Ինդոնեզիայի, Հայաստանի, Ռուսաստանի պատմութեան վերաբերեալ նրա գրքերը լոյս են տեսել գերմաներէն, անգլերէն եւ իսպաներէն:

Նրա ամենայայտնի գործերից է *Ադոլֆ Հիտլէրի Բրիտանական Մոդէլները* գերմաներէն աշխատութիւնը (1997): Այն արգելուել է Միացեալ Թագաւորութիւնում (անգլերէն թարգմանութիւնը լոյս է տեսել Իռլանդիայում եւ Հնդկաստանում՝ *Կայսերապաշտութիւնից Դէպի Ֆաշիզմ. Ինչո՞ւ Հիտլէրի «Հնդկաստանը» Պէտք Է Դառնար Ռուսաստանը* վերնագրով): Գերմանիայում երկու անգամ հեղինակի դէմ քրէական գործ է յարուցուել: 2003ին Սանկտ Պետերբուրգում լոյս է տեսել աշխատութեան ռուսերէն թարգմանութիւնը՝ *Գերմանական Ֆաշիզմի Անգլիական Արմատները* վերտառութեամբ:

1975ին Նագփուրի (Հնդկաստան) Udyama Commercial Press հրատարակչութիւնն անգլերէնով լոյս է ընծայել Սարգիսեանցի *A Modern History of Transcaucasian Armenia: Social, Cultural, and Political* աշխատութիւնը: Հեղինակ է նաեւ Ռուսաստանի արեւելեան ժողովուրդների, Հարաւային Ասիայի, Բիրմայի պատմութեան նուիրուած գրքերի: Նրա *Ֆելիպէ Կարիլիօ, Մայաների Կարմիր Առաքեալը* գերմաներէն աշխատութիւնը (1991, Հայդելբերգ) թարգմանուել է մայա հնդկացիների լեզուով:

Տեղափոխուելով Մեքսիկա՝ Սարգիսեանցը հաստատուել է Մերիդա քաղաքում: Ընտրուել է Եուկատանի (Մեքսիկա) Համալսարանի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ:

Մանուէլ Սարգիսեանցը մահացել է 12 Մարտ 2015ին:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com



ՇՈՒՇԱՆԻԿ ԱՓՈՅԵԱՆ
(1923-2015)

Յիրաւի, անգնահատելի է երաժշտագէտ, դաշնակահար, արուեստագիտութեան թեկնածու, պրոֆեսոր Շուշանիկ Ափոյեանի ներդրումը հայ կատարողական արուեստի պատմութեան կերտման գործում: Կանգնած լինելով հայ երաժշտագիտութեան ակունքներում՝ Ափոյեանն, իրապէս, իր ողջ կեանքը նուիրաբերեց հայրենական դաշնամուրային արուեստի ստեղծման եւ զարգացման պատմութեան հետազօտմանը, սերունդներին թողնելով հիմնարար եւ բազմաբովանդակ աշխատութիւններ դաշնամուրային արուեստի պատմութեան յետագայ ուսումնասիրութիւնների համար: Հայ դաշնամուրային արուեստի բնագաւառում այսօր հազիւ թէ գտնուի մի որեւէ աշխատութիւն, որի համար որպէս սկզբնաղբիւր եւ հիմք ծառայած չլինեն Ափոյեանի ուսումնասիրութիւնները:

Ծնուել է 17 Հոկտեմբերի 1923ին, Երեւանում: 1947-1948՝ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիան երկու մասնագիտութիւններով՝ դաշնամուրային եւ պատմատեսական: 1950ին աւարտելով ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի ասպիրանտուրան (ղեկավար՝ դոկտոր, պրոֆեսոր Գէորգի Տիգրանով), 1953-1955՝ փորձառութիւն է անցել Լենինգրադում (այժմ Սանկտ-Պետերբուրգ) ականաւոր մանկավարժ եւ դաշնակահար, պրոֆեսոր Լեւ Արոնովիչ Բարենբաումի ղեկավարութեամբ:

Տարբեր տարիներ դասաւանդել է դաշնամուր Երեւանի Չայկովսկու Անուան Երաժշտական Մասնագիտական (1947-1953 եւ 1955-1980) եւ Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի Անուան Երաժշտական դպրոցներում (1953-1955), Երեւանի Ռոմանոս Մելիքեանի Անուան Երաժշտական Ուսումնարանում դասաւանդել է դաշնամուրի դասաւանդման մեթոդիկա (1955-1962), 1957ին Երեւանի Պետական Կոնսերվատորիայում (ԵՊԿ) դասաւանդել է դաշնամուրային արուեստի պատմութիւն եւ տեսութիւն, 1962ին դասաւանդել է դաշնամուրի դասաւանդման մեթոդիկա: 1980-1990՝ վարել է ԵՊԿ Պատմութեան Եւ Տեսութեան Ամբիոնի Կատարողական Արուեստի Եւ Մանկավարժութեան Ամբիոնի վարիչի պաշտօնը: Մինչեւ 2013 հանդիսանում էր ԵՊԿ պրոֆեսոր-խորհրդատու:

Հետազօտութիւնների ոլորտներն են հանդիսացել հայ յօրինողի դաշնամուրային արուեստը, կատարողական արուեստը, դաշնամուրային մանկավարժութիւնը եւ ուսուցման մեթոդիկան,

երաժշտական կրթութիւնը եւ դաստիարակութիւնը: Հեղինակ է 100ից աւելի յօդուածների, ակնարկների, մեթոդական ուղեցոյցների, մենագրութիւնների: Կազմել եւ հրատարակել է նաեւ դաշնամուրային ստեղծագործութիւնների տարբեր ժողովածուներ:

Նրա յօդուածներն ու ակնարկները տպագրուել են *Literaturnaya Armenia* (Գրական Հայաստան), *Երաժշտական Հայաստան*, *Muzikalnaya Akademia* (Երաժշտական ակադեմիա), *Սովետական Արուեստ*, *Sovetskaya Muzika* (Սովետական երաժշտութիւն) եւ այլ գիտական պարբերականներում, տեղական եւ արտասահմանեան մամուլում, ուսումնական ձեռնարկներում, քրեստոմատիաներում:

Հրատարակուած մենագրութիւնները, ակնարկներն ու ժողովածուների ցանկը ներառում է՝ *Սովետական Հայաստանի Դաշնամուրային Երաժշտութիւնը* (1968, ռուսերէն), *Ռոբերտ Քրիստափորի Անդրէասեան* (1984, ռուսերէն), *Անդրէասեանը՝ Դաշնակահար Եւ Մանկավարժ* (1999), *Հայկական Դաշնամուրային Արուեստի Պատմութիւնը (1850-1920 թթ.)* (դասագիրք, 2006) *Ակնարկներ Հայ Դաշնակահարների Մասին* (2008, ռուսերէն), *XX Դարի Դաշնամուրի Մանկավարժութեան Եւ Կատարողական Արուեստի Պատմութիւնից* (քրիստոմատիա, համահեղինակ՝ Ի. Լ. Զոլոտովա, 1998, ռուսերէն), *Կամերային-Գործիքային Ստեղծագործութիւն. Ակնարկ (Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (1960, ռուսերէն), *Հայկական Կամերային-Գործիքային Ստեղծագործութիւն (Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (2րդ լրացուցիչ հրատ., հայերէն), *Խորհրդային Հայաստանի Երաժշտութիւնը. Ժողովածու* (1973, ռուսերէն), *Հայաստանի յօրինողների Մանկական Պիեսները. Ժողովածու* (կազմուել եւ խմբագրուել է Է. Աբաջեանի հետ համատեղ, 1972, ռուսերէն), *Հայ յօրինողների Դաշնամուրային Պիէսները. Ժողովածու (Երաժշտական Ուսումնարանների Համար)* (կազմուել եւ խմբագրուել է Է. Աբաջեանի հետ համատեղ, 1969), *Հայ Կոմպոզիտորների Դաշնամուրային Ստեղծագործութիւնների Նուագացանկը (Ձեռնարկ Միջին Մասնագիտական Երաժշտական Դպրոցների Համար*) (Շ. Օ. Բաբայեանի հետ համատեղ, 1983), *Հայ Կոմպոզիտորների Դաշնամուրային Ստեղծագործութիւնների Նուագացանկը (Ձեռնարկ Երաժշտական Ուսումնարանների Եւ Երաժշտանոցի Համար*) (Շ. Օ. Բաբայեանի հետ համատեղ, 1983, ռուսերէն), *Հայկական Կամերային-Գործիքային Երաժշտութիւն. (20-50 թթ., Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (3րդ հրատ.), *Հայկական ՍՍՀ Երաժշտական Մշակոյթը. Ժողովածու* (1985, ռուսերէն), *Իգումնովը Եւ Հայաստանը. Ակնարկ, Երաժշտական Լուսաւորչութիւն* (1999, ռուսերէն):

1962ին ստացել է արուեստագիտութեան թեկնածուի, 1970ին՝ դոցենտի, իսկ 1987ին՝ ԵՊԿ պրոֆեսորի գիտական աստիճան: 2011ին Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20ամեակի առիթով պարգեւատրուել է Մովսէս Խորենացու շքանշանով:

Մահացել է 9 Հոկտեմբեր 2015 թուականին, Երեւանում:

ԱՆՆԱ ԱԴԱՄԵԱՆ

ԼԵՆԴՐՈՒԶ ԱԼՈՅԵԱՆ
(1941-2015)

ԵՊՀ պրոֆեսոր, բանասիրական գիտութիւնների դոկտոր Լենդրուշ Արամի Ալոյեանը ծնուել է 1941ին, Վանաձոր (Կիրովական) քաղաքում: 1958ին աւարտել է տեղի թիւ 6 միջնակարգ դպրոցը, 1960-1962ին ծառայել է խորհրդային բանակում, 1962ին ընդունուել ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի Ժուռնալիստիկայի Բաժինը, որը 1966ին աւարտել է գերազանցութեամբ եւ աշխատանքի անցել *Սովետական Դպրոց* թերթում: 1987ին աշխատանքի է ընդունուել ԵՊՀ Ժուռնալիստիկայի Բաժնում, այնուհետեւ եղել է Ժուռնալիստիկայի Ֆակուլտէտի դասախօս, իսկ 1999-2007՝ Մամուլի Պատմութեան Եւ Տեսութեան Ամբիոնի վարիչ:

1974ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1998ին՝ դոկտորական ատենախօսութիւններ, 2000ին ստացել է պրոֆեսորի կոչում: Չնայած մանկավարժական գործունէութեանը, միաժամանակ հեղինակել է մենագրութիւններ, գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ: Զբաղւում էր ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ Ի. դարասկզբի արեւելահայ մամուլի պատմութեան հիմնախնդիրներով: Գիտական հետաքրքրութիւնների առանցքում *Մշակ* լրագրի գործունէութիւնն էր՝ հիմնադիր խմբագիր Գրիգոր Արծրունու մահից յետոյ: *Մշակի* յետարծրունեան շրջանին անդրադարձել է մի շարք ուսումնասիրութիւններում՝ *«Մշակ» Լրագրի Հրապարակախօսութիւնը 1905-1921 թթ.* (2003), *Հայ Հասարակական Միտքը «Մշակ» Լրագրում (1892-1905 թթ.)* (2007), *Յետարծրունեան շրջանի «Մշակի» Նշանաւոր Հրապարակախօսները* (2007), *«Մշակը» 1893-1913 թթ.* (2013):

Առանձնակի կարեւորում էր Ի. դարասկզբի այն հրապարակախօսների գործունէութիւնը, որոնց յօդուածները տպագրուել են *Մշակի* էջերում՝ նկատելի ազդեցութիւն թողնելով հայ հասարակական, քաղաքական եւ մշակութային կեանքի տարբեր ոլորտների վրայ: Նրանցից միքանիսի՝ Համբարձում Առաքելեանի, Ա. Աթանասեանի, Խաչատուր Մալումեանի, Վ. Նալբանդեանի եւն.

հրապարակախօսական ժառանգութեանը նա անդրադարձել է առանձին հետազօտութիւններում:

Կեանքի վերջին տարիներին աշխատում էր երիտասարդական աւիւնով ու ոգեւորութեամբ՝ իր տեսադաշտում պահելով Ի. դարասկզբի հայ պարբերականներում անթեղուած ուշագրաւ հրապարակումներն ու նրանց հեղինակներին:


Ալոյեանը կեանքին հրաժեշտ տուեց Երեւանում, 20 Հոկտեմբեր 2015ին:

ԵՊՀ ռեկտորատ, Ժուռնալիստիկայի Ֆակուլտէտ,
Հայաստանի Ժուռնալիստների Միութիւն

ԿԱՐԻՆԷ ԽՈՒԴԱԲԱՇԵԱՆ
(1929-2015)

Երաժշտագէտ-տեսաբան, արուեստագիտութեան թեկնածու, Կարինէ Խուդաբաշեանը ծնուել է 1929ին, Երեւանում: Սերում է Երեւանի եւ Լոռու Խուդաբաշեանների եւ Խանաղեանների՝ հնատոհմ ազնուականներից եւ Նախիջեւանի Եդիգարեան վաճառականներից: Հայրը՝ Էմանուէլ Խուդաբաշեանը ճանաչուած ճարտարագէտ-շինարար էր, մայրը՝ Ռեգինա Եդիգարեանը, շնորհալի դաշնակահարուհի եւ մանկավարժ:

Խուդաբաշեանը գերազանցութեամբ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Տեսական-Կոմպոզիտորական բաժինը, ապա՝ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Ն. Ռիմսկի-Կորսակովի Անուան Կոնսերուատորիայի ասպիրանտուրան: Արդի երաժշտագիտութեան դասականների՝ Գէորգի Տիգրանովի, Քրիստափոր Քուշնարեանի, Եուրի Տիւլինի սանուհին եւ յետնորդն էր: Նրա ստեղծագործական անհատականութեան ձեւաւորմանը էապէս նպաստեցին նշանաւոր երաժշտագէտ-բանագէտներ Արամ Քոչարեանը, Վլադիմիր Հոշովսկին, ամուսինը՝ յայտնի պատմաբան-արեւելագէտ Գագիկ Սարգսեանը:



Գիտահետազօտական բազմաբեղուն գործունէութեան հիմնական ոլորտն էր հայ երաժշտութիւնը՝ աւանդական (ժողովրդական, աշուղական), յօրինողական (դասական,

ժամանակակից): Գիտական հետաքրքրութիւնները բազում եւ բազմապիսի էին, սակայն գերակշռութիւնը տրւում էր տեսական երաժշտագիտութեանը: 1966ին Երեւանում լոյս է տեսել նրա *Գրիգոր Եղիազարեան* աշխատութիւնը: 1970ին ՀՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ «Բազմաձայնութեան Զարգացման Վաղ Փուլը Հայ Երաժշտութեան Մէջ» թեմայով, որը յետագայում հրատարակել է որպէս առանձին ռուսերէն մենագրութիւն՝ *Armyanskaya Muzika Na Puti Ot Monodii K Monogolosiyu* (Հայ երաժշտութիւնը միաձայնութիւնից դէպի բազմաձայնութիւն) վերնագրով (1977): Մենագրութիւնն առաջին երաժշտատեսական հետազօտութիւնն է՝ նուիրուած հայ յօրինողական դպրոցի վաղ, ազգային յօրինողական երաժշտութեան յետագայ ընթացքի համար խիստ կարեւոր մինչկոմիտասեան շրջանին:

Երկար տարիներ զբաղուել է երաժշտութեան ձայնակարգի (լադի) հարցերով: Այսպէս *Կուարտա-Կուինտային Կառոյցները Եւ Անգեմիտոնիկան Հայ Ժողովրդական Երգերում* աշխատութեան մէջ (1977), շարունակելով եւ զարգացնելով Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքեանի, Քուշնարեանի արտայայտած գաղափարները, առաջնորդուելով բանահիւսութիւնից քաղուած բազմաթիւ օրինակներով, հիմնաւորում է վերոյիշեալ ձայնակարգերի առանձնայատուկ բնորոշութիւնը հայկական ժողովրդական երգերի համար: Այնուհետեւ *Հայ Մոնոդիկ Երաժշտութեան Լադային Հնչիւնաշարերը Եւ Հնչիւնաշարերի Անտիկ Համակարգը* աշխատութեան մէջ (1984) ձայնակարգային թեման զարգանում է համեմատական երաժշտագիտութեան հունով:

Ձայնակարգի ուսումնասիրութեան մեթոդաբանութեան մէջ արժէքաւոր ներդրում է հանդիսանում Խուդաբաշեանի *Մոդուլների Համակարգը Եւ Դրանց Կիրառումը Ժողովրդական Երգի Ձայնակարգի Նկարագրութեան Ընթացքում* աշխատութիւնը (գրուած 1978ին, հրատ. 1996): Հայաստանում 1927ից հրապարակուած բոլոր ժողովրդական երգերի (շուրջ 1000 նմուշ) ձայնակարգային վերլուծութեան հիման վրայ, մանրամասն մշակուել եւ համակարգի է բերուել հեղինակի ձայնակարգային հայեցակարգը, «ձայնակարգ», «ձայնակարգային հնչիւնաշար», «ինտոնացիա» եւ այլ հասկացութիւնների սահմանումից մինչեւ ձայնակարգի քանակային եւ թուային ցուցիչները: Միաժամանակ աշխատութեան մէջ ներկայացուած է հեղինակի կողմից մշակուած մոդուլների՝ պայմանական նշանների թուագրական համակարգը, որի միջոցով նկարագրւում է երգի ձայնակարգը:

Խուդաբաշեանի հետազօտութիւններում կարեւոր տեղ ունի հայ ժողովրդական երգերի երաժշտաբանաստեղծական բնագրերի

վանկաչափական կառուցուածքը (*Ամանակ, Վանկաչափութիւն*, 1995, *Հայ Աւանդական Երգի Տաղաչափական Համակարգի Շուրջ*, 1997): Հայ երաժշտական բանագիտութեան այս ոլորտը, որը ժամանակին հիմնադրեց Կոմիտասն իր *Հայ Գեղջկական Երաժշտութիւն* հիմնաւոր աշխատութեան մէջ (1906), յետագայում համարեա չէր շօշափուել հայ երաժշտագէտ-տեսաբանների կողմից:

Խուդաբաշեանի աշխատութիւններն այս ասպարէզում խթանեցին հայ երաժշտագէտների հետազօտական հետաքրքրութիւնը նոյն ուղղութեամբ, որ յատուկ նշանակութիւն ունի, մասնաւորապէս, հայ ժողովրդական երաժշտութեան դեռեւս քիչ լուսաբանուած, բայց եւ խիստ կարեւոր երեւոյթների՝ երգային տիպերի եւ երաժշտական բարբառների ուսումնասիրութեան տեսանկիւնից:

Խուդաբաշեանն անդրադարձել է նաեւ Արեւելքի մասնագիտացուած երաժշտութեան կոթողներից մէկին՝ մուղամին, դիտարկելով վերջինիս՝ Հայաստանում տարածուած նմուշները:

Նշուած եւ այլ աշխատութիւններ ժամանակին լոյս են տեսել գիտական տարբեր ժողովածուներում եւ պարբերականներում, աւելի ուշ ամփոփուել են հեղինակի *Armyanskaya Muzika V Aspekte Sravnitel'nogo Muzikoznaniya* (Հայ երաժշտութիւնը համեմատական երաժշտագիտութեան տեսանկիւնից) խորագրով ստուարածաւալ գրքում (2011), որը վերջին տարիների հայ երաժշտագիտական մտքի առաւել նշանակալից երեւոյթներից է:

Կեանքի վերջին տարիներին հրատարակութեան նախապատրաստեց, սակայն, չտեսաւ իր «կարապի երգը»՝ *Երաժշտութեան Եւ Երաժիշտների Մասին* խորագրով եւս մէկ աշխատութիւն (350 էջ): Այն բովանդակում է հեղինակի նախկինում չհրատարակուած կամ հրատարակութեան ընթացքում կրճատուած, աղաւաղուած բազմաբնոյթ յօդուածների վերախմբագրուած, ճշտուած եւ ամբողջացուած տարբերակներ:

Խուդաբաշեանի բազմաբովանդակ ստեղծագործական գործունէութեան միւս ոլորտն էր երաժշտական հրապարակախօսութիւնը, որն իր սեռի ողջ բազմազանութեամբ կարեւոր եւ ուրոյն տեղ գրաւեց երաժշտագէտի կեանքում: Համերգերի, երաժշտական ներկայացումներին նուիրուած բազմաթիւ գրախօսականների հեղինակ էր: Խուդաբաշեանի մի շարք յօդուածներում վերստեղծուել եւ ամբողջացուել են հայ ականաւոր երաժշտական գործիչների ստեղծագործական դիմանկարները (Սաշա Օգանեզաշվիլի, Արամ Քոչարեան, Հայկանուշ Դանիէլեան, Զարա Դոլուխանեան, Գայիանէ Չեբոտարեան, Աւետ Տէրտէրեան: Խուդաբաշեանն առաջին երաժշտագէտն էր, որը հանդէս եկաւ յօրինող

Տէրտէրեանի ստեղծագործութեանը նուիրուած ծաւալուն վերլուծական յօդուածներով): Երեխաների գեղագիտական դաստիարակութիւնը, հայկական ֆիլհարմոնիայի գործունէութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի երաժշտական կեանքի այլ ոլորտների լուսաբանմանը եւ վերլուծմանը նուիրուած քննադատական յօդուածները հրապարակուել են հանրապետական եւ խորհրդային տարիների համամիութենական մամուլում: Խուդաբաշեանի հրապարակումները աչքի էին ընկնում հարուստ տեղեկատուութեամբ, մտահորիզոնի բացառիկ լայնութեամբ, սուր քննադատական շնչով: Դրանք անաչառ էին, դիւրընթեռնելի եւ բանականութեան, խորագիտակութեան եւ յուզականութեան ներդաշնակ միասնութեան օրինակ էին ծառայում:

1984ից քսան տարուց աւելի ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտութեան բաժինը: Այստեղ լաւագոյնս դրսեւորուեց Խուդաբաշեանի որպէս գիտական գործընթացի հմուտ կազմակերպչի տաղանդը, շրջապատը ստեղծագործական եռանդով լիցքաւորելու, ազգային երաժշտական մշակոյթի զարգացմանը առաւել նպաստող գիտական ծրագրեր մշակելու նրա կարողութիւնը: Կայացել են ժողովրդական երաժշտութեան հաւաքագրման նպատակով շուրջ 50 գիտարշաւներ Հայաստանի տարբեր շրջաններում եւ Հայաստանից դուրս: Ձայնագրուել են երկու հազարից աւելի ժողովրդական երգեր եւ նուագներ: Համակարգուել է (ցանկագրուել, քարտաւորուել, անձնագրուել) բաժնի գլխաւոր օղակում՝ Արամ Քոչարեանի անուան ձայնադարանում ամբարուած ժողովրդական երաժշտութեան հսկայածաւալ նիւթը (20 հազարից աւելի միաւոր):

Հայաստանի մշակութային կեանքի վերջին տարիների կարեւոր իրադարձութիւններից էր *Հայ Աւանդական Երաժշտութիւն* բազմահատոր մատենաշարի ստեղծումը, որի հիմնադիրը եւ գլխաւոր խմբագիրն էր:

Հայաստանի Հանրապետութեան Արուեստի Վաստակաւոր Գործիչ, հրապարակախօս, քննադատ, ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի բազմամեայ գիտաշխատող, նոյն ինստիտուտի 1984-2005՝ Ժողովրդական Երաժշտութեան բաժնի վարիչ, գիտութեան եռանդուն կազմակերպիչ, Հայաստանի Կոմպոզիտորների Եւ Երաժշտագէտների Միութեան եւ ԵՈՒՆԵՍԿՕին կից Աւանդական Երաժշտութեան Միջազգային Խորհրդի անդամ Կարինէ Խուդաբաշեանը Հայաստանի առաջատար երաժշտագէտներից էր: Նրա խօսքը մեծ կշիռ եւ հեղինակութիւն ունէր, սպասւում էր, ընկալւում էր հետաքրքրութեամբ, միտք էր շարժում, յաճախ գիտական աշխուժ բանավէճերի առարկայ դառնում, առաջ բերում հետեւորդներ: Խուդաբաշեանն իր ողջ գործունէութեամբ ծառայեց ազգային երգարուեստին եւ լաւագոյնս

կատարեց Կոմիտաս վարդապետի յայտնի ասոյթ-յանձնարարականը՝ «հայն ունի՛ իր երաժշտութիւնը»:

Կարինէ Խուդաբաշեանը մահացաւ 17 Նոյեմբեր 2015ին, Երեւանում:

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԳԷՈՐԳ ԳԷՕԴԱԿԵԱՆ
(1928-2015)

Գէորգ Շմաւոնի Գէօդակեանը ծնուել է 12 Օգոստոս 1928ին, Լենինական (այժմ՝ Գիւմրի) քաղաքում: Նոյն թուականին ծնողների հետ տեղափոխուել է Երեւան եւ 1946ին ոսկէ մեդալով աւարտել Երեւանի Ձերժինսկու անուան Միջնակարգ Դպրոցը եւ Երեւանի Չայկովսկու անուան Միջնակարգ Մասնագիտական Երաժշտական Դպրոցը:

1951ին Գէօդակեանը գերազանցութեամբ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցի Տեսական Կոմպոզիտորական Բաժինը (գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Գէորգի Տիգրանով): 1952ին աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցի Դաշնամուրային Բաժինը՝ պրոֆեսոր Գ. Սարաջեանի դասարանը: 1953–1956՝ սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառութիւնն անցկացնելով Մոսկուայի Չայկովսկու անուան Պետական Կոնսերվատորայում (տեսութեան ամբիոն, գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Բորիս Եարուստովսկի):

1957ին աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ Արուեստների Տեսութեան Եւ Պատմութեան Սեկտորում (1958ից՝ Արուեստի Ինստիտուտ)՝ որպէս կրտսեր գիտաշխատող: 1960ին նշանակուել է ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի գիտական քարտուղար: Նոյն թուականից մինչ կեանքի վերջին օրը Արուեստի Ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր:

1961ին պաշտպանել է ատենախօսութիւն՝ «Ռոմանոս Մելիքեան. Կեանքը Եւ Ստեղծագործութիւնը» թեմայով եւ ստացել արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան: 1964ին Գէօդակեանին շնորհուել է աւագ գիտական աշխատակցի գիտական կոչում:

1965ից մինչեւ 2015ը Գէօդակեանն Արուեստի Ինստիտուտի Երաժշտութեան Բաժնի վարիչն էր: 1979ին նշանակուել է ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի տնօրէնի՝ գիտական գծով տեղակալ, այդ պաշտօնում աշխատելով մինչեւ 2005ը: 2005ին նշանակուել է Արուեստի Ինստիտուտի տնօրէնի խորհրդական:

2007ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն՝ *Հայ Դասական Երաժշտութեան Ձեւաւորման Ուղիները* վերնագրով եւ ստացել արուեստագիտութեան դոկտորի գիտական աստիճան:

Ծանրակշիռ է Գէօդակեանի վաստակը հայ երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան հարցերի ուսումնասիրութեան ասպարէզում: Հայրենական երաժշտագիտութեան կարեւոր հանգրուաններից է *Ակնարկ Հայ Երաժշտութեան Պատմութեան* ուսումնասիրութիւնը, որի՝ խորհրդահայ երաժշտութեան բաժինը հեղինակել է Գէորգ Գէօդակեանը, ինչպէս նաեւ նրա *Հայ Դասական Երաժշտութեան Ձեւաւորման Ուղիները* եւ *Էջեր Հայ Երաժշտութեան Պատմութիւնից* հիմնարար մենագրութիւնները: Կարեւոր նշանակութիւն ունեցան Տիգրան Չուխաճեանի, Ալեքսանդր Սպենդիարեանի, Արամ Խաչատրեանի եւ հայ երաժշտութեան միւս դասականների ստեղծագործութեան նրա գիտական ոսումնասիրութիւնները:

